ԶԱՐԵՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՆԱՎՈՐՅԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ

(արեւելահայերեն երկրորդ հրատարակության)

Երեւան 2022

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Ա 250

Հրատարակության պատրաստեցին՝
Գևորգ Յազըճյանը և **Մարգարիտա Խաչատրյանը**
Խմբագիր՝ **Մարգարիտա Խաչատրյան**

Ազնավորյան, Զարեհ Արքեպիսկոպոս
Ա 250 Սերտողություն Հայտնության Գրքի (արեւելահայերեն երկրորդ հրատարակություն): Եր.: «Գրական հայրենիք» ՓԲԸ («Հայաստան» հրատ.), 2022, 352 էջ:

Հատորում Հայ Եկեղեցու արժանավոր ծառա, երջանկահիշատակ Զարեհ Արքեպիսկոպոս Ազնավորյանը (1947-2004) բացատրում է Նոր Կտակարանի վերջին մասը՝ Հովհաննու հայտնությունը՝ համար առ համար: Բացատրությունները մեծապես կնպաստեն հասկանալու մեր օրերում տեղի ունեցող շատ և շատ իրողություններ և հոգեպես պատրաստվելու դեմ կանգնելու սատանայի փորձություններին, որոնք այնքան շատացել են աշխարհում:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

ISBN 978-5-540-02549-2

© Զարեհ Արքեպիսկոպոս Ազնավորյան, 2022
© Յազըճյան Գ., Խաչատրյան Մ., կազմ., 2022

Հատորը նվիրվում է
հրատարակության պատրաստողների ծնողների՝
Մամիկոն Խաչատրյանի, Լենա Մարդոյանի,
Գրիգոր Յազըճյանի **և** ***Արփինե Հայրապետյանի***
պայծառ հիշատակին:
Այս թանկ անուններին վերջերս հավելվեց
Գևորգի տիկնոջ՝ ***Նատալյա Մալիկովայի*** **անունը:**

Խունկ ու խոնարհում նրանց հիշատակին:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արամ Հայկազի (Չեքեմյան, 1900-1986) իմ հրատարակած ութ հատորների խմբագիր ընկերոջս՝ Գեւորգ Յազըճյանի օգնությամբ արդեն մի քանի տարի վայելում եմ Զարեհ արքեպիսկորոս Ազնավորյանի՝ Երեւանում հրատարակված հատորները[1] կարդալու հաճույքը: Չեմ հիշում, թե քանի անգամ ենք ընկերներով Հիշատակի պատարագ մատուցել Կիլիկիո Ս. Աթոռի 20-րդ դարի երկրորդ կեսի նշանավոր արքեպիսկոպոսների՝ Մեսրոպ Աշճյանի (1941-2003), Զարեհ Ազնավորյանի (1947-2004) եւ Կորյուն Պապյանի (1941-2015) հիշատակին: Մեսրոպ արք. Աշճյանի հատորները կարդալու եւ նրա հարուստ արխիվն ուսումնասիրելու հնարավորություն ունեցա 2010-ի աշնանը, երբ հյուրընկալվեցի Սրբազանի բարեհամբույր քրոջ՝ տիկին Հռիփսիմե Աշճյանի եւ զավակների հարկի տակ: Կորյուն Սրբազանի կրտսեր եղբոր՝ Մհեր Պապյանի հետ հեռահար ծանոթությունս փոխվեց մտերմության, երբ 2019-ի գարնանը Լոս Անջելեսում հանդիպեցինք, եւ լրացրի Կորյուն Սրբազանի մասին իմացածս ու տեսածս «առաջին ձեռքից»:

Ամենաիմաստուն երեք գրքերը՝ Աստվածաշունչը, Նարեկն ու «Փոքրիկ իշխանը» պատանեկան տարիներից իմ ուղեկիցներն են, սրանց հետագայում միացավ Համաստեղի գրական ժառանգությունը, հատկապես՝ «Աղօթարան»ը: Ընկերներիս, այդ թվում եւ հոգեւոր դաշտում ծառայողներին, սիրով նվիրում եմ իմ հրատարակած կամ Գեւորգ Յազըճյանի միջոցով ձեռք բերածս գրքերից:

Խոստովանեմ՝ ծնողներիս խորհրդով միշտ խուսափել եմ Աստվածաշնչի վերջին գլուխը՝ «Հովհաննես առաքյալի հայտնությունը» կարդալուց: Այդ թեմայով մի քանի անգամ զրուցել եմ հոգեւոր դաշտից իմ մտերիմների հետ ու համոզվել՝ հետո՛ պիտի կարդամ Աստվածաշնչի այդ հատվածը: Ու հանկարծ 2018-ի փետրվարին Տեր Հայկազ քահանա Մասոյանը ինձ մտահոգող թեմայով զրույցից հե-

տո նվիրում է Զարեհ արքեպիսկոպոս Ազնավորյանի «Սերտողութիւն Յայտնութեան գրքի» հատորը (Թեհրան, 2013, խմբագիր՝ Գառնիկ քահանայ Գոյունեան, հրատարակութիւն Թեհրանի հայոց թեմի Քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի): Գիրքը մի քանի անգամ թերթեցի, մի քանի էջ կարդացի, հազիվ դիմացա մատիտը ձեռքիս կարդալուց (լուրջ ընթերցանությունն առանց մատիտի չեմ պատկերացնում), որպեսզի ավարտեմ Զարեհ արք. Ազնավորյանի «Հասկնանք մեր պատարագը» գրքույկն արեւելահայերենի փոխադրելու եւ հրատարակելու գործը: Փառք Աստծո, հավատավոր ընկերներով գրքույկը հրատարակեցինք 5000 օրինակով ու բաժանում ենք հետաքրքրվող հավատացյալներին:

Վերջին տարիների իմ անձնական ու մեր ազգային տանգնապների դեմ հանդիման իմ հզոր կռվանները Մաղաքիա արք. Օրմանյանի հատորներն էին, որոնք վերընթերցեցի անհագուրդ կարոտով, պատմության ու հոգեւորի հաղթանակի շատ փառահեղ էջերի կողքին նորից վերապրեցի ազգային ամոթի պահեր ու եւս մեկ անգամ համոզվեցի, որ պատմությունը կրկնվում է … այս անգամ՝ որպես համազգային ողբերգություն:

2021-ի հունիսը նվիրեցի «Սերտողութիւն Յայտնութեան գրքի» հատորին:

Աշխատեցի սիրով, ոգեւորությամբ, հաճախ փորձեցի հասկանալ, թե Սփյուռքում հրատարակված գրքում ինչո՞ւ պիտի այդքան հաճախադեպ լինեին ռուսաբանությունները եւ այլն: Այդուհանդերձ, պարտավոր եմ շնորհակալություն հայտնել տեր Գառնիկ քահանա Գոյունյանին՝ այս հատորը կազմելու եւ Թեհրանի Հայոց թեմի առաջնորդարանին՝ գիրքը հրատարակելու համար: Ըստ հավաստի տեղեկությունների, տեր Գառնիկ քահանա Գոյունյանը հատորը Կանադայում հրատարակել է արևմտահայերենով:

Ամենակարեւորը, ամեն նոր ծագող օրվա հետ ավելի սիրեցի Հայտնության գիրքը. կարդացի երկու անգամ, երեւի մինչ այդ չկարդալու մեղքս քավելու համար: Գրքից Լույս, Հույս, Հավատ, Սեր է ճառագում: Չգիտեմ, ինձնից տարիքով փոքրերին հիմա ե՞ս էլ խորհուրդ

կտամ Աստվածաշնչի վերջին գլուխն ավելի հասուն տարիքում կարդալ, թե՞ ոչ:

Ես գտա Աստվածաշնչին նոր կարոտով, նոր սիրով ու նոր խոնարհումով մոտենալու լրացուցիչ ազդակ…

Նույնը մաղթում եմ գրքի բոլոր ընթերցողներին:

1. «ԶԱստուած տեսնել», 2014, 544 էջ, «Հաւատամքի մեկնութիւն», 2016, 636 էջ, «Հնգամատեանի մեկնութիւն», 2019, 680 էջ «Հասկանանք մեր պատարագը (Սուրբ պատարագի զարգացումը, կառույցը, բովանդակությունը)», Երեւան, 2020, 80 էջ:

***

Պարտավոր եմ մեկնաբանել մի քանի հարցեր՝

1. Ռուսաբանությունների եւ այլ վրիպակների մասին մոտավոր տեղեկություն տալու համար թեհրանյան հրատարակության «Խմբագրական»ը ծանոթագրել եմ:

2. Կանոնակարգել եմ ուղղագրական, կետադրական մի քանի զուգաձեւություններ եւ այլն:

***

Համոզված եմ՝ այս հատորը մեր խառն ու խառնակ օրերում շատերին կօգնի չկորցնել Հույսը եւ գտնել դեպի Աստվածային Սեր տանող ճանապարհը, նորից ու նորից արժեւորել Հավատի դերը մեր անձնական ու ազգային կյանքում:

ԱՍՏՎԱԾ օգնական ու պահապան բոլորիս, առաջին հերթին՝ բզկտված Երկրիս:

Մարգարիտ Խաչատրյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հոգելույս Տեր Զարեհ արքեպիսկոպոս Ազնավորյանը 20-րդ դարի սրբակենցաղ, մեր մեծերը կասեին, հրեշտակակրոն եկեղեցականներից էր[1]: Նա, իր սրբության կողքին, դեպի վեր ճառագեց նաեւ բազմազան հմտություններ, որոնցից գլխավորն ու խորագույնն Աստվածաշունչ մատյանի իմացության հմտությունն էր:

Նախապես՝ դեռեւս 2004 թվականին, այս մատենաշարի երկրորդ համարում լույս տեսավ նրա «Աստվածաշունչ. թարգմանություն եւ սերտողություն» գիրքը, որն այսօր լիովին սպառվել է:

Մատենաշարի այս թվով ցանկացա տպագրության պատրաստել Աստվածաշնչի վերջին գրքի՝ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ Զարեհ Սրբազանի կատարած[2] սերտողությունը, որովհետեւ այժմյան հոգեւոր շարժումներն առհասարակ ներշնչվում են հենց այս գրքից: Եվ որովհետեւ աշխարհի վախճանի ու դատաստանի հարցը լրջորեն մտահոգում եւ երբեմն էլ մտատանջում է շատերին, ուստի՝ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆը[3] նաեւ առիթ է[4] բազմաթիվ շփոթությունների ու զառածումների (եղծանում, հեղաշրջում, զեղծանում), այսինքն՝ խոտորումների: Հետեւաբար, անհրաժեշտ է հայ ընթերցողին փոխանցել ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ գրքին հավատքի ու իմացության աչքով մոտենալու ժամանակակից մի փորձ:

Գիրքն անվանեցի **«Սերտողություն Հայտնության գրքի»**, որովհետեւ հեղինակն իր աշխատանքը համարել է սերտողություն: Իսկ ո՞րն է տարբերությունը սերտողության եւ մեկնության կամ մեկնաբանության միջեւ: Զարեհ Սրբազանն այս կերպ արդեն «ուրվագծել» է տարբերությունը:

1. **Աշխատանքի նպատակը:** Մեկնությունը կարելի է համարել ինքնավախճան աշխատանք: Նրա միակ դիտարկումը կամ նպատակը բնագիրը ճշգրիտ հասկանալն է: Այդ առումով մեկնությունն[5] անշահախնդիր (բառի դրական իմաստով) աշխատանք[6] է, նաեւ անժամանակ է, որովհետեւ աշխատության որոնած նպատակը[7] կապված չէ ո՛չ երեկվա, ո՛չ այսօրվա պայմանների հետ, այլ բնագրի ճշգրիտ իմացությանը՝ նրա անմիջական ու ամբողջական շրջագծում:

Սերտողությունը եւս մեկնություն է, այսինքն՝ բնագիրը ճիշտ ընկալելու ճիգ: Այդ ճիգը, սակայն, ինքնավախճան չէ, այլ պայմանավորվում է որոշակի ժամանակով եւ ուղղվում որոշակի նպատակի: Մեզ (կամ ինձ) անհրաժեշտ է ներթափանցել բնագրի ասելիքի[8] մեջ՝ գտնելու նրա[9] մերօրյա նշանակությունն ու գործնական հրամայականը կամ թելադրանքը:

2. **Աշխատանքի հասցեատերը:** Մեկնությունը չեզոք աշխատանք[10] է, ուղղված է ամենքին, մասնավորաբար՝ մասնագետին, ուսումնասիրողին, քարոզչին. նրանց բոլորի համար էլ հում, չիղկված նյութ, նյութի ու խոսքի ծանոթություն, լուսաբանություն, թելադրական տվյալներ է հայթայթում:

Սերտողությունն ուղղված է որոշակի մի խմբի եւ պայմանավորված է այդ խմբի անդամների հավաքման խնդրանքով, նրանց մտավոր իմացության մակարդակով եւ գործնապաշտ որոշակի հեռանկարով:

3. **Բնագրի ճշգրտում:** Այս մեկը մեկնության համար չափազանց կարեւոր է ու էական: Մեկնիչի առաջին մտահոգությունը ձեռքի տակ ճշգրտագույն եւ քննական բնագիր ունենալն է, ինչպես նաեւ առավելագույն չափով սկզբնական բնագրին կամ հեղինակի բուն մտքին հասնելը: Ահա թե ինչու է մեկնիչը հաճախ զբաղվում բնագրագիտական հարցերով, ձեռագրական տարընթերցվածներով, տվյալ խոսքի՝ անցյալի մատենագիտության մեջ առկա[11] վկայակոչումներով եւ այլն:

Սերտողությունն այս խնդիրը գրեթե չունի, որովհետեւ առհասարակ հիմնվում է արդեն ընտրված թարգմանության վրա: Բավական է, որ այդ թարգմանությունը լինի ճշգրիտ ու հաջողված, հնարավորինս՝ բնագրին հավատարիմ:

4. **Բնագրի քննությունը:** Մեկնությունը հետախուզական աշխատանք[12] է: Բազմաթիվ հնագիտական շերտեր կան, որոնք մեկ առ մեկ պետք է բացվեն՝ հասնելու համար հնագույն շերտին (պատմական, մշակութային, լեզվական, գիտական, հասարակական, քաղա-

քական): Մեկնությունը[13] բազմակողմանի ու սպառիչ քննություն է՝ հնարավորինս շատ ու ամբողջական լուսաբանություններ գտնելու եւ մատուցելու համար:

Սերտողությունը չի խորանում[14] բազմակողմանի քննության մեջ, եւ կարիք չկա անդրադառնալու[15] բոլոր կողմերին: Սրբազան Հայրը դրանց համադրումից օգտվում է՝ հասնելու համար որոշակի պատգամի կամ պատգամների, որոնք[16] բնագիրն «այսօրուայ (ընդհանրապէս) եւ մանաւանդ մեր սերտողութեան անմիջական նպատակին (մասնաւորապէս) են առնչւում» (ԱԹՍ[17], էջ 94-95):

Սերտողությունն առավել հանգամանալից են բացատրում հետեւյալ տողերը. «Նրա (սերտողութեան) վախճանական նպատակն է՝ կեանքի կոչել Աստծու յայտնութիւնն ու կամքը, այն[18] աճեցնել մեր հոգու մէջ եւ փոխադրել դէպի մեր կեանք, որպէսզի Աստծու խօսքն իսկապէս դառնայ պտղաբեր եւ հրաշքը գործի մեր կեանքում» (նույնը՝ էջ 102):

Իսկ մեկնաբանության մասին ի՞նչ է ասվում: Զարեհ Սրբազանն այդ մասին ոչինչ էլ չի ասում: «Մեկնաբանություն» բառը նույնպես գրեթե չի գործածել, սակայն այդ եզրի պատահականորեն երեւալը նրա խոսքի մեջ եւ գրչի տակ՝ չի բացահայտում մեկնությունից տարբեր այլ ընկալում:

Ըստ իս՝ մեկնաբանութիւնը մեկնությունից ու սերտողությունից բոլորովին տարբեր աշխատանք է: Մեկնաբանությունը կարող է լինել վարդապետական կամ գաղափարաբանական մեկնություն կամ խոսքի ներկա, այսինքն՝ տվյալ ժամանակահատվածում ունեցած նշանակությանը վերաբերող իմացական աշխատանք:

Արդ, այս գիրքը սերտողություն է:

Զարեհ Սրբազանը Հայտնության գրքի սերտողությունը կատարել է Անթիլիասի մայրավանքում, 1997 թվականի հունվարի 8-ից մինչեւ մայիսի 28-ը՝ որպես Կիլիկիո Կաթողիկոսության Քրիստոնեական դաստիարակության գրասենյակի ծրագրի իրականացում: Սերտողությունն գրեթե ամբողջությամբ[19] գրանցվել է ձայներիզի վրա: Եզրափակիչ երեկոյի տեղեկագրում Սրբազան Հայրը հույս է հայտնում,

որ կատարած սերտողությունը, «փոքրիկ վերամշակման» ենթարկելուց հետո, հրատարակի առանձին գրքով:

Նա չկարողացավ իր հույսն իրականացած տեսնել: Հասցրեց վերամշակել միայն «Ներածություն»ը եւ առաջին վեց գլուխները (մինչեւ 6-րդ գլխի 10-րդ համարը, որոնք հրատարակեց «Արծիւ» շաբաթաթերթի 1997 թվականի հունվարի 16-ից մինչեւ 1998-ի հունվարի 1-ի համարներում:

Մնացյալ գլուխները խմբագրելու աշխատանքն այստեղ ես եմ կատարել: Նախ զգուշությամբ ունկնդրել եմ ձայներիզները եւ այնուհետեւ, բառ առ բառ, գրաշարել դրանք:

Կենդանի խոսքի ժամանակ նկատի են առնվում ունկնդիրները՝ թե՛[20] կիրարկումից առաջ եւ թե՛ կիրարկման ընթացքում: Կենդանի խոսքն ունի ազատություններ, պարտավորություններ, լուսաբանական փակագծումներ, շեղումներ, կրկնություններ՝ թե՛ բառերի ու նրանց հոմանիշների, եւ թե՛ մտքերի, որոնք երբեմն պահանջում են ճշգրտագույն արտահայտչաձեւեր եւ այլն:

Փորձել եմ խմբագրական աշխատանքներս կատարել՝ նախեւառաջ հնարավորինս հարազատ մնալով Հայտնության գրքի յուրաքանչյուր գլխին ու համարին: Ապա հուսացել եմ վերապրել Զարեհ Սրբազանի ոգու ներկայությունը եւ մի թույլատրելի սեւեռումով հետեւել սերտողության մայր գծին, որպեսզի կարողանամ անարատ պահել բացատրությունների շունչն ու միտքը եւ դրանք արտահայտել ամբողջականորեն: Կատարել եմ լեզվական հպումներ եւ սերտողության կտավի առջեւ տեղադրել «Հայտնության գիրքը սերտելու հրահանգներ»[21] գրությունը, որոնք Սրբազան Հայրը սերտողության ժամանակ բաժանել էր մասնակիցներին[22]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շարադրանքում՝ հանդիսացավ եկեղեցականներից մեկը:
2. Շարադրանքում՝ Սրբազանի կողմից կատարված:
3. Շարադրանքում՝ այն:
4. Շարադրանքում՝ առիթ է հանդիսանում:
5. Շարադրանքում՝ վերջինս:
6. Շարադրանքում՝ այն: Միտքը հստակեցնելու համար երկու պարզ ընդարձակ նախադասություններից կազմել եմ բարդ համադասական նախադասություն:
7. Շարադրանքում՝ իմաստը. իմաստ ունի բառը, նախադասությունը միտք է արտահայտում ... կամ չի արտահայտում:
8. Շարադրանքում՝ իմաստի:
9. Շարադրանքում՝ վերջինիս:
10. Տես 6-րդ ծանոթագրությունը:
11. Շարադրանքում՝ անցյալի մատենագիտության մեջ առկա տվյալ խոսքի:
12. Շարադրանքում՝ արշավանք:
13. Շարադրանքում՝ Այն:
14. Շարադրանքում՝ չի մտնում բազմակողմանի քննության մեջ:
15. Շարադրանքում՝ անդրադառնալ:
16. Շարադրանքում՝ Վերջիններս: Տես 6-րդ ծանոթագրությունը:
17. Զարեհ արքեպիսկոպոս Ազնաւորեան, «Աստուածաշունչ. թարգմանութիւն եւ սերտողութիւն», Թեհրան, 2004:
18. Շարադրանքում այսպես է:
19. Շարադրանքում՝ Այն ամբողջությամբ: Տես 6-րդ ծանոթագրությունը:
20. Շարադրանքում՝ այն: Տես 6-րդ ծանոթագրությունը:
21. Շարադրանքում՝ թելադրություններ: Գրքի հաջորդ էջում ներկայացված են «Յայտնութեան գիրքը սերտելու հրահանգներ»ը:
22. Շարադրանքում տողադարձի բազմաթիվ սխալներ կան:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ծն – Գիրք Ծննդոց
Ելք – Գիրք Ելից
Ղտ – Ղեւտացիների գիրք
Թվ – Գիրք Թվոց
Բ Օր – Գիրք Երկրորդ Օրինաց
Հես – Հեսուի Գիրքը
Դտ – Դատավորների գիրքը
Ա Թգ – Թագավորների առաջին գիրք
Բ Թգ – Թագավորների երկրորդ գիրք
Գ Թգ – Թագավորների երրորդ գիրք
Դ Թգ – Թագավորների չորրորդ գիրք
Ա Մն – Առաջին գիրք Մնացորդաց
Բ Մն – Երկրորդ գիրք Մնացորդաց
Եզ – Եզրասի գիրքը
Նե – Նեեմիայի գիրքը
Հոբ – Հոբի գիրքը
Հդթ – Հուդիթի գիրքը
Սղ – Սաղմոսներ
Առ – Առակաց գիրք
Ժղ – Ժողովողի գիրք
Ես – Եսայու մարգարեություն
Եր – Երեմիայի մարգարեություն
Ողբ – Երեմիայի ողբը
Եզկ – Եզեկիելի մարգարեություն
Դն – Դանիելի մարգարեություն
Ովս – Ովսիայի մարգարեություն
Հվլ – Հովելի մարգարեություն
Ամս – Ամովսի մարգարեություն
Մք – Միքիայի մարգարեություն
Ամբ – Ամբակումի մարգարեություն
Զք – Զաքարիայի մարգարեություն
Սփ – Սոփոնիայի մարգարեություն
Մղ – Մաղաքիայի մարգարեություն

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Մտ – Մատթեոսի Ավետարան
Մր – Մարկոսի Ավետարան
Ղկ – Ղուկասի Ավետարան
Հհ – Հովհաննեսի Ավետարան
Գրծ – Գործք առաքելոց
Հռ – Պողոս առաքյալի թուղթը հռովմայեցիներին
Ա Կր – Պողոս առաքյալի առաջին թուղթը կորնթացիներին
Բ Կր – Պողոս առաքյալի երկրորդ թուղթը կորնթացիներին
Գղ – Պողոս առաքյալի թուղթը գաղատացիներին
Եփ – Պողոս առաքյալի թուղթը եփեսացիներին
Փլպ – Պողոս առաքյալի թուղթը փիլիպպեցիներին
Կղ – Պողոս առաքյալի թուղթը կողոսացիներին
Ա Թս – Պողոս առաքյալի առաջին թուղթը թեսաղոնիկեցիներին
Բ Թս – Պողոս առաքյալի երկրորդ թուղթը թեսաղոնիկեցիներին
Ա Տմ– Պողոս առաքյալի առաջին թուղթը Տիմոթեոսին
Բ Տմ – Պողոս առաքյալի երկրորդ թուղթը Տիմոթեոսին
Տիտ – Պողոս առաքյալի թուղթը Տիտոսին
Եբր – Պողոս առաքյալի թուղթը եբրայեցիներին
Հկ – Հակոբոսի ընդհանրական թուղթը
Ա Պտ – Պետրոս առաքյալի առաջին ընդհանրական թուղթը
Բ Պտ – Պետրոս առաքյալի երկրորդ ընդհանրական թուղթը
Ա Հհ – Հովհաննես առաքյալի առաջին ընդհանրական թուղթը
Բ Հհ – Հովհաննես առաքյալի երկրորդ ընդհանրական թուղթը
Գ Հհ – Հովհաննես առաքյալի երրորդ ընդհանրական թուղթը
Հդ – Հուդայի ընդհանրական թուղթը
Հտ – Հովհաննես առաքյալի հայտնության գիրքը

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔԸ ՍԵՐՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՈՒՆԵՑԵՔ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Սուրբ Գրքի սերտողությունը, հաճելի լինելուց բացի, պետք է նաեւ մնայուն բարիք դառնա: Ուստի, լավ կլինի, որ յուրաքանչյուրն ունենա ի՛ր Աստվածաշունչը:

Հավաքական աշխատանքին մասնակցելու եւ դրանից լավագույնս օգտվելու համար պետք է ունենալ Նոր Կտակարան եւ սերտողության գալուց առաջ հարկավոր է անպայման կարդալ որոշված գլուխը կամ գլուխները:

ՄԻԱՅՆԱԿ ՍԵՐՏԵԼԻՍ

Յուրաքանչյուր հատվածի կամ համարի միտքը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է ուշադիր կարդալ եւ հասկանալ ընթերցածի բովանդակությունը: Այդ պատճառով ինքներդ ձեզ տվեք հետեւյալ հարցումները՝

1. Ինչի՞ մասին է հատվածը:
2. Ի՞նչ է կատարվում, եւ ովքե՞ր են գործող անձինք:
3. Ե՞րբ է տեղի ունենում տվյալ հատվածում ներկայացվող գործողությունը:
4. Որտե՞ղ է կատարվում գործողությունը:
5. Ինչո՞ւ է այս կամ այն բանը լինում կամ ինչո՞ւ է այս կամ այն բանն ասվում:

ՉԳՈՒՇԱՑԵՔ ԿԱՄԱՅԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Հաճախ մեր գիտակցությունը պղտորվում է աջից ու ձախից եկող ամեն տեսակի կամայական բացատրություններին ականջալուր լինելիս: Ամենաապահովն Աստվածաշնչին հավատարիմ մնալն է եւ մեզ ներկայացվող որեւէ ճշմարտություն Աստվածաշնչում եղող, նույն ճշմարտությանը վերաբերող հավաստիացումների լույսի տակ քննելը: Իսկական սերտողությունը պետք է այսպիսին լինի:

ՄԱՍՆԱՎՈՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՔ

Նկատի ունենալով, որ Հայտնության գիրքը հիմնականում մարգարեական է եւ ներառում է մոտիկ ու հեռավոր ապագայի վերաբերյալ խոստումներ, հատուկ ուշադրություն դարձրեք բայաձեւերին, այսինքն՝ բայի ժամանակներին՝ հստակեցնելու համար՝ ներկայացված դեպքերը կամ գործողություններն անցյա՞լ (արդեն կատարված) են, ներկա՞ (այսինքն՝ Հովհաննես առաքյալի ժամանակ՝ առաջին դարավերջին կատարվող), թե՞ ապառնի (գալիք, մոտիկ կամ հեռու ապագայում կատարվելիք):

Նման հայացքն ինքնին մեզ համար շատ բան է հստակեցնում եւ լուսաբանում՝ հեռու պահելով շփոթմունքներից, որոնք այլապես շատ դյուրությամբ կարող են հանդիպել:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՔ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՆՁԵՐԻՆ

Հայտնության գիրքը մասնավորաբար «Քրիստոսի գիրք»ն է: Ուրեմն, ընթերցանության կամ սերտողության ժամանակ հատուկ ուշադրություն դարձրե՛ք նաեւ Ամենասուրբ Երրորդության յուրաքանչյուր Անձին՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, տրված անուններին, տիտղոսներին կամ ստորոգելիներին, կամ յուրաքանչյուրի համար գործածված հատուկ բացատրություններին, ինչպես նաեւ դրանց՝ միմյանց նկատմամբ ունեցած դիրքին: Այս ամենը շատ կարեւոր են Սուրբ Երրորդության մասին մեր ունեցած հավատքը լուսաբանելու համար:

ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՂՈԹՔԻ ԵՎ ԱՂՈԹԵԼՈՒ ԱՌԻԹ ԴԱՐՁՐԵՔ

Աստվածաշնչի բանալին աղոթքն է: Մենք փորձում ենք Աստծո խոսքն ընկալել առանց աղոթքի՝ ապավինելով մարդկային մտածողությանը, սակայն, մարդկային մտածողությունն անկարող է ներթափանցել Աստծո խոսքով ներկայացված խորհուրդների մեջ: Աստծո խորհուրդների մեջ թափանցելու համար անհրաժեշտ է ունենալ Աստծո Հոգին (Ա Կր 2:11), իսկ Աստծո Հոգու օգնությունն ստանալու միակ ձեւն աղոթքն է: Հետեւաբար, Աստծո խոսքի ընթերցումն ու սերտողությունը հարկավոր է միշտ աղոթքով սկսել:

Պետք է մշտապես նաեւ հիշել, որ Աստվածաշունչը դասագիրք չէ, որ ընթերցենք՝ պարզապես մի բան սովորելու, անհրաժեշտ ծանոթություններ ամբարելու համար: Աստվածաշունչն Աստծո «շունչ»ն է: Աստվածաշնչի ընթերցումն ու սերտողությունը պետք է ծառայեն մեր միտքը հավատքով լուսավորելուն, մեր հոգին հույսով սնուցելուն, մեր սիրտը սիրով ջերմացնելուն, Աստծուն միշտ ավելի մոտենալուն, հոգով ու մտքով եւ մարմնավոր բարբառով պաշտելուն ու Աստծուն փառաբանելուն:

Այսպիսի մոտեցմամբ՝ Աստվածաշնչի ընթերցումն ինքնին վերածվում է աղոթքի ու օրհնության եւ ծառայում իր իսկական նպատակին, որին կոչ է անում մեզ Աստված:

ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔԸ

Աստվածաշունչը կամ ավելի ճիշտ՝ աստվածաշնչական հայտնությունն ամբողջացնող գիրքը «Հայտնություն»ն է, որը, հետեւաբար, արդարացիորեն Նոր Կտակարանի գրքերից վերջինն է: Այդ իմաստով շատ հետաքրքիր է Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի եւ Հայտնության գրքի համեմատությունը:

Առաջինը՝ Ծննդոց գիրքը, սկսվում է Երկնքից՝ Աստծուց եւ արարչագործության ճանապարհով իջնում Երկիր: Այդ ստեղծագործությունը Աստծո ստեղծած պայմաններից աստիճանաբար հեռացող եւ ի վերջո Աստծո Հոգուց «մերկացող», հետզհետե ավելի թանձրացականին՝ նյութին ու նյութական մտածողությանը կառչելու ընթացքի պատմություն է, ինչը մարդուն դարձնում է մեղքի ու այս աշխարհի տարրերի գերին:

Մինչդեռ երկրորդը՝ Հայտնությունը, սկսվում է Երկրից՝ այս աշխարհից կամ աշխարհիկ պայմաններից եւ քրիստոնյա մարդու՝ չարի ու աշխարհային տարրերի դեմ մղած պայքարի պատկերացումներից հետո ներկայացնում է մարդու ազատագրումը մեղքից ու չարի տիրապետությունից, նյութից ու նյութական մտածողությունից եւ վերադարձը դեպի Երկինք, դեպի կորուսյալ դրախտ, դեպի ամեն ինչի Սկիզբն ու Վախճանը՝ ԱՍՏՎԱԾ:

ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՈՒՄԸ

Քրիստոսի Եկեղեցին ապրում է հույսով ու սպասումով, այդպես էլ բնորոշվում է որպես սպասող համայնք, որն անդադար աղոթում է «Եկեսցէ Արքայութիւն Քո» մինչեւ այն օրը, երբ Քրիստոսը վերս-

տին կգա Իր թագավորությամբ, եւ ներկա աշխարհն ամբողջապես կվերափոխվի, երբ ի վերջո կփոխվի մեղքի տիրապետության տակ ընկած այս չար աշխարհի պատկերը:

Մեր ներկա կյանքը հատկանշող անարդարությունը, եսակենտրոն մտածելակերպն ու վարվելակերպը, չարակամությունն ու վայրագությունը, հափշտակությունն ու զրկանքը, ցավն ու հեծությունը աստվածային ձեռքի զորեղ միջամտությամբ վերջանալու են, եւ ամեն ինչ ենթարկվելու է Աստծո կամքին ու ծրագրին: Պետրոս առաքյալը դիպուկ է բացատրում «…մենք, Աստուծոյ խոստման համաձայն, սպասում ենք մի նոր երկնքի ու նոր երկրի, որտեղ արդարութիւնն է իշխելու» (Բ Պտ 3:13):

Ե՞րբ է գալու այդ Արքայությունը, որի մասին խոսվում է Հին ու Նոր Կտակարաններում: Ահա՛ հարց, որի պատասխանը մարդիկ փնտրել են անդադար՝ հինկտակարանյան ժամանակներից եւ մանավանդ քրիստոնեության առաջին դարից սկսած մինչեւ մեր օրերը: Ե՞րբ է Աստված պատասխանելու մարդու այս հարցին:

Հիսուսի աշակերտները մի քանի անգամ այս հարցն ուղղեցին Նրան, եւ Հիսուսը նրանց մի քանի անգամ պատասխանեց, որ Աստված չի ցանկանում մարդուն հայտնել Աստծո Թագավորության հասնելու օրն ու ժամը (Մտ 24:36, Մր 13:32, Գրծ 1:6-7): Դա Աստծո ծրագրի ծածուկ կողմն է, որի իմացությունը մարդուն տրված չէ, եւ հստակ թվականներով այն որոշելու փորձերը զուր են:

Օրինակ, ըստ ոմանց հաշվարկի, Քրիստոսի երկրորդ գալուստը լինելու էր 1996 թվականին, որովհետեւ նրանք պնդում էին, թե Ավետարանում նշված «երբ թզենին ծաղկի» բացատրությունը վերաբերում է Իսրայելի պետության վերականգնմանը, որը տեղի ունեցավ 1947 թվականին: Դրան գումարելով նաեւ Դանիել մարգարեի հիշատակած յոթ յոթնյակները, որոնց գումարը 49 տարի է, ունենում ենք 1996 թվականը, իսկ մենք արդեն հասել ենք 2022 թվականին…

Սակայն Արքայության գալուստը եւ նրա գալու ձեւը, անկախ թվականից, յուրաքանչյուր քրիստոնյայի հետաքրքրության կենտրոնում են: Հենց այս իրողությունն է Հայտնության գիրքը բոլոր ժամանակների համար գրավիչ դարձրել՝ հակառակ Հայտնության գրքի որոշ խրթնաբանությունների եւ հասկանալու որոշակի դժվարությունների:

Այդ խրթինություններն ու դժվարությունները պատճառ են եղել եւ են, որպեսզի շատերը այս գրքին մոտենան վերապահությամբ կամ ժխտողաբար, երբեմն էլ պարզապես մերժում են այս գիրքը: Սակայն Հայտնության գիրքը նոր ու օտար թեմա չի ուսուցանում: Հետաքրքրական ու միաժամանակ հատկանշական է նկատել, որ Ավետարաններում Արքայության մասին Քրիստոսի ուսուցումը, ինչպես նաեւ գալիքի մասին Նրա ու այս գրքի հայտնությունները նույնն են:

Այսպես, Հիսուսը Արքայության մասին առակներով տվեց հետեւյալ պատկերացումները՝

1. **Մեկնած Տիրոջ վերադարձի դրվագը:** Ծառան պետք է արթուն ու պատրաստ սպասի ժամանակավորապես «հեռու աշխարհ մեկնած իր Տիրոջ վերադարձին, որպեսզի երբ Տէրը վերադառնայ եւ բախի դուռը, անմիջապէս բացի Տիրոջ առջեւ (տե՛ս Մր 13:33-37, Ղկ 12:35-40): Մի կարեւոր մանրամասն՝ շեշտվում է ժամանակի անակնկալ գալը: Հայտնության գիրքը նույն բանն է հիշեցնում. «Եթէ արթուն չմնաս, կը գամ գողի նման, եւ դու չես իմանայ, թէ ո՞ր ժամին կը լինի Իմ գալուստը քեզ մօտ» (Հտ 3:3), եւ արթուն մնացած ծառաների համար նաեւ մի խոստում է աւելացնում. «Ահաւասիկ, ես դռան առաջ եմ եւ բախում եմ: Եթէ մէկն Իմ ձայնը լսի եւ բաց անի դուռը, Ես ներս կը մտնեմ եւ կընթրեմ նրա հետ, նա էլ՝ Ինձ հետ» (Հտ 3:20):

2. **Բերքառատության դրվագը:** Աստված Իր այգին հանձնել է մեզ, որպեսզի ժամանակին Իրեն վերադարձնենք սպասված պտուղը (Մտ 21:33-34): Այս պատկերում շեշտվում են կյանքի արդյունավորումն ու արժեւորումը: Այս դրվագը համեմատենք Հայտնության գրքի՝ յոթ եկեղեցիներին գրված նամակների հետ, որոնցում Տերն ապաշխարության գործեր է պահանջում եկեղեցիներից՝ որպես արդյունաշատ կյանքի հանդեպ ունեցած հավատքի վկայություն:

3. **Հունձքի դրվագը:** Աստված աշխարհի արտում սերմանել է մաքուր ու ընտիր ցորեն: Սակայն չարը այդ ցորենի կողքին որոմ է սեր-

մանում, որը մնալու է մինչեւ հունձքի ժամանակը, երբ կհասնի որոմն առանձնացնելու եւ բոցավառ կրակը նետելու պահը (Մտ 13:24-30): Այս պատկերը հիշեցնում է դատաստանի գոյությունն ու գալը: Հայտնությունն այդ դատաստանը ներկայացնում է բազմաթիվ ձեւերով:

4. **Հարսանիքի դրվագը:** Այստեղ հիշատակվում են թագավորը, ով մարդկանց հրավիրում է որդու հարսանիքին, եւ հիմար ու իմաստուն կույսերը, ովքեր սպասում են փեսայի գալուստին (Մտ 22:2-14, 25:1-13): Այս պատկերում ներկայացված է Փեսայի՝ Քրիստոսի եւ Հարսի՝ Եկեղեցու վերջնական միավորումը: Հայտնության գիրքը ներկայացնում է թե՛ Փեսային՝ Իր թագավորական ամբողջ փառքով, եւ թե՛ Հարսին՝ երկնային Երուսաղեմը, որ Երկնքից իջնում է իր ամբողջական գեղազարդությամբ:

5. **Խրախճանքի դրվագը:** Հարսանիքի կամ Արքայության սեղանի դրվագում Հիսուսը յուրայինների հետ խմելու է փրկության նոր գինին (Մտ 26:29, Ղկ 14:15-24): Այս պատկերում շեշտվում է Արքայության մեջ եղող անսահման ուրախությունը: Հայտնության գրքում այս պատկերը գտնում ենք 21-րդ եւ 22-րդ գլուխներում:

Արդ, պատգամի այս նույնությունը փոխանցվում է Հայտնության հեղինակից, ով նույն Տերն ու Փրկիչն է: Ինչ Տերը սեղմ հայտնել էր Իր երկրավոր կյանքի օրերում, այս գրքում ներկայացվում է առավել ընդարձակ՝ Նրա վերահաս գալստյան լույսի ներքո:

ԳՐՈՂ ԵՎ ԹՎԱԿԱՆ

Հնուց ի վեր Հայտնության գրքի հեղինակ է համարվել Հիսուսի «սիրելի» աշակերտը՝ Զեբեդեոսի երկու որդիներից Հակոբոսի եղբայր Հովհաննեսը, ով, ըստ ավանդության, իր կյանքի երկրորդ կեսն անցկացրեց Փոքր Ասիայի եկեղեցիներում՝ կենտրոն ունենալով Եփեսոսը. այս գրքում ակնարկված յոթ եկեղեցիները, որոնցից յուրաքանչյուրին մեկ նամակ է ուղղում Քրիստոս, Փոքր Ասիայի նշանավոր եկեղեցիներն են:

Այդ մասին են վկայում նաեւ Եկեղեցու հայրերը՝ Հուստինոս Վկան, Լիոնի Երանոս հայրապետը, Տերտուղիանոսը, Հիպպողիտոսը, Կղեմես Աղեքսանդրացին, Որոգինեսը եւ այլք, ովքեր երկրորդ դարից սկսած՝ գրեթե միաձայն այս գրքի հեղինակ են համարում Հովհաննես առաքյալին:

Ե՞րբ է Հայտնությունը գրի առնվել:

Գրողն ինքն է ցույց տալիս, որ գիրքը գրի է առնվել Պատմոս կղզում, ուր Հովհաննես առաքյալն աքսորված էր՝ Հռոմեական կայսրության մեջ քրիստոնեության դեմ հարուցված հալածանքների ժամանակ, այսինքն՝ Դոմետիանոս կայսեր (81-96 թթ.) օրերում: Ուստի, գիրքը գրված պիտի լինի մոտավորապես 95 թվականին:

ԳՐՔԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՀԱՍՑԵՆ

Գիրքը, ինչպես մատնաշում են ոմանք, զուտ եբրայական մտածողության ծնունդ է՝ Դանիելի մարգարեության հետ սերտորեն առնչված: Հետաքրքրական է այն մատնանշումը, որ Նոր Կտակարանի գրքերից ամենից «եբրայական» համարվել են երեք գրքեր՝ Մատթեոսի ավետարանը, եբրայեցիներին գրված նամակը եւ Հայտնությունը: Այս երեք գրքերը լեցուն են հինկտակարանյան մեջբերումներով կամ հղումներով: Առաջինում կա 92 մեջբերում, երկրորդում՝ 102, իսկ Հայտնությունում՝ 285:

Սակայն սա չի նշանակում, որ գիրքն ուղղված է եբրայական համայնքին: Գիրքն ուղղված չէ նաեւ միայն Փոքր Ասիայի յոթ եկեղեցիներին: Հայտնությունն ուղղված է բոլո՛ր եկեղեցիներին եւ աշխարհի չորս ծագերում բնակվող բոլո՛ր քրիստոնյաներին՝ բոլոր ժամանակներում:

Ակնարկված հղումներին մի հայացք նետողն անմիջապես կնկատի, որ Հայտնության գիրքը շատ սերտ կապ ունի Եզեկիելի, Զաքարիայի եւ մանավանդ Դանիելի մարգարեությունների հետ, իսկ Հին Կտակարանի այդ երեք գրքերը նույնպես հարուստ են տեսիլքներով՝ կապված գլխավորապես Տիրոջ մեծ ու ահեղ օրվա՝ Դատաստանի

օրվա հետ: Տեսիլքներում առատ են խորհրդանիշերը եւ այլաբանությունները, որոնք կամավորաբար մարգարեական պարզ խոսքը փոխարինում են պատկերավոր պատգամով:

Այս պատկերավորությունը եթե մի կողմից պատգամը դարձնում է տպավորիչ եւ ազդու, սակայն մյուս կողմից ինչ-որ չափով քողարկում կամ մշուշում է նրա անմիջական միտքը մանավանդ նրանց համար, ովքեր ծանոթ չեն այդ խորհրդանիշերին ու այլաբանություններին: Այս առումով հատկանշական է առաջին գլխի 1-ին համարը:

Այստեղ բնագիրը բառացիորեն ասում է. «Սա այն յայտնութիւնն է, որ կատարեց Յիսուս Քրիստոսը: Աստուած այս յայտնութիւնը տուեց Քրիստոսին, որպէսզի Նա Իր ծառաներին ցոյց տայ, թէ շուտով ի՞նչ է պատահելու: Քրիստոսն Իր հրեշտակի միջոցով այն յայտնեց Իր ծառային՝ Յովհաննէսին» (Հտ 1:1):

Կատարված հայտնությունները «նշաններ» են ընթերցողին, որպեսզի նա կարողանա տեսնել պատմության ընթացքը եւ ըստ այնմ ուղղի իր ընթացքը (այս մասին հիշել Հիսուսի խոսքը՝ Ղկ 12:56):

Գրքում որոշ խորհրդանիշեր արդեն բացատրված են, բայց մյուսների նշանակությունը տրված չէ, որովհետեւ Հովհաննես առաքյալի ժամանակներից քրիստոնյան գիտեր եւ հասկանում էր դրանք, մինչդեռ մենք շատ խորհրդանիշերի իսկական կամ ամբողջական նշանակությունը չգիտենք, թեեւ դրանից այդ խորհրդանիշերի նշանակությունը չի նվազում:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԳԻՐՔ Է

Հաճախ ասվել ու կրկնվել է, թե Հայտնության գիրքը դժվարընկալելի կամ ավելի ստույգ՝ անհասկանալի է: Այս հավաստիացումը, անշուշտ, ճիշտ չէ, թեպետ գիրքը շատ դյուրությամբ կարող է անընկալելի դառնալ, եթե մենք մշտապես մեր մտքում չունենանք գեթ հետեւյալ տարրական սկզբունքները:

Ինչպես բնորոշ է մարգարեական գրականությանը, Հայտնության գիրքը նույնպես աչքի է ընկնում առատ խորհրդանիշերով ու պատ-

կերներով, որոնք թեեւ անհասկանալի չեն, բայց «ծածուկ լեզու» ունեն, որի խորքը թափանցելը, սակայն, այնքան էլ դժվար չէ: Գրողն ստիպված է միտքը մասամբ քողարկված ասել՝ դիմելով խորհրդանիշերի ու պատկերների օժանդակությանը: Բայց սա որեւէ ձեւով անընկալելի չի դարձնում տրված ՊԱՏԳԱՄԸ: Կարող ենք ասել, որ նույնիսկ կարեւոր էլ չէ բոլոր խորհրդանիշերը կամ պատկերները հասկանալը: Բացատրենք օրինակներով:

Այլ բան է ամեն նշանը, խորհրդանիշը կամ պատկերը հասկանալը, թե ի՞նչ է կամ ի՞նչ է ցույց տալիս, եւ բոլորովին այլ բան՝ իմանալ, թե այդ նշանով, խորհրդանիշով կամ պատկերով Աստված ի՞նչ է ցանկանում հայտնել մեզ: Հաճախ առաջինի ճշգրիտ «ինչությունը» կամ ինչպիսին լինելը «խուսափում» կամ ծածուկ է մեզանից կամ մնում է անընկալելի:

Օրինակ՝ 9-րդ գլխի սկզբում նկարագրվում է 5-րդ փողի հնչմամբ սկսված մի աղետ, որը գալիս է մորեխների միջոցով: Դրանք սովորական մորեխներ չեն, այլ պարզապես մորեխի նմանվող արարածներ (տե՛ս համար 7:11): Իրականում դրանք ինչե՞ր են՝ ոչ ոք չի կարող ասել, թեպետ ենթադրությունները շատ են: Օրինակ՝ ոմանք մորեխների հետեւում տեսնում են մեր օրերի ռազմական ուղղաթիռները: Կամ ուրիշ օրինակ. կարեւո՞ր է իմանալ ինքնությունն այն երկու հրաշագործ վկաների կամ մարգարեների, որոնք նկարագրվում են 11-րդ գլխում եւ երեք ու կես տարի ապաշխարության կոչով մարգարեություն են անում:

Ոմանք գտնում են, որ նրանք Մովսես եւ Եղիա մարգարեներն են, ուրիշները՝ Ենովքն ու Եղիան, իսկ ոմանք էլ այլ ենթադրություններ են անում: Սակայն ամենեւին կարեւոր չէ իմանալ մորեխների ի՞նչ եւ մարգարեների ո՞վ լինելը: Այդ մասին իմանալը բնագիրը հասկանալու կամ չհասկանալու հետ կապ չունի: Առանց այդ մորեխների իրականում ինչ լինելն իմանալու՝ մենք շատ լավ հասկանում ենք, որ դրանք Աստծո արդար զայրույթն ի գործ դնող գործակալներ են: Եվ սա ինքնին բավարար է Աստծո պատգամն ամբողջությամբ եւ գերազանցապես ընկալելու, «հասկանալու» համար:

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԺԱՄԱՆԱԿ

Անընկալության երկրորդ տպավորությունը հետեւանք է Քրիստոսի երկրորդ գալստյան ակնկալության պակասի: Այդ գալստյան մասին Քրիստոսի կանխատեսումները՝ մեր հավատքի այս կարևորագույն կետը մոռացողները կամ անտեսողները (Մտ 24:3-31, Մր 13: 3-27, Ղկ 21: 7-36) դժվար թե հասկանան Հայտնության գիրքը, որը Հիսուսի մարգարեական կանխասացությունների ընդարձակ հայտնությունը կամ բացահայտումն է: Այս գրքի հունարեն անվանումը, որ առաջին գլխի «ապոկալիպսիս» բառն է, տառացիորեն նշանակում է բացահայտում, այսինքն՝ հայտնություն:

Քրիստոսի երկրորդ գալուստն առնչվում է երկրորդ բացատրության՝ «աշխարհի վախճան»ի հետ (հմմտ.՝ Մտ 24:3, 14, Մր 13:7, Ղկ 21:9), որ նշանակում է Աստծո կամքի համաձայն՝ աշխարհի ներկա վիճակի արմատական փոփոխությունն ու վերստեղծումը, երբ չարի ներկայությունն ընդմիշտ կվերանա աշխարհից:

Պատմությունն աննպատակ ընթացք չէ, այլ ընթանում է դեպի հստակ նպատակակետ կամ բարձրակետ: Ներկա ժամանակը հատկանշող այդ նպատակասլաց ընթացքում չարի ու բարու պայքարն աստիճանաբար ծավալվում ու խտանում է, մինչեւ հասնի գերագույն լարմանն ու վերջնական բախմանը, որն ավարտվելու է չարի ջախջախմամբ եւ բարու հաղթանակով: Հայտնության գիրքն այդ վերջին հանգրվանի պատկերացումն է, ուր տպավորիչ նկարագրությամբ հանդիսադրվում են այդ պայքարի տարբեր կողմերը՝ Աստծո արդարության, հաղթանակի փառավոր ցուցադրությամբ:

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Անընկալիության երրորդ տպավորությունը, վստահաբար, ստեղծվում է նաեւ նկարագրված աղետների երբեմն աներեւակայելի ու ահարկու բնույթից: Մարդկային միտքը սիրում է հաճախ կենտրոնանալ մանրամասնությունների վրա, մինչդեռ տրված պատկերն իրական, ինչպես որ կա, տեսնելը դա չէ: Ով կենտրոնանում է այդպիսի մանրամասնությունների վրա, ամենայն հավանականությամբ, մոռանում է գործի ամբողջականության մասին եւ նույն պատկերի տեղն ու դերը կամ նշանակությունն ամբողջի մեջ:

Ճիշտ է, մի շարք երեւույթների կամ իրողությունների մասին պատկերացումները ծանրաբեռնված են խորհրդանիշերով, բայց եւ այնպես միշտ էլ հստակ է, որ դրանք փոխնիփոխ ներկայացնում են Աստծո Թագավորությունն ու Երկնքի փառքը, Աստծո պաշտպանությունն ու Նրան հավատարիմ մնացողների փրկությունը:

Մյուս կողմից էլ ներկայացնում են չարի գործունեությունը Երկրի վրա մեր ժամանակներում եւ չարի հետեւորդներին ու Աստծուն մերժողներին վերապահված աղետները՝ որպես պատիժ, մինչեւ հնչի Քրիստոսի երկրորդ գալստյան ժամը, եւ Աստծո Թագավորությունը հաստատվի Երկրի վրա՝ իր դռները բացելով հավատքով հաղթանակողների առջեւ:

ԹՎԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Անհասկանալիության տպավորության մեջ որոշակի դեր ունեն հաճախակիորեն տրվող թվերը:

Հայտնության գրքում մեծ կարեւորություն է տրվում թվերին եւ դրանց նշանակությանը, թեպետ այդ «թվաբանություն»ը շատ մութ կամ դժվարին չէ եւ հատուկ է հայտնութենական գրականությանը: Դա հատկապես լավ գիտեն նրանք, ովքեր ծանոթ են Դանիելի գրքին:

Իրականում այդ թվերը խորհրդանիշեր են, որ արտահայտում են ինչ-որ անձի կամ առարկայի վերացական հատկանիշները: Այսպես, օրինակ, այնքան շատ գործածվող 7 թիվը կատարելության խորհրդանիշն է: Սրա հակառակն է 6 թիվը, որն անկատարություն է արտահայտում: Կատարելություն կամ ամբողջականություն արտահայտող ուրիշ թվեր եւս կան, ինչպես 3-ը կամ 10-ը: 4 թիվն աշխարհի խորհրդանիշն է: Աստծո ժողովրդի ամբողջականությունն այս աշխարհում արտահայտվում է 12 թվով, իսկ Երկնքում՝ 24 թվով եւ այլն:

Թվերը՝ երբեմն բացահայտորեն նշված, երբեմն էլ քննությամբ տեսանելի, շատ մեծ տեղ ունեն նաեւ Հայտնության գրքի ընդհանուր կառույցի կամ տեսիլքների շարքում: Այնտեղ, ըստ հերթականության, գտնում ենք աստիճանաբար բացվող 7 կնիքներ, դատապարտություն հնչեցնող 7 փողեր, Աստծո բարկության 7 անոթներ: Հայտնության գրքի տարբեր մասերում արձանագրված 7 «երանի»-ներ կան (1:3, 14:13, 16:15, 19:9, 20:6, 22:7 եւ 22:14): Հայտնության գրքի 4-20-րդ գլուխները հաջորդաբար ներկայացնում են Երկնքի ու Երկրի 7 տեսիլքները, որոնցով ի ցույց է տրվում Երկնքում հռչակված վճիռների գործադրությունը Երկրի վրա:

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ ՊԱՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՔԸ

Հայտնության գիրքը հասկանալու համար կարեւոր է գեթ մասամբ տեղեկանալ պատմական, քաղաքական կամ հասարակական այն կացությանը, որի պայմաններում գրվել է:

Առաջին հերթին բնավ չպետք է մոռանալ, որ առաջին դարը հալածանքների եւ նահատակությունների դար էր: Յուրաքանչյուր քրիստոնյա ամենօրյա կյանքով պետք է իր հավատքի վկայությունը տար, իսկ ժամանակի կրոնա-քաղաքական իրավիճակում ու պայմաններում դա նշանակում էր ամենօրյա բախում թե՛ կրոնական եւ թե՛ քաղաքական իշխանությունների հետ: Այդ բախմանը հաջորդում էին հալածանքները՝ ընդդիմություն, ծաղր, արգելքներ, կալանք, աքսոր, նահատակություն:

Երկրորդ՝ նույնպես չպետք է մոռանալ, որ առաջին դարի քրիստոնյաներն ապրում էին «կրոնականացած» հասարակության մեջ: Այսօր կրոնը զուտ անձնական համոզմունքի ու խղճի հարց է: Մենք տարիներով կարող ենք ապրել որեւէ մեկի հարեւանությամբ եւ նույնիսկ նրա հետ բարեկամություն անել՝ առանց երբեւէ հետաքրքրվելու կամ հարցնելու նրա կրոնական համոզմունքների մասին:

Անկարելի է նման բան երեւակայել անցյալում. կրոնը ներկա էր կյանքի բոլոր մարզերում՝ տաճարից մինչեւ շուկայի առք ու վաճառք: Չմասնակցել շրջապատի հեթանոսական պաշտամունքներին նշանակում էր հակադրվել դրանց: Նման մոտեցումը կնկատվեր թշնամություն աստվածների եւ այդ աստվածների հովանավորության տակ գտնվող երկրի, գավառի կամ քաղաքի հանդեպ:

Սրան ավելանում էր նաեւ կայսեր պաշտամունքը: Ներոն կայսրից սկսած՝ կայսրերն իրենց աստվածներ հայտարարեցին, կայսրության տարբեր ոստաններում իրենց համար տաճարներ կառուցել տվեցին, եւ նրանց պաշտամունքը պարտադիր դարձավ կայսրության բոլոր հպատակների համար: Այդ պաշտամունքի հետ չհամակերպվելը համարվում էր կայսեր դեմ թշնամություն եւ ըմբոստություն, այսինքն՝ քաղաքական դավաճանություն:

Արդ, քանի որ քրիստոնյա մարդուն շրջապատում էին հեթանոսական կրոնները, դրանց առնչվող հավատալիքներն ու ավանդությունները, ուստի ամենօրյա խնդիր եւ հաճախ նաեւ տագնապ էր առաջացնում այն հանգամանքը, թե ինչպե՞ս պետք է հարաբերվել նման շրջապատի հետ, ինչպե՞ս վերաբերվել հասարակական հողի վրա հաճախ պարտադիր դարձող, ընկալյալ սովորություններին, որոնք ներծծված էին հեթանոսականությամբ: Նման միջավայրն ու կացությունը ոչ միայն դժվարացնում էին քրիստոնյա մարդու գործն ու հարաբերությունները, այլ նաեւ մնայուն փորձություն էին՝ կրկնակի իմատով:

1. **Մարդը**, հասարակական արարած լինելով, շրջապատին նմանվելու կամ շաղվելու, տարբեր չլինելու եւ չերեւալու բնական հակում ունի: Քրիստոնյաները հաճախ կամա թե ակամա հետեւում էին ժամանակակից կյանքի հասարակական որոշ երեւույթների՝ հրապարակային թե առտնին, ինչը երբեմն նրանց եւ երբեմն էլ հավատակից ուրիշ անձանց գայթակղության ու հավատքից շեղվելու պատճառ էր դառնում: Պողոս առաքյալն իր նամակներում քանիցս անդրադարձել է նման երեւույթների ու հարցերի, որոնք կատարյալ «փորձություններ» էին (տե՛ս, օրինակ, Ա Կր 8:1-13, 10:12-33):

2. **Մարդը** մտածողության եւ զգացողության զանազան հոսանքների միջեւ մնայուն ծփանքի վիճակի մեջ է, մանավանդ եթե նրա սովորած, ընդունած ու դավանած սկզբունքները խոր արմատներ չեն նետել նրա մեջ եւ բացարձակ համոզմունքի չեն վերածվել: Մտածողության եւ զգացողության նման ծփանուտ վիճակի մեջ մարդը դյուրությամբ կարող է ենթարկվել որոշ ազդեցությունների՝ առանց պարտադրանքի կամ ճնշման:

Այդպես էր, որ ժամանակին հեթանոսական որոշ գաղափարախոսություններ կամ իմաստասիրական ուսմունքներ ուղղակի կամ անուղղակի ազդեցություն թողեցին որոշ քրիստոնյաների կամ քրիստոնյա համայնքների («եկեղեցի») վրա: Օրինակ՝ այդ մասին վկայություններ ենք գտնում Հայտնության գրքում:

Հալածանքներն ու նեղությունները միայն հեթանոսական ճակատից չէին գալիս: Կար նաեւ հրեությունը: Քրիստոնյաները, Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքի բերումով, շեղվելով հրեական կրոնից, իրենց կապերն անմիջապես չխզեցին տաճարի կամ ժողովարանների հետ: Կապը խզողները մոլեռանդ հրեաներն էին, ովքեր Հրեաստանում եւ Պաղեստինում սկսեցին կատաղի հալածել Քրիստոսին հարողներին: Իսկ այդ երկրներից դուրս՝ Հռոմեական կայսրության ամբողջ տարածքում, քրիստոնյաներին ժողովարաններից արտաքսելով՝ հռոմեական իշխանությունների ձեռքն էին հանձնում որպես կայսրից բացի ուրիշ թագավորի հպատակներ, կայսրության թշնամիներ: Հրեաների այս կատաղի հակառակության եւ թշնամական վերաբերմունքի պատճառով է, որ նրանք Հայտնության գրքում բնորոշվում են որպես «Սատանայի ժողովք» կամ «Սատանայի հետեւորդներ» (տես 2:9 եւ 3:9: Հմմտ.՝ Հիսուսի նույնանման բացատրությունը՝ Հհ 8:44 եւ 47):

Հայտնության գիրքը գրվել է քաղաքական, կրոնական եւ հասարակական այսպիսի կացության մեջ՝ գիրքն ընթերցող քրիստոնյաներին Աստծո պատասխանը բերելու համար: Դա հավատքի պատասխանն է, որը հայտնության ձեւով տրվում է հենց Իրենից՝ մեր «հավատքի Հիմնադրից»՝ Հիսուս Քրիստոսից (հմմտ. Եբր 12:2):

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Գիրքն ամբողջությամբ ընկալելու համար շատ կարեւոր է նաեւ հասկանալ դրա նպատակը:

Եթե հիշենք այն իրողությունը, որ Հայտնության գիրքը բացվում ու փակվում է մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի վերահաս գալստյան խոստումով, եւ այդ անմիջական վերադարձի լույսի տակ էլ հայտնությունը կատարող Տերը Հովհաննես առաքյալին հրահանգում է. «Այս գրքի մարգարէութեան խօսքերը կնքուած մի՛ պահիր, որովհետեւ մօտեցել է ժամանակը» (Հտ 22:10), ապա պարզ ու հստակ կդառնա, որ գիրքը հետապնդում է երկու անմիջական նպատակ, որոնք մեծ ու բացառիկ կարեւորություն ունեն Աստծո եւ Նրա եկեղեցու համար:

Առաջին նպատակն է սկզբից ցույց տալ այն, ինչ կպատահի շուտով (Հտ 1:1), այսինքն՝ թե Եկեղեցին ինչպես է մատնվելու փորձությունների ու վտանգների, ինչ ուղղության է հարելու աշխարհը՝ կրոնական, քաղաքական, հասարակական ու բարոյական բնագավառներում, եւ թե, ի վերջո, ինչի՛ է հանգելու այդ ամբարիշտ ուղղությունը, Աստված ինչպես է միջամտելու անօրինությամբ հղփացած այդ աշխարհն Իր բարկության հնձանում կոխկռտելու եւ արդարությամբ, խաղաղությամբ առաջնորդվող նոր աշխարհակարգ հաստատելու համար:

Նման հեռանկարը նկատի առնելով՝ գիրքը հետապնդում է **երկրորդ նպատակ** եւս՝

1. **Ազդարարել եւ հորդորել**: Ուրվագծորեն ճանաչելուց հետո առաջին դարի քաղաքական, կրոնական ու հասարակական պատկերը եւ այդ պատկերի մեջ առկա այն կացություններն ու մտածողությունը, որոնց քրիստոնյաները պետք է դիմագրավեին, կարող ենք լավագույնս հասկանալ, թե Հայտնության գիրքը ինչո՛ւ է գալիս զորեղապես ազդարարելու եւ թելադրելու, որ Քրիստոսի հետեւորդները հստակորեն ճշտեն իրենց կեցվածքն աշխարհի ու աշխարհայինի նկատմամբ:

Նրանք չպետք է վերոհիշյալները հաշտեցնեն իրենց հավատքի հետ: Քրիստոնյաները հալածանքների ու նեղության դիմաց չպետք է փորձեն ճկվել ու կիսամիջոցների դիմել, որոնք փախուստի դուռ են: Նրանք պետք է քաջություն ունենան մինչեւ վերջ դիմադրելու եւ հաստատ մնալու իրենց հավատքի մեջ, որովհետեւ նրանց Տերն ու Վարդապետը՝ Հիսուս Քրիստոսը, Ով մեռավ ու Հարություն առավ եւ հավետ կենդանի է (Հտ 1:18, 2:8), Ով հաղթեց աշխարհին, շուտով կգա՝ վերջնականորեն տապալելու այս աշխարհի չար տիրապետությունները, Իր թագավորության հովանին տարածելու ամբողջ աշխարհի վրա եւ արդարության փառավոր պսակով հատուցելու իրենց:

2. **Վստահություն ներշնչել:** Հայտնության գրքի նկարագրի մասին խոսելով հաստատեցինք, որ գիրքը գրվել է խորհրդանիշերի լեզվով, երկնային տեսիլքների ձեւով եւ վերահաս աղետների ու մեծ նեղությունների պատկերներով: Այդուհանդերձ, գրքի նպատակը բնավ հավատացյալների սրտերը վերահաս սարսափով լցնելը չէ:

3. **Ցույց տալ Քրիստոսի հաղթական Թագավորությունը եւ քաջալերել:** Հայտնության գիրքը նաեւ փորձում է ցույց տալ, որ Քրիստոսին հավատացող մարդու համար երեւույթները չպետք է կարեւոր լինեն: Կարող է թվալ, թե աշխարհը զորավորինն է, իշխանության գլուխ կանգնածը կարող է ինքն իրեն ամենատեր կարծել: Չարի ահավոր ներկայությունը հաճախ կարող է մոռանալու տալ Աստծո տիրապետությունն աշխարհի վրա, սակայն երեւույթներից այն կողմ կա իրողություն, որ միայն հոգեւոր աչքը կարող է տեսնել, միայն աստվածային ճշմարտություններին հաղորդ հոգին կարող է կարդալ կամ զգալ ու խոստովանել:

Դա Աստծո ներկայությունն է Երկրի վրա, Աստծո ղեկավարությունն աշխարհի պատմության ու մարդկանց կյանքի ընթացքում եւ Աստծո Թագավորությանը հավատացող հոգիներում: Աշխարհում առկա իսկական ուժն ու արդարությունը, զորությունն ու փառքը, թագավորությունն ու պատիվն աշխարհին իշխող քաղաքական իշխանություններին չեն պատկանում, այլ՝ Քրիստոսին: Աշխարհի իշխանությունն ու թագավորությունը սատանային կամ Հռոմին չեն պատկանում, այլ՝ Քրիստոսին:

Սա՛ է պատգամը Հայտնության գրքի, ուր նկարագրվում են երկնքից հնչող ձայները, որոնք ասում են. «Ամբողջ աշխարհի թագաւորութիւնն այլեւս պատկանում է մեր Տիրոջը եւ Նրա Օծեալին, որը թագաւորելու է յաւիտեանս յաւիտենից» (Հտ 11:15): Արդ, Քրիստոսի հետեւորդը պետք է իմանա, որ Քրիստոսը հաղթեց աշխարհին, եւ Նա՛ է բացարձակ Տերն ու բոլորի Դատավորը: Քրիստոսի հետեւորդի համար այդ գիտակցությունը դառնում է զորության աղբյուր:

Հալածանքների, նեղությունների ու սատանայական փորձությունների հանդեպ այդ գիտակցությունը հաղթող է դարձնում նրան՝ օգնելով, որ չտկարանա ու չենթարկվի չարի այլասերիչ կամքին, այլ կյանքի խռովիչ իրականության դեմ հանդիման գտնի իր հոգու անդորրն ու ենթարկվի Աստծո փրկարար կամքին. չէ՞ որ Հիսուսն Ինքը վերնատանը Իր աշակերտներին ասաց. «Այս բաներն ասացի ձեզ, որպէսզի Ինձանով խաղաղութիւն ունենաք: Աշխարհում դուք նեղութիւն կունենաք, սակայն քաջալերուեցէք, որովհետեւ Ես յաղթեցի աշխարհին» (Հհ 16:33):

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԿԱՄ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Շատերը տարբեր ձեւերով են բաժանում գիրքը, սակայն հիմնականում գիրքն ունի բնական բաժանում, որը բոլորն են ճանաչում: Ըստ այդ բնական բաժանման՝ գիրքը բաղկացած է երեք մասերից՝

1. **Մուտք**, որտեղ Հովհաննես առաքյալը ներկայացնում է իր ունեցած տեսիլքը եւ ստացած մարգարեական պատգամը, ինչը եւ փոխանցում է Փոքր Ասիայի յոթ եկեղեցիներին (1-3-րդ գլուխներ):

2. **Երկնային ատյան եւ աստվածային դատաստաններ**, որոնք, որպես պատիժ, թափվում են Երկրի վրա՝ չար աշխարհի եւ մոլորության առաջնորդող չար ուժերի դեմ (4-19-րդ գլուխներ):

3. **Քրիստոսի հաղթական վերադարձ եւ հազարամյա Թագավորություն**, ապա վերջին ապստամբություն եւ վերջին դատաստան, որին հաջորդում է հավիտենական կյանքի երանական վիճակի պատկերացումը, ինչը լինելու է Աստծուն հավատարիմների, չարի դեմ պայքարում հաղթանակողների բաժինը (20-22-րդ գլուխներ):

Սրանց առաջին մասը ներկայացնում է ներկա ժամանակը, այսինքն՝ Հովհաննես ավետարանչին ժամանակակից Եկեղեցին ու աշխարհը:

Երկրորդ մասը ներկայացնում է անմիջապես հետո գալիք ժամանակը, որը ձգվում է մինչեւ կատարածը, այսինքն՝ մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը:

Իսկ երրորդ մասը ներկայացնում է այս աշխարհի վախճանը կամ կատարածը, որ բացվում է Քրիստոսի երկրորդ գալուստով:

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Հայտնության գրքի մեկնության դժվարությունը ճանաչել ու խոստովանել են բոլոր ժամանակներում: Սակայն մարդիկ եթե նույնիսկ չեն համարձակվել մեկնել, ապա բնավ էլ չեն դադարեցրել գիրքը հետաքրքրությամբ կարդալը:

Ինչպե՞ս մեկնել այս գիրքը: Այս մարգարեական հայտնությունները խոսում են անմիջական, մոտակա՞, թե՞ հեռավոր ապագայի մասին: Ահա մեկնիչների առջեւ ծառացած հարց, որին ի պատասխան առաջացել են մեկնության չորս ուղղություններ՝

1. **Անցյալահայաց մեկնություն:** Այս ուղղությունը Հայտնության գիրքը համարում է գլխավորաբար հրեության եւ հեթանոսների դեմ առաջին դարի Եկեղեցու բախումների արձանագրություն: Ըստ այս տեսության՝ 5-11-րդ գլուխներն արձանագրում են Եկեղեցու հաղթանակը հրեության դեմ, իսկ 12-19-րդ գլուխները՝ Եկեղեցու հաղթանակը Հռոմեական կայսրության ու հեթանոսության դեմ: Ըստ այս մեկնության՝ Հայտնության գրքի մարգարեությունները կատարվել

են մինչեւ Կոստանդիանոս կայսեր հրամանով քրիստոնեության ազատ դավանելի կրոն հռչակվելը (313 թ.):

2. **Պատմահայաց մեկնություն:** Ըստ այս տեսության պաշտպանների՝ Հայտնությունն ընդգրկում է Եկեղեցու ամբողջ պատմությունը՝ սկզբից մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը, եւ ներկայացնում է Եկեղեցու մնայուն պայքարը չարի չեմ: Այս մեկնության պաշտպաններից են կաթոլիկ եւ բողոքական մի շարք աստվածաբաններ: Եվ ըստ յուրաքանչյուր մեկնիչի պատկանելության ու համոզմունքների՝ որոշ խորհրդանիշերի տակ կարդացվում են Եկեղեցու կյանքի տարբեր երեսները կամ երեւույթները, ինչպես, օրինակ, Հռոմի անկումը, արաբական արշավանքները, բողոքական բարեկարգական շարժումը, Հռոմեական Եկեղեցու որոշ չարաշահումներն ու նրա դեմ պայքարը եւ այլն:

3. **Ապագահայաց մեկնություն:** Այս տեսության կողմնակիցները Հայտնության գիրքը համարում են գլխավորաբար մարգարեություն, որը դեռ նոր է կատարվելու, հետեւաբար, 4-19-րդ գլուխները դիտում են ոչ թե որպես արդեն կատարված, այլ Քրիստոսի երկրորդ գալուստից անմիջապես առաջ կատարվելիք դեպքեր:

Այս մեկնության պաշտպանները հազարամյակը հասկանում են տառացիորեն՝ որպես հազար տարիներ, որոնք հաջորդելու են Քրիստոսի երկրորդ գալստյանը, եւ որի ավարտին տեղի են ունենալու Վերջին դատաստանը, Երկնքի ու Երկրի նորոգությունն ու հավիտենական կյանքի սկիզբը: Կանխագույն Եկեղեցու հայրերից շատերը, ինչպես Հուստինոս Վկան, Երանոս հայրապետը, Հիպպոլիտոսը եւ այլք, հարում էին այս ուղղությանը:

4. **Իդեալապաշտ մեկնություն:** Հոգեւոր մեկնության կողմնակից որոշ մեկնիչներ՝ Որոգինեսի եւ Կղեմես Աղեքսանդրացու գլխավորությամբ, Հայտնության գրքի տվյալները զուտ այլաբանական են համարում: Ըստ այս տեսության՝ նշված այլաբանությունների նպատակն է պատկերացում տալ չարի ու բարու հավիտենական հակադրության ու պայքարի մասին, քաջալերել Եկեղեցուն եւ մի շարք հոգեւոր դասեր տալ: Այս տեսության հարողները հազարամյան տա-

ռացիորեն չեն ընկալում: Այս տեսության կողմնակիցներից էր մեր Եկեղեցու հայրերից Սուրբ Գրիգոր Տաթեւացին:

Որն էլ լինի մեկնիչի որդեգրած ուղղությունը, կարեւորը Հայտնության գրքի հիմնական պատգամը չկորցնելն է. այդ պատգամն արթնության հրավեր է, հավատքի ամրության կոչ, Աստծո հանդեպ հավատարմության հանձնառություն, չարի դեմ պայքարի մեջ տեսիլք ու խոստում, որ մարդուն մասնակից է դարձնում Քրիստոսի վերահաս հավիտենական Թագավորության անանց փառքին եւ անպատմելի օրհնություններին:

Հայտնության գրքի մասին այս ներածական խոսքը փակելուց առաջ նշենք մի քանի հաստատումներ եւս:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՎԵՐՋԻՆ ԳԻՐՔԸ

Պատահական չէ, որ Հայտնությունն Աստվածաշնչի վերջին գիրքն է. իսկական իմաստով այս գիրքն Աստծո Հայտնության լրումը, ամբողջացումն է, Աստծո փրկագործական ծրագրի յուրատեսակ ամփոփումն ու փառավոր եզրակացությունն է, Աստծո վերջին հայտնությունն ու վերջին խոսքը՝ ուղղված Իր Եկեղեցուն՝ մեզ:

Հայտնության գրքով Աստծո փրկագործությանն ու անիմանալի արդարությանը հուսացողների երանական վախճանի մասին ասելիքն ասվել է, արթնության եւ պատրաստության ազդարարությունն ու հորդորը տրվել են զորեղ թելադրականությամբ, եւ Եկեղեցուն, այսինքն՝ մեզ մնում է լսել Նրա պատգամն ու հավատքի ամբողջ զորությամբ փարվել այն կոչմանը, որին մեզ հրավիրեց Աստված՝ ընտրելով մեզ (Բ Պտ 1:10):

ՔՐԻՍՏՈՍԻ ԳԻՐՔԸ

Հայտնությունը գերազանցապես Քրիստոսի գիրքն է: Ավետարանները, բացառությամբ Հովհաննեսի ավետարանի, ներկայացնում են Քրիստոսի մարդեղությունը, երկրավոր կյանքն ու փրկագործական առաքելությունը, խաչի վրա զոհագործական մահն ու

փառավոր Հարությունը եւ Երկինք Համբարձումը՝ միաժամանակ բացահայտելով Նրա կենդանացնող խոսքի ու կենարար ուսուցման կարեւոր կորիզը: Նրանում, ավելի ստույգ, մարդ-Հիսուսն է, Ով ներկայանում է մեզ եւ խոսում մեզ համար:

Քրիստոսի աստվածությունը ներկայանում է միայն շատ քողարկված ձեւով, մինչդեռ Հայտնության գրքի առաջին էջից մինչեւ վերջին վերջակետը Քրիստոսը ներկայանում է Իր աստվածային փառքով, այնտեղ այլեւս չկա քողարկում: Քրիստոսը բացարձակ Տեր ու Աստված է, Ամենակալ, Առաջինն ու Վերջինը, ամեն բանի Սկիզբն ու Վախճանը, Այբն ու Քեն, սուրբը, ճշմարիտը, թագավորների Թագավորը եւ տերերի Տերը, «Նա է, որ էր եւ որ պիտի գայ», Նա, որ Հոր հետ նույն գահը եւ նույն իշխանությունն ունի եւ Հորը համահավասար փառք, երկրպագություն ու պաշտամունք է ստանում:

Այս Հայտնությունը Քրիստոսի գիրքն է, որովհետեւ որպես հայտնություն եւ մարգարեություն՝ ծայրից ծայր Քրիստոսի եւ Նրա ճշմարիտ ինքնության մասին վկայություն է, մի վկայություն, որ տալիս են հրեշտակներն ու Եկեղեցին, ինչպես հրեշտակն է պարզորոշ ասում. «Յիսուսի մասին վկայելն է բուն մարգարէութեան հոգին» (Հտ 19:10):

ՀՈՒՅՍԻ ԵՎ ՍՊԱՍՄԱՆ ԳԻՐՔԸ

Հայտնության գիրքը նաեւ Քրիստոսի գիրքն է, որովհետեւ ծայրից ծայր լեցուն է երջանիկ հույսով, կենդանի ակնկալությամբ, Քրիստոսի երկրորդ գալստյան ակնկառույց (մեծապես զարմացյալ) սպասումով: Մի գալուստ՝ ապահով ու անսխալ, որը տեղի է ունենալու մոտ ապագայում, եւ որի ոչ միայն խոստումը, այլ նաեւ ահեղ ու փառավոր պատկերացումն է տրվում Հայտնության գրքում. «Ահա Նա գալիս է ամպերի վրայ: Ամէն մարդ կտեսնի Նրան, նաեւ նրանք, որ խոցեցին Նրան» (Հտ 1:7): Քրիստոս Ինքը եւս ասում է. «Ահա շուտով գալու եմ», իսկ Եկեղեցին՝ Քրիստոսի Հարսը, այլ խոսքով՝ մենք՝ Իրեն սպասողներս, թախանձագին աղոթում ու աղերսում ենք՝ ասելով. «Ամէն: Եկ, Տէր Յիսուս»:

ԱՐԹՆՈՒԹՅԱՆ ԿՈՉԻ ԳԻՐՔԸ

Ինչպես Քրիստոս աշխարհի կատարածի եւ երկրորդ գալստյան մասին հայտնութենական Իր խոսքերը միշտ կնքեց ազդարարությամբ եւ արթուն հսկելու կոչով, որպեսզի Տերը, նշված օրը գաղտագողի գալով, մեզ անպատրաստ չգտնի, եւ հիմար կույսերի նման դուրս չմնանք Երկնավոր Հարսանիքից, Հայտնության գիրքը նույնպես մնայուն զգաստության եւ արթնության հրավեր է, որն ուղղում է բոլոր եկեղեցիներին ու բոլոր ժամանակների ընթերցողներին:

Եթե Քրիստոսի երկրորդ գալուստը մի կողմից երջանիկ հույսի ավետիս է եւ ակնկալություն, ապա մյուս կողմից Վերջին դատաստանի ահեղ ակնկալությունն է: Խոստումները մեծ ու փառավոր են նրանց համար, ովքեր մնում են արթուն ու զգաստ, իրենց զգեստները պահում են մաքուր եւ գրանցվում են Կյանքի Գրքի մեջ:

Սակայն որքա՜ն դառն ու ողբալի է լինելու նրանց վիճակը, ովքեր հավատքի մեջ սեփական անհոգության ու անտարբերության, ծուլության ու թուլության հետեւանքով կորցնելու են ճրագարանը եւ իրենց գտնելու են Աստծո ներկայությունից ընդմիշտ զրկված:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Ա ԳԼՈՒԽ

ՆԱԽԱԲԱՆ

Այս կարճ նախաբանը մի քանի ճշգրտումներ է փոխանցում մեզ: Դրանք են՝

1. **Նախ ճշտում է հեղինակին**. նա հստակորեն ասում է, թե ընծայվող Հայտնությունը Հովհաննես առաքյալինը չէ, այլ Հիսուս Քրիստոսի Հայտնությունը Հովհաննես առաքյալին (հմր 1), որեւէ մարդու խոսք չէ, այլ «Աստուծոյ խօսքն է եւ Յիսուս Քրիստոսի տուած վկայութիւնը» (հմր 2): Այս վերջին բացատրությունը ցույց է տալիս, որ Քրիստոսը Հայտնության գրքով մի նոր ու վերջին հայտնություն է բերում մեզ: Հայտնության գիրքը նաեւ Ավետարանների միջոցով մեզ ավանդված Նրա նախորդ հայտնությունների ամբողջացումն է:

2. **Ճշտում է նպատակը**. «որպէսզի Նա Իր ծառաներին ցոյց տայ, թէ շուտով ի՛նչ պիտի պատահի» (հմր 1: Հմմտ.՝ 4:1 եւ 22:6): Հայտնութենական գրականության մեջ բացատրության այս ձեւով ակնարկվում են վերջին ժամանակները՝ նկատի ունենալով, որ գրողն ինքն իրեն համարում է աշխարհի կատարածը կամ վախճանական ժամանակները կանխող վերջին սերնդի ներկայացուցիչ (հմմտ.՝ Դն 2:28-29 եւ 45):

3. **Ճշտում է**, որ այս հայտնությունը մի հրեշտակի միջնորդությամբ է տրվել Հովհաննես առաքյալին, որպեսզի նա, իր հերթին, որպես վկայություն, փոխանցի Եկեղեցուն (տես հմր 1:2): Այստեղ բնագրային բայը «նշանակեց»ն է (հունարեն՝ էսի՛մանէն), ինչը ցույց է տալիս, որ այս հայտնությունը կատարվել է նշաններով կամ խորհրդանշաններով, մի բան, որ բնորոշ է հայտնութենական գրականությանը:

4. Ի վերջո, **ճշտում է**, որ մոտ է հայտնված դեպքերի կատարումը, եւ երանի է տալիս այն կարդացողներին, լսողներին ու պահողներին (տե՛ս հմր 3): Սույն «երանի»ն ընդգծում է Հայտնության գրքի կարեւորությունը, դրանում առկա պատգամների անհետաձգելի այժմեականությունը եւ քրիստոնեական վախճանաբանության առնչությամբ նրա բերած մեծ հույսն ու լույսը:

Արդ, «… որպէսզի նա իր ծառաներին ցոյց տայ, թէ շուտով ի՞նչ է պատահելու» (հմր 1): Այս «շուտով»ը շատերը հասկացել են անմիջական իմաստով եւ, ըստ այնմ էլ, հաջորդող հայտնություններն ընկալել են առաքյալին ժամանակակից դեպքերի համար: Սակայն այս «շուտով»ը, հավանաբար, ավելի հարաբերական իմաստ ունի եւ կարող է նշանակել ամբողջ ներկա ժամանակը՝ մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը, որը նույնպես «շուտով» պիտի լինի (հմմտ.՝ 22:7, 12 եւ 20):

Հետաքրքրական է նկատի առնել, որ Քրիստոս այս առիթով ապագայի վերաբերյալ բաներ է հայտնում, որոնք չէր հայտնել Իր մարդեղության օրերում եւ բավարարվել էր միայն ասելով. «Դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, սակայն այժմ չէք կարող տանել» (Հհ 16:12): Այժմ, երբ աշակերտներն ու Եկեղեցին ունեն հրաշափառ Սուրբ Հարության ապացույցն ու հարուցյալ կյանքի փորձառությունը, երբ ճանաչում են Հիսուսին ոչ միայն Նրա կատարյալ մարդեղության, այլ նաեւ կատարյալ աստվածության մեջ, երբ նրան ճանաչում են Տեր եւ Արարիչ, որպես «Սկիզբն ու Վախճանը» (հմր 8 եւ 17), այսինքն՝ անժամանակ եւ հավիտենական Աստված, որ ունի ոչ միայն անցյալի ու ներկայի, այլ նաեւ ապագայի իմացությունը (հմմտ.՝ Հհ 13-19), աշակերտներին ու Եկեղեցուն հայտնում է գալիք իրականությունների որոշ ծալքերը՝ նրանց նախապատրաստելու համար Իր մեծ գալստյանն ու Արքայության հաստատմանը:

«… Իր տեսած բոլոր բաների մասին» (հմր 2) խոսքը վերաբերում է Հովհաննես առաքյալի ունեցած տեսիլքին եւ այդ տեսիլքով նրան հայտնված բոլոր բաներին (տե՛ս հմր 9-20): Այստեղ ձեռագրով մի քանի ավելացումներ կան. «Ինչ որ հիմա պատահում է եւ ինչ որ այսուհետեւ պատահելու է»:

«Երանի՜ նրան, ով կարդում է այն, ինչ գրուած է այս գրքում, եւ երանի՜ նրանց, ովքեր լսում ու պահում են այս մարգարէութեան պատգամները, որովհետեւ ժամանակը մօտեցել է» (հմր 3): «Երանի՜» բառը, ըստ բացատրության, Աստվածաշնչում արտահայտում է այն առանձնաշնորհումը, որ Աստված պարգեւում է ներկայում եւ մանավանդ հանդերձյալում է պարգեւելու Իրեն հավատացող ու ամբողջապես Իրեն ապավինած յուրաքանչյուր մարդու՝ անկախ աշխարհում նրա ունեցած դիրքից կամ նյութական վիճակից:

Այդպիսի «երանի՜»ներ հաճախ ենք կարդում Հին Կտակարանում (տե՛ս, օրինակ, Սղ 1:1, 2:13, 34:8, 41:1, 94:12, 109:3, 112:1, 119:2, 128:1, Առ 14:21, 29:18, Ես 56:2 եւ այլն): Այդպիսի «երանի՜»ներ տվեց Քրիստոս՝ ճշմարտորեն Իրեն հետեւողներին եւ Աստծո Սիրո համար սուգ ու տրտմություն, քաղց ու ծարավ, զրկանք ու հալածանք հանձն առնողներին (տե՛ս Մտ 5:3-12):

Հետաքրքրական յոթ «երանի»ներ ունի նաեւ Հայտնության գիրքը (մյուս 6-ը տե՛ս՝ 14:13, 16:15, 19:9, 20:6, 22:7 եւ 14): Նշված առաջին «երանի»ն ուղղվում է Աստծո՝ Հայտնության գրքով տրված պատգամին ականջալուր եղողներին, որովհետեւ այն հավիտենական կյանքին տիրանալու միակ ճանապարհն է, նաեւ շեշտում է պատգամի այժմեականությունն ու բացառիկ կարեւորությունը, «որովհետեւ ժամանակը մօտեցել է»:

Աստծո խոստումների կատարմանն սպասող Եկեղեցու եւ անհատ հավատացյալների համար չի կարող ավելի ուրախացուցիչ եւ միանգամայն զգաստացնող բան լինել, քան անդրադառնալն այն իրողության, որ Աստված հանձնում է մեր ուշադրությանը:

ՈՂՋՈՒՅՆ ՅՈԹ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ

Այն յոթ եկեղեցիները, որոնց ուղղված է ողջույնը, Փոքր Ասիայի հարավարեւմտյան ծայրամասում գտնվող քրիստոնեական համայնքներն էին, որոնք բոլորն էլ տվյալ ժամանակաշրջանում հռոմեական մեկ նահանգի մաս էին կազմում Ասիա անունով, որ ներառում էր

անցյալի Փոյուգիա, Միսիա, Գարիա եւ Լիդիա փոքրիկ նահանգները: Սրանք շրջանի միակ եկեղեցիները չեն, թեպետ, վստահաբար, կարեւորագույններն են: Այդուհանդերձ դրանք հիշվել են ներկայացուցչաբար:

Ակնարկված յոթ եկեղեցիներն անուն առ անուն հիշատակվել են 11-րդ համարում, եւ թեպետ Հայտնության գիրքն առաջին հերթին ուղղված է նրանց, բայց գրքի ողջույնը եւ պատգամը միայն յոթ եկեղեցիների համար սահմանափակելն արդար չէր լինի: Այս հայտնությունն ուղղված է բոլո՛ր եկեղեցիներին: Չպետք է մոռանանք, որ գրքում առատորեն օգտագործված են խորհրդանիշեր, եւ այստեղ թվում է, թե յոթ թիվն ամբողջականություն եւ կատարելություն արտահայտող խորհրդանիշ է:

Ուստի, տրված հայտնությունը չի վերաբերում միմիայն յոթ եկեղեցիներին, այլ նաեւ՝ Քրիստոսի ամբողջ Եկեղեցուն: Ողջույնի բանաձեւը հետեւում է անցյալի նամակագրության ընդունված կաղապարին: Նույնպիսին են նաեւ հաջորդող առաջին բառերը. «Շնորհք եւ խաղաղութիւն ձեզ», որ քրիստոնեական ողջույնի ձեւն է եւ հատուկ է Նոր Կտակարանում առկա բոլոր նամակներին:

Սակայն անհրաժեշտ է հիշել, որ այս զույգ բառերը եւս, որոնք կարող էին պարզ բարեւ նշանակել կամ առավելագույնը՝ որեւէ արեւելցու հիշեցնել Աստծո պարգեւի մասին, Քրիստոսի, ապա նաեւ Նրա Եկեղեցու պարգեւի մասին, Քրիստոսի եւ Նրա Եկեղեցու շուրթերին դարձան Աստծո փրկության, այդ անվճար ու սքանչելի փրկության բերած խաղաղության, Աստծո եւ մարդկանց հետ հաշտության արտահայտիչը (հմմտ.՝ Եփ 2:4-10 եւ 14-18):

«… Նրանից է, որ է, որ էր եւ որ գալու է» (հմր 4) բացատրությունը որոշապես Աստծո անվան տարբերակներից է՝ «ԵՍ [ՆԱ] ԵՄ, ՈՐ Է», որ գտնում ենք Ելից գրքում (3:14), եւ շեշտում է Աստծո անփոփոխելիությունն ու մշտնջենականությունը: Իսրայելի պատմության մեջ հայտնված Աստված նույն տիեզերքի արարիչ Աստվածն է եւ ամբողջ ստեղծագործությունն իր սկզբնական միությանն ու նպատակին կոչող, առաջնորդող եւ իր կատարմանը հասցնող Աստված

նույնն է: Նրա մեջ միավորվում են անսկիզբ անցյալը, մշտական ներկան եւ անվախճան ապագան: Այսպիսի անվանումը կատարելապես համապատասխանում է այս գրքի հայտնությանը, որովհետեւ հենց գիրքը եւս միտում է մեզ մատնացույց անել անցյալը, ներկան եւ գալիքը (տե՛ս հմր 19): Ոմանք ցանկանում են այդ անվան տակ նկատի առնել միայն Հորը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 5-րդ համարի սկզբում Հիսուս Քրիստոսի անունը գրվել է «եւ» շաղկապով ու անջատ: Սակայն այդ տեսակետը ճիշտ չէ: Հակառակ երեւութական անջատմանը՝ իրական իմաստով անջատում չկա Հոր եւ Որդու միջեւ: Փաստորեն այս նույն գլխում Որդին Ինքն Իրեն ներկայացնում է այսպես. «Ես եմ Այբը եւ Ես եմ Քէն» կամ «Ես եմ Սկիզբը եւ Ես եմ Վախճանը» (հմր 8 եւ 17), որը նույնպես նշանակում է անցյալը (Սկիզբը), ներկան (Եմ) ու գալիքը (Վախճանը): Իսկ 7-8-րդ համարները ցույց են տալիս, որ այդ բանաձեւումն առավելաբար Որդուն է վերաբերում (հմմտ.՝ Եբր 13:8), ինչպես հետո տեսնելու ենք հիշյալ համարների մեկնության ժամանակ:

«… Եւ այն եօթ հոգիներից, որոնք Աստուծոյ գահի առջեւ են» (հմր 4): Ոմանք այս բացատրության տակ հասկանում են Սուրբ Հոգին. թեպետ այստեղ յոթ հոգիներ են հիշատակվում, սակայն վերեւում ասացինք, որ յոթ թիվն ամբողջություն եւ կատարելություն է խորհրդանշում: Այս պարագայում յոթ թիվը կարող է լինել շնորհների ամբողջության խորհրդանիշ, որը պարգեւում է Աստծո Սուրբ Հոգին, եւ որը Եսայի մարգարեն ներկայացրել է յոթ թվով (11:2: Հմմտ.՝ 4:2 եւ 10):

Ուրիշներն այս նույն բացատրության տակ տեսնում են Ասիայի նահանգի յոթ եկեղեցիների, այլ խոսքով՝ յուրաքանչյուր եկեղեցու պահապան հրեշտակներին, որոնք կանգնում էին Աստծո առջեւ ճիշտ այնպես, ինչպես, ըստ Հիսուսի բացատրության, յուրաքանչյուր «փոքրիկ» հավատացյալ իր պահապան հրեշտակն ունի, որը միշտ կանգնած է Աստծո ներկայությամբ (հմմտ.՝ Մտ 18:10):

«… Եւ Յիսուս Քրիստոսից» (հմր 5): Հորից եւ Սուրբ Հոգուց հետո՝ այժմ հիշվում է Որդին՝ Իր մարդեղության անվանումով, որ է Հի-

սուս Քրիստոս: Այս կերպ ամբողջանում է Ամենասուրբ Երրորդության հիշատակությունը, եւ ցույց է տրվում, որ այս գրքով տրված հայտնությունը մեկ եւ նույն Աստվածության երեք Անձերից մեկից կամ մյուսից տրված հայտնություն չէ, այլ՝ երեքից միասնաբար: Այս պարագայում միակ հետաքրքրականը Երրորդության Անձերի հիշատակության կարգն է, որովհետեւ Որդին հիշատակվում է Սուրբ Հոգուց հետո, թեպետ, ինչպես ասացինք, Իր մարդեղության անունով, որ կարող է փոփոխության բացատրություն լինել:

«… Հաւատարիմ վկայից» (հմր 5): Որդին Հոր եւ Սուրբ Հոգու հետ այս հայտնության հեղինակն է եւ միաժամանակ մեզ փոխանցողը, հայտնողը: Այստեղ Որդին մեզ ցույց է տրվում որպես հավատարիմ վկա (հմմտ.՝ Ես 55:4, Հհ: 37, Ա Տմ, 6:13: Տես նաեւ Հտ 3:14), Ով մեզ բերեց այդ վկայությունները Աստծուց:

Որդին ոչ միայն այս հայտնության հեղինակն է, այլեւ հիմնականում Ինքն է նաեւ նրա առարկան: Արդարեւ, այս գործի միջին չորս բաժինները չորս տեսիլքներ են, որոնցից յուրաքանչյուր Քրիստոս պատկերվում է մեր առջեւ, եւ յուրաքանչյուր երեւում Նրան ներկայացնում է տարբեր կերպ: Այդ չորս տարբեր պատկերումների մեջ հնարավոր է տեսնել արտացոլումը Քրիստոսի չորս տարբեր պաշտոնների, որոնք կարելի է արտահայտել 4-7-րդ համարներում ներկայացված գերերկրային «կենդանի» էակների՝ Առյուծի, Եզան, Մարդու եւ Արծվի նմանությամբ: Այսպես՝

1. **Առաջինի մեջ** (2-3-րդ գլուխներ) Քրիստոս ներկայանում է որպես Իր եկեղեցու եւ ամբողջ աշխարհի Թագավոր, ինչը համեմատվում է Առյուծի հետ:

2. **Երկրորդի մեջ** (4-5-րդ գլուխներ) Քրիստոս ներկայանում է որպես քավության կատարյալ Զոհ՝ որպես Աստծո գահի առջեւ դրված Գառնուկ, որը մնայուն բարեխոսն է բոլոր մարդկանց համար (հմմտ.՝ Ա Հհ 2:1-2), ինչը համեմատվում է Եզան պատկերի հետ:

3. **Երրորդի մեջ** (6-20-րդ գլուխներ) Նա ներկայանում է որպես բոլորի՝ ողջերի ու մեռածների գերագույն Դատավոր, ինչը համեմատվում է Մարդու կամ Մարդու Որդու պատկերի հետ:

4. **Իսկ չորրորդի մեջ** (21-22-րդ գլուխներ) Քրիստոս ներկայանում է որպես «Հավիտենականության Հայր» (հմմտ.՝ Ես 9:6), ինչը համեմատվում է Արծվի պատկերի հետ:

«… Որը մեռելներից յարութիւն առնողներից առաջինն է եւ երկրի թագաւորութիւնների Իշխանը (հմր 5): «…Մեռելներից հարություն առնողներից առաջինն է», բառացի՝ «մեռելների անդրանիկն է»: Քրիստոս Իր մարդեղության ընթացքում ամբողջությամբ նմանվեց մեզ, բացի մեղանչելուց, որպեսզի կատարելապես նույնանա բոլոր մարդկանց հետ եւ դառնա բոլորի գլուխն ու առաջնորդը եւ Իրենով ամբողջ զանգվածին՝ Եկեղեցու «մարմնին», հաղորդ դարձնի Իր փրկությանն ու հարուցյալ կյանքին: «Նա՛ է Գլուխը մարմնի, որ եկեղեցին է: Նա՛ է սկիզբը, որ անդրանիկ ծնունդը եղաւ մեռելներից, որպէսզի Ինքն առաջնութիւնն ունենայ ամէն բանի մէջ» (Կղ 1:18),– ասում է Պողոս առաքյալը:

«Նա մեզ սիրեց եւ Իր արեամբ փշրեց մեր մեղքերի շղթաները ու մեզ դարձրեց քահանաների մի թագաւորութիւն՝ ծառայելու Աստծուն՝ իր Հօրը» (հմր 5-6): Այստեղ ներկայացվում են Աստծո փրկագործության ծրագրի եւ արարքի երեք կարեւոր կողմերն ու քայլերը: Նախ ներկայացվում է մղիչ պատճառը, ապա՝ միջոցը եւ, ի վերջո, նպատակը կամ արդյունքը:

1. **«Նա մեզ սիրեց»:** Աստծո սերը սկիզբն ու պատճառն է առաջին հերթին նյութական ստեղծագործության եւ սկիզբն ու պատճառն է փրկագործության (հմմտ.՝ Հհ 3:16), որ երկրորդ եւ հոգեւոր ստեղծագործություն է: Հետաքրքրական է, որ բնագրային վիճակում բայը ոչ թե անցյալ կատարյալ, այլ ներկա ժամանակ է («սիրում է») մատնացույց անում, ինչը շեշտում է այդ սիրո մնայուն դրսեւորումը եւ մանավանդ՝ ներկա ժամանակի մեջ Նրա՝ մեր պատասխանին սպասելը, որը երախտագիտությամբ փրկության ընկալումն է (Սղ 116:12-13):

2. **«… Իր արեամբ փշրեց մեր մեղքերի շղթաները»** (հմր 5): Ինչո՞վ կամ ինչպե՞ս իրագործվեց մարդու փրկությունը: Աստվածաշնչում արյունը կյանք է խորհրդանշում, իսկ հեղված արյունը՝ մահ, նաեւ՝ զոհագործում, ինչպես այստեղ ակնարկվում է Հիսուսի զոհագործա-

կան մահվան՝ խաչի վրա: Այդ կամավոր պատարագմամբ էր, որ իրագործվեց անկյալ մարդու՝ չարի ու մեղքի կապանքներից փրկագործությունը, որպեսզի աստվածաստեղծ մարդը վերադառնա առ Աստված: Դա աստվածային սիրուց մղված՝ Քրիստոսի մարդեղության, աշխարհ գալու սքանչելի դիտումն էր (Ա Տմ 1:15, Ա Հհ 3:5):

3. **«Մեզ դարձրեց քահանաների մի թագաւորութիւն»** (հմր 6): Բնագիրը տառացի ասում է. «Մեզ դարձրեց քահանաների մի թագաւորութիւն՝ ծառայելու Աստծուն՝ Իր Հօրը»: Սա փրկագործական արարքի վախճանական նպատակն է: Հին Կտակարանը ցույց է տալիս, որ Աստված Իր ժողովրդին ցանկանում էր դարձնել քահանաների թագավորություն (հմմտ.՝ Ելք 19: 6), որին չարժանացավ հին Իսրայելը, ուստի, Աստված Քրիստոսով մի նոր ժողովրդի՝ Եկեղեցուն կոչեց լինել այդպիսին (Ա Պտ 2:5 եւ 9): Այդ կոչումն իրագործվելու է Քրիստոսի երկրորդ գալուստով (տե՛ս 20:6):

«Ահա նա գալիս է ամպերի վրայ» (հմր 7): Սա Հայտնության գրքի առանցքային հաստատումն ու պատգամն է: Ներկայացված բոլոր տեսիլքները Քրիստոսի մասին ի՛նչ պատկերացում էլ ստեղծեն, նպատակ ունեն մեզ մշտապես զգալ տալ ներկայությունը Նրա, Ով շուտով գալու է՝ վերափոխելու աշխարհը: Աշխարհի պատմության բարձրակետն ու կատարումն է այդ գալուստը, որի ազդարարությամբ ու ավետիսով է գիրքը թե՛ բացվում, թե՛ փակվում:

«Ամէն մարդ կտեսնի Նրան, նաեւ նրանք, որ խոցեցին Նրան» (հմր 7): Քրիստոսի երկրորդ գալստյան հետ կապված կարեւոր հավաստիացում կա այստեղ, որովհետեւ հաստատվում է այդ գալստյան տեսանելի լինելը: Հոգեւոր եւ անտեսանելի մի գալուստ չէ դա, ոչ էլ հոգեւոր եւ անտեսանելի «մի ներկայություն», ինչպես որոշ աղանդավորներ են ջատագովում՝ ելնելով իրենց նպատակներից: Այդ հոգեւոր ու անտեսանելի ներկայությունը Եկեղեցին արդեն մնայուն կերպով ունի, որովհետեւ Քրիստոս ասաց. «… Եւ ահա Ես ձեզ հետ կլինեմ միշտ (բառացի՝ եմ)՝ մինչեւ աշխարհի վախճանը» (Մտ 28:20):

Երկրորդ գալուստը առաջինի նման նյութեղեն աչքերով տեսանելի կլինի, եւ ամեն աչք կտեսնի Նրան: Բայց մանավանդ Հիսուսին

տեսնելու եւ Նրան Իր իրական փառքի մեջ ճանաչելու են նրանք, ովքեր Աստծո Իսրայելն էին, Աստծուց կոչված էին Իր ժողովուրդը լինել, ստացել էին Աստծո հետ մտերմագույն կապ վայելելու առանձնաշնորհը, սակայն չկարողացան եւ չուզեցին ճանաչել մարդկային մարմնով իրենց այցի եկած, իրենց փրկության համար Իր աստվածային փառքից խոնարհված, Իր անմատչելի բնությունից անսահմանորեն խոնարհված եւ նյութեղեն, շոշափելի բնության մեջ պարփակված Անսկիզբ եւ Անվախճան Աստծուն՝ Հիսուս Քրիստոս մարդուն, որին մերժեցին ու խաչի մահվան մատնեցին՝ իրենց ձեռքերով «խոցելով» Նրան, որպեսզի կատարվի աստվածային կանխատեսությունը, թե «… Նա խոցուեց մեր մեղքերի համար եւ մեր անօրինութիւնների համար դատապարտուեց. մեր խաղաղութեան համար Նա՛ պատիժ կրեց, եւ Նրա՛ վէրքերով մենք բժշկուեցինք» (Ես 53:3):

Եւ ինչպես որ խաչափայտի վրա նախ իրականացավ Զաքարիայի մարգարեությունը, թե «նրանք իրենց հայեացքը պիտի դարձնեն դէպի Ինձ» (Զք 12:10: Հմմտ.՝ Հհ 19:34 եւ 37), այնպես էլ նույն մարգարեությունը վերջին անգամ պիտի կատարվի Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ, երբ Նրան մերժած ազգն ի վերջո կճանաչի, կշրջվի ու կնայի Նրան՝ հավիտենական կյանք ունենալու հույսով (հմմտ.՝ Հհ 3: 14-15):

«Երկրի բոլոր ժողովուրդները կողբան նրա վրայ» (հմր 7): Գալստյան այս պահը փրկության ժառանգորդների համար գերագույն ուրախության պահն է, սակայն ողբի եւ սգո պահ է բոլո՛ր նրանց համար, ովքեր մերժեցին Աստծուն եւ Նրա ընծայած փրկությունը՝ իրենք իրենց ենթարկելով հավիտենական դատապարտության: Այդ ժամանակ նրանք պիտի ողբան, անհուսորեն «պիտի լաց լինեն եւ կրճտեն (իրենց) ատամները» (հմմտ.՝ Մտ 8:12, 13:42 եւ 50, 22:13, 24-51), բայց չեն կարողանա փոխել այն վախճանը, որ իրենք սեփական կամքով ու սեփական ձեռքերով պատրաստեցին իրենց համար: Որքա՜ն դառն է լինելու նրանց վիճակը, մինչդեռ անհուն երանությամբ են լցվելու հավատքով ու հույսով եւ բարի գործերով Տիրոջ գալստյանն սպասողները. օրհնյա՛լ սպասում, որ Հովհաննե-

սը կնքում է կրկնակի հավաստիացումով. «Այո՛, թող այդպէս լինի» (հմր 7):

«Ես եմ Այբը եւ Ես եմ Քէն», այսինքն՝ Սկիզբն ու Վախճանը,– ասում է Տեր Աստված, Նա, որ է, որ էր եւ որ գալու է, ինքը՝ Ամենակալը (հմր 8): Հունարեն ձեռագրերի մեծամասնությունը չունի «այսինքն՝ Սկիզբն ու Վախճանը» բառերը, բայց «Այբը եւ Քէն» (հունարեն՝ «Ալֆան եւ Օմեգան») այբուբենի տառերից առաջինն ու վերջինն են, համազոր են «Սկիզբն ու Վախճանը» ասելուն, ինչպես ցույց են տալիս 21:6-րդ եւ 22:13-րդ համարները: Աստված է ամեն բանի սկիզբն ու վախճանը, որը նշանակում է, թե Նա՛ է պատմության բացարձակ տերն ու ղեկավարը, «Ամենակալը»: Հետաքրքրական է, որ Աստծուն տրված այս տիտղոսը Նոր Կտակարանում գործածվել է 12 անգամ, որից 9-ը գտնում ենք հենց Հայտնության գրքում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼԻՆ ՀԱՅՏՆՎԱԾ ՀԻՍՈՒՍԻ ՏԵՍԻԼՔԸ (1:9-20)

«Ես՝ Յովհաննէս, որ ձեր եղբայրն եմ, Յիսուս Քրիստոսին միացած լինելով, մասնակից եմ ձեր նեղութեանը, արքայութեանը, լոյսին եւ համբերութեանը» (հմր 9): Այս չորս բառերը Հայտնության գրքի առանցքն են, որը պատկերում է Եկեղեցու կրած նեղությունը, Քրիստոսի Թագավորության ներկայությունը եւ այն հուսալից համբերությունը, որ ցուցաբերում են արդարները՝ տիրանալու համար արդարության պսակին:

«Աստուծոյ խօսքի եւ Յիսուս Քրիստոսի մասին վկայելու պատճառով աքսորուել էի Պատմոս կոչուած կղզին» (հմր 9): Պատմոսը Եփեսոսից շուրջ հարյուր կիլոմետր հեռավորության վրա գտնվող փոքրիկ, ժայռոտ կղզի է Էգեական ծովում, որն անցյալում հաճախ որպես աքսորավայր էր ծառայում: Եվսեբիոս Կեսարացի պատմիչը «Եկեղեցական պատմություն» աշխատության մեջ հիշատակում է, որ Հովհաննես առաքյալն այս կղզու վրա կրելիք աքսորից ազատվեց Ներվա կայսեր օրոք (96-98 թվական):

«Ահա մի կիրակի օր ես, որ լցուած էի Սուրբ Հոգով, իմ ետեւից լսեցի փողի հնչիւնի նման մի ուժեղ ձայն» (հմր 10): Մի կիրակի օր՝ բառացիորեն՝ «Տիրոջ օրը»: Այս վերջին բացատրությունը կրկնակի նշանակություն կարող է ունենալ: Ընդհանուր իմաստով կարող է նշանակել մարգարեական գրականության մեջ այս անվանումով նշված Աստծո դատաստանի եւ հատուցման օրը (տե՛ս 2:12, 13:6 եւ 9, 61:2, Ամս 5:18, 20, Հվլ 1:15, 2:1, 11 եւ 31, 3:14, Սփ 1:14, Մղ 4-1 եւ այլն), որը նույնանում է Քրիստոսի երկրորդ գալուստի հետ:

Մասնահատուկ իմաստով կիրակին քրիստոնեական գրականության մեջ նշում է «Միաշաբաթ» օրը, երբ Հիսուս Հարություն առավ եւ Իր աշակերտներին ցույց տվեց, որ Ինք ողջ է (Հհ 20:1 եւ 19: Հմմտ.՝ 26): Հենց այդ պատճառով այդ օրը կոչվեց «Տէրունի», հունարեն արտահայտությամբ՝ «Կիրակի» եւ այդպես էլ նվիրագործվեց: Եվ քրիստոնյա համայնքները միշտ այդ օրն էին անցկացնում իրենց հավաքույթները (տե՛ս Գրծ 20:7, Ա Կր 16:2):

«Որ լցուել էի Սուրբ Հոգով», բառացի՝ «Սուրբ Հոգու մէջ էի» (գրաբար՝ «Եղէ Հոգւով»): Բացատրության մի ձեւ է, որը ցույց է տալիս, որ Հովհաննես առաքյալը, առանց քնած լինելու, արթուն վիճակում Սուրբ Հոգով վերացավ, հափշտակվեց՝ հատուկ տեսիլք ունենալու համար: Այս բացատրությունը չորս անգամ գտնում ենք Հայտնության գրքում, եւ ամեն անգամ մի նոր տեսիլք է տրվում՝ բոլորովին տարբեր թատերաբեմով:

Առաջին՝ այս տեսիլքը ճշգրիտ վայր չի մատնանշում: Տեսանողը՝ Հովհաննես առաքյալը, մարմնապես Պատմոս կղզու վրա է, սակայն մտովի հափշտակված է Քրիստոսի ներկայությամբ, որը, կարծեք, Իր Եկեղեցուն այցի է եկել (հմմտ.՝ 1:13): Երկրորդ տեսիլքի ժամանակ Հովհաննես առաքյալը երկինք է բարձրացվում (4:1-2): Երրորդի մեջ Հովհաննեսը գտնվում է անապատում (17:3), իսկ չորրորդ տեսիլքում նա լեռան վրա է (21:10), որը թվում է, թե Աստծո Թագավորությունն է: Ոմանք գրքի կառուցվածքի իրենց պատկերացումը հիմնում են այս բացատրության վրա, որը, կարծեք, ներածական բանաձեւ կամ ամփոփման[1] ձեւ է դառնում՝ շրջանակելով ու սահմանազատելով տեսիլքները կամ բաժինները:

«… Իմ յետեւից լսեցի փողի ինչիւնի նման մի ուժեղ ձայն» (հմր 10): Աստվածաշնչում հաճախ հրեշտակների կամ նույն Իր՝ Աստծո ձայնը նմանվում է փողի հնչյունի կամ համեմատվում դրա հետ: Այսպես, Ելից գիրքն Աստծո անմիջական ներկայության հետ է կապում «փողի ձայնը, որը գնալով սաստկանում էր» (Ելք 19:16, 20:18): Քրիստոսի երկրորդ գալստյան պատկերը նկարագրելիս Պողոս առաքյալը նույնպես ասում է, թե այդ գալուստը լինելու է, «երբ հրամանը լսուի, հրեշտակապետն ազդարարի, եւ Աստուծոյ փողը հնչի» (Ա Թս 4:16): Այստեղ Աստծո Որդու ձայնն է, որ հնչում է փողի նման (հմմտ.՝ 4:1):

«… Որ ասում էր ինձ.

– Ինչ որ տեսնում ես, գրի՛ առ մի գրքում, եւ գիրքն ուղարկի՛ր եօթ եկեղեցիներին, որոնք գտնւում են Եփեսոսում, Զմիւռնիայում, Պերգամոնում, Թիատիրում, Սարդիկէում, Ֆիլադելֆիայում եւ Լաւոդիկիայում» (հմր 11):

Քրիստոնեության երկրորդ դարից առաջ ներկա ձեւով կազմված գրքերը հայտնի չէին: «Գիրք» արտահայտությունը նշանակում էր մագաղաթի կամ պապիրուս թղթի ոլորը՝ գալարը, որ փաթաթված էր լինում գլանի վրա:

«Ես շրջուեցի՝ տեսնելու համար, թէ ո՛վ էր ինձ հետ խօսողը, եւ տեսայ եօթ ոսկէ ճրագարաններ» (հմր 12): Յոթ ոսկի ճրագարանները, ինչպես Հայտնությունը կատարողն ինքն է բացատրում (տե՛ս հմր 20), խորհրդանիշեր են եւ մատնացույց են անում յոթ եկեղեցիները:

«Այդ եօթ ճրագարանների միջեւ տեսայ Մարդու Որդուն նմանուող մէկին՝ երկար պատմուճան հագած եւ կրծքին ոսկէ գօտի կապած» (հմր 13): Քրիստոս այստեղ ներկայանում է որպես Եկեղեցու Տեր, Ով, որպես մեծ եւ հավիտենական Քահանայապետ, շրջում է նրանց մեջ: Արդարեւ, Նա մարդեղության պատկերն է կրում, այսինքն՝ հայտնվում է Իր մարդկային մարմնով ու կերպարանքով: Այդ պատճառով էլ Հովհաննես առաքյալն ասում է. «Տեսայ Մարդու Որդուն նմանուող մէկին»: Հովհաննեսը Մարդու Որդուն ճանաչեց ոչ թե տեսականորեն, ոչ թե Դանիելի մարգարեության գրքից (Դն 7) կամ եբրայական

հայտնութենական գրականությունից, այլ անձնական փորձով ու կյանքով (հմմտ.՝ Ա Հհ 1:1):

Բայց այստեղ Մարդու Որդին միայն հավիտենական Թագավոր եւ Դատավոր չէ, այլեւ Քահանայապետ, ինչպես ցույց է տալիս Նրա հանդերձանքը: Նա քահանայապետական երկար պատմուճան է հագել (հմմտ.՝ Ելք 28:4, 29:5), իսկ կրծքին կապել է ոսկե գոտի՝ Ահարոնի լանջապանակի նմանողությամբ (հմմտ.՝ Ելք 28:15-28):

«Նրա գլխի մազերը բրդի պէս ճերմակ էին, ձեան նման սպիտակ, աչքերը՝ կրակի բոցի պէս» (հմր 14): Մարդու Որդու մազերն այստեղ հիշեցնում են Դանիելի տեսիլքի Ծերունուն, ում «գլխի մազերը մաքուր էին գեղմի նման» (Դն 7:9): Այս սպիտակությունն Աստծո հավիտենականության խորհրդանիշն է եւ միաժամանակ իմաստության նշան: Եսայի մարգարեի նախաձայնած «Յաւիտենականութեան Հայրն է» Մարդու Որդին (Ես 9:6): Իսկ Նրա աչքերը կրակի բոցի պես են (հմմտ.՝ Դն 10: 6), որ խորհրդանշում են նրանց թափանցողությունը եւ Աստծո Որդու անսահման իմացությունը՝ ցույց տալով, որ չկա մի բան, ինչը կվրիպի Նրա տեսողությունից կամ իմացությունից:

«… Նրա ոտքերը նման էին բոցավառ հնոցից ելած հրաշէկ անագապղնձի, իսկ ձայնը՝ առատահոս ջրերի շառաչի» (հմր 15): Հրաշեկ ոտքերն աստվածային դատաստանի եւ վրեժխնդրության խորհրդանիշ են՝ անօրեններին կոխկռտելու եւ սպառելու համար (տե՛ս Ես 63:3: Ողբ 1:15: Հմմտ.՝ Հտ 14:19-20): Իսկ ձայնը Գերագույն Դատավորի աստվածային հեղինակության նշանը եւ բարձրագոչ վճիռն է բոլոր ժողովուրդների համար, որոնք խորհրդանիշերի լեզվով «ջրեր» են կոչվում (տե՛ս Հտ 17:15: Հմմտ.՝ Սղ 29:3, Ես 8:7):

«Նա Իր աջ ձեռքում բռնել էր եօթ աստղեր, եւ Նրա բերանից ելնում էր երկսայրի մի սուր» (հմր 16): Աստղերը, ինչպես բացատրվում է այս գլխի վերջին համարում, հրեշտակների խորհրդանիշերն են, իսկ յոթ թիվը, ինչպես ասացի, ցույց է տալիս ամբողջություն եւ կատարելություն: Հետեւաբար, յոթ աստղերը ներկայացնում են Աստծո բոլոր հրեշտակներին, որոնք Մարդու Որդու ձեռքերում են, այսինքն՝ Նրա կամքին հնազանդ ծառաներ են (Սղ 104:4 [LXX][2]): Հմմտ.՝ Եբր

1:7): Ծառաներն այստեղ ներկայանում են որպես Երկնավոր Թագավորի արքունիքի անդամներ եւ Դատավորի օգնականներ: «Երկսայրի մի սուր». այստեղ սուրը դարձյալ եւ գերազանցորեն աստվածային դատաստանի խորհրդանիշն է (հմմտ.՝ Ես 49:2, Եբր 4:12):

«Նրա դէմքը փայլում էր կէսօրուայ արեգակի նման» (հմր 16): Մարդու Որդին այստեղ ներկայանում է աստվածային Իր ամբողջ փառքով: Նա ներկայանում է որպես Աստվածային Փեսա եւ «արեւի մէջ նա Իր վրանը խփեց, իսկ Ինքն ասես փեսայ լինի, որ ելնում է Իր առագաստից» (Սղ 18:4-5):

«Երբ տեսայ Նրան, մեռելի նման ընկայ Նրա ոտքերի առջեւ: Նա Իր աջ ձեռքը դրեց ինձ վրայ եւ ասաց.

– Մի՛ վախեցիր: Ես եմ Սկիզբը եւ Ես եմ Վախճանը» (հմր 17): Տեսիլքի ահավորության հետ է կապվում մահվան սարսափը, որ առնչվում է Աստծուն տեսնելու հետ (տե՛ս Ելք 33:20: Հմմտ.՝ Հտ 19:21 եւ այլն): Ըստ գրաբարի՝ լինում է «Սկիզբը եւ Վախճանը», մինչ հունարենն ասում է՝ «Առաջինն ու Վերջինը»: Ինչ ասվել էր 8-րդ համարում, այստեղ եւս կրկնվում է եւ սահմանափակվում միմիայն Որդու համար՝ միաժամանակ ցույց տալով, որ վերեւում խոսքը նույպես վերաբերում էր Նրան:

«Ես եմ կենդանի եղողը, եւ Ես եմ, որ մեռայ եւ ահաւասիկ կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից: Իմ ձեռքում են մահուան եւ դժոխքի բանալիները» (հմր 18): Հին Կտակարանում «Կենդանի եղողը» կամ «Կենդանին» բացատրությունը միշտ Աստծուն է վերաբերում (տե՛ս, օրինակ, Հես 3:10, Սղ 42:2, 84:2): Հետաքրքրական է երկու հաստատումների հակադրությունը:

Որդին՝ Հոր հավասարակից եւ համագոյակից Աստված, Ով հավերժորեն կենդանի է եւ անմահ, հանուն մեր սիրո հանձն առավ մարդանալ, մահկանացու դառնալ եւ Իր մարդկային մարմնով ճաշակել մահը, որպեսզի մեզ հաղորդ դարձնի Իր անմահությանը, աստվածային կյանքին ու փառքին:

Աստծո մարդասիրության եւ անպատմելի փրկագործության սքանչելի վկայությունն է սա, որ Քրիստոսն Ինքն է փոխանցում մեզ:

Այդ վկայությանն է միանում նաեւ երկրորդը. այլեւս խորտակված է մահվան իշխանությունը՝ մահվան վրա Քրիստոսի տարած բացարձակ հաղթանակով, որի արտահայտիչ խորհրդանիշերն են «մահուան եւ դժոխքի բանալիները»: Իսկ այդ հաղթանակի ծանուցումը նշանակում է մահվան սարսափի տակ ապրող մարդու հոգու խաղաղությունն ու բերկրանքը: «Դժոխք» բառն Աստվածաշնչում առհասարակ մատնանշում է ոչ թե չարչարանքի վայր, այլ մեռելների աշխարհը, այն վայրը, ուր հոգիները համախումբ սպասում են դատաստանին եւ իրենց սպասող հատուցմանը:

«Ուրեմն գրի՛ր, ինչ որ տեսնում ես, ինչ որ պատահում է այժմ եւ ինչ որ պատահելու է այսուհետեւ» (հմր 19): Այս համարը, շատերի կարծիքով, Հայտնության ամբողջ գրքում ներկայացված պատկերի խտացումն է: Այլ խոսքով, այս բացատրության մեջ տեսնում են Հայտնության գրքի եռամասնյա կառույցը, ուր՝

1. **«Ինչ որ տեսնում ես»** բացատրությունը հասկանում են որպես Հովհաննես առաքյալի ունեցած տեսիլքը, այլ խոսքով՝ ներկա առաջին գլուխը:

2. **«Ինչ որ պատահում է այժմ»** բացատրության տակ հասկանում են հաջորդող երկու գլուխները, որոնք պատկերացում են տալիս Եկեղեցու ներկա կյանքի մասին:

3. **«Ինչ որ պատահելու է այսուհետեւ»** բացատրության մեջ տեսնում են 4-րդ գլխից սկսած ներկայացված մարգարեական բոլոր պատգամներն ու տեսիլքները, որոնք տալիս են վերջին նեղության ժամանակների պատկերացումը:

Շատերի համար այս երեք բաժանումը գոյություն չունի: Այս գրքի հայտնություններն ընդգրկում են թե՛ ներկան եւ թե՛ ապագան, եւ որոնք չեն ներկայանում գլուխների որոշակի բաժանմամբ:

«Եօթ աստղերի, որ դու տեսնում ես Իմ աջ ձեռքում, եւ եօթ ոսկի ճրագարանների իմաստը հետեւեալն է՝ եօթ աստղերը եօթ եկեղեցիների հրեշտակներն են, իսկ եօթ ճրագարանները՝ եօթ եկեղեցիները» (հմր 20): Հայտնության գիրքը մի շարք դեպքերում բացատրում է օգտագործված խորհրդանիշերը, ինչպես այստեղ ենք տեսնում,

թեպետ մեզ երբեմն անհրաժեշտ կլինեն հավելյալ բացատրություններ նույնպես: Այսպես, օրինակ, աստղերը բացատրվում են որպես հրեշտակներ: Սակայն անմիջապես մեր մտքում երեք տարբեր իմաստներ են պատկերվում՝

1. Ինչպես ակնարկեցինք վերեւում, յոթ աստղերը կարող են մատնանշել բոլոր հրեշտակներին (հմր 16), թեպետ անհավանական է, որ այստեղ այդ իմաստն արտահայտեն, քանի որ սրանք անմիջականորեն կապված են յոթ եկեղեցիների հետ:

2. Աստղերը հրեշտակներ են նշանակում, բայց այստեղ խոսքը կարող է վերաբերել կամ միայն յոթ հրեշտակների, որոնք անվանապես հիշատակված եկեղեցիների անձնավորումը կամ նրանց պահապան հրեշտակներն են, կամ էլ ակնարկում են աշխարհի վրա յուրաքանչյուր եկեղեցու պահապան հրեշտակներին՝ առանց քանակի սահմանափակման:

3. «Հրեշտակ» բառի բացատրությունն այստեղ (ինչպես հատուկ է եբրայերենին եւ հունարենին, նաեւ՝ գրաբարին) կարող է նշանակել նաեւ «ներկայացուցիչ» կամ «պատգամավոր, դեսպան, նվիրակ»: Այլ խոսքով, կարող է մատնանշել տվյալ եկեղեցու առաջնորդին: Նույն հարցն է անմիջապես ծագում նաեւ հաջորդ գլխի առաջին համարից սկսյալ:

1. Գրքում «բակառութեան» բառն է:

2. Գրքում մի քանի անգամ հանդիպող [LXX] նշումը հուշում է, որ «Յոթանասնից» թարգմանությունից է հղումը:

Բ-Գ ԳԼՈՒԽՆԵՐ

Բ եւ Գ գլուխներում ներկայացված են յոթ եկեղեցիներին ուղղված նամակներ, որոնք որոշակի նմանություն ունեն: Այսպես՝

1. **Սկզբնական բանաձեւ:** Բոլորն էլ սկսվում են նույն բանաձեւով, որը հրահանգ է՝ ուղղված գրողին՝ Հովհաննես առաքյալին: Բոլորն էլ թելադրում է Հիսուս Քրիստոսը:

2. **Ողջույն:** Բոլորն էլ հետեւում են նամակագրական նույն կաղապարին, թեպետ յուրաքանչյուրի բովանդակությունն ու պատգամը տարբեր են: Եկեղեցու գլուխն Ինքը՝ Քրիստոսը, նախ Իր ողջույնն է հղում յուրաքանչյուր եկեղեցու եւ յուրաքանչյուր անգամ Ինքն Իրեն ներկայացնում է նույն այն բացատրություններով կամ տիտղոսներով, որոնք Հայտնության գրքի առաջին գլխի տեսիլքի տարրերն են («Նա, որ Իր աջ ձեռքում բռնել է եօթ աստղեր», «Նա, որ մեռաւ եւ վերակենդանացաւ», «Նա, որ սրուած երկսայրի սուր ունի» եւ այլն), եւ որոնք Քրիստոսի աստվածային ինքնությունը բացահայտելու տեսակետից անչափ կարեւոր են: Հետաքրքրական է, որ յուրաքանչյուր պարագայում հիշատակված տիտղոսներն անմիջականորեն առնչվել են այն պատգամին, որ Քրիստոս ցանկանում է տալ տվյալ եկեղեցուն:

3. **Գնահատանքներ եւ դժգոհություններ:** Այնուհետեւ յուրաքանչյուրին ուղղելով Իր հակիրճ խոսքը՝ ասում է, որ գիտի նրա ընթացքը, առավելություններն ու թերությունները, որոնք, ըստ այնմ, գովելի կամ խոտելի են: Նրանց զգուշացնում է Եկեղեցի թափանցել սկսած վարդապետություններից եւ քրիստոնեական ուղիղ ու մաքուր կենցաղին սպառնացող փորձություններից:

4. **Ազդարարություն:** Այնուհետեւ նրանց հայտնում է, թե ինչ կարող է պատահել, եթե չանսան եւ չապաշխարեն, որովհետեւ Ինքը շուտով գալու է՝ յուրաքանչյուրին հատուցելու ըստ նրանց գործերի:

5. **Հորդոր եւ խոստում:** Յուրաքանչյուր նամակ ավարտվում է հորդորականով, որն է՝ ունկնդիր լինել Սուրբ Հոգու ազդարարությանը, շտկել տվյալ եկեղեցում առկա սխալները եւ հաղթանակ տանել, որովհետեւ միայն հաղթանակողն է ժառանգելու հավիտենական կյանքը եւ Աստծուց ստանալու արժանի վարձատրություն:

Ի՞նչ են յոթ եկեղեցիները: Այս կապակցությամբ արդեն տեսանք մեկնության որոշ նշմարումներ: Առհասարակ, մեկնիչների հայացքը պատմական է՝ զույգ իմաստներով, այսինքն՝ այս եկեղեցիներում տեսնում են՝

1. Հովհաննես առաքյալին ժամանակակից Փոքր Ասիայի տարածքում հաստատված եկեղեցական համայնքներ, որոնցից յուրաքանչյուրին ներկայացված հատկանիշները հատուկ են նաեւ բոլոր ժամանակների քրիստոնեական համայնքներին կամ եկեղեցիներին:

2. Եկեղեցու շարունակական պատմությունը հաջորդական յոթնապատիկ հանգրվաններով, որն սկսվում է Եփեսոսի եկեղեցուն ներկայացված դրական ու գովելի պատկերով, ժամանակի ընթացքում աստիճանաբար այլասերվում է թե՛ քրիստոնեական վարդապետության եւ թե՛ բարոյականության ճշմարիտ ուղղությունից հեռանալով, մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ եկեղեցին հասած կլինի Լավոդիկիայի եկեղեցու ներկայացրած գաղջ եւ անտարբեր վիճակին:

ՆԱՄԱԿ ԵՓԵՍՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ (2:1-7)

«Գրի՛ր Եփեսոսի եկեղեցու հրեշտակին» (հմր 1): Առաջին նամակն ուղղվում է «Եփեսոսի եկեղեցուն»: Հովհաննես առաքյալի ժամանակ Եփեսոսն Ասիայի նահանգի կարեւորագույն եւ ամենաբազմամարդ քաղաքն էր, ինչպես նաեւ հռոմեացի կառավարչի նստավայրը, վաճառականության ուղիների հանգույց լինելով՝ նաեւ վաճառականության կարեւոր կենտրոն էր: Եվ թեպետ քաղաքն անմիջականորեն ծովեզերքին չէր գտնվում, սակայն ուներ նշանավոր ներցամաքային

նավահանգիստ, որը Կայսեր գետով միանում էր 5 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Էգեյան ծովին:

Քաղաքն ուներ նշանավոր կառույցներ, որոնցից էր Արտեմիս չաստվածուհու (հայոց դիցաբանության մեջ համապատասխանում է Անահիտ դիցուհուն) նվիրված տաճարը՝ հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը, որը հռչակված ուխտատեղի էր (տե՛ս Գործ 19:23-31): Այստեղ արդեն ցանվել էին քրիստոնեության սերմերը, երբ Պողոս առաքյալը եկավ ավետարանելու եւ մնաց երկու տարի (Գործ 19:1-10):

«Գրի՛ր հրեշտակին»: Մեկնիչներից շատերն այս արտահայտությունը ցանկանում են հասկանալ ոչ որպես Եփեսոսի եկեղեցու պահապան հրեշտակի, այլ սույն եկեղեցու ներկայացուցիչ առաջնորդի, վերակացուի կամ պատասխանատուի ակնարկություն:

«Այսպէս,– ասում է նա, որ Իր աջ ձեռքում ունի եօթ աստղերը եւ շրջում է եօթ ճրագարանների միջեւ» (հմր 1): Տեսանք, որ յոթ աստղերը յոթ եկեղեցիների հրեշտակները կամ առաջնորդներն են, իսկ յոթ ճրագարանները՝ հենց նույն եկեղեցիները, այլ խոսքով՝ Եկեղեցին իր ամբողջականության մեջ: Քրիստոսը ներկայանում է որպես Իր եկեղեցու բացարձակ Տեր, Թագավոր եւ մեծ ու հավիտենական Քահանայապետ, Ով եկել է փորձելու Իր հետեւորդներին եւ ճշտելու, թե պահո՞ւմ են հավատքը (հմմտ.՝ Ղկ 18:8: Բ Կր 13:5), տեսնելու, թե հավատարի՞մ են Եկեղեցուն փոխանցած Իր պատվիրաններին ու ավանդին, քննելու նրանց գործերը եւ նրանց վերաբերյալ Իր վճիռն արձակելու, ինչպես տեսնելու ենք անմիջապես՝ Եփեսոսի այս եկեղեցուց սկսած:

«Գիտեմ քո աշխատանքը, քո վաստակը եւ քո համբերութիւնը: Գիտեմ, որ չար մարդկանց չես կարող տանել: Դու փորձեցիր նրանց, որոնք իրենց առաքեալ են կոչում, սակայն չեն, ու գտար, որ նրանք ստախօս են» (հմր 2): Եփեսոսի եկեղեցու մասին ներկայացված բոլոր տվյալները դրական են. եկեղեցին հատկանշվում ու փայլում է իր գործերով, իր վաստակով եւ համբերությամբ, սակայն առաքինությունների ցանկը դրանցով չի սահմանափակվում: Եկեղեցին նաեւ ուղղամիտ ու ճշմարտասեր է եւ ստի թշնամի, իսկ սուտն արդեն

սկսել է թափանցել ոչ միայն անհատ մարդկանց վարքի, այլ նաեւ քրիստոնեական վարդապետության եւ Եկեղեցու մեջ, ուր կան սուտ առաքյալներ կամ մարգարեներ:

Տխուր է տեսնել բարու այլասերումը, թե ինչպես հազիվ բարին սերմանված, նրա կողքին հայտնվում է չարը: Բայց դա ներկա աշխարհի դժբախտ իրականությունն է, որ Քրիստոս պատկերավոր ներկայացրեց «Որոմների առակ»ով (Մտ 13:25-30): Այդպիսիններին ճանաչելու համար անհրաժեշտ է փորձել նրանց, քննարկել նրանց քարոզչությունը, տված պատգամները (Ա Կր 14:29), փորձել՝ «իմանալու համար, թէ իսկապէս Աստծոյ Հոգո՞վ են խօսում» (Ա Հի 4:1):

«Դու համբերեցիր եւ տառապեցիր ինձ համար ու տեղի չտուեցիր» (հմր 3): Ով ապրում է ստի ու կեղծիքի մեջ, երկու ընտրություն ունի՝ կա՛մ համակերպվում է շրջապատի հետ, եւ ինքը նույնպես բռնում է նույն ճամբան, կա՛մ ընդդիմանում ու հակադրվում է նրան, եւ անխուսափելի է դառնում բախումը՝ թե՛ ներքին՝ հոգեկան մակարդակում, որը տառապանքի դուռ է բացում, եւ թե՛ արտաքին՝ մարմնավոր մակարդակում, որը կարող է հասցնել հալածանքի ու մահվան: Արդ, Եփեսոսի եկեղեցու առաքինություններից մեկն էլ Քրիստոսի անվան համար հանձն առած տառապանքն է՝ առանց երբեք տեղի տալու:

«Բայց, հիմա դժգոհ եմ քեզանից, որովհետեւ առաջուայ նման Ինձ չես սիրում» (հմր 4): Սակայն այդքան գովելի առաքինությունների դիմաց կա դժգոհության տեղիք տվող մի կետ, որ հնչում է որպես ազդարարություն: Դա սիրո նվազումն է: Սա եւս բնորոշ է մարդկային կյանքին եւ այդ կյանքի տխուր կողմերից է: Մարդու ժամանակավոր ու անցավոր լինելու պատճառով ոչ միայն ծերանում ու մաշվում է նրա մարմինը, այլ նաեւ նրա մեջ մաշվում ու մարում է հետաքրքրությունը, եւ, որն ավելի վտանգավոր է, մաշվում է սերը՝ բոլոր մակարդակներում:

Որքա՛ն հաճախ ենք հանդիպում ուժգին սիրո սկզբնական անզուսպ պոռթկման, որը ժամանակի ընթացքում աստիճանաբար տեղի է տալիս, կորցնում սկզբնական ջերմությունը, իսկ շատերի մեջ մարում, սառչում է ամբողջովին: Նույն երեւույթը Քրիստոս մատնանշում է Եփեսոսի եկեղեցու նկատմամբ, որպեսզի նրան մղի արթնության եւ վերադարձի՝ նրանում վերարծարծելու համար սկզբնական սերն ու նախանձախնդրությունը Իր հանդեպ:

Բնագրում բացակայում է «ինձ» բառը, ուստի եւ դա կարելի է համարել ոչ միայն Քրիստոսի, այլ նաեւ միմյանց հանդեպ ցուցաբերված սեր: Երկու դեպքում էլ սիրո նվազումը կարող է առաջնորդել քրիստոնեական ոգու եւ նախանձախնդրության նվազման, որն սպառնում է հավատքին, հետեւաբար, նաեւ փրկությանը:

«Յիշի՛ր, ուրեմն, թէ ի՞նչ վիճակից ընկար այստեղ, ապաշխարի՛ր եւ վերադարձիր քո նախկին գործերին, ապա թէ ոչ, եթէ չապաշխարես, շուտով կը գամ եւ կը վերցնեմ քո ճրագարանն իր տեղից» (հմր 5): Եթէ ուրիշներին փորձելն անհրաժեշտ է խոտելու համար սուտն ու կեղծիքը, ապա որքա՛ն ավելի կարեւոր է նաեւ, գեթ երբեմն-երբեմն, ինքներս մեզ փորձելը՝ տեսնելու համար մեր անցած ճանապարհը եւ գնահատելու մեր կյանքը՝ սիրո եւ հավատարմության աստվածային պահանջի չափանիշով:

Եվ հաճախ կարող է այնպես պատահել, որ դեպի հետ նետված այդ հայացքը մեզ կանգնեցնի ցավալի իրականության առջեւ, եւ մենք անդրադառնանք այն փաստին, որ չենք գտնվում այնտեղ, ուր կոչվեցինք եւ ուր գտնվում էինք մի ժամանակ: Եթե չենք գտնվում այն երբեմնի առանձնաշնորհյալ վիճակում, ուր մեզ հրավիրեց եւ դրեց Աստված՝ հակառակ մեր թերություններին, տկարություններին եւ անարժանությանը (հմմտ.՝ Ա Կր 1:26), անդրադառնանք, որ դավաճանել ենք Աստծուն, չարաշահել Նրա հայրական վստահությունը, անտեսել անսահման մեծ սերն ու մեզ արած շնորհը եւ անառակ որդու նման ընկել մեր դիրքից ու պատվից՝ խոզերի ընկերակցությամբ եւ խոզերի պես մեր դիրքն ու պատիվը ոտքի կոխան անելով աշխարհի կեղտի ու տիղմի մեջ:

Մի այսպիսի հետադարձ ակնարկը պետք է առիթ դառնա անառակի նման զղջալու մեր կորցրածի համար, ապաշխարելու եւ վերադառնալու Հայրական գիրկը, որը պատրաստ է ամենայն ներողամտությամբ ու բացարձակ սիրով մեզ ընդունել եւ վերականգնել,

վերստին շնորհել այն նույն փրկության ու փառքի պատմուճանը, որ մենք կամավոր մեր վրայից հանեցինք, եւ մեր մատին վերստին անցկացնել այն մատանին, որ Աստծո որդիության ու արքայության ժառանգորդության կնիքն ու գրավականն է: Հակառակ դեպքում, եթե չզղջանք ու չապաշխարենք, ապա պետք է իմանանք, որ մոտ են վերջնական անկումն ու կորուստը. շուտով կգա Հիսուսը՝ մեր ճրագարանը տեղից ընդմիշտ հանելու:

Ինչպես տեսանք, «ճրագարան»ը յուրաքանչյուր եկեղեցու համար գործածված խորհրդանիշ է: Ինչպե՞ս է ճրագարանը տեղից հանվում: Ճրագարանը նաեւ լույսի եւ փրկության խորհրդանիշ է: Եկեղեցու ճրագը Քրիստոս Ինքն է: Քրիստոս եկեղեցուն սպառնում է զրկել Իր լույսից, Իր լույս ներկայությունից եւ փրկությունից այնպես, ինչպես առաջին մարդը՝ Ադամը, ով մինչեւ իր անկումը վայելում էր Աստծո անմիջական ներկայության շնորհը, որը այնուհետեւ կորցրեց:

«Միակ նպաստաւոր բանը, որ դու ունես, այն է, որ ատում ես Նիկողայոսի հետեւորդների գործերը, որ ես էլ եմ ատում» (հմր 6): Առաջին դարն ունեցավ մեր ներկա դարից ոչ նվազ աղանդավորական հոսանքներ եւ ուսմունքներ: Ոմանք չընդունեցին Քրիստոսի աստվածությունը, մյուսներն ուրացան Նրա ճշմարիտ մարդեղությունը (Ա Հի 4:2-3 եւ այլն), ուրիշները մերժեցին մեռելների հարությունը կամ միայն հոգեղեն հարությունն ընդունելով՝ մեռելների հարությունն արդեն իրականացած հռչակեցին (Բ Տմ 2:17-18), եւ նույնիսկ տարատեսակ մոլորությունների մեջ ընկան: Այդ աղանդներից շատերի մասին բավականաչափ պատկերացում, իսկ որոշների մասին շատ քիչ եւ անբավարար գիտելիքներ ունենք: Այս վերջիններից է Նիկողոսյանց աղանդը, որի մասին գրեթե ոչինչ չգիտենք:

Ըստ երրորդ դարի հեղինակ Եվսեբիոս պատմիչի՝ այս աղանդի հիմնադիրը Երուսաղեմի առաջին եկեղեցու յոթ սարկավագներից Նիկողայոս կոչվածն է, ով բնիկ անտիոքցի էր (Գրծ 6:5): Աղանդը, ինչպես կարող ենք դատել այս գրքում տրված թերարժեք տեղեկություններից, փորձում էր քրիստոնեությունը հաշտեցնել հեթանոսության հետ՝ որդեգրելով պաշտամունքային որոշ ձեւեր, բայց մանավանդ որդեգրելով բարոյական շատ թույլ մի գաղափար կամ հասկացություն, որ համազոր էր անբարոյականությունը քաջալերելուն: Աղանդը հետեւորդներ ուներ նաեւ ուրիշ քաղաքներում, ինչպես, օրինակ, Պերգամոնում (տե՛ս սույն գլխի հմր 14-15): Ըստ երեւույթին որոշ աղերս կա այս աղանդի եւ Պերգամոնի եկեղեցում հայտնված մեկ այլ աղանդի միջեւ, որը հիշատակվում է Բաղաամի անունով (տե՛ս սույնը, հմր 14), եւ որը դարձյալ առնչվել է անբարոյականության հետ: Նույնպես կարող է որեւէ կապ լինել այդ աղանդի եւ Թիատիրի եկեղեցում հայտնված նմանօրինակ աղանդի միջեւ, որի ղեկավարը Եզաբել անունով կին է (տե՛ս սույնը, հմր 20): Ամեն դեպքում բոլորի ընդհանուր գծերն են հեթանոսական ըմբռնումներով շաղախված լինելը, կուռքերին զոհաբերած միս ուտելը եւ բարոյական թուլությունը քաջալերելը:

Քրիստոս ուժեղ խորշանք է արտահայտում նման անհավատարմության, բարոյական սկզբունքների թուլության ու մինչեւ պոռնկության առաջնորդող վտանգավոր վարքագծի հանդեպ, որը երբեք էլ փրկության ելք չէ, այլ պարզապես շատերին կորստյան առաջնորդող կրակի հետ խաղալ է, այն շատերին, որոնց համար մեռավ Քրիստոս (Հռ 14:15, Ա Կր 8:11): Ահա թե ինչո՞ւ Քրիստոս ատում է նրանց գործերը:

Արդ, թեպետ Եփեսոսի եկեղեցին թուլացել է իր սիրո մեջ, բայց եւ այնպես հեռու է մնացել այս բարոյական թուլություններից, որոնք աղարտում են հավատքի սրբությունը, հեռացնում փրկության շնորհից եւ մարդուն զրկում Արքայության խոստումից (տե՛ս Հտ 22:14-15: Հմմտ.՝ Ա Կր 6:9-10, Գղ 5:19-21):

«Ով ականջ ունի, թող լսի, թէ Հոգին ի՞նչ է ասում եկեղեցիներին» (հմր 7): Այս բանաձեւը, որ գտնում ենք բոլոր նամակների վերջում, ցուցանիշ է, որը, ըստ էության, նշում է, թե նամակն ընդհանրական բնույթ ունի, միայն մեկ եկեղեցի նկատի չունի, այլ՝ բոլոր «եկեղեցիները»: Ինչ այստեղ ասվում է, առաջին հերթին կարող է բնորոշ լինել Եփեսոսի եկեղեցուն:

Սակայն «ով ականջ ունի», միտք ու իմաստություն ունի, կհասկանա, որ արտահայտված գնահատանքը, արված քննադատությունը, ազդարարությունն ու խոստումը հավասարապես ուղղվում են բոլորի՛ն, որովհետեւ բովանդակ աշխարհում ո՛ւր եւ ե՛րբ էլ լինեն, միեւնույնն է, բոլոր եկեղեցիները նույն հիմնական դժվարությունների ու նեղությունների դեմ հանդիման են գտնվելու, ենթակա են նույն տառապանքներին ու փորձություններին, եւ միեւնույն վտանգը կարող է սպառնալ բոլորին:

Ուստի, բոլորի առջեւ դրվում է նույն պահանջը՝ իրեն ենթարկել ինքնաքննության, ապաշխարել եւ վերադառնալ սկզբնական անկեղծ սիրուն ու հարազատ հավատքին՝ չկորցնելու համար Աստծո թանկարժեք խոստումները, որոնց կատարումը մոտ է:

Հետաքրքրական է նկատել, որ նամակը (եւ հաջորդող մյուս նամակները) թելադրողը Քրիստոս Ինքն է, սակայն վերջում խոսում է Սուրբ Հոգու անունով եւ վերջին խոստումները նույնպես տալիս է Սուրբ Հոգու անունով. «Թող լսի, թէ Հոգին ի՞նչ է ասում»: Երեւութապես զարմանալի, սակայն Աստվածաշնչի ներքին տրամաբանության մեջ շատ հետեւողական գիծ է սա. ամբողջ Աստվածաշունչը, որ հենց բնագիրը այդպես է կոչվում եւ բնագրի հետեւողությամբ նաեւ մենք կոչում ենք Աստծո խոսք, ուրիշ բան չէ, եթե ոչ Որդու Հայտնությունը, Ով Աստծո Խոսքն է:

Սակայն նույն Աստվածաշունչը բազմիցս վկայում է, որ գրի առնող բոլոր հեղինակներն էլ խոսեցին Սուրբ Հոգով կամ Սուրբ Հոգու ազդեցությամբ կամ մղումով (հմմտ.՝ Բ Թգ 23:2, Նէ 9:30, Զք 7:12, Մտ 22:43, Ղկ 1:41 եւ 67, Գրծ 1:16, 11:28, Ա Կր 2:10, Ա Պտ 1:11-12, Բ Պտ 1:21 եւ այլն): Սրանք երբեք հակառակ չեն, այլ միեւնույն ճշմարտության դրսեւորումները, որովհետեւ հայտնությունը տվողը Որդին է, իսկ Նրան ներշնչողը՝ Աստծո Հոգին, Որը շատ հատկանշականորեն կոչվում է նաեւ «Քրիստոսի Հոգին» (Հռ 8-9, Փլպ 1:19: Հմմտ.՝ Գրծ 16:7):

Այս իմաստով դարձյալ հատկանշական է այն, ինչ կարդում ենք Հին Կտակարանի մարգարեների մասին Պետրոսի Ա թղթում. «Այս

փրկութիւնն էր, որ փնտրեցին եւ փորձեցին հասկանալ մարգարէները, որոնք, ձեզ տրուելիք շնորհի մասին մարգարէանալով, փորձում էին հասկանալ, թէ ինչպիսի՞ ժամանակի եւ ինչպիսի՞ հանգամանքների մասին էր ծանուցում իրենց մէջ գործող Քրիստոսի Հոգին, որը կանխապէս վկայում էր Քրիստոսի չարչարանքների եւ դրանց յաջորդելիք փառքի մասին» (Ա Պտ 1:10-11): Ահա թե ինչո՛ւ է Սուրբ Հոգու անունով տրվում կամ հավատացյալների սրտի մեջ դրոշմվում յուրաքանչյուր նամակի վերջին խոստումը: Ի վերջո չմոռանանք, որ Հովհաննես առաքյալն ինքը նույնպես պատգամներն ստացավ Քրիստոսից՝ Սուրբ Հոգով լցվելուց հետո միայն (տե՛ս Հտ 1:10):

«Ով որ յաղթի, Ես նրան իրաւունք կը տամ ճաշակել Կեանքի ծառից, որը գտնւում է Աստուծոյ դրախտում» (հմր 7): Ոստման՝ հանկարծակի ցատկի նմանվող կոչի այս ձեւը գտնում ենք յուրաքանչյուր նամակում: Այս առաջին խոստումը վերաբերում է Կենաց ծառին, որը Աստծո դրախտում է: Այդ ծառի առաջին հիշատակությունը գտնում ենք Ծննդոց գրքի սկզբում (2:9, 3:22-24), իսկ երկրորդ եւ վերջին հիշատակությունը՝ Հայտնության այս գրքում (22:2 եւ 14), որ Աստվածաշնչի եզրափակումն է եւ վերադարձը դեպի աստվածատունկ դրախտ:

Այս դրախտը երկրավոր չի կարող լինել, ոչ էլ նշում է Աստծո անմիջական ներկայության այն վիճակը, որ աշխարհի կատարածին վայելելու են Աստծո ժողովրդին մաս կազմողները, այլ ներկայացնում է երանական մի վիճակ, որ առաջին մարդուն պարգեւել էր Աստված, եւ որից մարդը զրկվեց իր անհնազանդությունից հետո: Եվ այժմ մահվան վրա Քրիստոսի տարած հաղթանակից հետո կյանքի եւ մարմնավոր հարության միջեւ միջանկյալ մի վիճակ է, երբ արդարների հոգիներն Աստծո խոստացած երանական հանգիստն ու հավիտենական կյանքի բարիքների նախաճաշակումն են վայելում մինչեւ հասնի աշխարհի կատարածը, եւ բոլորը Վերին Երուսաղեմի մաս կազմեն:

Քրիստոս այդ դրախտը խոստացավ այն ավազակին, ով վերջին պահին զղջումով ապավինեց Նրան եւ ժառանգեց փրկությունը՝ լսե-

լով անհավատալի ավետիսը. «Այսօր Ինձ հետ կլինես դրախտում» (Ղկ 23-43): Քրիստոս նույն այդ դրախտի մասին խոսեց մեծահարուստի եւ աղքատ Ղազարոսի մասին պատմող առակներում (տե՛ս Ղկ 16:22): Եվ նույն դրախտը բարձրացված Պողոս առաքյալն այդ փորձառության մասին է խոսում կորնթացիներին ուղղած երկրորդ նամակում (Բ Կր 12:2-4):

Այս դրախտը վերականգնումն է Աստծո եւ մարդու միջեւ անխրամատ ու սերտ մտերմության վիճակի, որն ուներ նախամարդը մեղանչումից եւ անկումից առաջ, եւ որն այժմ դարձյալ իրենց հավատքի շնորհիվ կվայելեն մեղքի եւ չարի դեմ հաղթանակ տանողները:

Սակայն տրվածը միմիայն ապագային նայող խոստում չէ: Ասացինք, որ յուրաքանչյուր նամակի սկզբում հիշատակվող տիտղոսն անմիջականորեն կապ ունի նույն նամակում տրված խոստման կամ խոստումների հետ: Այս նամակի սկզբում Քրիստոս Իրեն ներկայացնում էր որպես Իր Եկեղեցու Տեր ու Թագավոր եւ Քահանայապետ, որում Ինքը շրջում է: Արդ, Եկեղեցու հասկացողությամբ ու մեկնաբանությամբ, Կյանքի ծառը նույն Ինքը Քրիստոս է, Ով մեզ հավիտենական կյանք է տալիս:

Կյանքի ծառի պտուղը հենց նույն հավիտենական կյանքն է կամ անմահությունը: Նշանակում է, որ, ըստ էության, Քրիստոս խոստանում է Ինքն Իրեն ընծայել հաղթանակող Եկեղեցուն կամ հավատացյալին ճիշտ այնպես, ինչպես քիչ հետո նույնը տեսնելու ենք երկնավոր մանանայի հետ կապվող խոստման առիթով (տե՛ս 2:17):

Իսկ Իրեն անձնապես պարգեւելու այս խոստումը կապված է ներկա կյանքին, ավելի ճիշտ՝ Եկեղեցու կյանքին: Քրիստոս, մեզ հետ խլելով աշխարհից, ուր արտաքսվել էինք Ադամի մեղանչումով, մեզ համախմբեց Եկեղեցում, որը խորհրդանշական դրախտն է: Քրիստոս Ինքը Եկեղեցու այդ դրախտում հավերժորեն պարգեւում է Իրեն՝ որպես Կյանքի ծառ, որպեսզի մենք Իրենից ճաշակենք եւ մեր մեջ ունենանք անմահության պտուղը:

ՆԱՄԱԿ ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ (2:8-11)

Երկրորդ նամակն ուղղված է Զմյուռնիային, որն այժմ հայտնի է Իզմիր անունով եւ գտնվում է Եփեսոսից ավելի վեր՝ դեպի հյուսիս-արեւմուտք: Այս հզոր եւ շատ հարուստ քաղաքը, որ նաեւ ընդարձակ ծովածոցում հաստատված կարեւոր նավահանգիստ էր, նշանավոր էր որպես կայսերական պաշտամունքի կենտրոն եւ միաժամանակ ուներ բավական մեծ հրեական համայնք, որը հետագայում միանալու էր քրիստոնյաների դեմ մղվելիք հալածանքներին: Ենթադրվում է, որ այս եկեղեցու «հրեշտակը» կամ առաջնորդը, ում ուղղվում է նամակը, Հովհաննես առաքյալի Պողիկարպոս աշակերտն էր, ում նահատակության մասին պատմող գրությունը մեզ հասած առաջին վկայություններից է:

«Այսպէս է ասում Առաջինն ու Վերջինը, Նա, Ով մեռաւ ու վերակենդանացաւ» (հմր 8): Հալածանքների մեջ տվայտող Զմյուռնիայի եկեղեցուն Հիսուս քաջալերության պատգամ է հղում՝ նախ հիշեցնելով Իր աստվածային անունն ու հանգամանքը՝ «Առաջինն ու Վերջինը» (գրաբարն ունի նաեւ «Անսկիզբն ու Անվախճանը» ձեւը): Առաջին պահից հիշեցնում է, որ այս ժամանակավոր ու անցավոր աշխարհում ինչպիսին էլ լինի մեզ վերապահված բաժինը, մեր աչքերը պետք է ուղղված լինեն հավիտենականին, Նրան՝ հավիտենական Աստծուն, Ով ո՛չ սկիզբ ունի եւ ո՛չ վախճան, եւ Ում ձեռքերում են բոլորը՝ առաջինից մինչեւ վերջինը:

Աշխարհի ճակատագիրը տնօրինողն իրենք՝ մարդիկ չեն, որքան էլ այդպես թվա մեր նյութական մտածողությանն ու մեր մարմնավոր աչքերին: Հավատքի հայացք ունեցողը գիտի, որ աշխարհի ղեկն ու ճակատագիրն Աստծո ձեռքերում են եւ, ըստ այնմ էլ, հավատավոր մարդը հանձնվում է Նրա կամքին ու առաջնորդությանը:

Հիսուսը նաեւ քաջալերանքի պատգամ է ուղղում՝ հիշեցնելով երկրավոր կյանքի Իր օրինակը: «Նա, Ով մեռաւ եւ վերակենդանացաւ»: Իր մարդեղությունը եւ փոխանորդական չարչարանքներն ու

մահը կենդանի օրինակ են այս աշխարհում ապրող յուրաքանչյուր հավատացյալ մարդու համար, որպեսզի նա մշտապես հիշի, թե հալածանքներն ու չարչարանքները չեն նշանակում չարի հաղթանակ, այլ չարի դեմ պայքարելու Աստծո յուրահատուկ ճանապարհներն են: Սա պայքար է, ուր կանչվում է մարդը՝ հաղթանակ տանելու մեղքի հանդեպ:

Այո՛, դրանք Աստծո հատուկ ճամբաներն են, որ մարդուն բարձրացնելու են աշխարհի տիղմից եւ հաղորդակից են դարձնելու Նրա փառքին: Ուստի, չարչարանքները ո՛չ ահարկու են եւ ո՛չ էլ հարկավոր է դրանցից ընկրկել: Աստված չի կամենում որեւէ մեկի չարչարանքը, բայց նաեւ չի ուզում, որ մենք փախչենք, երբ կյանքը մեզ կանգնեցնի դրանց դեմ հանդիման, որովհետեւ չարչարանքները մարդուն մաքրող ու բյուրեղացնող քուրաներն են (հմմտ.՝ Ա Պտ 1:6-7), կատարելության ճանապարհը եւ դեպի Արքայության անանց փառք տանող սանդուղքը:

Այդ պատճառով է, որ Աստված մարդկանց փրկության համար Իր Որդուն ուղարկեց աշխարհ, որպեսզի անարգ խաչի միջոցով մատնացույց անի փրկության ճանապարհը: Այդ նպատակը լավ է պատկերացնում առաքյալը. «Աստուած, որ Ի՛ր համար ստեղծեց եւ Իրենո՛վ է պահում ամէն ինչ՝ Իր փառքին մասնակից դարձնելու համար Ի՛ր բազում որդիներին, յարմար գտա, որ նրանց փրկութեան առաջնորդող Յիսուսն Ի՛նքը օրինակ տայ՝ չարչարանքների կատարելութեան հասնելու» (Եբր 2:10):

Եվ հիմա նույն Փրկիչն Ինքը, «որ չարչարվելով փորձուեց» եւ «կարող է օգնել փորձութեան մէջ եղողներին» (Եբր 2:18), Իր սրտապնդիչ օգնության խոսքն է ուղղում յուրաքանչյուրին՝ ասելու, որ բոլոր նրանք, ովքեր Իր օրինակով են հանձն առնում Աստծո կամքը եւ հանուն այդ կամքի հավատարմության՝ ի հարկին նաեւ մահը, ապա մահից հետո անվախճան կյանք են ունենալու: Հետեւաբար, հալածանքը, չարչարանքը եւ նույնիսկ մահը երբեք ընկճում, պարտություն ու վախճան չեն նշանակում:

Քրիստոս հաղթանակած անցավ այդ ճանապարհով եւ նախօրոք էլ յուրայիններին ասաց. «Այս բաներն ասացի ձեզ, որպէսզի Ինձնով խաղաղութիւն ունենաք: Աշխարհում դուք նեղութիւն կունենաք, սակայն քաջալերուեցէ՛ք, որովհետեւ Ես յաղթեցի աշխարհին» (Հհ 16:33): Քրիստոսի ճամփով ընթացողը նույնպես հաղթող է, որովհետեւ հրաժարվում է անցավոր կյանքից՝ հավիտենական կյանքը շահելու համար, ախտավոր ու անարգ կյանքի փոխարեն՝ ձեռք բերելու անխախտ ու փառավոր կյանք:

«Գիտեմ քո գործերը, քո նեղութիւնը եւ աղքատութիւնը» (հմր 9): Զմյուռնիայի եկեղեցու ունեցած երեք առաքինություններն են՝ կատարած գործերը եւ հանձն առած նեղությունն ու աղքատությունը, որոնց համար Քրիստոս Իր գնահատանքն է արտահայտում «գիտեմ» բայով, որ նշանակում է, թե Աստված դրանք մոռացության չի մատնում, այլ ընդհակառակը, դրանք, ինչպես անուշաբույր պատարագ, միշտ Աստծո գիտակցության մեջ են (հմմտ.՝ Գործ 10:31): Այստեղ խոսքը, վստահաբար, հավատքի գործերի մասին է, որոնք հավատքի կենդանության նշաններն են (հմմտ.՝ Հկ 2:17 եւ 26):

Նեղությունն այն հալածանքներն ու չարչարանքներն են, որոնց ենթարկվում են նրանք թե՛ հեթանոսներից եւ թե՛ հրեաներից, եւ այդ բոլոր հալածանքների մեջ պահպանում իրենց ջերմեռանդությունը: Անդրադառնալով աղքատությանը՝ ասենք, որ աղքատությունը ներկայանում է զույգ իմաստով: Նախ՝ կարելի է հասկանալ զուտ բառացի կամ տառացի իմաստով: Գիտենք, որ հաճախ պետական հալածանքները զուգակցվում էին սեփական ինչքերի բռնագրավմամբ. քրիստոնյան զրկվում էր ողջ ունեցավածքից եւ բառացիորեն մատնվում աղքատության: Երկրորդ իմաստը հալածանքի ու չքավորության մեջ թաքնված բարեպաշտությունն է, որը հաճախ աստվածաշնչական լեզվում արտահայտվում է «աղքատ» եզրով (տե՛ս Սղ 9:9 եւ 18, 34:6 եւ այլն: Հմմտ.՝ Մտ 11:5, Ղկ 4:18): Այդպիսի աղքատներին է երանի տալիս Հիսուս (Մտ 5:3), եւ այստեղ նույն երանելի վիճակի մեջ է տեսնում ու երանելի հայտարարում Զմյուռնիայի եկեղեցուն,

ինչպես նաեւ նրա օրինակին հետեւող բոլոր ժամանակների ճշմարիտ հավատացյալներին:

«Աղքատ ես երեւում, բայց դու հարուստ ես» (հմր 9): Այստեղ «աղքատ» եւ «հարուստ» բառերը դարձյալ փոխաբերական իմաստով են գործածվել: Բարեպաշտ մարդն աշխարհի «աչքում» կարող է զրկված ու «խեղճ» երեւալ, եւ մարդիկ կարող են նրան նայել արգահատանքով եւ ըստ այնմ վերաբերվել նրա հետ: Սակայն իրականությունն այլ է Աստծո աչքին եւ Աստծուն հավատացող մարդու համար:

Պողոս առաքյալն այնքա՜ն գեղեցիկ է բացատրում այդ իրավիճակն իր սեփական փորձառությամբ. «Ամէն տեսակ նեղութիւն ունենք, բայց ընկճուած չենք, տագնապի ենք մատնուած, բայց յուսահատ չենք, հալածանքներն անպակաս են, բայց լքուած չենք, յաճախ խոշտանգուած, բայց խորտակուած չենք: Մեր մարմինների մէջ շարունակ կրում ենք Յիսուսի մահը, որպէսզի Յիսուսի կեանքն էլ յայտնուի մեր մարմիններիի մէջ» (Բ Կր 4:8-10): Երկրի վրա նույնպես կարեւորը հարուստ լինելը չէ՛ եւ ո՛չ էլ մարդկանց աչքին հարուստ կամ փարթամ երեւալը: Կարեւորն Աստծո աչքին հարուստ լինելն է՝ հաւատքով եւ Երկնքում, որպես գանձ, դիզված առաքինություններով ու բարեգործություններով (տե՛ս Մտ 6:20, Ղկ 12:33, Ա Տմ 6:18, Հկ 2:5: Հմմտ.՝ Ղկ 12:21):

«Գիտեմ այն անարգական խօսքերը, որ ասում են նրանք, որոնք իրենց հրեայ են համարում, սակայն չեն, նրանք Սատանայի հետեւորդներ են» (հմր 9): Այստեղ բացահայտորեն ակնարկվում է ոչ-քրիստոնյա հրեաների վարմունքին իրենց քրիստոնյա ազգակիցների հանդեպ, որն անարգական է, ցասումնալից ու մերժողական: Այդ վարմունքը նրանք դրսեւորեցին ոչ միայն իրենց կրոնական համոզմունքներից մղված, այլեւ հատկապես իրենց կույր մոլեռանդությամբ տարված, որպեսզի Քրիստոսի հետեւորդները չստանային կայսերական պաշտամունքից զերծ մնալու իրավունք, որն ունեին հրեաները, ուստի եւ մատնվեին կայսերական ատյանների հետապնդումներին:

Այսպիսի եղբայրատյաց վարմունքն ու եղբայրասպան տրամադրվածությունը չեն կարող թելադրվել Աստծուց: Դրանք կարող են լինել

միմիայն Սատանայի թելադրանքով: Դրանով իսկ նրանք ցույց էին տվել, որ իրենք ճշմարիտ հրեաներ չեն (հմմտ.՝ Հռ 2:28-29, 9:6-8), Աստծո որդիներ չեն, այլ՝ Սատանայի ծնունդներ եւ նրա՛ հետեւորդներ (հմմտ.՝ Հհ 8:40-44):

«Մի՛ վախեցիր այն չարչարանքների համար, որ կրելու ես» (հմր 10): 8-րդ համարի առիթով արդեն ասացի, թե այս նամակի հիմնական նպատակը սրտապնդիչ խոսք հղելն է՝ քաջալերանքի խոսք՝ չարչարվող Եկեղեցուն եւ նախազգուշացում, որ դեռեւս առջեւում ուրիշ նեղություններ ու չարչարանքներ կան, որոնց պետք է դիմագրավել ամենայն քաջությամբ եւ Աստծո խոստումների հանդեպ կատարյալ վստահությամբ:

«Բանսարկուն ձեզնից ոմանց ահա բանտ կը նետի՝ փորձելու համար, եւ ձեր նեղութիւնը տասը օր է տեւելու» (հմր 10): «Բանսարկու» նշանակում է չարախոս, զրպարտիչ. Աստվածաշնչում սա Սատանային տրված տիտղոս է՝ նկատի ունենալով այն դերը, որի մեջ նրան ներկայացնում է հատկապես Հոբի գիրքը (հմմտ.՝ Հոբ 1:6-12, 2:1-6): Այդ գրքից նաեւ տեղեկանում ենք, որ Աստված Բանսարկուին թույլատրել է փորձել մարդկանց, որպեսզի, փորձաքարին զարկվելով, ի հայտ գա նրանց առաքինությունը, եւ Սատանան պարտվի տկար մարդկանց իսկ ձեռամբ՝ Աստծո հանդեպ ունեցած իր ամբարտավան հավակնությունների համար:

Այս իրողությունը հիշեցնելով՝ Քրիստոս ընդգծելով վերհիշեցնում է մեկ ուրիշ ճշմարտություն եւս. յուրաքանչյուր հավատացյալ պետք է իմանա, թե Աստված Սատանային թույլ չի տա մարդու կարողություններից ավելի վեր փորձել նրան (Ա Կր 10:13: Հմմտ.՝ Հկ 1:13), եւ թե փորձությունը կարճ ժամանակի համար է միայն: «Տասը օր» բացատրությունը չի միտում նշել օրերի ճշգրիտ հաշվարկ, այլ՝ պարզապես շատ կարճ ժամանանակահատված (հմմտ.՝ Ծն 24:55, Դն 1:12)՝ ասելու համար, թե մեր ժառանգելիք հավիտենականության առջեւ ոչինչ է չարչարանքների տեւողությունը (հմմտ.՝ Հռ 8:18):

«Հաւատարիմ եղի՛ր ինձ, եթէ նոյնիսկ պէտք է մեռնել, եւ Ես քեզ կեանքի պսակը կը տամ» (հմր 10): Պսակն այստեղ դափնու ճյուղե-

րով, ուրիշ դալար ոստերով կամ ծաղիկներով պատրաստված պսակն է, որն անցյալում տրվում էր մարզական խաղերում հաղթողին: «Կեանքի պսակը» հավիտենական կյանքի ակնկալությունն է, որը, որպես հաղթանակի եւ փառքի պսակ, շահում են Քրիստոսի հավատարիմները՝ մրցադաշտում շահած դափնեպսակի նման (հմմտ.՝ Ա Կր 9-24, Փլպ 312 եւ 14: Տե՛ս նաեւ Պտ 3:11, 4:4 եւ 10:6-2 եւ այլն):

Եվ իրոք, քրիստոնյայի կյանքն այդպիսի մրցույթ է՝ ոչ թե անցավոր ու վաղ թորշոմող պսակ ձեռք բերելու համար, այլ շահելու համար փառքի անթառամ պսակը, «արդարության պսակը», որ այդ օրը, իբրեւ հատուցում, յուրայիններին է տալու Փառաց Տերն ու Արդար Դատավորը (հմմտ.՝ Բ Տմ 4:7-8): Հավատքի կատարյալ հավատարմություն ցուցաբերած եւ չարի չեմ հաղթանակ տարած հավատացյալը, հավիտենական կյանքը պարգեւ ստանալուց բացի, ստանալու է նաեւ Քրիստոսի հետ թագավորելու, Նրա թագավորական պատվին ու փառքին մասնակից դառնալու բացառիկ առանձնաշնորհը (տե՛ս Բ Տմ 2:12: Հմմտ.՝ Մտ 19:28, Ղկ 22:30):

«Ով ականջ ունի, թող լսի, թէ Հոգին ի՛նչ է ասում եկեղեցիներին. «Ով որ յաղթի, երկրորդ մահից չի վնասուի» » (հմր 11): Սա նախորդ բացատրության կրկնությունն է՝ մի քիչ տարբեր պատկերով: Այստեղ դարձյալ հավիտենական կյանքի խոստումն է տրվում, սակայն ակնարկելով այն «երկրորդ մահվան» մասին, որ բաժին է հասնելու անհավատներին ու անօրեններին:

Առաջին մահը բնականորեն եւ անշփոթ ենք հասկանում. այսինքն՝ որպես մարմնավոր մահ, որին ենթակա ենք բոլորս, եւ որն ահա ամեն վայրկյան ներկայանում էր հալածանքի ու չարչարանքի ենթակա քրիստոնյաներին, ինչպես նրանց գլխի վրա կախված Դամոկլյան սուր: Իսկ ինչպիսի՞ն է այդ «երկրորդ մահը», որի մասին խոսում է Քրիստոս, եւ որը ոմանց մտքում շփոթ է առաջացրել եւ առաջացնում է մինչեւ այսօր:

Այն աղանդները կամ մարդիկ, ովքեր չեն ուզում ընդունել կամ ճանաչել դժոխքի գաղափարը, այս «երկրորդ մահ» բացատրությունը ցանկանում են հասկանալ դարձյալ մարմնավոր իմաստով՝ ասելով,

թե մարմնով հարություն առնելուց հետո աստվածային դատաստանով դատապարտվածները մեկ անգամ եւս պիտի մեռնեն եւ այս անգամ արդեն վերջնականապես: Նաեւ ասում են, թե դա նրանց ամբողջական բնաջնջումն է լինելու: Սակայն նման տեսությունն Աստվածաշնչից չի վերցված, այլ քմահաճ ցանկության եւ Աստվածաշունչը կամավորաբար սխալ հասկանալու արդյունք է:

Նախ ասենք, որ ողջ Նոր Կտակարանում միայն Հայտնության գիրքն է խոսում երկրորդ մահվան մասին: Երկրորդ, նույն այս գրքի 20-րդ գլխի 6-րդ համարում դարձյալ հիշվում, իսկ 20:14-ում բացատրվում է որպես «կրակի լիճ» (հմմտ.՝ 21:8), ուր նետվողները «կչարչարուեն գիշեր ու ցերեկ, յաւիտեանս յաւիտենից» (20:10): Արդ կարո՞ղ է այնպես լինել, որ այս լիճը նետվողները մարմնապես մեռած ու բնաջնջված լինեն եւ հետո չարչարվեն գիշեր ու ցերեկ, հավիտյանս հավիտենից: Ծիծաղելի՞ չէ՞ այդպիսի անհեթեթ բացատրությունը:

Մինչդեռ եթե թույլ տանք, որ բնագիրը բացատրի, ապա կգտնենք ճշմարտությունը, այսինքն, թե ինչպես ամբողջ գիրքն է հորդում փոխաբերություններով ու խորհրդանիշերով, այնպես էլ «երկրորդ մահ» բացատրությունը փոխաբերական իմաստ ունի եւ նշանակում է, թե «երկրորդ մահը» այն ծանրագույն դատապարտությունն է, որին կարող է ենթարկվել որեւէ արարած: Ինչպես մեր նյութական մտածողության մեջ մարմնական մահն է հետին չարիք, այպես էլ «հոգեւոր» մահն է չարիքների չարիքը՝ կրոնական մտածողության մեջ:

Երկրի վրա «կյանք» եւ «մահ» բառերի բացատրություններն ընկալում ենք՝ հարաբերելով մարմնին, սակայն երկնային հավիտենական կյանքում այդ մարմնավոր հասկացությունը չկա: Ուստի «մահ» բացատրությունը տարբեր, այսինքն՝ հոգեւոր նշանակություն ունի:

Ինչպես որ «հավիտենական կյանք»ը եւ Աստծո ներկայության ու Աստծո հետ ապրված կյանքն է՝ իրեն հատուկ բոլոր կողմերով լուսաշող ու սրբաբույր եւ զվարթառատ կյանքով, արդարությամբ ու փառքով, այնպես էլ «հավիտենական մահ»ն Աստծուց հեռու եւ Աստծուց զուրկ ապրելու դատապարտությունն է՝ իրեն բնորոշ բոլոր կող-

մերով՝ խավարով եւ պիղծ խորհուրդների սարսափեցնող տագնապով ու տառապանքով հատկանշվող, ուր խաղաղությունն ընդմիշտ կորչելու է, եւ դառը զրկանքը, անօգուտ զղջումն ու հառաչանքը եւ անխնա ինքնաձաղկումն են լինելու դրան ենթարկվողների բաժինը:

Ահա այս մահից է, որ կփրկվեն Բանսարկուի փորձություններին եւ կյանքի նեղություններին դեմ գնացողներն ու հաղթանակողները, ինչպես մեզ հիշեցնում է Աստծո Հոգին:

ՆԱՄԱԿ ՊԵՐԳԱՄՈՆԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ (2:12-17)

Քրիստոնեական առաջին դարերի Պերգամոնը հռոմեական կարեւոր եւ ծաղկուն քաղաք էր՝ կրոնական շեշտված նկարագրով, Փոքր Ասիայի մաս էր եւ նախապես եղել էր Ատտալյան թագավորների նստավայրը: Քաղաքը իր անունն ստացել է այստեղ արտադրվող մագաղաթից: Պերգամոնը հայտնի էր 200 000 գիրք ունեցող մատենադարանով, որը կողոպտեցին հռոմեացիները եւ գրքերը տեղափոխեցին Եգիպտոս՝ Ալեքսանդրիայի գրադարան:

Հնագիտական պեղումները հայտնաբերել են քաղաքի սքանչելի շինությունների ավերակներ՝ Զեւսին նվիրված տաճար, թատրոն, ամֆիթատրոն, կրկես, Աթենաս չաստվածուհուն նվիրված տաճար եւ բժշկության չաստված Ասկլեբիոսին նվիրված սրբարան: Բազմաթիվ չաստվածների պաշտամունքին առընթեր կարեւոր տեղ ուներ նաեւ կայսեր պաշտամունքը, որի պաշտոնական կենտրոնատեղին էր Պերգամոնը դեռ Քրիստոսից առաջ՝ 29 թվականից: Ըստ ոմանց՝ այդ պատճառով է, որ Հայտնության գիրքն այս վայրը բնութագրում է որպես «այնտեղ, որտեղ Սատանան իր աթոռն ունի» (հմր 13):

«Այսպէս է ասում Նա, որ սրուած երկսայրի սուրն ունի» (հմր 12: Տես 1:16-րդ համարը եւ բացատրությունը): Սուրը դատաստանի, վրեժխնդրության եւ պատժի խորհրդանիշ է: Խոսողը ներկայանում է որպես տիեզերքի Գերագույն Դատավոր, Ով գնահատանքի եւ ազդարարության Իր արդար խոսքն է ուղղում Պերգամոնի եկեղեցուն:

«Գիտեմ քո գործերը եւ գիտեմ, որ բնակւում ես այնտեղ, որտեղ Սատանան իր աթոռն ունի» (հմր 13): Աստծուն ծանոթ են մարդկանց գործերը, նրանց վիճակը, ապրած դժվարություններն ու վայելած դյուրությունները: Պերգամոնի եկեղեցին դժվար պայմաններում է ապրում: «… Այնտեղ, ուր Սատանան իր աթոռն ունի» բացատրությունն ակնարկություն է այն իրողության, որ Պերգամոն քաղաքը հեթանոսական բազմաթիվ պաշտամունքների եւ հատկապես կայսեր պաշտամունքի կենտրոն էր:

«Բայց դու պահեցիր Իմ անունը եւ Իմ հանդէպ քո ունեցած հաւատը չուրացար, նոյնիսկ երբ Իմ հաւատարիմ վկան՝ Անտիպասը, սպանուեց ձեր առաջ այնտեղ, որտեղ Սատանան է բնակւում» (հմր 13): Դիվական ուժերի գործունեության այդպիսի կենտրոնում որպես քրիստոնյա ապրելն ու գործելն իսկական քաջության եւ գնահատանքի է արժանի, հավատարմության վկայություն է: Նույն իրողությունն է շեշտվում այստեղ, երբ քաղաքը ներկայացվում է «…այնտեղ, որտեղ Սատանան է բնակվում» բնորոշումով:

Սատանան բացարձակ տիրապետություն էր հաստատել Պերգամոնում, ինչը Աստծո հավատարիմների համար նշանակում էր կատաղի հալածանք եւ ամենազգի, ամենաբազմազան նեղություն: Այնտեղ այդպիսի հավատարիմ վկան եղավ Անտիպասը, ով, ըստ եկեղեցական ավանդության, նահատակվեց Դոմետիանոս կայսեր օրոք՝ մինչեւ մահ խորովվելով պղնձյա կաթսայի մեջ՝ դրանով նմանվելով իր Տիրոջն ու Փրկչին՝ Հիսուսին՝ «հավատարիմ վկային»: (1:5): Քրիստոս շատ որոշ ասում է, թե ով հետեւում է Իրեն եւ չի ուրանում Իր հանդեպ ունեցած հավատը, ով հալածանքների եւ չարչարանքների մեջ իսկ պահում է Իր անունը, այսինքն՝ Իր հետքերով է քայլում, դառնում է Իր կատարյալ նմանությունը եւ արժանանում Քրիստոսի հավատարիմ վկա կոչվելու առանձնաշնորհին:

«Բայց Ես քո նկատմամբ մի շարք դժգոհութիւններ ունեմ. քո շարքերում դու ունես Բաղաամի վարդապետութեան հետեւորդներ, այն Բաղաամի, ով Բաղակին սովորեցրեց Իսրայէլի որդիներին մեղքի մղել, որպէսզի նրանք կուռքերին զոհուած միս ուտեն եւ պոռնկու-

թիւն անեն» (հմր 14)։ Սակայն նահատակության ճանապարհով քայլող այս եկեղեցին մի վիրավոր կողմ ունի. նրա շարքերում կան մի շարք անձինք, ովքեր, նահատակություն հանձն չառնելու համար, սկսել են հետեւել Բաղաամի ուսուցած անհավատարմության ուղուն։

Բաղաամը սիրիացի մարգարե էր, ում Մոաբի Բալղակ թագավորը կանչեց, որ մարգարեանա եւ անիծի Աստծո ժողովրդին՝ Իսրայելին (տե՛ս Թվ 22:2-6), սակայն Աստված նրան արգելեց անիծել, որի պատճառով Բաղաամը զրկվեց Բալղակի խոստացած հարստությունից։

Երբ Բաղաամը մարգարեության ճանապարհով չկարողացավ Բալղակի կամքը կատարել եւ նրան հաճոյանալ, փորձեց դա անել ուրիշ կերպ։ Նա խորհուրդ տվեց մադիանացի աղջիկների միջոցով գայթակղել ու պոռնկության մեջ գցել իսրայելացիներին եւ նրանց մղել՝ պաշտելու մադիանացիների Բել աստծուն եւ ուտել նրան զոհաբերված մսեղենից, որպեսզի նրանց վրա իջեցնի Աստծո զայրույթն ու պատիժը (տե՛ս Թվ 1:3, 31:16)։

Քրիստոնեության դեմ հալածանքների ժամանակաշրջանում ի գործ դրվեցին ինչպես բռնամիջոցները, այնպես էլ համոզելու քաղցր ու շողոքորթ ձեւերը, որպեսզի Քրիստոսի հետեւորդներին մղեին հանձն առնել ուրացությունը եւ փրկեին իրենց կյանքը։ Այս մարդիկ հաճախ կայսերական պաշտոնյաներ էին, երբեմն՝ Եկեղեցու անդամներ, ինչպես տեղեկանում ենք հաջորդ համարից։ Առաջինները Բալղակ թագավորի նմաններն էին՝ իրենց խոստումներով, իսկ երկրորդները՝ Բաղաամի նմանները՝ իրենց առաջարկներով։ Երկուսն էլ անգիտակցաբար կատարում էին Սատանայի կամքը՝ քրիստոնյաների առջեւ գայթակղության քար դնելով եւ կռապաշտության, հեթանոսական բարքերի ու պոռնկության մղելով նրանց։

«Նոյնպէս քեզ մօտ էլ Նիկողայոսի վարդապետութեան հետեւորդներ» [կան] (հմր 15)։ Վերեւում ակնարկեցինք Նիկողայոսի եւ նրա աղանդի մասին։ Թվում է, թե Նիկողայոսն ու նրա համախոհները հալածանքների ենթակա քրիստոնեական համայնքներին խորհուրդ էին տալիս, առանց ուրանալու Քրիստոսին, հանձն առնել կայսեր պաշտամունքը եւ ճաշակել կուռքերին զոհաբերված մսից։ Այլ խոսքով, փորձում էին Քրիստոսին հաշտեցնել Հռոմի, իսկ քրիստոնեությունը՝ հեթանոսության հետ, ինչը ճշմարիտ քրիստոնեական հայացքով՝ աներեւակայելի եւ անհնար էր (հմմտ.՝ Ա Կր 10:20-21, Բ Կր 6:14-16)։ Եթե հաշտեցման նման փորձը նշանակելու էր հավատարմություն կայսեր եւ կյանք՝ մահվան վտանգին ենթակա հավատացյալների համար, ապա մեծագույն անհավատարմություն էր նշանակում Աստծո հանդեպ եւ մահ Աստծո աչքին։

«Արդ, ապաշխարի՛ր, ապա թէ ոչ շուտով կգամ եւ Իմ բերանից ելնող սրով կը պատերազմեմ նրանց դէմ» (հմր 16)։ Եթե հեթանոսության հետ լեզու գտնելու հնարքը կարող է կյանքի պատճառ դառնալ այս աշխարհի համար, սակայն Աստծո համար մահ է նշանակում. մարմինը փրկվում է, բայց հոգին մեռնում է։

Ապաշխարության կոչն այստեղ՝ սպառնալից շեշտով, ուժգին ազդարարություն է. ազդարարություն, որն այլ բառերով արտահայտված է Ավետարանում. «Մի՛ վախեցէք նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. դուք վախեցէ՛ք մանաւանդ նրանից, որ կարող է թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորստեան մատնել դժոխքում» (Մտ 10:28)։ Եթե նամակի սկզբում Քրիստոս Իրեն ներկայացնում է որպես «Նա, որ սրված երկսայրի սուր ունի», ապա դա իզուր չէ. սուրը պատրաստ է բարկությամբ դատել եւ պատժել Աստծո աչքին չարը գործողներին (հմմտ.՝ Հռ 13:4)։

«Ով ականջ ունի, թող լսի, թէ Հոգին ի՞նչ է ասում եկեղեցիներին. «Ով որ յաղթի, նրան ճաշակել կտամ թաքնուած մանանայից»» (հմր 17)։ Պերգամոնի եկեղեցում Բաղաամի օրինակին հետեւողները երկրավոր եւ կուռքերին զոհաբերված անմաքուր ուտելիք էին ընծայում աշխարհի հետ իրենց կապն ու միությունը պահելու համար։ Քրիստոս Իրեն հավատարիմ մնացողներին եւ այս փորձության մեջ տեղի չտվողներին ու հաղթողներին խոստանում է «թաքնված մանանան», «Երկնքի հացը» կամ «հրեշտակների հացը» (հմմտ.՝ Սղ 78:24-25), որը «Կյանքի հաց»ն է, այսինքն՝ Քրիստոսի Մարմինն ու Արյունն է (հմմտ.՝ Հհ 6:31-35 եւ 48-51), Քրիստոսի հետ սերտ ու ամբողջական միության խորհրդանիշն է եւ հավիտենական կյանքի խոստումը (հմմտ.՝ Հհ

6:58): Քրիստոսն այս Մանանան միշտ տալիս է եւ պիտի տա յուրայիններին, սակայն այս Մանանան «թաքնված» կամ ծածուկ է դրսիններից, որոնց իրավունք չի տրվել ճաշակել դրանից (հմմտ.՝ Եբր 13:10):

«… Ինչպէս նաեւ կտամ այն մաքուր գիրքը, որտեղ գրուած է մի նոր անուն, որը բացի ստացողից՝ ո՛չ ոք չգիտի» (հմր 17): Հունարենն ունի «ճերմակ գիրք» ձեւը: Թե ո՛րն է այս «ճերմակ գրքի» նշանակությունը, պարզ չէ: Ոմանք բացատրում են հեթանոս աշխարհում հայտնի սովորությամբ՝ մարդիկ իրենց վզերից կիսաթանկագին «քոյրեր» էին կախում՝ վրան փորագրված մոգական մի անուն, ինչն իբր թե պաշտպանում էր վտանգներից ու նեղություններից:

Այս իմաստով՝ Քրիստոսի խոսքն ընկալվում է որպես աստվածային ամբողջական պաշտպանության խոստում: Հեթանոսական կուռքերը եւ նրանց անունները որեւէ մեկին պաշտպանել չեն կարող. «Բայց Ես, որպէս ամբողջ տիեզերքի Տէր, ձեզ տալու եմ իրական մի գիրք՝ նոր եւ աշխարհին անծանօթ անունով, որին ապաւինողն իսկական պաշտպանութիւն եւ ապահովութիւն է ունենալու»:

Ոմանք այս երեւույթը բացատրում են մեկ այլ սովորությամբ. սերտ մտերմությամբ կապված անձինք կրում էին քարեր կամ միեւնույն քարի երկու մասի կիսված կտորներ, որոնց վրա գրված անունը կարդացվում էր միմիայն այն դեպքում, երբ երկու մասերը մոտ բերվեին՝ իրար ճանաչելու կամ միմյանց ինքնությունն ստուգելու համար: Այդ պարագայում նրա վրա գրված անունը միայն տվողն ու ստացողն էին իմանում: Քրիստոնյաների դեպքում, վստահաբար, դա Քրիստոսի անունն է կամ թերեւս «քրիստոնյա» անվանումը՝ նշելու համար, թե ստացողը Քրիստոսին է պատկանում:

Սակայն այս երեւույթի մեջ կարելի է տեսնել նաեւ մի նոր կյանքի խոստումը: Այս աշխարհի համար սեփական կյանքը կորցնողն Աստծո մեջ նոր կյանք կգտնի՝ սրբությամբ ու փառքով հատկանշվող (= ճերմակ) եւ անպատում երանություններով լեցուն, որովհետեւ «Աստուած իրեն սիրողների համար պատրաստեց մի այնպիսի փառք, որ ոչ մի աչք չի տեսել, ոչ մի ականջ չի լսել, եւ ոչ մէկի մտքով չի անցել» (Ա Կր 2:9: Հմմտ.՝ Ես 64:4):

ՆԱՄԱԿ ԹԻԱՏԻՐԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ (2:18-29)

Թիատիրը, որի ներկայիս անվանումն է Ակիիսար, Փոքր Ասիայի Լիդիա նահանգի քաղաքներից էր, սահմանակից Միսիա նահանգին, հաստատված Գայլ (հունարեն՝ Լիքոս) գետի վրա: Մի հին քաղաք է, ուր հետագայում բնակվեցին Մակեդոնիայից եկած գաղթականները, որը Սելեւկիոս Ա թագավորը զինվորական կենտրոն դարձրեց Ք. ա 281 թվականին: Թիատիրը Ք. ա 129 թվականին ընկավ հռոմեական իշխանության տակ: Թիատիրը վաճառականական աշխույժ կենտրոն էր՝ նշանավոր իր ծիրանագույն ներկով:

«Այսպէս է ասում Աստուծոյ Որդին, որի աչքերը նման են կրակի բոցի, իսկ ոտքերը՝ հրաշէկ անագապղնձի» (հմր 18: Տե՛ս 1:14-15-րդ համարները եւ բացատրությունը): Սակայն մինչ առաջին գլխում այս բացատրությամբ Քրիստոս ներկայանում էր որպես «Մարդու Որդուն նմանվող մեկը», ապա այստեղ Ինքն Իրեն ներկայացնում է որպես Աստծո Որդի, ում աչքերն անթափանց են եւ շուրջբոլորը լուսավորող, ում այս աշխարհի վրա դրված ոտքերը հրաշեկ են, արդեն վառվել են դատաստանի բոցով եւ պատրաստ են գալու եւ դատելու ամբարշտությունն ու անօրինությունները:

Անդրեաս Կեսարացին այս բացատրության մեջ տեսնում է Քրիստոսի աստվածության ակնարկությունը, որովհետեւ հրաշեկ ոտքերը համարում է Նրա աշխարհ գալու եւ մարդեղության խորհրդի խորհրդանիշը, ուր հողեղեն մարմինը միանում է աստվածային բնության կրակին եւ դառնում հրաշեկ:

«Գիտեմ քո գործերը, քո սէրը, հաւատը եւ համբերութեամբ կատարած քո ծառայութիւնը. եւ գիտեմ, որ քո վերջին գործերն աւելի շատ են, քան նախկինները» (հմր 19): Որքա՜ն գեղեցիկ դրվատական խոսք է, որով Հիսուս բնորոշում է Թիատիրի եկեղեցուն, որը պահել է եւ ունի քրիստոնեական երեք կարեւորագույն առաքինությունները՝ հաւատ, հույս (= համբերություն) եւ սեր (հմմտ.՝ Ա Կր 13:31), որոնցից մեծագույնը՝ սերը, հիշվում է առաջինը:

Սակայն սրանք միայն տեսական առաքինություններ չեն, որոնք հնարավոր է ամբարել մտքի կամ հոգու մեջ, այլ արտահայտվում են կյանքով, ինչն էլ լրացնում է նրանց: Հավատքի, հույսի եւ սիրո ապացույցները նրանց կենդանության նշան գործերն են եւ, մասնավորաբար, ուրիշներին ընծայված ծառայությունը (հմմտ.՝ Հկ 2:17-26):

«Բայց Ես քո նկատմամբ դժգոհութիւն ունեմ, քանի որ դու հանդուրժում ես Յեզաբէլին, այն կնոջը, որ ինքն իրեն մարգարեուհի է համարում: Նա մոլորեցնում է իմ ծառաներին՝ նրանց սովորեցնելով պոռնկութիւն անել եւ կուռքերին զոհուած միս ուտել» (հմր 20): Եթե մեծամասնության համար գովասանք ունի, ապա ոմանց հանդեպ ունի նաեւ դժգոհություն:

Թիատիրի եկեղեցու դեմ դժգոհությունը նման է Պերգամոնի եկեղեցու դեմ արտահայտված դժգոհությանը: «Հեզաբել» անունը, որ այստեղ, վստահաբար, խորհրդանշական անվանում է, վերցված է Թագավորությունների գրքերից (հմմտ.՝ Գ Թգ 16:31, 19:1-2: Դ Թգ 9:22 եւ 30): Այդ գրքերում Հեզաբել թագուհին՝ Փյունիկեի Սիդոն քաղաքից, Աքաաբ թագավորին հարս եկած մի ուժեղ անհատականություն, հանդես է գալիս որպես հեթանոսական պաշտամունքների ու ապականված բարոյականության հովանավոր:

Հեզաբելը մեծագույն վտանգ է ճշմարիտ աստվածապաշտության համար: Այդ անունով, հավանաբար, ակնարկվում է «Նիկողայոսի հետեւորդներ» աղանդի մեծ հեղինակություն վայելող մի կին, մի «սուտ առաքյալ» (հմմտ.՝ 2:2), ինքն իրեն «մարգարեուհի» համարող եւ որպես այդպիսին ներկայացող մի անձնավորություն, ում ինքնությունն անհայտ է մեզ, սակայն հայտնի են նրա գործերը, որոնք եւ ձաղկվում են:

«Պոռնկություն» բառը զույգ իմաստ ունի: Առաջին հերթին բառն այստեղ չունի մարմնավոր իմաստ, որովհետեւ առհասարակ Աստվածաշնչի մեջ այդ եզրով հասկացվում է Աստծո հանդեպ անհավատարմությունը, հավատքից շեղումը կամ անկումը եւ օտար աստվածների պաշտամունքը (հմմտ.՝ Ես 1:21, 57:3-5, Եր 2:20, 3:8-9, Եզկ 16:15: Ովս 3:1 եւ այլն):

Սակայն նույն բացատրության կողքին առկա է նաեւ դրա բառիմաստը, որովհետեւ, ինչպես Աստվածաշունչը եւ կրոնների պատմությունը կամ ուսումնասիրություններն են ցույց տալիս, պոռնկությունը հաճախ այդ պաշտամունքներին ընկերակցող սովորական երեւույթ էր, եւ թեպետ վստահ չենք՝ եկեղեցու անդամները մինչեւ այդտեղ հասամ, թե՞ ոչ, բայց կարելի է ենթադրել, որ հավատքի անկումը, բնականորեն, կարող է առաջնորդել բարոյական թույլ գաղափարների եւ ամեն տեսակ արարքների:

«Ես նրան ժամանակ տուեցի, որ ապաշխարի պոռնկութեան համար, բայց նա չապաշխարեց: Ուստի, ահաւասի՛կ, նրան հնոց կնետեմ, իսկ նրա գործակիցներին, որոնց հետ նա շնացաւ, մեծամեծ նեղութիւնների մէջ կգցեմ, եթէ չապաշխարեն իրենց կատարած գործերի համար» (հմր 21-22): Քրիստոս հիշեցնում է Իր աստվածային անսահման ներողամտությունը, որ համբերությամբ հետեւում է մարդկանց գործերին՝ սպասելով, որ նրանք ուղղվեն եւ փրկվեն:

Այդպես էլ Հեզաբելին ապաշխարության ժամանակ տրվեց, սակայն նա չապաշխարեց, ուստի դեռեւս մնում է նրա ահեղ դատապարտությունը: «Հնոց կնետեմ»ի հունարենն է «անկողնուն կգամեմ»ը: Ո՛ր ձեւով էլ վերցնենք, միեւնույնն է. բացատրությունը ցույց է տալիս, որ Հեզաբելի վճիռն արդեն արձակվել է՝ նրան սպասում է «հնոց»ը, որը «կրակե լճի» մեկ այլ անվանումն է (տես 20:10 եւ 14:15) կամ թերեւս ահավոր պատիժ է՝ անկողնուն պիտի գամվի:

Մինչ խիստ ու ծանր է Հեզաբելի դատապարտությունը, համեմատաբար մեղմ է այդ դատապարտության պատիժը նրա «գործակիցների» հանդեպ, ովքեր, հավանաբար, աղանդի ազդեցության տակ են, սակայն ամբողջական հետեւորդներ չեն: Ուստի, հույս կա, որ կթոթափեն այդ ազդեցությունները եւ կշրջվեն դեպի ճշմարտությունը, Աստծո հավատարիմ ընթացքը:

«Զարաչար կսպանեմ նրա որդիներին, եւ բոլոր եկեղեցիները կիմանան, որ Ես եմ, եւ ճանաչում եմ մարդկանց ցանկութիւններն ու մտածումները» (հմր 23):

«Նրա որդիներին» բացատրությամբ ակնարկում է Հեզաբելի հետեւորդներին կամ նրա օրինակին հետեւող անձանց: Նրանց պատիժը նույնպես ծանր է լինելու: Այդ պատիժը միայն Աստծո ապագա դատաստանին չի վերաբերում, այլ, վստահաբար, նաեւ անմիջական ներկային, որովհետեւ Քրիստոս ցանկանում է, որ այդ պատիժը ազդարարություն եւ զգաստացնող օրինակ լինի մյուս եկեղեցիներին:

«… Եւ իւրաքանչիւր հատուցում ըստ իր գործերի» (հմր 23): Աստվածային հատուցումները միշտ լինում են մարդկանց գործերին համապատասխան (տե՛ս Մտ 16:27: Հռ 2:6: Հմմտ.՝ Հտ 18:6, 20:12-13, 22:12): Հետեւաբար, չի կարելի ասել, թե մարդկանց գործերը բնավ էլ կարեւոր չեն: Այդպիսի ըմբռնումը հակառակ է Աստվածաշնչի բոլոր ուսուցումներին: Ճիշտ է, որ մեր փրկությունն ամբողջությամբ Աստծո շնորհն է, մեզ տրված անվճար պարգեւ, սակայն մեկ անգամ Քրիստոսին միանալուց, Նրա Մարմնի մաս եւ անդամ դառնալուց հետո մեր գործերը կարեւոր են, որովհետեւ լինելու են այդ նոր կապի՝ Քրիստոսի հետ մեր անմիջական հարաբերության բնական պտուղները:

Քրիստոս ասում է. «Լաւ ծառը լաւ պտուղ է տալիս, իսկ վատ ծառը՝ վատ պտուղ» (Մտ 7:17): Եթե մենք իրոք էապես փոխվել ենք, ապա մեր գործերը միմիայն այդ դրական փոփոխության արտացոլանքը պիտի լինեն: Եթե մեր մեջ տեղ ենք տվել բարուն, ապա մեր գործերն անպայման այդ բարու բնական դրսեւորումները կլինեն, իսկ դրանց միշտ հետեւում է աստվածային փոխհատուցումը:

«Գալով Թիատիրում գտնուող մնացեալ հաւատացեալներիդ, որ չհետեւեցիք այդ վարդապետութեանը եւ չճանաչեցիք ինչպէս ասում են՝ «Սատանայի ծածուկ խորհուրդները», ասում եմ ձեզ, որ ուրիշ բեռ չեմ դնելու ձեզ վրայ, սակայն ինչ որ ունէք, հաստատո՛ւն պահեցէք, մինչեւ որ Ես գամ» (հմր 24-25): Գնոստիկյան աղանդի ներկայացուցիչներն ուսուցանում էին, որ Սատանային հաղթելու համար հարկավոր է մտնել նրա միջնաբերդը, այսինքն՝ ճանաչել նրա գաղտնի խորհուրդները, ինչը հնարավոր է միմիայն չարի խորագույն փորձառությամբ, գիտակցաբար ու կամավորաբար խորանալով մեղքի մեջ:

Հնարավոր է, որ ակնարկվում է նման ուսուցման եւ դրան հետեւող անառակ վարքը, որն իր հերթին շատ նման է Նիկողոսյանց աղանդի որդեգրած ուղղությանը: Հիշենք, որ նրանց ուսուցումները նույնպես թվում էին, թե «գաղտնի» բնույթ ունեն: Ամեն դեպքում այս բացատրության տակ վերը հիշատակված Հեզաբելի վարդապետությունը եւ ջատագովված բարոյականն է, որը նկատի ունի Քրիստոս: Թերեւս երեքն էլ պարզապես նույն բաներն են:

«Ով որ յաղթի եւ շարունակի կատարել, ինչ որ Ես եմ ուզում, նրան իշխանութիւն կտամ ազգերի վրայ, այնպէս, ինչպէս որ Ես Ինքս էլ իշխանութիւնն ստացայ Իմ Հօրից: Նա կհովուի երկաթէ մականով եւ կփշրի նրանց կաւէ ամանների նման» (հմր 26-28): Հաղթանակողն Աստծո կամքը կատարողն է, որ շարունակելու է այդ կամքն իշխանաբար իրագործել նաեւ շրջապատում, աշխարհի վրա: Նրան Քրիստոս ավելի մեծ իշխանություն է տալու եւ ասելու. «Ապրե՛ս, բարի՛ ծառայ, քանի որ այդ փոքրիկ բանի մէջ հաւատարիմ եղար, քեզ տասը քաղաքների վրայ կառավարիչ եմ նշանակում» (Ղկ 19:17): Այդ իշխանությունը թագավորական փառքն էր, որ խոստացավ Իր աշակերտներին (տե՛ս Մտ 19-28 եւ 25-31: Հմմտ.՝ Հտ 3-21): Դա ուժեղ իշխանություն է, որի խորհրդանիշն է «երկաթյա մական»ը (հմմտ.՝ Սղ 2:8-9 [LXX]): Քրիստոս այն համեմատում է Հորից Իր ստացած իշխանության հետ: Այս համեմատությունն աղանդամիտ մարդիկ սխալ են մեկնաբանում, սակայն այստեղ «ստացա» բայը չի նշանակում, թե Քրիստոս այդ իշխանությունը նախապես չուներ:

Պարզ է, որ Քրիստոս խոսում է ոչ թե Իր աստվածային ծագման կամ նախագոյության մասին, թե Հորից ստացավ մի բան, որ նախապես չուներ, այլ խոսում է Իր մարդեղության մասին, երբ մեզ ներկայացավ Երկրի վրա՝ Իր աստվածային փառքից կամավորապես մերկացած վիճակով եւ Հորն ամբողջական հնազանդությամբ (հմմտ.՝ Փլպ 2:7-8), թեպետ Իր աստվածային էության մեջ հավիտենապես եւ միշտ ամբողջական փառք ուներ (տե՛ս Հհ 17:5)

Անշուշտ չենք կարող մոռանալ, որ նույնիսկ Երկրի վրա Քրիստոս մի շարք առիթներով ցույց տվեց Իր աստվածային բացարձակ իշ-

խանությունը (տե՛ս Մտ 11:27, 28:18, Մր 2:10, Հհ 3:35, 5:22, 10:18, 13:3, 17:2), ինչպես Նոր Կտակարանն է շեշտում՝ ամենուրեք (հմմտ.՝ Գրծ 2:36, Հռ 14:9, Ա Կր 15:25-27, Եփ 1:1-22, Փլպ 2:9-10, Եբր 1:2):

«Ես նրան եմ տալու առաւօտեան աստղը» (հմր 28): Այս «առավոտյան աստղը» նույն Ինքը Քրիստոս է (տե՛ս Հտ 22:16), որ Իրեն տալու է հաղթողին՝ իբրեւ գերագույն նվեր: Սակայն գոյություն ունի երկրորդ ըմբռնում եւս: «Առավոտյան աստղը» կարող է լինել ակնարկություն Սատանային, որ Աստվածաշնչում հայտնի է նաեւ Արուսյակ (= առավոտյան աստղ) անունով (տե՛ս Ես 14:12): Նույն անվան այս ամբողջապես ներհակ իմաստով բացատրությունը մեզ չպետք է զարմացնի, որովհետեւ մի շարք օրինակներ կան, որոնցում տեսնում ենք, թե Սատանան ներկայանում է Քրիստոսին տրված անուններով: Այսպես, երկրորդ օրինակն է «Առյուծ» անվանումը, որը թե՛ Քրիստոսին է տրվել՝ որպես տիտղոս (տե՛ս Հտ 5:5: Հմմտ.՝ Ծն 49:8-10 եւ այլն), եւ թե՛ Սատանային (հմմտ.՝ Ա Պտ 5:8):

Անշուշտ հիշում ենք, թե ինչ է ասում Պողոս առաքյալը սուտ առաքյալների վերաբերյալ. «Սատանան ինքն էլ է ներկայանում լուսաւոր հրեշտակի կերպարանքով» (Բ Կր 11:14): Եվ սա մեզ ցույց է տալիս նրա նկարագիրն ու ստի հայր լինելը (Հհ 8:44): Ստերի միջոցով նա փորձում է Քրիստոսի կեղծ նմանությունն իր վրա վերցնել՝ ճշմարիտ հավատացյալներին մոլորեցնելու համար (տե՛ս նաեւ Հտ 6:2-րդ եւ 13:11-րդ համարների բացատրությունները):

Այս երկրորդ բացատրությունը որդեգրելու պարագայում Քրիստոսի խոստումն ընկալվում է որպես կատարյալ վստահություն կամ ապահովություն, որը տրվում է հավատացյալներին: Ըստ այդմ՝ նրանք չպետք է սարսափեն Սատանայից, որին Քրիստոս հաղթեց նրանց փոխարեն: Նա մեզ մասնակից է դարձնում Իր հաղթական երթին՝ վստահեցնելով, որ եթե ապրենք հավատքի իմաստությամբ, բարի գործերով հարստանանք եւ չար գործերից հեռու մնալով՝ անմեղ լինենք, ապա Աստված շուտով մեր ոտքերի տակ կխորտակի Սատանային (Հռ 16:20):

Գ ԳԼՈՒԽ

ՆԱՄԱԿ ՍԱՐԴԻԿԵԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ (3:1-6)

Սարդիկեն Լիդիայի նահանգի գեղեցիկ մայրաքաղաքն էր, որ քրիստոնեության առաջին դարասկզբում՝ 17 թվականին, ավերվեց երկրաշարժից, սակայն կարճ ժամանակամիջոցում շատ արագ վերակառուցվեց: Վաճառականական մեծ ճանապարհի վրա գտնվող հարուստ քաղաք էր, ուներ թատրոն ու կրկես, ինչպես նաեւ Դեմետր չաստվածուհուն նվիրված տաճար՝ պահպանված Ք. ա. 6-րդ դարից: Բնակիչները հայտնի էին իրենց անառակությամբ: Այժմ քաղաքի ավերակների վրա մի գյուղ կա՝ Սարդ-Մուսթաֆա անունով:

«Այսպէս է ասում նա, ով ունի Աստուծոյ եօթ հոգիները եւ եօթ աստղերը» (հմր 1: Տե՛ս 1:4-րդ եւ 1:16-րդ համարները եւ դրանց բացատրությունը): Այս տիտղոսը շատ կարեւոր ու խոսուն է Քրիստոսի համար:

2-րդ գլխի 7-րդ համարում մատնանշեցինք, որ Սուրբ Հոգին շատ հատկանշանականորեն համարվում է նաեւ «Քրիստոսի Հոգին» (Հռ 8:9, Փլպ 1:19, Ա Պտ 1:10-11): Նոր Կտակարանում՝ այլ տեղերում Սուրբ Հոգին կոչվում է նաեւ «Որդու Հոգին» (Գղ 4:6) կամ «Հիսուսի Հոգին» (Գրծ 16:7), կամ «Հիսուս Քրիստոսի Հոգին» (Փլպ 1:19) կամ «Տիրոջ Հոգին» (Գրծ 5:9, Բ Կր 3:17-18: Հմմտ.՝ Դտ 3:10, 6:34, 11:29, Առ 6:16, Ես 11:2, 34:16, 63:14, Եզկ 11:5, Մք 3:8 եւ այլն), որոնք բոլորն էլ նույն բանն են արտահայտում:

Արդ, մենք գիտենք, որ Աստվածաշունչն առհասարակ Սուրբ Հոգին համարում է «Աստծո Հոգի» (տե՛ս, օրինակ, Ծն 1:2, Ելք 31:3, Թվ 24:2, Հոբ 27:3, 33:4 եւ այլն, Մտ 3:16, 12:28, Հռ 8:9 եւ 14, Ա Կր 2:10-14 եւ այլն) կամ «Հոր Հոգի» (Մտ 10:20):

Ինչ են մատնացույց անում այս բոլորը:

Այս բացատրությունները ցույց են տալիս, թե Սուրբ Հոգին ոչ մի-

այն Հայր Աստծո Հոգին է, այլ նաեւ Որդու, այսինքն՝ Քրիստոսի Հոգին, եւ ներկայանում է Հորից ու Որդուց անբաժան գործունեության կատարյալ նույնությամբ, որն ինքնին ցույց է տալիս Նրանց էության նույնությունը եւ փոխադարձ կապը, ավելի ճիշտ՝ փոխադարձ պատկանելությունը:

Այդ ամենը մեզ անառարկելիորեն ասում է, որ Որդին եւ Սուրբ Հոգին Հոր հետ միեւնույն աստվածությունն են, եւ որ Նրա աստվածային բնության մեջ Սուրբ Հոգին անբաժան է Որդուց: Այս սերտ, բնութենական միությունն է, որ առաջին հերթին պատկերավոր ձեւով արտահայտվում է Քրիստոսի այս տիտղոսի առաջին բաժնի մեջ:

Երկրորդ՝ Եկեղեցին Աստծո ծնունդն ու Աստծո տաճարն է եւ Սուրբ Հոգու ներգործության վայրը: Այնտեղ է գործում Սուրբ Հոգին՝ պարգեւելով Իր շնորհներն իրենց ամբողջության մեջ, իսկ Սուրբ Հոգու բաշխումը կամ պարգեւումը Քրիստոսի ձեռքում է, ինչպես եւ Քրիստոսի ձեռքում են բոլոր եկեղեցիները:

Տիտղոսի երկրորդ բաժինը «յոթ հրեշտակներ» բացատրությամբ ակնարկում է յոթ եկեղեցիների առաջնորդներին եւ մեկ անգամ եւս արտահայտում այն, ինչ ասացինք արդեն, թե Քրիստոս Ինքն Իր Եկեղեցուն ներկայանում է որպես նրա Քահանայապետ, Թագավոր եւ Դատավոր: Նա եկեղեցիների բացարձակ Տերն է, ունի իշխանություն՝ դրանք հաստատելու կամ իրենց տեղից շարժելու, այսինքն՝ պահելու կամ ջնջելու:

Վերոհիշյալ տիտղոսը որոշապես առնչվում է նամակի բովանդակությանը, որը շատ խիստ հանդիմանությամբ եւ ազդարարությամբ ներկայացվում է Սարդիկեի եկեղեցուն: Այս եկեղեցին իր հավատի մեջ մեռել է, քանի որ պարպվել է Հայր Աստծո եւ Քրիստոսի Սուրբ Հոգուց: Սուրբ Հոգին Ինքն է Եկեղեցու կյանքն ու կենդանությունը, իսկ Նրա բացակայությունը մահ է ու մեռելություն, այսինքն՝ այն վիճակը, որի մեջ է Սարդիկեի եկեղեցին, եւ եթե նա չապաշխարի, ապա անակնկալ կգա Քրիստոսը, որպեսզի նրա ճրագարանը նույնպես տեղից շարժի:

«Գիտեմ քո գործերը եւ գիտեմ, որ միայն անունով ես ողջ, բայց իրականում մեռած ես» (հմր 1): Աստված գիտի մեր բոլոր գործերը: Քրիստոս լավագույնս է ճանաչում եկեղեցիները եւ նրանց գործերը, որոնք կարող են լինել դրական ու գովելի կամ ժխտական ու դատապարտելի: Սարդիկեի եկեղեցուն ուղղված գովասանք չկա, այլ միայն դժգոհություն է. «… Միայն անունով ես ողջ»: Կրում է Քրիստոսի անունը, աշխարհին ներկայանում է որպես Քրիստոսի հետեւորդ եւ Նրանով նոր կյանք ու կենդանութիւն ստացած, սակայն միայն արտաքնապես է այդպես, իրականում մեռած է:

Ինչ է մեռելությունը, եթե ոչ հավատքի արտահայտությունը եղող գործերի պակասը: «… Ինչպէս որ մարմինն է մեռած առանց հոգու, այնպէս էլ հաւատն է մեռած՝ առանց գործերի» (Հկ 2:26): Քրիստոսի հանդեպ հավատքը մեռած է, քանի դեռ համապատասխան գործերով չի արտահայտվում: Հավատքի կենդանության նշանը գործերն են:

«Արթո՛ւն եղիր եւ զօրացրո՛ւ քո մնացած անդամները՝ նախքան նրանց մահանալը» (հմր 2): Առաջին ընդհանուր դժգոհությունից հետո այժմ խոսքը մասնավորեցնում է՝ ասելու համար, թե «մեռած» մեծամասնության կողքին կա դեռ հավատքով կենդանի փոքրամասնություն, որ նույն մեռելության մեջ կարող է սուզվել, եթե եկեղեցու առաջնորդը չարթնանա եւ հոգեւոր արթնության ճիգ չգործադրի:

«… Որովհետեւ տեսնում եմ, որ գործերը կատարեալ չեն Աստուծոյ աչքին» (հմր 2): Եկեղեցին հավատքի այն համայնքն է, որն առաջին հերթին Աստծո կոչի եւ Նրա Օրենքի, պատգամների ու խոստումների ունկնդիրն է: Լսելուն հաջորդում է երկրորդ քայլը, որ ընդունելի է: Իսրայելը լսեց, բայց չհավատաց (հմմտ.՝ Հռ 10:19-21): Եկեղեցին լսեց եւ հավատաց, այսինքն՝ ընդունեց: Հավատաց եւ ընդունեց մասնավորաբար Քրիստոսի խոսքերը, պատվիրաններն ու խոստումները, որոնք իրեն բանավոր փոխանցվեցին կամ ավանդվեցին: Պողոս առաքյալը դրանք կոչում է «ավանդ» (հմմտ.՝ Ա Տմ 6:20, Բ Տմ 1:14): Եկեղեցին այդ ավանդը, այսինքն՝ հավատքի ճշմարտություններն ստացավ եւ ամուր պահեց ու պահպանեց՝ մինչեւ գրի առնվելը եւ նույնիսկ դրանից հետո, որովհետեւ ամեն ինչ գրի չառնվեց: Շատ

բան մնաց բանավոր եւ նպաստեց եկեղեցական ավանդության կազմավորմանը, ինչը ժառանգեցին առաքյալները:

Եկեղեցին պարտավոր է պահպանել իրեն տրված ավանդը, ինչպես նույն պարտավորությունն ունի յուրաքանչյուր քրիստոնյա: Պահել չի նշանակում ավանդը դնել թանգարանում կամ Հիսուսի քանքարների առակի անպիտան ու ծույլ ծառայի նման՝ ծրարել եւ թաղել հողի մեջ (Մտ 25:24-25): Այլ խոսքով, չի նշանակում բարեխիղճ պահպանել ավանդը՝ առանց կյանքին միախառնելու, այլ նշանակում է պահ տալ մեր մտքի ու սրտի մեջ եւ նրանով ղեկավարվել ու առաջնորդվել:

Կյանքի չվերածված պատվիրանները մեռած են, անիմաստ եւ անօգուտ, մինչդեռ կյանքի վերածվելու դեպքում դառնում են հավատքի կենսունակություն եւ կյանքի իմաստալից տնտեսություն՝ դրված Աստծո եւ մարդկանց ծառայության տակ, իսկ այդպիսի կյանքը դեպի Աստված դարձած կյանքն է:

Արդ, ի՞նչ է «ապաշխարություն»ը, եթե ոչ դեպի Աստված վերադարձած նույն կյանքը, չարից հրաժարումը եւ ամբողջությամբ բարուն հետեւելը Քրիստոսի անապական արյամբ գնված, վերանորոգված ու սրբված, Հայր Աստծուն ընծայված, Սուրբ Հոգու առաջնորդության տակ դրված եւ մնայուն հոգեւոր արթնությամբ հատկանշված կյանքը: Այդպիսին էր Սարդիկեի եկեղեցին, երբ սկսեց քայլել Քրիստոսով. այն ժամանակ հավատարիմ էր իր լսած Ավետարանին եւ փարված հոգեւորին, իր ընդունած ճշմարիտ ավանդին: Սակայն այժմ եկեղեցին արդեն մեռելության եզրին է, եթե ամբողջապես հետ չդառնա մահվան ճամփից, դեպի ուր առաջնորդում է աշխարհն իր հրապույրներով եւ հրամցրած թմրության գինիով:

«Յիշի՛ր, ինչ որ լսեցիր եւ ընդունեցիր. պահի՛ր դրանք եւ ապաշխարի՛ր: Եթէ արթուն չմնաս, կգամ գողի նման, եւ դու չես իմանայ, թէ որ ժամին կլինի Իմ գալուստը քեզ մօտ» (հմր 3): Սարդիկեն կորցրել է արթնությունը հոգեւոր կյանքում, ուստի Քրիստոս ազդարարում է եւ հիշեցնում թե՛ Աստծո քաղցրությունը եւ թե՛ խստությունը, ինչը Պողոս առաքյալն ասելու էր ուրիշ բառերով. «Տե՛ս, թէ Աստուած

որքա՜ն բարի է եւ միաժամանակ՝ խիստ: Խիստ է հաւատի մէջ կործանուածների հանդէպ եւ բարի՝ քո հանդէպ, պայմանով, որ շարունակես արժանի մնալ Նրա բարութեան» (Հռ 11:22):

Իսկ «Նրա բարութեանն արժանի լինել» նշանակում է միշտ արթուն մնալ եւ Աստծո կամքին համաձայն՝ ապրել արդարության, սրբության, սիրո, նվիրումի եւ ծառայասիրության կյանքով: Միայն Արարչի հանդեպ բնական հարգանքն ու Փրկչի հանդեպ հորդաբուխ երախտագիտությունը կարող են այդպիսի կյանք ենթադրել, մինչդեռ ապականված, ինքնակենտրոն ու անտարբեր կյանքն արհամարհանք է Աստծո հանդեպ: Ուստի, չպետք է քնով տարվել, այլ անհրաժեշտ է արթուն եւ պատրաստ հսկել, որովհետեւ Տիրոջ գալուստը լինելու է անակնկալ, ինչպես գողն է գալիս. ո՛չ օրը գիտենք եւ ո՛չ էլ ժամը (Մտ 24:42-43, Ա Թս 5:2, Բ Պտ 3:10):

Անշուշտ, այս անսպասելի գալուստը միայն երկրորդ գալուստը չէ: Ակնարկը կարող է վերաբերել նաեւ մահվան, որ հանկարծակի վրա է հասնում մարդուն որեւէ պահի եւ նրան անակնկալի բերում՝ մեզանից վերցնելով մեզ տրված պատեհության ժամանակը: Հետեւաբար, եթե պատրաստված ենք գալստյանը, այլ խոսքով՝ եթե պահել ենք մեզ տրված հավատի ու պատվիրանների ավանդը եւ արդյունավորել մեր կյանքում, ապա գալուստը մեզ միայն հանգիստ կարող է խոստանալ եւ մխիթարություն բերել՝ մեր ներկա տաժանալից կյանքից հետո, իսկ եթե անպատրաստ դիմավորենք այդ պահը, ապա կհայտնվենք առավել մեծ դատաստանի առաջ:

«Բայց Սարդիկէում կան քիչ թուով մարդիկ, որոնք չկեղտոտեցին իրենց հագուստները. նրանք կշրջեն Ինձ հետ սպիտակ հագուստներով, որովհետեւ արժանի են» (հմր 4): Բարեբախտաբար, կան նաեւ սակավաթիվ հավատացյալներ, ովքեր արթուն են մնացել եւ պահել են իրենց անձերի մաքրությունը. նրանք «չկեղտոտեցին իրենց հագուստները», իսկ հագուստը նկարագիր է խորհրդանշում:

Նկարագրի այս անարատությունը ճշմարիտ հավատքի եւ անկեղծ բարեպաշտության ցուցանիշն է. «Հայր Աստուծոյ համար անկեղծ եւ իսկական բարեպաշտութիւնը կարօտի մէջ եղող որբերին եւ

այրիներին այցելելն ու նրանց օգնելն է եւ աշխարհում ապրելով հանդերձ՝ ինքն իրեն անարատ պահելը» (Հկ 1:27):

Նրանք, ովքեր հալածանքների կամ աշխարհից եկող ամեն տեսակի նեղությունների ենթարկվելով հանդերձ՝ նկարագրով մաքուր մնացին, «սպիտակ հագուստ» են ունենալու, որ նրանց արդարության եւ սրբության, ցուցաբերած առաքինությունների եւ փրկված լինելու վկայությունն է (հմմտ.՝ Հտ 3:18, 4:4, 6:11, 7:9 եւ 13, 19:14): Նրանք վայելելու են հավիտյան Քրիստոսի հետ լինելու եւ Նրա հետ շրջելու բացառիկ առանձնաշնորհը (տես Հտ 7:13-17, 14:1-5):

«Ով որ յաղթի, այսպէս սպիտակ կհագնի» (հմր 5): Չարի եւ չարիքների դեմ մղվող պայքարում հավատքը պահող եւ համբերություն ու տոկուն առաքինություն ցուցաբերող անձինք կստանան «արդարության պսակը» (հմմտ.՝ Բ Տմ 4:8), որի խորհրդանիշն է ճերմակ հագուստը, սակայն ճերմակը միայն արդարության, սրբության ու փրկության խորհրդանիշը չէ, այլ նաեւ՝ փառավորության կամ փառքի: Քրիստոսով հաղթանակողը հաղորդակից կդառնա Աստծո փառքին եւ Երկնքի Արքայության մեջ կփայլի ինչպես արեգակը (Մտ 13:43):

Առաջին խոստմանն անմիջապես հաջորդում է երկրորդը. «… Եւ նրա անունը չեմ ջնջի կեանքի գրքից» (հմր 5): Այս բացատրությունն ըստ էության նշանակում է, որ հաղթողը հավիտենական կյանք է ունենալու, քանզի «կյանքի գիրք» հասկացությունն անպայմանորեն տոմարական չէ, որի մեջ բառացիորեն արձանագրվում են մեր անունները. սա պարզապես հիշեցնում է, որ մենք պետք է դրոշմված լինենք Աստծո հիշողության մեջ:

Աստված չի մոռանում յուրայիններին եւ երբեք չի մոռանալու նրանց, ովքեր Իրեն հավատարիմ են մնացել եւ այդ հավատարմության համար հանձն են առել ամեն տեսակի նեղություն այս կյանքում: Աստված անպայման պահելու եւ վարձատրելու է նրանց, եւ նրանք անբաժան են լինելու Աստծուց: Բարի Հովիվն է, որ խոսում է՝ ասելու համար, թե Ինքը ճանաչում է յուրայիններին, եւ նրանք ճանաչում են Իրեն, եւ հավիտենական կյանք է տալիս նրանց (տես Հհ 10:14):

Երկրորդ խոստմանը հաջորդում է երրորդը. «… Եւ ես Իմ Հօր ու Նրա հրեշտակների առաջ Ինձ հետեւորդ կդաւանեմ նրան» (հմր 5): Այս խոսքերը գալիս են առանձնաշնորհման վրա ավելացնելու նոր առանձնաշնորհ, որ Հովհաննես առաքյալի ժամանակակից քրիստոնյաների, ինչպես նաեւ բոլոր դարերի հավատացյալների համար մեծագույն մխիթարություն ու քաջալերանք են: Սա այն նույն խոստման կրկնությունն է, որ Քրիստոս տվեց Իր աշակերտներին եւ բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքով դավանում են Նրան. «Ով որ մարդկանց առջեւ դաւանի, թէ հետեւում է Ինձ, Ես էլ նրա՛ն Ինձ հետեւորդ պիտի դաւանեմ Հօրս առջեւ, որ Երկնքում է» (Մտ 10:32: Հմմտ.՝ Ղկ 9:26):

Այս դավանությունը, որ, այլ խոսքով, Քրիստոսի վկայությունն է մեր մասին, Իրեն հավատացողների մասին, մեր առջեւ բացում է Վերջին Դատաստանի պատկերը, սակայն ամբողջությամբ հեռու նրա դատապարտող նկարագրից: Ընդհակառակը, նույնիսկ Դատաստանի պատկերը հաճելի եւ գեղեցիկ է ներկայանում մեզ՝ որպես գերագույն երանության, գերագույն երջանկության եւ ուրախության այն պահը, երբ Աստվածորդին Ինքը Երկրի վրա Իրեն վկայություն տվողների մասին բարի վկայություն կտա:

Եվ եթե մարդկանց գովասանքն ու դրվատանքը, այսինքն՝ մարդկանց վկայությունները մեզ համար կարեւոր են, եւ կյանքում ամենքս էլ առավել կամ նվազ չափով փնտրում ենք այդ ամենը (որքան էլ երբեմն փախչենք դրանցից), որովհետեւ դրանք մեզ համար գոհունակության, մխիթարության, սրտապնդման աղբյուր են, ինչպիսի՜ գերազանց մխիթարություն եւ երանություն պիտի լինեն Աստծո բերանից հնչած դրվատանքն ու վկայությունը, որոնց իբրեւ կնիք՝ Քրիստոս ասելու է. «Եկէ՛ք, Իմ Հօր օրհնեալներ, եւ ժառանգեցէ՛ք այն արքայութիւնը, որ պատրաստուած է ձեզ համար աշխարհի սկզբից ի վեր» (Մտ 25:34):

ՆԱՄԱԿ ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ (3:7-13)

«Ֆիլադելֆիա» նշանակում է «եղբայրասիրություն». Փոքր Ասիայի Լիդիայի նահանգի քաղաքներից էր, հիմնադրել է Պերգամոնի Ատտալոս Բ Ֆիլադելֆոս («եղբայրասեր») թագավորը եւ կոչվել նրա անունով: Հելլենիստական մշակույթի կարեւոր կենտրոն էր: Ք. ա. 133 թվականից սկսած՝ քաղաքը Հռոմեական կայսրության մաս էր: Այսօր կոչվում է Ալա Շեհիր:

Քրիստոս ամենագեղեցիկ վկայությունն այս եկեղեցուն է տալիս. ոչ մի դիտողություն, դժգոհություն, միայն գովասանք, միայն դրվատանք ունի:

«Այսպէս է ասում Սուրբը, Ճշմարիտը, Նա, ով ունի Դաւթի բանալին. երբ բացի, չկայ մէկը, որ փակի այն, եւ երբ փակի, չկայ մէկը, որ բացի այն» (հմր 7):

Քրիստոսի երեք նոր տիտղոսներն են այստեղ, որոնք շատ կարեւոր են, քանի որ առաջին երկուսը Հին Կտակարանում միշտ տրվել են Հայր Աստծուն, ինչը մատնացույց է անում Հոր եւ Որդու անունների նույնությունը: Այսպես՝

1. **«Սուրբը»:** Սա պարզապես Աստծուն տրված ստորոգելիներից մեկը չէ, այլ Աստծո էությունը, Աստծո բուն որպիսությունը: Աստված պարզապես Սուրբ Աստված չէ (հմմտ.՝ Ղտ 10:3, 11:44-45, 19:2, 20:7, 21:8, Ա Թգ 2:2, Սղ 22:3, 99:5 եւ 9, Ես 5:16, Եզ 20:41, Ա Պտ 1-16) կամ պարզապես սուրբ անուն ունեցող չէ (հմմտ.՝ Ղտ 20:3, 22:32, Ա Մն 16:10 եւ 35, Սղ 33:21, 99:3, 103:1, 105:3, 106:47, 145:21, Եզկ 36:23), այլ՝ Սուրբ՝ բացարձակ իմաստով (տես Սղ 78:41, Ես 1:4, 5:19 եւ 24, 10:17, 29:19, 30:11-12, 40:25, 41:16, 49:7, 54:5, 55:5, Եր 51:5, Ամբ 3:3, Ա Պտ 1:15): Եսայու նշանավոր տեսիլքի մեջ սերովբեները երեք անգամ «Սուրբ» են կոչում Տիրոջը (Ես 6:3): Նույն այս անունը կամ տիտղոսը Նոր Կտակարանում տրվում է Քրիստոսին (տես Մր 1:24, Ղկ 1:35: Գրծ 3:14: Հմմտ.՝ Գրծ 2:27, 13:35 (Սղ 16:10)): Եսայի մարգարեի գրքում պատկերված երեքսրբյանը նույնպես վերագրվում

է Քրիստոսին (տես Հտ 4:8-րդ համարի բացատրությունը): Ուստի Քրիստոս Ինքն է Սուրբը, «Սուրբը եւ արդարը», ինչպես կասեր Պետրոս առաքյալը (Գրծ 3:14), «Սուրբը եւ ճշմարիտը», ինչպես Ինքն է բնութագրում Իրեն (հմմտ.՝ Հտ 6:10):

2. **«Ճշմարիտը»:** Այս մեկը եւս Հին Կտակարանում Աստծուն տրված անվանում կամ տիտղոս է: Ճշմարիտ են ոչ միայն Նրա խորհուրդները, խոսքերը, պատվիրանները, հայտնությունները, դատաստանները, ճամփաներն ու գործերը (հմմտ.՝ Բ Թգ 7:28, Գ Թգ 17:24, Սղ 19:7, 119:86, Ես 25:1, 45:19, Ովս 5:9: Տես նաեւ Հտ 15:3, 16:7, 19:2), այլեւ՝ Ինքն է ճշմարիտ (Բ Մն 15:3, Հհ 3:33, 7:28, 8:26, 17:3, Ա Թս 1:9), Բացարձակ Ճշմարիտն է (հմմտ.՝ Ես 65:16):

Նոր Կտակարանում Քրիստոսի մասին նույն բաներն ենք գտնում. Նա ոչ միայն Ճշմարիտ է (Մտ 22:16), Ճշմարիտ Լույսը (Հհ 19), Ճշմարիտ Երկնավոր Հացը (Հհ 6:32), Ճշմարիտ Որթատունկը (Հհ 15:1) եւ Ճշմարտությունը (Հհ 14:6), այլ նաեւ, ինչպես Հայտնության գիրքն է մեզ հայտնում, Ճշմարիտ Վկան (Հտ 3:14, 19:11) եւ մանավանդ՝ Սուրբ եւ Ճշմարիտ Տերը (6:10): Այդ ամենն արդեն ցույց է տալիս, որ Քրիստոս Ինքն էլ, ինչպես Հայրը, Բացարձակ Ճշմարիտն է, ինչպես ասվում է այստեղ: Դա մեկ անգամ եւս ուժգնորեն շեշտում է Հոր եւ Որդու նույնությունը, համահավասարությունն ու համապատվությունը աստվածության մեջ:

Այս տիտղոսի առիթով հատկանշական է Հովհաննես առաքյալի վկայությունը՝ նախ առաջին նամակում, որի ավարտին ասում է. «Եւ գիտենք, որ Աստուծոյ Որդին եկաւ ու բացեց մեր մտքերը, որպէսզի ճանաչենք ճշմարիտ Աստծուն: Մենք միացած ենք ճշմարիտ Աստծուն եւ Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Նա՛ է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը» (Ա Հհ 5:20): Հիսուս Քրիստոսի մասին պարզ ու հստակ ասվում է. «Նա՛ է ճշմարիտ Աստուածը»: Եվ Հայրն է ճշմարիտ Աստված, եւ Որդին է ճշմարիտ Աստված այնպես, ինչպես Նիկիական հավատամքն է ասում. «Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ»՝ Ճշմարիտ Աստծուց ծնված Ճշմարիտ Աստված է:

3. **«Նա, ով ունի Դաւթի բանալին»:** Բանալին լիազոր իշխանության եւ իրավունքի նշան է, իսկ «երբ բացի, չկայ մէկը, որ փակի այն, եւ երբ փակի, չկայ մէկը, որ բացի այն» խոսքն առավել եւս ընդգծում է այդ իշխանության բացարձակությունը:

Նախ՝ այս պատկերով Քրիստոս հիշեցնում է Հորից ստացած Իր բացարձակ իշխանությունը (տես Մտ 28:18), որ միայն Երկրի վրա եւ երկրավոր հասկացությամբ իշխանություն չէ, այլ բացարձակ իշխանությունն է ամբողջ արարչության վրա, որի ստեղծիչն է Նա (հմմտ.՝ Հհ 1:3 եւ 10, Եփ 3:9, Կղ 1:6, Եբր 1:2, Հտ 4:11), եւ իշխանությունը կյանքի եւ մահվան վրա, որովհետեւ, ինչպես տեսանք, Ինքն Իրեն ներկայացնում էր նաեւ իբրեւ Նա, ով Իր ձեռքում ունի «Մահուան ու դժոխքի բանալիները» (տես 1:18):

Հունարեն մի շարք ձեռագրեր «Դավթի բանալին» բացատրության փոխարեն ունեն «Դժոխքի բանալին» տարընթերցվածը, իսկ հայերեն որոշ ձեռագրերում հանդիպում է նաեւ «Դրախտի բանալին» տարընթերցվածը: Քրիստոս, Իր Սուրբ Հոգին մեզ վերստին պարգեւելով, լայն բացեց շնորհների, այսինքն՝ Սուրբ Հոգու պարգեւների դուռը, մեր առջեւ բացեց հավիտենական կյանքի դուռը եւ Ադամի մեղանչումով մեր դիմաց փակված դրախտի դուռը:

Երկրորդ՝ բանալին փակելու եւ բացելու իշխանությունն է խորհրդանշում: Աստվածաշնչում եւ Աստծո խոսքի առիթով բանալին նշանակում է ժամանակավորապես փակելու, «կնքելու», փակ պահելու կամ հայտնելու, մեկնելու, բացատրելու իրավունք կամ իշխանություն, որի բացարձակ Տերը Քրիստոս Ինքն է (հմմտ.՝ 5:1 եւ այդ համարի բացատրությունը): Նա է տալիս այդ իրավունքն Իր Եկեղեցուն: Հատկանշական է, որ Իր երկրավոր առաքելության ընթացքում Քրիստոս հաճախ ուղղակի եւ անուղղակի կատարեց Հին Կտակարանի, Օրենքի, մարգարեությունների եւ սաղմոսների մեկնությունը: Իսկ Հարությունից հետո Վերնատանը Քրիստոս մեկ անգամ եւս առաքյալներին ցույց տվեց Իր մասին գրված մարգարեությունները, տվեց դրանց մեկնությունը եւ «յետոյ բացեց նրանց մտքերը, որպէսզի հասկանան Սուրբ գրքերը» (Ղկ 24-25): Այդ առումով, Եկեղեցու

համար Հին Կտակարանի բանալին Քրիստոսն է, եւ ով չի ընդունել այս ճշմարտությունը, չի կարող հասկանալ Հին Կտակարանը (տես Բ Կր 3:14-17: Հմմտ.՝ Ա Կր 2:14):

Իսկ Դավթի բանալին (հմմտ.՝ Ես 22:22) Դավթի թագավորության եւ այդ թագավորության վրա բացարձակ իշխանության խորհրդանիշ է: Դավթի թագավորությունը պատմության մեջ օրինակ էր գալիք ճշմարիտ թագավորության, որը դարձյալ Քրիստոսինն է:

«Գիտեմ քո գործերը: Ահա քո առաջ բանալ տուեցի դուռը, որ ոչ ոք չի կարողանալու փակել» (հմր 8): Քրիստոս չի թվարկում Ֆիլադելֆիայի եկեղեցու գործերը, սակայն մեկ այլ ճանապարհով ցույց է տալիս, որ այդ գործերը միմիայն գովելի են: Անցյալի գործերից գոհ լինելու համար է, որ ասում է. «Քո առաջ բանալ տուեցի դուռը...»: «Դուռ բանալ» ոճական դարձվածքը նշանակում է պատեհություն ընծայել, առիթ տալ, հաջողություն տալ (հմմտ.՝ Գրծ 14:27, Ա Կր 16:9, Բ Կր 2:12, Կղ 4:3): Այս եկեղեցու հավատարմության փոխարեն, Տերը հաջողության դուռը լայնորեն բացելու է նրա առջեւ, եւ որեւէ մեկը չի կարողանալու արգելք լինել Նրան: Այս հաջողությունը ներկայացվում է 9-րդ համարում:

«Գիտեմ, որ մի քիչ զօրութիւն ունես. պահել ես Իմ խօսքերը եւ չես ուրացել Ինձ» (հմր 8): Ոմանք «մի քիչ զորություն» բացատրության մեջ փորձում են տեսնել եկեղեցու թվացյալ տկարությունը կամ փոքրությունը, այսինքն՝ քիչ հավատացյալներ ունենալը կամ հոգեւոր եռանդի կամ աշխուժության հարաբերական նվազումը, թեպետ, կարծեք, այս տվյալը երբեք մեղադրանքի ձեւով չի ներկայանում:

Սակայն, մյուս կողմից, ժամանակի կացության մեջ հալածանքների եւ նեղության ժամանակ մեծագույն առաքինությունը կամ առաքելությունը Քրիստոսի խոսքերը պահելն է, որ նշանակում է Նրա պատվիրանները պահած լինել եւ Քրիստոսի անունն ու հավատքը չուրանալ: Այդ պատճառով էլ Տերը հատուկ դեր է վերապահում Ֆիլադելֆիայի եկեղեցուն:

«Ահաւասիկ, քեզ եմ յանձնելու սատանայի հետեւորդներից մի շարք մարդկանց, որոնք իրենց հրեայ են համարում, բայց իրակա-

նութիւն չեն, նրանք ստում են» (հմր 9): Խոսքը բացահայտ հրեաների մասին է, ովքեր, ինչպես նախորդ գլխում եւս ասացինք, «Սատանայի հետեւորդներ» են կոչվել ոչ միայն որովհետեւ Քրիստոսին չեն ընդունում, այլ նաեւ իրենց ազգակից ու գրեթե հավատակից եղբայրներին Հռոմեական կայսրության դատավորների ու դահիճների ձեռքն են հանձնում անխղճորեն: Այլ խոսքով, ոչ միայն եղբայրասիրություն չեն դրսեւորում, այլեւ, ընդհակառակը, եղբայրատյացություն ունեն այնպես, ինչպես Կայենն ատեց իր եղբորը ու սպանեց նրան: Այդպիսին Աստծո որդի լինել չի կարող. նա անպայման Սատանայի որդի է եւ Սատանայի հետեւորդ (հմմտ.՝ Հհ 8:44): Այդպիսիներն իրենք իրենց հրեա են համարում, սակայն հրեա չեն, որովհետեւ իրականում հրեա նշանակում է ճշմարիտ հավատացյալ, մինչդեռ իրենք այդպիսին չեն, անունով են միայն Աստծուն հավատացողներ, բայց իրականում հավատացյալներ չեն (Հռ 2:28-29):

«Այնպէս պիտի անեմ, որ նրանք գան ու երկրպագեն քո ոտքերի առաջ եւ իմանան, որ Ես սիրեցի քեզ» (հմր 9): Այո՛, խոսքը բառացի երկրպագության մասին չէ կամ ամեն դեպքում՝ բնավ պաշտամունքային նշանակություն չունի, պարզապես նշանակում է, թե նրանք պիտի գան եւ հնազանդվեն Նրան. հավանաբար ցանկանում է ասել, թե կգա մի ժամանակ, երբ նրանք կանդրադառնան իրենց սխալին եւ դարձի կգան՝ դիմելով Եկեղեցուն:

Այդ ժամանակը հեռավորը կամ վախճանականը չէ, այլ՝ ներկան, որ սկսվում է Հովհաննես առաքյալի օրերից եւ շարունակվում Եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում: Դա վերաբերում է այն հրեաներին, ովքեր ճանաչում են Հիսուս Քրիստոսին՝ որպես Աստծու Օծյալ,Նրան ընդունում իբրեւ Փրկիչ ու Աստծո Որդի, եւ որդեգրելով ճշմարիտ հավատք՝ մուտք են գործում Եկեղեցի՝ հնազանդվելով Քրիստոսին:

Վերն ասացինք, որ ցուցաբերած հավատարմության համար Տերը Ֆիլադելֆիայի եկեղեցուն հատուկ դեր է վերապահում. թերեւս Ֆիլադելֆիայի եկեղեցին իր կեցվածքով ու վարքագծով պատճառ է դառնալու այդ հրեաների դարձին: Եթե այս դերը կապենք Ֆիլադելֆիայի եկեղեցու անվան եւ նրա ունեցած նշանակության հետ, ապա խորհրդանշական եւ մեծ ճշմարտություն կգտնենք, ինչպես նաեւ կունենանք յուրահատուկ մեկնություն:

Ասացինք, որ հունարենով «Ֆիլադելֆիա» նշանակում է եղբայրասիրություն: Եթե Քրիստոս այս եկեղեցուն ասում է, թե եկեղեցին պատճառ է դառնալու, որ Սատանայի հետեւորդներից շատերը հետ դառնան դեպի Քրիստոս, ապա մենք, անվան նշանակությանը հետեւելով, կարող ենք ասել, թե եղբայրասիրությունը աշխարհին տրված քրիստոնեական լավագույն վկայություններից է: Երբ Ավետարանի պատգամն աշխարհին տրվում է եղբայրասիրության միջոցով, ապա միշտ էլ պատճառ է դառնում գրավչության ու դարձի, որովհետեւ մարդիկ տեսնում են կյանքի՛ վերածված ճշմարտություն, որը ճշմարտության զորեղագույն վկայությունն է:

Պառակտված եւ կռվի մեջ եղող եկեղեցիներն ինչպե՞ս կարող են աշխարհին հրավեր հղել եւ ասել՝ ընդունեք Քրիստոսի ճշմարիտ հավատքը, որովհետեւ այ՛ս է ճշմարիտ հավատքը: Մարդիկ անմիջապես դիտողություն չե՞ն անի եւ չե՞ն ասի, թե ինչպիսի՞ն է այդ ճշմարիտ հավատքը, եթե դուք կռվում եք, Աստծո ինչպիսի՞ հավատացյալներ եք: Եթե դուք ձեզ համարում եք Աստծո որդիներ, եւ եթե Աստծո որդիները կռվում են, ուստի ավելի լավ է մենք Աստծո որդի չլինենք:

Մարդիկ, Հովհաննես առաքյալի բառերով ասած, չպիտի՞ պատասխանեն մեզ՝ ասելով. «Ով ասում է, թէ ինքը լոյսի մէջ է եւ ատում է իր եղբօրը, նա խաւարի մէջ է տակաւին», «Ով արդարութիւն չի գործում, Աստուծոյ որդին չէ. ով չի սիրում իր եղբօրը, նոյնպէս Աստուծոյ որդին չէ», «Այն մարդը, որ ասում է՝ «Ես սիրում եմ Աստծուն», բայց ատում է իր եղբօրը, ստախօս է: Ով չի սիրում իր եղբօրը, որին տեսնում է, ինչպէ՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսնում» (Ա Հհ 2:9, 3:10, 4:20):

Այո՛, հավատքի զորեղագույն վկայությունը կյանքի՛ վկայությունն է՝ դրսեւորված Սիրո միջոցով: Զուր չէ, որ Քրիստոս անդադար կրկնեց. «Սիրեցե՛ք միմյանց»: «Սիրեցե՛ք միմյանց» հրահանգը մնայուն կրկնում են նաեւ Նոր Կտակարանը եւ Առաքելական նամակնե-

որը, որովհետեւ Քրիստոս ասում էր. «Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով մարդիկ կիմանան, որ դուք Իմ աշակերտներն էք» (Հհ 13:35): Աստծո եւ Քրիստոսի մասին տրված լավագույն վկայությունը եղբայրասիրությունն է, եւ եղբայրասիրությունն է, որ բոլոր մյուս կրոնների եւ դրանց հետեւորդների առջեւ կարող է լայնորեն բացել հավատքի դուռը, որպեսզի նրանք գան եւ ճանաչեն Քրիստոսին ու Քրիստոսի մեջ պարփակված ճշմարտությունը:

Ֆիլադելֆիայի եկեղեցուն տրված դերը, անշուշտ, առանձնաշնորհ է, եւ այդ դերը լինելու է Քրիստոսի հատուկ սիրո արտահայտությունն այս եկեղեցու հանդեպ. «Նրանք պէտք է իմանան, որ Ես սիրեցի քեզ»: Որքան ավելի շատ ենք նվիրվում սիրո գործերին, Քրիստոս այնքան ավելի առատորեն է զեղում Իր սերը մեզ վրա եւ մեր կյանքում տալիս այդ սիրո վկայությունը: Սա նաեւ աստվածային խոստում է, որի քաղցր պտուղը վայելում են փորձվողները եւ իրենց կյանքում գործնականի վերածողները:

«Եւ որովհետեւ դու պահել ես Իմ խօսքը, որով համբերել սովորեցիր, Ես էլ քեզ կպահեմ այն նեղութեան ժամին, որ կգայ ամբողջ տիեզերքի վրայ՝ փորձութեան ենթարկելու Երկրի երեսին գտնուող բոլոր բնակիչներին» (հմր 10): Քրիստոսը երկրորդ խոստումն է տալիս, եւ այդ խոստումը վերաբերում է մի կարեւոր ժամանակի:

Իր երկրավոր առաքելության վերջին օրերին Քրիստոս շատ կարեւոր հայտնություններ կատարեց Երուսաղեմի կործանման, ինչպես նաեւ աշխարհի վախճանի եւ Իր երկրորդ գալստյան մասին: Այդ հայտնություններն իրենց ամբողջության մեջ կոչվում են Հայտնութենական Ճառ՝ խոսված Ձիթենյաց լեռան վրա, Իր աշակերտներից չորսի ներկայությամբ (տե՛ս Մտ 24, Մր 13, Ղկ 21): Այդ ճառի մեջ Քրիստոս Իր երկրորդ գալստյան անմիջապես կանխող ժամանակը որակեց «մեծ նեղության օրեր» կամ «մեծ նեղության ժամանակ», որը տարածվելու է ամբողջ աշխարհի վրա: Հայտնության գիրքը ներկայացնելու է այդ ժամանակը (տե՛ս 9:1-րդ համարից սկսած):

Քրիստոս Ֆիլադելֆիայի եկեղեցուն խոստանում է. «Ես քեզ կպահեմ նեղության ժամին, որ կգա ամբողջ տիեզերքի վրա»: Թեպետ

նեղությունը որեւէ պահի կարող է հասնել անհատին, համայնքին կամ ամբողջ աշխարհին, սակայն այստեղ հստակ է, որ խոսքը սովորական փորձության մասին չէ, այլ՝ արտակարգ ծանր փորձության, որը «տիեզերական» ծավալ է ունենալու:

«… Այնպիսի՜ մեծ նեղութեան օրեր պիտի գան, որոնց նմանն աշխարհի ստեղծագործութեան սկզբից մինչեւ այսօր չի պատահել եւ ոչ էլ պիտի պատահի» (Մտ 24:21): «Տիեզերք» բառն այստեղ նշանակում է ոչ թե մեր աշխարհից դուրս գտնվող տիեզերական մարմինների ամբողջությունը, այլ մեր աշխարհը՝ այն ժամանակվա հայտնի բոլոր երկրների ամբողջությունն ընդհանուր պատկերով, որը պարզապես նշանակում է ամբողջ Երկրագունդը:

Փորձության այդ ժամանակը գալու է՝ «փորձելու Երկրի երեսին գտնվող բոլոր բնակիչներին» բացատրությունը բառացիորեն չի վերաբերում աշխարհի բոլոր բնակիչներին, որոնց մեջ են, անշուշտ, նաեւ եկեղեցիները, այլ խոսքով՝ Քրիստոսի հավատացյալները կամ Աստծո ընտրյալները: Այդ բացատրությունն իր աննշան փոփոխության տարբերակներով հատուկ գործածվում է Հայտնության գրքում՝ Աստծուն ընդդիմացող չար մարդկությանը շեշտելու նպատակով (տե՛ս նաեւ 1:7, 6:10, 8:13, 13:8, 12 եւ 14, 17:2 եւ 8): Դա շատ կարեւոր է՝ իմանալու համար, թե այստեղ նկարագրված մեծ նեղությունն Աստծո ընտրյալներին փորձելու համար չի գալու, այլ՝ մեղքին եւ անօրինությանը ծառայողներին հարվածելու:

Եթե դա մի կողմից ճշմարտությունը հաստատելու կամ լուսաբանելու միտում ունի, ապա մյուս կողմից միտված է ապահովություն եւ մխիթարություն տալու ու քաջալերելու Քրիստոսին ապավինողներին, ովքեր իրենց Տիրոջ պահպանությամբ զերծ են մնալու այդ մեծ փորձության ժամանակ չար աշխարհի վրա գալիք սոսկալի հարվածներից: Սա երանական եւ խաղաղարար խոստում է Եկեղեցուն, մանավանդ՝ եղբայրասիրությամբ ողջ մնացող Եկեղեցուն:

«Ահա շուտով գալիս եմ. ամո՛ւր պահիր, ինչ որ ունես, որպէսզի ոչ ոք քո ձեռքից չառնի յաղթանակի պսակը» (հմր 11): Մենք աշխարհի մտածողությամբ եւ աշխարհի ժամանակով հաճախ ուշացած ենք

համարում այս երրորդ խոստումը՝ Տիրոջ գալուստը, բայց խոստացողն ասում է, թե պիտի չուշանա, այլ «շուտով» իրականանալու է այդ գալուստը, թեպետ նրա ժամն ու ժամանակը մեզանից գաղտնի են մնում Աստծո ամենաիմաստուն կամքով ու կարգադրությամբ:

Սակայն կարեւորն օրն ու ժամն իմանալը չէ, այլ այդ օրվան ու ժամին պատրաստ լինելը: Գողն ու թշնամին գալիս են անակնկալորեն: Նույն կերպ է գալիս նաեւ հոգիների գողն ու թշնամին՝ չարը՝ մեզ անպատրաստ վիճակով թակարդի մեջ բռնելու եւ կործանելու համար: Թույլ, անհոգ ու անպատրաստ վիճակը կարող են պատճառ դառնալ, որ հանկարծակի մեր ձեռքից վերցվեն առաքինությունների երկարամյա վաստակը եւ նրա վարձատրությունը՝ հաղթանակի պսակը: Ահա թե ինչո՞ւ է Եկեղեցուն ուղղվում զգուշության եւ զգաստության այս կոչը:

«Ով որ յաղթի, նրան կդարձնեմ Իմ Աստուծոյ տաճարի սիւներից մէկը, եւ նա այլեւս այնտեղից դուրս չի գայ: Նրա վրայ կգրեմ Իմ Աստուծոյ անունը, ինչպէս նաեւ Իմ Աստուծոյ քաղաքի անունը, այսինքն՝ Նոր Երուսաղէմի, որն իջնելու է Երկնքից՝ Իմ Աստուծոյ մօտից: Եւ նրա վրայ կգրեմ նաեւ Իմ նոր անունը» (հմր 12):

8-10-րդ համարների մեջ երեք խոստում տեսանք, իսկ այս միակ համարում ունենք հաղթանակողի չորս խոստում, ընդամենը յոթ խոստումներ կամ այլ բացատրությամբ՝ խոստումների ամբողջություն:

1. **«...Նրան կդարձնեմ Իմ Աստուծոյ տաճարի սիւներից մէկը, եւ նա այնտեղից դուրս չի գայ»:** Ամեն շենք սյուների վրա է կանգնում, եւ սյունն իր վրա է պահում շենքը: Այդ իմաստով՝ որեւէ սյուն շինության կարեւորագույն մասն է: Ասվածի փոխաբերական իմաստով եթե որեւէ մարդու համար ասում ենք, թե նա «մեր հաստատության կամ մեր կազմակերպության սյուներից է», ապա անմիջապես հասկանում ենք, որ նա շատ կարեւոր դեր կամ պաշտոն ունի այնտեղ, առանց նրա տվյալ հաստատությունն իր ներկա կազմակերպչական վիճակի, իր փայլուն, ծաղկուն վիճակի մեջ չէր լինի:

Այստեղ Քրիստոս Ֆիլադելֆիայի եկեղեցուն եւ այդ եկեղեցու յուրաքանչյուր հավատացյալին մատնացույց է անում իրենց դերի

կենսական կարեւորությունը Աստծո Ընդհանրական Եկեղեցու մեջ, մանավանդ որպես եղբայրասիրություն արտահայտող եկեղեցի: Այդ եղբայրասիրության վեմի կամ սյան վրա Քրիստոս բարձրացնելու է Իր շենքը: Աստծո տաճարը Քրիստոսի Եկեղեցին է, եւ Իր Եկեղեցու մեջ Քրիստոս այդ դերը տալիս կամ ընծայում է այս համայնքին:

Սակայն խոստումը միայն երկրավոր եւ ժամանակավոր չէ, այլ վերաբերում է նաեւ հավիտենական կյանքին: Ուստի, նշանակում է, որ հաղթողը մնայուն կերպով կանգնելու է Աստծո ներկայության առջեւ, ինչպես սյունն է հավերժորեն կանգնում տաճարում: Աստված Ինքն է տաճարը (տես 21:22), որի մեջ սյուն լինել նշանակում է մնայուն կերպով տեսնել ու վայելել Նրա փառքը, լինել այդ փառքի մեջ եւ Երկնային բոլոր դասակարգությունների հետ հավերժորեն փառաբանել Նրան (հմմտ.՝ 4-5-րդ գլուխների հետ):

2. **«Նրա վրայ կգրեմ Իմ Աստուծոյ անունը»:** Անցյալում հայտնի սովորություն էր որոշ տաճարների սյուների վրա արձանագրություններ կատարելը. դրանք կրում էին տաճարի հովանավորի կամ բարերարների անունները: Այսպես՝ Եգիպտոսի տաճարներից շատերի սյուները ծածկված են մեհենագրերով: Կափառնայումի մեջ հայտնաբերված ժողովարանն այդպիսի երկու սյուներ ուներ՝ ժողովարանի բարերարների անուններով: Այս պարագայում՝ անձի վրա գրվելիք անունը նվիրատու եւ բարերար մարդու անուն չի լինելու, այլ՝ հենց մարդու Բարերարի՝ Աստծո անունը, Նրա, ում պարտական ենք մանավանդ մեր փրկության համար, որ շնորհեց մեզ Իր անսահման մարդասիրությամբ:

Անշուշտ, այս անունը բառացի հասկացողությամբ չէ, որ գրված է լինելու հաղթողի վրա: Ինչպես Աստծո տաճարում սյուն լինելն իրականում Աստծո անմիջական ներկայությունն ու փառքը վայելել է նշանակում, այնպես էլ Աստծո անունը գրված ունենալ նշանակում է Աստծո տաճարի մեջ մի տաճար դառնալ (հմմտ.՝ Ա Կր 3:16-17, 6:19, Բ Կր 6:16, Եփ 2:21-22, Ա Պտ 2:5) եւ իր մեջ ունենալ Աստծուն (հմմտ.՝ Հհ 14:23), այլ խոսքով՝ միավորված լինել Աստծո հետ:

3. **«Նրա վրայ կգրեմ նաեւ Իմ Աստուծոյ քաղաքի անունը, այսինքն՝ Նոր Երուսաղէմի, որ իջնելու է Երկնքից՝ Իմ Աստուծոյ մօտից»**: Այս դեպքում Աստծո քաղաքը երկրավոր Երուսաղեմը չէ, այլ՝ երկնավոր այն քաղաքը, որ Աստված պատրաստել է Իր հավատքի զավակների համար (տե՛ս Եբր 11:16), եւ որ եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակն անվանում է «կենդանի Աստուծոյ քաղաքը՝ Նոր Երուսաղէմը» (Եբր 12:22), որ, ինչպես Հայտնության գրքի վերջում է երեւալու, երկնքից պիտի իջնի՝ հարսի պես զարդարված, իր Փեսայի՝ Քրիստոսի համար:

Քրիստոնյա մարդը, այս աշխարհում ապրելով հանդերձ, գիտի, որ ինքն «այս աշխարհից» չէ, այսինքն՝ այս աշխարհին չի պատկանում (հմմտ.՝ Հհ 15:19, 17:14 եւ 16), որովհետեւ իր հոգեւոր հայրենիքը Երկնքում է (հմմտ.՝ Եբր 11:13-16): Այլ խոսքով ասած, նա այս աշխարհի քաղաքացի չէ, այլ՝ «Երկնքի քաղաքացի» է (Փլպ 3:20), «սրբերի քաղաքակիցը եւ Աստուծոյ ընտանիքը» (Եփ 2:19): Արդ, ինչպես որեւէ հայրենիքի բնակիչ իր քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ կամ արձանագրություն է ունենում, նույնպես եւ հաղթանակողին պիտի տրվի Երկնավոր Երուսաղեմի քաղաքացիությունը: Ա՛յս է նշանակում «նրա վրայ Աստուծոյ քաղաքի անունը գրել» արտահայտությունը:

4. **«Եւ նրա վրայ կգրեմ Իմ նոր անունը»:** Վերջին խոստումը Քրիստոսի անվան գրվելն է այդ «սյան» վրա: Մենք մի մոտավոր բացատրություն տեսանք 2:17-րդ համարում: Սակայն այստեղ ասում է՝ «Իմ նոր անունը»: Հավանաբար խոսքը նոր անվան մասին չէ, այլ՝ այն ճշմարիտ ծանոթության, որ ունեն հավատացողները, բայց դա բացարձակ հստակությամբ ու վստահությամբ կունենան կատարածին, երբ այն կտեսնեն «դեմ առ դեմ», Իր ճշմարիտ փառքի եւ ինքնության մեջ (հմմտ.՝ Ա Կր 13:12):

Հրեա ժողովուրդը Հիսուսին ճանաչեց միմիայն մարմնապես, առավելագույնը՝ որպես մի մարգարե: Քրիստոսի հետեւորդները Նրա մեջ ճանաչեցին Մեսիային, Աստծո Օծյալին եւ աշխարհ ուղարկված

Փրկչին, սակայն Հարությունից հետո Նրան ճանաչեցին ու դավանեցին որպես Տեր եւ Աստված (տե՛ս Հհ 20:18: Հմմտ.՝ Հտ 21:7 եւ 11): Աշխարհի մտածողությամբ դատող մարդու համար միշտ էլ դժվար է եղել Աստծուն ճանաչել մարմնապես, այլ խոսքով, ճանաչել Նրան որպես Երկրի վրա ապրած ու գործած պատմական անձնավորություն, հավատալ Նրա աստվածությանը եւ Նրան դավանել Տեր եւ Աստված:

Քրիստոսի ճշմարիտ ինքնությունը Հայտնության գրքում հայտնվում է նոր անունով կամ նույն «Տեր» անվան նոր տարազավորմամբ, որ Հայր Աստծուն տրված փառահեղ անունն է Դանիելի մարգարեությունից (Դն 2:47: Հմմտ.՝ Ա Տմ 6:16), եւ որին հանդիպելու ենք 17:14-րդ եւ 19:16-րդ համարներում՝ «Թագավոր թագավորաց եւ Տեր տերանց»: Հայր Աստծուն տրված անունը Քրիստոսին նույնպես տրվելը մեկ անգամ եւս մատնանշում է այն նույնությունը, որ կա Հոր եւ Որդու միջեւ՝ ըստ աստվածության, ըստ համապատվության, փառքի եւ գործունեության՝ իբրեւ մեկ եւ միակ աստվածություն:

Հայտնության գիրքը հիշեցնում է Քրիստոսի մեկ ուրիշ անվանումը, որը գտնում ենք նույն հեղինակի գրած Ավետարանի սկզբում եւս. «Նրա անունն է Աստուծոյ Խօսք» կամ, գրաբարյան ձեւով, «Բանն Աստուծոյ» (Հտ 19:13: Հմմտ.՝ Հհ 1:1 եւ 14, Ա Հհ 5:7):

Ինչպես էլ ընկալենք այդ նոր անվանումը, միեւնույնն է, այդ անունը վերջիվերջո անջնջելի կերպով դրոշմվելու է հաղթանակողների վրա, ովքեր իրենց կյանքով Քրիստոսի անվան վկայությունը տվեցին, պահպանեցին եւ արժեւորեցին հավատարմորեն, ուստի, այդ անվամբ էլ ճանաչվելու են թե՛ Երկրի վրա, թե՛ Երկնքում (հմմտ.՝ Մտ 10:32, Ղկ 12:8, Հռ 10:9: Հմմտ.՝ Հտ 5:5), եւ այդ անունը կրելը նրանց համար լինելու է մեծագույն փառք ու փառավորում:

ՆԱՄԱԿ ԼԱՎՈԴԻԿԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ (3:14-22)

Լավոդիկիան Փոքր Ասիայի Փոյուգիայի նահանգի մեծ ու հարուստ քաղաքներից էր եւ գտնվում էր Գայլ գետի վրա: Նախապես Զեւս չաստծո անունով կոչվում էր Դիոսպոլիս, սակայն երբ Անտիոքոս Բ-ը քաղաքն ընդարձակեց, վերակոչեց իր կնոջ՝ Լաւոդիկիայի անունով: Քաղաքը թեեւ 65-66 թվականի երկրաշարժից կործանվեց, բայց Մարկոս Ավրելիոս կայսրն անմիջապես վերակառուցեց:

Ինչպես վկայում է Հովսեփոս պատմիչը, առաջին դարում այդ քաղաքում հրեական մեծ համայնք կար: Տեղի քրիստոնեական եկեղեցու մասին կարդում ենք Պողոս առաքյալի կողոսացիներին գրած նամակում (2:1, 4:13-16), ուր նաեւ տեսնում ենք, որ առաքյալը նրանց ուղղել է եւս մի նամակ, որը մեզ անծանոթ է (թեպետ կա նույնանուն անվավեր նամակ): Չորրորդ դարի սկզբներին՝ շուրջ 314 թվականին, Լավոդիկիայում եկեղեցական կարեւոր ժողով գումարվեց, որի կանոնները պահվում են նաեւ մեր Եկեղեցու Կանոնագրքի մեջ:

Անցնող դարերում Լավոդիկիան հայտնի էր Էսկի Հիսար անունով, իսկ ներկայումս կոչվում է Փամուք Կալե: Քաղաքն անցյալում նշանավոր էր երեք բաներով, որոնք յուրահատուկ անդրադարձ ունեն այս նամակում: Քաղաքը հայտնի էր նախ որպես դրամական գործառնությունների կենտրոն, երկրորդ՝ բժշկական դպրոցով եւ երրորդ՝ իր արտադրած թավշափայլ սեւ բրդով ու կերպասագործությամբ: Քաղաքը աղքատ էր միմիայն խմելու ջրով:

«Այսպէս է ասում Ամէնը՝ հաւատարիմ եւ ճշմարիտ Վկան՝ Աստուծոյ ստեղծագործութեան Սկիզբը» (հմր 14): Այս նամակը եւս մեզ ընծայում է քրիստոսաբանական մի քանի տիտղոսներ, որոնք շատ կարեւոր են: Համարը տալիս է երեք տիտղոսներ կամ անուններ՝

1. **«Ամենը»:** Յուրաքանչյուր քրիստոնյա այս բառին ծանոթ է եկեղեցու պաշտամունքային կյանքից. եբրայերեն բառը հետագայում Աստվածաշնչի ճանապարհով անցել է հունարենին եւ մյուս լեզուներին: Սովորական գործածությամբ, այս բառը, որպես եզրափակում,

գտնում ենք առհասարակ Աստծուն ուղղված բոլոր մաղթանքների, աղոթքների, փառաբանությունների եւ հավատի խոստովանությունների վերջում, որովհետեւ նշանակում է «այո», «հաստատապես», «թող լինի», կամ՝ «ճշմարիտ է», «ճշմարտապես»: Այդ իմաստով՝ հավատացյալների ընդհանուր հավանության դրոշմն է աղոթքների կամ փառաբանությունների ավարտին:

Մեր հատվածի համար ամենակարեւորը բառի վերջին՝ «ճշմարիտ» կամ «ճշմարտություն» իմաստն է: Գործածությունից երեւում է, որ բառը Քրիստոսին տրված հատուկ անուն կամ տիտղոս է: Այդ գործածությունը Հին Կտակարանից է: Եսայու մարգարեության 65-րդ գլխի 16-րդ համարում այս բառը երկիցս գործածված է Հայր Աստծո համար. «Որպէսզի երկրի վրայ օրհնուողը ճշմարիտ (եբրայերէն՝ Ամէն) Աստուծով օրհնուի, եւ Երկրի վրայ երդուողը ճշմարիտ (եբրայերէն՝ Ամէն) Աստուծով երդուի»: Հին Կտակարանում Հորը, իսկ Նոր Կտակարանում Քրիստոսին տրված անվան նույնությունը, հարկավ, վկայում է նրանց աստվածային բնության նույնության կամ, այլ խոսքով, Քրիստոսի աստվածության մասին:

2. **«Հաւատարիմ եւ Ճշմարիտ Վկան»:** Այս տիտղոսին հանդիպեցինք եւ դրա մասին խոսեցինք առաջին գլխի 5-րդ եւ երրորդ գլխի 7-րդ համարներում, իսկ վերեւում «Ամեն» անվանման առիթով ասացինք, որ խորքում այս երեք տիտղոսները նույնն են կամ երեք տարբեր եզրերով են արտահայտում նույն ճշմարտության երեք տարբեր կողմերը:

3. **«Աստուծոյ ստեղծագործութեան Սկիզբը»:** Այս վերջին բացատրությունը հաճախ ծառայել է Քրիստոսի աստվածությունը մերժող աղանդավորներին, որոնք փորձում են տեսնել վկայություն, թե Քրիստոս Աստված չէ, այլ՝ «արարած», բոլոր արարածներից առաջինն ու սկիզբը: Բայց արդյոք բնագիրն այդպիսի հաստատում է անո՞ւմ Որդու մասին: Առաջին գլխում տեսանք, թե ինչպես էր Նա Իրեն կոչում «Առաջինն ու Վերջինը», «Սկիզբն ու Վախճանը» (տե՛ս 1:8 եւ 17 եւ այդ համարների բացատրությունը):

Սկիզբը ոչ թե հարաբերական իմաստով է՝ աշխարհի կամ ստեղծագործության հետ հարաբերաբար, ինչպես կարող է թվալ այստեղ, այլ բացարձակ իմաստով սկիզբ է, այսինքն՝ սկիզբ, որ իրականում սկզբնակետ չունի, այլ լեզվական բացատրություն է մեզ համար, որովհետեւ չունենք ուրիշ եւ ավելի հարմար որեւէ բացատրություն: Այսպես, եթե ասում ենք՝ Աստված սկզբից է, ի՞նչ ենք հասկանում՝ մինչեւ որոշ ժամանակ Աստված չկա՞ր եւ հետո՞ եղավ կամ սկսվեց: Ո՛չ:

Այստեղ «սկիզբ»ը ժամանա՞կ է ցույց տալիս: Ո՛չ. Աստծո գոյությունը կապված չէ ժամանակի հետ եւ դուրս է «ժամանակ» հասկացությունից. մի բան, որ մենք դժվար թե պատկերացնենք, հետեւաբար դժվար էլ հասկանանք: Նույնն է եւ Որդի Աստված: Նա բացարձակ սկզբից է, անժամանակ եւ անվախճան է, եւ Ինքն է ամեն բանի սկիզբը: Եվ հենց ճիշտ այս է «Աստուծոյ ստեղծագործութեան Սկիզբը» բացատրության ուղիղ իմաստը:

Արդարեւ, հունարենում «սկիզբ» (արխի) բառը նշանակում է «սկզբնապատճառ»: Այստեղ Քրիստոսի սկզբի մասին չէ՛, որ խոսվում է, այլ՝ տիեզերքի, աշխարհի, մարդու ստեղծագործության, որոնց սկիզբը, այսինքն՝ սկզբնապատճառը կամ հեղինակը, ինչպես Հին Կտակարանն է մի քանի անգամ ուսուցանում, Որդին Ինքն է: Հովհաննու Ավետարանը Որդու մասին հաստատելուց հետո, թե «Բանն Աստուած էր», անմիջապես ավելացնում է. «Նրանով էր, որ Աստուած ստեղծեց ամէն ինչ, առանց Նրա ոչ մի բան չստեղծուեց: Կեանքը նրանով սկիզբ առաւ...: Նա աշխարհի մէջ էր, աշխարհը Նրանով ստեղծուեց, սակայն աշխարհը չճանաչեց Նրան» (Հհ 1:1, 3-4 եւ 10: Հմմտ.՝ Եփ 1:9, Կղ 1:16, Եբր 1:2-3):

Սակայն սրանով չի սահմանափակվում այս նախադասության միտքը: «Սկիզբ» (արխի) բառը հունարենում ուրիշ իմաստներ եւս ունի եւ այս շրջագծում կարելի էր թարգմանել նաեւ «գլուխ» կամ «իշխան», այսինքն՝ տերը, իշխողը: Արդարեւ, Նոր Կտակարանը բազմիցս նշում է, թե Քրիստոս գլուխն է ամբողջ ստեղծագործության, բոլոր արարածների (հմմտ.՝ Եփ 1:20-22, Կղ 2:10) եւ Եկեղեցու (Եփ 1:22, 4:15-16, Կղ 1:18, 2:19): Այս իմաստը կապվել է «նոր ստեղծագործություն» հասկացության հետ:

Քրիստոս Իր փրկագործությամբ մարդուն եւ աշխարհը մեղքի բնությունից դուրս բերելով՝ նորոգեց եւ նոր արարված ու նոր մարդ դարձրեց, որպեսզի մենք ծառայենք Աստծուն՝ Սուրբ Հոգով նորոգված որպես նո՛ր արարածներ (տե՛ս Հռ 6:4, Բ Կր 3:17, Եփ 4:24, Կղ 3:10), իսկ այդ նոր ստեղծագործության գլուխը, սկիզբը եւ առաջինը դարձյալ Քրիստոս Ի՛նքը եղավ, «որպէսզի Ինքն առաջնութիւնն ունենայ ամէ՛ն բանի մէջ» (Կղ 1:18):

«Գիտեմ քո գործերը, դու ո՛չ սառն ես, ո՛չ էլ տաք: Պէտք է կա՛մ սառը լինէիր, կա՛մ տաք: Սակայն, դու գաղջ ես, ո՛չ տաք ես, ո՛չ էլ սառը. ուստի՝ քեզ դուրս պիտի փսխեմ Իմ բերանից» (հմր 15-16): Լավոդիկիայի եկեղեցու գործերում Քրիստոս գովելի ոչ մի բան չի գտնում եւ անմիջապես արտահայտում է Իր դժգոհությունը:

Առաջին դժգոհությունն այն է, որ հիշյալ եկեղեցու գործերը «գաղջ» են, ո՛չ տաք են եւ ո՛չ էլ՝ սառը: Գիտենք, օրինակ, որ տաք ջուրը, մանավանդ հանքային տաք ջուրը բուժիչ հատկություն ունի, բժշկող է, իսկ սառը ջուրը արթնացնող, զովացնող, թարմացնող, կենդանացնող հատկություն ունի: Լավոդիկիայի եկեղեցին համեմատվում է ջրի հետ, սակայն ո՛չ մեկն է եւ ո՛չ մյուսը, ո՛չ դարմանում է հոգով հիվանդացածներին, ո՛չ էլ հոգով ծարավներին հագեցնում եւ զովացնում է: Ուստի, անպետք է Աստծո գործի համար: Գաղջ ջուրը ինչի՞ կարող է ծառայել. հաճախ գործածվում է բժշկության մեջ՝ հիվանդին փսխել տալու համար, եւ ահա Տերը նույն համեմատությունն է անում: Լավոդիկիայի եկեղեցին իր գործերով միայն սրտխառնուք է պատճառում: Հետեւաբար, Քրիստոս նրան գաղջ ջրի նման դուրս պիտի փսխի Իր բերանից:

Շատ գեղեցիկ բացատրություն է տալիս Սուրբ Գրիգոր Աստվածաբան Հայրապետը՝ ասելով, թե մարդը իրավամբ «սառն» է լինում, երբ դեռ անհաղորդ է հավատքին, թեպետ հույս ունի, որ մկրտվելով կհասնի դրան, իսկ «տաք» է լինում, երբ վերստին ծնունդով կենդանանում է իր հավատքով, սակայն եթե հետո անտեսի հավատքի գոր-

ծերը, ապա անօգուտ կդարձնի ստացած շնորհը, ոչ սառը կլինի եւ ոչ՝ տաք, այլ կդառնա ծանրատաղտուկ ու գարշելի:

«Ասում ես, թէ «Հարուստ էի եւ առաւել հարստացայ, ու ոչ մէկ բանի կարօտ չեմ», սակայն չգիտես, որ ողորմելի ես, խեղճ եւ աղքատ, մերկ եւ կոյր» (հմր 17): Վստահաբար, բոլոր լավոդիկիացիները, ներառյալ՝ քրիստոնյաները, հպարտ էին իրենց քաղաքի ունեցած առավելություններով, հարստությամբ, բժշկական դպրոցով, կերպասագործությամբ: Եվ այստեղ առաջին արտահայտությունը հենց այդ ճշմարտության մասին է հայտնում:

Աշխարհի հարստությամբ եւ ճոխությամբ պարծենալն անօգուտ է, եթե դրանք մեզ մոռանալ են տալիս Աստծուն: Հավատքի ակնոցով դիտված՝ մարդը փորձության ամենավտանգավոր կետին է հասնում, երբ սկսում է մտածել եւ ինքն իրեն ասել. «Որեւէ բանի կարոտ չեմ, որեւէ մեկին կարոտ չեմ»: Այդպիսին ինքն իր համար ստեղծում է իր թագավորությունը եւ ի վերջո Աստծուն նույնպես անտեսում է: Հոգու կարոտությունը փրկության սկիզբն է, իսկ չկարոտելը՝ սկիզբը կորստի:

Իզուր չէ, որ Քրիստոս ասաց. «Երանի՜ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է Երկնքի Արքայութիւնը» (Մտ 5:3), եւ իզուր տեղը չէր, որ հիշեցրեց երկրավոր հարստություններին կառչած լինելու վտանգի մասին, ինչը մեզ կարող է զրկել Երկնքի Թագավորությունից (Մր 10:23-25): Եվ այստեղ ասում է, որ աշխարհի չափանիշով՝ Լավոդիկիայի եկեղեցին կարող է լինել հարուստ ու փառքի տեր, սակայն Աստծո աչքին կմնա խեղճ ու ողորմելի, իսկ իր ամբողջ ճոխության մեջ՝ մերկ ու կույր: Խեղճ ու ողորմելի է, որովհետեւ չգիտի, թե ինչի՜ կարիք ունի, չի տեսնում, թե ինչի՜ է կարոտ ինքը. եւ քանի որ չգիտի ու չի տեսնում, նշանակում է, որ կույր է թե՛ մտքով, թե՛ հոգով եւ արժանի է արգահատանքի, այսինքն՝ ողորմելիի մեկն է: Նույն կերպ եւ մերկ է, որովհետեւ փառավոր հագուստները չեն մարդու իսկական զգեստն ու զարդարանքը, այլ՝ մարդու նկարագիրը, մաքուր վարքը, առաքինությունները, մտավոր ու հոգեւոր բարեմասնությունները, ցուցաբերած սերը, որոնցից կամավորաբար ինքն իրեն

մերկացրել է, ուստի դարձյալ արժանի է խղճահարության միայն՝ հակառակ իր ամբողջ պարծանքին:

«Ուստի՝ հետեւեալ խորհուրդն եմ տալիս քեզ. կրակի բովով անցած մաքուր ոսկի՜ գնիր Ինձանից, որպէսզի հարստանաս, եւ սպիտակ զգեստնե՛ր առ՝ հագնելու համար, որպէսզի ծածկես մերկութեանդ ամօթը: Նաեւ դե՛ղ դիր քո աչքերին, որպէսզի տեսնես» (հմր 18): Երեք խորհուրդները, որ տալիս է Քրիստոս, կապ ունեն այն ամենի հետ, ինչով գլխավորաբար պարծենում էր այս քաղաքը: Դա հենց այն նույն նյութական առավելություններն էին, որոնք ուներ քաղաքը, սակայն որոնք բացակայում էին հոգեւոր բնագավառում կամ հոգեւոր հողի վրա:

1. Լավոդիկիան նշանավոր էր իր դրամատներով կամ նյութական գործառնություններով, հարուստ էր ու ինքն իրեն առանձնաշնորհյալ էր համարում: Ամբողջ աշխարհը նայում էր նրան, իսկ նա կարծում էր, թե որեւէ բանի կարիք չունի: Սակայն Քրիստոս դիտողություն է անում՝ ասելով. «Կրակի բովով անցած մաքուր ոսկի՜ գնիր Ինձանից, որպեսզի հարստանաս»: Այն դրամը, որով խաղում էր Լավոդիկիան, եւ որը պաշտում է արդի աշխարհը, սկիզբն է գայթակղությունների եւ մոլորությունների, արմատն ու մայրն է բոլոր չարիքների (Ա Տմ 6:10: Հմմտ.՝ Ելք 23:8, Բ Օր 16:19) եւ մարդուն չի հարստացնում Աստծո աչքում: Աստծո համար ամբարվող հարստությունը միայն ազնիվ նկարագիրը, անբասիր կյանքն ու բարի գործերը կարող են լինել, որոնք ձեռք են բերվում դժվարությամբ, հաճախ զոհողությունների գնով, ինչի համար անհրաժեշտ է լինում, որ ենթական անցնի կրակի բովով: Այդպիսի նկարագիրը, կյանքը եւ բարեգործության նվիրումը չեն կարող լինել եւ ընկալվել առանց հավատքի: Ուստի եւ, իսկական հարստությունը մեզ ավանդված ճշմարիտ հավատքն է, հավատքի գանձը, որ մենք կրում ենք մեր այս հողեղեն մարմիններում՝ «կաւէ անօթների պէս» (Բ Կր 4:7):

Այդ մաքուր, կրակից անցկացված ոսկին պետք է գնենք, որովհետեւ Աստծո համար միայն նրանով կարող ենք հարստանալ: Սակայն այդ հավատքը աշխարհից չենք կարող գնել: Աշխարհի սեղանավոր-

ներն այդ գանձը ոչ ունեն, ոչ էլ կարող են տալ, ոչ կարող են գնահատել, ոչ էլ պահել: Այդ գանձը միմիայն Աստծուց՝ Ճշմարիտ Սեղանավորից կարելի է գնել, ով այն վաճառում կամ տալիս է առանց դրամի (հմմտ.՝ Ես 55:1-2): Քրիստոսը՝ մեր Աստվածը, Ինքն է խոստանում այդ գանձը եւ տալիս է անվճար՝ պայմանով, որ գնանք Իր մոտ եւ ասենք. «Աւելացրո՛ւ մեր հաւատքը» (Ղկ 17:5):

2. Լավոդիկիան անվանի էր իր թավշափայլ, սեւ բրդով եւ հյուսվածքներով: Բայց Քրիստոս ասում է՝ դո՛ւ, որ այդքան պարծենում ես քո կերպասներով, որոնցով աշխարհին հագուստեղեն ես մատակարարում, նայի՛ր քեզ եւ տե՛ս, որ մերկ ես, մանավանդ «սպիտակ» հագուստի կարիք ունես, այնքա՛ն աշխարհիկ ես դարձել քո մտահոգություններով, որ քո «զգեստները» եւս արտադրածդ սեւ բրդի գույնն են ստացել. դու Քրիստոսի՛ն պետք է հագած լինեիր (հմմտ.՝ Հռ 13:12, Գղ 3:27):

Դո՛ւ, որ Քրիստոսով «նոր մարդ»ը պետք է հագած լինեիր (Եփ 4:24, Կղ 3:10), դո՛ւ, որ Աստծո սպառազինությունը, լույսի, հավատքի եւ սիրո զենքերը պետք է հագած լինեիր (Հռ 13:14, Եփ 6:11, Ա Թս 5:8), դո՛ւ, որ Աստծո շնորհների պատմուճանը պետք է վրադ ունենայիր, կամավորաբար հանել ես դրանք եւ Աստծո առջեւ մերկ ես, որքան էլ աշխարհի աչքին ճոխ զգեստավորված երեւաս:

Արդ, «վերստի՛ն եկ ինձ մօտ,– ասում է Քրիստոսը,– եւ սպիտակ զգեստնե՛ր առ՝ հագնելու համար, որպէսզի ծածկես մերկութեանդ ամօթը»: Երբ Աստված ստեղծեց մարդուն, նա այդ ժամանակ լուսազարդ շնորհներով էր զգեստավորված, սակայն մարդը չգիտակցեց իրեն տրված պատիվը, կորցրեց իր ունեցած փառքը եւ առանց Աստծո շնորհի՝ զգաց իր «մերկությունը» (հմմտ.՝ Ծն 3:7):

Քրիստոս եկավ մարդուն վերստին զգեստավորելու Իր աստվածաստեղծ փառքի պատմուճանով, եւ դու, սուրբ ավազանից նորից ծնվելով, այդ պատմուճանը վերստին «զգեցար»: Բայց հիմա տեսնում եմ, որ քո անփութությամբ, հավատքի կյանքի հանդեպ նախանձախնդրության պակասի հետեւանքով կրկին մերկացել ես եւ ամոթալի

մերկությամբ ներկայանում ես Աստծուն: Հե՛տ դարձիր, հրաժարվի՛ր քո հպարտությունից ու սին պարծանքներից: Հարստությունը քեզ առաջնորդել է կենցաղային թուլությունների. սրբագրի՛ր դրանք, մաքրի՛ր կյանքդ, որովհետեւ Աստծո համար կարեւորը մեր կյանքի զգեստն է, որ պետք է անարատ, «սպիտակ» լինի՝ որպես Աստծո սրբության ու փառքի արտացոլանքը Երկրի վրա:

3. Ի վերջո Լավոդիկիան հայտնի եւ անվանի էր բժշկական դպրոցով, որը տվյալ ժամանակի համար անսովոր, բացառիկ երեւույթ էր: Իր ընդհանուր նշանակությունից զատ՝ դպրոցն ուներ նաեւ հատուկ մասնագիտություն՝ աչքերի հիվանդությունը բուժող հատուկ դեղ, որի ինչ լինելն իրականում չգիտենք, բայց որի մասին պատմական վկայություն ունենք: Մարդիկ բոլոր կողմերից այնտեղ էին գնում՝ իրենց աչքերի ցավին բուժում ստանալու, եւ սա պարծանք էր լավոդիկիացիների համար:

Քրիստոս այս առավելությունը եւս Լավոդիկիայի եկեղեցու դեմ է շրջում՝ Իր դիտողությունն անելու համար. «Դու ուրիշների մարմնաւոր աչքերը բուժելով ես պարծենում, սակայն դո՛ւ կարիք ունես քո աչքերը բացելու, դե՛ղ դիր քո աչքերին, որպէսզի տեսնես»: Հիվանդոտ են այդ աչքերը եւ լավ չեն տեսնում, ուստի դեղ դնելու կարիք ունես:

Իսկ ո՞րն է այդ դեղը, եթե ոչ՝ որդեգրել աշխարհն ու դիտել կյանքը եւ ըմբռնել Աստծո հայացքն ու չափանիշը: Աշխարհն ու մեր շրջապատը կարելի է դիտել սովորական մարդու հայացքով կամ հավատքի աչքերով, այսինքն՝ Աստծո հայացքով, նայած թե մենք ինչպես ենք տեսնում, կշռում կամ գնահատում մեր շրջապատն ու մեր կյանքը:

Առաջին հերթին՝ հարստությամբ պարծեցող համայնքը կամ անհատը ձգտում է ամեն ինչ չափել եւ արժեւորել նյութական արժեքներով՝ դրամով, նյութական շահով կամ օգուտով, մինչդեռ մարդու կյանքն ու փրկությունը կախված չեն դրամից ու հարստությունից: Սերը, ազնվությունը, բարությունը, մյուս առաքինությունները, բարեգործությունն ու հոժարակամ ծառայությունը դրամով չեն պայմանավորվում:

Երկրորդ՝ աշխարհի մտածողությունն ու չափանիշը որդեգրած համայնքը կամ անհատը ինքնաբերաբար նույն աշխարհի կենցաղակերպը կամ ապրելակերպն է որդեգրում եւ ընկնում հավատքին հակասող երեւույթների մեջ, մինչդեռ քրիստոնյան կոչված է ոչ թե այս աշխարհի մարդկանց վարմունքն ընդօրինակելու, այլ նորոգված մտքով, նոր մարդ լինելու, փոխելու սեփական աշխարհայացքը եւ նոր աշխարհայացք որդեգրելու, որպեսզի Աստծո կամքը կատարող լինի (հմմտ.՝ Հռ 12:2):

Երրորդ՝ աշխարհային բաներով պարծեցող համայնքը կամ անհատը երկնավորը կամ աստվածայինը փնտրողը չէ. կա՛մ չի ունեցել բնավ եւ չունի, կա՛մ արդեն անտարբերության է մատնել ու մոռացել: Մինչդեռ դեպի Քրիստոս կոչված մարդն աշխարհայինն է հետին պլան մղում՝ հայացքը միշտ հառած դեպի առաջ՝ դեպի գալիքը (հմմտ.՝ Փլպ 3:13) եւ ուշադրությունը կենտրոնացրած դեպի վեր՝ դեպի Քրիստոս, ինչպես նաեւ երկնավոր բաները (Կր 3:1-2):

Քրիստոս Լավոդիկիայի եկեղեցուն հորդորում է փոխել հայացքն ու չափանիշերը, սակայն դրա համար անհրաժեշտ է նաեւ սի՛րտը փոխել եւ բոցավառել Աստծո ներկայության կրակով, մաքրել եւ դարձնել Աստծո բնակարան, որպեսզի հոգեւոր մահը նահանջի, եւ Կյանքը գա՝ մեզ հետ դեմ դիմաց բազմելու մեր սրտի սեղանին:

Ներածական բաժնում հավանական համարեցինք, որ Հայտնության գրքում հիշատակված յոթ եկեղեցիները թերեւս Եկեղեցու կյանքի յոթ տարբեր կողմերն են արտահայտում կամ Եկեղեցու հետագա պատմության յոթ փուլերն են: Հավանական է, որ յոթերորդն արդեն Եկեղեցու պատմության ներկա փուլն է, ուր գտնվում ենք մենք՝ 21-րդ դարասկզբին, մասնավորաբար երբ նկատի առնենք, թե ինչպես է ներկա ժամանակներում մարդկությունը հայացքն ուղղել դեպի միմիայն նյութական արժեքները, հետեւաբար, իր ամբողջ կյանքը, աշխարհը, մարդկանց եւ նույնիսկ Աստծուն կամ հավատքի ճշմարտությունները փորձում է դատել ոչ թե իրենց հատուկ չափանիշով կամ արժեքով, այլ նյութին ու անմիջական շահերին հարաբերաբար:

Իսկ դրամն այլասերիչ է: Ինչպես ասում է Բ Օրինաց գիրքը, «կաշառքը կուրացնում է իմաստուն մարդկանց աչքերը, խեղաթիւրում արդար մարդկանց խօսքերը» (Բ Օր 16:19: Հմմտ.՝ Ելք 23:8): Եթե մարդ կարողանա ինքն իրեն կտրել նյութից եւ նյութականը հետապնդելու ցանկությունից, ապա հավանաբար կկարողանա հասնել այնտեղ, ուր իսկապես կբացվեն նրա աչքերը, եւ կկարողանա ճշմարտությունը գնահատել այնպես, ինչպես կա:

Ներկա ժամանակն իրոք ճոխության ժամանակ է, երբ մարդիկ լողում են դրամի եւ ամեն տեսակ առատության, նույնիսկ շռայլության մեջ: Այդ ճոխությունը նրանց մոռանալ է տալիս այն հիմնական կարիքները, որ ունեն հոգեւոր հողի վրա: Շռայլությունը, դյուրակեցությունը, զգայաբանական դյուրին հաճույքները մի կողմից եւ կյանքի հանդեպ թեթեւ վերաբերմունքն ու պատասխանատվությունից խույս տալու բարոյալքիչ կարգախոսները, դրանց բացահայտ կամ գաղտնի քարոզչությունը մյուս կողմից այնպես են շփոթեցնում մտքերը, շլացնում աչքերն ու պղտորում հայացքը, որ մարդ դժվարանում է տեսնել ճշմարտությունը: Ուստի Լավոդիկիայի եկեղեցուն ուղղված Քրիստոսի կոչը, թե «դե՛ղ դիր քո աչքերին, որպէսզի տեսնես», մեզ համար եւս մեծ ու կարեւոր արժեք եւ նշանակություն ունի:

«Ես յանդիմանում ու խրատում եմ նրանց, ում սիրում եմ, ուստի նախանձախնդի՛ր եղիր եւ ապաշխարի՛ր» (հմր 19):

Նկատեցինք, որ այս եկեղեցին որեւէ առավելություն, գովելի որեւէ բան չունի, բացի միայն դժգոհություն առաջացնող եւ հանդիմանելի կողմերից: Հակառակ այդ իրողության՝ Քրիստոս դարձյալ հիշեցնում է Իր սիրո մասին, եւ սա այն ճշմարտությունն է, որ Աստվածաշունչ մատյանը հավերժորեն հիշեցնում է բոլորիս:

Այստեղ մի կողմից մարդու անհավատարմությունն է, իսկ մյուս կողմից Աստծո՝ Քրիստոսով հայտնված սերը, որ պայման չի առաջադրում եւ հաշվի չի առնում մարդու վիճակը, նկատի չի ունենում մարդու մտածելակերպը, խորհելաձեւը, Աստծուց փախչելու մնայուն հոգեբանությունն ու ճիգը: Այս ամենին հակառակ՝ Տերը կայուն եւ հարատեւ սիրով, «հավատարիմ» սիրով է սիրում մարդ արարածին

այնպես, ինչպես վայել է Աստծո հավերժությանը, հավիտենականությանն ու հավատարմությանը:

Այստեղ նույն սերը հիշեցնում է անհավատարիմ եւ արդեն հավատքը գրեթե կորցրած եկեղեցուն: «Թէպետ,– ասում է,– Ես քեզ նաեւ նեղութիւն եմ տալիս եւ տալո՛ւ եմ, եւ այդ նեղութեան ժամանակն իսկապէս փորձիչ է լինելու, սակայն նեղութիւնը, խրատը, պատիժը երբեք չեն նշանակում, թէ քեզ չեմ սիրում: Ընդհակառակը, դրանք սիրոյ արտայայտութիւն են»:

Նույնը մեզ հիշեցնում է առաքյալը եւս՝ եբրայեցիներին ուղղած նամակում. «Դուք նաեւ մոռացել էք այն յորդորը, որ ուղղուած է ձեզ՝ իբրեւ որդիների. «Որդեա՛կ իմ, մի՛ արհամարհիր Տիրոջ խրատը եւ մի՛ վհատուիր, երբ Նա յանդիմանի քեզ, որովհետեւ երբ Տէրը խրատում է, նշանակում է, թէ սիրում է քեզ, եւ երբ պատժում է, նշանակում է, թէ քեզ ընդունում է իբր որդու» (Եբր 12:5-6: Հմմտ.՝ Առ 3:11-12): Այո՛, Աստծո պատիժը սիրո պակաս չի նշանակում:

Տերն Իր սիրելիներին ավելի՛ով է պատժում: Եվ եթե մեր երկրավոր հայրերը, ժամանակավոր բարիք տալու համար, մեզ խրատում են, ապա մի՞թե մեր Հավիտենական Հայրը մի ամբողջ հավիտենականություն պարգեւելու համար այդ խրատը կամ պատիժը պիտի չտա (հմմտ.՝ Եբր 12:9-11): Երանի՜ նրան, ով անդրադառնում եւ ընդունում է, թե իրեն ուղղված այդ ազդարարությունները, հարվածներն ու նեղություններն Աստծո սիրո արտահայտությունն են, այլ ոչ թե տհաճության կամ մերժման նշան, ոչ թե Աստծո քինախնդրության կամ վրեժխնդրության դրսեւորում, այսինքն՝ ճիշտ հակառակը, Աստծո հավելյալ կոչ է, որպեսզի, հետեւելով այդ կոչին, մենք նույնպես լինենք կրակի բովից անցած ոսկու նման:

Փաստորեն այդպես էլ ասում է. «Նախանձախնդի՛ր եղիր եւ ապաշխարի՛ր»: Անտարբերությունը մեռելություն է, որից պետք է դուրս գա Լավոդիկիայի եկեղեցին: Աստված թե՛ դատապարտության վճիռն է լսելի դարձնում եւ թե՛ միաժամանակ ապաշխարության կոչ է ուղղում: Աստծո համար պատիժը վերջնական նպատակ չէ, այլ մեղավորին դարձի բերել է նշանակում, քանի դեռ կա դրա հնարավորությունը:

Աստծո համար կարեւորը ժամանակավոր պատիժները չեն. դրանք միջոց են Իր ժողովրդին կամ քրիստոնյա անհատին առաջնորդելու դեպի այն նպատակը, որի համար կանչել է եւ որին հրավիրում է նրան: Հետեւաբար, դրանք պետք է ընդունել իբրև սիրո արտահայտություն եւ ապաշխարել, հետ դառնալ չար ճանապարհից դեպի Աստված:

«Ահաւասիկ Ես դռան առջեւ եմ եւ բախում եմ: Եթէ մէկն Իմ ձայնը լսի եւ բաց անի դուռը, Ես ներս կմտնեմ եւ կընթրեմ նրա հետ, նա էլ՝ Ինձ հետ» (հմր 20): Հնագույն ժամանակներից սկսած՝ մարդկանց սրտին ու մտքին հարազատ ու գեղեցկագույն պատկեր է Փրկչի կերպարը, որ դռան հետեւում կանգնած՝ պատրաստ սպասում է ամեն վայրկյան ներս մտնելուն: Բավական է, որ մենք Նրա ձայնը լսելու եւ Նրան ընդունելու պատրաստակամություն ու տրամադրություն արտահայտենք, Նա անպայման ներս կմտնի:

Ճիշտ է, Քրիստոս նյութականորեն, տեսանելիորեն մեզ հետ չէ, կամ մենք անկարող ենք Նրան տեսել մեր մարմնական աչքերով, սակայն հոգեպես Նա միշտ մեր կողքին է: Դժբախտաբար, մենք է, որ հաճախ չենք տեսնում Աստծո ներկայությունը մեր կողքին, որովհետեւ, ինչպես քիչ վերեւում ասվեց, մեր հայացքը նյութականով է պայմանավորված եւ մշուշված ժամանակավոր տարրերով, ուստի եւ մենք չենք հաջողում տեսնել այն ներկայությունը, որով Նա թախանձում, պահանջում, նույնիսկ խնդրում է, որ մենք անպայման շրջվենք դեպի Ինքը, լսենք Իր կոչը եւ սեղանակից լինենք Իրեն՝ Իր արքայության մեջ:

Ամեն օր եւ օր-օրի Քրիստոս մեր խղճմտանքի միջոցով Իր խոսքը, կոչն է ուղղում՝ մեզ արթնացնելու համար: Նա անդադար բախում է մեր սրտի դուռը, որպեսզի տեսնենք մեր սխալը եւ հետ դառնանք այդ սխալից: Պատահական չէ, որ Հին եւ Նոր Կտակարանները մարդու ներքին աշխարհի մաքրությունը կոչում են «սրտի թլպատություն». բացատրություն, որն իր նյութական պատկերացմամբ նշա-

նակում է ներքին բոլոր չար տրամադրությունները, չար մտածելակերպը, չար խորհելակերպն զգալու եղանակը եւ ուրիշների հանդեպ չար վերաբերմունքն ամբողջությամբ մերժել, կտրել ու դեն նետել, հեռացնել մեր սրտերից եւ դրանք մաքրել՝ Աստծո համար իսկական տաճար դարձնելու համար: Միմիայն այդպիսի մաքուր տան կամ տաճարի մեջ է բնակվում Աստված, եւ ուր ներս է մտնում Քրիստոս՝ մեզ հետ ընթրելու համար:

Ընթրելու այս երեւակայական պատկերացումը, հարկավ, մեզանից որեւէ մէկը նյութականորեն չի ընկալում. բոլորս էլ գիտենք նրա հոգեւոր՝ խորհրդական նշանակությունը: Արդ, ինչ է նշանակում դա: Միասին ընթրելն Աստծո եւ մարդու փոխադարձ մասնակցություն է ենթադրում: Աստծուց այդ ընթրիքը մեզ հրամցնելը Տիրոջ պարգեւած աստվածային խոսքն է, մեզ տրված Նրա վայելքը եւ մեր կյանքում Նրա տված բոլոր բարիքները, որոնցով Նա կերակրում է մեր սովահար հոգիները:

Եսայու մարգարեության մեջ ասվում է. «Ո՛վ դուք, որ ծարաւած էք, գնացէ՛ք ջրի, եւ դուք, որ բոլորովին արծաթ չունէք, գնացէ՛ք, գնեցէ՛ք ու կերէ՛ք առանց արծաթի եւ առանց գինու եւ կաթի համար վճարելու» (Ես 55:1): Աստծո ընծայումը ո՛չ մարմնավոր հաց է, ո՛չ նյութեղեն ջուր, այլ Իր խոսքի մատակարարումն է, Իր անմահարար խոսքի հացն ու ջուրը, որպեսզի անցկացնի մեր ներքին, հոգեւոր սովն ու ծարավը, եւ Աստծուն փափագող մեր հոգին ու սիրտը գտնեն Աստծուն եւ հագենան Նրանով:

Իսկ հավատացյալի ընծայածն Աստծո կամքի կատարումն է՝ խոնարհ սրտով եւ ամբողջական հնազանդությամբ, շնորհակալությամբ ու աղոթքով եւ ուրիշներին ընծայված սիրո անվերապահ ծառայությամբ: Սրանք են նրա համար Աստծո ցանկացած ուտելիքն ու սնունդն այնպես, ինչպես Քրիստոսն էր ասում. «Իմ կերակուրն այն է, որ կատարեմ Ինձ ուղարկողի կամքը եւ իր լրումին հասցնեմ Նրա գործը» (Հհ 4:34):

Այս նույն ասվածը ճշմարիտ է թե՛ մարդու համար եւ թե՛ Աստծո: Եթե Աստծո կամքը կատարելը մեզ համար հոգեւոր սնունդ է, ապա

նույնն է Աստծո համար մեր Նրան հրամցրած ընթրիքը, մեր Նրան հրամցրած անուշաբույր պատարագը եւ սեղանը: Այս պարագային սեղանը դառնում է այն իսկական Հաղորդությունը, երբ մեր Տերն Ինքը եւ մենք նույն սեղանն ենք նստում՝ նույն սեղանից ճաշակելու հոգեւոր, խորհրդավոր իմաստով:

«Ով որ յաղթի, նրան իրաւունք կտամ նստելու Ինձ հետ Իմ գահի վրայ, ինչպէս Ես յաղթեցի եւ նստեցի Իմ Հօր հետ՝ Նրա գահի վրայ» (հմր 21):

Այստեղ հաղթողին տրված խոստումն է գահակից լինել Նրան՝ Քրիստոսին, ինչպես նույն խոստմանը հանդիպեցինք 2-րդ գլխի 26-26-րդ համարներում փոքր-ինչ տարբեր բացատրությամբ:

Երբ մենք մնում ենք Աստծո խոստման եւ հրահանգի կամ պատվիրանների ունկնդիրը, ապա անպայման նաեւ իրավունք ենք ունենում դասվել հաղթողների խմբին, եւ Աստված խոստանում է Իր փառքի ու Թագավորության մասնակից դարձնել մեզ, որպեսզի ինչպես Ինքը հաղթեց, այնպես էլ մենք հաղթենք աշխարհին եւ Նրա նման բազմենք այն գահին, որ մեզ է ընծայելու: Գահն ու աթոռը հաստատապես նշանակում են այն անվախճան, հավիտենական, հանդերձյալ կյանքն ու հանդերձյալ հանգիստը, որ Աստված խոստանում է տալ բոլոր յուրայիններին:

Դ ԳԼՈՒԽ

Ա եւ Բ գլուխներում եկեղեցու ներկան, այսինքն՝ մինչեւ վերջին «մեծ նեղություն»ը ձգվող ժամանակաշրջանը պատկերելուց հետո եւ գալիք նեղության ժամանակը («ինչ որ տեղի է ունենալու», 1:19) նկարագրելուց առաջ այժմ միջանկյալ ձեւով մեզ է ընծայվում Երկնքի տեսիլքը: Դ եւ Ե գլուխները սքանչելի պատկերով մեր առջեւ բացում են Երկնավոր Թագավորի արքունիքը՝ ցույց տալու համար՝

1. **Աստծո մեծափառությունը եւ երկնային պաշտամունքի վեհ պատկերը** (Դ գլուխ):

2. **Գառան հաղթական պատկերը**, Նրա իրագործած փրկության համար Գառանն ընծայված օրհներգությունները եւ փրկագործության աստվածային ծրագրի՝ մեզ համար փակ վերջին կողմերի (երեսների) վերջնական փուլի սկիզբը, որը խորհրդանշվում է յոթ կնիքներով կնքված գրքույկով եւ գրքույկը բացելու հրավերով (Ե գլուխ):

Այս զույգ գլուխները յուրօրինակ ներածական են հաջորդող՝ Է-Ի գլուխների համար, որոնցում ներկայացվելու է վերջին նեղությունները կանխող ժամանակը՝ հատկանշական կողմերով: Տեսիլքի տարրերից շատերը մոտավոր նմանությամբ գտնում ենք Եսայի, Եզեկիել եւ Դանիել մարգարեների գրքերում:

ԱՍՏԾՈ ԳԱՀԸ ԵՎ ԵՐԿՆԱՅԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ (4:1-11)

Այս բաժինը բացվում է «Եւ ահա սրանից յետոյ» բացատրությամբ, որ մատնացույց է անում անցում ներկա ժամանակից, այսինքն՝ թե՛ Հովհաննես առաքյալի ժամանակակից եւ թե՛ հետագա դարերի Եկեղեցու պատմության ներկա փուլից դեպի վերջին ժամանակը, այսինքն՝ վախճանական ժամանակները, որոնք տեսնելու ենք երեք փուլով՝

ա) **Վերջին ժամանակ կամ մեծ նեղությունը կանխող ժամանակ:**

բ) **Մեծ նեղության ժամանակ** (յոթ տարիներ):

գ) **Քրիստոսի երկրորդ գալուստը**, որն ընդգրկում է չարին վերջնականապես հաղթելը, մեծ դատաստանն ու հավիտենական կյանքը:

Հայտնության գրքի այս գլուխը մեր առջեւ պատկերում է Հին եւ Նոր Կտակարաններում բացահայտված աստվածային ծրագրի իրականացած պատկերը՝ Աստված Իր ժողովրդի մեջ՝ իբրեւ նրա Հայր եւ Աստված, եւ ժողովուրդը՝ որպես Տիրոջ որդիների ու դուստրերի ամբողջություն (հմմտ.՝ Ելք 29:45, Ղտ 26:12, Եր 31:33, 32:38, Եզկ 11:20, 37:27-28, Զք 8:8, Բ Կր 6:18, Հտ 21:3), որ միացած հրեշտակային զորքերին եւ ձայնակցելով երեքսրբյան փառաբանությանը՝ երգում են իրենց Արարչի հավերժական փառքը:

«Եւ ահա սրանից յետոյ տեսայ երկնքում բացուած մի դուռ, եւ փողի հնչիւնի նմանուող ձայնը, որ նախապէս լսել էի, խօսում էր ինձ հետ ու ասում» (հմր 1): Այն, որ Երկինքը նյութական հասկացություն չէ, հետեւաբար, նյութական իմաստով դուռ ունենալ չի կարող, հասկանալի է բոլորիս: «Դուռ» բացատրությունն այս պարագայում մատնանշում է այն իրողությունը, թե երկնային ոլորտը թեպետ փակ եւ անթափանցելի է թվում Աստծո հոգեւոր աշխարհին անհաղորդ մարդկանց համար, սակայն ունի հաղորդակցության իր «դուռ»ը:

Նյութեղեն, զգացական եւ շոշափելի աշխարհը միշտ էլ կապվել է աննյութական եւ անիմանալի աշխարհի հետ, միշտ էլ մի անցք եւ մեկից մյուսին անցնելու հնարավորություն կա: Հին Կտակարանի Ծննդոց գրքում պատմվում է եղբոր՝ Եսավի զայրույթից ու վրեժխնդրությունից փախչող Հակոբի մասին, որ Բեթէլում գիշերեց եւ երազում տեսավ Երկրից մինչեւ Երկինք հասնող սանդուղք, որի վրայով բարձրանում ու իջնում էին հրեշտակները, եւ որի գագաթին կանգնել էր Տերն Ինքը, եւ Հակոբն արթնանալուց հետո մտածեց, թե այդ վայրը «Երկնքի դուռն է» (Ծն 28:17):

Աստված այդ ձեւով հայտնում էր, թե Ինքն աշխարհից հեռու եւ մարդկանցից կտրված չէ, այլ հետաքրքրվում է նրանցով եւ նախախնամում նրանց, եւ փոխադարձաբար՝ Նրան փնտրող եւ ճանաչել

ցանկացողները միշտ էլ Աստծուց հայտնություն են ստանալու: Աստված Իր խորհուրդների վարագույրը երբեմն-երբեմն բարձրացնում է հատուկ հայտնության համար: Սուրբ Ստեփանոս նախասարկավագը հրեական ատյանի առջեւ տված վկայության վերջում, Սուրբ Հոգով լցված, աչքերը բարձրացրեց դեպի երկինք եւ տեսավ Աստծուն՝ Իր ամբողջ փառքով, ինչպես նաեւ Աստծո աջ կողմը կանգնած Հիսուսին:

Նա ասաց. «Ահա տեսնում եմ երկինքը բացուած եւ Մարդու Որդուն, որ կանգնած է Աստուծոյ աջ կողմը» (Գրծ 7:55-56): Քրիստոս Ինքը կանխավ հայտնել էր Իր առաջին աշակերտներին. «Վստա՛հ եղէք, պիտի տեսնէք երկինքը բացուած եւ Աստուծոյ հրեշտակներին՝ Մարդու Որդու վերեւում բարձրանալիս եւ իջնելիս» (Հհ 1:51):

Անշուշտ, այստեղ տեսիլքը նույնը չէ, սակայն նույնն է կոչողը, ում ձայնը Հովհաննես առաքյալը նմանեցնում է փողի հնչյունին (տե՛ս 1:10-րդ համարը եւ բացատրությունը):

«Ելի՛ր այստեղ, եւ Ես քեզ ցոյց կտամ, թէ սրանից յետոյ ի՛նչ է պատահելու» (հմր 1): Ինչպես Աստված Մովսեսին հրավիրեց Քորեբ՝ «Աստծո լեռը» բարձրանալ, որպեսզի Աստծո Օրենքի ամբողջությունն ստանա, եւ որպեսզի Աստված նրան ցույց տա երկնային ճշմարտությունները, որոնց նմանը ժամանակավորապես հաստատելու էր նաեւ Երկրի վրա՝ Իր ժողովրդի մտքում դրանք պատկերելու իբրեւ ապագա իրականությունների, «գալիք նոր կարգերի ստուերը» (Եբր 10:1), երկնայինի սպասումով լցնելու նրանց, այնպես էլ հիմա Հովհաննես առաքյալն է հրավիրվում Աստծո մոտ, որպեսզի նրան ցույց տրվի, թե «սրանից յետոյ ի՛նչ է պատահելու» (հմմտ.՝ 1:1 եւ 19):

Նույն այս հրավերին հաճախակի ենք հանդիպում հայտնութենական գրականության մեջ, ուր տեսանողն առհասարակ «Երկինք» է կանչվում կամ վերցվում, որպեսզի աշխարհային-նյութական անմիջական պայմաններից դուրս գա, եւ նրան ցույց տրվեն այն լինելիքները, որոնք երկրավոր պայմաններում նա չի կարող տեսնել:

«Եւ իսկոյն Հոգին վեր բարձրացրեց ինձ» (հմր 2): Բնագրի մեջ նույն այն բացատրությունն է, որ 1:10-րդ համարում թարգմանվել էր «Սուրբ Հոգով լցվեցի»: Երկու արտահայտությունների միջեւ տարբերություն չկա, եթե «վերանալ»ը նյութական կամ մարմնավոր իմաստով չհասկանանք, այլ՝ ներքին, հոգեկան: Երբ մարդ լցվում է Սուրբ Հոգով, բնականորեն հափշտակվում է մտքով եւ հոգով, վերանում, կտրվում է մտածողությունից ու պայմաններից եւ հաղորդ դառնում Երկնայինին:

Իսկ այս բարձրացվելը կամ հափշտակվելը կարեւոր է նրա համար, որ կարծեք մենք երկրավոր պայմաններում հաճախ դժվարանում ենք տեսնել այն, ինչ Աստծո կամքն ու ծրագիրն է: Այստեղ վերանալ, Երկրից վեր բարձրանալ խորհրդանշականորեն նշանակում է դուրս գալ մեր սահմանափակությունից եւ հայտնվել այն վիճակի մեջ, ուր առանց մեր մտքի տեսողությունը խափանող արգելքի՝ մեր առջեւ բացված ենք տեսնելու Աստծո ամբողջ ծրագիրը: Եվ հենց դա՛ է ցույց տալիս հեղինակը:

«Այնտեղ՝ երկնքում մի գահ կար, եւ գահի վրայ նստել էր մէկը՝ որի տեսքը յասպիս եւ սարդիոն թանկարժէք քարերի փայլն ունէր» (հմր 2) : Երկնքում Աստծո գահի հիշատակությունը Հին Կտակարանից եկող եւ անդադար կրկնված տվյալ է, որով շեշտվում է Աստծո տիեզերական թագավորությունը (տե՛ս, օրինակ, Սղ 47:7-8: Հմմտ.՝ Սղ 45:6, 93:2 եւ այլն): Իսկ գահին նստողը Հայր Աստված է:

Շատ հետաքրքրական, թերեւս ոմանց համար էլ տարօրինակ է, որ տեսանողը՝ Հովհաննես առաքյալը, փոխանակ ուղղակի ասելու, թե գահին նստողն Աստված Ինքն է, նախընտրում է անուղղակի ձեւով ասել՝ «նստած էր մէկը, որի տեսքը» եւ այլն: Այստեղ առկա է նախ հեղինակի անհատական ոճը, որ այս պարագայում յուրահատուկ է Հովհաննես առաքյալին, ինչպես բազմիցս տեսնում ենք նաեւ նրա Ավետարանում (տե՛ս, օրինակ, Հհ 1:15, 3:13-15 եւ 29:34, 8:24 եւ 28, 18:15-16, 19:26, 20:2, 21:7, 20, 23 եւ 24):

Սակայն կա նաեւ մտահոգություն, որը հատուկ է հինկտակարանյան մտածողությանը. Աստվածաշունչը ցույց է տալիս, որ Աստված աննյութ էություն է, իմանալի, բայց ոչ զգալի եւ տեսանելի, «բնակվում է անմատչելի լոյսի մէջ» եւ «մարդկանցից ոչ ոք չի տեսել եւ չի կարող տեսնել» (Ա Տմ 6:16: Հմմտ.՝ Ելք 33:20 եւ այլն): Եվ որովհե-

տեւ անկարելի է տեսնել, նաեւ անկարելի է նկարագրել. ահա թե ինչո՛ւ Հին Կտակարանում եւ հայտնութենական գրականության մեջ Աստված հաճախ պատկերվում է լույսի փայլատակումով միայն, որ ոչ թե Աստծո էության, այլ պարզապես Նրա փառքի նկարագրությունն է: Ի՞նչը կարող է ավելի լավ արտահայտել Նրա ահավոր ու փայլատակող, սակայն միաժամանակ հիանալի եւ սքանչելի փառավորությունը, եթե ոչ հազվագյուտ, ազնվագույն քարերի շլացուցիչ եւ գրավիչ փայլը (հմմտ.՝ Եզկ 1:26-28):

Թանկարժեք քարերը միաժամանակ երկու իմաստ են արտահայտում՝

1. Աստծո էության անտեսանելի եւ անթափանցելի լինելը: Սակայն Աստված ցանկանում է Իրեն հայտնել մեզ, որի համար էլ որդեգրում է տեսանելի ձեւ, նույնիսկ եթե այդ տեսանելիությունը մասնակի եւ աղոտ պատկերացում է, ինչպես այս դեպքում տարբեր գույնի քարերի շողշողալը կամ փայլն է միայն: Այս տեսակի պատկերացումը, անշուշտ, թեպետ աղոտ կերպով, բայց փորձում է ինչ-որ բան թելադրել, եւ մեզ համար կարեւորն այդ թելադրականությունն է:

2. Այդ քարերի փայլն ու գեղեցկությունը եւ կարծրությունը թելադրում կամ արտահայտում են Աստծո գերազանց վեհությունն ու զորությունը, Նրա փառքի անճառելի ճառագայթումն ու գեղեցկությունը, կատարելության ստորոգելիների անբավությունն ու անպատմելիությունը, նախախնամության, մարդասիրության եւ փրկության ծրագրին Իր հավատարմության անշեղ ու անբեկանելի հավերժականությունը, որոնք մարդկային մտածողությամբ ու մարդկային մեր լեզվի համար մնում են աննկարագրելի: Եվ ինչը լեզուն չի կարող նկարագրել, խորհրդանիշերն ու պատկերներն են գալիս փոխարինելու այդ նկարագրությանը:

«Հասպիս եւ սարդիոն»: Հավանաբար անիմաստ չէ քարերի այս տեսակների հիշատակությունը. հասպիսը կանաչ քար է (թեպետ ուրիշ գույն եւս կարող է ունենալ), իսկ կանաչը դալարության, կյանքի եւ կենդանության նշան է, որ այստեղ կարող է Աստծո հավերժության, մշտակենդանության խորհրդանիշ լինել: Սարդիոնը արնագույն կարմիր քար է, որը կարող է Աստծո ահավորության խորհրդանիշ լինել: Առաջինը Նրան ներկայացնում է Իր բուն էության, իսկ երկրորդը՝ աշխարհի հետ հարաբերության մեջ, ինչը Հայտնության գրքում մասնավորաբար Նրա Դատավոր լինելու հանգամանքով է դրսեւորվում իբրեւ Իր ընտրյալների «արյան մերձավոր»: Ուստի եւ Փրկիչը միեւնույն ժամանակ նաեւ «արյան վրեժխնդիրն» է Իր ժողովրդի՝ Եկեղեցու թշնամիների հանդեպ:

«Նրա գահի շուրջ կար մի ծիրանի գոտի՝ զմրուխտի փայլով» (հմմ 3): Անցյալում ծիրանի գոտին Աստծուց Նոյին ցույց տրվեց որպես Իր ուխտի նշան՝ այլեւս ոչ մի անգամ Նա Երկիրը չպիտի բնաջնջի ջրհեղեղով (Ծն 9:12-17), ինչը արտահայտում էր Աստծո ողորմածությունն ու խաղաղությունը կամ հաշտությունը: Այստեղ եւս իմաստը նույնն է. Աստծո գահը, որ Նրա թագավորության ու փառքի խորհրդանիշն է, շրջապատված է ծիածանով, որով նպատակ ունի ցույց տալ, թե այդ թագավորությունը հիմնվել է ողորմածության ու արդարության վրա, թե մարդկանց հետ հաշտություն եւ նրանց փրկությունն ու խաղաղությունն է կամենում:

Աստծո ուխտը ճանաչողներն ու ընդունողները եւ Նրան հավատարիմ մնացողները վստահ են ու ապահով, որ Աստծո խոստումը միշտ ի զորու է իրենց համար, որովհետեւ «Աստուած հաւատարիմ է» Իր խոստումներին (Բ Օր 7:9, Ես 49:7, Ա Կր 1:9, 10:13, Բ Կր 1:18, Ա Թս 5:24, Բ Թս 3:3, Բ Տմ 2:13, Եբր 10:23): Աստված երբեք թույլ չի տա, որ Իր ծառաները կորչեն այս աշխարհում, այլ նրանց կազատի բոլոր փորձանքներից եւ կհանգչեցնի Իր խաղաղության թագավորության մեջ, ինչպես այս երկնային տեսիլքն է պատկերում:

Հետաքրքրական է, որ գահը պատող ծիրանի գոտին նկարագրվում է միայն զմրուխտի կանաչ փայլով, մինչդեռ մենք ծիածանը միշտ էլ գիտենք իր յոթ կամ ավելի գույներով: Այս միագույն նկարագրությունը հավանաբար ցույց է տալիս նախ այդ թագավորության հավիտենական ու անվախճան լինելը եւ երկրորդ՝ նրանով պարգեւվող փրկության հավասար լինելը բոլորի համար (հմմտ.՝ Մտ 20:1-16):

«… Եւ այդ գահի շուրջ կային քսանչորս գահեր, որոնց վրայ նստել էին քսանչորս երէցներ՝ սպիտակ զգեստներ հագած եւ իրենց գլուխների վրայ՝ ոսկէ պսակներ» (հմր 4):

Ինչ է մեզ ներկայացնում 24 թիվը: Հիշենք, որ Հին եւ Նոր Կտակարաններում նույն թիվը կամ խորհրդանշական համարվող որեւէ թիվ կարող է ներկայացվել կրկնապատկումներով կամ բազմապատկումներով: Օրինակ՝ մենք գիտենք, որ 12 թիվը մնայուն կերպով գործածված խորհրդանիշ է՝ ամբողջականություն, կատարելություն նշելու համար: 24-ը պարզապես 12-ի կրկնությունն է:

Այս պարագայում տվյալ կրկնությունը կարող է համարվել իմաստավորված կրկնություն: Հին Կտակարանի ժողովուրդը խորհրդանշվում էր 12 ցեղերով եւ 12 նահապետներով, ինչպես Քրիստոսի ընտրությամբ՝ Նոր Կտակարանի ժողովուրդը խորհրդանշվում է 12 առաքյալներով: Այստեղ 24 երեցները ոչ նահապետներ են, ոչ էլ առաքյալներ, սակայն իրենց միացյալ թվով խորհրդանշում են Աստծո ժողովրդի ամբողջությունը:

Ոմանք նրանց մարդիկ են համարում, ուրիշները՝ հրեշտակային էակներ, որոնք ներկայացուցչաբար կանգնում են Աստծո առջեւ: Սակայն կարող ենք ասել, որ նրանք որոշապես մարդիկ են՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ 5-րդ գլխի 9-րդ համարում (ըստ ձեռագրային տարընթերցվածների մեծամասնության) նրանք Գառանն ուղղված իրենց երգի մեջ ասում են. «Քո արիւնով [մեզ] Աստուծոյ համար գնեցիր»:

Նրանք սպիտակ հագուստներ են հագել, ինչը ցույց է տալիս թե՛ նրանց արդարությունն ու սրբությունը, որ նրանք ձեռք բերեցին իրենց կյանքով, եւ թե՛ աշխարհի վրա նրանց տարած հաղթանակն ու Քրիստոսով շահած փառքը: Մյուս կողմից՝ նրանց սպիտակ զգեստը նաեւ նմանեցվում է քահանայական զգեստին, որ ճերմակ կտավից էր: Նրանք Աստծո շուրջ կանգնող քահանաներ ու միաժամանակ թագավորներ են, որովհետեւ, որպես Քրիստոսի հետ նույնացած արդարներ, իշխում են Նրա հետ, նստել են թագավորական գահերին,

թագավորական ոսկյա թագ են կրում իրենց գլուխներին եւ Աստծո առջեւ ներկայացնում են Աստծո ժողովրդին:

«Այդ գահից ելնում էին փայլատակումներ, ձայներ եւ որոտներ» (հմր 5): Բնագիրը բացատրում է յոթ ջահերի պատկերը, որոնք Աստծո յոթ հոգիներն են, եւ որոնց մենք հանդիպեցինք նաեւ առաջին գլխում՝ Աստծո գահի առջեւ (1:4): Տեսանք, որ յոթ թիվը յոթ տարբեր հոգիների մասին չի ակնարկում, այլ թվերի խորհրդաբանությամբ՝ արտահայտում է Սուրբ Հոգու շնորհների ամբողջ էությունը: Ջահերի «հրաբորբոք» լինելը նույնպես մատնացույց է անում Սուրբ Հոգուն՝ ամբողջական զորությամբ ու ներգործությամբ:

«Գահի առջեւը կար ապակէ ծովի նման մի տարածութիւն՝ բիւրեղի պէս վճիտ» (հմր 6): Բնագիրը չունի «տարածութիւն» բառը, այլ բառացիորեն ասում է՝ «եւ գահի առջեւ՝ ապակեայ ծովի պէս, բիւրեղի նման»: Ապակին ու բյուրեղը թե՛ թափանցիկություն են արտահայտում եւ թե՛ մաքրություն:

1. Առաջին հերթին՝ ապակյա ծովը մի կողմից ցույց է տալիս աշխարհից Աստծո աշխարհի բաժանված լինելը, իսկ մյուս կողմից էլ՝ անբաժան լինելը, մնայուն մոտիկությունը: Աստված հեռու եւ անջատ չէ աշխարհից, այլ մնայուն կապի մեջ է աշխարհի հետ, հետաքրքրվում է աշխարհով եւ նրա նախախնամողն է:

Աստվածային հայացքը կտրված չէ աշխարհից, այլ ամեն ինչ պարզ ու հստակ պատկերվում է Նրա աչքերի առջեւ, որովհետեւ Նրա հայացքն ու իմացությունն ամենաթափանց են. «Եւ չկայ մի արարած, որ Աստուծոյ տեսողութիւնից վրիպի: Նա ամէն բան տեսնում է պարզ ու յստակ՝ իր ամբողջ մերկութեամբ, եւ մենք Նրա՛ն ենք հաշիւ տալու» (Եբր 4:13):

2. Ապակյա ծովը ցույց է տալիս նաեւ, թե Աստծո գահը հաստատվել է սրբության վրա. Նա միայն սրբության մեջ է բնակվում, սակայն դարձյալ այդ սրբությունը չէ, այլ միշտ աշխարհին նայող եւ աշխարհը դեպի Իրեն կանչող սրբությունը, որ Աստծուն դարձող եւ Աստծուն նայող մարդուն մնայուն կերպով հիշեցնում է Նրա կոչը. «Սո՛ւրբ եղէք, որովհետեւ Ես՝ ձեր Տեր Աստվածը, սուրբ եմ» (Ղկ 19:2: Հմմտ.՝ Ա Թես

4:3, Բ Տմ 1:9): Սուրբ Աստված ցանկանում է բնակվել սրբերի մեջ՝ նրանց Իր համար տաճար դարձնելու նպատակով (հմմտ.՝ Բ Թս 1:10, Ա Պտ 3:15, Ա Հհ 4:15):

«Այնտեղ՝ կենտրոնում, գահի շուրջ, չորս կողմից կային չորս կենդանիներ՝ առջեւից ու հետեւից աչքերով լի» (հմր 6): Թեպետ կենդանիների եւ նրանց դեմքերի նկարագրությունը «կենդանի» բառի առնչությամբ կարող է սխալ տպավորություն թողնել՝ մեր մտքում անասունի պատկեր ստեղծելով, սակայն այստեղ բառը նշանակում է «կենդանի էակ»:

Խոսքը, ինչպես հստակ ցույց է տալիս Եզեկիելի (հմմտ.՝ Եզկ 1:6 եւ 10) եւ մանավանդ Եսայու տեսիլքների (Ես 6:2-3) հետ համեմատությունը, վերաբերում է հոգեղեն էակներին, սերովբեներին, որոնք, ըստ երեւույթին, հրեշտակների մեջ հատուկ դիրք են գրավում, որովհետեւ կանգնում կամ թեւածում են Աստծո անմիջական ներկայության ժամանակ եւ Նրա շուրջ:

Ինչպես Աստված Ինքն է «կենդանի էակը», «կենդանի եղողը» կամ «հավիտյանս հավիտենից կենդանի եղողը» (տե՛ս 9-10-րդ համարների բացատրությունը, հմմտ.՝ Հտ 10:6), այնպես էլ այս հոգեղեն արարածներն են «կենդանի» եւ խորհրդանշաբար Աստծո մշտական կենդանության թարգմաններն են:

Սրանք նկարագրվել են «առջեւից ու հետեւից աչքերով լի» արտահայտությամբ, որ երկու կարեւոր իրողություն է նշանակում: Մի կողմից Աստծուն են նայում. մնայուն կերպով իրենց աչքերը սեւեռել կամ հառել են Աստծո վրա, Աստծո ճշմարտությունից իրենց աչքերը չեն շեղում, չեն հեռացնում երբեք այնպես, ինչպես ինքն իրեն Աստծուն նվիրած մարդը պետք է հայացքը մնայուն կերպով հառի Աստծուն: Սակայն միաժամանակ նրանք աչքեր ունեն նաեւ հետեւից, այսինքն՝ դիտում ու տեսնում են նաեւ աշխարհը, տիեզերքը. նրանք ամեն բան տեսնում եւ հաղորդում են Աստծուն, իսկ նրանց՝ աչքերով լի լինելը խորհրդանշաբար ցույց է տալիս, որ նրանց տեսողությունից ոչ մի բան չի վրիպում. կարծեք հենց նույն Աստծո աչքերն են՝ բացված անհուն եւ անսահման տիեզերքի վրա: «Առաջին կենդանին

նման էր առիւծի, երկրորդը՝ եզան, երրորդ կենդանու դէմքը նման էր մարդու դէմքի, իսկ չորրորդ կենդանին նման էր թռչող արծուի» (հմր 7):

Բնականաբար, մեր մտքերում կարող է հարց ծագել, թե ինչո՞ւ հրեշտակները, գեթ նրանցից երեքը ներկայացվում են անասունների կերպարանքով:

Դա Աստվածաշնչում եւ մանավանդ մարգարեական գրականության մեջ ծանոթ խորհրդանշական լեզու է՝ որոշ խորհուրդներ կամ ճշմարտություններ պատկերելու կամ հայտնելու համար: Կենդանական այդ խորհրդանիշերով հաճախ դրսեւորվում է Աստծո ստորոգելիներից կամ հատկանիշներից մեկը՝ գործի մեջ, այսինքն՝ Աստծո փրկության ծրագրում, Աստված եւ մարդ հարաբերության մեջ:

Չէ՞ որ մենք եւս ընդհանրացած գործածությամբ՝ հոտ կամ ոչխար ենք կոչվում Աստծո հետ հարաբերաբար, ով Հովիվն է, Ճշմարիտ Հովիվը, որ Ինքն Իրեն ամբողջապես նվիրում է Իր ոչխարներին: Այդ պատկերով շեշտվում է, որ Աստված նման չէ Երկրի վրա գտնվող վարձկան հովիվներին, ովքեր միմիայն ձեւականորեն են իրենց վրա վերցրել հովվի պաշտոնը: Նա ճշմարիտ, իսկական հովիվ է, ով ամբողջական խնամք, բոլորանվեր գուրգուրանք ու առաջնորդություն է դրսեւորում եւ մեզ՝ Իր ոչխարներին առաջնորդում, պատսպարում ու սնում է, հագեցնում մեր ծարավը, պահպանում ու ամփոփում փարախում, եւ այդ ամենով հանդերձ Նա մեզ շնորհում է նաեւ հավիտենականը ճաշակելու հնարավորությունը:

Նույն ձեւով, օրինակ, Զաքարիայի մարգարեության մեջ երկու անգամ հանդիպում ենք չորս ձիերի, «որոնց Տէրն ուղարկեց՝ շրջելու երկրում» (Զք 1:10: Հմմտ.՝ 6:5): Պարզ ու հստակ է, որ նրանք հրեշտակներ են, եւ բացատրվում է, թե «Դրանք երկնքի չորս հովերի հոգիներն են» (6:5): Հարցնում ենք՝ ինչո՞ւ են ձիերի կերպարանքով նկարագրված: Դա պարզապես առակաձեւ պատկեր է:

Մարգարեները եւ առավել չափով՝ Քրիստոս առակներով էին փոխանցում Աստծո մասին իրենց բերած ճշմարտությունները, որովհետեւ առակի պատկերը շատ ավելի հստակ էր ու թափանցիկ, իսկ

Նրա թելադրած պատգամը շատ ավելի ազդու եւ տպավորիչ էր ժամանակի մարդու համար, քան չոր բացատրությունները: Զաքարիան նույնպես ձիերի պատկերն օգտագործում է փոխաբերական իմաստով: Այդպես է վարվում, քանի որ մարգարեին ժամանակակից մարդու համար թագավորի պատգամը մի տեղից մյուս տեղը հասցնողները սուրհանդակներն էին՝ իրենց սրարշավ ձիերով: Ուստի ձիերի կերպարանքով ներկայացված հրեշտակներն արտահայտում են իրենց պատգամաբեր սուրհանդակի դեր ունենալը եւ այն արագությունը, որի օգնությամբ նրանք յուրաքանչյուր պատգամ անմիջապես հաղորդում են աշխարհին եւ, փոխադարձաբար, մարդկանց վերաբերող լուրերն անմիջականորեն հաղորդում Աստծուն:

Ճիշտ նույն ձեւով Աստծո տարբեր հատկանիշներն են արտահայտում այն չորս կենդանիները, որոնց նկարագրությունը գտնում ենք այստեղ: Նրանց չորս թիվը նույնքան խորհրդանշական ու կարեւոր է, որովհետեւ չորսն աշխարհի չորս ծայրերն ու ամբողջությունն է արտահայտում, ուստիեւ՝ աշխարհի կամ տիեզերականության խորհրդանիշ է: Արդ, այս չորս կենդանիները նախեւառաջ խորհրդանիշն են Աստծո տիեզերականության ու ամեն իշխանության, սակայն, ի մասնավորի, դրանք Քրիստոսի եւ Նրա տարբեր հանգամանքների ու պաշտոնների խորհրդանիշերն են, ինչպես բացատրելու ենք հաջորդ համարում:

«Չորս կենդանիներից իւրաքանչիւրն ունէր վեց թեւ՝ ներսից եւ դրսից աչքերով լի: Այդ կենդանիները գիշեր-ցերեկ անդադար ասում էին՝ Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Ամենակալ Տէր Աստուած, որ էր, որ է եւ որ գալու է» (հմր 8): Կենդանիների նկարագրականը բառացիորեն նման է Եսայի մարգարեի տեսիլքի սերովբեների նկարագրությանը (Ես 6:2-3):

Այնտեղ տեսիլքը ներկայացվում է այսպես. «Այն տարին, երբ մեռաւ Օզիա արքան, տեսայ Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին, իսկ տաճարը լի էր Նրա փառքով: Նրա շուրջ սերովբեներ կային, որոնցից իւրաքանչիւրը վեց թեւ ունէր. երկուսով իրենց երեսներն էին ծածկում, երկուսով՝ իրենց ոտքերը եւ երկուսով էլ թռչում

էին, ձայնակցում էին իրար եւ ասում. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ է Զօրութիւնների տէրը, եւ ամբողջ Երկիրը լի է Նրա փառքով»:

Կանչողների ձայնից դռան բարաւորը վեր բարձրացավ, ու տունը լցուեց ծխով» (Ես 6:1-4):

Սերովբեների երգած երեքսրբյան այս երգը Եսայու մարգարեության մեջ ուղղվել է «Տիրոջ»ը, այսինքն՝ եբրայերեն բնագրային ձեւով, ուղղվել է «Եհովա Աստծուն»: Ո՞ւմ մասին է խոսվում այստեղ՝ Հայտնության գրքի մեջ: Նախքան վերջնական պատասխանը տեսնելը, նշենք, որ Եսայի մարգարեի հիշատակած երեքսրբյան փառաբանության վրա այստեղ փոքրիկ հավելում կա. «որ էր, որ է եւ որ գալու է»:

Այս հավելմանը հանդիպեցինք երկու անգամ (1:4 եւ 8) եւ բացատրեցինք, որ սա Աստծո «Եհովա» անվան («Ես եմ» կամ «Ես Նա եմ, որ է») թեթեւակի ընդարձակումն է եւ վերաբերում է Որդուն՝ Քրիստոսին, որ Իր աստվածության մեջ հավերժական ներկան է, միշտ «էր» եւ միշտ «է»: Սակայն մեր սիրո համար Նա ժամանակի սահմանների մեջ մտավ, մարդացավ եւ պատմության մեջ ներկա եղավ: Նա նաեւ վերստին «գալու է»՝ դատելու համար ողջերին ու մեռելներին:

Որ ճշմարիտ է մեր վերոհիշյալ մեջբերումը, թե Որդին նույն Ինքը՝ Եհովա Աստված է, հաստատվում է նաեւ մեկ այլ կերպ:

Նույն այս Հայտնության գրքի հեղինակը՝ Հովհաննես առաքյալը, իր Ավետարանի 12-րդ գլխում ունի շատ հետաքրքիր խորհրդածություն, որն իրականում Եսայու տեսիլքի մեկնությունն է, եւ ուր ավետարանիչը առանց այլեւայլությունների՝ Հին Կտակարանի Եհովային նույնացնում է Նոր Կտակարանով մեզ հայտնված Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ:

Այնտեղ կարդում ենք. «Թէեւ Յիսուս բազմաթիւ հրաշքներ էր գործել նրանց առաջ, սակայն նրանք չէին հաւատում Նրան, որպէսզի իրականանայ այն, ինչ Աստուած ասել էր Եսայի մարգարէի բերանով.

– Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր տուած լուրին:

Տիրոջ զօրութիւնն ո՞ւմ յայտնուեց»

Նրանք չէին կարողանում հավատալ, որովհետեւ Տերը դարձյալ ասում է Եսայու բերանով. «Աստուած նրանց աչքերը կուրացրեց եւ նրանց մտքերը կարծրացրեց, որպէսզի չլինի, թէ աչքերով տեսնեն եւ մտքով հասկանան ու դարձի գան, եւ ես բժշկեմ նրանց»: Եսային այս խօսքերն ասաց, որովհետեւ տեսաւ Յիսուսի փառքը եւ խօսեց Նրա մասին» (Հհ 12:37-41)

Եսային ե՞րբ տեսավ «Հիսուսի փառքը»: Հին Կտակարանում բազմաթիվ կերպերով ու մարգարեություններով խոսվում է գալիք Մեսիայի կամ Փրկչի մասին, բայց երբեք չի հիշատակվում Նրա «Հիսուս» անունը: Տեսիլքի մեջ մարգարեն «Ամենակալ Տիրոջը» կամ «Զորությունների Տիրոջն» է տեսնում, եւ առաքյալը, մեկնելով մարգարեի տեսածը, ասում է, թե Եսային տեսնում է «Հիսուսի փառքը»: Անխուսափելի է դառնում եզրակացությունը. հստակորեն՝ առաքյալի համար Ամենակալ Տերը (Եհովան) եւ Հիսուս նույնն են:

Այստեղ տրված տիտղոսները նույնպես ցույց են տալիս, որ Որդին Ի՞նքն է Ամենակալ Տեր Եհովան (հմմտ՝ Ամս 3:13 [LXX], 4:13 [LXX]), Տերն ամբողջ տիեզերքի եւ ամբողջ հավիտենականության, Տերը պատմության ու ժամանակի՝ ներկայի, անցյալի ու ապագայի (հմմտ.՝ Ես 41:4):

Բայց վերջին տողը հիշեցնում է Որդու՝ Աստծո Բանի տնօրինությունը, որ Իր աստվածության մեջ նախապես էր, մարմնով եկավ մեզ մոտ, այժմ մարմնով է Երկնքում եւ վերստին գալու է՝ դատելու ողջերին ու մեռելներին: Ավետարանները մեզ ներկայացնում են միջին օղակը, նույն այդ Ամենակալ Աստծո կամավոր խոնարհությունը եւ մարդեղությունը՝ հանուն մեր սիրո եւ մեր փրկության:

Վերադառնալով չորս «կենդանի»ներին, հարց է առաջանում. Ամենակալ Աստծո, այսինքն՝ Քրիստոսի աստվածային փառքն անդադար երգող կենդանիներն ինչո՞ւ են թվով չորսը, այդ թիվը ինչ-որ բան նշանակո՞ւմ է:

Վերն ասացինք, որ դրանք մարմնացյալ Աստվածորդու՝ Քրիստոսի տարբեր հանգամանքների ու պաշտոնների խորհրդանիշերն են.

ամեն մի կենդանի արտահայտում է Քրիստոսի ստորոգելիներից, հատկանիշներից մեկը: Եվ մենք Քրիստոսի պաշտոնների ու Նրան վերաբերող հատկանիշների մասին տեղեկանում ենք Ավետարաններից:

Մենք դարձյալ մեզ հարց ենք տալիս. «–Պատահակա՞ն է, որ եկեղեցին Քրիստոսին ներկայացնող միայն չորս Ավետարան է ընդունել Աստվածաշնչի կանոնի մեջ, թեև դա աստվածային տնօրինություն է՝ հատուկ խորհրդով կատարված: Ինչո՞ւ է Նոր Կտակարանում Ավետարանների թիվը չորս, ոչ թե հինգ, վեց կամ տասը: Փաստորեն անցյալում գրվեցին բազմաթիվ Ավետարաններ, Եկեղեցին մերժեց դրանք, որովհետեւ հարազատ չէին, ուրիշները նույնիսկ աղանդավորական մտածողությամբ էին խմորվել եւ իրականում որեւէ նոր բան չէին ավելացնում եղածին:

Եկեղեցին ընտրեց միայն չորսը, որոնք մենք ունենք այժմ: Դա պարզապես պատահական ընտրությո՞ւն էր: Ես հավատում եմ, որ դա Աստծո կամքն էր, իսկ Աստծո կամքի ու ծրագրի մեջ պատահական ոչինչ չկա, եւ եթե Աստված ընտրեց չորսը, ապա նշանակում է, որ այս չորսը հատուկ կերպով արտահայտում էին Աստծո ծրագրի եւ Քրիստոսի մարդեղության տարբեր կողմերը:

Անմիջապես կարող ենք ասել, որ Ավետարաններում մեծաթիվ կրկնություններ կան. մի շարք հատվածներ նույն բաներն են ներկայացնում մեզ, երբեմն էլ բառացիորեն նույն բաներն են ասում: Այո՛, սակայն դրանով հանդերձ, եթե բաղդատենք դրանք, ապա կտեսնենք, որ իրենց նմանություններով հանդերձ՝ այս չորս Ավետարանները շատ հատկանշական տարբերություններ ունեն, նույնիսկ կարեւոր տարբերություններ, որոնցից ամեն մեկը Քրիստոսի յուրահատուկ դիմագիծն է ներկայացնում մեզ. յուրաքանչյուրի մեջ Քրիստոսը ներկայանում է հատուկ կերպով ու հատուկ կերպարանքով: Այդ կերպարանքը կարող ենք տեսնել միայն խորազնին ընթերցանությամբ եւ քննությամբ: Այսպես, օրինակ՝

1. **Ինչպե՞ս է Մատթեոսի Ավետարանը ներկայացնում Քրիստոսին:** Ուշադիր ընթերցողը եւ քիչ թե շատ պրպտողը տեսնում է, որ ի

տարբերություն մյուս Ավետարանների, այս Ավետարանն սկսվում է մարդեղության խորհրդով: Այս Ավետարանում մենք գտնում ենք Քրիստոսի ծննդյան պատմությունը եւ ազգաբանությունը, ինչը Նրան կապում է Դավիթ թագավորի եւ Աբրահամ Նահապետի հետ:

Երկրորդ՝ տեսնում ենք, որ այս Ավետարանում Հիսուս ներկայանում է որպես Մովսիսական Օրենքի կատարյալ օրինապահ եւ բծախնդրորեն ու ամբողջականորեն կատարող, ինչն ամեն քայլափոխի հիշեցնում է ավետարանիչը՝ մատնանշելով Հին Կտակարանի մարգարեական կանխասացությունների կատարումը: Պատահական է, որ մարգարեական գրությունների ամենաշատ հիշատակությունը գտնում ենք Մատթեոսի Ավետարանում:

Երրորդ՝ այնտեղ տեսնում ենք նաեւ կատարյալ ուսուցչի, վարդապետի ու մարգարեի կերպարը, ով Աստծո խոսքն է ուսուցանում ու պատգամում Իր ժողովրդին: Այդ ամենով հանդերձ Քրիստոսը Իր ժողովրդի կատարյալ կերպարն է եւ, միաժամանակ, Աստծո ծառան ու մարգարեն:

Հաճախ Մատթեոսի Ավետարանի խորհրդանիշը Մարդն է, այլ խոսքով՝ մարդկային դեմք ունեցող «կենդանին», որ Քրիստոսի մեջ մատնացույց է անում Աստծո Որդուն, Ով հանձն առավ խոնարհվել եւ հեզությամբ ու քաղցրությամբ ծառայել մարդկանց փրկության գործին, նաեւ ուսուցանել նրանց:

Ինչպես հրեշտակներն են կոչվել Աստծուն ծառայող հոգիներ (հմմտ.՝ Սղ 103:21, 104:4, Եբր 1:7), այնպես էլ Քրիստոս եղավ Իր ժողովրդի հավատարիմ ծառան, ինչպես Եսայի մարգարեն էր Նրան բնորոշել (հմմտ.՝ Ես 42:1, 52:13 եւ այլն): Ուրեմն՝ մարդու այդ կերպարանքը լավագույնս էր պատշաճում Մատթեոսի ներկայացրած կերպարին:

2. **Մարկոսի Ավետարանի պարագայում** տեսնում ենք, որ այս Ավետարանում մասնավոր սկիզբ եւ ծննդաբանություն չկա: Այս Ավետարանն ամենակարճն է, որի մեջ հատկանշականորեն քիչ են Հիսուսի քարոզները կամ խոսքերը, մինչդեռ, ընդհակառակը, ավելի շատ են Նրա գործերը: Այս Ավետարանում տեսնում ենք գործող Մեսիային, մեկին, ով ազդու եւ զորեղ կերպով է գործում, ում հրահանգը կամ խոսքը գործ է, անմիջականորեն կատարվում է: Նա Իշխան է, Տիրակալ, Թագավոր:

Մարկոսի Ավետարանն ունի ամենակտրուկ մուտքը. Քրիստոսն ուղղակի մտնում է գործունեության դաշտ: Եվ քանի որ Մարկոսի Ավետարանը գրվել է հռոմեացիների համար, ովքեր շատ գործնական մարդիկ են եւ շատ խոսք լսելու սովոր չեն, այլ, ընդհակառակը, նրանք վաճառականներ ու զինվորականներ են, այս Ավետարանում հանդես եկող Քրիստոսը ճիշտ այդ հատկանիշներով է ներկայանում, հետեւաբար՝ ներկայանում է իբրեւ Թագավոր, իսկ թագավորի խորհրդանիշն ընդհանրապես առյուծն է: Առյուծը ներկայացնում է Քրիստոսի թագավորական հանգամանքն ու փառքը:

3. **Երրորդ ավետարանիչը՝ Ղուկասը,** առհասարակ ներկայացվում է Եզի կամ Զվարակի խորհրդանիշով: Եզը մի կողմից հիշեցնում է չարքաշ ծառայությունը, իսկ մյուս կողմից՝ զոհը, որ մեղքերի քավության ու փրկության համար էր ընծայվում Աստծուն, իսկ Աստված առնչվել է քահանայության հետ:

Ղուկասի Ավետարանում մենք իսկապես տեսնում ենք Նրան, Ով եկավ իբրեւ Ճշմարիտ Քահանա՝ համայն մարդկության մեղքերի համար ԻՆՔՆ Իրեն քավության զոհ մատուցելու: Նա, Ով հետաքրքրվեց բոլոր մարդկանցով ու ժողովուրդներով եւ մանավանդ իրենց ժամանակին անտեսված ու լքված խավերով, ինչպես կանայք, մաքսավորները, առհասարակ բոլոր մեղավորները, ավազակները, զրկյալները, աղքատները, արհամարհվածները, այս Ավետարանում գծագրվում է բոլորին գթացող եւ բոլորի համար միջնորդություն անող քահանայի ու զոհի կերպարով:

4. Ի վերջո, չորրորդ «կենդանին»՝ Արծիվը, չորրորդ, այսինքն՝ **Հովհաննեսի Ավետարանի խորհրդանիշն է**: Ինչպես արծիվը հատկանշվում է երկնքի բարձունքներում թռիչքով, այնպես էլ Հովհաննեսն ավետարանիչների մեջ այն անձն է, ով ամենից ավելի շատ է փորձում վերեւից, բարձրից եւ խորությունից դիտել Քրիստոսի անձով մեր առջեւ բացվող խորհուրդը: Նրա ամբողջ Ավետարանն աստվա-

ծաբանություն է, ուր հեղինակը ներկայացնում է Քրիստոսի աստվածությունն ավելի շատ, քան մյուս Ավետարաններում ենք գտնում:

Հովհաննեսի Ավետարանն սկսվում է Քրիստոսի մասին հաստատող խոսքով. «Աշխարհի ստեղծագործութիւնից առաջ գոյութիւն ունէր Բանը: Բանն Աստուծոյ հետ էր, եւ Բանն Աստուած էր» (Հհ 1:1): Մինչեւ վերջին պահը՝ ամեն քայլափոխի հանդիպում ենք Քրիստոսի ճշմարիտ ինքնության վերաբերյալ բացահայտման, որով հայտնվում է ոչ միայն իբրեւ մարդ, այլ նաեւ՝ իբրեւ ԱՍՏՎԱԾ:

Հետեւաբար՝ չորս կենդանիների դիմակները կամ դիմագծերը մեզ են ներկայացնում Քրիստոսի քառյակ հանգամանքները՝

Մարդ = Մարգարե

Առյուծ = Թագավոր

Եզ = Քահանա

Արծիվ = Աստված

Ուստի, պատահական չէ նրանց ներկայությունը գահի եւ Գառան շուրջ, որովհետեւ նրանք Նրան են ներկայացնում, Նրան շրջապատող Նրա խորհրդանիշերն են:

«Երբ կենդանիները փառք, պատիւ եւ գոհութիւն էին տալիս Նրան, որ նստած էր գահի վրայ, Նրան, որ ապրում է յաւիտեանս յաւիտենից, քսանչորս երէցներն ընկնում էին գահի վրայ նստողի առաջ եւ երկրպագում Նրան, որ ապրում է յաւիտեանս յաւիտենից» (հմր 9-10): Նախ անմարմիններն են փառք տալիս Աստծուն եւ ապա մարմնավորները՝ քսանչորս երեցները, որոնք Աստծո ամբողջ ժողովուրդն են ներկայացնում: Նրանք մինչեւ գետին իրենց խոնարհությամբ ու երկրպագությամբ ցույց են տալիս իրենց ամբողջական պաշտամունքն Աստծո հանդեպ:

«Նրան, որ ապրում է հավիտեանս հավիտենից»: Այս բացատրությունն Աստծուն տրված անուն է Աստվածաշնչում (տե՛ս Թվ 14:21 եւ 28, Բ Օր 5:26, 32-40, Հես 3:10, Դտ 8:19, Ա Թգ 17:26, Դ Թգ 19:4, Սղ 42:2, 84:2, Եր 4:2, 10:10, 23-36, Դն 4:34, 6:20 եւ 26, 12:7, Ովս 1:10, Ամս 8:14, Մտ 16:16, 26:63, Հհ 6:58, Գրծ 14:14, Հռ 9:26, 14:11, Բ Կր 6:16, Ա Թս 1:9, Ա Տմ 3:15, 4:10, Եբր 3:12, 9:14, 12:22: Հմմտ.՝

Հտ 10:6), որն արտահայտում է Նրա հավիտենականությունը, մշտնջենականությունը, որովհետեւ Նա հավիտենականության Հայրն է (Ես 9:6): Այդ անունը բազում տարբերակներով երեւում է Հայտնության գրքում՝ ի մասնավորի շեշտելու համար չարի ժամանակավոր գոյության եւ իշխանության առջեւ Աստծո անանց բնությունն ու Նրա թագավորության անսահման ու անվախճան բնույթը: Այդ շեշտն ի հայտ է գալիս երկու համարներում՝ նույն անվան կրկնությամբ:

Հրեշտակների կամ մարդկանց տված պատիվն ի՞նչ կարող է ավելացնել Արարչի գերազանց փառքին ու պատվին: Աստծուն պատվելու միակ կերպը նախ գոհաբանություն ու պաշտամունք ընծայելն է Նրան, բաներ, որոնց կարիքը դարձյալ չունի Աստված, սակայն որոնք երախտագետ սրտի բնական բխում կարող են լինել եւ ապա մեր վայելած շնորհին ուրիշներին հաղորդակից դարձնելը, որ Աստծո անվան ճանաչման ու փառավորման պատճառ է դառնում:

«Քսանչորս երէցները ընկնում էին գահի վրայ նստողի առաջ եւ երկրպագում Նրան, որ ապրում է յաւիտեանս յաւիտենից: Նրանք իրենց պսակները դնում էին գահի առաջ եւ ասում. «Ո՜վ է մեր Տէրն ու Աստուածը, Դու արժանի ես ընդունելու փառք, պատիւ ու զօրութիւն, քանզի Դո՛ւ ստեղծեցիր ամէն ինչ, եւ Քո կամքով ստեղծուեցին ու գոյութիւն ունեն բոլորը» (հմր 10-11):

Նրանք ոչ միայն իրենց խոսքով, այլեւ մանավանդ արարքով՝ պսակները գահի առջեւ դնելով, խոստովանում են, որ առանց Աստծո սիրո, որի անճառելի դրսեւորումն է համայն արարչագործությունը, եւ առանց Նրա անսահման գթության ու ողորմության, փրկագործական ծրագրով մեղավոր մարդկանց հանդեպ ցուցաբերած աներեւակայելի եւ անպատմելի շնորհի՝ ոչ ոք արժանի չի լինելու Աստծո ներկայությամբ կանգնել, ո՛ւր մնաց՝ Աստծո պատրաստած հատուկ փառքն ու երանությունը ժառանգել եւ Քրիստոսին գահակից լինել: Եվ այդ երախտիքն անկարելի է այլ կերպ արտահայտել, եթե ոչ միայն ընդունելով Աստծո կամքն ու ընծայած շնորհը եւ պաշտամունքով խոնարհվել եւ ծառայել Նրան՝ անդադար փառաբանելով:

Դիտարժան է պաշտամունքի մեջ օգտագործված ստորոգելիների թիվը, որ այստեղ երեքն է. 5:12-րդ համարում՝ չորսը, իսկ 5:12-րդ եւ 7:12-րդ համարներում՝ յոթը: Ասել ենք, որ Հայտնության գրքում թվերը շատ կարեւոր դեր ունեն, ինչպես քանիցս տեսնելու առիթ եւս ունեցանք: Յոթ թվի նման երեքը եւս կատարելության խորհրդանիշ է, ինչպես նաեւ կատարելության մեջ՝ միություն: Աստվածությունը երրորդություն է՝ երեք եւ մեկ:

Այստեղ ստորոգելիների թվով երեք լինելն Աստծուն ընծայված պաշտամունքի կատարելությունն է արտահայտում, իսկ այդ պաշտամունքն ընծայված է Հորը, Որդուն (= Գառանը) եւ Սուրբ Հոգուն (= Յոթ Հոգիներին), որոնք միասին են պատկերվում (տես 4:5, 5:6):

Շատ հետաքրքրական է, որ մեր Եկեղեցու հեղինակներից մի քանիսը չորս կենդանիների մեկնությունը կատարելիս չորս Ավետարանները համեմատում են Եդեմից բխող միակ գետից սկիզբ առնող չորս վտակների հետ: Նրանք ասում են, թե այդ գետը Քրիստոս Ինքն է՝ կյանքի ջուրը պարգեւող գետը, որ ավետարանիչների միջոցով բաժանվում է չորս վտակների եւ այդպիսով գնում դեպի աշխարհի չորս ծագերը՝ ավետարանելու եւ նրանց բոլորին առ Քրիստոս բերելու համար (տես, օրինակ, Աշոտ Աբրահամյան, «Անանիա Շիրակացու մատենագրութիւնը», Երեւան, 1944, էջ 243):

Ե ԳԼՈՒԽ

ԿՆՔՎԱԾ ԳԻՐՔԸ ԵՎ ԳԱՌԸ (5:1-14)

«Գահի վրայ նստողի ձեռքում տեսայ մի գիրք՝ գրուած ներսից ու դրսից եւ կնքուած եօթ կնիքներով» (հմր 1): Ինչպես տեսանք նախորդ գլխում, այստեղ էլ համարը հստակ ցույց է տալիս, թե գահի վրա նստողը Հայր Աստված է: Արդեն բացատրվեց, որ անուղղակի արտահայտության այս ձեւը, որպես անհատական նախասիրության ու ոճի խնդիր, հատուկ է Հովհաննես առաքյալին (տես 4:2-րդ համարը եւ բացատրությունը):

«Գիրք» բացատրությամբ անցյալում հասկանում էին պապիրուսի թղթից կամ մագաղաթից ոլոր՝ փոքրիկ գլանի շուրջ փաթաթված: Արեւելքում գործածականը պապիրուսն էր, որի միայն մեկ՝ ներսի կողմի վրա էր հնարավոր գրել, ուր թղթերի «ջիղերը» հորիզոնական էին, մինչդեռ դրսի կողմը գրեթե անկարելի էր գրել, քանի որ «ջիղերը» ուղղահայաց էին: Այստեղ տվյալ գիրքը ներկայանում է երկու կողմից գրված՝ իբրեւ նմանակ Աստծո Օրենքի զույգ տախտակների, որոնք «երկու կողմից էին գրուած» (տես Ելք 32:15) կամ դատապարտության «վայրի» այն «տոմսի», որ Աստծուց տրվեց Եզեկիել մարգարեին (Եզկ 2:9-10):

Բայցեւայնպես, Հայր Աստծո ձեռքում գտնվող այս գիրքը պարզապես Աստծո ամբողջական ծրագրի խորհրդանիշն է, որը կարեւոր մասով կատարվել է, բայց դեռ ունի ապագային վերաբերող փակ մնացած էջեր, որոնք բացվելու են շուտով, այլ խոսքով՝ ի կատար են ածվելու: Այդ ծրագիրն Աստված հայտնել է Իր մարգարեների միջոցով, եւ այդ հայտնությունն ունի երկու կողմ՝

1. Հայտնի կամ արդեն կատարված կողմ:

2. Գաղտնի, իր իմաստով չբացահայտված կամ դեռեւս փակ մնացած կողմ (տես Դն 8:26, 12:4 եւ 9: Հմմտ.՝ Եզկ 12:27). սրա մասին է ակնարկում «գրված ներսից ու դրսից» բացատրությունը:

Անդրադառնալով «կնքուած եօթ կնիքներով» բացատրությանը՝ կարող ենք ասել, որ որեւէ գրքի, մագաղաթի կամ առարկայի վրա դրված կնիքը վավերականության նշան էր, որ միեւնույն ժամանակ ցույց էր տալիս, թե տվյալ իրն ո՛ւմ է պատկանում, եւ միայն նա կարող է բացել: Իսկ յոթ թիվը, ամբողջականության կամ կատարելության խորհրդանիշ լինելով, նշանակում է, թե այդ գրվածքն ամբողջությամբ փակ է մարդկանց առջեւ:

Չկա մեկը, որ գիրքը, այսինքն՝ Աստծո ծրագրի թաքուն էջերը, կարողանա կարդալ ու հասկանալ, մինչեւ որ Հայտնողն Ինքը՝ Քրիստոսը, չբացի եւ չհայտնի, ինչպես Իր մարդեղությամբ կատարեց եւ լրումին հասցրեց այդ ծրագրի փրկագործական ներկա էջը եւ Հարությունից հետո Իր աշակերտներին նույնպես բացատրեց (տե՛ս Ղկ 24:46):

Այս գիրքն Աստծո կնիքներն ունի Իր վրա, այսինքն՝ կրում է կատարյալ ու բացարձակ վավերականության դրոշմը: Սա խորհրդանշում է Աստծո ծրագրի ամբողջականությունը, որի կարեւոր մի մասն արդեն կատարվել է, մեզ ծանոթ է եւ հայտնի: Սակայն դեռ կա կարեւորագույնը: Ինչպես պատմությունն է ընթանում դեպի բարձրակետը, այնպես էլ Աստծո ծրագիրն է շտապում դեպի իր կիզակետն ու լրումը:

Շուտով կգա կատարածը՝ իր զույգ փեղկերով, որոնցից մեկը կբացվի ներկա աշխարհի վրա գալիք հարվածներով, իսկ մյուսը՝ Քրիստոսի երկրորդ գալուստով եւ Երկնքի Թագավորության վերջնական հաստատումով: Առայժմ երկուսն էլ դեռ փակ են եւ ամուր կնքված, սակայն այս տեսիլքը ցույց է տալու, թե մոտ է ժամանակը, երբ կնիքները պիտի բացվեն, իսկ դեպքերն արագ ընթանան դեպի միակ բեւեռը՝ Աստծո ծրագրի ուղղությամբ:

«Եւ տեսայ մի զօրաւոր հրեշտակի, որ բարձրաձայն յայտարարում էր.

«Ո՞վ է արժանի՝ քանդելու գրքի կնիքները եւ բաց անելու այն»: Եւ չկար մէկը ո՛չ երկնքում, ո՛չ Երկրի վրայ, ո՛չ էլ Երկրի ներքեւում, որ կարողանար բացել գիրքը եւ նայել դրան» (հմր 2-3): Հրեշտակի հարցումը բովանդակում է նաեւ պատասխանը: Արարածներից ոչ ոք արժանի չէ գրքի կնիքները քանդելուն եւ բացելուն: Դա Աստծո գիրքն է՝ Իր կնիքով յոթնիցս կնքված, եւ միայն Ինքն իշխանություն ունի կնիքները քանդելու եւ բացելու: Եթե Աստված մարդկանց Սուրբ Հոգիով չհայտնի Իր խորհուրդը, Իր ծրագիրը, ապա մարդկանցից «ոչ ոք չի կարող իմանալ Աստուծոյ խորհուրդները» (Ա Կր 2:11):

Սակայն այստեղ խոսքը միմիայն երկրավոր մարդկանց մասին չէ, այլեւ՝ անխտիր բոլոր արարածների: «Եւ չկար մէկը ո՛չ երկնքում, ո՛չ Երկրի վրայ, ո՛չ էլ Երկրի ներքեւում» բացատրությունն Աստծո ստեղծած բանավոր արարածների եռամասնյա դասակարգումն է տալիս (հմմտ.՝ հմր 13):

Երկնքում եղողները երկնային հոգեղեն արարածները կամ հրեշտակներն են, Երկրի վրա եղողները՝ այս աշխարհի բնակիչներս, իսկ «Երկրի ներքեւում» արտահայտությունն ակնարկում է մեռելների աշխարհը, որ առհասարակ պատկերվում էր որպես Երկրի տակ կամ Երկրից վար գտնվող վայր, որը երբեմն նաեւ «սանդարամետ» է կոչվել (հմմտ.՝ Փլպ 2:10):

Ոչ միայն սանդարամետականներն ու երկրավորներս, այլեւ նույնիսկ հրեշտակները չեն կարող Աստծո գիրքը բացել, ոչ միայն բացել, այլեւ նույնիսկ նայել դրան: Աստծո խորհուրդներն Աստծո էությունն իսկ են, եւ, ինչպես որեւէ արարած, ներառյալ նաեւ հրեշտակները (հմմտ.՝ Ես 6:2), չի կարող նայել Աստծուն կամ տեսնել Նրա էությունը, այնպես էլ որեւէ արարած չի կարող նայել ու իմանալ Աստծո խորհուրդները:

«Ես դառնօրէն լաց էի լինում, քանի որ չգտնուեց մէկը, որ արժանի լինէր բացելու գիրքը եւ նայելու նրա մէջ» (հմր 4): Առաքյալը դառնորեն արտասվում է՝ թերեւս մտածելով, որ քանի դեռ գրքույկի կնիքները քանդող ու բացող որեւէ մեկը չգտնվեց, ուստի Աստծո փրկագործական ծրագրի ամբողջացումն ու Նրա թագավորության հաստատումը դեռ շատ պիտի ուշանան: Մինչդեռ տեսիլքում այդ ձեւական հապաղումը նպատակ ունի ցայտուն դարձնել Աստծո Գառան՝ Քրիստոսի բացարձակ հաղթանակն ու արդեն շահված փրկու-

թյունը, որը մարդիկ եւ հաճախ նույնիսկ Եկեղեցին մոռանում են, բայց ահա գալիս է հիշեցումը:

«Երէցներից մէկն ինձ ասաց. «Լաց մի՛ եղիր. ահա՛ յաղթեց Առիւծը, որ Յուդայի ցեղից եւ Դաւթի սերնդից է. Նա կարող է քանդել եօթ կնիքները եւ բացել գիրքը» » (հմր 5): Հետաքրքրական է տրված պատասխան-բացատրությունը: Իրականում ոչ մի առյուծ չկա, սակայն երեցն ասում է՝ «ահա՛ յաղթեց Առիւծը»: Հաջորդ համարը մեզ ներկայացնելու է գահի մեջտեղում չորս կենդանիներով եւ քսանչորս երեցներով շրջապատված Աստծո Գառանը:

Նախորդ գլխում տեսանք չորս կենդանի էակների, որոնցից ամեն մեկը, ինչպես ասացինք, Քրիստոսի մեկ հատկանիշը եւ հանգամանքը կամ պաշտոնն է հայտնում: Առյուծի դեմք ունեցող կենդանի էակի համար ասացինք, որ ներկայացնում է Քրիստոսի թագավորական հանգամանքն ու փառքը: Ահա այստեղ երեցը նույն այդ թագավորական հանգամանքն ու փառքն է նշում՝ «Առյուծ» կոչելով Աստծո Գառանը:

Այստեղ մեզ ներկայացվում են Քրիստոսի երկու նոր անունները կամ մեսիական տիտղոսները՝

1. **Առաջինը՝** «Առյուծը, որ Հուդայի ցեղից է»: Սա Ծննդոց գրքից է (49:8-10), ուր մարգարեությունը նախ պատմականորեն Հուդայի ցեղը եւ նրանից եկող թագավորությանն է ակնարկում, սակայն իր մեջ ունի մեսիական ակնկալություն եւս («մինչեւ որ գայ Սելովը»), իսկ այդ սպասումն առավել հստակ ու շեշտված եւ արդեն որպես խոստում գտնում ենք Եզեկիելի մարգարեությունում (21:27):

2. **Երկրորդը** «[Նա], որ Դավթի սերնդից է» կամ բառացի՝ «Դավթի արմատից է» արտահայտությունը, Եսայի մարգարեությունից է (11:1 եւ 10): Սա նույնպես վերաբերում էր ապագա թագավորին, եւ Նոր Կտակարանը Քրիստոսի մեջ է տեսնում դրա կատարումը (տե՛ս Հռ 15:12):

Պատահական չէ, որ այստեղ հիշատակվում են Քրիստոսի այս տիտղոսները. դրանք կապ ունեն բուն ասելիքի հետ. «Ահա՛ հաղթեց Առյուծը (…), եւ Նա կարող է քանդել յոթ կնիքները եւ բացել գիրքը»:

Քրիստոս՝ Երկնքի Արքան, Իր մարմնավոր ծնունդով իսկ թագավոր էր՝ որպես ժառանգորդը Հուդայի ցեղի, որից Աստված միշտ խոստացել էր մի իշխան, մի օրենսդիր տալ ժողովրդին (Ծն 49:10) եւ որպես Դավթի սերունդ, որին Աստված անդառնալի երդումով խոստացել էր մնայուն ժառանգորդ տալ Իր արքայական աթոռի համար (Սղ 132:11):

Նա ծնվել էր թագավորելու համար եւ խաչ բարձրացավ, որպեսզի գնա եւ Իր թագավորությունը վերցնելով՝ վերադառնա (հմմտ.՝ Ղկ 19:12): Նա Իր խաչով ու հրաշափառ Հարությամբ «հաղթանակեց», բարությամբ հաղթեց չարին ու չար աշխարհին, հաղթանակ տարավ մահվան հանդեպ, հաղթանակ տարավ մահվան իշխանություն ունեցողի հանդեպ (Եբր 2:14), կապեց Սատանային ու խորտակեց նրա իշխանությունը (հմմտ.՝ Մտ 12:29: Ղկ 10:18, 11:22): Արդարեւ, Աստված «զինաթափ արեց ոգեղէն աշխարհի չար իշխանութիւններին ու պետութիւններին՝ յայտնապէս Քրիստոսի ձեռամբ խայտառակելով ու պարտութեան մատնելով նրանց՝ Նրա Յարութեան ժամանակ» (Կղ 2:15: Հմմտ.՝ Հհ 12:31, Եփ 48): «Նա մեզ ազատեց խաւարի իշխանութիւնից եւ բերեց Իր սիրելի Որդու իշխանութեան տակ» (Կղ 1:13):

«Ապա չորս կենդանիներով շրջապատուած գահի եւ երէցների միջեւ տեսայ մի Գառ, որը կարծես մորթուած լինէր» (հմր 6): Չորս կենդանիները շրջապատել եւ կարծեք իրենց միջեւ շրջանակել են մի Գառ, որ Աստծո Որդին է՝ Հիսուս Քրիստոսը: Նա «գահի մեջտեղում» է: Ի՞նչ է նշանակում այս բացատրությունը, եթե ոչ այն, որ Որդին Հոր հետ բազմած է նույն գահին եւ Նրա հետ կիսում է իշխանությունն ու փառքը:

Նա «կարծես մորթուած լինէր»: Նկարագրության անսովոր ձեւ, որը մարդկային անկատար լեզվով ձգտում է միաժամանակ արտահայտել զույգ իրականություններ՝ թե՛ Գառան ողջ լինելը եւ թե՛ Նրա մորթված լինելը: Առաջինը Նրա աստվածային բնությանը հատուկ մշտակենդանությունը կամ մշտնջենականությունն է, ճշմարիտ աստվածության էական հատկանիշը: Երկրորդը մեր փրկագործությանը

վերաբերող կարեւորագույն իրողությունն է, այսինքն՝ նույն հավիտենական Աստված եկավ մեզ համար պատարագվելու եւ որպես Աստծո Գառ՝ մորթվեց՝ Իր սուրբ արյամբ մեզ մեր մեղքերից լվալու եւ փրկելու համար: Առաքյալը Նրան տեսնում է թե՛ որպես հաղթական թագավոր, Առյուծ՝ Դավթի ցեղից, ով բազմել է Աստծո գահին եւ թե՛ որպես Աստծուն ընծայված կատարյալ Զոհ, համայն մարդկության մեղքերը քավելու համար պատարագված Քավության Զոհ (հմմտ.՝ Ես 53:7, Հհ 1:29):

«Նա ունէր եօթ եղջիւր եւ եօթ աչք, որոնք Աստուծոյ եօթ հոգիներն են՝ ուղարկուած աշխարհի բոլոր կողմերը» (հմր 4): Մեկ համարում երեք անգամ հիշատակվում է յոթ թիվը՝ երիցս շեշտելու ամեն ինչի կատարելությունը, որը հատուկ է Աստծուն: Զուր կլիներ պատկերացնել մի գառ, որ գլխին «յոթ եղջյուր» կամ «յոթ աչք» ունի: Աստվածաշնչում եղջյուրն առհասարակ զորության կամ իշխանության խորհրդանիշ է: Այստեղ կամենում է ասել, թե Գառն իշխանության եւ զորության ամբողջականությունն է, որովհետեւ ներառում է «աստուածային բնութեան լիութիւնը» (Կղ 1:19: Հմմտ.՝ 2:9), իսկ Նրա աչքերը, որոնք ըստ բնագրի բացատրության, «Աստուծոյ եօթ հոգիներն են», խորհրդանշում են թե՛ Սուրբ Հոգու ամբողջական առաքումը ու արած մատակարարումը (հմմտ.՝ 1:4 եւ 3:1-րդ համարները եւ բացատրությունը) եւ թե՛ Նրա ամենատեսությունն ու ամենագիտությունը (հմմտ.՝ Զք 4:10):

«Գառը գնաց եւ գահի վրայ նստողի աջ ձեռքից վերցրեց գիրքը: Հազիւ էր վերցրել, եւ չորս կենդանիներն ու քսանչորս երէցներն ընկան Գառան առջեւ» (հմր 7-8): Մոտենում է բարձրակետը: Դավթի արմատից եղող «Առյուծ»ը, որ հաղթական Գառն է, գնում եւ Հոր ձեռքից վերցնում է գիրքը: Այլ խոսքով՝

1. **Վերցնում է Իր դատական իշխանությունը**, որով պիտի դատապարտի ու հարվածի անխիղճ եւ չզղջացող աշխարհին՝ անօրինությունների համար:

2. **Ստանձնում է Իր թագավորական իշխանությունը**՝ ձեռքն առնելու համար ամբողջ աշխարհի թագավորությունը, «երկաթէ մականով» խորտակելու եւ հզոր բազկով նվաճելու ներկա աշխարհի բոլոր իշխանություններն ու պետությունները եւ հաստատելու Աստծո թագավորությունը, այնքան սպասված «Երկնքի Թագավորություն»ը:

Ահա թե ինչո՛ւ, հազիվ գիրքը վերցրած, Նրա առջեւ է ընկնում երկնավոր արքունիքը՝ որպես հոժարակամ սիրո եւ բացարձակ հնազանդության, գոհունակության եւ պաշտամունքի նշան:

«Նրանցից իւրաքանչիւրն ունէր մի քնար եւ խնկով լի ոսկէ մի խնկաման, որոնք Աստուծոյ ընտրեալների աղօթքներն են» (հմր 8):

Մի պահ անդրադառնանք պաշտամունքը մատուցողներին, այսինքն՝ քսանչորս երեցներին: Նրանցից ոմանք իրենց ձեռքին քնար ունեն, ոմանք՝ խնկով լի խնկաման՝ երկնավոր պաշտամունքին եւ երկնավոր քահանայության բնութագիրը բացահայտող երկու գեղեցիկ խորհրդանիշեր՝

1. Հնագույն նվագարաններից **քնարը** (հմմտ.՝ Ծն 4:21) հնուց ի վեր ընդունված էր գործածել ոչ միայն տաճարներում կատարվող ծեսերի ժամանակ, այլ նաեւ պաշտամունքից դուրս (հմմտ.՝ Բ Թգ 6:5, Ա Մն 15:16 եւ 28, 16:5, 25:6, Բ Մն 5:12, 20:27-28, 29:25, Հոբ 21:12, Սղ 149:3 եւ այլն): Քնարը հաճախ առնչվել է մարգարեության հետ (հմմտ.՝ Ա Մն 25:1 եւ 3): Իր բազմալար կառուցվածքով եւ քաղցրալուր հնչյուններով, քնարը հարուստ եւ հոգեթով, գերերկրային երաժշտություն արտահայտող խորհրդանիշ է, ուստիեւ Աստծո մեծավայելուչ փառքը երգելու, Նրա ստեղծագործությունը փառաբանելու եւ սքանչելի գործերը ներբողելու, սերն ու ողորմությունը պատմելու, շնորհի անպատմելի հարստության անհուն երանգներն արտացոլելու եւ ընձեռած փրկության համար մարդկային սրտի անհուն երախտագիտությունն ու երջանկությունն արտահոսեցնելու իդեալական գործիք է: 15-րդ գլխի 2-րդ համարում տեսնելու ենք մեծ նեղության ժամանակից հաղթական դուրս եկած Աստծո վկաներին, ովքեր բռնել են «Աստծո քնարները»: Այստեղ քսանչորս երեցների քնարների համար նույնը չի ասվել, սակայն գաղափարը վստահաբար նույնն է: Երկնքում չկա երկրավոր որեւէ բան, բացի փրկված հոգիներից, որոնք նույնպես դարձել են Աստծո սեփականը, ուստի եւ՝ երկնային: Ինչպես ա-

սացինք, քնարները խորհրդանիշեր են. Աստծուն փառաբանող արարածներն հրեշտակներ են ճշմարիտ քնարը, որոնք իրենց էության բոլոր լարերով անդադար երգում են Աստծո փառքը:

2. **Խունկը** Աստծո պահանջած պաշտամունքի մեջ միշտ աղոթքներին ընկերակցող տարրն էր եւ խորհրդանշում էր, որպես անուշաբույր ընծա, Աստծո՝ դրանց ըմբռնելը (հմմտ.՝ Ելք 30:7-8, Ա Մն 23:13, Ղկ 1-9): Ընդհանրությունից դուրս գալով՝ այստեղ խունկը բացատրվում է որպես «Աստուծոյ ընտրեալների աղօթքներ»: Այստեղ «ընտրեալների» բառը «սուրբեր» (հունարեն՝ ակիոն) բառի ազատ թարգմանությունն է, որը Աստվածաշնչում բնավ չի վերաբերում հավատացյալների հատուկ խմբի կամ ընտրանու, այլ՝ Աստծո ժողովրդին ամբողջությամբ, այսինքն՝ բոլոր քրիստոնյաներին, բոլոր հավատացյալներին՝ առանց խտրականության՝ նրանց բոլորին համարելով Աստծուց ընտրված (Կղ 3:12, Ա Պտ 1:2, Բ Պտ 1:10, Հմմտ.՝ Հռ 8:33, Ա Թս 1:4):

Եթե քսանչորս երեցների բռնած խնկամաններով մատուցված խունկը սրբերի աղոթքներն են, նշանակում է, թե այդ աղոթքներն Աստծուն մատուցողները քսանչորս երեցներն են: Այս պատկերումն ու բացատրությունը որոշակիորեն վկայում են սրբերի բարեխոսության մասին:

Այս փուլում, երբ Քրիստոս Իր թագավորությունն է վերցնում կամ ստանձնում, սրբերի աղոթքների այս հիշատակությունը սերտորեն կապվել է նույն թագավորության գալստյան կամ հաստատման հետ: Վիլյամ Ռ. Նեուելը (William R Newwell) Հայտնության գրքի այս համարի առիթով արդարորեն ասում է. «Ինչո՞ւ են քնարներն ու խնկով լի խնկամանները, որոնք սրբերի աղոթքներն են (5:8), կապվել Գառան՝ ժառանգության գիրքը վերցնելու հետ: Արդյոք նրա՞ համար, որ սրբերի աղոթքներն իրականացրին այս պատկերը: Մեր Տերն Իր աշակերտներին հրահանգելու՞ էր աղոթել՝ «Թող Քո արքայությունը գա, թող կատարվի Քո կամքը, ինչպես Երկնքում, այնպես էլ Երկրի վրա», եթե նախ՝ չկամենար, որ դա կատարվի, եւ երկրորդ՝ եթե սրբերի աղոթքները կենսական ազդակ չլինեին այս փառավոր արդյունքն ստանալու մեջ:

Հետեւեք, թե ամբողջ Հայտնության գրքում ինչ է ասվել սրբերի աղոթքների մասին: Մի օր անդրադառնալու ենք այն փաստին, որ փրկված ամեն մի հոգին, յուրաքանչյուր սրբի ստացած ամեն մի օրհնությունը, Սատանայի ամեն մի պարտությունը, Աստծո ամեն մի հաղթանակը, ինչպես նաեւ մեր Տիրոջ՝ Թագավորության գիրքը վերցնելու այս վերջնական կատարումը, բոլորն էլ իրականացել են սրբերի աղոթքներով՝ ներշնչված Աստծուց՝ որպես անհրաժեշտ տարրեր Իր մեծ եւ համապարփակ ծրագրի»:

Ոմանք այս աղոթքների մեջ նկատում են արդար վրեժխնդրության այն աղաղակը, որ տեսնելու ենք 6-րդ գլխի 10-րդ համարում: Որքան էլ գրավիչ թվա բացատրությունը, բայցեւայնպես դժվար թե ճիշտ լինի, որովհետեւ արդեն աղաղակող այդ հոգիները, Աստծո խոսքին իրենց հավատարմության համար նահատակված վկաներն Աստծո առջեւ գտնվող զոհասեղանի տակ են ներկայանում (6:9): Եվ եթե արդեն Աստծո հետ եւ Նրա առջեւ են, ապա երեցները կարիք չունեն նրանց աղոթքները միջնորդաբար ներկայացնելու Աստծուն, մինչդեռ երեցները ներկայացնում են այն սրբերի, այսինքն՝ հավատացյալների աղոթքները, որոնք Երկրի վրա են եւ Աստծո փառավոր ներկայության հասած իրենց եղբայրների միջնորդական բարեխոսության կարիքն են զգում:

Տարօրինակ է, որ նորագույն շատ եկեղեցիներ, ընդունելով հանդերձ աստվածաշնչական բացահայտ ճշմարտությունը, թե սրբերը (= հավատացյալներ) կարող են միմյանց համար աղոթք անել, մերժում են երկնավոր սրբերի բարեխոսության հնարավորությունը: Նրանք կամա թե ակամա անտեսում են Քրիստոսի Եկեղեցու անխզելի միությունը՝ երկնավոր Հաղթական եկեղեցին ամբողջապես խզելով երկրավոր Զինվորյալ եկեղեցուց:

Եթե Աստված ընդունում է Երկրի վրա ապրող սրբերի միջնորդությունն ու բարեխոսությունը, ապա ինչո՞ւ չպիտի ընդունի երկրավոր կյանքի իրենց ընթացքը հաղթականորեն ավարտած սրբերի բարե-

խոսությունը: Եթե ես իմ անկատար կյանքով կարող եմ աղոթել ինձ ծանոթ եւ անծանոթ բոլոր եղբայրներիս համար, եւ Աստված վստահեցնում է, թե ընդունելու եւ կատարելու է իմ խնդրանքները, ապա ինչո՞ւ կատարելության հասած ճշմարիտ հավատացյալը չպիտի կարողանա աղոթել Աստծուն եւ իր աղոթքով օգնել Երկրի վրա գտնվող ծանոթ թե անծանոթ որեւէ եղբոր: Արդյոք Երկինք հասնողներն այլեւս մոռանո՞ւմ են Երկիրն ու այնտեղ գտնվող Քրիստոսի Եկեղեցին, իրենց եղբայրներին: Հայտնության գրքի բոլոր երկնավոր տեսիլքները, որոնց մեջ պատկերվում են այդ սրբերը, ճիշտ հակառակն են ասում: Նրանք երբեք չեն մոռացել Երկիրը եւ այնտեղ գործող Եկեղեցին ու իրենց եղբայրներին, որոնց պայքարն իրենց պայքարն է, նրանց տկարացումն ու պարտությունը կսկիծ է իրենց համար, իսկ քաջությունն ու հաղթանակն իրենց հաղթանակն էլ է: Ուստիեւ անդադար աղոթում ու խնդրում են, որ Աստված Ինքն ստանձնի նրանց դատը, խորտակի չարին՝ գործակիցներով հանդերձ եւ շուտով պարգեւի Իր երանական թագավորությունը:

Սրբերի բարեխոսությունը մերժողները կանգ են առնում աստվածաշնչական մեկ համարի վրա ու պնդում են իրենց խոսքը: Այդ համարում ասվում է. «Մէկ Աստուած կայ միայն, եւ մէկ միջնորդ Աստուծոյ ու մարդկանց միջեւ՝ Յիսուս Քրիստոս մարդը, ով Ինքն Իրեն տուեց որպէս փրկագին՝ բոլոր մարդկանց համար» (Ա Տմ 2:5-6): Թեպետ Քրիստոսի միջնորդությանն ու բարեխոսությանը վերաբերող ուրիշ համարներ եւս կան (տե՛ս Հռ 8:34, Եբր 7:25, 8:6, 9:15 եւ 24, 12:2-4, Ա Հհ 2:1), սակայն վերը վկայաբերվածը միակն է, որում Քրիստոսը կոչվում է «մեկ միջնորդ»:

Դժբախտաբար այս համարը հաճախ է չարաշահվել՝ առիթ դառնալով ծայրահեղ մեկնությունների: Շատ աղանդներ այս համարը օգտագործել են Քրիստոսի աստվածությունն ուրանալու համար՝ «Մէկ Աստուած կայ միայն» բացատրության տակ տեսնելով միայն Հորը, իսկ Նրա կողքին Հիսուս Քրիստոսին դիտելով իբրեւ սոսկ «մարդ», մինչդեռ առաքյալն այս վերջին բացատրությամբ շեշտում է Հիսուսի մարդեղությունը՝ առանց երբեք մտքից հանելու Նրա աստվածությունը, մարդեղության վրա դրված շեշտով ընդգծելու համար Քրիստոսի զոհագործության ու մեր փրկության իրականությունը, որը փորձում էին մերժել առաջին դարի գնոստիկական աղանդավորները (տե՛ս Ա Հհ 4:2-3, Բ Հհ 1):

Քրիստոս Իր մարդեղությամբ ու խաչով Հայր Աստծո մոտ դարձավ մեր փրկության միջնորդն ու մնայուն բարեխոսը բոլոր նրանց, ովքեր Իր անվանն ապավինելով՝ իրենց հանձնում են Աստծուն: Հետեւաբար, հարցն իմանալն է, թե առաքյալն այս համարում ճշգրիտ ի՞նչ է ասում, երբ հայտարարում է. «Մէկ միջնորդ [կայ] Աստուծոյ ու մարդկանց միջեւ՝ Յիսուս Քրիստոս մարդը»:

Եթե ճիշտ է, որ Աստվածաշնչի բառերն իրենց իսկական իմաստից չպետք է հեռացնել ու պարպել, այսինքն՝ յուրաքանչյուր բառ իր հատուկ արժեքն ու նշանակությունն ունի, ապա մյուս կողմից պետք չէ ծայրահեղության գնալ եւ անհարկի բացարձակացնել միայն մեկ բառ, որ հաճախ կարող է հարաբերական իմաստ ունենալ, այսինքն՝ գործածված լինել մասնահատուկ նշանակությամբ, այլ ոչ թե այլամերժորեն:

«Մէկ միջնորդ» բացատրության ճիշտ իմաստը գտնելու համար հարկավոր է Հին եւ Նոր Կտակարաններում փնտրել «միջնորդ» եւ «բարեխոս» բառերը, եթե, անշուշտ, դրանք գործածվել են, եւ քննել, թե ինչպե՞ս եւ ի՞նչ իմաստով են գործածվել, որից հետո անհրաժեշտ է նաեւ փնտրել, թե այս երկու բառերի իմաստին համապատասխան ուրիշ բացատրություն կա՞մ Աստվածաշնչում: Հիմնականում կենտրոնանալով Նոր Կտակարանի վրա՝ գտնում ենք հետեւյալը.

1. **«Միջնորդ»** (հունարեն՝ մեսի՛թիս) բառը Նոր Կտակարանում գործածվել է հինգ անգամ, որից չորսը՝ Քրիստոսի համար (Ա Տմ 2:5, Եբր 8:6, 9:15, 12:24), իսկ մեկը՝ Մովսես մարգարեի (Գղ 3:19): Այս վերջինն ասում է, թե Օրենքը տրվեց հրեշտակների ձեռքով եւ մարդու միջնորդությամբ, ուր Մովսեսը որոշապես ներկայանում է իբրեւ միջնորդ Աստծո եւ իր ժողովրդի միջեւ:

2. **«Բարեխոս»** բառը հունարեն երկու տարբեր եզրերի թարգմանությունն է, որոնցից առաջինը գոյական է՝ «փարա՛քլիթոս», որը

նշանակում է՝ մխիթարիչ, օգնական, քաջալերող, զորացնող կամ բարեխոս: Բառը «մխիթարիչ» թարգմանությամբ Սուրբ Հոգուն Հիսուսի տված տիտղոսն է (Հհ 14:16, 15:26, 16:7: Հմմտ.՝ Ղկ 24:49), բայց նույն այդ տիտղոսը «բարեխոս» իմաստով՝ թարգմանվել է Հովհաննես առաքյալի Առաջին ընդհանրական նամակի 2-րդ գլխի 1-ին համարում, որը վերաբերում է Քրիստոսին:

Երկրորդ եզրը բայ է՝ «իփերենթինխանօ», որ նշանակում է միջնորդել, մեկի համար խնդրել, այսինքն՝ բարեխոսել: «Բարեխոսել» իմաստով բառը թարգմանվել է հռոմեացիներին ուղղված նամակի 8-րդ գլխի 26-27-րդ համարներում, որը վերաբերում է Սուրբ Հոգուն եւ ցույց է տալիս, թե Նա մեր աղոթքները հասցնում է Հայր Աստծուն եւ մեր բարեխոսն է:

3. **Բարեխոսելու կամ միջնորդելու** մեկ ուրիշ պարտականություն է ուրիշի համար աղոթելը. մի բան, որի բազմաթիվ օրինակներ է ընծայում Հին Կտակարանը, իսկ ամբողջ Նոր Կտակարանն ուսուցանում է զանազան ձեւերով: Այսպես, ըստ Քրիստոսի ուսուցման՝ Աստծուն հավատացող մարդը պետք է աղոթի իրեն հալածողների ու նեղողների համար (Ղկ 6:28):

Հավատացյալները պետք է աղոթեն միմյանց համար (Բ Կր 13:9, Եփ 6:18, Փլպ 1:4 եւ 9, Կղ 1:3 եւ 9, Բ Թս 1:11, Ա Տմ 2:1-2, Հկ 5:16, Գ Հհ 1:2), հիվանդների համար (Հկ 5:14-15), Եկեղեցու առաքելության եւ հենց իրենց՝ առաքյալների կամ Աստծո պաշտոնյաների համար (Գրծ 13:3, 14:22, Եփ 6:18-20, Կղ 4:3, Ա Թս 5:25, Բ Թս 3:1, Եբր 13:18-19):

Ի՞նչ են մատնացույց անում վերոհիշյալ կետերը. եթե նույն «միջնորդ» եւ «բարեխոս» բառերը կամ հասկացությունները գործածվել են ոչ միայն Քրիստոսի, այլ նաեւ Սուրբ Հոգու, Մովսեսի կամ որեւէ հավատացյալի համար, ուրեմն սխա՞լ է այն, ինչ ասվում է Տիմոթեոսին ուղղված առաջին նամակի 2-րդ գլխի 5-րդ համարում: Ո՛չ:

Սակայն անհրաժեշտ է իմանալ, որ նույն բառերը կարող են գործածվել տարբեր առումներով, ուստի եւ հարկավոր չէ կանխակալ տրամադրությամբ ու հակառակասիրության ոգով մերժել այս

կամ այն բառի գործածությունը, այս դեպքում՝ սրբերի բարեխոսությունը, որը որեւէ ձեւով չի նվազեցնում Հիսուսի միակ միջնորդության արժեքը:

Դիտարկենք հետեւյալ կետերը՝

1. Ըստ Տիմոթեոսին ուղղված առաջին նամակի 2-րդ գլխի 5-րդ համարի՝ Աստծո եւ մարդկանց միջեւ միակ «միջնորդ»ը «Յիսուս Քրիստոս մարդն» է: Իր աստվածությամբ, Նա կատարյալ միջնորդ չէր կարող լինել Աստծո եւ մարդկանց միջեւ, ուստի մարդացավ, որպեսզի, իբրեւ կատարյալ Աստված եւ կատարյալ մարդ, կարողանա Հոր պահանջներն ու մարդկանց կարիքները դեմ հանդիման բերել, հաշտեցնել Իր անձի մեջ եւ որպես քահանայապետ (հմմտ.՝ Եբր 2:17), խաչի վրա Իր պատարագմամբ մեր մեղքերը քավել ու Աստծո հետ մեր հաշտարարը դառնալ (հմմտ.՝ Եփ 2:14-16):

2. Պետք է երբեք չմոռանալ, որ Եկեղեցին Քրիստոսի խորհրդանշական մարմինն է՝ իր Գլխից՝ Քրիստոսից անբաժան (տե՛ս Եփ 1:22-23, 5:23, Կղ 1:18 եւ 24, Հմմտ.՝ Ա Կր 12:12 եւ 27), հետեւաբար, Եկեղեցու եւ սրբերի բարեխոսությունը նույն Իր՝ Քրիստոսի բարեխոսությունն է, ինչպես Սուրբ Հոգու առաջնորդությամբ Եկեղեցու գործունեությունը Քրիստոսի գործունեությունն է (հմմտ.՝ Մտ 16:19, 18:18, Հհ 20:23, Ա Կր 5:4):

3. Քրիստոսի եւ Նրա եկեղեցու կամ սրբերի միջնորդությունն ու բարեխոսությունը տարբեր բնույթի են, հետեւաբար, անշփոթելի: Ինչպես նշեցինք, Քրիստոսի միջնորդությունը՝ Նրա ձեռքով եւ Մարմնի պատարագմամբ, մեզ համար շահած փրկությունն է: Այդ զոհագործությունն անկրկնելի է, մեկանգամընդմիշտ տեղի ունեցած եւ հավիտենական արժեքով (Եբր 9:12 եւ 26-28, 10:10 եւ 14): Հետեւաբար, Քրիստոսի միջնորդությունն ու բարեխոսությունը եւս միանգամընդմիշտ եւ հավիտենական են, անկրկնելի, բայց մնայուն զորությամբ, եւ բացի Քրիստոսից՝ ոչ ոք չի կարող մեզ փրկություն պարգեւել, մինչդեռ սրբերի բարեխոսությունը տարբեր բնույթի է: Նրանք երբեք փրկություն չեն պարգեւում, այլ իրենց աղոթքներով պարզապես Աստծո գործակիցներն են եւ օգնում են իրենց եղբայրներին՝

նրանց մոտեցնելու Աստծուն կամ նրանց փոխարեն օգնություն կամ փրկանքներից պաշտպանություն խնդրելու Աստծուց, կամ որեւէ շնորհք հայցելու նրանց համար, որպեսզի իրենց եղբայրների հավատքն ամրապնդեն (հմմտ.՝ Ղկ 21:36) եւ Աստծո անվան ճանաչման ու առավել փառավորման պատճառ լինեն:

Անհրաժեշտ է այս բարեխոսությունը, թե՞ ավելորդ: Աստված հավատացողներին Իրեն մոտեցնելու, նրանց օգնելու, պաշտպանելու կամ շնորհ պարգեւելու համար արդյոք ունի՞ այս բարեխոսության անհրաժեշտությունը: Այս հարցի պատասխանը կարելի է գտնել՝ նույնպիսի հարցում անելով աղոթքի մասին, որովհետեւ բարեխոսությունն ինքնին Աստծուն ուղղված աղոթք է:

Աստված մեր աղոթքների կարիքն ունի՞. չէ՞ որ նախքան մեր խնդրելը՝ ամեն ինչ գիտի արդեն (Մտ 6:31-32): Սակայն Հիսուսն Իր խոսքով ու գործով ցույց տվեց, թե նույն Ինքն Աստված է մեզանից պահանջում աղոթել (Մտ 26:41, Ղկ 18:1, 21:36: Հմմտ.՝ Հռ 12:12, Եփ 6:18, Կղ 4:1-2, Ա Թս 5:17 եւ այլն):

Արդ, ինչպես որ մենք աղոթում ենք ոչ թե Աստծո համար անլսելի բանը լսելի դարձնելու համար, այլ անդրադառնալու այն անսահման կարիքներին, որ ունենք, եւ որոնք պետք է հոգա նախախնամող Աստված՝ Նրանից սպասելով դրանց բավարարումը, այնպես էլ բարեխոսությունը, ուրիշի համար մեր խնդրանքն ու աղոթքը՝ Աստծո չիմացածն Իրեն իմանալ տալու համար չէ: Աղոթքը հիմնականում մեր սիրո եւ հոգածության բնական արտահայտությունն է, որ ունենք մեր եղբայրների համար (հմմտ.՝ Ա Կր 12:25-26):

Սիրո տրամաբանությունն ու պահանջն է դա, որովհետեւ ճշմարիտ սերը այլասիրությունն է (հմմտ.՝ Ա Կր 13:5), եւ ճշմարիտ Եկեղեցին, որի ներկայացուցիչներն են այս երեցները, պետք է ճշմարիտ սիրո մարմնացում ու կատարյալ հարացույց Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հարազատ պատկերը լինի:

«Նրանք մի նոր երգ էին երգում ու ասում.

– Արժանի ես առնելու այս գիրքը եւ քանդելու կնիքները, քանզի Դու մորթուեցիր եւ Քո արեամբ Աստուծոյ համար գնեցիր մի ժողովուրդ՝ բոլոր ցեղերից ու լեզուներից, բոլոր ազգերից, ժողովուրդներից: Եւ նրանց դարձրիր քահանաների մի թագաւորութիւն՝ ծառայելու մեր Աստծուն:

Նրանք պիտի թագաւորեն Երկրի վրայ» (հմր 9-10):

Սա նոր երգ է, որ երգում են նրանք, եւ մեզ տրվում է այդ երգի մոտավոր բովանդակությունը:

Ի՞նչ է «նոր երգ»ը: Մեր մարդկային հասկացողության մեջ նորը չիմացածն է, չտեսնվածն ու չլսվածը կամ բնավ չգործածվածը, մինչդեռ այստեղ խոսքը արդեն գոյություն ունեցող ինչ-որ բանի նորի եւ, մանավանդ, վերանորոգման մասին է: Հիսուս եկավ՝ հնի փոխարեն նոր վարդապետությամբ հանդես գալու (հմմտ.՝ Մր 1:27, Գրծ 17:19), Հին Ուխտի փոխարեն Նորը բերելու (հմմտ.՝ Ղկ 22:20, Ա Կր 11:25, Բ Կր 3:6, Եբր 8:8 եւ 13) եւ նոր կյանք տալու մեղքով հնացած մարդուն (հմմտ.՝ Բ Կր 5:17, Գղ 6:15), ապաշխարությամբ նրան նորոգելու եւ նոր մարդ դարձնելու (հմմտ.՝ Հռ 12:2, Բ Կր 4:16, 5:17, Եփ 4:23-24, Կղ 3:10, Եբր 6:6), որպեսզի արժանի լինի վերանորոգված ստեղծագործությանը, Նոր Երկնքին եւ Նոր Երկրին (հմմտ.՝ Բ Պտ 3:13: Հտ 21:1) եւ Նոր Երուսաղեմին (հմմտ.՝ Հտ 3:12, 21:2):

Ուր վերանորոգում կա, այնտեղ ամեն ինչ նոր է լինում: Ավելի հստակեցնելով խոսքը՝ ասենք, որ երբ մարդը հին է, ամեն ինչ հին է, երբ մարդը նորոգվում է եւ «նոր արարած» է դառնում, նրա համար եւ նրա շուրջ ամեն ինչ դառնում է նոր: Այդ իմաստով՝ նոր երգը մարդու նորոգության, մարդու փրկության արտահայտությունն է: Կարդացե՛ք ամբողջ Աստվածաշունչը եւ կտեսնեք, որ փրկության երգը միշտ «նոր երգ» է կոչվել (տե՛ս Սղ 33:3, 40:3, 96:1, 144:9, Ես 42:10, Հդթ 15:15): Այստեղ «նոր երգ»ը դարձյալ փրկության երգն է:

Այդ երգն ունի հիմնական չորս տարրեր՝

ա) **«Արժանի ես առնելու այդ գիրքը եւ քանդելու կնիքները»:** Առաջին հերթին նրանք երգում են Գառան արժանավորության մասին, ինչպես նախորդ երգում եւս արել էին: Նա ոչ միայն իրենց Արարիչ Աստվածն է, այլ նաեւ իրենց Փրկիչը, իրենց փրկության համար Իր անձը պատարագած, «մորթված» Գառը, որ դրա համար էլ ար-

ժանի է հավիտենական երախտագիտության, ուստի նրանք ի սրտե եռանդագին փառաբանություն են երգում Նրա համար՝ ներբողելով Նրան:

բ) **«Քանզի Դու մորթուեցիր եւ Քո արեամբ Աստուծոյ համար գնեցիր»:** Տեսանք, որ 1-ին գլխի 5-րդ համարում ասվում էր, թե Քրիստոս Իր արյամբ (այսինքն՝ Իր կյանքը տալով) փշրեց մարդուն կապող ու կաշկանդող մեղքերի ու մահվան շղթաները եւ նրան ազատագրեց Իր աստվածային սիրով ու բերած ճշմարտության գիտությամբ:

«Գնել» բառն այս պարագայում կապ չունի դրամի հետ, թեպետ պահպանում է նյութական իմաստը: Հին Կտակարանի օրենքը սահմանում էր, որ Աստծուն նվիրված անդրանիկ արուները «փրկվեն», այսինքն՝ նրանց համար փրկագին վճարվի եւ հետ գնվեն մահից զերծ կացություն (տե՛ս Ելք 13:13 եւ 15, Թվ 18:15-16): Դա նախապատկերացումն էր մեր փրկության, որ կատարվեց նույն ձեւով: Մենք մեր մեղքերի պատճառով արժանի էինք մահվան, բայց Քրիստոս մեր փոխարեն «մորթվեց», այսինքն՝ Իր կյանքը որպես «փրկանք տվեց»՝ մեր կյանքերի փոխարեն (հմմտ.՝ Մտ 20:28: Մր 10:45, Ա Տմ 2:6, Տիտ 2:14) եւ Իր արյան այդ փրկագնով մեզ «գնեց» ու ազատեց մահվան դատապարտությունից (տե՛ս Գրծ 20:28, Ա Կր 6:20, 7:23, Գղ 3:13, 4:5, Բ Պտ 2:1: Հմմտ.՝ Եփ 1:7, Եբր 9:12): Այս ձեւով Նա Աստծո համար նախապատրաստեց մի նոր ժողովուրդ բոլոր ցեղերից ու լեզուներից, բոլոր ազգերից, ժողովուրդներից, ինչպես որ սկզբից առաջադրել էր Իր հավիտենական ծրագրի մեջ (հմմտ.՝ Ես 49:6):

գ) **«Եւ նրանց դարձրիր քահանաների մի թագաւորութիւն՝ ծառայելու մեր Աստծուն»:** Ինչպես 1-ին գլխի 6-րդ համարում բացատրեցինք, Աստծո փրկագործական ծրագրի վախճանական նպատակն է սա. Հայտնության առաջին պահից Աստված բացահայտեց Իր նպատակը (հմմտ.՝ Ելք 19:6): Աստված ցանկանում էր ունենալ աստվածպետական դրությամբ ղեկավարվող ժողովուրդ, մի ժողովուրդ, որ առաջնորդվեր քահանաներով եւ Երկրի վրա կատարեր Աստծո կամքը:

Հին Իսրայելը չարժանացավ Աստծո կամեցած այդ ժողովուրդը դառնալու կոչմանը, ուստի Աստված Քրիստոսով մի նոր ժողովուրդ կոչեց եւ Իր ծրագիրն իրագործելու համար ընտրեց աշխարհի բոլոր ազգերից ու ժողովուրդներից: Այդ նոր ժողովուրդը դարձավ Եկեղեցին (Ա Պտ 2:5 եւ 9), որը ներկայում մասնակիորեն է «քահանաների մի թագաւորութիւն», սակայն ամբողջապես այդպիսին կդառնա Քրիստոսի երկրորդ գալուստով (տե՛ս 20:6), ինչպես պատկերում է այս համարը:

դ) **«Նրանք պիտի թագաւորեն Երկրի վրայ»:** Աստծո ժողովրդի մեջ են նրանք, ովքեր իրենց կատարելապես նույնացրին Տիրոջ հետ եւ իրենց առաքինի կյանքով հաղթության պսակը շահեցին: Նրանք իրենց անձնվեր ծառայությամբ ու քաջարի վկայությամբ արդեն Քրիստոսի աթոռակից թագավորներ ու դատավորներ են, հաղորդակից եւ բաժնեկից Քրիստոսի իշխանությանը, ճշմարիտ ներկայացուցիչներն Աստծո ժողովրդի (հմմտ.՝ Մտ 19:28, Ղկ 22:30, Բ Տմ 2:12): Նրանք Քրիստոսի Եկեղեցում այդ իշխանությունն ունեն եւ դա ի գործ են դնում այնպես, ինչպես Երկնավոր Եկեղեցու այս տեսիլքն է ցույց տալիս՝ իրենց փառքի աթոռներին բազմած:

«Տեսայ նաեւ եւ լսեցի ձայնը բազում հրեշտակների, որոնք կանգնած էին գահի, չորս կենդանիների եւ երէցների շուրջ: Նրանք տասնեակ հազարներով եւ միլիոններով էին» (հմր 11): Հրեշտակների անհամար գնդերը շրջապատում են անմիջապես գահի շուրջ գտնվող չորս կենդանիներին ու քսանչորս երեցներին: Բոլորը միասին Աստծո արքունիքի եւ Աստծո ընտանիքի անդամներն են: Նրանք միասնաբար բարձրագոչ երգում են Գառան փառքը:

«Նրանք երգում էին բարձր ձայնով. «Մորթուած Գառն արժանի է ստանալու կարողութիւն, հարստութիւն եւ իմաստութիւն, պատիւ եւ զօրութիւն, փառք եւ օրհնութիւն» » (հմր 12): Երեցների փառաբանությանը միանում են հրեշտակները՝ օրհներգելով Գառան արժանավորությունը եւ արտահայտելով երկնավոր գնդերի անհուն ուրախությունը մարդկանց փրկության համար (հմմտ.՝ Ղկ 15:7 եւ 10):

Նրանք բարձրագոչ երգում են մի երգ, որ հավերժորեն հնչելու է Երկնքում՝ հավիտենական օրհնությամբ լցնելով հավիտենականներին: Այդ երգը մնայուն օրհներգություն ու փառաբանություն է, որ հյուսում է Աստծո Գառան ներբողը: Այդ երգով ներբողվում են Նրա՝

1. **Զորությունը** (հունարեն՝ դի՛նամիկա), այսինքն՝ Նրա մշտնջենավոր զորությունը, որը աստվածային բնությանը հատուկ ամենակարողությունն է, ուժի եւ կարողության բացարձակ ըմբռնումը (հմմտ.՝ Մտ 6:13, Հռ 1:19-20)՝ հաճախ «Ամենակալ» անունով կամ տիտղոսով արտահայտված:

2. **Հարստությունը** (հունարեն՝ պլո՛ւտոս), այսինքն՝ Նրա աստվածային փառքի ահարկու մեծության եւ անպատմելի ճոխության (հմմտ.՝ Հռ 9:23, Եփ 3:16), Նրա աստվածային գիտության անչափելի խորության (հմմտ.՝ Հռ 11:33: Կղ 2:2) եւ Նրա ցուցաբերած սիրո, ողորմության ու քաղցրության աներեւակայելի առատաձիր պարգեւները (հմմտ.՝ Հռ 2:4, Եփ 1:7 եւ 18, 2:7, 3:8):

3. **Իմաստությունը** (հունարեն՝ սոֆիա՛), այսինքն՝ Նրա փրկության ծրագրի մեզ անհասկանալի խորունկ խորհուրդը, բայց Նրանով մեզ շնորհված սքանչելի պարգեւը (հմմտ.՝ Հռ 11:33, Ա Կր 1:30):

4. **Պատիվը** (հունարեն՝ թիմի՛), այսինքն՝ այն անսահման երախտիքն ու հարգանքը, պատկառանքը, որ փրկված անձը պարտավոր է եւ ընծայում է Նրան՝ Նրա անձի մեջ ճանաչելով իր Տիրոջն ու Արարչին եւ Նրան հռչակելով ու ճանաչել տալով Երկրի վրա:

5. **Կարողությունը** (հունարեն՝ իսխի՛ս), այսինքն՝ անպարագրելի ուժն ու զորությունը Նրա, Ում համար անկարելի բան չկա (հմմտ.՝ Ծն 18:14, Մտ 19:26, Մր 10:27, Ղկ 1:37, Գրծ 14:16, Հռ 4:21):

6. **Փառքը** (հունարեն՝ դո՛քսա), այսինքն՝ Նրա աստվածային բնությանը հատուկ ահեղափայլ վեհությունն ու մանավանդ սքանչելի գործերի մեծապատվությունը, որոնց մասին պատմում են թե՛ անշունչ բնությունը եւ թե՛ բոլոր կենդանի արարածները (հմմտ.՝ Սղ 19:1, 40:5, 66:2-5, 92:4-5, 111:2-4, 118:17, 145:3-7, Հռ 1:19-20):

7. **Օրհնությունը** (հունարեն՝ էվլոդի՛ա), այսինքն՝ Նրա անվան մշտական օրհնաբանությունը, որ մատուցում են երկնավոր ու երկրավոր արարածները՝ սրբաբանելով Նրան (հմմտ.՝ Ես 6:3, Հտ 4:8):

Այստեղ «ստանալու» բայը չի նշանակում, թե Գառը չունի կարողություն, հարստություն եւ իմաստություն, փառք եւ պատիվ, եւ թե մեկ ուրիշն է Նրան տալու դրանք: Գառան համար դրանք շահված բաներ չեն. Նա հավիտենական Աստված է, համագոյակից Հորը եւ համապատիվ Սուրբ Հոգուն: Նա ի սկզբանե եւ հավիտյանս հավիտենից ունի այդ զորությունը, փառքն ու պատիվը (տե՛ս Հհ 17:5: Հմմտ.՝ Հհ 16:15, 17:10) եւ նույնիսկ Իր մարդեղության մեջ հաճախ ցույց տվեց այդ զորությունը:

«Ստանալու»ն այստեղ նշանակում է մարդկանցից ստանալ, այսինքն՝ մարդկանցից ճանաչվել որպես Ամենակալ Տեր ու Աստված եւ արժանանալ այն փառքին ու պաշտամունքին, որ մարդիկ տալիս են Հորը: Դա էր ասում Հիսուսն Ինքը, երբ Երկրի վրա Իրեն տրված իշխանության մասին խոսելիս հայտարարեց. «Եւ Հայրը ոչ մէկին չի դատում, այլ դատելու իշխանութիւնն ամբողջութեամբ յանձնել է Որդուն, որպէսզի բոլորն էլ պատուեն Որդուն, ինչպէս պատուում են Հօրը» (Հհ 5:22-23):

Նույն ճշմարտությունն է հայտնում Պողոս առաքյալը, երբ Քրիստոսի կամավոր խոնարհության մասին վկայություն է տալիս՝ ասելով. «Դրա համար էլ Աստուած է՛լ աւելի բարձրացրեց Նրան եւ Նրան տուեց այն անունը, որ վեր է բոլոր անուններից, որպէսզի Յիսուսի անուան առաջ ծնկի գան բոլորը, երկնաւորներն ու երկրաւորները եւ սանդարամետականները, եւ ամէն լեզու դաւանի, որ Յիսուս Քրիստոսը «ՏԷՐ» է՝ Հայր Աստծուն փառաւորելու համար» (Փլպ 2:9-11):

Հետեւաբար Գառանն Իր իսկության մեջ ճանաչելն ու փառավորելը, Նրա կարողությանն ու զորությանը ծանոթանալը, Նրա աստվածային փառքի հարստությունը, անսահման գիտության եւ իմաստության խորությունն ու ճոխությունը խոստովանելը նշանակում են՝

1. **Նրան ընծայել փառք ու պատիվ եւ օրհնություն**, որոնց արժանավոր տերն է Նա արդարեւ, եւ, վաղ թե ուշ, բոլոր լեզուները դավանելու են այդ փառավոր ճշմարտությունը:

2. **Պատվել Հայր Աստծո կամքը**, որովհետեւ Հոր կամքն էր ճանաչեցնել Որդուն: Ով պատվում ու փառավորում է Որդուն՝ պատվում

է Հորը եւ փառավորում Աստծո անունը, իսկ «ով չի պատւում Որդուն, չի պատւում եւ Հօրը, որ ուղարկել էր Նրան» (Հհ 5:23):

Վերոնշյալ համարում ներկայացված պաշտամունքը հատկանշական է նաեւ նրանով, որ Գառանը տրվում են յոթ ստորոգելիներ, որոնք թվարկեցինք վերեւում, եւ որոնք մատնացույց են անում Նրան ընծայված պաշտամունքի կատարյալ լինելը: Նույնը տեսնելու ենք նաեւ 7-րդ գլխի 12-րդ համարում, ուր հավասարապես նույնպիսի պաշտամունք է ընծայվում թե՛ Հայր Աստծուն, թե՛ Գառանը:

«Եւ լսեցի, որ երկնքում, Երկրի վրայ, Երկրի ներքեւում եւ ծովում գտնուող բոլոր արարածներն ասում էին. «Գահի վրայ նստողին, ինչպէս նաեւ Գառանը՝ օրհնութի՛ւն, պատի՛ւ, փա՛ռք ու զօրութի՛ւն յաւիտեանս յաւիտենից»:

Չորս կենդանիները պատասխանում էին՝ «Ամէն»: Եւ երէցներն ընկան նրա առջեւ եւ երկրպագեցին» (հմր 13-14):

Առաջին հերթին տեսանք, որ Աստծո փառքը երգում էին չորս կենդանի էակները եւ Երկրավոր ու Երկնավոր Եկեղեցին ներկայացնող քսանչորս երեցները (հմր 8): Այնուհետեւ օրհներգությամբ նրանց են միանում բոլոր հրեշտակները (հմր 11): Իսկ այժմ երկնավորներին միանում են բոլոր արարածներն անխտիր եւ հավասարապես օրհներգում գահին բազմողին եւ Գառանը, այսինքն՝ թե՛ Հորը եւ թե՛ Որդուն:

Ուշադրության արժանի է «բոլոր արարածները» բացատրությունը, որը հատուկ մանրամասնում է բնագիրը՝ ասելով. «Երկնքում, Երկրի վրայ, Երկրի ներքեւում եւ ծովում գտնուող բոլոր արարածները»: Կենդանիներն ինչպե՞ս կարող են փառաբանել Աստծուն: Կամ զարմանում ենք, երբ լսում ենք, թե Երկրում ու ծովերում աճող բույսերը նույնպես միանում են մարդկանց եւ հրեշտակների՝ Աստծուն ընծայած փառաբանությանը: Աստվածաշունչը ցույց է տալիս աստվածային ամբողջ ստեղծագործության ներդաշնակ միասնությունը:

Մարդն ու աշխարհը նույնը չեն, սակայն անխզելիորեն կապված են: Աշխարհն արարվեց մարդու համար եւ կա հենց մարդու համար: Նրանք այնքան սերտորեն են կապված, որ մարդու անկմամբ եւ

մահվամբ աշխարհը նույնպես դարձավ ապականության եւ փչացումի ենթակա, եւ ինչպես մարդն է փրկության կարոտ, այնպես էլ աշխարհն է փրկության, ապականությունից ազատագրության կարոտ:

«Արդարեւ, ստեղծագործութիւնն ինքը եւս մարդու հետ ակամայ դատապարտութեան ենթարկուեց Աստուծոյ հրամանով, որը, սակայն, նաեւ այն յոյսն էլ տուեց, թէ ստեղծագործութիւնն ինքը եւս ազատագրուելու է փչացումի դատապարտութիւնից՝ Աստուծոյ որդիների ազատութեանն ու փառքին մասնակից դառնալու համար: Եւ գիտենք, որ մինչեւ օրս ամբողջ ստեղծագործութիւնը հեծում է երկունքի ցաւով՝ այդ ազատագրութեանը հասնելու համար» (Հռ 8:20-22):

Այժմ վերջնական ազատագրության եւ փրկության ավետիսն է հնչում երկնքում, եւ այդ ավետիսին ուրախակից են դառնում բանական եւ ոչ բանական բոլոր արարածները, ամբողջ արարչագործությունը:

Փառաբանության բովանդակությունը գրեթե նույնանում է նախորդող երգի բովանդակությանը. Հորը եւ Որդուն հավասարապես են ընծայվում «օրհնութիւն, պատիւ, փառք ու զօրութիւն»: Տարբերակիչ միակ եզրը վերջինը, այսինքն՝ «զօրութիւնն» է: Թեպետ հայերենում այս ստորոգելին նորություն չէ, որովհետեւ նախորդ շարքում եւս հանդիպում ենք նույնին, սակայն, ըստ բնագրի, գործածված բառը տարբեր է: Այնտեղ «զօրութիւն» է թարգմանվել «դի՛նամիս» բառը, մինչդեռ այստեղ ունենք «կրա՛տոս» բառը, որն արտահայտում է Աստծո տիրությունը եւ ունեցած բացարձակ տիրապետությունը Իր ձեռագործ ամբողջ տիեզերքի վրա:

Դարձյալ տեսնում ենք, որ այստեղ օրհնաբանությունը միայն չորս ստորոգելիներ է պարունակում: Թվերի մասին մեր պատկերացմանն անդրադառնալով՝ ասացինք (տե՛ս Ներածությունը եւ 4:6-7-րդ համարների բացատրությունը), որ չորսն աշխարհի ամբողջության, ուստի եւ ինչ-որ երեւույթի տիեզերական խորհրդանիշն է: Հետեւաբար, այստեղ օրհնաբանությունն արտահայտում է թե՛ պաշտամունքի համաշխարհային նկարագիրը եւ թե՛ Աստծո Գառան տիեզերականությունը կամ ամենիշխանությունը:

Այս համարները նաեւ պատկերացում են տալիս երկնային արքունիքի կարգավորման մասին, որի պատկերն ու նմանությունն է Եկեղեցին Երկրի վրա, ինչպես որ Վկայության Խորանի կամ տաճարի կարգավորությունը՝ Հին Կտակարանում: Արդարեւ՝

1. **Այդ կարգավորությունը**, ինչպես մատնանշում է բնագիրը, նախ երեւում է նրանց դասավորությունից: Այդ դասավորության մեջ ուշագրավ է Եկեղեցին ներկայացնող քսանչորս երեցների նախապատիվ դիրքը հրեշտակներից առաջ:

Նրանք, իբրեւ Քրիստոսի գահակիցներ եւ թագավորակիցներ, նստել են գահերի վրա, մինչդեռ հրեշտակներն այդպես չեն ներկայանում: Դա Աստծո ծրագրի՝ մարդուն վերաբերող հիանալի ու ահավոր էջն է, որի համար սաղմոսերգուն հայտնում է իր հազարհուր զարմանքն ու պատկառանքը (հմմտ.՝ Սղ 8:4):

Աստված Իր պատկերով ու նմանությամբ ստեղծեց մարդուն (Ծն 1:16), նրան օժտեց բանականությամբ ու աստվածային շնչով (Ծն 2:7), նրան պսակեց փառքով ու պատվով եւ ամեն ինչ ենթարկեց նրա իշխանությանը (Սղ 8:5-6), նույնիսկ մեղանչումից հետո նրան սիրելու եւ նրան անկումից փրկելու ծրագիրը չփոխեց, այլ հանուն նրա սիրո՝ նրան անկումից փրկելու ու բարձրացնելու համար հանձն առավ մարմնանալ ու մարդանալ, Ինքն Իրեն պատարագել խաչի վրա եւ նրան փրկելուց հետո տալ ի սկզբանե նրան վերապահված դիրքը՝ որպես Աստծո ժողովուրդ եւ Նրա ընտանիքի անդամ (Եփ 1:44-45, 2:19, Ա Պտ 2:9), որպես աթոռակից իշխան՝ կարգված ամբողջ ստեղծագործության վրա:

Դրանով մարդուն տրվեց ոչ միայն հողեղեն արարածներին, այլեւ նույնիսկ հոգեղեն էակներին՝ անհնազանդ հրեշտակներին դատելու իշխանությունը (տե՛ս Ա Կր 6:3: Հմմտ.՝ Բ Պտ 2:4, Հդ 6): Ահա թե ինչո՛ւ նաեւ մարդիկ են նախապատիվ Աստծո պաշտամունքի մեջ որպես Արարիչ Աստծո հանդեպ իրենց անսահման երախտագիտության մարմնացում:

2. Կանխավ ասացինք, թե **նույն կարգավորությունը հայտնվում է նաեւ Աստծուն ընծայված պաշտամունքի մեջ**: Նախ՝ օրհնություն

են տալիս չորս կենդանիներն ու երեցները, որոնք երկնավոր հրեշտակների եւ Երկրավոր Եկեղեցու ներկայացուցիչներն են: Ըստ այնմ էլ, ըստ պատվի, նրանք առաջինն են գալիս, այնուհետեւ նրանց ձայնակցում են հրեշտակներն ու երկրավոր բոլոր արարածները (հմր 13):

Երբ Աստված Ինքը Մովսեսի ձեռքով սահմանում էր Իր ժողովրդին ընծայելիք պաշտամունքը, Սինա լեռան վրա նրան ցույց տվեց Վկայության Խորանի ու պաշտամունքի նախօրինակը եւ հրահանգեց, որ Մովսեսն ամեն ինչ տնօրինի այնպես, ինչպես տեսավ լեռան վրա (Ելք 25:8-9 եւ 40, 26:30, Գրծ 7:44, Եբր 8:5): Այդ պաշտամունքն ուներ իր կարգավորությունը՝ քահանայապետ եւ քահանաներ, սպասարկողներ եւ հավատացյալ ժողովուրդ:

Ինչպես ցույց է տալիս համեմատությունը, երկնավոր արքունիքի ճշմարիտ պատկերացումն էր դա: Եվ առաքյալներն ու նրանց հաջորդները նույն պատկերով կարգավորեցին Քրիստոսի Եկեղեցու պաշտամունքը, որպեսզի Երկրի վրա Եկեղեցին դառնա Երկնավոր Եկեղեցու կատարյալ նմանությունը:

3. **Կարգավորությունն ընդգծում է նաեւ Քրիստոսի Եկեղեցու միությունը:** Եկեղեցին ընդգրկում է ոչ միայն երկրավորներին, այլ նաեւ երկնավորներին, այսինքն՝ հրեշտակներին եւ այս աշխարհից արդեն բաժանված ու Քրիստոսին միացած բոլոր ննջեցյալներին, որոնք, անխտիր, Քրիստոսի մեկ եւ միակ հոտի անդամներն են (հմմտ.՝ Կորած ոչխարի առակը):

Այս երկուսի միջեւ խզում կամ բաժանում չկա: Կա մեր երկնավոր ոլորտի անտեսանելիության ստեղծած միջոցը, որ սակայն խրամատ կամ վարագույր չէ: Երկնավոր Եկեղեցու հետ մեր կապն ու հաղորդակցությունն անմիջական են ու մնայուն, եւ դրանո՛վ ենք վայելում Քրիստոսի մեկ եւ նույն հոտի անդամակցությունը:

4. Կարգավորյալ այս պաշտամունքը մեզ հիշեցնում է մի կարեւոր ճշմարտություն մեր մասին. **Քրիստոսի մեզ սովորեցրած Տերունական աղոթքը** «Թող կատարուի Քո կամքը» մաղթանքից հետո ունի շատ կարեւոր բացահայտում՝ «որպէս յերկինս եւ յերկրի» («ինչպես Երկնքում, այնպես եւ Երկրի վրա»): Երկինքը պատկերն ու ու-

ղեցույցն է այն կերպի, որ մենք պետք է որդեգրենք Երկրի վրա: Երկնքում լիովին գործադրվում է Աստծո կամքը, եւ մենք եւս պարտավոր ենք անել նույնը: Այնտեղ՝ Երկնքում, կատարյալ պաշտամունք է մատուցվում: Մենք Երկրի վրա այդ երկնավոր կատարյալ պաշտամունքի նմանությունը պետք է որդեգրենք, որովհետեւ այդ պաշտամունքը եւս Աստծո կամքի կատարումն է:

Ճշմարիտ պաշտամունքը ծես եւ արարողություն չէ, սակայն ոչ էլ՝ զոհ կամ ծոմապահություն, այլ խոնարհ ու բացարձակ հնազանդություն է Աստծո կամքին, որ մեզ եւ աշխարհին գերագույն բարիք է կամենում՝ բոլորիս ընդգրկելու համար խաղաղության ու սիրո Իր թագավորության մեջ: Եվ այդ թագավորության պատկերն է, որ մեր առջեւ բացում է երկնային այս տեսիլքը՝ մեզ մղելով Աստծո կամքի կատարմանը, որ ճշմարիտ փրկության եւ աստվածանմանության իսկական, կատարյալ ուղին է:

Զ ԳԼՈՒԽ

Ա. Հայտնության գրքի 6-10-րդ գլուխներով ներկայացվում են վերջին նեղությունը կանխող ժամանակի տարբեր կողմերը՝ որոշակի փուլերով, որոնք մեզ չեն ներկայանում ժամանակագրական պարտադիր հաջորդականությամբ: Թվում է, թե որոշ երեւույթներ կրկնում են միմյանց, կարծեք մեկը մյուսի ընդարձակումն է, թեպետ, մեր կարծիքով, կրկնություններ չեն. դրանք, հավանաբար, նույն երեւույթի տարբեր դրսեւորումներն են՝ պարզապես հավելյալ լուսաբանություն տալու համար:

Հայտնողն Ինքը՝ Քրիստոս, ցանկանում է պատկերացում տալ գալիք այն հատկանշական ժամանակի մասին, երբ ամբողջ աշխարհը մատնված կլինի խռովության, տագնապի եւ անձկության: Թվում է, թե մեր առջեւ գծվում են սարսափի պատկերներ, սակայն միաժամանակ մեզ ցույց են տրվում Երկինքն ու Երկրի պատկեր Երկրավոր Եկեղեցին, ուր թագավորում է Քրիստոսը, եւ ուր իրենք՝ «այս չար աշխարհից» իրենց անջատած ընտրյալները, Քրիստոսի հետ են եւ հաղորդ Նրա թագավորության փառքին՝ վայելելով մի խաղաղություն, որ մարմինների ապահովությունն ու հանգստությունը չէ, քանի դեռ նրանք մարմնապես ենթակա են հալածանքի, այլ հոգու անդորրը եւ ուրախությունը, որոնք արտացոլվելու են նրանց փառաբանական երգերի, օրհներգությունների մեջ:

Բ. Այս յոթ կնիքների բացումով սկսվում է բացվել Աստծո դատաստանների կծիկը: Սակայն այս պահից սկսած՝ անհրաժեշտ են որոշ հավաստիացումներ, որպեսզի լուսաբանություն եւ առավել ճշգրիտ պատկերացում տրվեն թե՛ գրքի կառուցվածքի եւ թե՛ ներկայացվածի մասին: Փաստորեն մենք ունենք երեք յոթնյակների շարք: Դրանք են՝

ա) **Յոթ կնիքները** (6:1-8:1)

բ) **Յոթ փողերը** (8:2-11:19):

գ) **Աստծո բարկության յոթ անոթները** (15:5-16:21):

Ճիշտ կլինի այդ շարքի առիթով մի քանի հաստատումներ անել՝

1. **Հայտնության գրքի ամբողջ միջին բաժինը** (Դ եւ Ե մասերը), որ ամենաընդարձակն է (6-18-րդ գլուխներ), կառուցվել է այս երեք շարքերի համաձայն: Յոթերով կազմված լինելն ինքնին ցույց է տալիս, որ դրանցով ներկայացված երեւույթները մասնակի իրողություններ չեն, այլ վերաբերում են ամբողջ աշխարհին: Դրանք համայն մարդկությանն ուղղված պատգամներ են՝ իրենց զույգ կողմերով՝ ազդարարությամբ կամ ավետիսով, դատապարտության կամ փրկության պատկերացումներով:

2. **Այս երեք շարքերը միմյանցից բաժանված չեն.** դրանք նմանվում են իրար ագուցված շղթայի, որովհետեւ առաջին շարքի (կնիքների) վերջին օղակը միաժամանակ երկրորդ շարքի (փողերի) սկիզբը կամ առաջին օղակն է, նույնպես եւ երկրորդ շարքի վերջին օղակը միաժամանակ երրորդ շարքի (անոթների) սկիզբը կամ առաջին օղակն է[1]:

3. **Երեքն էլ ունեն բովանդակության որոշակի նմանություններ.** երեքն էլ հիմնականում մատնացույց են անում Աստծո դատաստանները կամ ամբարիշտ մարդկության դեմ Նրա արդար զայրույթն ու վճռած պատիժները՝ յուրաքանչյուր շարքի հետ նոր եւ ավելի ընդարձակ տարողություն ու ավելի խտացած գույներ ստանալով: Դրանք որքան էլ կենդանի մանրամասնություններով ներկայացնեն մարգարեների այնքան անգամ ծանուցած «Տիրոջ ահեղ օրը», այնուամենայնիվ, ինչպես քանիցս շեշտելու առիթ եղավ, Հայտնության հեղինակի իսկական նպատակն ընթերցողի հոգին զարհուրելի դատաստանների սարսափով լցնելը չէ. Հայտնության գիրքը յուրաքանչյուր ընթերցողի պետք է փոխանցի միայն առարկայական իրականության խորաքանդակ պատկերը, որը խորքի մեջ այլ թելադրանք ունի:

4. Յուրաքանչյուր քայլափոխի ընդգծելով Աստծո զայրույթի կամ վրեժխնդրության ահավորությունը՝ **հեղինակը ցանկանում է ընթերցողներին մղել անմիջական եւ անհետաձգելի ընտրություն կատարելու.** «Մարդ չի կարող երկու տիրոջ ծառայել» (Մտ 6:24):

Հակոբոս առաքյալն ասում է. «Անհաւատարիմ մարդի՛կ, չգիտէ՞ք, որ աշխարհի հետ բարեկամութիւն անել՝ նշանակում է թշնամութիւն անել Աստուծոյ դէմ, որովհետեւ ով ուզում է բարեկամ լինել աշխարհին, ինքն իրեն թշնամի է դարձնում Աստծուն» (Հկ 4:4): Միաժամանակ ծառայել թե՛ Աստծուն եւ թե՛ Աստծուն հակառակորդ Գազանին՝ անհնար է, նաեւ հնարավոր չէ ենթարկվել Գազանին ու նրա կնիքն ունենալ ճակատին եւ միաժամանակ հավակնել Աստծո հետեւորդը լինել:

Աստծուն բարեկամ լինել ցանկացողը պետք է հեռանա անհավատ ու մեղավոր աշխարհից, հրաժարվի Գազանից, նրա պահանջած գործերից եւ կամքը կատարողներից եւ շրջվի միմիայն դեպի Աստված եւ Նրա լույսը, կատարի Նրա կամքը, նույնիսկ եթե այդ քայլը իրենից պահանջի գնալ գերագույն զոհողության:

5. Ավելի հատկանշական է, որ **երեք շարքերի ավարտն էլ կարծեք նույն վախճանաբանական պատկերն է գծում մեր առջեւ**, այսինքն՝ երեքի վերջում կարծեք ծանուցվում են ներկա աշխարհի վախճանը եւ Աստծո թագավորության ու մեր փրկության գալը: Նույնիսկ նախաճաշակ պատկերացում է տրվում նորոգված ստեղծագործության ու հավիտենական կյանքի եւ արդարներին սպասող երանության մասին:

Բավական է համեմատել, օրինակ, վեցերորդ կնիքի եզրափակումը (7:15-17) 21-րդ գլխի հետ կամ դիտել, թե ինչպես է, որպես Աստծո ծրագրի ամբողջականացում, ընկալվում յոթերորդ փողի հնչելը, երբ Քրիստոսը ձեռքն է վերցնում աշխարհի թագավորությունը (10:5-7 եւ 11:15-17)՝ մի կողմից վարձատրելու Իր ծառաներին, իսկ մյուս կողմից՝ «կորստի մատնելու նրանց, որոնք ապականում են Երկիրը» (11:18) կամ տեսնել, թե ինչպես յոթերորդ անոթի պարունակությունը թափվելու հետ Երկնքի տաճարից ու գահից ձայն է լսվում, որ ասում է. «Եղա՛ւ» (16:17), այսինքն՝ Աստծո ծրագիրն ամբողջացա՛վ, ամեն ինչ իր լրմանը հասավ:

Գ. Այս բաժինը ներկայացնում է Չարի ուժերի գործունեության վերջին եւ աննախընթաց աշխուժացումը (բորբոքումը), որը սկիզբ է

առնում յոթ կնիքները բացելով. այս պատկերը հայտնութենական գրականության մեջ միշտ ներկայանում է որպես աշխարհի պատմության վերջին, վախճանական փուլ:

Ներկա աշխարհում չարի եւ բարու մի պայքար կա, որը աստիճանաբար հզորանում է եւ իր զորեղագույն կերպով ի հայտ է գալու վերջին պահին, երբ տեղի ունենա այս երկուսի բախումը: Կարծեք յոթ կնիքներով այդ վերջնական բախման ժամանակն է սկսվում: Հավանորեն այս փուլում անհրաժեշտ է մի ճշտում անել, որ վերաբերում է ակնարկված վերջին ժամանակի եւ 20-րդ գլխում ներկայացված հազարամյակի առնչությանը:

Հազարամյակը Քրիստոսի երկրորդ գալուստից անմիջապես հետո հիշատակված հազար տարիների թագավորությունն է՝ Նրա ընտրյալների գահակցությամբ, մի հազարամյակ, որի ընթացքում Սատանան կապվելու է անդունդի մեջ: Հայտնության գրքի 20-րդ գլխի 7-րդ համարում կարդում ենք. «Երբ լրանայ հազար տարին, Սատանան ազատ կարձակուի բանտից: Նա կելնի եւ կմոլորեցնի Երկրի չորս կողմերում գտնուող բոլոր ազգերին»: Ասվում է, թե մեկ հազարամյակ անդունդի մեջ շղթայված մնալուց հետո Սատանան կարճ ժամանակվա համար է ազատ արձակվելու եւ կփորձի բոլորին մոլորեցնել, աշխարհի բոլոր ուժերին իր շուրջը հավաքել՝ Աստծո դեմ վերջնական պատերազմի դուրս գալու համար:

Մի պահ այսպես երեւակայենք, եթե հազարամյակը համարենք որպես ներկա ժամանակի ավարտ, ապա կունենանք ժամանակների հետեւյալ հաջորդականությունը՝

ա) **Ներկա ժամանակ:**

բ) **Վերջին նեղության ժամանակ:**

գ) **Երկրորդ գալուստ, մեռելների հարություն, հազարամյակ:**

դ) **Սատանայի արձակում եւ վերջնական բախում, դատաստան:**

ե) **Հավիտենական կյանք:**

Եթե այսպիսին է ներկա գրքի տեսիլքներում ներկայացված իրադարձությունների պատմական ժամանակագրական կարգը, ապա այստեղ կա մի բան, որ մեզ անհամոզիչ եւ անտրամաբանական է

թվում: Դա այն է, որ նեղության ժամանակների ավարտին, հազարամյակն արդեն պետք է շեշտեր Աստծո թագավորության գալուստը՝ վերջնական պատկերով: Այդ թագավորության գալուստից հետո այլեւս ինչպե՞ս է հնարավոր պատկերացնել Սատանայի ժամանակավոր ազատ արձակումը, կրկին մարդկանց մոլորեցնելը, դարձյալ բոլորին Չարի հետեւից տանելու փորձը:

Ասվածները կարծեք հակասում են նախորդներին: Ահա թե ինչո՞ւ են շատերն այս հազարամյակը հասկանում որպես ներկա ժամանակ. ներկա, որը մենք դիտում ենք իր երկու կողմերով կամ տարողություններով՝ Եկեղեցուց ներս եւ Եկեղեցուց դուրս:

1. **Եկեղեցուց ներս ներկան մեզ համար հազարամյակն է**, այսինքն՝ Քրիստոսի թագավորությունը, որ Արքայության ներկա փուլն է: Եկեղեցու հետ հարաբերաբար՝ Սատանան կապված ու շղթայված է, որովհետեւ արտոնություն չունի նրան վնասելու:

Քրիստոս Պետրոսի ճշմարիտ դավանության առիթով ասաց. «Այդ ժայռի վրայ պիտի շինեմ Իմ Եկեղեցին, որպէսզի մահն անգամ իր ամբողջ զօրութեամբ չկարողանայ յաղթահարել» (Մտ 16:18): Ահա թե ինչո՞ւ են Եկեղեցուն ապավինողները Քրիստոսի իշխանության ներքո ապահովություն եւ փրկություն վայելում, ինչպես Նոյի հետ տապան մտնողներն այնտեղ կատարյալ ապաստան գտան եւ փրկվեցին հեղձուցիչ ջրերի հորձանքից:

2. Իսկ **Եկեղեցուց դուրս ներկա ժամանակը ներկայանում է որպես հեթանոս աշխարհի պատկեր**, ուր Սատանան գործում է ազատ ու համարձակ՝ փորձելով մոլորեցնել բոլորին եւ հեռացնել Աստծուց եւ նույնիսկ Աստծո դեմ հանել նրանց:

Այս երկու կողմերը համաժամանակյա իրողություններ են, ներկայի երկու երեսները, որոնք ժամանակագրորեն միմյանցից առաջ կամ հետ չեն, այլ միասնաբար են ներկայանում աշխարհին:

Հովհաննես առաքյալը դրանք համաժամանակյա է դիտում, սակայն նկարագրության մեջ միաժամանակ պատկերել չի կարողանում: Նույնն է այս 6-րդ գլխի համեմատությունը նախորդ երկու գլուխների հետ, որոնք Երկնքի տեսիլքն էին պատկերում: Դրանք չեն վերա-

բերում տարբեր ժամանակների: Չմոռնանք, որ մեր հեղինակը Երկինքն ու Երկիրը դիտում է միասնաբար եւ միաժամանակ, սակայն ինչպե՞ս կարող է միաժամանակ արտահայտել դրանք:

Եթե հարկադրաբար նախ Երկրի մասին խոսի, ապա Երկնքի տեսիլքին հետո պետք է անդրադառնա, եթե Երկնքի մասին խոսի, ապա այդ դեպքում էլ Երկրին ավելի ուշ կանդրադառնա: Մենք կարող ենք երկուսը միասին տեսնել եւ մեր մտքի մեջ ունենալ երկուսը միասին, սակայն խոսքով արտահայտելու պարագայում դժվարանում ենք եւ ստիպված լինում հաջորդական կարգով ներկայացնել այն ամենը, որոնք ըստ էության՝ ներկայանում են միաժամանակ:

Նախորդ գլուխներում ներկայացված Երկնքի պատկերը ժամանակով ավելի ուշ գալիք իրադարձություն չէ, այլ արդեն իսկ Եկեղեցու մեջ Քրիստոսի թագավորությունն է եւ այդ թագավորության իդեալական պատկերը, որ գծվեց, սակայն մյուս կողմից հարկ է ընդունել ժամանակի հետ առնչվող մի փոքրիկ տվյալ:

Ինչպես ասացինք, եթե մենք արդեն հազարամյակի մեջ ենք, եւ եթե, ինչպես հաստատեցինք, այս 6-րդ գլխից սկսյալ եւ յոթ կնիքները բացելով է սկսվում աշխարհի պատմության վերջին՝ վախճանական փուլը, երբ չարի եւ բարու պայքարն իր ուժեղագույն դրսեւորումը կունենա՝ հանգելու համար այս երկուսի վերջնական բախմանը, նշանակում է, թե ամեն դեպքում առկա է նաեւ դեպի բարձրակետ ընթացող ժամանակի տվյալը:

Եթե Հայտնության գիրքը ասում է, որ ներկա հազարամյակի ավարտին (բայց ոչ դրանից հետո) լինելու է Սատանայի արձակումը, եւ դա դեռ գալիք իրողություն է, ապա նշանակում է, որ հազարամյակը տակավին ավարտին չի հասել: Երբ իսկական նեղության ժամանակը գա, Սատանան ազգերին մոլորեցնելու մի վերջին կատաղի փորձ կանի, ինչը պատկերվելու է 11-13-րդ գլուխներում: Այժմ Քրիստոս թույլ չի տալիս, որ նա մոտենա Իր Եկեղեցուն եւ վնասի, սակայն այդ վերջին նեղության ժամանակ Սատանան մի վերջին թույլտվություն կստանա եւ կփորձի վնասել նաեւ Եկեղեցուն, արդարներին, Աստծո բոլոր ընտրյալներին եւ կփորձի մոլորեցնել նրանց,

տանել իր հետեւից ու կործանել նրանց՝ առանց երբեւէ հաջողության հասնելու:

Հին Կտակարանում դրա ամբողջական նախապատկերացումն է Հոբ Արդարի դեմ Չարի մոլեգին եւ հուսահատ պայքարը՝ նրան իր հավատարմությունից շեղելու եւ իր հավատքից հեռացնելու նպատակով, որը սակայն ավարտվում է նրա հավատի դեմ Սատանայի անզորության ու չարաչար պարտության հանդիսադրումով:

Ուրեմն, Սատանայի արձակումը հազարամյակից հետո կատարվելիք չէ, այլ նեղության ժամանակի, որը բացվելու է 5-րդ փողով (9-րդ գլուխ), եւ այժմ այս եւ հաջորդող 7-8-րդ գլուխները ճիշտ այդ ժամանակն են նախապատրաստում: Այստեղ ներկայացված երեւույթների մեջ արդեն հնարավոր է մասնակիորեն տեսնել Չարի արձակած ուժերը, որոնք անսանձ գործում են կամ գործելու են Երկրի վրա:

1. Այս դեպքում կարևորը ոչ թե համարների հաջորդականությունն է, այլ կնիքների, փողերի, անոթների գործածման հերթագայությունը:

ՅՈԹ ԿՆԻՔՆԵՐԸ (6:1-14)

Մեկ անգամ դեպի Երկինք շրջվելուց եւ այնտեղ Աստծո փառքի համար բոլոր արարածների մատուցած գերերկրային պաշտամունքի հրաշագեղ պատկերը մեր աչքերում պահ տալուց հետո էլ չէինք ցանկանա նրանից կտրվել եւ վերադառնալ այս կյանքի բիրտ իրականությանը: Այլակերպության լեռան վրա Քրիստոսի աստվածային ճառագայթող փառքի քաղցրությունը ճաշակած Պետրոս առաքյալի նման մենք եւս կասեինք. «Լաւ է, որ այստեղ մնանք» (Մր 9:5):

Սակայն, ինչպես անհրաժեշտ էր, որ Քրիստոսն ու առաքյալները ժամանակավորապես վերադառնային աշխարհ՝ իրենց առաքելությունը շարունակելու, մենք եւս թեպետ ի սրտե ցանկանում ենք մի վայրկյան առաջ այս աշխարհից դուրս գալ եւ երկնային այդ փառքի մեջ մտնել ու Քրիստոսի հետ լինել (հմմտ.՝ Փլպ 1:23), սակայն տակավին որոշ ժամանակ պետք է համբերենք, մինչեւ որ ամբողջու-

թյամբ իրականանա Աստծո ծրագիրը, Աստծո համբերատարությունը որոշված սահմանակետը հասնի, եւ Նա Իր զորությունը ցույց տա բոլոր արհամարհողներին ու Իր խոսքից չսաստվողներին: Այո՛, Աստծո որդեգրած ճանապարհը հիմա համբերության եւ քաղցրության ուղին է, որով հանդուրժում է մարդկանց ըմբոստ (խեռ) եւ քմահաճ վարմունքն ու անառակությունները՝ փրկագործական նպատակով (հմմտ.՝ Հռ 11:22, Բ Պտ 3:9):

Սակայն համբերատարությունը բնավ տկարության կամ անկարողության նշան չէ, այլ ընդհակառակը՝ զորության: Եվ եթե Աստված այդ ահեղ զորությունն այժմ ցույց չի տալիս, շուտով կգա ժամանակը, երբ Իր բացարձակ կարողությունը, ամենահաղթ զորությունն ու փառքը ցույց կտա բոլոր ընդդիմացողներին՝ երկնավոր լինեն թե երկրավոր, եւ «երկաթէ մականով կհովուի նրանց եւ կմտցնի ամենակալ Աստուծոյ ահեղ բարկութեան հնձանը» (Սղ 2:9: Տե՛ս Հտ 19:15): Այստեղ՝ 6-րդ գլխից սկսած, Նա Հովհաննես առաքյալին հայտնում է, թե հեռու չէ այդ ահավոր դատաստանի ժամը:

Ուստի տեսանողի եւ մեր հայացքը դարձյալ ուղղվում են դեպի Երկիր՝ տեսնելու Աստծո ծրագրի վերջին էջերը: Ինչպես նշվեց վերեւում, միմյանց նմանվող յոթ դատաստանների կամ աղետների երեք շարքերից առաջինն այս գլխում ներկայացվածն է: Հատկանշական է նկատել, որ վեց կնիքների բովանդակությունը մոտավորապես նոյնն է Քրիստոսի Հայտնութենական Ճառում (Մտ 24, Մր 13, Ղկ 21) նշված վերջին ժամանակի նշանների հետ: Քրիստոս բառացիորեն ասում էր. «Ազգերն ազգերի դէմ են կռուելու եւ թագաւորութիւնները՝ թագաւորութիւնների դէմ: Զանազան վայրերում սով, համաճարակ եւ երկրաշարժեր են լինելու, բայց այս ամէնը դեռ երկունքի սկիզբն է» (Մտ 24:7-8):

Համեմատությունն այսպիսին է՝

1. **Պատերազմներ՝** ազգերը ազգերի դեմ, թագավորությունները՝ թագավորությունների դեմ (հմմտ.՝ 1-ին եւ 2-րդ կնիքները):

2. **Սով, համաճարակներ** (հմմտ.՝ 3-րդ եւ 4-րդ կնիքները):

3. **Երկրաշարժեր, խավարումներ, խռովություններ** (հմմտ.՝ 5-րդ եւ 6-րդ կնիքները):

Նույնքան հատկանշական է, որ Քրիստոս այս նշանները չի նույնացնում մեծ նեղության ժամանակի հետ, այլ միայն ընդգծում է, որ «այս ամէնը դեռ երկունքի սկիզբն է», ճիշտ այնպես, ինչպես նրանք են այս դիրքում ներկայանում որպես երկունքի սկիզբ:

«Յետոյ տեսայ, որ Գառը բացեց եօթ կնիքներից առաջինը, եւ լսեցի, որ չորս կենդանիներից մէկը որոտման ձայնով ասում էր. «Արի՛» » (հմր 1): Առաջին կնիքի բացվելու հետ «արի՛» գոչող կենդանին, ըստ չորս կենդանի էակների ներկայացման կարգի, պետք է լինի առյուծի դեմք ունեցողը (4:7), որը թագավորություն է նշանակում, ուստի այդ հրավերն ուղղված է ինչ-որ թագավորի կամ թագավորության ներկայացուցչի:

«Եւ ահա տեսայ մի սպիտակ ձի, որի հեծեալը մի աղեղ ունէր: Նրան տրուեց մի պսակ. նա եկաւ որպէս յաղթող եւ յաղթելու համար» (հմր 2):

Առաջին վեց համարներում առկա չորս ձիավորների պատկերը գալիս է Զաքարիայի մարգարեության 1-ին գլխի 8-17-րդ եւ 6-րդ գլխի 1-8-րդ համարներից, հատկապես դրանց եբրայերեն բնագրից, ոչ թե հունարեն թարգմանությունից: Այստեղ յուրաքանչյուր ձիու գույնը բնութագրում է ձիավորին եւ նրա դերակատարումը:

Սպիտակ գույնը հաղթանակ է մատնացույց անում, կարմիրը՝ պատերազմ եւ արյունահեղություն, սեւը՝ սով, դեղինը՝ համաճարակ ու մահ: Դրանք հասկանալու հիմնական երեք կերպեր կան, որոնցից առաջին երկուսը պատմական բացատրություն են առաջադրում. մեկը՝ անցյալ եւ մյուսը՝ ներկա, իսկ երրորդը վերաբերում է ապագային: Այսպես՝

1. **Առաջինը** ձիավորներին եւ նրանց տրված խորհրդանիշերը դիտում ու բացատրում է Քրիստոսի տնօրինական կյանքի հետ հարաբերաբար:

2. **Երկրորդը** ձիավորներին եւ նրանց տրված խորհրդանիշերը դիտում ու բացատրում է Եկեղեցու կյանքի հետ հարաբերաբար, որ

ներկա ժամանակն է՝ իր պատմական ըմբռնումով, այսինքն՝ առաքելական դարից մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը:

3. **Երրորդը** ձիավորներին ու նրանց առնչված խորհրդանիշերը դիտում է Եկեղեցուց դուրս՝ աշխարհի հետ հարաբերաբար եւ հասկանում գալիք ժամանակի համար:

Այսպես, առաջին՝ սպիտակ ձիու նկարագրության մեջ ոմանք տեսնում են հաղթական Քրիստոսին նախ Իր առաջին գալստյան ժամանակ, այսինքն՝ Իր մարդեղության մեջ, երբ հեծավ փրկության նժույգը եւ մարդկանց որսաց սիրո աղեղով (հմմտ.՝ Ամբ 3:8 [LXX]): Նա Իր երկրորդ գալստյան ժամանակ՝ այս անգամ թշնամիներին բնաջնջելու համար հայտնվելու է դարձյալ սպիտակ ձիու վրա նստած, (տես 19:11): Այս մեկնության կողմնակիցներից ոմանք 2-րդ կնիքի մեջ տեսնում են Քրիստոսի մկրտությունը, 3-րդի մեջ՝ Նրա աստվածային նշանները, 4-րդի մեջ՝ Պիղատոսի դիմաց կանգնելը եւ մահվան դատապարտվելը, 5-րդի մեջ՝ խաչվելը եւ 6-րդի մեջ՝ թաղումը եւ դժոխքն ավերելը:

Ուրիշները պատմական բացատրություն են առաջարկում՝ ասելով, թե պատկերը ներկայացնում է Հռոմի հզոր մրցակցին՝ պարթեւներին, որոնց հարձակումը Հռոմեական կայսրության վրա նշանակելու է, թե Աստծո դատաստանները կամ աղետները կայսրության վրա այդ կերպ են իջնելու: Դարձյալ պատմական բացատրություն առաջարկելով՝ ոմանք էլ առաջին բացատրությունն ընդարձակում են՝ Քրիստոսի հաղթարշավի պատկերում տեսնելով նաեւ Նրա Եկեղեցին եւ Նրա հաղթանակը Հռոմի այն բոլոր կայսրերի դեմ, ովքեր չարաչար հալածանքի ենթարկեցին քրիստոնեությունը, բայց Քրիստոս հաղթանակեց, եւ քրիստոնեությունն ազատ եւ նույնիսկ պետական կրոն դարձավ:

Սակայն ամենահավանական բացատրությունն այն է, որ նա ժամանակների վախճանին հայտնվելիք Նեռը կամ Քրիստոսի հակառակորդն է՝ Քրիստոսի կեղծ նմանությունն իր վրա վերցրած (հմմտ.՝ 19:11-ի սպիտակ ձին եւ ձիավորը): Քրիստոս ի սկզբանե Իր աշակերտներին զգուշացրեց, որ «վախճան»ից եւ Իր երկրորդ գալուստից առաջ «շատերը կգան Իմ անունով եւ կասեն, թէ «Ես եմ Քրիստոսը» ու կմոլորեցնեն շատերին» (Մտ 24:5): Հովհաննես առաքյալն իր առաջին նամակում դա հաստատում է՝ ասելով. «Դուք լսել էք, որ Նեռը՝ Քրիստոսի հակառակորդը, գալու է: (...) Լսել էիք, թէ գալու է, եւ ահա արդէն իսկ աշխարհում է» (Ա Հհ 2:18, 4:3):

Այս սպիտակ ձիավորի ինքնությունը հասկանալու համար անդրադառնանք երկրորդ մանրամասնությանը. նա «մի աղեղ ունէր»: Աղեղը պատերազմական զենք է կամ որսորդական գործիք եւ Աստվածաշնչում գործածվել է երկու նշանակությամբ: Աղեղը թե՛ ժխտական խորհրդանիշ է՝ իբրեւ Աստծո դեմ ըմբոստության, չարիքի եւ սպանության գործիք (հմմտ.՝ Ա Թգ 2:4, Սղ 11:2, 37:14-15, 46:9, 76:3, Եր 9:3, 51:56, Ովս 1:5, 2:18) եւ իբրեւ Աստծո դատաստանի արտահայտությունը եղող հարված կամ պատիժ (հմմտ.՝ Սղ 7:12, Ես 41:2, Ողբ 2:4), եւ թե՛ դրական նշանակություն ունի՝ որպես հաղթության գործիք (հմմտ.՝ Ծն 49:24), որպես մարդկանց Աստծո համար որսալու միջոց (հմմտ.՝ Եր 16:16): Արդ, քանի որ «աղեղ»ի նշանակությունը կարելի է հասկանալ երկու հակադիր նշանակություններով էլ, ուստի հնարավոր չէ բացարձակորեն հենվել նրա վրա: Անդրեաս Կեսարացին տալիս է հետեւյալ այլաբանական բացատրությունը՝ ճերմակ ձին հեծնողն առաքելական գունդն է, ձին՝ Սուրբ Հոգու շնորհը, որով նրանք զորացան, աղեղը՝ քարոզվող խոսքը, որից լսողների սրտերը բաբախում են, իսկ պսակը՝ տասներկու աթոռներին տրված խոստումը: Առաջին հաղթանակը խորհրդանշում է մարդկանց դարձի բերելը հեթանոսությունից, իսկ երկրորդը՝ կամավորապես չարչարանքների մատնվելն ու մարմնից դուրս գալը:

Հաջորդ տվյալը՝ «Նրան մի պսակ տրուեց», դարձյալ չի օգնում ձիավորի ինքնությունը որոշելուն: Պսակը հաղթանակի նշանը եւ վարձատրությունն է, միաժամանակ իշխանական կամ թագավորական իշխանության խորհրդանիշը, որը կարող է վերաբերել թե՛ Քրիստոսին՝ Ճշմարիտ Թագավորին եւ թե՛ Չարին, որ իրեն տրված ժամանակավոր արտոնությունը, որպես աշխարհի թագավորությունը-

ների վրա տրված բացարձակ իրավունք եւ իշխանություն բացատրելով, Հիսուսին փորձելու ժամանակ ասում էր. «Այս բոլորի վրայ իշխանութիւն եւ սրանց ամբողջ փառքը Քեզ կտամ, սրանք ինձ են տրուած, եւ ում ուզենամ՝ կտամ» (Ղկ 4:6):

«Յաղթող եւ յաղթելու համար»: Առաջին բառով անցյալի հաղթանակներն են ակնարկվում, իսկ երկրորդով՝ ապագա հաղթանակները:

Եթե համարենք, որ ճերմակ ձիավորը Քրիստոսն է, ապա այս բացատրությունը դրական նշանակություն կստանա, ինչպես որ է առհասարակ Հայտնության գրքում: Ոմանք մատնանշում են, թե Հայտնության գրքում «հաղթել» բայը եւ հաղթանակն ընդհանրապես Քրիստոսի ու Նրա ճշմարիտ հետեւորդների համար են գործածվել եւ մեկ անգամ եւս հաստատում են, թե այս ձիավորով Քրիստոս Ինքը կամ առնվազն աստվածառաք մի դեմք է հայտնվում: Սակայն միշտ չէ, որ «հաղթել» բայը եւ հաղթանակը գործածվել են Քրիստոսի կամ Նրա հետեւորդների համար: Դրանք երբեմն գործածվել են նաեւ Գազանի համար (11:7, 13:7): Եթե փորձենք դա հասկանալ Նեռի համար, ինչը մեզ ավելի ճիշտ է թվում, ապա այդ դեպքում խոսքն իսկական հաղթանակների մասին լինել չի կարող, այլ՝ ժամանակավոր ու խաբուսիկ հաղթանակների. Չարը միշտ էլ հաղթողի երեւույթ ունի եւ կյանքում դեպի իրեն է գրավում մարդկանց ու մոլորեցնում հաջողություն ու հաղթանակ պարգեւելու սուտ խոստումներով: Նա աշխարհիկ հաղթանակների ճանապարհով մարդկանց հեռացնում է Աստծուց եւ Նրա փրկության ծրագրից:

«Երբ Գառը բացեց երկրորդ կնիքը, լսեցի, որ երկրորդ կենդանին ասում էր. «Արի՛»: Եւ դուրս ելաւ մի ուրիշ ձի, որ կարմիր էր: Նրա հեծելային իրաւունք տրուեց աշխարհից վերացնել խաղաղութիւնը, որպէսզի մարդիկ միմեանց սպանեն: Եւ նրան տրուեց մի մեծ սուր» (հմր 3-4):

Ըստ կարգի՝ երկրորդ կենդանին պետք է լինի զվարակը կամ եզը, որը նահատակություն է հուշում:

Երկրորդ ձին կարմիր է, նա արյան եւ արյունահեղության մարմնավորումն է: Այլ խոսքով, դարձյալ պատերազմի խորհրդանիշ է, սակայն այս անգամ՝ կարծեք ներքին խռովությունների, ապստամբությունների, պետական հարվածների (հմմտ.՝ «պատերազմների լուրերը» (Մտ 24:6)): Անդրեաս Կեսարացին սա մեկնում է Եկեղեցու պատմության դիտանկյունից՝ ասելով, թե այս կնիքը առաքյալներին հաջորդող սերնդին է վերաբերում, որովհետեւ վարդապետներն ու մարտիրոսները բազմացան նրանց քարոզչությամբ, մարդիկ բաժանվեցին իրենց ընտանիքներից, եւ խաղաղությունը կորավ՝ ըստ Քրիստոսի խոսքի .«Չեկայ խաղաղութիւն բերելու, այլ՝ սուր»:

Հրակերպ կարմիր ձին մատնացույց է անում Քրիստոսի սիրով բորբոքվածների նահատակությունը, իսկ հեծյալին տրված իշխանությունը ցույց է տալիս Աստծո ներողամտությունը, Ով կամեցավ, որ Իր ծառաները նեղությունների միջոցով փորձության ենթարկվեն: Պետրոս Աղամալյանն[5] այս ձիավորի մեջ տեսնում է Եկեղեցու խաղաղությունը վրդովող աղանդավորներին՝ Արիոսին, Մակեդոնին, Նեստորին եւ Լեւոն պապին, ովքեր, զուտ մարդկային մտածողության վրա հիմնվելով, շեղվեցին ճշմարիտ հավատքից. առաջինն ուրացավ Քրիստոսի աստվածությունը, երկրորդը՝ Սուրբ Հոգու աստվածությունը, երրորդը Քրիստոսի մեջ աստվածային եւ մարդկային երկու անձերը առանձնացրեց միմյանցից, իսկ չորրորդը Քրիստոսի տնօրինական արարքներից որոշներն աստվածությանը հատկացրեց եւ որոշներն էլ՝ մարդեղությանը՝ պատճառ դառնալով Եկեղեցու բաժանման ու անթիվ քրիստոնյաների խողխողման:

«Երբ Գառը բացեց երրորդ կնիքը, լսեցի, որ երրորդ կենդանին ասում էր. «Արի՛»: Եւ ահա տեսայ մի սեւ ձի, որի հեծեալն իր ձեռքին ունէր մի կշեռք: Ու լսեցի մի ձայն, որ գալիս էր չորս կենդանիների մէջտեղից եւ ասում էր. «Մի բուռ ցորենը՝ մէկ օրավարձի փոխարէն. երեք բուռ գարին՝ մէկ օրավարձի փոխարէն. բայց ձէթին ու գինուն վնաս չտաս» » (հմր 5:6):

Երրորդ ձին, որ սեւ է, խորհրդանշում է սովը: Մեկ դրամը մի մարդու օրավարձն էր (հմմտ.՝ 20:2): Մի մարդու ամբողջ օրավարձը հա-

զիվ բավականացնում էր մեկ հոգու համար ուտելիք ցորեն հաց («մի բուռ ցորեն») կամ մեկ ընտանիքի ուտելիք գարեհաց («երեք բուռ գարի») հայթայթելուն:

Փորձելով պատմականորեն բացատրել՝ ոմանք այս համարներում տեսնում են Դոմետիանոս կայսեր օրոք (81-96 թթ.) պատահած սովի արձագանգը, երբ հացի նեղություն կար եւ գինու առատություն: Ուրիշներ գտնում են, որ սա ավելի ուշ՝ Դեկոս կայսեր օրերին (250-253 թթ.), պատահած սաստիկ սովի ակնարկությունն է. նա եղավ քրիստոնյաների երրորդ մեծ հալածիչը, ինչպես հիշատակում է Եվսեբիոս Կեսարացի պատմիչը: Այս երկու հալածանքներն էլ բազմաթիվ քրիստոնյաների մահվան պատճառ դարձան: Ահա թե ինչու Անդրեասը ձիու սեւ գույնի մեջ տեսնում է «գլորվածների» համար արվող սուգը, որ ճշմարիտ հավատացյալներն ապրեցին, իսկ կշեռքը մեկնում է որպես Եկեղեցու փորձություն, որ սկսեց տատանվել հավատքի եւ անհավատության միջեւ: Այլաբանորեն մեկնելով ցորենն ու գարին, ձեթն ու գինին՝ նա ասում է, թե ցորենը նահատակվողներն են, որոնց արժեքը բարձր է, որովհետեւ Քրիստոսի արքունի պատկերն անաղարտ պահեցին իրենց մեջ, իսկ երեք բուռ (կապիճ) գարին ցույց է տալիս գործերը նրանց, ովքեր անասունների պես գայթակղվեցին հալածիչներից, սակայն հետո դարձի եկան եւ իրենց մեջ եղող Քրիստոսի պատկերը լվացին արցունքով: Իսկ ձեթի եւ գինու բացատրություններում ակնարկվում են եկեղեցիների վերակացուները, ովքեր ժողովրդին են բաշխում Սուրբ Հոգին (ձեթը) եւ իմաստությունը (գինին), ուստի եւ հրամայում է չվնասել նրանց, այլ սիրով պահել Եկեղեցում:

Պետրոս Աղամալյանը, իրեն հատուկ պատմական բացատրությամբ, սեւ ձիու պատկերի մեջ տեսնում է Մուհամմեդի հայտնվելը, իսկ կշեռքի մեջ՝ տաղաչափյալ Ղուրանը: Երկնքից եկող ձայնը համարվում է աստվածային թույլտվություն, բայց եւ միաժամանակ զգուշացում՝ չվնասելու համար ձեթն ու գինին, այսինքն՝ քրիստոնյաներին՝ ձեթն ընկալելով որպես Մյուռոնի եւ մկրտության, իսկ գինին՝ որպես Սուրբ պատարագի խորհրդանիշ:

«Եւ երբ Գառը բացեց չորրորդ կնիքը, չորրորդ կենդանուց լսեցի մի ձայն, որ ասում էր. «Արի՛»: Եւ ահա տեսայ դեղնաւուն մի ձի, որի հեծեալի անունը Մահ էր: Նրա հետեւից գնում էր Դժոխքը՝ մեռելների աշխարհը: Նրանց իշխանութիւն էր տրուել աշխարհի մէկ չորրորդ մասի վրայ, որպէսզի սպանեն սրով, սովով, համաճարակով եւ Երկրի գազաններով»: Չորրորդ կենդանին արծիվն է, որը հուշում է աստվածությունը կամ աստվածային խորհուրդը:

Չորրորդ ձին, որ դեղնավուն է, Մահն է: Նրա գործակիցներն են սուրը, սովը, համաճարակը (հմմտ.՝ Ղտ 26:25-26, Բ Օր 28:21-22): «Աշխարհի մէկ չորրորդ մասը»: Հայտնութենական գրականության մեջ բոլոր կես կամ կոտորակավոր թվերն անկատարություն եւ մասնակիություն են արտահայտում եւ համազոր են «մի մաս», «մի որոշ տոկոս» եւ նմանատիպ այլ բառակապակցություններ ասելուն, ուստի դրանք պետք չէ հասկանալ բառացիորեն:

«Նրա հետեւից գնում էր Դժոխքը՝ մեռելների աշխարհը»: Վերջին երկու բառերը բնագրում չկան, այլ թարգմանչի հավելումներն են՝ բացահայտելու համար «դժոխք» բառի իմաստը, որը հաճախ շփոթության եւ սխալ հասկանալու տեղիք է տալիս: Սուրբ Գրոց որեւէ բառարան ցույց է տալիս, որ «դժոխք»ը (եբրայերեն՝ շեպ, հունարեն՝ հադես) Աստվածաշնչում գործածվել է երեք տարբեր իմաստներով՝

1. **Մեռելների աշխարհ**՝ ի հակադրություն մեր աշխարհի, որ կոչվում է «կենդանիների երկիր» կամ ողջերի աշխարհ:
2. **Գերեզման:**
3. **Հավիտենական տանջանքի պատժավայր:**

Այստեղ բառը գործածվել է առաջին նշանակությամբ՝ պատկերավոր բացատրությամբ ասելու համար, թե Մահը խորհրդանշող ձիավորն ուր էլ գնար, մահ էր սփռում՝ մեռելների անթիվ բազմություն թողնելով իր հետեւից:

«Նրանց իշխանութիւն էր տրուել աշխարհի մէկ չորրորդ մասի վրայ, որպէսզի սպանեն սրով, սովով, համաճարակով եւ Երկրի գազաններով»: Այս հաստատումը միայն վերջին՝ չորրորդ ձիավորին եւ նրան հետեւող Դժոխքին չի վերաբերում, այլ վերաբերում է նաեւ

երեք ձիավորներին՝ ճշտելով յուրաքանչյուրի բերած աղետը՝ սուր, սով եւ համաճարակ ու Երկրի գազաններ:

«Նրանց իշխանութիւն էր տրուել»: Այս նույն հավաստիացումն արդեն կար 4-րդ համարում՝ առանձնապես շեշտելով երկրորդ ձիավորին, իսկ այստեղ կրկնվում է բոլորի համար: Առանց Աստծո թույլտվության ոչ ոք չի կարող որեւէ բան անել: Չարը գործում է ու մինչեւ իր ժամանակին հասնելը դեռ շարունակելու է ազատորեն գործել, սակայն դա չի նշանակում, թե նա ինքնիշխան է: Նա իրեն դասում է Աստծուն հավասար ու մրցակից, իսկ մարդիկ նրան տրված իշխանությունից, այսինքն՝ գործելու ազատությունից ու երեւութապես անդիմադրելի եւ անհաղթահարելի զորությունից խաբված, նրան ամենազոր են համարում: Բայց իրականությունն այն է, որ առանց Աստծո թույլտվության նա ոչինչ չի կարող անել, իսկ թե ինչո՞ւ է Աստված թույլատրում, որ Չարը փորձի մարդկանց, դա Աստծո արդարության ու Նրա գործելակերպին վերաբերող խորհուրդ է՝

1. Աստված հաճախ պատժում է աշխարհում գոյություն ունեցող Չարին հենց նրա՝ Չարի ձեռքով, այլ խոսքով, փոս փորողն ինքն է ընկնում նրա մեջ: Մարդու նյութած չարիքը հենց իր գլխին է թափվում, ինքն իրեն Չարին հանձնողը նրա ձեռքով էլ խեղդամահ է լինում (հմմտ.՝ Սղ 7:15, Առ 26:27, Ժղ 10:8, Գղ 6:7-8):

2. Ինչպես համառոտակի նշեցինք 2-րդ գլխի 10-րդ համարում, Աստծո արդարությունն իրեն թույլ չի տալիս ուժով եւ զորությամբ հաղթել Չարին, որպեսզի արդարությունն ուժի տիրապետությամբ չոտնակոխվի եւ չխեղդվի: Աստծո ճանապարհը խոնարհության եւ համբերության ճանապարհն է. Տերը ցանկանում է, որ երեւան գա ճշմարտությունը, եւ սիրո ու առաքինության հաղթանակով վերահաստատվի արդարությունը:

Աստված թույլ է տալիս, որ Չարը փորձի մարդուն, որպեսզի Աստծուն հավատացող ու վստահող մարդը, փորձաքարի զարնվելով, ի հայտ բերի իր սերն ու առաքինությունը, իսկ Սատանան Աստծուն հավասարվելու իր ամբարիշտ հավակնության մեջ պարտվի ու խորտակվի ոչ թե Աստծո ամենազոր բազկով, այլ հողի ու փոշու վերածվող տկար մարդկանց ձեռքով:

Արդ, այստեղ Չարին տրված իշխանությունը ոչ թե հավատացյալներին փորձելու համար է, այլ հենց նրան՝ Չարին հետեւող աշխարհին հարվածելու եւ պատժելու՝ ամբարշտությունների համար:

Եվ ինչպիսի՞ն են այդ պատիժները՝ սուր, սով, համաճարակ եւ Երկրի գազաններ: Այս չորս եզրերը Հին Կտակարանի Օրենքի գրքերում եւ մարգարեություններում Աստծո՝ հաճախ միասնաբար հիշատակված պատիժներն են՝ Նրա պատվիրաններին չանսացող ժողովրդին (տե՛ս Ղկ 26:21-26, Եր 14:12, 24:10, 29:17-18, Եզկ 5:11-17, 14:12-23, 34:27 եւ այլն): Եզեկիելի մարգարեության մեջ Աստված դրանց բնորոշում է որպես «Իմ չորս սաստիկ պատիժները՝ սուրը, սովը, չար գազանները եւ ժանտախտը» (Եզկ 14:21):

«Սուր»ը պատերազմի ու կոտորածի խորհրդանիշ է: Սովն ու համաճարակը որեւէ մեկնության կարիք չունեն: Անդրադառնալով «Երկրի գազաններ»ին (հմմտ.՝ Ղտ 26:22, Բ Օր 32:24, Եզկ 5:17, 14:15 եւ 21, 33:27 եւ այլն)՝ ասենք, որ դրանք անպայման բառացիորեն վայրի գազանները կամ կատաղի անասունները չեն: Երբեմն դրանք կարող են բառացի իմաստ ունենալ կամ արտահայտել (հմմտ.՝ Դ Թգ 17:25, Եզկ 34:25, Գրծ 28:4-5), սակայն կարող են գործածված լինել նաեւ փոխաբերական իմաստով՝ չար, կատաղի, անզուսպ եւ անգութ, գազանային նկարագիր ունեցող մարդկանց համար (հմմտ.՝ Տիտ 1:12): Նույն պարագան կարող է լինել այստեղ:

Անդրեաս Կեսարացին, դարձյալ պատմական բացատրություն տալով, ասում է, թե այս դեղնավուն ձին ցույց է տալիս Հռոմի Մաքսիմիանոս կայսեր (286-305 թթ.)՝ քրիստոնյաների դեմ հալածանքները, ինչպես տեղեկանում ենք Եվսեբիոսի «Պատմություն»ից: Դեղնավուն լինելը ցույց է տալիս, որ ձին շուտով դադարելու է գոյություն ունենալ: Նրա հետեւից գնացող մահը եւ դժոխքը ցույց են տալիս այն մահը, որ Աստված սահմանեց հեթանոսների համար, որոնց կլանեց դժոխքը՝ նրանց անհավատարմության պատճառով:

Այդ ժամանակ իրոք աշխարհի մեկ չորրորդն սպանվեց սրով եւ հատկապես սովով, համաճարակով ու գազաններով, որովհետեւ, ինչպես Եվսեբիոսն է պատմում, հայերը հարձակվեցին հռոմեացի-

ների վրա, եւ այնպիսի կոտորած ու սով եղավ, որ մարդիկ չէին հասցնում մեռելներին հուղարկավորել, եւ շներն սկսեցին ուտել դիակները:

Պետրոս Աղամալյանն այս չորրորդ ձիավորի մեջ տեսնում է թուրքերին եւ նրանց հետեւող Նեռին, որը նրանց օրինակով՝ մահ է սփռելու:

Չորս ձիավորներին վերաբերող պատմական բացատրություններն անշուշտ մասնակի ճշմարտություններ են բովանդակում, սակայն այս հայտնությունների բուն իսկությունը վերաբերում է ապագային՝ աշխարհի վախճանին՝

1. Առաջին ձիավորի մասին արդեն բավականաչափ խոսեցինք եւ նրան նույնացրինք Նեռի հետ: Եվ թեպետ սպիտակ գույնը խորհրդանշում է արդարություն ու հաղթանակ, նոր կյանք ու հարության պայծառափայլություն, սակայն այստեղ սպիտակը միայն երեւույթ է եւ կամենում է մատնանշել «լուսաւոր հրեշտակի կերպարանքով ներկայացող Սատանային» (Բ Կր 11:14), արդարության կերպարանքի տակ թաքնված «անօրինութեան մարմնացումը, կորստեան դատապարտուած հակառակորդին», որը Քրիստոսի կեղծ նմանությունն առնելով՝ ընդդիմանում է Աստծուն եւ ինքն իրեն «աստված» հայտարարում (հմմտ.՝ Բ Թգ 2:3-4)՝ այդ սուտ երեւոյթով որսալու համար պարզամիտներին ու միամիտներին:

2. Նույնը կարող ենք ասել երկրորդ՝ կարմիր ձիավորի մասին: Եթե հիշենք, որ թե՛ Սատանան ինքն է ներկայանում որպես հրակարմիր (բառացի՝ շառագույն) հրեղեն վիշապ, եւ թե՛ նրա բոլոր գործակիցները՝ գազանը, պոռնիկ կինը եւ Մեծ Բաբելոնը ներկայանում են կարմրագույն կամ կարմրին առնչվող գույներով՝ ծիրանագույն ու որդան կարմիր (տե՛ս 12:3, 17:3-4, 18:16), դյուրին կլինի նրանում տեսնել նմանությունը Նեռին, որը գալու է աշխարհից խաղաղությունը վերացնելու եւ կատաղի հալածանքներով նույնիսկ Եկեղեցու խաղաղությունը խաթարելու, որովհետեւ գործելու է թե՛ դրսից եւ թե՛ ներսից՝ ամեն կերպ ու բոլոր միջոցներով պայքարելով Աստծո ժողովրդի դեմ:

3. Երրորդ՝ սեւ ձիու հեծյալը դարձյալ Նեռն է՝ այս անգամ իր գործունեության երրորդ երեսով, որը սովն է կամ տրված պատկերացման մեկ այլ թելադրականությամբ՝ հացի կշեռքն իր ձեռքում ունեցողը: Դա կարող է լինել խորհրդանիշն այն տնտեսական մենատիրության կամ բացարձակ հակակշռի խորհրդանիշը, որ Նեռը փորձելու է հաստատել ամբողջ աշխարհում, որպեսզի իր կնիքը, հավանությունն ու արտոնությունը չունեցողը չկարողանա որեւէ բան գնել կամ վաճառել (տե՛ս 13:7): Նա կամայականորեն եւ անհամեմատ բարձրացնելու է ամենօրյա անհրաժեշտ սննդամթերքի գինը եւ հրապարակը լցնելու է «ձեթով ու գինով», այսինքն՝ երեւութական, թվացյալ հանգստությամբ ու էժան վայելքներով (ձեթ) եւ բորբոքված անառակ ցանկություններով ու ստոր հաճույքներով (գինի)՝ այդ կերպ մի կողմից մարդկանց աղքատության ու թշվառության մատնելու համար, իսկ մյուս կողմից՝ նրանց ստիպելու, որ լքեն Աստծուն եւ հետեւեն ու երկրպագեն իրեն:

4. Չորրորդ ձիավորը կրկին Նեռն է, որն իր գործունեության վերոհիշյալ եւ մյուս բոլոր երեսներով, մարմնապես ու բարոյապես մահվան է մատնելու մարդկանց՝ նրանց աստվածային պատկերն այլափոխելուց հետո:

Չորս ձի, չորս գույն, չորս մահադեմ պատկեր. քառապատիկ ու քառակերպ բնութագրում, որոնք կազմում են Նեռի իսկական բնութագիրը (հմմտ.՝ 13-րդ գլուխը):

«Երբ Գառը բացեց հինգերորդ կնիքը, զոհասեղանի տակ տեսայ հոգիներն այն բոլոր մարդկանց, որոնք սպանուած էին Աստուծոյ խօսքին իրենց հաւատարմութեան եւ տուած վկայութեան համար» (հմր 9): Թեպետ այս կնիքը մեր ուշադրությունը ձիավորներից եւ նրանցով գալիք հալածանքներից շրջում է դեպի հալածվողները, բայց շարունակում է պատկերել քրիստոնյաների նահատակությունը: Նրանք ներկայացվում են որպես Աստծուն ընծայված զոհեր, որովհետեւ պատկերվում են «զոհասեղանի տակ» այնպես, ինչպես Հին Կտակարանի քավության զոհերի արյունն էր թափվում զոհասեղանի տակ (տե՛ս Ելք 29:12, Ղտ 4:7, 5:9, 18:25, 30 եւ 34 եւ այլն):

Ակնարկված զոհասեղանը նյութեղեն հասկացողությամբ սեղան չէ, որովհետեւ Երկնքում տաճար չկա (տես 21:22-րդ եւ 7:15-րդ համարների բացատրությունը): Ամբողջ Երկինքը, որպես Աստծու բնակավայր, երկնային տաճար է, իսկ «զոհասեղան»ի բացատրությունը խորհրդանշականորեն արտահայտում է Աստծո սրբազնասուրբ էությունը, որ «Լոյս է, բոլորովին խաւար չկայ նրա մէջ» (Ա Հի 1:5: Հմմտ.՝ Բ Կր 6:14, Կղ 1:12, Ա Տմ 6:16, Եբր 1:3, Ա Հի 1:17, Ա Պտ 2:9, Հտ 21:22), որ «մաշող կրակ է» (Բ Օր 4:24 եւ 36, 9:3: Հմմտ.՝ Ելք 3:2, 19:18, 24:17, Եբր 12:29):

Այս ճշմարտության նյութեղեն, սակայն խորհրդանշական պատկերն էր Վկայության Խորանի կամ Երուսաղեմի տաճարի զոհասեղանը (հմմտ.՝ Ելք 25:8-9): Ինչպես Վկայության Խորանի կամ տաճարի զոհասեղանն էր միշտ բոցավառ մնում «սուրբ կրակ»ով, այնպես եւ Աստված Ինքը՝ Ճշմարիտ Տաճարը, նաեւ Ճշմարիտ Զոհասեղանն է՝ սրբության կրակով հատկանշվող, ում ընծայում են բոլոր ճշմարիտ աղոթքները, Աստծուն ընդունելի բանավոր պատարագները, ինչպես նաեւ նահատակների աղոթքները:

Ոմանք, պատմական որոշակի իրադարձությունների հետ կապելով այս համարի բացատրությունը, ասում են, թե այս համարը վերաբերում է Մաքսիմիանոս եւ Դիոկղետիանոս կայսրերի սաստիկ հալածանքներին եւ բազմաթիվ սրբերի նահատակությանը:

«Նրանք բարձրաձայն ասում էին. «Մինչեւ ե՞րբ պիտի սպասես, սուրբ եւ ճշմարիտ Տէ՛ր, ե՞րբ պիտի դատես Երկրի բնակիչներին եւ մեր արեան վրէժը լուծես նրանցից» » (հմր 10):

Այս աղաղակը բողոքի կանչ է, բայց եւ միաժամանակ աղոթական ողբ՝ սաղմոսերգության գրականությունից ծանոթ համայնական ողբերի նմանողությամբ (հմմտ.՝ Սղ 74:10, 80:5, 90:13):

«Տեր» տիտղոսն այստեղ հունարեն բառի (դեսպոտի՛ս) թարգմանությունն է, որը նշանակում է բացարձակ տեր, ամենաիշխան, ամենատեր: Նա իսկական տերն է իր ծառաների, որոնց հանդեպ Նրա վարմունքն անարդար եւ անիրավ չէ, ինչպես հաճախ լինում է երկրավոր տերերի վարմունքը իրենց ծառաների հետ, այլ Իր բնությամբ

սուրբ եւ ճշմարիտ է: Նրա գործերն Իր սրբության եւ ճշմարտության հարազատ հայելին են:

Այստեղ ավարտվում է բանավոր սերտողության վերամշակումը: Մնացյալ բաժինը ձայզներիզների վրա արձանագրվածի խմբագրումն է:

«Երկրի բնակիչները» բացատրությունը վերաբերում է ոչ թե հավատացյալներին, այլ՝ անհավատներին. այս բացատրությամբ նկատի է առնվում Աստծուն ընդդիմացող մարդկությունը:

Ոմանք այս աղաղակը հետեւյալ կերպ են հասկանում. նկատի ունենալով, որ շրջագիծը ներկայացնում է վերջին ժամանակների սրբերի նահատակությունը, ապա ասվում է, թե այդ սրբերը դիմում են Աստծուն եւ խնդրում, որ Նա արգելի Եկեղեցու դեմ ուղղված հալածանքները, եւ խաղաղություն հաստատվի:

Անդրեաս Կեսարացին ասում է, թե հալածանքները կասեցվել են եւ հաստատվել է խաղաղություն Կոստանդիանոս կայսեր իշխանության գալով, այսինքն՝ երբ Եկեղեցին պաշտոնապես ճանաչվեց եւ խաղաղություն գտավ: Ուրիշները տարբեր կերպ են հասկանում: Ոմանք, կապելով Քրիստոսի առաջին գալստյան հետ, ասում են, թե ակնարկված սրբերը Հին Կտակարանի սրբերն են, հիմնականում՝ մարգարեները, ովքեր երբ տեսան Քրիստոսի խաչելությունը, բարձրաձայն աղաղակեցին:

Սակայն մենք այս համարում հանդիպում ենք բոլոր ժամանակների սրբերի աղաղակին, որ իբրեւ մեկ ձայն՝ բարձրանալու է Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ:

«Եւ նրանից իւրաքանչիւրին տրուեց մի սպիտակ պարեգօտ եւ ասուեց, որ մի փոքր ժամանակ եւս հանգստանան, մինչեւ ամբողջանայ իրենց ծառայակիցների եւ եղբայրների թիւը, որոնք պիտի սպանուեն իրենց նման» (հմր 11):

Այս համարը ցույց է տալիս, որ Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ եւս լինելու են Աստծո խոսքի նկատմամբ իրենց հավատարմությունն արյան նահատակությամբ կնքողներ:

Երբ «ամբողջանա» Աստծուն հավատարիմների նահատակության «թիվը», կկատարվի Աստծո վրեժխնդրությունը: Աստված համբերատար է: Ոմանք Աստծո համբերատարությունը համարում են Նրա խոստումների ուշացում, սակայն Աստվածաշունչը մեզ հուշում է, որ Աստված Իր խոստումների տերն է եւ դրանք կատարում ու կատարելու է ամբողջությամբ:

Մենք անտեսում ենք նաեւ այն իրականությունը, որ Աստծո փրկագործական ծրագիրը մեզանով չի վերջանում. մեզանով վերջ գտնելու պարագայում Աստված անարդար կլինի նրանց հանդեպ, ովքեր մեզ նման արժանի են փրկության:

Նահատակների աղաղակը նաեւ նշանակում է, թե Աստված Իրեն հավատարիմների դատը չի մոռացել, եւ երբ ժամանակը գա, նրանց հոգիները լցնելու է այն ուրախությամբ, որին սպասում են:

«Եւ տեսայ, որ Գառը բացեց վեցերորդ կնիքը: Եւ ահա տեղի ունեցաւ մի մեծ երկրաշարժ. արեգակը սեւ դարձաւ, ինչպէս այծի մազից հիւսած կարպետը, եւ լուսինն ամբողջովին արեան գոյն ստացաւ» (հմր 12):

Մեզ ցույց են տրվում Աստծո զայրույթի տեսանելի նշանները: Դրանք մոտեցող վախճանի նշաններն են: Քրիստոս Իր Հայտնութենական ճառում (տե՛ս Մտ 24) ակնարկել էր այս բոլոր պատահելիքներին: Տերն ակնարկել էր դրանց՝ որպես մարգարեների նախաձայնությունների կատարում: Օրինակ՝ Հովելի մարգարեության մեջ կարդում ենք. «Այն օրերին Իմ հոգուց կհեղեմ Իմ ծառաների վրայ, Իմ աղախինների վրայ, որոնք կմարգարէանան: Հրաշքներ ցոյց կտամ երկնքում եւ Երկրի վրայ՝ արիւն, հուր եւ ծխի մրրիկ. արեգակը կխաւարի, եւ լուսինը արիւն կդառնայ, քանի դեռ չի եկել Տիրոջ մեծ ու երեւելի օրը» (Հվլ 2:29-31):

Մենք պետք է փորձենք այս նշանները ճիշտ հասկանալ: Հետեւաբար, որոշակի զգուշությունը կարեւոր է: Ընդհանրապես, ըմբռնելու երկու կերպ կա՝ բառացի եւ փոխաբերական:

Այս բնագիրը մեզ ստիպում է բառացիորեն չընկալել ասվածները, այլ՝ փոխաբերական իմաստով: Այսպես՝ երկրաշարժը մարգարեական գրականության մեջ նշանակում է Երկրի վրա հասարակական կարգ ու կանոնի խախտում:

Արեւի «ինչպէս այծի մազից հիւսուած կարպետը» սեւ դառնալը նշանակում է Աստծուն մերժողների հեռանալը, իսկ լուսնի «ամբողջովին արեան գոյն» ստանալը նշանակում է խռովություններ եւ դրանց հետեւանք արյունահեղություն:

«Երկնքի աստղերը ընկան Երկրի վրայ, ինչպէս թափւում են ուժգին հողմից ցնցուող թզենու խակ պտուղները» (հմր 13):

Այս համարը դարձյալ չպետք է բառացիորեն հասկանալ: Գիտության մեջ հաստատված է, թե որեւէ փոքր աստղ մեր Երկրագնդից բազմիցս մեծ է, եթե մի աստղ ընկնի Երկրագնդի վրա, ապա կոչնչացնի: Հետեւաբար աստղերի ընկնելն այստեղ նշանակում է, որ աշխարհի ղեկավարներն ու նրանց հետեւող բազմությունները տապալվելու եւ կործանվելու են: Հիշե՛ք Հովսեփ Գեղեցիկի երազը (Ծն 37:9): Նա երազում տեսնում է տասներկու աստղեր եւ արեւն ու լուսինը, որոնք իրեն երկրպագում են: Երազի աստղերն Իսրայելի ժողովրդի ցեղապետերի եւ նրանց ցեղերի խորհրդանիշերն են:

«Երկինքը գալարուեց մագաղաթեայ գլանի նման, եւ բոլոր լեռներն ու կղզիները շարժուեցին իրենց տեղերից» (հմր 14):

Մենք մեզ հարց տանք, թե իսկապե՞ս երկինքն ու Երկիրը կործանվելու են: Հայտնութենական բոլոր խոսքերը մեզ չեն պատմում Երկրի եւ երկնքի նյութական առումով կործանվելու մասին, այլ՝ նրանց փոխակերպման: Այլ խոսքով, նրանց ներկա տեսքն է փոխվելու, սակայն նրանց «մարմինները» մնալու են: Այդ փոխակերպումը Եսայի մարգարեն կոչել է Նոր Երկինք եւ Նոր Երկիր: Ակնարկված լեռները, ըստ մարգարեական գրականության, խորհրդանշում են թագավորությունները, իսկ կղզիները խորհրդանշում են բոլոր հեռավոր ազգերը, ժողովուրդները: «Հեռավոր» ասելով հասկանում էին հեթանոս ազգերին: Ասվածը նշանակում է, թե նրանք կործանվելու են:

«Երկրի թագաւորները, իշխանները, հրամանատարները, հարուստները, հզօր մարդիկ, ծառայ թէ ազատ, բոլորը թաքնուեցին քարայրներում եւ լեռների ժայռերի ծերպերում» (հմր 15):

Նախորդ համարի նշանակությունը բացահայտորեն տեսնում ենք այս համարում:

«Նրանք ասում էին լեռներին եւ ժայռերին. «Ընկէք մեզ վրայ եւ ծածկեցէք մեզ Նրա աչքից, ով նստում է գահի վրայ. ազատեցէք մեզ Գառան բարկութիւնից, որովհետեւ եկաւ բարկութեան ահաւոր օրը, եւ ո՞վ կարող է դիմանալ Նրա առջեւ» (հմր 16-17):

Այս համարները զգալի նմանություն ունեն Ովսեի մարգարեության 10:8-րդ համարի եւ այն խոսքերի հետ, որ Քրիստոս գործածեց երկու անգամ՝ մեկն իր Հայտնութենական ճառում (որի մասին ակնարկեցինք) եւ Ձիթենյաց լեռան վրա, երբ Նրան հարցրին, թե ե՞րբ է կործանվելու Երուսաղեմը, եւ ե՞րբ է լինելու աշխարհի կատարածը:

Քրիստոս տրված հարցին պատասխանեց ոչ թե առանձին-առանձին, այլ՝ միաժամանակ: Կարծեք Նա դիտումնավոր այդպես պատասխանեց՝ մոտավորապես ասելու համար, թե այն, ինչ տեղի է ունենալու շատ շուտով, այսինքն՝ 70 թվականին, Երուսաղեմի կործանման օրերին, ճիշտ դրա նման մի բան կրկնվելու է աշխարհի կատարածին, անշուշտ ավելի ընդգրկուն կամ տիեզերական ահավոր տարողությամբ:

Հիսուս Իր պատասխանում հատկապես ասաց. «Այդ օրերին վա՜յ յղիներին եւ ստնտու կանանց: Աղօթեցէ՛ք, որ ձեր փախուստը ձմեռ ժամանակ կամ շաբաթ օր չպատահի, որովհետեւ այնպիսի՛ մեծ նեղութեան օրեր պիտի գան, որոնց նմանն աշխարհի ստեղծագործութեան սկզբից մինչեւ այսօր չի պատահել եւ ոչ էլ պիտի պատահի: Եւ եթէ Աստուած այդ օրերի թիւը պակասեցրած չլինէր, ոչ մէկը չէր փրկուի: Բայց Իր ընտրեալների համար Աստուած այդ օրերը պիտի պակասեցնի» (Մտ 24:19-22):

Աշխարհի վախճանի մասին մարգարեական խոսքը Հիսուս վերհիշեց նաեւ Գողգոթայի ճանապարհին, երբ տեսավ, որ կանայք արտասվում ու ողբում էին Իր վրա.

«Մի մեծ բազմութիւն հետեւում էր Յիսուսին: Կանայք լաց էին լինում եւ ողբում Նրա վրայ: Յիսուս, դառնալով նրանց, ասաց.

– Երուսաղէմի՛ աղջիկներ, լաց մի՛ եղէք Ինձ վրայ, լաց եղէ՛ք ձեր եւ

ձեր զաւակների վրայ, որովհետեւ օրեր պիտի գան, երբ մարդիկ պիտի ասեն. «Երանի՛ ամուլ կանանց, այն կանանց, որոնք զաւակ չծնեցին եւ կրծքով չսնեցին»: Այն ժամանակ մարդիկ պիտի ասեն լեռներին՝ «Ընկէ՛ք մեզ վրայ» եւ բլուրներին, թէ «Ծածկեցէ՛ք մեզ» » (Ղկ 23:27-30):

Այստեղ հատկանշական մի կոչ է «Ազատեցէ՛ք մեզ Գառան բարկութիւնից, որովհետեւ եկաւ նրա բարկութեան ահաւոր օրը, եւ ո՞վ կարող է դիմանալ Նրա առջեւ» նախադասությունը: Այս հարցով ասում է, թե այն ահավոր օրը դիմանալիք օր չի լինելու, սակայն հնարավոր է դիմանալ միայն մի ձեւով՝ հավատքի ճամփով:

Հաջորդ գլուխը նույնպես ցույց է տալիս, որ Աստծո ընտրյալները դուրս են գալիս մեծ նեղությունից. հետեւաբար, նրանք Գառան արդար զայրույթից փրկվածներն են:

Է ԳԼՈՒԽ

Այս գլուխը 6-րդ կնիքից հետո եւ 7-րդ կնիքից առաջ նկարագրում է միջանկյալ մի տեսարան: Հիմնական նպատակը պատասխան տալն է այն հարցումին, որով փակվում էր նախորդ գլուխը. «Եկաւ Նրա բարկութեան ահաւոր օրը, եւ ո՞վ կարող է դիմանալ Նրա առջեւ» (6:7): Այս հարցը միշտ ծագում է մեզանից յուրաքանչյուրի մտքում:

Հայտնության գիրքը պարունակում է վարձատրություններ ու դատապարտություններ: Որքան էլ փառավոր ու սքանչելի լինեն վարձատրությունների պատկերները, այնուամենայնիվ, մարդկային մտքի վրա հաճախ ավելի զորեղ ազդեցություն են գործում դատապարտությունների պատկերները: Նկատի ունենալով, որ Աստծո դատաստաններն այնքան ահեղ են, ու սպառնալիքը՝ այնքան մեծ, հարց է առաջանում, թե ո՞վ կարող է փրկվել:

Մարդկային ճիգերով անկարելի է ձեռք բերել փրկություն, որն Աստծո ձրի, անվճար պարգեւն է: Սակայն դա չի նշանակում, որ մարդը բան չպետք է անի: Այդ աստվածային պարգեւն ստանալուց առաջ մարդը պարտավոր է ինքն իրեն ազատել նյութականի կապվածությունից: Հիշենք Հիսուսի խոսակցությունը հարուստ երիտասարդի հետ (տե՛ս Մտ 19:16-22, Մկ 10:17-22, Ղկ 18:18-23): Մարդը նաեւ պետք է տոկա եւ համբերատար լինի իր հավատքի մեջ: Նա, ով տոկում եւ համբերում է մինչեւ վերջ, անպայման հաղթելու է եւ արժանանալու փրկության պարգեւին:

ԱՍՏԾՈՒ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ (7:1-8)

«Դրանից յետոյ տեսայ չորս հրեշտակների, որոնք կանգնել էին Երկրի չորս անկիւններում եւ պահում էին Երկրի չորս հողմերը, որպէսզի դրանք չփչեն ո՛չ Երկրի վրայ, ո՛չ ծովի եւ ո՛չ էլ ծառերի վրայ» (հմր 1):

Ուշագրավ է, որ չորս թիվը նշվում է երեք անգամ՝ չորս հրեշտակներ, Երկրի չորս անկյուններ եւ չորս հողմեր:

Չորսն աշխարհի, ամբողջական աշխարհի խորհրդանիշն է:

Իսկ ինչի՞ համար է չորս հրեշտակների ներկայությունը: Ըստ եբրայական մեկնողական գրականության՝ Թալմուտի, Աստված Իր ստեղծագործության ամեն մի տարրը պահպանում ու խնամում է մի հրեշտակի միջոցով:

Համարի ընթերցումը մեզ տեղեկացնում է, որ հրեշտակները պարտականություն ունեն ուշացնել աշխարհի ավերումը: Իսկ ինչո՞ւ: Որպեսզի իրականանա Աստծո ծրագիրը:

«Տեսայ մի ուրիշ հրեշտակի եւս, որ ելաւ արեւելքից» (հմր 2):

«Արեւելք»ը Աստվածաշնչական մտածողության մեջ մատնանշում է Աստծո ներկայությունը. ուրեմն համարն ասում է, որ հրեշտակին առաքել է Աստված:

Այս հրեշտակն «ունէր կենդանի Աստուծոյ կնիքը» (հմր 2):

«Կնիք»ը երկու բան է թելադրում. նախ՝ իշխանության իմաստ ունի, ապա նաեւ՝ անաղարտ պահպանման: Հրեշտակն Աստծո ծառաների ճակատները կնիքով դրոշմելու պաշտոն ունի: Աստված ցանկանում է հրեշտակի միջոցով Իր ծառաների վրա պահպանության խորհրդանիշ դնել, որպեսզի նրանց պահպանի գալիք վերահաս փորձանքներից:

Ընտրյալների կնքման պատկերի ենք հանդիպում Եզեկիելի մարգարեության 9-րդ գլխում: Այս պատկերը հիշեցի, որպեսզի այս համարի օգնությամբ հստակեցնեմ ասելիքս: Երբ Եզեկիելի մարգարեության հիշյալ գլուխը կարդանք հայերենով, ապա այնտեղ կգտնենք կնիքով դրոշմելու աստվածային խոսքը. «Անցի՛ր Երուսաղէմ քաղաքի միջով ու նշա՛ն դիր այն մարդկանց ճակատին, որ հեծում են ու հոգոց հանում» (Եզկ 9:4):

Եբրայերեն բնագիրն ասում է՝ «ճակատին թաւ դիր»: «Թաւ»ը «թ» գիրն է, եբրայերենի 22-րդ՝ վերջին տառը: Հրահանգվում է տառը դնել ընտրյալների ճակատին. դա Աստծո անվան նշանագիրն է: Աստված ընտրյալների ճակատին թողնում է Իր ստորագրությունը:

Այստեղ մի հետաքրքրական հանգամանք կա, որ արժե նշել. հնում «թավ» տառը խաչի ձեւ ուներ: Դա պատահականությունն է: Անկասկած՝ ոչ: Աստվածային խաչն ի սկզբանե փրկության նշանն է: Նույն նշանն է, որ Եգիպտոսում գառան արյամբ իր տան ճակատին եւ դռան վրա դրեց յուրաքանչյուր իսրայելացի, որպեսզի երբ Աստծո հրեշտակն անցնի, նրա տունը աղետալի փորձանքի չենթարկվի: Հավանաբար նոյն այդ նշանագիր-խորհրդանշանով է Աստված կամենում Իր ծառաների ճակատները կնքել, որպեսզի նրանք փրկվեն վերջին աղետներից:

«Նա բարձր ձայնով աղաղակեց այն չորս հրեշտակներին, որոնց իշխանութիւն էր տրուել վնասելու երկրին ու ծովին, եւ ասաց. «Վնաս մի՛ տուէք երկրին, ո՛չ ծովին եւ ո՛չ էլ ծառերին, մինչեւ որ կնիքով դրոշմեմ Իմ՝ Աստուծոյ ծառաների ճակատները» (հմր 2-3):

2-րդ եւ 3-րդ համարները չեն սերտվել:

«Եւ լսեցի, որ Իսրայէլի տասներկու ցեղերից կնքուածների թիւը հարիւր քառասունչորս հազար է.

Յուդայի ցեղից՝ տասներկու հազար, Ռուբէնի ցեղից՝ տասներկու հազար,

Գադի ցեղից՝ տասներկու հազար, Ասերի ցեղից՝ տասներկու հազար,

Նեփթաղիմի ցեղից՝ տասներկու հազար, Մանասէի ցեղից՝ տասներկու հազար,

Շմաւոնի ցեղից՝ տասներկու հազար, Ղեւիի ցեղից՝ տասներկու հազար,

Իսաքարի ցեղից՝ տասներկու հազար, Զաբուղոնի ցեղից՝ տասներկու հազար,

Յովսէփի ցեղից՝ տասներկու հազար եւ Բենիամինի ցեղից՝ տասներկու հազար» (հմր 4-8):

Հակոբ Նահապետը 12 որդի ուներ, որոնցից 12 ցեղեր ծնվեցին: Երբ Իսրայելի թագավորությունը բաժանվեց երկու մասի, հյուսիսի

թագավորությունը կազմեցին 10 ցեղերը, իսկ հարավի թագավորությունը՝ 2 ցեղերը՝ Հուդայինը եւ Բենիամինինը: Հյուսիսի թագավորությունը ծանոթ է Իսրայելի թագավորություն անունով, հարավինը՝ Հուդայի թագավորություն անունով, որովհետեւ Հուդայի ցեղը ավելի մեծ էր, քան Բենիամինի ցեղը:

Ք. ա. 722 թվականին Ասորեստանի ձեռքով հյուսիսի թագավորության կործանումից հետո Իսրայելի 10 ցեղերն աքսորի տարվեցին Ասորեստան եւ այնտեղ ձուլվեցին տեղացիների հետ, իսկ իրենց հայրենի հողի վրա մնացած բեկորները խառնվեցին Ասորեստանից բերված հեթանոսներին եւ գրեթե կորստյան մատնվեցին: 12 ցեղերից մնացին միայն հարավի երկուսը: Այս էր պատկերը Քրիստոսի ժամանակ, նաեւ այս էր պատկերը Հայտնության գիրքը գրելու ժամանակ, ուստի այն օրերին «Իսրայէլի տասներկու ցեղեր» ասելն արդեն խորհրդանշական իմաստ էր ստացել:

Ոմանք «Իսրայէլի տասներկու ցեղեր» բացատրության առումով այս գլխում ինչ-որ բաժանում են տեսնում. առաջին ութ համարներում տեսնում են այն իսրայելացիների պատկերը, ովքեր վերջին նեղության ժամանակ, այսինքն՝ Քրիստոսի երկրորդ գալուստից անմիջապես առաջ Քրիստոսին ճանաչողներն ու փրկվողներն են լինելու, իսկ երկրորդ բաժնում տեսնում են աշխարհի այլ ժողովուրդներից եւ ազգերից դարձի եկողների պատկերը: Ուրիշները մերժում են այս բաժանումը եւ ասում, որ թե՛ առաջին բաժինը եւ թե՛ երկրորդը, ըստ էության, նույն ճշմարտությունն են արտահայտում. խոսում են Երկրի վրա եւ Երկնքում եղող փրկվածների մասին:

Ի՞նչ է նշանակում կնքվածների 144 000 թիվը:

Այս թիվը խորհրդանշական է:

Գիտենք, որ 12 թիվը երկու բան է արտահայտում: Նախ՝ Իսրայելի ցեղերի վերաբերյալ գործածվելով, ներկայացուցչական իմաստ ունի, եւ ապա՝ ամբողջականության: 144 000 թիվը նախ խորհրդանշական թվի ինքն իրենով բազմապատկումն է եւ հետո բազմապատկումն է 1000-ով: 144 000 թվով ասվածը համազոր է հսկայական թիվ ասելուն:

Մի շարք աղանդավորներ ասում են, թե 144 000 հոգին առանձնաշնորհյալներն են լինելու, ովքեր Քրիստոսի հետ գտնվելու են Երկնքում, մինչդեռ մյուս բազմությունը, որ թեպետ փրկվելու է, սակայն այդ 144 000 առանձնաշնորհյալների մեջ չի լինելու, կմնա Երկրի վրա եւ կենթարկվի 144 000-ի իշխանությանը:

Թե աղանդավորները որտեղից են վերցնում այս բացատրությունը, չգիտենք, սակայն հստակ է, որ Աստվածաշնչից չեն վերցնում: Այս գլխում ասվածը ճիշտ հակառակն է. այստեղ տեսնում ենք, որ 144 000-ը Երկրի վրա են, իսկ բազմությունը՝ Երկնքում:

Իսկ ինչո՞ւ են տրվել ցեղերի անունները, եթե խորհրդանշական արժեք ունեն:

Անկասկած, կարեւոր նշանակություն ունի ցեղերի անունների թվարկումը: Հին Կտակարանում ցեղերը թվարկող՝ երբեմն խիտ, երբեմն ընդարձակ, ցանկերը մեծավ մասամբ նույն բովանդակությունն ունեն, իսկ Հովհաննես առաքյալի ցանկը բոլորովին նոր է: Ինչո՞ւ:

Ցանկի առաջին անունն է Հուդա, երկրորդը՝ Ռուբեն: Եթե այդ ցանկը կազմված լիներ Հակոբ նահապետի որդիների անդրանիկության կարգով, ապա Ռուբենի անունը պետք է առաջինը լիներ: Սակայն Ռուբենը հոր հանդեպ գործած հանցանքով կորցրեց անդրանիկությունը: Հակոբ նահապետը Ռուբենի անդրանիկությունը ժամանակավորապես փոխանցեց Հովսեփին: Ժամանակավորապես, որովհետեւ նահապետն իր օրհնության մեջ Հուդայի համար ասել էր, թե նա առյուծի ձագ է (Ծն 49:9), որով նա իր որդիների մեջ անդրանիկությունը նախասահմանել էր Հուդային, որովհետեւ նրա ցեղից էր գալու թագավորությունը: Հուդայի ցեղից էր ծնվելու նաեւ մեր Փրկիչը, Թագավորը՝ Քրիստոսը:

Ռուբենից հետո եկող երեք՝ Գադի, Ասերի եւ Նեփթաղիմի ցեղերը Հակոբ նահապետի երկու կանանց՝ Լիայի եւ Ռաքելի որդիների սերունդն են: Գադն ու Ասերը ծնվել էին Լիայի աղախին Զեղփայից, իսկ Նեփթաղիմը՝ Ռաքելի աղախին Բաղղայից: Գաղատացիներին հղած նամակում Պողոս առաքյալը գրել է, թե այլեւս խտրականություն չկա ստրուկի եւ ազատի միջեւ (Գղ 3:28): Արդ, աղախինների որդիների հիշատակությունը նպատակ ունի ասելու, որ այլեւս խտրականություն չկա ստրուկի եւ ազատի միջեւ, եւ որ Քրիստոս ջնջել է այդ խտրականությունը:

Հին ցանկերից դուրս է մնացել Ղեւիի անունը, որովհետեւ Ղեւին եւ նրա ժառանգորդները դարձան քահանայական ցեղ: Նրանք դուրս մնացին նաեւ մյուս ցեղերի ցանկից, որովհետեւ մինչ մյուսները հատուկ երկրամաս ժառանգություն պիտի ստանային, Ղեւին եւ նրա սերունդները հողամաս չէին ունենալու, այլ ցրվելու էին մյուս բոլորի մեջ:

Աստված ասել էր, որ Ղեւիի եւ նրա սերունդների ժառանգությունն Ինքն իսկ է. Աստված Ինքն է քահանաների կամ կրոնավորների ժառանգությունը: Ցանկում Ղեւիի ցեղին ընդգրկելը նշանակում է, որ Աստծո նոր ժողովրդի մեջ նույնպես կա այդ քահանայությունը եւ պիտի շարունակվի մինչեւ երկնային կատարյալ քահանայության հաստատումը:

Ինչպես տեսնում ենք, ցանկում Եփրեմի անունը չկա. նրա անվան փոխարեն գրվել է Հովսեփի անունը: Բացակայում է նաեւ Դանի անունը: Սա ինչպե՞ս կարելի է բացատրել:

Պատմության ընթացքում երկուսն էլ հանդես եկան որպես Աստծո հանդեպ անհավատարմության ջատագովներ: Եփրեմի ցեղն ստեղծեց հյուսիսի թագավորությունը եւ հակվեց կռապաշտության: Աքաաբի եւ Հեզաբելի ժամանակ ամբողջ երկիրը թաղվեց Բաաղ չաստծո պաշտամունքի մեջ: Հետագայում դա հյուսիսի թագավորության մեջ դարձավ մնայուն գիծ:

Հյուսիսի թագավորությունը Երուսաղեմին հակադրվելու համար ստեղծեց պաշտամունքային երկու կենտրոն, մեկը՝ Բեթէլում, իսկ մյուսը՝ Դանում: Երկուսն էլ ունեցան իրենց քահանայությունը, որոնք Ղեւիի քահանայական ցեղի՝ Աստծո քահանայության մաս չէին կազմում, այլ նմանվում էին հեթանոսական քահանայությանը: Սա պատճառ դարձավ, որ Եփրեմի անձը նույնանա անհավատարմության հետ եւ դուրս մնա ցանկից:

Դանի ցեղն սկզբից հանդես եկավ անհավատարմությամբ: Դան քաղաքում քահանայության հաստատումն արդեն ցույց է տալիս այդ ցեղի հեռանալն Աստծո Օրենքից ու տաճարից: Հակոբ նահապետի օրհնության մեջ Դանը նմանեցվել է ճանապարհի վրա պառկող օձի (Ծն 49:17): Երեւում է, որ այդ օձը համեմատվել է յուրահատուկ օձի՝ Սատանայի հետ: Այդ պատճառով Դանի անունը ցանկից դուրս է թողնվել: Ըստ Գ դարի հայրապետ Երանոսի՝ Դանի անունը ցանկից դուրս է մնացել, որովհետեւ Քրիստոսի հակառակորդը՝ Նեռը, նրա ցեղից է լինելու:

ՄԵԾ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ (7:9-17)

9-17-րդ համարները մեզ ներկայացնում են ապագա փրկյալների պատկերը: Այս համարներով Տերը ցանկանում է, որ ժամանակակից քրիստոնյաները քաջալերվեն ու մխիթարվեն, որովհետեւ ապագա փրկյալների թիվը շատ մեծ ու անհամար է լինելու:

Փրկվածները լինելու են «բոլոր ազգերից, բոլոր ցեղերից, բոլոր լեզուներից եւ բոլոր ժողովուրդներից» (հմր 9):

Նրանք «սպիտակ պարեգօտներ հագած եւ արմաւենու ճիւղեր իրենց ձեռքերին»՝ կանգնելու են երկնային գահի եւ Գառան դիմաց (հմր 9-ի շարունակությունը):

Սպիտակ պարեգոտները մաքրության նշան են: Քրիստոսին հավատացողները մաքրվում են Նրա արյամբ, իսկ արմավենու ճյուղերն այդ հավատացողների հաղթանակի նշանն են: Քրիստոսին հավատացողները, մեծ նեղությունից անցնելով հանդերձ, այնուամենայնիվ հաղթելու են:

«Նրանք բարձրաձայն աղաղակում էին՝ ասելով.
«Փրկութիւնը գալիս է մեր Աստծուց,
որ բազմում է գահի վրայ,
գալիս է նաեւ Գառից»:
Բոլոր հրեշտակները, որոնք կանգնած էին գահի, երեցների եւ

չորս կենդանիների շուրջ, երեսի վրա գետնին ընկան գահի առջեւ եւ երկրպագեցին Աստծուն՝ ասելով.
«Ամէն. օրհնութիւնը, փառքն ու իմաստութիւնը,
գոհութիւնն ու պատիւը, կարողութիւնն ու զօրութիւնը
պատկանում են մեր Տէր Աստծուն
յաւիտեանս յաւիտենից, ամէն» » (հմր 10-12):

10-12-րդ համարները չեն սերտվել:

Երեցներից մեկը հարցնում է. «Ովքե՞ր են սպիտակ պարեգօտ հագած այս մարդիկ եւ որտեղի՞ց են գալիս» (հմր 13):

«Տէ՛ր, Դո՛ւ գիտես,– պատասխանեց: Նա ասաց ինձ.

– Այս մարդիկ նրանք են, որ գալիս են մեծ նեղութիւնից: Նրանք իրենց պարեգօտները լուացին եւ սպիտակեցրին Գառան արիւնով» (հմր 13-14): Այլ խոսքով՝ նրանք այն մարդիկ են, ովքեր, ընդունելով եւ խոստովանելով Քրիստոսի խաչը, մեծ դժվարություններով են անցնելու, սակայն արժանանալու են երկնային փրկության, կատարյալ փրկության պարգեւին:

«Ահա թէ ինչո՛ւ նրանք կանգնած են Աստուծոյ գահի դիմաց եւ գիշեր-ցերեկ պաշտում են Նրան Իր տաճարում» (հմր 15):

Ինչ տաճարի մասին է խոսքը: Երուսաղեմի տաճարի պարագայում, երբ «տաճար» էին ասում, հասկանում էին «Սրբարան»ից կամ «Սրբութիւն սրբոց»ից դուրս գտնվող ամբողջ կառույցը: Սակայն Երկնքում այդպիսի բան չկա: Երկնքում «տաճար»ը «սրբարան»ն է, այսինքն՝ այն «վայր»ը, ուր Աստված է: Ամեն ոք, ով Գառան դիմաց է գտնվում, ինքն իրեն զգում է Աստծո աննյութական տաճարում, ուր ներկա է Աստված: Երկրի վրա Աստված բնակվում է մարդու մեջ, իսկ Երկնքում մա՛րդը բնակվում է Աստծո մեջ:

«… Եւ գահի վրայ բազմողը հովանի կլինի նրանց» (հմր 15): Հայերեն թարգմանությունը մեզ քիչ է օգնում պատկերացնելու բնագրի թելադրածը: Բնագիրը մեկ բառով ասում է, թե գահի վրա բազմողն Ինքը տաղավար է լինելու նրանց համար կամ պիտի տաղավարի:

Ամեն բառ իր թելադրականությունն ունի: Այս բառը մեզ թելադրում է, որ մենք մի Նոր Տաղավարահարաց տոնի առջեւ ենք: Տոն, որ այս անգամ պատկերվում է Երկնքում: Այնտեղ մեկտեղվելու են աշխարհի բոլոր ժողովուրդները եւ բնակվելու են մի տաղավարում, այսինքն՝ Աստված-Տաղավարում:

«Նրանք ո՛չ քաղց են զգալու, ո՛չ էլ ծարաւելու են. նրանց չեն վնասելու ո՛չ արեգակը եւ ո՛չ էլ այրող տօթը: Եւ Գառը, որ գահի մէջտեղում է, հովուի նման կարածեցնի նրանց ու կառաջնորդի դէպի կեանքի աղբիւրի կենսատու ջուրը, եւ Աստուած նրանց աչքերից կսրբի ամէն արտասուք» (հմր 16-17):

16-րդ եւ 17-րդ համարները նույնպես չեն սերտվել:

Ը ԳԼՈՒԽ

Նախորդ գլուխը միջանկյալ ներկայացնում էր 6-րդ գլխի 1-ին համարով սկսվող կնիքների բացվելը, ինչը 7-րդ գլխում մի պահ ընդմիջվել էր: 6-րդ գլուխն ավարտվում է յոթ կնիքներից 6-րդի բացվելով: Այս գլխով մեզ ներկայացվում է 7-րդ կնիքի բացվելը: Այս կնիքի բացումը մեր առջեւ բացահայտում է գերբնական աղետների պատկերը, աղետներ, որոնց հետեւանքները շատ ավելի սոսկալի են, եւ որոնք համաշխարհային տարողությամբ են տեղի ունենալու:

ՅՈԹԵՐՈՐԴ ԿՆԻՔԸ (8:1-6)

«Երբ Գառը բացեց եօթերորդ կնիքը, Երկնքում մօտ կէս ժամ լռութիւն տիրեց» (հմր 1):

Այս կես ժամվա լռությունը շատ խորհրդավոր պահ է ստեղծում. մի կողմից մեզ զգալ է տալիս գալիք կացության լրջությունը, մյուս կողմից՝ հույժ ողբերգականությունը: Կեսժամյա լռությունը հատկանշական է երկու իմաստով՝

1. Կարծեք ցանկանում է ցույց տալ նախորդ եւ 7-րդ կնիքներին հետեւող հարվածների տարբերությունը. նախորդները մեծ նեղությունը կանխող հարվածներ էին, իսկ 7-րդ կնիքին հետեւող հարվածներով արդեն սկսվում է մեծ նեղության ժամանակը:

2. Նախորդ հարվածների եւ 7-րդ կնիքին հետեւող հարվածների միջեւ բովանդակության շատ հստակ տարբերություն կա. վերջին կնիքին հետեւող աղետները միմյանց նման չեն, այլ կատարելապես տարբեր են: Սրանց տարբերությունն ավելիով է շեշտված, որովհետեւ մեծ նեղության ժամանակի աղետներ են: Դրանք տիեզերական տարողություն ունեն:

«Եւ տեսայ եօթ հրեշտակներին, որոնք կանգնած էին Աստուծոյ դիմաց. նրանց տրուեցին եօթ փողեր» (հմր 2): Փողը նշանակ է շատ բաների, ամենից առաջ ազդարարող ինը գործիք է մատնանշում:

Յոթ հրեշտակները յոթ փողերով ազդարարում են Աստծո դատաստանը, որը զույգ նշանակություն ունի՝ արդարների համար փրկության ժամն է, իսկ մեղավորների համար՝ դատապարտության: Ուստի յոթ փողերն այստեղ ունեն կրկնակ նշանակություն՝ ուրախության եւ դատապարտության:

«Մի ուրիշ հրեշտակ էլ, որ ձեռքին ոսկէ խնկաման ունէր, եկաւ ու կանգնեց զոհասեղանի մօտ: Նրան առատ խունկ տրուեց, որպէսզի Աստուծոյ բոլոր ընտրեալների աղօթքները մատուցի ոսկեղէն զոհասեղանի վրայ, որը գտնւում է գահի դիմաց: Եւ խնկի ծուխը, որ Աստուծոյ ընտրեալների աղօթքն է, հրեշտակի ձեռքից բարձրացաւ Աստուծոյ առջեւ» (հմր 3-4):

Երբ մենք այսօր «խնկաման» ենք ասում, հասկանում ենք այն ամանը, որի մեջ խունկ կա, մինչդեռ այստեղի «խնկաման»ն ավելի շուտ խնկանոցն է, այսինքն՝ այն ամանը, որի վրա կրակ էին վառում, իսկ կրակին ծխելու համար խունկ դնում: Խնկանոցը բուրվառի հետ չշփոթենք. խնկանոցը պարզապես մի աման է, որ Վկայության Խորանում էր գործածվում եւ զետեղում էին խնկի սեղանի վրա: Տարին մեկ անգամ քահանայապետը, խնկանոցը ձեռքին, Սրբություն Սրբոց էր մտնում: Սրբարանը պետք է լցվեր խնկի ծխով, որպեսզի, ինչպես բնագիրն է ասում, քահանայապետը չմահանար:

Այստեղ կամենում եմ հիշեցնել Հայտնության գրքի 5-րդ գլխի 8-րդ համարը, ուր խունկը ներկայացվում է որպես սրբերի աղոթքներ: Այստեղ եւս նույն բանն ենք տեսնում: Այնտեղ ընծայողները քսանչորս երեցներ էին, իսկ այստեղ հրեշտակը միայնակ է ընծայում, սակայն թե՛ երեցները եւ թե՛ հրեշտակը նույն դերն են կատարում:

«Ապա հրեշտակը խնկամանը լցրեց զոհասեղանի կրակից եւ այն գցեց Երկրի վրայ: Եւ ահա փայլատակումներով ուժեղ երկրաշարժ եղաւ, եւ լսուեցին որոտներ ու ձայներ» (հմր 5): Հայերենում նույնպես ասում ենք. «Գլխիս կրակ թափվեց»: Պատկերավոր մի բացատրություն է, որով կամենում ենք ասել, թե մեր գլխին մեծ փորձանք եկավ:

Աստծո ճշմարիտ հետեւողների համար կրակը սրբարար է, իսկ Աստծո ճշմարիտ հետեւող չեղողների համար՝ կործանարար:

Պողոս առաքյալն ասում է. «Այդ հիմքի վրայ կառուցուածը կարող է ոսկի, արծաթ կամ թանկարժէք քար լինել կամ կարող է փայտ, խոտ կամ եղէգ լինել: Իւրաքանչիւրի գործը յայտնի պիտի լինի դատաստանի օրը, եւ դա կրակով պիտի յայտնի դառնայ, որովհետեւ պիտի փորձուի իւրաքանչիւրի որակը» (Ա Կր 3:12-13): Ուրեմն, կրակը նաեւ հայտնի է դարձնում կառույցի կամ յուրաքանչյուրի իրական արժեքը:

«Փայլատակումներ»ն արտահայտում են Աստծո կամքի գերազանցությունն ու վեհությունը, նաեւ՝ գալիք հարվածների ահավորությունը:

«Եօթ հրեշտակները, որոնք եօթ փողեր ունէին, պատրաստուեցին դրանք հնչեցնելու» (հմր 6):

6-րդ համարը սերտված չէ:

ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ՓՈՂԵՐԸ (8:7-13)

Փողեր հնչեցնելը, ինչով սկսվում է 7-րդ համարը, ազդարարում է ոչ միայն Երկրի վրա ապրող մարդկանց գլխին գալիք կործանարար փորձանքները, այլև Աստծուն ապավինողների փրկությունը: Ինչպես հաճախ ասվել է, Ելից գիրքը Եկեղեցու կամ փրկության պատկերն է: Եթե ամբողջ Ելից գիրքը ընթերցենք քրիստոնեական հայացքով, ապա այդ գրքում քայլ առ քայլ կտեսնենք մեր փրկության պատմությունը:

Թեպետ Ելից գիրքը «մարգարեություն» չի կոչվել, սակայն Աստծո ժողովրդի կյանքից այնպիսի դրվագ է ներկայացնում, որ մարգարեական կատարումներ ունի եւ պիտի ունենա: Առաջին իրականացած

կատարումը կոչվում է «Մեսիական կատարում». Քրիստոսի փրկագործությունն ընդունվում է որպես այս աշխարհից ելք դեպի հավիտենական կյանք կամ խոստացված երկիր:

Հայտնության գրքի միջոցով տեղեկանում ենք երկրորդ ելքի մասին: Նույն երեւույթները, որոնք առկա են Ելից գրքում, աշխարհի վախճանին հայտնվելու են համաշխարհային ընդգրկումով: Եգիպտոսին հասցված հարվածները մեզ հիշեցնում են Աստծո դատաստանները թե՛ Եգիպտոս երկրի, թե՛ նրա չաստվածների, թե՛ փարավոնի եւ նրա իշխանների ու ժողովրդի հանդեպ: Նույնպիսին է լինելու Աստծո վախճանական դատաստանն աշխարհի՝ Նոր Եգիպտոսի, նրա չաստվածների կամ աշխարհի վրա Սատանայի գործակատարների հանդեպ: Դատաստան է լինելու Չարին գործակից բոլոր պետությունների եւ Չարին ծառայող աշխարհի բոլոր ղեկավարների հանդեպ: Եգիպտոսի եւ Հայտնության գրքի դատաստանների նմանությունը պատահական չէ. Եսայի եւ Ովսե մարգարեները Եգիպտոսից ելքը ներկայացնում են որպես ապագա փրկության նախապատկերացում, իսկ Եզեկիելի մարգարեության 38-րդ գլխի 17-22-րդ համարներում գտնում ենք աստվածային դատաստանների բովանդակությունը: Աստծո ժողովրդի վերջնական ելքը կամ ազատագրումը մոտ է, ուստի Քրիստոսի հետեւողներն ուրախանալու բոլոր պատճառներն ունեն:

Աշխարհի վախճանին պատահելիք չարիքների համար չէ, որ նրանք պիտի ուրախանան: Նրանց ուրախության պատճառն այլոց չարչարանքն ու լինելիք կորուստը չէ, այլ իրենց սպասումների կատարումը, որ սկիզբն է հավիտենական երանության, ուր մտնելու են: Ինչպես իսրայելացի ժողովուրդը զերծ մնաց այն դատաստաններից, որոնց ենթարկվեցին Եգիպտոսն ու եգիպտացի ժողովուրդը, նույնպես եւ Քրիստոսի հետեւորդները փրկվելու են այն բոլոր հարվածներից, որոնք աշխարհի վախճանին պիտի պատահեն:

«Առաջին հրեշտակը հնչեցրեց փողը եւ արիւնով խառնուած կարկուտ տեղաց Երկրի վրայ եւ այրեց Երկրի մէկ երրորդ մասը, այրեց նաեւ ծառերի մէկ երրորդը եւ բոլոր դալար խոտերը» (հմր 7):

Այս համարը հիշեցնում է Եգիպտոսի վրա իջած հարվածներից մեկը (տե՛ս Ելք 9:22-26):

Ինչ է նշանակում այս «մեկ երրորդ մասը»: Պարզապես այն, որ աղետներն ամեն ինչ չփչացրեցին: «Մեկ երրորդ մասը» մասնակիության նշան է եւ միաժամանակ մատնանշում է, որ աստվածային դատաստանը դեռեւս շարունակվելու է:

«Ապա փողահարեց երկրորդ հրեշտակը, եւ ահա հսկայ լեռան նման հրավառ մի զանգուած ընկաւ ծովը, եւ ծովի մէկ երրորդ մասն արիւն դարձաւ. ծովային կենդանիների մէկ երրորդը կոտորուեց, եւ նաւերի մէկ երրորդն ընկղմուեց» (հմր 8-9):

Ինչ է այս հրավառ զանգվածը: Ոմանք, ցանկանալով պատմական բացատրություն տալ, ասել են, թե դա Հռոմեական կայսրությունն է: Նկատի ունենալով, որ մարգարեական գրականության մեջ «լեռ»ը թագավորություն է նշանակում, ուստի «հսկայ լեռ» արտահայտությունը հասկացվել է որպես ակնարկություն Հռոմեական կայսրության, ուրեմն այս համարը խոսում է Հռոմեական կայսրության սարսափելի անկման մասին, իսկ ծովի արյուն դառնալը բացատրում են որպես այդ անկմանն ուղեկցած արյունահեղություններ:

Սակայն հնարավոր է նաեւ, որ այստեղ ներկայացված «հսկայ լեռ» արտահայտությունը խորհրդանշում է այն «աստղը» կամ հրեշտակին, որ, ինչպես կտեսնենք հաջորդ համարում, ընկնում է երկնքից:

«Երրորդ հրեշտակն էլ հնչեցրեց փողը: Մի մեծ աստղ, որ բորբոքւում էր ջահի նման, երկնքից ընկաւ գետերի եւ աղբիւրների մէկ երրորդ մասի վրայ» (հմր 10):

Ինչպես տեսանք 1-ին գլխի վերջին համարում, աստղը նաեւ հրեշտակի խորհրդանիշն է: Ոմանք, փորձելով այս համարին պատմական բացատրություն տալ, ցանկանում են տեսնել երկրավոր մեկ այլ իշխանության անկումը եւ ընկնում են ենթադրությունների գիրկը: Ուրիշներն էլ պնդում են, թե մեծ աստղն աղանդավորի կամ աղանդի ակնարկություն է: Սակայն ինչպիսին էլ լինի առարկայական ակնարկությունը, մեզ համար հստակ է, որ մեծ աստղի անունը «Դառնութիւն» է: Ինչպես ասում է 11-րդ համարը, «Աստղի անունը Դառնութիւն էր»:

«Ջրերի մէկ երրորդը լեղի դարձաւ, եւ մարդկանցից շատերը մեռան ջրի դառնութիւնից» (հմր 11): Ջրերը ժողովուրդների խորհրդանիշն են: Թելադրանքն այն է, որ մեծ աստղի անկումը ժողովուրդների մի մասի կյանքը ենթարկելու է մեծ աղետի:

«Յետոյ փողահարեց չորրորդ հրեշտակը, եւ արեգակի մէկ երրորդ մասը զարկուեց, ինչպէս նաեւ լուսնի մէկ երրորդը եւ աստղերի մէկ երրորդը, եւ նրանց մէկ երրորդ մասը մթագնելով խաւարեց. ցերեկուայ, ինչպէս նաեւ գիշերուայ մէկ երրորդ մասում լոյս չկար» (հմր 12): Տես Եգիպտոսի շոշափելի խավարը (Ելք 10:21-23):

Խավարը հավատքի պակասի, Աստծուց հեռու լինելու խորհրդանիշն է: Աստծո ներկայությունը մերժողները խավարի մեջ են:

Չարի իշխանությունը նույնպես կոչվել է խավարի իշխանություն: Խավարում նշանակում է Չարի իշխանության հաստատում:

Սակայն խավարը կամ Չարի իշխանությունը չպիտի կարողանա իր մեջ առնել Աստծո հավատարիմներին, որովհետեւ Աստված նրանց պահում է Իր լույսի մեջ եւ առաջնորդում Իր լույսով:

«Ապա տեսայ եւ լսեցի երկնքի բարձունքում թռչող մի արծուի կանչը, որ բարձրաձայն ասում էր. «Վա՜յ, վա՜յ, վա՜յ Երկրի վրայ բնակւողներին, երբ ինչի ձայնը մնացեալ երեք փողերի, որ ինչեցնելու են հրեշտակները» (հմր 13): «Վա՜յ»երը վերաբերում են Քրիստոսի հոտի կամ Եկեղեցու մաս կազմողներին: «Վա՜յ»երն ասվում են, որովհետեւ գալիք հարվածները հույժ ահարկու են լինելու, որոնց պարզ ընթերցումն իսկ բավական է տոկալու համար:

Թ ԳԼՈՒԽ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՓՈՂԸ (9:1-12)

«Հինգերորդ հրեշտակն էլ ինչեցրեց փողը: Եւ տեսայ մի մեծ աստղ, որ Երկնքից ընկաւ Երկիր, եւ այդ աստղին տրուեց անդունդի գբի բանալին» (հմր 1): «Երկնքից ընկաւ Երկիր» արտահայտության փոխարեն հունարեն բնագրում գրվել է «երկնքից Երկիր ընկած» ձեւը: Հայերեն թարգմանությունից կարող ենք այն տպավորությունն ունենալ, որ իբր թե աստղը նոր ընկավ, այսինքն՝ այն ժամանակ, երբ Հովհաննես առաքյալը դիտում էր եւ տեսավ աստղի ընկնելը: Հունարեն բնագիրը թելադրում է, որ առաքյալը ոչ թե աստղի ընկնելն է տեսնում, այլ՝ արդեն ընկած աստղը: Սա կարեւոր տարբերություն է:

Նախեւառաջ ասեմ, որ այս աստղը նյութական կամ տիեզերական մարմին չէ, հետեւաբար, դրա բերելիք աղետն այն վնասը չի կարող տալ, որ աստղի անկումն է պատճառում: Նյութական աստղի անկումը վնասում է Երկիրը, մինչդեռ այս աստղի բերելիքը միմիայն մարդկությանն է վնասում: Այս աստղը 11-րդ համարում պիտի կոչվի նրանց «անդունդի հրեշտակը» կամ «թագավորը», որոնք անդնդից եկող մորեխներն են: Մորեխների առնչությամբ պիտի տեսնենք, որ դրանք դիւթական ծագում ունեցող արարածներ են:

Արդ, շատ հավանական է, որ այստեղ «աստղ» խորհրդանիշի հետեւում հնարավոր լինի տեսնել Սատանային: Եսայու մարգարեության 14-րդ գլխի 12-րդ եւ Եզեկիելի մարգարեության 28-րդ գլխի 12-րդ, 14-րդ, 15-րդ համարներում Սատանան ներկայացվում է իր անցյալի վիճակով, այսինքն՝ որպես առավոտյան ծագող արուսյակ, կատարելության կնիք, պահապան քերովբե եւ կատարյալ էակ, սակայն երբ նա անօրինություն գործեց, ընկավ, այսինքն՝ երբ իր հպարտության պատճառով մեղանչեց Աստծո դեմ, անհնազանդ գտնվեց

Աստծուն, Աստված նրան զրկեց ունեցած պատվից եւ դուրս գցեց Երկնային թագավորությունից՝ ուղարկելով Երկիր:

Ե՞րբ տեղի ունեցավ այդ աստղի անկումը Երկնքից Երկիր: Այդ անկման ճշգրիտ պահը չգիտենք, սակայն հավանական է, որ այն տեղի է ունեցել կա՛մ տիեզերքի ստեղծման առաջին փուլին, կա՛մ տիեզերքի արարումից անմիջապես առաջ: Այս անկման մասին մեզ վկայում է նաեւ Քրիստոս Ինքը մասնավորաբար, երբ վերադառնում էր 72 աշակերտներին քարոզելուց հետո:

Նա ասում է. «Տեսայ Սատանային՝ կայծակի նման Երկնքից ցած ընկնելիս» (Ղկ 10:18): Այս խոսքը մեզ թելադրում է, որ Սատանայի անկումը շարունակական ընթացք է: Սատանան մեկ անգամ չէ, որ ընկել է. նա ընկել է Քրիստոսի փրկագործական առաքելությամբ, եւ ամեն անգամ ընկնում է Եկեղեցու առաքելությամբ եւ յուրաքանչյուր մարդու փրկությամբ:

Ասվում է. «… Այդ աստղին տրուեց անդունդի գբի բանալին»:

Մենք գիտենք, որ բանալին լիազոր իշխանության խորհրդանիշն է, նաեւ իրավասություն է նշանակում: Ասվում է՝ «… տրուեց»: Ո՞վ է տվողը: Ըստ Աստվածաշնչի՝ Հայր Աստված Ինքը կամ Քրիստոս Ինքն է լիազոր իշխանություն տալիս: Ըստ այս համարի՝ «անդունդի գբի բանալին» տվողը Քրիստոս Ինքն է:

Իսկ ինչո՞ւ է Քրիստոս այդ աղետաբեր բանալին տալիս Սատանային: Ինչո՞ւ է Նա թույլ տալիս, որ չարիքներ պատահեն, Ինքը, որ ամենաբարին է:

Նույնիսկ չարիքները, հակառակ մեր ըմբռնումի, ծառայում են Աստծո փրկագործական նպատակին: Թե աստվածային կամքն իր նպատակն ինչպե՞ս է իրագործում, մեզ համար մեծ խորհուրդ է: Մենք չենք կարող այդ խորհուրդը կատարելապես հասկանալ. այդ խորհուրդը վեր է մնում մեր հասկացողությունից, սակայն շնորհիվ Աստվածաշնչի՝ մենք իմանում ենք, որ չարիքները նույնպես ծառայում են աստվածային ծրագրի իրագործմանը:

«Անդունդ» բառն Աստվածաշնչում ունի երեք նշանակություն՝

Նախ՝ նշանակում է «օվկիանոս» («անդունդ» բառն այսօր մեր

լեզվում այս նշանակությամբ չենք գործածում. այժմ բառը նշանակում է լեռների միջեւ բացված հսկա վիհ) կամ ջրերի ընդարձակ եւ խորունկ տարածություն: Երկրորդ՝ նշանակում է ծովերի խորքը կամ խորունկ տեղը: Եվ երրորդ՝ նշանակում է այն ժամանակավոր վայրը, ուր գտնվում են Սատանան եւ նրա գործակիցները: Այս համարում «անդունդ»ն այդ վայրն է նշանակում:

«Աստղը բացեց անդունդի գուբը, եւ ահա ծուխ բարձրացաւ այնտեղից՝ նման մի մեծ հնոցի ծխի: Օդը լցուեց այդ ծխով, եւ արեգակը խաւարեց» (հմր 2): Այս խավարումը կատարումն է Եգիպտոսի վրա իջած խավարման (Ելք 10:21-29):

Այստեղ խավարումը խորհրդանշում է Աստծո վախճանական դատաստանը: Մարգարեական գրականության մեջ Աստծո դատաստանի օրը բնորոշվում է որպես «խավարի օր»: Հիսուս, որպես դատապարտության վայր, բազմիցս ակնարկել է «արտաքին խավարը», ուր լինելու են լաց ու ատամների կրճտում:

«Ծխի միջից Երկրի վրայ դուրս եկան մորեխներ, որոնց իշխանութիւն տրուեց խայթելու այնպէս, ինչպէս կարիճներն են խայթում» (հմր 3):

Սա Տիրոջ կողմից Եգիպտոսին հասցնելիք մեկ այլ հարվածի կատարումն է, որ մորեխների արշավանքի տեսքով եղավ (Ելք 10:1-20): Գիտենք, որ մորեխներն ընդհանրապես անապատային երկրների միջատներ են: Դրանք հայտնվում են մարտի վերջերին, այսինքն՝ գարնան սկզբին, հաճախ՝ մեծ երամներով, որոնք երբեմն այնքան մեծ են լինում, որ կարող են խավարեցնել երկիրը: Այս պարագայում «ծուխ»ը հավանաբար նշանակում է անթիվ, անհամար մորեխների առաջացրած խավարը:

Թեպետ մորեխները երեւութապես տկար արարածներ են, սակայն իրենց հսկայական եւ կանոնավոր բանակներով մեծ աղետ են պատճառում: Այստեղ մորեխների արշավանքը թեեւ ներկայացվում է բնական աղետի տեսքով, սակայն իրականում խոսքը բնական երեւույթի մասին չէ: Այս մորեխները դիվական ծագումով արարածներ են, որոնց իշխանություն է տրվել խայթելու այն մարդկանց, «որոնք իրենց ճակատի վրայ չունեն Աստուծոյ կնիքը» (հմր 4):

«Մորեխներին հրամայուեց, որ չսպանեն այդ մարդկանց, այլ հինգ ամիս չարչարեն նրանց» (հմր 5):

Մորեխները հինգ ամսվա կյանք ունեն: Դա երկար ժամանակ չէ. ուստի դրանց պատճառելիք ցավերը երկար չեն տեւելու, թեեւ խայթոցները կամ պատճառած տանջանքներն այնքան սոսկալի պիտի լինեն, որ «այն օրերին մարդիկ մահ կփնտրեն, բայց չեն գտնի. կուզենան մեռնել, բայց մահը կփախչի նրանցից» (հմր 6):

«Մորեխները նման էին պատերազմի պատրաստուած ձիերի. նրանց գլուխներին կային պսակներ՝ նման ոսկէ պսակի, եւ նրանց դէմքը նման էր մարդու դէմքի» (հմր 7):

Հովելի մարգարեության 2-րդ գլխի 4-11-րդ համարներում մորեխների պատկեր կա, որ այնքան նման է այս գլխում նկարագրվածին:

«… Նման ոսկէ պսակի»: Պսակը հաղթանակի նշան է, իսկ ոսկե պսակը՝ փառավոր հաղթանակի, սակայն այստեղ նկարագրվածը ոսկե պսակ չէ, այլ նմանվում է ոսկե պսակի: Ուրեմն, սա կեղծ հաղթանակ է նշանակում: Արդ, մորեխների գլխին եղած պսակները մեզ թելադրում են, որ դրանց հաղթանակն իրականում չի լինելու, կամ, այլ խոսքով, դրանց հաղթանակը վերջնական չի լինելու, այլ՝ ժամանակավոր:

Ասվում է նաեւ, թե մորեխների դեմքերը մարդու դեմքի նմանություն ունեին: Չի ասում՝ մարդկային դեմք ունեին, այլ՝ մարդու դեմքի նմանություն ունեին, ինչը նշանակում է, թե դրանց նկարագիրը խաբուսիկ էր, մարդկանց մոլորեցնելուն էր ծառայում:

«Նրանց մազերը նման էին կնոջ մազերի, եւ նրանց ատամները՝ առիւծի ատամների» (հմր 8): Նկարագրված դեմքերը տարօրինակ ու դժվար հասկանալի են. նրանք ձիագլուխ են, սակայն սովորական ձին գլխին բաշ է ունենում, ոչ թե կանացի մազեր: Այս տողերով մեզ ինչ-որ բան է ասվում. եթե որոշ տարրեր կցենք, ապա կարող ենք բացատրություն ունենալ:

Տարանջատենք:

Այստեղ ունենք չորս տարր՝ ձի, մարդ, կին եւ առյուծ: Այժմ բաղդատենք: 4-րդ գլխի 7-րդ համարում տեսանք, որ երկնավոր գահի դիմաց կամ անմիջապես գահի կողքին կային կանգնած չորս կենդանի էակներ, որոնք չորս դեմք ունեին՝ առյուծի, զվարակի կամ եզի, մարդու եւ արծվի:

Այս՝ 4-րդ գլխի 7-րդ համարում նկարագրվածը քերովբեների դեմքերին էր վերաբերում, իսկ այստեղ նկարագրվածը դիվական ծագում ունեցող արարածների մասին է: Այս տարրերի մեջ միայն երկուսի՝ մարդու եւ առյուծի պատկերների մեջ կա մասնակի նմանություն: Այստեղ առյուծի նմանությունը միայն նրա ատամների տարրն է. ատամները պատառոտողի, բզկտողի նշանակություն ունեն, մինչդեռ առյուծի պատկերը թագավորական խորհրդանիշ է, նաեւ վեհության, փառքի, որն այս պարագայում բացակայում է:

Երկրորդ՝ մարդու կերպարանքը որ կա, գազանայինի եւ մարդկայինի խառնուրդ է: Սա մեզ հուշում է, որ դրանք մարդկայինից հեռացած ուժեր են: Երրորդ՝ ձին պատերազմի խորհրդանիշ է, նաեւ խորհրդանիշ է հաղթանակի: Այստեղ սակայն ձիու գլուխը կա, բայց զվարակի պատկերը չկա: Զվարակը զոհի, զոհագործման, նվիրումի, հեզության եւ խոնարհության խորհրդանիշն է, նաեւ Աստծո եւ մարդու միջեւ հաշտության ու խաղաղության խորհրդանիշ է, որն այստեղ բացարձակապես չենք տեսնում: Այս եկող արարածները պատերազմով խռովություն եւ աղետ բերելու համար են:

Ուշագրավ է, որ պատկերի մեջ պակասում է նաեւ արծիվը: Արծիվը երկնային ճշմարտությունների կամ աստվածային մտածողության նշան է: Արծվի խորհրդանիշի փոխարեն այստեղ կնոջ պատկեր է, որ (թող չնեղանան իգական սեռի ներկայացուցիչները) երկրավոր ցանկությունների խորհրդանիշն է: Ուրեմն կնոջ խորհրդանիշով ասվում է, թե այդ արարածների բերած պատիժը երկրավոր մտածողության հետեւանք է:

Այս չորս տարրերի համեմատությամբ հստակ երեւում է, որ Սատանան ու նրա արբանյակները հաճախ են ներկայանում ճիշտ այն պատկերներով, որոնցով ներկայանում են Քրիստոս եւ հրեշտակները: Այդպես են վարվում, որպեսզի մարդկանց խաբեն ու մոլորեցնեն, թեեւ նրանք չեն կարող Քրիստոսի եւ հրեշտակների կատարյալ

պատկերները վերցնել, քանի որ նրանց կերպարանափոխությունն անկատար է:

«Նրանք ունէին զրահներ, որոնք կարծես երկաթից էին. նրանց թեւերի ձայնը նման էր բազմաթիւ ձիերի եւ կառքերի ձայնին, որոնք արշաւում են դէպի պատերազմ» (հմր 9):

Այս զրահներն իրական չեն, իսկ «երկաթից էին» բացատրությունը նշանակում է, որ նրանց զորությունը մնայուն չէ: Նրանք կործանելու են սարսափազդու արշավանքներով, սակայն նրանց բերած չարիքը մեծ նեղության ժամանակի վերջին դրվագը չի լինելու:

«Նրանց պոչերը նման էին կարիճի պոչերի, որոնց ծայրին խայթոց կար եւ որոնց միջոցով նրանք իշխանութիւն ունէին հինգ ամիս պատուհասելու մարդկանց» (հմր 10):

Կարիճներն առհասարակ բնակվում են ամայի վայրերում, մասնավորաբար ավերակների մեջ, փլատակների տակ: Հիշենք Հիսուսի բացատրություններից մեկը «Երբ չար ոգին դուրս է ելնում մարդուց, գնում շրջում է անջրդի վայրերում՝ հանգիստ մի տեղ գտնելու համար» (Մտ 12:43): Հիսուսի խոսքը մեզ թելադրում է, որ այս համարի «կարիճի պոչեր» ունեցողները չար ոգիներն են:

«Նրանք իրենց վրայ որպէս թագաւոր ունէին անդունդի հրեշտակին, որի անունը եբրայերեն Աբադդոն էր, որը հայերէնով նշանակում է «կորուսիչ» » (հմր 11):

«Կորուսիչ» անունը մեզ հիշեցնում է այն հրեշտակին, որ ելքի գիշերը Եգիպտոսում հարվածեց բոլոր եգիպտացիների անդրանիկներին:

ՎԵՑԵՐՈՐԴ ՓՈՂԸ (9:13-21)

«Յետոյ վեցերորդ հրեշտակը հնչեցրեց փողը, եւ ես լսեցի մի ձայն, որ գալիս էր Աստուծոյ դիմաց գտնուող ոսկէ զոհասեղանի չորս անկիւններից» (հմր 13):

Բնագրում «անկիւններ» բառի փոխարեն «եղջյուրներ» բառն է: Տաճարի զոհասեղանի չորս կողմը եղջյուրի նման ցցվածքներ կային,

որոնք ծառայում էին փրկությանը: Որտեղի՞ց է գալիս եղջյուրի՝ փրկության խորհրդանիշ լինելը: Բառի այս նշանակությունը ծագում է նրա երկու գործածությունից՝

1. Քահանաները կամ քահանայապետերը զվարակի արյունից մատով քսում էին եղջյուրների վրա՝ ի նշան քավության (Ելք 29:12, 30:10, Ղտ 4:6-7, 18, 34, 8:15, Եզկ 43:20):

2. Այդ եղջյուրները փրկության էին ծառայում: Երբ մեկն ակամա սպանություն գործեր եւ վրեժխնդրության կամ հալածանքի ենթարկվեր, մեկ հնարավորություն ուներ. եթե կարողանար հասնել զոհասեղանին ու բռնել այդ եղջյուրներից, որեւէ մեկն իրավունք չէր ունենա սպանել նրան, մինչեւ դատավորները հաստատեին նրա անմեղ լինելը կամ չլինելը: Անմեղ լինելու դեպքում նա ազատվում էր, այլապես դատապարտվում էր մահվան (տես Գ Թգ 1:50-52):

Ուրեմն ակնարկյալ ձայնը փրկությա՞ն ձայն է:

«Ձայնը փող ունեցող վեցերորդ հրեշտակին ասում էր. «Արձակի՛ր Եփրատ մեծ գետի վրայ կապուած չորս հրեշտակներին»: Եւ արձակուեցին չորս հրեշտակները, որոնք ճիշտ այդ ժամի, օրուայ, ամսուայ եւ տարուայ համար պատրաստ կանգնած էին, որպէսզի սպանեն մարդկութեան մէկ երրորդ մասը» (հմր 14-15):

Ինչպես նկատելի է, այս ձայնը փրկության հրավեր չէ. դա սպանելու կամ պատժի ձայն է: Բայց ինչո՞ւ:

Ողորմության աղբյուրն Աստվածն է. Նա ինչպե՞ս կարող է ոչ թե ողորմության ձայն հնչեցնել, այլ՝ սպանության կամ պատժի: Սակայն Աստծո ողորմածությունը սահման ունի. Աստծո պատվիրաններին համառորեն հակառակվելն ինքնադատապարտում է: Աստված Իր ողորմածությունն այդպիսիներին ժամանակավորապես դադարեցնում է եւ նրանց համար պատիժ է սահմանում:

Որո՞նք են Եփրատ գետի վրա կապված չորս հրեշտակները:

Նախ ասեմ, որ Եփրատ գետը ժամանակին մերթ ընդ մերթ եղել է Արեւելքի եւ Արեւմուտքի կայսրությունների բաժանարար սահմանագիծը: Մարգարեական գրականության մեջ Եփրատն արշավող բանակների եւ զանգվածային կոտորածների խորհրդանիշ է: Այս-

տեղ Եփրատը նշանակն է դիվական զորքերի արշավանքների, որոնք սպանելու են «մարդկութեան մեկ երրորդ մասը»:

«Եւ իմացայ, որ նրանց հեծեալ զօրքերի թիւը հարիւր հազարներով ու միլիոններով էր» (հմր 16): Հունարեն բնագրում ասվում է «երկու հարյուր միլիոն»:

Ինչպես նախորդ թվերի դեպքում ասացի, այս թիվը նույնպես չպետք է բառացի հասկանալ:

Ձիերն ու հեծյալները զրահավորված են: Նրանք «հագել էին կրակի, յակինթի եւ ծծմբի գոյնի զրահներ» (հմր 17):

Սրանք նմանվում են մորեխների բանակին: Ձիերի այս նկարագրության մեջ եւս դիվական ինչ-որ բան կա:

«Ձիերի գլուխները նման էին առիւծի գլխի, եւ նրանց բերանից կրակ, ծուխ եւ ծծումբ էր ելնում» (հմր 17):

Այստեղ առյուծի պատկերը մեզ հիշեցնում է Սատանային, որ «առիւծի նման մռնչալով շրջում ու փնտրում է մէկին, որ կուլ տայ» (Ա Պտ 5:8): Նրանց բերանից դուրս եկող թե՛ կրակի ծուխը եւ թե՛ մյուսները մահվան ու տանջանքի, այսինքն՝ թե՛ մարմնական եւ թե՛ հոգեւոր մահվան ու տանջանքի խորհրդանիշեր են:

«Նրանց պոչերը նման էին օձերի, եւ ունէին գլուխներ, որոնցով պատուհասում էին» (հմր 19):

Օձն ինքը նմանեցվում է Սատանայի, որ Հայտնության գրքում կոչվել է «մեծ վիշապ», կոչվում է նաեւ «առաջին օձ»: Ուրեմն, այս ձիերի օձ պոչերով խայթոցները մատնանշում են սրանց պատճառելիք մոլորությունը մարդկանց կյանքում, ինչպես նաեւ մարդկանց մարմնական եւ հոգեւոր մահվան պատճառ դառնալը:

«Մարդկութեան մնացած մասը, որ չսպանուեց այս հարուածներից, չապաշխարեց եւ յետ չկանգնեց իր կատարած գործերից» (հմր 20):

Աստծո այս հարվածները, որքան էլ աղետալի են, դարձյալ ունեն մի երես, որը Աստծո սիրո եւ գթության արտահայտությունն է: Աստվածաշիչում պատիժը միշտ կոչվում է խրատ: Խրատը մեր բարիքի համար է: Աստծո խրատը նույնպես մեր բարիքի համար է: Ճիշտ է,

ոմանք սպանվում են, բայց Աստված ցանկանում է, որ նրանց սպանությունը դառնա ազդարարություն, փրկության հրավեր:

Դժբախտությունն այն է, որ մարդը մեկ ուրիշի փորձառությունից չի օգտվում. մինչեւ սեփական մաշկի վրա չզգա ցավը, դաս չի քաղի: Հակառակ նրան, որ մարդիկ տեսնում են այն բոլոր երեւույթները, որոնք գալիս են որպես աստվածային պատիժ կամ հարված, դարձյալ չեն ապաշխարում: Նրանք կա՛մ այդ երեւույթների մեջ չեն հաջողում տեսնել Աստծո ձեռքը, կա՛մ, ինչպես հաճախ կարծում ենք, յուրաքանչյուր դժբախտություն ուրիշի գլխին կարող է գալ, սակայն ոչ մեր: Իսկ երբ փորձանքը գա, անտանելի ցավի փոխարեն կորոնենք մահը, իսկ մահը չի գա:

«Նրանք չդադարեցին դեւերին, ոսկէ, արծաթէ, անագապղնձէ, քարէ եւ փայտէ կուռքերին երկրպագելուց, որոնք ո՛չ տեսնել կարող են, ո՛չ լսել եւ ո՛չ էլ քայլել» (հմր 20):

Մենք հաճախ կարծում ենք, թե կռապաշտություն կար միայն հեթանոսական ժամանակներում: Կռապաշտ լինել չի նշանակում հետեւել միայն հեթանոսական այս կամ այն կրոնին: Ի՞նչ է կռապաշտությունը: Իրականում անգամ հեթանոսական ժամանակներում մարդիկ պաշտամունքի առարկաների հետեւում ուրիշ բաներ էին տեսնում. նրանք այս կամ այն առարկան չէին պաշտում:

Աստվածաշունչը մեզ ասում է, որ այդ առարկաների հետեւում նկատվածները դիվական են: Աստվածաշունչը մեզ ավանդում է, որ կռապաշտությունը, ըստ էության, դիվապաշտություն է: Կռապաշտությունն սկզբնավորվել է դեւերի դրդմամբ: Դեւերը մարդկանց մտքերին ու հոգիներին կռապաշտություն են թելադրում, որպեսզի նրանք հեռանան Աստծուց: Դեւերը հազար ու մեկ ձեւերով մեզ առաջնորդում են ենթարկվելու Չարին:

Այսօր աշխարհն ստեղծել է նոր չափանիշեր, նոր աստղեր կամ նոր աստվածներ, որոնք արժանանում են ընդհանուրի պաշտամունքին: Սա իսկական կռապաշտություն է, որ գերեվարում է մարդկանց մտքերը եւ հոգիները հեռացնում Աստծուց, ինչպես նաեւ երկնային

կամ հավերժական արժեքներից ու ենթարկում վաղանցուկ կամ կորնչելի արժեքների:

«Նրանք չապաշխարեցին իրենց կատարած մարդասպանութեան, կախարդութեան, պոռնկութեան եւ գողութեան համար» (հմր 21):

Այս բոլոր մեղքերը կռապաշտության հետեւանք են: Դիվական գործունեությունը մարդկանց ի սկզբանե տանում է մարդասպանության, կախարդության, պոռնկության եւ գողության՝ Աստծուց նրանց բաժանելու համար: Չարութեան սերունդներն այս մոլորություններն առավել եւ առավել են տարածում, մինչեւ գա աշխարհի վախճանը:

Ժ ԳԼՈՒԽ

6-րդ եւ 7-րդ փողերի միջեւ միջանկյալ ունենք. այստեղ մի տեսիլք է բացվում: Երեւում է զորավոր մի հրեշտակ, որ ավետում է, թե երբ յոթերորդ հրեշտակը փողը հնչեցնի, այն ժամանակ, ըստ մարգարեների կանխասացությունների, կկատարվի Աստծո ծրագիրը:

Հաջորդ գլուխը շարունակելու է այդ միջանկյալ հատվածը. տեսնելու ենք վկաների, ովքեր Հայր Աստծո կամ Քրիստոսի վկաներն են եւ կատարում են իրենց պարտականությունը: Ամբողջ միջանկյալը նպատակ ունի եւ ցանկանում է մեզ մի բան ասել. երբ հնչեց 5-րդ փողը, եւ դրանից առաջ կես ժամ լռություն տիրեց, ասացինք, որ կես-ժամյա լռությունից սկսած՝ սկիզբ է առնում մեծ նեղության ժամանակը:

11-րդ գլուխը մեզ հայտնում է, որ այդ մեծ նեղության ժամանակը պիտի տեւի մի քանի տարի: Այդ գլխում երկու անգամ հանդիպում ենք «երեքուկես օր» բացատրությանը: Եթե գումարենք այդ թվերը, ապա կունենանք յոթ «օր»: Դանիելի մարգարեության մեջ գրված է. «Մէկուկէս եօթնեակում պիտի դադարեցնի սեղաններն ու զոհաբերութիւնները. ապականութիւնը պիտի հասցնի մինչեւ վերջին ծայրը, մինչեւ որ վախճան եւ տագնապ բերի այդ ապականութեանը եւ զօրացնի շատերի ուխտը: Մէկուկէս եօթնեակում պիտի վերանան զոհերն ու ընծաները, աւերածութեան պղծութիւնը պիտի մնայ տաճարի վրայ, ու մինչեւ ժամանակի վախճանը վերջ տրուի աւերածին» (Դն 9-27):

Եթե այս համարն ընթերցվի առանց նախորդների, ապա կթվա, թե ուխտը հաստատող եւ յոթնյակի մեջտեղում զոհն ու ընծաները վերացնող ենթական Օծյալն է, մինչդեռ ակնարկը կարող է վերաբերել ուրիշ անձի, իշխանավորի, ով պիտի հափշտակի ամբողջ թագավորությունը: Մեկնիչներն այս առնչությամբ բաժանվում են երկու

մասի: Եթե այս համարը վերաբերում է հափշտակիչին, ապա նա Նեռն է, ով մեծ նեղության ժամանակ Աստծո ժողովրդից շատերի հետ դաշինք պիտի հաստատի: Այլ խոսքով՝ Նեռը մոլորեցնելու է նրանց եւ հեռացնելու է Աստծուց, նա հաջողելու է վերացնել զոհն ու ընծաները, այսինքն՝ պիտի վերացնի Աստծո ճշմարիտ պաշտամունքը եւ նրա փոխարեն պիտի հաստատի իր ավերող պղծությունը, մինչեւ որ նրա վրա իջնի նախասահմանված կորուստը: Եթե որդեգրենք այս մեկնությունը, ապա մեծ նեղության ժամանակը կընկալվի որպես յոթ տարիներ:

ՀՐԵՇՏԱԿԸ ԵՎ ԳՐՔՈՒՅԿԸ (10:1-11)

«Ապա տեսայ մի ուրիշ զօրաւոր հրեշտակի, որ իջնում էր երկնքից՝ ամպի մէջ փաթաթուած եւ գլխին ծիրանի գօտի: Նրա երեսը նման էր արեգակի, իսկ ոտքերը՝ հրեղէն սիւների» (հմր 1):

«Զօրաւոր հրեշտակը»

1. Փաթաթված է ամպի մեջ:

Ես չեմ հիշում, որ Աստվածաշնչի այլ էջերում տեղ գտած լինի նման մի պատկեր, ուր հրեշտակը փաթաթված լինի ամպի մեջ: Սա յուրահատուկ պատկեր է:

Հին եւ Նոր Կտակարաններում Աստված հայտնվում է ամպերով կամ ամպերի մեջ կամ դրանց հետեւում: Աստծո երեւումների մեջ ամպը միաժամանակ երկու բան է խորհրդանշում՝

ա) Աստծո անհասանելի լինելը,

բ) Աստծո կամքն Ինքն Իրեն մոտեցնելու եւ մարդուն հայտնելու: Ուրեմն, այս հրեշտակն անհասանելի գոյություն է: Նա է, որ հայտնում է ինքն իրեն:

Ամպի մեջ փաթաթված «զօրաւոր հրեշտակը» հիշեցնում է Հիսուսի այլակերպության դեպքը, երբ Նա Մովսեսի եւ Եղիայի հետ «լուսաւոր ամպ»ով ծածկվեց (Մտ 17:5, Մկ 9:7, Ղկ 9:34):

2. Գլխին՝ ծիրանի գոտի:

4-րդ գլխի 3-րդ համարում տեսանք ծիրանի գոտի, որ գտնվում

էր Աստծո գահի շուրջ եւ ասացինք, որ ծիրանի գոտին նախ՝ Աստծո հավիտենական Ուխտի նշանն է, ապա նշանակում է մարդ արարածի հետ Աստծո հաշտությունն ու խաղաղությունը:

Ուրեմն, այս հրեշտակն Աստծո հավիտենական Ուխտի եւ Աստծո ու մարդու միջեւ հաշտության, խաղաղության «հրեշտակ» է:

3. Երեսը նման է արեգակի:

Հայտնության գրքի 1-ին գլխում եւս տեսանք նույն պատկերը, երբ ընթերցում էինք նույն գլխի 16-րդ համարը (տե՛ս բացատրությունը):

4. Իսկ ոտքերը հրեղեն սյուների նման են:

Սա նույնպես հիշեցնում է ելքի պատմության ամպի եւ կրակի սյուները: Ելից գրքում գրված է. «Տէրը նրանց առջեւից էր գնում. ցերեկն ամպի սիւնով ճանապարհ ցոյց տալու, իսկ գիշերը կրակի սիւնով՝ նրանց լոյս տալու համար, որպէսզի գիշեր ու ցերեկ գնային» (Ելք 14:21): «Զօրաւոր հրեշտակ»ի ոտքերը հրե լինելը նշանակում է, որ փոխաբերական իմաստով, Աստծո նոր ժողովուրդը մթության մեջ հաջողում է քայլել՝ շնորհիվ հրեշտակի առաջնորդության:

Ըստ Հին Կտակարանի քրիստոնեական մեկնության՝ այնտեղ ժամանակ առ ժամանակ հայտնված Աստծո կամ Տիրոջ հրեշտակը Հիսուս Քրիստոս Ինքն է. այսպես՝ Աբրահամին հանդիպած «երեք մարդկանցից» կամ հրեշտակներից մեկը, Հակոբ նահապետի հետ մարտնչող հրեշտակը, Եգիպտոսից ելքի, ավելի ճիշտ՝ Կարմիր ծովից անցնելու պատմության հրեշտակը, Մովսեսի կողքին կանգնած հրեշտակը, երբ մարգարեն ժայռից ջուր բխեցրեց եւ այլն:

«Նա իր ձեռքում ունէր բացուած մի գրքոյկ» (հմր 2):

Շատ մեկնիչներ փորձում են միմյանցից տարբեր բացատրություններ տալ, սակայն ենթադրում եմ, ամենաճիշտն այս համարը 5-րդ գլխի 1-ին համարի հետ կապելն է, ուր յոթ կնիքներով փակված մագաղաթի մասին կարդացինք: Այնտեղ տեսանք, որ միայն Քրիստոս կարող է բացել այդ կնիքները, եւ որ հենց Ինքն էլ բացում է: Ասացինք, որ նրա բովանդակությունը մարգարեություններն էին, որոնք վերաբերում էին Աստծո ծրագրին, մասնավորաբար Տիրոջ օրվան կամ ահեղ դատաստանի օրվան:

«… Նա իր աջ ոտքը դրեց ծովի վրայ, իսկ ձախը՝ ցամաքի» (հմր 2):

Ճիշտ է, որ Աստծո բնակության վայրը Երկինքն է, սակայն Նա երբեք հեռու կամ բաժանված չի եղել Երկրից: Հիշենք Եսայի մարգարեի գրքի 66-րդ գլխի 1-ին համարը, ուր Աստված Ինքն է խոսում եւ ասում. «Երկինքն Իմ աթոռն է եւ Երկիրը՝ Իմ ոտքերի պատվանդանը»: Այստեղ մեզ ճիշտ նույն պատկերն է ներկայացվում:

Թեեւ Աստված բնակվում է Երկնքում, սակայն Նա հոգ է տանում խոնարհի, սրտաբեկի եւ Իր խոսքից երկնչողի համար. «Ես ո՞ւմ եմ նայելու, եթէ ոչ՝ հեզերին ու խոնարհներին եւ նրանց, ովքեր դողում են Իմ խօսքից» (Ես 66:2):

«… Եւ բարձրաձայն աղաղակեց, ինչպէս մռնչում է առիւծը» (հմր 3):

Առյուծը Քրիստոսի խորհրդանիշն է:

«Երբ աղաղակեց, եօթ որոտները թնդացին իրենց ձայներով» (հմր 3):

Արդեն մի քանի անգամ ասացինք, որ որոտներն ընկերակցում են Աստծո երեւումներին: Դրանք մատնացույց են անում Աստծո մեծափառությունը, միաժամանակ նաեւ՝ Նրա դատաստանը:

«… Եւ երբ եօթ որոտները ձայնեցին, ուզում էի գրի առնել: Բայց, երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Մի՛ արձանագրիր, ինչ որ ասացին եօթ որոտները. գրի մի՛ առ» » (հմր 4):

Առաջին հարցում՝ ինչո՞ւ է Հովհաննես առաքյալին արգելվում գրի առնել իր լսածը: Բնագրում «Մի՛ արձանագրիր» խոսքը տարբեր արտահայտչաձեւեր ունի: Այստեղ ասվում է՝ «կնքի՛ր»: Ինչպես ասացինք, «կնքել» նշանակում է «գոցել» կամ «փակել»: Բացատրեցինք, որ կնքելը գրքի պարագայում նշանակում է փակել այնպես, որ ոչ ոք չկարողանա բացել ու կարդալ: Բայց քանի որ որոտների արտահայտությունը գրավոր խոսք չէ, որպեսզի հնարավոր լինի կնքել, ինչպես գիրքը կամ գրությունն է կնքվում, ուստի այստեղ հիշված «կնքել»ը նշանակում է որոտների հայտնածն ուրիշներին չհայտնել:

«Յետոյ հրեշտակը, որ մէկ ոտքը դրել էր ծովի վրայ, իսկ միւսը՝ ցամաքի, իր աջ ձեռքը երկինք բարձրացրեց եւ երդուեց յաւիտեանս

յաւիտենից կենդանի Աստուծոյ անունով, Նրա, Ով ստեղծեց երկինքն ու Երկիրը եւ ծովը եւ ինչ որ կայ նրանց մէջ» (հմր 5-6):

Աջ ձեռքը դեպի Երկինք բարձրացնելը երդվելու նշան էր: Բնագիրն արդեն ասում է, թե երդվեց: Եվ երդվում է «յաւիտեանս յաւիտենից կենդանի Աստուծոյ» անունով:

Հին Կտակարանում եւ հատկապես Նոր Կտակարանում «յաւիտեանս յաւիտենից կենդանի»ն Աստծուն տրված որակումներից է: Ինչո՞ւ է վերստին հիշեցնում Աստծո հավիտենական կամ մնայուն կենդանի լինելը: Եթե Աստված ժամանակավոր, անցողիկ չէ, այլ՝ մնայուն, հավիտենական, անվախճան, միշտ ապրող, ուրեմն՝ նշանակում է նաեւ, որ ճիշտ այդպես մնայուն եւ հավիտենական են Նրա Ուխտն ու տված խոստումները:

Հետաքրքրական է, որ այս խոսքը մենք բառացիորեն գտնում ենք Բ Օրինաց Գրքի 32-րդ գլխի 39-40-րդ համարներում, ուր Տերն Ինքն ասում է. «Տեսէ՛ք, տեսէ՛ք, որ ԵՍ ԵՄ միայն Ինձանից բացի ուրիշը չկայ: Ես եմ սպանում, եւ Ես եմ փրկում, Ես եմ հիւանդացնում, եւ Ես եմ բժշկում: Չկայ մէկը, որ կարողանայ փրկուել Իմ ձեռքից: Ձեռքս երկինք բարձրացնելով՝ երդւում եմ Իմ աջով ու ասում. «Ես յաւիտենական կենդանի եմ» »: Ինչպես անցյալում, այնպես եւ Հովհաննես առաքյալի ժամանակ այս խոսքը հալածանք ապրող Եկեղեցու մեծագույն ապահովությունն է, որ տրվում է քաջալերելու համար:

«… Ու ասաց. «Այլեւս ուշացում չի լինի» » (հմր 6): Բառացիորեն՝ «Ուրիշ ժամանակ չի լինի»:

Թվում է, թե այս խոսքին Աստծո տված պատասխանը մեկն է, որին մենք հանդիպեցինք 6-րդ գլխում: Այնտեղ՝ զոհասեղանի տակ, հավաքված հոգիները բարձրաձայն ասում էին. «Մինչեւ ե՞րբ պիտի սպասես, Սուրբ եւ Ճշմարի՛տ Տէր, ե՞րբ պիտի դատես Երկրի բնակիչներին եւ մեր արեան վրէժը լուծես նրանցից» (Հտ 6:10):

Այստեղ պատասխանը մեզ հուշում է, որ ժամանակն արդեն սպառվել է, եւ հասել է Տիրոջ վրեժխնդրության կամ հատուցման ժամանակը: Հետեւաբար, նրանք կարող են հանգիստ լինել, որովհե-

տեւ նոր աշխարհակարգ, այսինքն՝ Աստծո թագավորությունն է հաստատվելու Երկրի վրա:

«Երբ եօթերորդ հրեշտակը հնչեցնի իր փողը, այն ժամանակ կկատարուի Աստուծոյ ծրագիրը, ինչպէս աւետեցին Նրա ծառաները՝ մարգարէները» (հմր 7):

Հովհաննես առաքյալին ժամանակավորապես արգելվեց հայտնել այն, ինչ իրեն հայտնեցին յոթ որոտները: Եթե որդեգրենք Եզեկիել մարգարեի բացատրություններից մեկը, ապա կտեսնենք, որ այդ որոտների բովանդակությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ ողբ, հառաչանք եւ վայում (Եզկ 2:10): Սակայն այս զորավոր հրեշտակը կամ Քրիստոսը վերստին գալիս է՝ մեզ հիշեցնելու, որ որոտների հայտնածը միայն աղետները չեն, այլ նաեւ՝ ավետիս: Անշուշտ, այդ ավետիսը Քրիստոսի հավատարիմների կամ Եկեղեցու համար է:

«Ապա այն ձայնը, որ լսել էի երկնքից, դարձեալ խօսեց ինձ եւ ասաց.

– Գնա՛, ա՛ռ այդ գրքոյկը, որ ծովի եւ ցամաքի վրայ կանգնած հրեշտակը բացուած ունի ձեռքին:

Ես գնացի հրեշտակի մօտ եւ խնդրեցի նրան, որ ինձ տայ գրքոյկը: Նա ինձ ասաց.

– Ա՛ռ սա եւ կեր. այն քո ստամոքսում դառը լեղի կդառնայ, բայց քո բերանում մեղրի նման քաղցր կլինի:

Հրեշտակի ձեռքից վերցրի բացուած գրքոյկը եւ կերայ: Այն իմ բերանում մեղրի պէս քաղցր էր, բայց երբ կուլ տուեցի, իմ ստամոքսում դարձաւ դառը լեղի» (հմր 8-10):

Սա շատ հետաքրքրական դրվագ է, որի նմանը գտնում ենք Եզեկիել մարգարեի գրքում: Եզեկիելի մարգարեության 1-ին գլուխը մեզ ներկայացնում է մի փոքրիկ տեսիլք, որից վերցվել էր չորս կենդանի էակների նկարագրականը:

Տեսիլքի վերջում մեզ ասվում է, որ հայտնվողը նույն Ինքը Տերն էր: 2-րդ գլխի սկզբում նույն Տերը մի տոմս կամ մագաղաթի մի կտոր է հրամցնում մարգարեին, որի վրա ներսից ու դրսից գրված էր, թե այն տալիս է, որպեսզի մարգարեն «ուտի»: Մարգարեն ասում է, որ

երբ ինքն այն կերավ, մեղրի պես քաղցր էր (Եզկ 2:8-3:3): Այս նմանությունը մատնացույց է անում խոսողի ինքնությունը:

Եզեկիելի տեսիլքում խոսողը Տերն է, որը ներկայանում է մարդու կերպարանքով: Նա մեջքից վերեւ ոսկեպղնձի նման էր, իսկ ոտքերը նմանվում էին կրակի: Նա շրջապատված էր պայծառությամբ, որ համեմատվում էր ամպի մեջ երեւացող ծիրանի գոտու պայծառության հետ (Եզկ 2:26-28): Հայտնության գրքի մեր հատվածը համընկնում է վերոհիշյալի հետ: Հետեւաբար մեկ անգամ եւս հարցնենք. «Ո՞վ է այստեղ երեւացողը: Պարզապես մի հրեշտա՞մ է, թե՞ Որդին՝ Հիսուս Քրիստոս Ինքը: Կասկածից վեր է, որ այստեղ երեւացողն Ինքը Որդին է՝ Հիսուս Քրիստոսը:

«Այն իմ բերանում մեղրի պէս քաղցր էր, բայց երբ կուլ տուեցի, իմ ստամոքսում դարձաւ դառը լեղի» (հմր 10): Եզեկիելի փորձառությունն ունենում է նաեւ ինքը՝ Հովհաննես առաքյալը: Նույնպիսի փորձառություն է ունեցել նաեւ Երեմիա մարգարեն:

Հարց է առաջանում, թե ինչո՞ւ բերանում քաղցր բանը ստամոքսում դառնում է դառը լեղի:

Ասացինք, որ «վախճան» կամ «կատարած» հասկացությունը երկու նշանակություն ունի՝ դատապարտություն եւ հատուցում: Առաջինը ժխտական է, իսկ երկրորդը՝ դրական: Աստծո ծրագրի իրականացման պահն է. անարդարները դատապարտվելու են, իսկ արդարներն արժանանալու են Աստծո հատուցմանը:

«Ապա հրեշտակն ինձ ասաց.

– Այս մարգարէութիւնը եւս պէտք է յայտնես բազում ժողովուրդների, ազգերի, լեզուների եւ թագաւորների» (հմր 11):

Որպես մարգարեական պատգամ՝ սա պետք է հասնի ամբողջ աշխարհին, որպեսզի լսողները, եթե հավատքի «աչք ու ականջ» ունեն, տեսնեն ու լսեն եւ դարձի գալով՝ փրկվեն:

ԺԱ ԳԼՈՒԽ

Այս գլուխը բաղկացած է երկու մասից: Առաջին մասն ընդգրկում է 1-14-րդ համարները: Այստեղ Հովհաննես առաքյալը հրավիրվում է չափելու տաճարն ու զոհասեղանը: Ինչպես շուտով տեսնելու ենք, չափելը մարդկանց ճակատին կնիք դնելուն համարժեք բացատրություններից է: Մարդկանց փրկելու համար նրանց ճակատին դրոշմ է դրվում: «Տաճար» կամ «զոհասեղան» բառերն այստեղ անմիջականորեն ակնարկում են Եկեղեցին:

Ասացինք, որ տվյալ նեղության ժամանակը բաղկացած է երկու հատ երեքուկես տարիներից: Առաջին երեքուկես տարիները հիշատակվել են երկու տարբեր ձեւերով. մեկ անգամ՝ որպես «քառասուներկու ամիս» եւ մի անգամ էլ՝ որպես «հազար երկու հարյուր վաթսուն օր»: Այդ տարիներին պիտի հայտնվեն «երկու վկաներ»ը:

ԵՐԿՈՒ ՎԿԱՆԵՐԸ (11:1-14)

«Յետոյ ինձ տրուեց մի եղէգ, որ նման էր չափելու գաւազանի» (հմր 1):

Անցյալում եղեգը երբեմն գործածվում էր չափելու համար: Չափելու երկու ձեւ կար. կամ լար էին գործածում, կամ եղեգ:

Այստեղ եղեգը տվողը Տիրոջ հրեշտակն է. «Հրեշտակն ինձ ասաց.

– Վե՛ր կաց եւ չափի՛ր Աստուծոյ տաճարն ու զոհասեղանը եւ հաշուի՛ր այնտեղ գտնուող երկրպագուներին» (հմր 1):

Հին Կտակարանում ունենք երկու տեսիլք (Եզկ 40:41, Զք 2), որոնցում Աստված պատվիրում է, որ տեսանողը կամ մարգարեն չափի տաճարը կամ Երուսաղեմ քաղաքը: Այս չափումը, անշուշտ, ճարտարապետական նշանակություն չունի, այլ արտացոլում է խորհրդանշական իմաստ: Ո՞րն է այդ իմաստը:

Աստվածաշնչում չափելը եւ հաշվելը մոտավորապես նույն իմաստով են գործածվում: Դրանով ասվում է, թե Աստծո չափածը կամ հաշվածը ենթակա է Նրա պաշտպանությանը: Անկասկած, Աստված ի սկզբանե գիտի նրանց չափը կամ հաշիվը, սակայն երբ մարդկանց միջոցով հանձնարարում է չափել կամ հաշվել, պարզապես ցանկանում է զգալ տալ, որ Ինքը գիտի չափվելիքի կամ հաշվվելիքի չափն ու թիվը, որոնք պահպանելու է ամբողջությամբ:

Հակառակ սրան, մարդկանց սեփական որոշմամբ, երբեմն էլ Չարի թելադրանքով՝ հաշվելու ելնելը հասկացվել է որպես Աստծո հանդեպ անվստահություն: Որպես դրա հետեւանք՝ նկատելի է եղել Աստծո արարքը, որ է Իր պաշտպանությունից զրկել հանդգնողներին: Արդ, տաճարի կամ զոհասեղանի չափումը ուրիշ բան չի նշանակում, եթե ոչ ասել, թե Աստծո տաճարը վայելում է Նրա մնայուն հովանավորությունը:

«… Չափի՛ր Աստուծոյ տաճարն ու զոհասեղանը»: Երբ Հովհաննես առաքյալն ունեցավ այս տեսիլքը, տաճարն արդեն գոյություն չուներ. Ք. ա. տաճարը երկու անգամ ավերվեց եւ նորոգվեց: Վերջին անգամ վերանորոգեց Մեծն Հերովդեսը: Ինչպես Քրիստոս մարգարեացել էր, 66-70 թվականներին հրեաները մեծ պատերազմ մղեցին Հռոմի դեմ, որի ավարտին՝ 70 թվականին, Տիտոսը մտավ Երուսաղեմ եւ այրեց ու կործանեց տաճարը: Հետեւաբար, առաքյալի տեսիլքի ժամանակ ո՛չ տաճար կար եւ ո՛չ էլ՝ զոհասեղան: Ուստի «տաճար»ով եւ «զոհասեղան»ով ի՞նչ է ասվում: Հստակ է, որ իմաստը նյութական չէ, այլ՝ զուտ խորհրդանշական: «Տաճար»ով եւ «զոհասեղան»ով խորհրդանշվում է Աստծուն մատուցված պաշտամունքը կամ Աստծո՝ Իր ժողովրդին պաշտպանելը:

«Իսկ այն գաւիթը, որ տաճարից դուրս է գտնւում՝ թո՛ղ. մի՛ չափիր, որովհետեւ այն տրուել է հեթանոսներին, որոնք քառասուներկու ամիս ոտնակոխ են անելու Սուրբ քաղաքը» (հմր 2):

Անցյալում «գավիթ» էր կոչվում տաճարի շրջափակը. այն ժամանակ շրջափակը կազմված էր երեք միացած բակերից, կային նաեւ այդ բակերի եզրերին գտնվող սյունասրահներ:

Հրեաները թույլատրել էին, որ այդ շրջանակի մեջ մտնեն բոլոր ազգերի մարդիկ: Այնտեղ արտոնել էին առեւտուրը, սակայն բուն տաճարի սահմանից ներս մտնելն արգելված էր: Հանդգնողը մահվամբ էր պատժվում: Ուրեմն սկզբում գավիթը հեթանոսների համար սահմանված բակն էր: Երբ հռոմեական բանակները գրավեցին Երուսաղեմը, եւ կործանվեց տաճարը, հրեաները նույնպես դուրս մնացին բուն տաճարից, նրանց արգելվեց անգամ մտնել Երուսաղեմ:

Ըստ այս համարի՝ հեթանոս ազգերին տրված բաժինը չպետք է չափվի, որովհետեւ Աստված այն չի պաշտպանելու:

«Ես կպատուիրեմ Իմ երկու վկաներին, որ քուրձ հագած՝ մարգարէանան այդ հազար երկու հարիւր եւ վաթսուն օրերի ընթացքում» (հմր 3):

Այս «օրեր»ը հավասար են երեքուկես տարիների:

Իսկ ովքե՞ր են այս երկու վկաները:

Նոր Կտակարանից առաջ եւ Հին Կտակարանի գրքից հետո հրեաներն ունեն գրականություն, որ Աստվածաշնչի մաս չի կազմում եւ կոչվում է «Հայտնութենական գրականություն», որը իր պատգամով մեզ չի հետաքրքրում, սակայն գործածական է որոշ լուսաբանությունների համար:

Հայտնութենական գրականության մեջ կա մի տվյալ, որը Աստծո վերջնական գալուստից առաջ հայտնվող երկու վկաներին է վերաբերում: Այդ երկու վկաները Ենովքն ու Եղիան են: Ենովքն այն անձնավորությունն էր, ով «Աստծո հետ քայլեց երեք հարիւր վաթսունհինգ տարի» եւ վերջում «անյայտացաւ, որովհետեւ Աստուած նրան տարաւ Իր մօտ» (Ծն 5:23, 24), իսկ Եղիան Հին Կտակարանի երկրորդ անձնավորությունն է, ով մահ չտեսավ. առանց մարմնական մահ տեսնելու՝ հրեղեն կառքով Երկինք տարվեց (Դ Թգ 2:11):

Արդ, մարմնական մահ չճանաչած այս երկուսը Երկիր պիտի վերադառնան Տիրոջ գալուստից առաջ եւ տան իրենց պատգամները: Արդյոք նրա՞նց մասին է ակնարկվում այս համարում: Չգիտենք: Քրիստոնյա մեկնիչներն ու հատկապես նրանք, ովքեր բնագրին մոտ են, այսինքն՝ ուզում են բնագրի տվյալներից հասկանալ երկու վկաների ինքնությունը, ավելի շատ հակված են «երկու վկաներ» ակնարկության մեջ ճանաչելու մեկը Եղիային, իսկ մյուսը՝ Մովսես մարգարեին: Մեր համարի շրջագծում կան արձանագրված մի շարք տարրեր, որոնք գտնում ենք Մովսեսի ու Եղիայի երկրավոր կյանքում: Եվ եթե մեզ արտոնվել է նշված անձանց անունները որոշել նմանությունների հիման վրա, ապա այդ կերպ կարող ենք գտնել նաեւ անձանց ինքնությունը:

Ամեն դեպքում կան նաեւ երրորդ մեկնության կողմնակիցներ եւս: Ըստ նրանց՝ պարտադիր չէ, որ մենք «երկու վկաներ» արտահայտությունը վերագրենք Մովսեսին ու Եղիային: Նրանք ասում են, որ «երկու վկաներ» ակնարկությունը խորհելու տեղիք է տալիս, նաեւ հավելում են, որ դրանք երկու, բոլորովին նոր անձնավորություններ են, ովքեր պիտի գան Մովսեսի ու Եղիայի նմանությամբ, ճիշտ այնպես, ինչպես Հովհաննես Մկրտիչը, որ եկավ Եղիայի հոգով ու զորությամբ: Եղիան չէ, որ եկավ, այլ մեկ ուրիշը, ով ամեն ինչով հիշեցնում էր Եղիային:

Հարց է առաջանում՝ այդ երկու անձանց ով լինելն է կարեւոր, թե՞ նրանց դերը:

Նրանք մեզ ներկայանում են քուրձ հագած: Քուրձն այծի կամ ուղտի մազից հյուսված զգեստն է, որ տիպականորեն տեսնում ենք մարգարեների հագին (տես, օրինակ, Զք 13:4 կամ Մտ 3:4, Մկ 1:6): Քուրձն ապաշխարության նշանակություն ուներ:

Վկաները ներկայանում են որպես մարգարեներ: Ո՞րն է նրանց պատգամը. ազդարարել Աստծո հարվածների մասին, բայց միաժամանակ ապաշխարության կոչել, ինչպես թելադրում է նրանց զգեստը: Նրանց պատգամն է նաեւ, որ Աստված Իր երկայնամտությամբ սպասում է Իրենից հեռացած զավակների դարձին:

Այս մարգարեների կարեւորագույն դերն է լինել Քրիստոսի վկաները:

«Սրանք երկու ձիթենիներն ու երկու ճրագներն են, որոնք կանգնում են Երկրի Տիրոջ առջեւ» (հմր 4):

Այս պատկերը Զաքարիայի մարգարեության 4-րդ գլխից է: Ձիթենին կապվել է ձեթի գաղափարին, իսկ ձեթն Աստծո Հոգու խորհր-

դանիշերից էր, ինչպես հայտնում է նաեւ մարգարեության ակնարկվող գլուխը (Զք 4:6), իսկ ճրագը կապվել է լույսի կամ տեսողության հետ եւ աստվածային ամենատեսության խորհրդանիշն է (տե՛ս դարձյալ Զք 4:10): Այս համարով մեզ թելադրվում է, որ վկաներին տալիք պատգամը Սուրբ Հոգու ներշնչմամբ է:

«Եթէ մէկն ուզենայ վնասել նրանց, կրակ կելնի նրանց բերանից եւ կոչնչացնի իրենց թշնամիներին: Այսպէս կսպանուեն բոլոր նրանք, ովքեր կուզենան վնաս հասցնել նրանց» (հմր 5):

Աստծո պատվերով՝ վկաները հատուկ ճիգ են գործադրում չարից մարդկանց փակված աչքերը բացելու, որպեսզի տեսնեն Աստծո՝ իրենց ընծայած ճշմարտությունը եւ մանավանդ որպեսզի իրենց անձերը չտան Չարին, այն Գազանին, որ շուտով պիտի գա՝ իր կնիքը դրոշմելու մարդկանց վրա, որպեսզի նրանց խլի Աստծուց եւ ենթարկի իր իշխանությանը:

Բայց արդյոք պիտի արդյունավորվի՞ նրանց ճիգը: Մեր բնագիրը բացարձակապես չի խոսում այդ մասին: Նրանց անձերին նույնպես պատշաճում է Եսայի մարգարեի այն խոսքը, որ Հովհաննես Մկրտիչն իրեն վերագրեց կամ, ինչպես Ավետարանն է վերագրում Հովհաննես Մկրտչին՝ ասելով՝ «Անապատում կանչողի ձայնը» (Ես 40:3): Ուրեմն, նրանք իրենց կոչն ուղղում են աշխարհին, որ կարծեք անապատացել է. հոգիները չորացել են, այնքան են կարծրացել, որ Աստծո ցողը կամ ճշմարտության ցողն իրենց վրա վերցնելու, դալարելու, կենդանանալու նշան չեն ցուցաբերում:

Այդ պատճառով երկու վկաներն ստիպված են հարմար պատասխան տալ նույն այդ կարծր կեցվածքին. «Կրակ կելնի նրանց բերանից եւ կոչնչացնի իրենց թշնամիներին»: Սա հիշեցնում է Եղիա մարգարեի աղոթքը, որպեսզի Ոքոզիայի՝ իր վրա երեք անգամ ուղարկած հիսնապետերից ու նրանց հետեւող զինվորների խմբերից առաջին երկուսի գլխին կրակ տեղա (Դ Թգ 1:9-14):

«Երկու վկաներն իշխանութիւն ունեն՝ փակելու երկինքը, որպէսզի իրենց մարգարէութեան ժամանակամիջոցում անձրեւ չտեղայ» (հմր 6): Այս նշանին մենք հանդիպում ենք նաեւ Եղիայի գործունեության

ընթացքում, երբ մարգարեն փակեց երկինքը, «որէսզի անձրեւ չտեղայ» (Գ Թգ 17:1):

«Նրանք իշխանութիւն ունեն նաեւ ջրերի վրայ՝ դրանք արիւն դարձնելու, ինչպէս նաեւ աղէտներով պատուհասելու Երկիրը, քանի անգամ որ ուզենան» (հմր 6):

Այս երկու իշխանությունները հիշեցնում են Մովսես մարգարեին, ով Եգիպտոսի գլխին իջած տասը հարվածների միջնորդը եղավ: Առաջին հարվածը ջրերն արյան վերածելն էր (Ելք 7:19-25):

Այս եւ նախորդ տվյալներից ելնելով՝ մի շարք մեկնիչներ «երկու վկաներ» ասելով, հասկանում են Եղիա եւ Մովսես մարգարեներին կամ նոր եկող անձանց, որ նման են նրանց:

«Եւ երբ նրանց վկայութեան ժամանակաշրջանն աւարտուի, այն ժամանակ անդունդից ելնող գազանը կպատերազմի նրանց դէմ, կյաղթի ու կսպանի նրանց» (հմր 7):

Ասացինք, որ վկայության ժամանակը «երեք ու կես օր» կամ երեք ու կես տարի է: Նրանց դեմ պատերազմողն «անդունդից ելնող գազան»ն էր: Ո՞վ է անդունդից դուրս եկող այս գազանը: Մենք պետք է մի ամբողջական նկարագրություն գտնենք 13-րդ գլխում, որի կեսն այս գազանի մասին է, իսկ երկրորդ կեսը՝ մեկ այլ գազանի:

Անդունդից ելնող գազանը չար ոգի է, որ վերջին ժամանակներում հանդես է գալու որպես Սատանայի գործակատարներից մեկը եւ Եկեղեցու կատաղի հակառակորդը: Ուրեմն «գազան» անվանումը բառացիորեն չպետք է հասկանալ. պարզապես մատնացույց է անում այդ չար ոգու նկարագրին: Այստեղ նա պատերազմ է մղում երկու վկաների դեմ:

Իսկ ինչպիսի՞ն է Տիրոջ վկաների հանդեպ նրա տարած հաղթանակը: Դա իրական հաղթանակ չէ, որովհետեւ Գազանը դրանով չի կարողանա իր նպատակին հասնել: Վկաների դեմ նրա մղած պատերազմը չի ծառայելու նրա նպատակին հասնելուն, քանի որ վկաները միմիայն իրենց կյանքերն են կորցնելու, հետեւաբար, Գազանի հաղթանակը պատրանք է լինելու:

«Եւ նրանց մարմինները փռուած կմնան այն մեծ քաղաքի հրա-

պարակում, որտեղ խաչուեց նրանց Տէրը, եւ որը խորհրդանշական անունով կոչւում է Սոդոմ եւ Եգիպտոս» (հմր 8):

Այստեղ մեծ քաղաքի ակնարկություն կա: Ամենաճիշտն այն կլինի, որ մենք բնագրի մեզ ընծայածը՝ «որտեղ խաչուեց նրանց Տէրը» նախադասությունը, բառացիորեն հասկանանք: Թվում է, թե ասվածն ակնարկում է Երուսաղեմ քաղաքը:

Ոմանք (նրանք փոքրաթիվ չեն), տրամադրված են ասելու, թե նշվածը կարող է Հռոմեական կայսրության մեջ որեւէ մեծ քաղաք, նույնիսկ կայսրության մայրաքաղաքը՝ Հռոմը լինել, որովհետեւ յուրաքանչյուր քաղաքում քրիստոնյաներն արդեն ունեին իրենց կենտրոնը, եւ նրանց դեմ կատաղի պայքար էր մղվում, հետեւաբար, ամենուր հավատացյալների խաչը Քրիստոսի վերստին խաչվելն էր: Ուստի, ըստ այս տեսակետի, Քրիստոսի խաչելության վայրը կարող է համարվել որեւէ մի տեղ:

Սակայն բնագրին ամենամոտն է Երուսաղեմ քաղաքը հասկանալը, որը խորհրդանշաբար անվանվում է Սոդոմ ու Եգիպտոս: Ինչպես գիտեք, Սոդոմը (այժմ ծածկված է Մեռյալ ծովի տակ) այն քաղաքի անունն էր, ուր իշխում էր անբարոյականությունը, ուստի հենց այդ պատճառով էլ ենթարկվեց Աստծո պատժին: Հին եւ Նոր Կտակարաններում այդ անունը գործածվում է բազում անգամ՝ որպես ծայրահեղ անբարոյականության հոմանիշ: Իսկ Եգիպտոս անունը Ելից գրքում մեզ ներկայացվել է որպես ստրկության վայր: Եգիպտոսը հոգեւոր ստրկության, նաեւ Չարին ծառայելու խորհրդանիշն է:

«Բոլոր ցեղերից, ժողովուրդներից, լեզուներից եւ ազգերից մարդիկ երեքուկէս օր նրանց դիակները կտեսնեն եւ թոյլ չեն տայ, որ նրանց դիակները դրուեն գերեզմանների մէջ» (հմր 9):

Քրիստոսի այս վկաները «երեք ու կես օր» անթաղ են մնալու: Հետաքրքրական է այս արտահայտության շրջված ձեւով բաղդատումը Քրիստոսի հետ: Հակառակ այն ժամանակի կրոնական իշխանության պայքարին, Քրիստոս ունեցավ հավատարիմներ, ովքեր քաջությամբ հանձն առան թաղել Նրա մարմինը, մինչդեռ վկաների դիակներն անթաղ են մնալու, այսինքն՝ Եկեղեցու դեմ հալածանքն

այնպիսի կատաղությամբ է տարածվելու, որ նույնիսկ չի գտնվելու վկաների մարմինները թաղող գոնե մեկը: Թերեւս սա կատարվում է Աստծո հատուկ կամեցողությամբ, որպեսզի վկաների հարությունը կամ վերակենդանացումը նույնքան ցնցող լինի, որքան նրանց մահը:

«Երկրի վրայ բնակուողները կուրախանան եւ կցնծան նրանց մահուան համար, մինչեւ իսկ նուէրներ կտան միմեանց, որովհետեւ այս երկու մարգարէները շատ չարչարեցին Երկրի բնակիչներին» (հմր 10):

Քրիստոս աշակերտներին հայտնեց մի սովորական ճշմարտություն, երբ Իր ձերբակալությունից առաջ նրանց ասաց. «Լա՛ւ իմացէք, դուք պիտի լաք եւ ողբաք, բայց աշխարհը պիտի ուրախանայ. դուք պիտի տրտմէք, բայց ձեր տրտմութիւնն ուրախութեան պիտի փոխուի» (Հհ 16:20): Ամեն անգամ, երբ Եկեղեցին հալածանքների է ենթարկվում, բնականաբար, Եկեղեցու անդամներն արտասվում են, սգում, բայց աշխարհը ցնծում է:

Իսկ ինչո՞ւ է աշխարհն ուրախանում Բարու կորստյան համար:

Չար մարդը երբեք չի կարող հանդուրժել Բարու ներկայությունը, քանի որ այդ ներկայությունն իր հանդիմանությունն է: Այդ պատճառով էլ Չարը ցանկանում է, որ Բարին իր աչքից հեռու լինի:

«Երեքուկէս օր յետոյ նրանց մէջ մտաւ կենարար Հոգին, որ Աստծուց է գալիս, եւ երկու վկաները վեր կացան ու ոտքի կանգնեցին: Եւ ահ ու սարսափ ընկաւ բոլոր տեսնողների վրայ» (հմր 11):

Թվարկենք Քրիստոսի հետ եղած նմանությունները՝

1. Նրանց մահը տեւում է «երեքուկես օր»:

2. Նրանց գործունեությունը նույնպես «երեքուկես օր» է տեւում: Քրիստոսի մահվան տեւողությունը ներկայացվել է երեք օր ու երեք գիշեր, իսկ գործունեությունը՝ երեքուկես տարի տեւողությամբ:

Նրանք նույնպես հարություն են առնելու Քրիստոսի օրինակով: Այս անսպասելի հարությունն ահ ու սարսափ է առաջացնելու բոլոր տեսնողների մեջ: Հիշենք Քրիստոսի գերեզմանը պահպանող զինվորներին. երբ նրանք տեսան, թե ինչպես լուսապայծառ հրեշտակը

գլորեց գերեզմանի քարը, նմանվեցին մեռելի, քանի որ տեսան նաեւ անպարտելի թվացող Գազանի պարտությունը: Նրա պարտության մեջ տեսան նաեւ իրենց սեփական պարտությունը եւ վախեցան այն պատժից, որին կարող էին ենթարկվել:

«Ապա երկու մարգարէները երկնքից լսեցին մի ուժեղ ձայն, որն ասում էր իրենց. «Վե՛ր ելէք, եկէ՛ք այստեղ»: Նրանք ամպերի միջով երկինք բարձրացան, մինչ իրենց թշնամիները դիտում էին նրանց» (հմր 12):

Այստեղ Քրիստոսի հետ մեկ ուրիշ նմանություն կա: Քրիստոս ամպերով երկինք բարձրացավ, մինչդեռ աշակերտները կանգնած դիտում էին: Այստեղ տարբերությունն այն է, որ դիտողները թշնամիներն են: «Երկու մարգարէները» Քրիստոսի նմանակներն են:

«Նոյն ժամին տեղի ունեցաւ մի ուժեղ երկրաշարժ եւ քաղաքի մէկ տասներորդ մասը կործանուեց. այս երկրաշարժից մեռան եօթ հազար մարդիկ: Մեծ սարսափ առաջացաւ մնացածների մէջ, որոնք փառք էին տալիս երկնաւոր Աստծուն» (հմր 13):

Այս երկրաշարժը վկաների հարությանն ու համբարձմանն առնչվող երրորդ նշանն է: Հետաքրքրական է վերջին խոսքը. «… մնացածների մէջ, որոնք փառք էին տալիս երկնաւոր Աստծուն»: Ինչպե՞ս պետք է հասկանանք այս փառք տալը. դա զղջման եւ ապաշխարությա՞ն, թե՞ Աստծուն ճանաչելու նշան է: Կարող է այդպես թվալ, սակայն այդպես չէ:

Ինչպես գիտեք, ամեն մի անձ, նույնիսկ ամենաանհավատ մարդը, նեղության պահին հանկարծ Աստծո անունն է տալիս, Նրան է կանչում: Կարո՞ղ ենք ասել, որ դա իսկական առումով զղջալ, ապաշխարել կամ Աստծուն ճանաչել է նշանակում: Փորձառությունը ցույց է տալիս, որ երբ նեղությունն անցնում է, միմիայն նեղության մեջ Աստված կանչողները շուտով մոռանում են իրենց նեղությունն էլ, Աստծո անունն էլ: Ուստի այստեղ՝ սարսափած մարդկանց «փառք տալը» զղջման, ապաշխարության կամ Աստծուն ճանաչելու նշան չէ: Դարձյալ հիշեցնեմ, որ Հայտնության գրքի 9-րդ գլխի վերջում ասվում է՝ հարվածներից ազատված մարդիկ չապաշխարեցին, այլ, ընդհակառակը, շարունակեցին իրենց մոլորությունները: Այս մարդիկ նույնպես չեն ապաշխարում:

Եվ երկրորդ աղետը փակվում է հենց այսպես:

ՅՈԹԵՐՈՐԴ ՓՈՂԸ (11:15-19)

«Երբ եօթերորդ հրեշտակը հնչեցրեց փողը» (հմր 15):

Այս տողով է բացվում վերջին հատվածը: Ծանր աղետի նախագուշակությունն է լինելու:

«… Երկնքում լսուեցին ուժգին ձայներ, որոնք ասում էին. «Ամբողջ աշխարհի թագաւորութիւնն այլեւս պատկանում է մեր Տիրոջը եւ Նրա Օծեալին, Ով թագաւորելու է յաւիտեանս յաւիտենից» (հմր 15):

Այս հայտարարությունն արվում է հակառակ Երկրի վրա հեթանոս աշխարհի տիրապետության, եւ մեզ է ներկայացվում երկնային պաշտամունք:

«Քսանչորս երէցները, որոնք նստած էին իրենց գահերին, Աստուծոյ առջեւ, գետին ընկնելով իրենց երեսի վրայ, երկրպագեցին Աստծուն եւ ասացին.

– Ամենակա՛լ Տէր Աստուած,
Դու, որ Է-ն ես եւ միշտ էիր,
գոհութիւն ենք մատուցում Քեզ,
որ ձեռքդ առար Քո մեծ զօրութիւնը եւ թագաւորեցիր» (հմր 16-17):

Քսանչորս երեցների պաշտամունքը երկնային պաշտամունքի կատարյալ օրինակ է:

Ըստ այս համարի՝ Աստված արդեն թագավորել է: Սակայն հարց է ծագում՝ իսկապե՞ս այդպես է:

Քրիստոս մահվան հանդեպ տարած Իր հաղթանակով, այսինքն՝ Հարությամբ եւ Համբարձմամբ, նստեց Հոր աջ կողմում եւ Իր թագավորական զորությունն ստացավ: Այսինքն, Տիրոջ թագավորությունն արդեն իրապես սկսվել է:

Եկեղեցին, որպես Քրիստոսի մարմինն այս աշխարհում, Աստծո թագավորության մանրանկարն է: Եկեղեցին այն վայրն է, ուր կա-

տարվում է Աստծո կամքը: Հավատացյալները կատարում են Աստծո կամքը, թեպետ եւ հաճախ անկատար ձեւով: Եվ այնտեղ, ուր առկա է Աստծո կամքի կատարումը, այնտեղ է նաեւ Աստծո թագավորությունը:

Տեղին է հիշել «Հայր մեր» աղոթքը. «Եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո՝ որպէս յերկինս եւ յերկրի»: Այս երկու ճշմարտություններն ամբողջացնում են միմյանց: «Թող քո կամքը լինի ինչպես Երկնքում, այնպես էլ Երկրի վրա» խոսքն անմիջապես միացել է «թող Քո թագավորությունը գա» տողին: Աստծո թագավորությունը գալիս է ճիշտ այն ժամանակ, երբ գործադրվում է Աստծո կամքը:

Մենք գիտենք, որ Եկեղեցուց դուրս Աստծո կամքը դեռ չի եկել ամբողջ աշխարհի վրա: Այդ իմաստով՝ Աստծո թագավորությունը գալիք իրականություն է: Հետեւաբար, այստեղ տրված երկնքի պատկերը, ինչպես նաեւ կոչը, թե Աստծո թագավորությունը հաստատվել է, իրականում նախապատկերացում է: Այսինքն՝ վաղորոք հայտարարվում է այն, ինչը տեղի է ունենալու վերջնականորեն:

«Ամենակա՛լ Տէր Աստուած, Դու, որ Է-ն ես եւ միշտ էիր» (հմր 17): Այս գոհաբանական օրհներգության մեջ նորից հանդիպում ենք Աստծո «Դու, որ Է-ն ես եւ միշտ էիր» անվանը, որն առավել ամբողջական ձեւով ներկայացվել էր «Դու, որ ես, որ էիր եւ որ պիտի գաս» կամ երրորդ դեմքով՝ «որ էր, որ է եւ որ պիտի գա» տողերում:

«Դու, որ Է-ն ես» տողով հայտնվում է այն խորագույն իրականությունը, որ Աստված մնայուն ներկան է. Նրա համար չկար ժամանակ, երբ գոյություն չուներ, եւ չի լինելու մի ժամանակ, որ գոյություն չունենա: Մարդկային մտածողության մեջ առկա են անցյալն ու ապառնին, Աստծո համար անցյալ եւ ապառնի գոյություն չունեն:

«Դու, որ Է-ն ես եւ միշտ էիր» անվան մեջ տեսնում ենք, որ առկա են ներկան եւ անցյալը, իսկ ապառնին բացակայում է: Ապառնիի չլինելը թելադրում է, որ Աստծո թագավորությունը հասել է. գալիքի մասին այլեւս խոսք չկա: Սակայն ապառնիի բացակայությունը ոչ թե նպատակ ունի թելադրել Աստծո թագավորության հաստատված լինելը Երկրի վրա, այլ պարզապես հայտնում է, որ Երկնքում հավերժական ներկա է: Երկնքի բնակիչները տեսնում են Աստծո թագավորության ներկան, իսկ մենք, որ դեռ Երկրի վրա ենք ապրում եւ դեռ Թագավորությանն ենք սպասում, Աստծո անվան մեջ եւս շարունակում ենք պահել ապագայի տարրը:

«Ազգերը զայրացան, բայց հասաւ Քո բարկութիւնը եւ մեռելներին դատելու ժամանակը» (հմր 18):

Այդ թագավորության գալուստի առաջին երեսը ճիշտ այս, այսինքն՝ դատաստանի երեսն է, որ Աստծո զայրույթով կամ բարկությամբ է արտահայտվում եւ որ այստեղ երկրորդ բացատրությամբ եւս կա, ուր շեշտվում է. «մեռելներին դատելու ժամանակը»:

Անշուշտ «մեռելներին դատել»ը ընդարձակ բացատրություն ունի եւ վերաբերում է բոլորին: Բայց եթե դատաստանի պատկերը նույնպես տեսնենք 20-րդ գլխում, ապա կնկատենք, որ այնտեղ եւս այս արտահայտությունն անմիջականորեն կապվել է Երկրի բնակիչների հետ, հետեւաբար վերաբերում է բոլոր չարիք գործողներին, ուստի՝ նրանց դատաստանն է, նույն ժամանակ երկրորդ նշանակությամբ՝ վարձատրության ժամանակն է:

Այդ պատճառով ասում է. «… Հասաւ ժամանակը՝ վարձատրելու Քո ծառաներին՝ մարգարէներին եւ Քո ընտրեալներին, Քեզնից ակնածողներին, մեծերին եւ փոքրերին» (հմր 18):

Մենք արդյոք ընտրյալների շարքո՞ւմ ենք, թե՞ ոչ: Բոլոր նրանք, ովքեր ակնածում են Աստծուց, Աստծո ընտրյալներն են:

«Հասաւ ժամանակը՝ կորստի մատնելու նրանց, որոնք ապականում են Երկիրը» (հմր 18):

Մենք գիտենք, որ Աստծո ստեղծագործությունը մեզ ներկայանում է որոշակի կարգավորությամբ. սկզբում նկարագրվում է քաոսային պատկեր, այնուհետեւ Աստված ստեղծում է կարգավորյալ տիեզերքը՝ որպես Իր բանականության դրսեւորում:

Ինչպես արդեն գիտենք, ներկայում արարչագործությունը գտնվում է իր կարգավորության, պահպանման վիճակում, սակայն՝ ոչկատարելապես. կան խանգարումներ, խախտումներ: Դրանք պատճառողները մարդիկ են: Ստեղծագործության կարգավորման մեջ,

որտեղ որ առկա է եղել մարդկային ձեռքի միջամտությունը, անպայման խախտում է առաջացել:

Սակայն այստեղ միայն խանգարման մասին չի խոսվում, այլ նաեւ՝ ապականության: Աստծո հանդեպ ակնածանք ունեցող մարդը, բնականորեն, ակնածանք կունենա նաեւ Աստծո ստեղծագործության հանդեպ, իսկ առ Աստված ակնածանք չունեցողներն անխղճորեն են վարվում Նրա ստեղծագործության հետ: Անպատասխանատու վերաբերմունքը ոչ թե միայն խանգարում է աշխարհը, այլ նաեւ ապականում է: Այդ պատճառով էլ Աստված կորստյան է մատնելու աշխարհն ապականողներին:

«Եւ ահա երկնքում բացուեց Աստուծոյ տաճարը, եւ այնտեղ երեւաց Աստուծոյ Ուխտի Տապանակը» (հմր 19):

«Երկնքում Աստծո տաճար» բացատրությունը նշանակում է Աստծո կամ Գառան ներկայությունը:

Ի՞նչ է նշանակում «Ուխտի Տապանակ»: Նրա պատրաստության եւ բովանդակության մասին տե՛ս Ելից գրքի 25-րդ գլխի 10-22-րդ համարները:

Ուխտի Տապանակը պահվում էր տաճարի Սրբություն Սրբությանց բաժնում: Երբ Ք. ա. 587 թվականին տաճարն ավերվեց, Ուխտի Տապանակը կորավ, տաճարը վերաշինելուց հետո էլ Սրբություն Սրբությանց բաժինը մնաց առանց Ուխտի Տապանակի: Մի շարք մեկնիչներ կարծում են, թե Ուխտի Տապանակը երկնքում է: Սակայն Աստվածաշնչում որեւէ տեղ այդ մասին գրված չէ, հետեւաբար դա ավելորդ հավատալիք է: Թե՛ «Երկնքում Աստծո տաճար»ը եւ թե՛ «Ուխտի Տապանակ»ը խորհրդանիշեր են Աստծո ներկայության ու փառքի նշանակ են: Հաջորդ համարը եւս այդ է թելադրում:

«Եղան փայլատակումներ, ձայներ, որոտներ, երկրաշարժ եւ ուժեղ կարկուտ» (հմր 19):

Սրանք Աստծո ներկայության նշան-երեւույթներ են:

ԺԲ ԳԼՈՒԽ

Այս գլխով հետաքրքրական տեսիլք է բացվում: Կարծում եմ, թե այս տեսիլքը խորհրդանշական պատկերով ամփոփում է Աստծո փրկագործական ամբողջ ծրագիրը, որը կարելի է ներկայացնել հինգ կետերով.

1. Մարդու մեղանչումից հետո կամ անկման պահին իսկ Աստված տվեց փրկագործական առաջին խոստումը, երբ Իր դատապարտությունը սահմանեց օձի, կնոջ ու ընդհանրապես մարդ արարածի համար, տվեց փրկագործական առաջին խոստումը: Դատապարտության առաջին խոսքը բաժին ընկավ օձին. «Թշնամութիւն պիտի դնեմ քո եւ այդ կնոջ միջեւ, քո սերնդի ու նրա սերնդի միջեւ: Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը» (Ծն 3:15): Այս խոսքն իրականում Աստվածաշունչ մատյանի փրկագործական առաջին խոստումն է: Այստեղ մեզ երկու եզրեր են հետաքրքրում՝ օձը եւ կնոջ սերունդը: Աստվածաշնչում օձը Սատանայի խորհրդանիշն է, իսկ «սերունդ» բառը նշանակում է որդի կամ զավակ, կարող է նաեւ հոգնակի նշանակություն ունենալ եւ հասկացվել որպես մի ամբողջ ժողովուրդ:

2. Փրկագործական ծրագրի կատարման նախօրինակը նկարագրվում է Հին Կտակարանում. դա Եգիպտոսից ելքի պատմությունն է: Ելքն Աստծո փրկագործական ծրագրի ամենակարեւոր իրադարձությունն է, որ Աստված տվեց հետագա կամ վախճանական փրկության պատկերի համար:

3. Փրկագործության ծրագրի լրումը տեղի ունեցավ Քրիստոսի երկրային կյանքում: Այս լրման մասին կարդում ենք Հայտնության գրքի 12-րդ գլխի 5-րդ համարում, ուր ասվում է. «Կինը մի արու զաւակ ծնեց»: Հստակորեն կարող ենք ասել, որ սա մեկ հոգու մասին է, եւ այդ մեկ հոգին, ըստ առաքյալի, Քրիստոս Ինքն է, Ով «սահ-

մանուած էր երկաթէ մականով հովուել բոլոր ազգերին»: Եվ անմիջապես ակնարկվում է երկրորդ սաղմոսին, որը մեսիական սաղմոս է եւ խոսում է գալիք Մեսիայի թագավորության մասին:

Այդ թագավորությունը պատկերվում է ոչ միայն իբրեւ խաղաղության թագավորություն, այլ նաեւ ուժեղ թագավորություն, որը «երկաթէ մականով» պիտի հովվի ազգերին, այսինքն՝ պիտի խորտակի Սատանային գերի դարձած իշխանությունները:

4. Աստծո թագավորությունը Երկրի վրա արդեն սկսվել է, գտնվում է Եկեղեցում, եւ դրա համար է Չարը կատաղի պայքար մղում Եկեղեցու դեմ: Սա մի պատերազմ է, որ Սատանայի հաղթանակով չի ավարտվելու. սա Սատանայի համար տանուլ տված պատերազմ է:

5. Փրկագործության ծրագրի ներկա փուլը կարելի է կոչել «Եկեղեցու ժամանակաշրջան»: Այս փուլը հատկանշվելու է Սատանայի ձեռքով գալիք հալածանքներով:

ԿԻՆԸ ԵՎ ՎԻՇԱՊԸ (12:1-18)

«Եւ ապա երկնքում երեւաց մեծ նշան» (հմր 1):

Սա կարեւորագույն համարներից է: «Նշան» բառն այստեղ գործածվել է հատուկ իմաստով: Գիտենք, որ այս բառը կարող է նշանակել Աստծո ցույց տված դեպք, երեւույթ, արարք, անձ, որի հետեւում մի խորհուրդ կա: Նշանը պատկերացնում է, որի հետեւում ճշմարտություն կա: Աստված ցանկանում է, որ մենք հասկանանք Իր տված նշանի խորհուրդը:

Որպես Իր խոսքի ու գործի վկայություն, երբեմն էլ՝ որպես ապացույց՝ Աստված հաճախ է նշաններ գործածել. երբեմն գալիք իրականությունների մասին սկզբից է վկայություն տվել, որպեսզի կատարումից հետո վստահ լինենք, որ կատարվածը Աստծո ձեռամբ է: Երբեմն նշանները կարող են պարզ, երբեմն էլ՝ բացառիկ կամ գերբնական երեւույթներ լինել:

Որպեսզի շատ չխճճվենք, նշենք, որ այստեղ տրվածը, ըստ երեւույթին, անսովոր նշան է. պատկերվածը մի կին է, սակայն նա յուրահատուկ ձեւով է ներկայացվում: Իսկ ինչո՞ւ է ներկայացվում հիշված կինը, եւ ի՞նչ են արտահայտում այն պատկերները, որոնցով նկարագրվում է նա:

Ասվում է, թե այդ կինը «հագուստի նման հագել էր արեգակը, լուսինն առել էր իր ոտքերի տակ եւ իր գլխին ունէր մի պսակ՝ տասներկու աստղերով (հմր 1): Կնոջ այս պատկերում մեկնիչները տեսնում են Աստծու մորը, ոմանք էլ՝ Եկեղեցին:

«Հագել էր արեգակը»: Արեւն ընդհանրապես Աստծո, հատկապես Քրիստոսի խորհրդանիշերից է: Հայտնության գրքում Քրիստոսի դեմքը երկու անգամ նկարագրվել է արեւի ճառագայթներով: «Հագնել արեգակը» փոխաբերությունն այս կնոջը մոտեցնում է Քրիստոսին, ուրեմն՝ այս կինը Մարիամ Աստվածամայրն է:

Իսկ ի՞նչ է նշանակում «լուսինն առել էր իր ոտքերի տակ» արտահայտությունը: Լուսինը մայրության խորհրդանիշն է, հետեւաբար, մենք ոչ միայն մի կնոջ առջեւ ենք, այլ նաեւ՝ մի մոր:

Անդրադառնալով աստղերին՝ ասենք, որ դրանք կարող են մատնանշել հրեշտակներին: Կարող են նաեւ փառք խորհրդանշել, թեպետ «աստղեր» բառի տակ փորձելու եմ մեկ այլ բան կարդալ:

Հիշեք Հովսեփի երկու երազները (Ծն 37:7, 9): Երկրորդ երազում Հովսեփը տեսնում է արեւը, լուսինը եւ տասնմեկ աստղեր, որոնք երկրպագում էին իր աստղին: Հայրը՝ Հակոբը, անմիջապես ասում է. «Այդ ի՞նչ երազ է, որ տեսել ես: Հիմա ես, քո մայրը եւ եղբայրները պիտի գանք եւ երկրպագե՞նք քեզ» » (Ծն 37:10): Այս խոսքը թելադրում է, որ Հակոբն աստղերը համարել է Հովսեփի տասնմեկ եղբայրները: Այնտեղ լուսինը ներկայանում է որպես մայրը, իսկ արեւը՝ հայրը: Հակոբի խոսքը լուսաբանություն է սփռում այս կնոջն առնչվող պատկերների վրա: Նրա գլխի աստղերը նույնպես կարող են նշանակել, որ սերունդը նրանից է:

Իսրայելը բաղկացած էր տասներկու ցեղերից: Աստծո նոր ժողովուրդը եւս ներկայանում է տասներկու առաքյալներով կամ ցեղերով: Տասներկու ցեղերը խորհրդանշում են Աստծո ժողովրդի ամբողջականությունը: Ուրեմն, Աստծո ժողովուրդն Աստվածամոր պատկերն է:

«Նա յղի էր, ճչում էր երկունքի մէջ եւ ծննդաբերելու մօտ լինելով՝ սաստիկ ցաւեր էր քաշում» (հմր 2):

Երկունքի ցաւերը, անշուշտ, խորհրդանշական են: Ինչպե՞ս հասկանանք ակնարկված երկունքը: Աստված Իր ժողովրդին փրկեց Եգիպտոսից եւ կամեցավ նրանից նոր ժողովուրդ, Իր սեփական ժողովուրդը կերտել: Այդ երկունքը դյուրին չէր. երկունքի երկար ընթացք եղավ, մինչեւ ծնվեց Աստծո կամեցած ընտրյալ ժողովուրդը: Քրիստոսով կերտվելիք նոր ժողովուրդը եւս դյուրությամբ չի կերտվելու, նա էլ երկունքով պիտի անցնի:

«Երկնքում երեւաց նաեւ մի այլ նշան. հրեղէն մի մեծ վիշապ, որ ունէր եօթ գլուխ ու տասը եղջիւր եւ իւրաքանչիւր գլխի վրայ՝ մի թագ» (հմր 3):

Վիշապն առկա է բոլոր հին ժողովուրդների առասպելաբանության մեջ: Սխալ չհասկացվեմ. չեմ ուզում ասել, թե այս հատվածն առասպելաբանություն է: Պարզապես այս շեղումն եմ անում վիշապի առասպելական իմաստը շեշտելու համար: Ընդհանրապես վիշապը խորհրդանշել է Չարը կամ մութ ուժը, նաեւ ներկայանում է որպես տվյալ ժողովրդի անձնավորյալ թշնամի: Մի պարզ օրինակ բերեմ մեր ժողովրդի առասպելաբանությունից: Պատմահայր Մովսես Խորենացին հիշատակում է հայոց թագավոր Տիգրան Երվանդյանին: Նա մարաց թագավոր Աժդահակի դեմ մղելիք պատերազմի նախօրեին մի տեսիլք ունեցավ, որում Աժդահակը ներկայանում էր վիշապի նման: Այս շեղումն օգտագործում եմ ասելու համար, որ Աստվածաշնչում եւս վիշապն առհասարակ ներկայանում է որպես Աստծո ժողովրդի թշնամի:

Այստեղ վիշապը նկարագրվում է որպես հրեղեն, կարծեք կրակից է կամ կարմիր գույն ունի, իսկ երկնքում ներկայացվելը մատնանշում է, որ նա ծագում է երկնքից եւ երկնային արարած է:

«Եօթ գլուխ եւ տասը եղջիւր»: Գիտենք, որ յոթ թիվը կատարելության խորհրդանիշն է, իսկ «գլուխ» բառը կարող է երկու բան նշանակել. նախ՝ իշխանություն եւ երկրորդ՝ բանականություն կամ իմաստություն: Արդ, «յոթ գլուխ»ը կարող է նշանակել, թե նա ուներ

կատարյալ իշխանություն, կատարյալ բանականություն կամ իմաստություն: Իսկ տասը եղջյո՞ւրը: Տասը թիվը եւս կատարելություն է նշանակում, իսկ եղջյուրը՝ զորություն, երբեմն էլ՝ իշխանություն, հետեւաբար, տասը եղջյուրը կատարյալ զորության կամ իշխանության նշան է: Ուստի ասել կուզի, թե այս վիշապը կատարյալ Չարն է:

«Նա իր պոչով քաշում տանում էր երկնքի աստղերի մէկ երրորդ մասը, որը նետեց Երկրի վրայ» (հմր 4):

Ասացինք, որ աստղերը կարող են հրեշտակների խորհրդանիշը լինել: Սատանան Եսայու մարգարեության 14-րդ եւ Եզեկիելի մարգարեության 29-րդ գլուխներում ներկայանում է որպես հրեշտակ: Նա բարձրագույն դիրք ուներ հրեշտակների մեջ, անկումից հետո իր հետ տարավ նաեւ իր կողմնակիցներին ու կամակիցներին: Նրանք նույնպես ընկան Սատանայի հետ:

Ոմանք այս համարի բացատրության մեջ փորձում են տեսնել ոչ թե Սատանայի գործակիցներին, այլ հեթանոս ժողովուրդներին, որոնք Երկրի վրա Սատանայի կամակիցներն են: Պոչով քաշել տանելը նշանակում է ենթարկել իր կամքին: Առաջին բացատրությունն ինձ ավելի ճիշտ է թվում:

«Նա կանգնեց ծննդաբերելու մօտ եղող կնոջ առաջ, որպէսզի երբ կինն իր զաւակին ծնի, կուլ տայ նրան» (հմր 4):

Սա հիշեցնում է Հիսուսի մանկության ժամանակ Հերովդեսի ձեռքով պատահած աղետը: Քրիստոնյա մեկնիչները Հերովդեսի ոճիրի հետեւում անձնական նախանձից ավելի տեսնում են Չարի դրդիչ ուժը. Հերովդեսը Սատանայի կամակատարն էր, եւ ուզեց սկզբից վերացնել Նրան, Ով Փրկիչն էր լինելու:

Քրիստոսի երկրային կյանքում եւ առաքելության մեջ բազում անգամներ գտնում ենք խափանման նույն փորձը: Օրինակ՝ մկրտությունից անմիջապես հետո Հիսուսի անապատ տարվելը եւ այնտեղ փորձվելը: Սատանան ճիգ գործադրեց, որ Քրիստոս հրաժարվի Իր փրկագործական ծրագրից: Քրիստոսի խաչելությունը եւս խափանման նույն փորձին ենթարկվեց: Սատանան ասաց. «Եթէ Աստուծոյ Որդին ես, ապա փրկի՛ր ինքդ քեզ եւ ցա՛ծ իջիր խաչից» (Մտ 27:40):

Խաչից իջնել պիտի նշանակեր հրաժարվել աստվածային փրկագործական ծրագրից եւ Սատանայի ուզած կերպը որդեգրել: Նույն փորձությունն Աստծո նոր ժողովրդի՝ Եկեղեցու կյանքում նույնպես առկա է բազում կերպերով:

«Կինը ծնեց մի արու զաւակ» (հմր 5):

Այս «արու զաւակ»ը հավանական է, որ Քրիստոսն է, Ում սահմանվել էր «երկաթէ մական»ով հովվել բոլոր ազգերին (հմր 5): «Երկաթէ մական»ի օրինակներից է Մովսեսի գավազանը: Մովսեսը գավազանը գործածեց Աստծո բոլոր նշանները ցույց տալու, մասնավորաբար՝ Աստծո զորությունը հայտնելու համար, ինչպես նաեւ Աստծո հարվածներն իջեցնելու Նրա հակառակորդների վրա: Նույնը Քրիստոս Ինքն է գործելու, երբ վերցնի թագավորությունը: Եվ այդ թագավորության մեջ, ինչպես գրված է Հայտնության գրքի սկզբում, Քրիստոս Իրեն գահակից է դարձնելու բոլոր ընտրյալներին (2:26-28):

«Արու զաւակ»ը կարող է նշանակել Քրիստոսի մարմինը, այսինքն՝ Եկեղեցին: Այս պարագայում «կին»ը կարող է նշանակել առ Աստված հավատքը, հնազանդությունը եւ հավատարմությունը:

«Բայց կնոջ զաւակը յափշտակուելով՝ տարուեց Աստուծոյ եւ Նրա գահի մօտ» (հմր 5):

«Յափշտակուել»ն այստեղ կարելի է հասկանալ Քրիստոսի Համբարձումը: Քրիստոս Իր Հարությունից քառասուն օր հետո երկինք համբարձվեց եւ գնաց ու բազմեց Հոր աջ կողմում:

Այն դեպքում, երբ «կնոջ զաւակ»ը հասկացվի որպես Աստծո նոր ժողովուրդ, ապա աշխարհի վախճանին, ինչպես Պողոս առաքյալն է գրել թեսաղոնիկեցիներին ուղղված Ա թղթի 4-րդ գլխի 17-րդ համարում, նա երկինք պիտի հափշտակվի՝ «Տիրոջը դիմաւորելու համար» եւ այնուհետեւ Տիրոջ հետ է լինելու հավիտյան:

«Կինը փախաւ դէպի անապատ, որտեղ նրա համար տեղ էր պատրաստուել Աստուծոյ կողմից, որպէսզի այնտեղ կերակրուի հազար երկու հարիւր վաթսուն օր» (հմր 6):

Հին Իսրայելը Եգիպտոսից դուրս գալուց հետո անապատ տարվեց, որպեսզի այնտեղ մնա այնքան ժամանակ, մինչեւ պատրաստ

լինի մտնելու խոստացված երկիր: Աստված անապատում նրանց տվեց Իր օրենքները եւ նրանց կազմավորեց որպես ազգ: Նրանց նաեւ նախապատրաստեց հետագա պատերազմների համար:

Պարագան նույնն է նաեւ Աստծո նոր ժողովրդի համար: Մկրտությամբ մարդիկ կանչվում են առ Աստված: Նրանք մտնում են ապաշխարության «անապատ»ը, որպեսզի այնտեղ հոգեպես նախապատրաստվեն եւ կարողանան հոգեւոր պատերազմ մղել:

«Անապատային» ժամանակը տեւելու է «հազար երկու հարիւր վաթսուն օր»: «Հազար երկու հարիւր վաթսուն օրեր»ը կազմում են երեքուկես տարի: Այդ տարիները մեծ նեղության ժամանակի առաջին կեսն են, երկրորդ կեսին Եկեղեցին դիմագրավելու է Սատանայի շղթայազերծած հալածանքը:

«Եւ երկնքում պատերազմ տեղի ունեցաւ: Միքայէլն ու իր հրեշտակները կռուեցին վիշապի դէմ, որն իր հերթին պատերազմում էր իր հրեշտակներով» (հմր 7):

Աստվածաշնչում Միքայելը հազիվ երկու անգամ է երեւում. Դանիելի գրքում նա ներկայանում է որպես Աստծո դատի եւ ժողովրդի պաշտպան: Նրա անունը նշանակում է «Ո՞վ կա Աստծո նման»:

Ինչ արդյունք է ունենալու պայքարը: Հաջորդ երկու համարներն ասում են. «Բայց վիշապն ու իր հրեշտակները պարտուեցին: Երկնքում այլեւս տեղ չմնաց նրանց համար: Մեծ վիշապը՝ այն առաջին օձը, որ Բանսարկու եւ Սատանայ է կոչւում եւ որ մոլորեցրեց ամբողջ աշխարհը, գցուեց Երկիր: Նրա հրեշտակներն էլ իր հետ ցած գցուեցին» (հմր 8-9):

Ցույց է տրվում, որ Սատանան երկնքում իրեն սպառել է, այսինքն՝ ավարտվել է, որպեսզի Աստծո ժողովուրդը քաջալերվի: Հակառակ նրան, որ Չարի հալածանքները սաստկորեն իջնելու են Եկեղեցու գլխին, Աստծո ժողովուրդն անպաշտպան չի մնա: Աստված շարունակելու է մնալ Իր ժողովրդի պաշտպանը, թեեւ թույլ կտա, որ Չարը նրա անդամներին փորձության ենթարկի, սակայն փորձության ենթարկելու թույլտվությունը չի նշանակում լքել նրանց:

«Մեծ վիշապ»ը ներկայացվել է երեք այլ անուններով եւս՝ Առաջին Օձը, Բանսարկուն, Սատանան: «Առաջին Օձ»ով ակնարկվում է դրախտի օձը, որ մարդու մեղանչման պատճառ դարձավ: «Բանսարկու» բառը գրաբարյան ձեւ է. իմաստը բացատրվել է այն երգի մեջ, որը քիչ հետո պիտի տեսնենք («ընկաւ մեր եղբայրների չարախօսը», հմր 10): Բանսարկու նշանակում է չարախոս: Իսկ «սատանա» նշանակում է հակառակորդ, որովհետեւ նախապես երկնաբնակ այդ հրեշտակն իրեն Աստծո կամքի հակառակորդ դարձրեց:

«Եւ երկնքում լսեցի մի ուժեղ ձայն, որ ասում էր. «Այժմ հասաւ մեր Աստուծոյ փրկութիւնը, զօրութիւնն ու արքայութիւնը. հասաւ Նրա Օծեալի իշխանութիւնը, որովհետեւ ընկաւ մեր եղբայրների չարախօսը, նա, ով գիշեր-ցերեկ Աստուծոյ առաջ չարախօսում էր նրանց դէմ»» (հմր 10):

Ինչպես տեսնում ենք, պատկերը ներկայացվել է անցյալ կատարյալով, թեեւ ըստ էության նշանակում է, թե շուտով լինելու է: Կարծեք այս օրհներգութիւնը պատգամ է Երկրավոր Եկեղեցուն, որպեսզի զինվի Երկնայինի օրինակով՝ իր պայքարը հաջողությամբ մղելու համար:

«Մեր եղբայրները յաղթեցին նրան՝ Գառան արիւնով եւ իրենց տուած վկայութեամբ, որովհետեւ անտեսեցին իրենց կեանքը եւ յանձն առան մահը» (հմր 11):

Ասել կուզի, թե հենց շահած փրկությունը իրենց զորության, կարողության կամ արժանիքների արդյունքը չէր, այլ Աստծուց իրենց տրված մեծագույն եւ անվճար պարգեւը: Քրիստոս Իր զոհագործությամբ այդ պարգեւը շնորհեց անվարձահատույց, սակայն նաեւ «Գառան արիւնն» իրենք վերցրին իրենց վրա: Քրիստոս Իր արյունը հեղեց ամբողջ աշխարհի փրկության համար, սակայն այդ փրկության ժառանգորդներ եղան եւ լինելու են նրանք, ովքեր այդ արյունը վերցրին իրենց վրա ու դեռ վերցնելու են: «Գառան արիւն»ը սպառազինում է եւ դարձնում Քրիստոսի հավատարիմ վկաներ: Իսկ վկայությունը միայն խոսքով վկայություն չէ, այլ նաեւ կյանքով, նահատակությամբ կամ կենդանի նահատակությամբ, այսինքն՝ աշխարհում ունեցած առաքինի կյանքով:

«Դրա համար ուրախացէք, ո՛վ երկինք, եւ դուք բոլորդ, որ բնակւում էք այնտեղ: Վա՜յ ձեզ, երկի՛ր եւ ծո՛վ, որովհետեւ ձեր մէջ ընկաւ Բանսարկուն. նա լցուած է զայրոյթով՝ իմանալով, որ քիչ ժամանակ ունի» (հմր 12):

Այստեղ «երկինք»ն ակնարկում է այնտեղ բնակվողներին, որոնք կազմում են Հաղթական Եկեղեցին, այսինքն՝ նրանք, ովքեր այս կյանքի փորձություններից հետո հասել են խաղաղության ափերը:

Վերջին նեղության ժամանակը չտեսնողները երանելի են, այդ պատճառով էլ ասում է. «Ուրախացէ՛ք»: Իսկ Երկրի վրա գտնվողների վիճակը ծանր է լինելու, որովհետեւ Բանսարկուն, իմանալով, որ կարճ ժամանակ ունի, գործելու է իր ավերը: Նա նաեւ կփորձի օգտագործել այդ ժամանակը իր ամբողջ զայրույթը մարդկության գլխին թափելու համար: Նրա զայրույթին են արժանանալու ոչ միայն նրա կամքին հակառակվողները, այլ նաեւ ենթարկվողները: Այսինքն՝ բոլորն անխտիր:

«Երբ վիշապը տեսաւ, թէ ինքը գցուել է Երկիր, սկսեց հետապնդել այն կնոջը, որ արու զաւակ էր ծնել» (հմր 13):

Այս համարով ակնարկվում են Սատանայի շղթայազերծած հալածանքները թե՛ Քրիստոսի եւ թե՛ Եկեղեցու դեմ:

«Կնոջը տրուեցին մի մեծ արծուի երկու թեւեր, որպէսզի անապատում թռչի գնայ իր տեղը, որտեղ պիտի կերակրուէր մի որոշ ժամանակ, երեքուկէս տարի՝ հեռու օձի ներկայութիւնից» (հմր 14):

Այսպես է ավարտվում առաջին երեքուկես տարին, որն անցնում է Աստծո անմիջական պաշտպանության ներքո: Մյուս երեքուկես տարին պետք է լինեն փորձությունների տարիներ:

Բնագրում «երեքուկէս տարի»ն այլ կերպ է արտահայտվել: Այնտեղ ասվում է՝ մի ժամանակ, ժամանակներ եւ կես ժամանակ: Դանիելի մարգարեության մեջ «մի ժամանակ»ը նշանակում է «մէկ տարի»:

«Ապա օձն իր բերանից հեղեղի պէս ջուր թափեց կնոջ հետեւից, որպէսզի հոսանքն առնի տանի նրան: Բայց Երկինքն օգնեց կնոջը,

Երկիրը բացեց իր բերանը եւ կուլ տվեց այն ջուրը, որ վիշապը թափել էր իր բերանից» (հմր 15-16):

Այստեղ առկա է երկու բացատրություն: Առաջին՝ վիշապը բերանից հեղեղի պես ջուր թափեց, որպեսզի կնոջն սպանի: Ինչ է այս թափած ջուրը: Հայտնության գրքի 17-րդ գլխի 15-րդ համարում ջրերը բացատրվում են իբր ժողովուրդներ, բազմություններ, ազգեր եւ լեզուներ: Եթե ջրերը նկատի առնենք այս իմաստներով, ապա վիշապի թափած ջուրը կարող է նշանակել այն ժողովուրդներն ու ազգերը, որոնք կատարում են Չարի կամքը եւ Եկեղեցու հանդեպ նրա հալածանքի միջոցն են: Ինչ է նշանակում «Երկինքն օգնեց կնոջը»: Երկինքն ասելու ձեւ է, եբրայաբանություն: Եբրայեցիները հաճախ էին խուսափում Աստծո անունը շատ գործածելուց, որպեսզի անարգած չլինեն Աստծուն: Այդ պատճառով արտահայտության այլ ձեւեր էին օգտագործում, ինչպես այստեղ «Երկինք» բառը, որ նշանակում է Աստված: Հետեւաբար, այստեղ ասվում է, որ Աստված Ինքն է օգնում «կնոջը»:

«Երկիրը բացեց իր բերանը եւ կուլ տուեց այն ջուրը...»: Մարդկանց հողի մեջ թաղվելու պատկերի հանդիպում ենք միայն մեկ տեղ. Թվոց գրքի 16-րդ գլխի 31-33-րդ համարներում ասվում է, թե Երկիրը կուլ տվեց Մովսեսի եւ Ահարոնի հեղինակության դեմ բողոքող մարդկանց ու նրանց ունեցվածքը: Նույնը կպատահի նրանց հետ, ովքեր կհալածեն Աստծո ժողովրդին:

Հիշենք, որ Կարմիր ծովի հորձանքները կարող էին իրենց մեջ առնել Աստծո ժողովրդին եւ բոլորին էլ խեղդել, եթե Աստված թույլ տար: Դա կարող էր լինել ճիշտ այնպես, ինչպես Աստծո ժողովրդի անցնելուց հետո Նա թույլ տվեց, որ ջրերը վերադառնան իրենց տեղերը, եւ փարավոնի կառքերն ու հեծելազորն ընկղմվեն, մինչդեռ Իր ժողովրդի պարագայում Աստված պատի պես կանգնեցրեց ջրերը, եւ ժողովուրդը ցամաքի միջով անցաւ ու հասաւ փրկության ափերին: Նույն այդ օրինակով Աստծո նոր ժողովուրդը մեծ նեղության ժամանակ առանց վնասվելու կանցնի, եւ հարվածներն Աստծո ժողովրդին վնասել ցանկացողների գլխին կիջնեն:

«Վիշապը զայրացաւ կնոջ դէմ եւ գնաց պատերազմելու նրա միւս զաւակների դէմ, որոնք հնազանդւում էին Աստուծոյ պատուիրանին եւ իրենց վկայութիւնն էին տալիս Յիսուսի մասին» (հմր 17):

Այստեղ դարձյալ տեսնում ենք երկու բացատրություն: Առաջին՝ երբ Սատանան Քրիստոսին որեւէ բան չկարողացավ անել, դուրս եկավ պատերազմելու Նրա հետեւորդների, այսինքն՝ Եկեղեցու դեմ: Երկրորդ՝ վիշապը չկարողացավ արգելք լինել Եկեղեցուն: Եկեղեցին հիմնվեց, հաստատվեց եւ տարածվեց Երկրի վրա, եւ նրա սպասավորներն այսօր Երկնքում կազմում են Հաղթական Եկեղեցին: Իսկ վիշապն իր պատերազմն ուղղեց դեպի Երկիր՝ այժմ գործող Եկեղեցու դեմ:

«Եւ վիշապը կանգնեց ծովի աւազի վրայ» (հմր 18):

Մի շարք մեկնիչներ թե՛ ծովը եւ թե՛ ավազը համարում են ժողովուրդների խորհրդանիշ: Հետեւաբար, վիշապն օգտագործեց հեթանոսներին, որոնք դարձան նրա կամակատարները:

ԺԳ ԳԼՈՒԽ

Հայտնության գրքի այս գլխում խոսվում է երկու գազանների գործունեության մասին: Գազանները ներկայանում են որպես Սատանայի գլխավոր գործակալներ: Նաեւ տեսնելու ենք, որ այս գլխում առկա են թե՛ վիշապը, թե՛ առաջին եւ թե՛ երկրորդ գազանները: Ուրեմն, այստեղ ունենք երեք դեպքեր, որոնք կազմում են երրորդություն, կեղծ երրորդություն:

ԵՐԿՈՒ ԳԱԶԱՆՆԵՐԸ (13:1-18)

«Ապա տեսայ, որ ծովից ելնում էր մի գազան, որ ունէր եօթ գլուխ եւ տասը եղջիւր. իւրաքանչիւր եղջիւրի վրայ մի թագ եւ իւրաքանչիւր գլխի վրայ՝ հայհոյալից մի անուն: Այն գազանը, որին տեսայ, նման էր յովազի, նրա ոտքերը նման էին արջի ոտքերի, բերանը՝ առիւծի բերանի: Վիշապը նրան տուեց իր զօրութիւնը, իր գահը եւ մեծ իշխանութիւնը» (հմր 1-2):

Գազանին տրվածը բարդ պատկեր է, դժվար է մտքով ըմբռնել: Հետաքրքրվողները թող կարդան Դանիելի մարգարեության 7-րդ գլխի 2-7-րդ համարները, ուր նկարագրվում են չորս գազաններ, որոնք ներկայացնում են չորս տիրապետություններ՝ բաբելականը, մարականը կամ պարսկականը, մակեդոնականը կամ հունականը եւ հռոմեականը:

Այստեղ չկան չորս գազաններ, այլ կա գազանների միավորյալ մի պատկեր, այսինքն՝ նկարագրվում է գազանների մարմինների տարբեր մասերով մի գազան: Հետեւաբար, հարկ է նշել, որ բոլոր տիրապետությունների ժխտական ուժերը միավորվել են Չարի այս կերպարի մեջ: Քրիստոնեական գրականության մեջ հնուց ի վեր այս գազանն առհասարակ հասկացվել է տարբեր կերպ. նախ՝ որպես Հռոմեական կայսրություն եւ երկրորդ՝ որպես Նեռ: Կան նաեւ այլ բացատրություններ, որոնց հետո կանդրադառնամ:

Ըստ էության, այս երկու բացատրությունները միմյանցից չեն տարբերվում, այլ ընդհակառակը՝ լրացնում են իրար, որովհետեւ բոլոր երեւույթների մեջ էլ առկա է թե՛ նրանց պատմական եւ թե՛ ապագա նշանակությունը:

Առաջին համարում տեսնում ենք, որ այս գազանը դուրս է գալիս ծովից: Ինչ է խորհրդանշում ծովը: Նախ ասեմ, որ այս գազանին մենք հանդիպեցինք նախորդ՝ 11-րդ գլխի 7-րդ համարում: Այնտեղ գազանը ներկայացվել էր որպես «անդունդից ելնող»: Այստեղ գազանը դուրս է գալիս «ծովից»: Արդյոք տարբե՞ր գազանների մասին է խոսվում: Անշուշտ՝ ոչ, եթե հիշենք այն բացատրությունը, որ տվեցի «անդունդ» բառի առիթով եւ ասացի, որ նշանակում է ջրի ընդարձակ տարածություն, ինչպես նաեւ այն վայրը, ուր հաստատվել են Չարը եւ նրա կամակատարները (տե՛ս 9:1-ին համարի բացատրությունը): Արդ, «անդունդ»ը եւ «ծով»ը նույնանում են:

«Վիշապը նրան տուեց իր զօրութիւնը եւ այլն»: Ուրեմն՝ գազանը գալիս է Սատանայի զորությամբ:

Թեպետ առաջարկեցի երկու բացատրություններ, սակայն կա երրորդը եւս, որը ոչ միայն նշանակում է Հռոմեական կայսրությունը, որ իր վախճանն ունեցավ պատմության մեջ, այլ նաեւ մինչեւ ներկա ժամանակի երկրավոր այն բոլոր իշխանությունները, որոնք մենատիրություն են կամ ամբողջատիրություն: Այս բացատրությունը վերաբերում է նաեւ այն վարչակարգերին, որոնք երբեք չեն հարգում անհատի ազատությունը, այլ միայն իշխանության ամբողջատիրական նպատակներ են հետապնդում: Այդպիսի իշխանություններն ընդդիմանում են ոչ միայն մարդկանց ազատությանն ու իրավունքներին, այլ նաեւ անաստվածության խորհրդանիշ են:

«… Իւրաքանչիւր գլխի վրայ՝ հայհոյալից մի անուն»: Հռոմի կայսրերն իրենց աստված հռչակեցին: Օրինակի համար՝ Հովհաննես առաքյալի ժամանակակից կայսրը՝ Դոմետիանոսը, պաշտվում էր որպես «մեր տեր եւ աստված»: Կայսրերը, հավակնելով յուրացնել

Աստծո անունը, իրավասություններն ու փառքը, որդեգրեցին «հայհոյալից» ընթացք: Ուստի, «հայհոյալից անունը»ը չպետք է բառացիորեն հասկանալ, այլ հարկավոր է ընկալել որպես Աստծո անվան նկատմամբ կայսրերի անհարգալից ընթացքի ակնարկություն: Կայսրերը աստված լինելու հավակնությամբ ուրիշ բան չէին անում, բացի Սատանայի ցանկությունը կատարելուց, որն իր հերթին կամենում է գրավել Աստծո տեղը (տե՛ս, օրինակ, Ես 14:14):

Գազանների հետ նրա նմանությունները («… նման էր հովազի, նրա ոտքերը նման էին արջի ոտքերի, բերանը՝ առիւծի բերանի») նրա վայրագությունների նշաններն են:

«Գազանի գլուխներից մէկը թւում էր մահացու կերպով վիրաւորուած, բայց նրա մահացու վէրքը բուժուեց» (հմր 3):

Բնագիրը երկու տարբեր բան է ասում. նրա տասը գլուխներից մե՛կն է, որ վիրավորվեց, թե՛ գազանն ինքը վիրավորվեց եւ բուժվեց:

«Ամբողջ երկիրը զարմացաւ, հետեւեց գազանին եւ երկրպագեց վիշապին, քանի որ նա իր իշխանությունը տուել էր գազանին. երկրպագեց նաեւ գազանին՝ ասելով. «Ո՞վ է նման այս գազանին, ո՞վ կարող է կռուել նրա դէմ» » (հմր 3-4):

Քրիստոս Սատանայի ամբողջ գործունեությունը խաբեբայություն կամ սուտ է կոչել: Քրիստոս ասում է, թե նա սուտ է եւ ստի հայրն է, նա փորձում է գրավել մարդկանց՝ խաբելով նրանց: Այստեղ վիշապը հայտնվում է որպես Միքայել հրեշտակապետի կապկում: Երբ վիշապն ասում է. «Ո՞վ է նման այս գազանին», նրան նմանեցնում է Միքայել հրեշտակին, որի անունը, ինչպես ասացինք, նշանակում է «Ո՞վ է Աստծո նման» (տե՛ս 12:7-րդ համարի բացատրությունը):

«Եւ նրան լեզու տրուեց՝ մեծ-մեծ բաներ խօսելու եւ հայհոյութիւններ անելու համար: Նրան իշխանութիւն տրուեց՝ քառասուներկու ամիս գործելու» (հմր 5):

«Խոսելու լեզու տրվեց»ն այստեղ նշանակում է, թե նրան ուսուցանվեց խաբել աշխարհը, որպեսզի մարդիկ անարգեն Աստծուն: «Քառասուներկու ամիս»ը կազմում է երեքուկես տարի, եւ սա երկրորդ երեքուկես տարին է:

«Նա բացեց իր բերանը՝ հայհոյութիւններ անելով Աստուծոյ դէմ եւ հայհոյեց Նրա անունը, բնակարանը եւ Երկնքի բնակիչներին» (հմր 6):

Առաջին գազանի գործունեությունն Աստծո անունը վարկաբեկելն է եւ անարգելը, նաեւ Աստծուն վերաբերող կամ Աստծո հետ կապված ամեն սրբության հայհոյելը: Գործունեության այս կողմն առնչվում է աշխարհի չար մարդկությանը, որը հետեւում է նրա ուսուցումներին, կապված է նաեւ նրանց հետ, որոնց մտքում ոչ միայն հստակ չէ ճշմարտությունը, այլեւ հեղհեղուկ է ու տատանվող:

«Նրան արտօնութիւն տրուեց՝ պատերազմելու Աստուծոյ ընտրեալների դէմ եւ պարտութեան մատնելու նրանց: Նաեւ իշխանութիւն տրուեց բոլոր ցեղերի, ժողովուրդների, լեզուների եւ ազգերի վրայ» (հմր 7):

Նախապես երկու վկաների առիթով ասացինք, որ իրական պարտություն կլինի այն դեպքում, երբ ենթականերն ընդունեն Չարի կամքը, իսկ եթե մերժեն եւ շարունակեն կապված մնալ Աստծուն, ապա չեն պարտվի: Բայց Աստված թույլ է տալիս, որ Չարը փորձի նրանց, ինչպես եղավ Հոբի պարագայում: Չարը կարող է մարմնապես վնասել Աստծո ընտրյալներին, սակայն եթե նրանք հոգեպես ուժեղ լինեն, ապա անպայման կհաղթեն: Աշխարհի աչքին Աստծո ընտրյալների մարմնական խորտակումը կարող է համարվել պարտություն, որը, սակայն, իրական պարտություն չէ: Հիշենք Քրիստոսի խոսքը. «Մի՛ վախեցէք նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. դուք վախեցէ՛ք մանաւանդ նրանից, որ կարող է թէ՛ հոգին, թէ՛ մարմինը կորստեան մատնել դժոխքում» (Մտ 10:28):

Այն, ինչ անելու է Չարը նեղության երկրորդ շրջանում, նրանց մարմինները վնասելն է, որպեսզի մարմնական ցավերին չդիմանալով՝ Աստծո ընտրյալները ենթարկվեն իր կամքին եւ ուրանան Աստծուն: Երբ Աստված արտոնում է, որ ընտրյալները ենթարկվեն փորձությունների, նշանակում է, որ նրանք ընտրյալներ են:

«Եւ նրան կերկրպագեն Երկրի բոլոր բնակիչները, որոնց անունները, աշխարհի ստեղծագործութիւնից սկսած՝ գրուած չեն մորթուած Գառանը պատկանող Կեանքի գրքում» (հմր 8):

Գազանին կերկրպագեն միայն նրանք, որոնց անունը գրված չէ Քրիստոսին պատկանող «Կեանքի գրքում», իսկ մյուսները կշարունակեն մնալ Աստծո լույսի մեջ: Չարն իրեն ենթարկվողներին է վնասում ամենից առաջ:

«Ով որ ականջ ունի, թող լսի» (հմր 9):

Ժողովրդական ասացվածք է սա, որ Քրիստոս Ինքը եւս գործածեց: Ասել կուզի, թե ով կարող է հասկանալ պատգամի նշանակությունը, թող հասկանա եւ պահի պատգամը:

«Ով գերութեան է տարուելու, գերութեան կգնայ, եւ ով սրով է սպանուելու, կսպանուի սրով: Ահա այստե՛ղ են Աստուծոյ ընտրեալների համբերութիւնն ու հաւատը» (հմր 10):

Չկարծեք, որ այստեղ ճակատագրապաշտություն կա. Աստծո համար չկա ճակատագրապաշտություն: Մարդու փրկության հիմքը նրա ազատ կամքն է. ով ընդունում է Աստծուն, դառնում է փրկության որդի: Աստված Ինքը չի որոշում, թե այս մարդը պիտի գերության տարվի, իսկ մեկ ուրիշը՝ սպանվի: Մարդն ինքն է որոշում Չարի ձեռամբ իր գերությունն ու սպանությունը:

Այս համարում շատ կարեւոր տարր կա. համբերությունը հավատքից առաջ է դրվել ոչ թե նրա համար, որ համբերությունը հավատքից ավելի առաջ է, այլ որովհետեւ համբերությունը ավելի կարեւոր տեղ է գրավում մարդու կյանքում: Անշուշտ, եթե մեկը հավատք չունենա, ապա համբերություն չի ցուցաբերի, սակայն հավատք ունեցողների մեջ էլ պետք է դիմանան նրանք, ովքեր կհամբերեն մինչեւ վերջ, ինչպես ասում էր Քրիստոս (տե՛ս Մտ 24:13):

«Յետոյ տեսայ մի ուրիշ գազանի, որ ելնում էր Երկրից: Նա գառան եղջիւրների նման երկու եղջիւր ունէր եւ խօսում էր վիշապի նման» (հմր 11):

Հայտնության գրքում «երկիր»ը բազում անգամներ նշանակել է այն մարդկությունը, որ անօրինության գործերով հատկանշվող, Չարին հետեւող աշխարհն է:

Այս երկրորդ գազանն առաջին գազանին ենթակա է: Սրա պատկերի մեջ գառան նմանությունը պարզապես նրա երեւութական հեզությունը, խաղաղասիրությունը, հաշտարարությունն է նշանակում, որոնք, սակայն, խաբեություն են, եւ որոնց հետեւում թաքնված է նրա իսկական ինքնությունը՝ վիշապի նմանվող ինքնությունը («նա խօսում էր վիշապի նման»): Այս գազանն ունի վիշապի ամբողջ զորությունը: Քիչ հետո կարդալու ենք, որ առաջին գազանն իր ամբողջ զորությունը տվել է նրան: Նախապես տեսանք, որ առաջին գազանը նույնպես իր զորությունն ստացել էր վիշապից: Նրա երեւույթը խաբուսիկ է, իսկ իսկությունը՝ գազանային: Առաջին գազանի ծագումը մարդկային է: Երկրորդ գազանի ծագումը նույնպես մարդկային է եւ հավանաբար կրոնական մի իշխանության արտահայտիչն է:

Մի շարք մեկնիչներ ընկել են փորձության մեջ, սակայն մենք չպետք է փորձվենք՝ այս գազանի խորհրդանիշով թելադրվածը նույնացնելով այս կամ այն Եկեղեցու հետ. հավանաբար դա կրոնական ընդհանուր մի դրության դրսեւորումն է, որը կարող է քրիստոնեական անվանում կրել, բայց լինել նրա կեղծ պատկերներից մեկը:

Կրոնական այդ դրությունը գործիք կդառնա ժամանակակից քաղաքական իշխանությունների ձեռքում եւ կծառայի նրանց շահերին, որոնք Չարի շահերն են:

Նախորդ եւ այս՝ 13-րդ գլխում չարության երեք անձեր կան. նրանք Սուրբ Երրորդության կապկումն են, սուտ երրորդություն են: Դրանք են հրեղեն վիշապը կամ Սատանան, որն ամեն ինչով փորձում է Հայր Աստծուն նմանվել, առաջին գազանը, որ Նեռն է կամ հակա-Քրիստոսը, որը փորձում է կապկել Որդուն (Նեռ անվանումը մենք գործածում ենք հայերենում, իսկ հունարեն անվանումը հակա-Քրիստոս է): Նեռի դերն է անարգել ճշմարիտ Աստծուն եւ Սատանային դարձնել պաշտելի: Նեռը կապկում է անգամ մեռյալ ու հարուցյալ Քրիստոսի փորձառությունը, որպեսզի իր նպատակի մեջ հաջողության հասնի եւ ինքն էլ պաշտվի Սատանայի հետ: Երրորդ գազանը նույնպես վիշապի լեզուն է. այս գազանը խաբեության խոսնակն է եւ կապկում է Սուրբ Հոգու դերը:

«Նա առաջին գազանի ամբողջ իշխանութիւնն ի գործ է դնում նրա առաջ եւ ստիպում, որ Երկիրն ու նրա բոլոր բնակիչները երկրպագեն առաջին գազանին, որի մահացու վէրքը բուժուեց: Այդ երկրորդ գազանը բազում հրաշքներ գործեց եւ մինչեւ իսկ երկնքից կրակ իջեցրեց Երկիր՝ մարդկանց աչքերի առջեւ» (հմր 12-13):

Մեզանից շատերի մտքում «հրաշք» բառը հաճախ եզակի իմաստ ունի: Հրաշքը միայն Աստված է գործում: Հետեւաբար, երբ հրաշքի առջեւ ենք գտնվում, գտնվում ենք նաեւ Աստծո առջեւ: Որքան էլ սա տրամաբանական թվա, սակայն ամբողջապես ճիշտ չէ. թե՛ Հին եւ թե՛ Նոր Կտակարանները բազում օրինակներ են ընծայում մեզ եւ նախազգուշություն թելադրում: Իսկ ինչպե՞ս զանազանել իրական մարգարեին սուտ մարգարեից. նշանները կարող են գործվել թե՛ Աստծո զորությամբ եւ թե՛ Չարի: Մենք հաճախ մոռանում ենք այս երկրորդ հանգամանքը եւ մոլորվում: Մարգարեն ճշմարիտ մարգարե է, եթե մեզ առաջնորդում է դեպի ճշմարիտ Աստված, կատարված հրաշքով ի՞նչ է ցանկանում կատարողը, այդ հրաշքն առաջնորդո՞ւմ է աստվածգիտության, աստվածպաշտության, հնազանդության: Չարը կարող է աստվածաշնչական հրաշքների նման հրաշքներ գործել եւ մոլորեցնել մարդկանց:

Այստեղ հիշատակված երկնքից կրակ տեղացնելու հրաշքը մեզ հիշեցնում է Եղիա մարգարեի գործած հրաշքը (Գ Թգ 18:30-39): Ուրեմն՝ Չարը եւս կարող է այդպիսի հրաշք գործել՝ նպատակին հասնելու համար:

«Նա իր կատարած հրաշքներով Երկրի բոլոր բնակիչներին մոլորեցրեց առաջին գազանի դիմաց՝ նրանց ասելով, որ կանգնեցնեն արձանը Գազանի, որ սրով վիրաւորուեց, բայց բուժուեց» (հմր 14):

«… Երկրի բոլոր բնակիչներին» բացատրությունը չի ներառում Աստծո ընտրյալներին:

Որտե՞ղ է լինելու առաջին գազանի արձանի կենտրոնատեղին: Եթե ուզենանք դա հասկանալ Քրիստոսի Հայտնութենական ճառի եւ Դանիելի մարգարեության լույսի ներքո, ապա այդ կենտրոնը կլինի հենց նույն Երուսաղեմ քաղաքը եւ տաճարի տեղը:

Գազանի արձանի կենտրոնատեղին թեեւ տաճարն է լինելու, սակայն նրա պաշտամունքը չի սահմանափակվելու այդ վայրով: Մարդիկ ամենուրեք կպաշտեն եւ կհնազանդվեն նրան, թեպետ ի վերջո այս պաշտամունքը վերանալու է:

«Եւ նրան իշխանութիւն տրուեց՝ շունչ տալու Գազանի արձանին, որպէսզի արձանը խօսէր, եւ ով չերկրպագէր Գազանի արձանին, սպանէր նրան» (հմր 15):

Իր կատարելիք բոլոր հրաշքների շարքում Չարն այստեղ ավելացնում է մի ուրիշ հրաշք եւս, այսինքն՝ արձանին պետք է իբր թե խոսել տա: Ոմանք փորձել են բացատրել, թե խոսքն իսկական խոսելու մասին չէ:

Ինչպես գիտենք, կուռքերի տաճարներում որովայնախոսներ կային, ովքեր կեղծում էին աստվածային խոսքը՝ փորձելով համոզել, թե խոսում են աստվածների բերանով, իսկ ժողովուրդն էլ կարծում էր, թե արձաններն են խոսում: Արդյոք այդպիսի մի երեւո՞ւյթ է ակնարկվում: Հավանաբար՝ ո՛չ: Գուցե արձանի խոսելը փոխաբերություն է, որով Չարը փորձում է սուտ կրոնականություն առաջացնել:

«Գազանն ստիպում էր, որ բոլորն էլ՝ փոքր թէ մեծ, հարուստ թէ աղքատ, ազատ թէ ծառայ, դրոշմ դնեն իրենց աջ ձեռքի եւ ճակատի վրայ» (հմր 16):

Նա մարդկանց մոլորեցնելու համար ոչ միայն արձանին պիտի խոսել տա, այլեւ ի գործ է դնելու բռնամիջոցներ, նույնիսկ սպառնալու է մահվամբ, որպեսզի մարդիկ իրենց անձը փրկելու համար երկրպագեն արձանին: Գազանը պետք է ստիպի բոլոր մարդկանց՝ ամեն տարիքի եւ ամեն դասակարգի:

Դրոշմը թե՛ պատկանելություն եւ թե՛ պաշտպանություն է նշանակում: Այստեղ եւս Չարը կապկում է Աստծո արածը եւ ստիպում, որ ամեն ոք դրոշմ դնի իր աջ ձեռքին ու ճակատին՝ որպես Սատանային պատկանելու եւ ենթարկվելու նշան:

«Եւ ոչ ոք չկարողանայ գնել կամ վաճառել, եթէ չունենայ այդ դրոշմը, այսինքն՝ Գազանի անունը կամ նրա անուան տառերի թուի գումարը» (հմր 17):

Գնելը եւ վաճառելը հասարակական կյանքի ամենագործուն կողմն են եւ թերեւս ամենաազդեցիկ գոտին է, ուր մարդկանց վրա ազդեցություններ են ի գործ դրվում, երբեմն՝ հակառակ մարդկանց գիտության: Գիտենք, որ աշխարհը հետզհետե ընթանում է դեպի ամեն ինչի նյութականացում: Նեռի ժամանակ գնելը եւ վաճառելը լինելու են ամենաահարկու զենքերը: Ո՞րն է դրոշմի նշանակությունը. «Գազանի անունը կամ նրա անուան տառերի թուի գումարը»:

Անցյալում այբուբենները նաեւ գործածվում էին որպես թվային համակարգ: Յուրաքանչյուր անուն բաղկացած է տառերից, իսկ եթե այդ տառերից յուրաքանչյուրի թվային արժեքը վերցնենք եւ գումարենք, ապա կարող ենք ասել, որ ամեն անուն մի թիվ է: Օրինակ՝ եթե Արա Աստծո անունը վերածեմ թվերի, ապա կունենամ 1+5000+1, հետեւաբար՝ 5002:

Կան բազում անուններ, որոնց բաղկացուցիչ տառերի գումարը նույն արդյունքն է տալիս, հետեւաբար նույն թիվը կարող է բազում անուններ նշանակել: Եվ ճիշտ սա է եղել պատճառը, որ այստեղ տրված 666 թիվը վերջնական եւ միակ բացատրություն չունի: ենթադրում ենք, թե այն օրերին, երբ գրվեց Հայտնության գիրքը եւ ուղղվեց յոթ եկեղեցիներին, հայտնի էր այդ թվի տակ թաքնված անունը, որ հաջորդ սերունդները կորցրին: Առաքյալներին անմիջապես հաջորդող սերնդից Երանոս հայրապետը 666-ի վերաբերյալ երեք առաջարկ է անում, այսինքն՝ հայրապետի ժամանակ արդեն մեկ եւ միակ բացատրություն չի եղել: Առաջին սերնդի հետ կորավ նաեւ միակ անունը (եթե իհարկե միակն էր):

Ոմանք պատմական բացատրություններ են որոնել 666 թվի տակ՝ փորձելով կարդալ ծանոթ տիրակալի անուն: Օրինակ՝ ոմանք նշել են Եկեղեցու ամենակատաղի հալածողներից մեկի՝ Ներոն կայսեր անունը: Ուրիշները մի շարք ձեռագրերի ընծայած 616 տարբերակը նկատի ունենալով՝ թվի հետեւում կարդացել են Կալիգուլա կայսեր անունը:

Երանոս հայրապետը 666 թվի տակ կարդում է հունարեն «Լատինոս» անունը՝ որպես Հռոմեական կայսրության նշան:

Նոր մեկնիչները 666-ի մեջ տեսնում են Դոմետիանոս կայսեր անունը, որովհետեւ նրա կտրել տված դրամներից մեկի վրա տառերի թվահամարը 666 է լինում:

Նորագույն ժամանակներում մեկնիչները ցանկացել են տեսնել պապության եւ Կաթոլիկ Եկեղեցու, Մարտին Լուտերի եւ նրա շարժման, 1789 թվականի Ֆրանսիական հեղափոխության, Նապոլեոնի, սիոնիզմի, Լենինի եւ համայնավարության, Եվրոպական տնտեսական շուկայի ու այլոց մասին կանխագուշակություններ:

Պատմական այս բացատրություններից զատ՝ կան ընդհանուր ու վախճանաբանական բացատրություններ:

Այսպես, ըստ ոմանց՝ 666-ն ունի մի նշանակություն, որը պատշաճում է Քրիստոսի եւ Եկեղեցու բոլոր ժամանակների հակառակորդներին:

1. Հիպպոլիտոսի հետեւողականությամբ՝ Անդրեաս Կեսարացին այդ թվի տակ տեսնում է հունարենի «ուրանալ» բայի ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմքը: Նրա հետեւողությամբ՝ Գրիգոր Տաթեւացին հայերեն այբուբենով գրված 666-ը կամ ՈԿԶ թիվը կարդում է՝ «ուրանամ կամաւ զԱրարիչն Երկնի եւ Երկրի»:

2. Ընդհանուր նշանակություն որոնող մեկ այլ բացատրություն է նաեւ այն, որ եթե յոթ թիվը կատարելության, ապա 6-ն անկատարության խորհրդանիշ է եւ որպես այդպիսին՝ արտահայտում է արարածի վիճակն ու անկատարությունը: Այստեղ ունենք երիցս 6՝ 6, 6, 6, որը բացարձակ անկատարություն է նշանակում:

3. Նույն այդ անկատարության գաղափարն ավելի մասնավոր կողմով հատուկ է մարդուն եւ հենց մարդ արարած է նշանակում, եթե մանավանդ հիշենք, որ նա արարչագործության 6-րդ օրն ստեղծվեց, ուստի, Հայտնության գիրքն ասում է, թե հիշյալ թիվը «մարդու անուան տառերի թուի գումարն է» (տե՛ս հմր 18), ինչը ցույց է տալիս Նեռի մարդկային ծագումը

Արձանի առնչությամբ հիշենք Դանիելի մարգարեության մեջ նշվածը (Դն 3:1)՝ Նաբուգոդոնոսորի կանգնեցրած եւ պաշտամունքի համար պարտադրած արձանի բարձրությունը 60, իսկ լայնությու-

նը 6 կանգուն էր: Սա նախապատկերացումն է նշված գազանի, որի արձանը պիտի կանգնեցվի, իսկ պաշտամունքը պարտադրվի բոլոր մարդկանց:

4. Ջորջ Վիլիամսը տալիս է ուրիշ բացատրություն: Ըստ նրա՝ 666 թվի համապատասխան հունարեն տառերն են՝ **խի**-ն, **քսի**-ն եւ **սիգ-մա**-ն. առաջին եւ երրորդ տառերը (XC) Քրիստոսի անվան կրճատ ձեւն են, իսկ նրանց մեջ միջանկյալ մտել է օձաձեւ քսի տառը՝ հավանաբար խորհրդանշելու համար «սուտ Քրիստոսին»:

ԺԴ ԳԼՈՒԽ

Հայտնության գրքի 14-16-րդ գլուխները ներկայացնում են տեսիլքների շարք՝ մի կողմից բացահայտելով Երկինքն իր ընտրյալների բազմությամբ, իսկ մյուս կողմից՝ Չարից խաբված աշխարհն ու աստվածային պատուհասները: Այս գլխում ներկայացված դեպքերը տեղի են ունենում Հայտնության գրքի 18-րդ, 19-րդ եւ 20-րդ գլուխներում, սակայն արդեն այժմվանից՝ գալիք դատաստանները հայտարարվում են որպես կատարված իրողություն:

ԳԱՌԸ ԵՎ ՆՐԱ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ (14:1-5)

«Յետոյ նայեցի եւ տեսայ, որ Գառը կանգնած էր Սիոն լեռան վրայ, եւ Նրա հետ կային հարիւր քառասունչորս հազար հոգի, որոնց ճակատների վրայ գրուած էր Նրա եւ Նրա Հօր անունը» (հմր 1):

Ուրեմն, Քրիստոսին տեսնում ենք երկնային Երուսաղեմում: Գառան կերպարանքով՝ Նա Իր հավատարիմների հովվապետն է, ով Ինքն Իրեն նույնացրել է Իր հոտի հետ: Եվ «հարիւր քառասունչորս հազար»ը, որոնց հանդիպել էինք Երկրի վրա, կանխավ ներկայացվում են Երկնքում:

Սիոնը լեռան անունն էր, իսկ Երուսաղեմը՝ լեռան վրա կառուցված քաղաքի: Երուսաղեմ ասելով՝ հասկանում էին ամբողջ քաղաքը: Սիոն լեռը Հին Կտակարանի շատ գրքերում միեւնույն ժամանակ Աստծո բնակարան է կոչվել, որովհետեւ Աստծո տաճարը գտնվում էր նրա վրա, եւ Աստծո թագավորության խորհրդանիշն էր: Ա՛յս Սիոն լեռը երկնավորն է:

«Եւ երկնքից մի ձայն լսեցի, որ նման էր առատահոս ջրերի կամ ուժեղ որոտի ձայնին: Ձայնը հնչում էր իրենց քնարները հնչեցնող քնարահարների նուագի ձայնի նման: Նրանք գահի, չորս կենդանի-

ների ու երէցների առջեւ երգում էին մի նոր երգ, որ ոչ ոք չէր կարող սովորել բացի այն հարիւր քառասունչորս հազար հոգուց, որոնք փրկուած էին Երկրի բնակիչների միջից» (հմր 2-3):

Շատ որոշ է, որ փրկության հասածների այս երգը նրանց փրկության երգն է:

Փրկությունը երեւույթ է, որ մեզ համար գոյություն ունի միմիայն որպես բառ: Շատերի համար չկա, բացակայում է բառի իսկական նշանակությունը այն պարզ պատճառով, որ մենք արդեն մեր ծնունդով քրիստոնյա ենք, այլ խոսքով, քրիստոնյա լինելը մեզ տրվել է հասարակության կողմից. բացելով մեր աչքերը՝ մենք մեզ քրիստոնյա ենք գտնում: Մեր կյանքում փրկությունն անկյունադարձային չէ եւ ոչ էլ՝ հանկարծահաս փոփոխություն: Փրկությունը մեր կյանքում ընկալվում է որպես սովորական երեւույթ, սակայն մի պահ նկատի առնենք այն մարդկանց փորձառությունը, ովքեր շրջվում էին դեպի Քրիստոս: Նրանց համար փոխվում էր ամբողջ աշխարհը: Նրանց կյանքն ամբողջապես փոխակերպվում էր. իրենց զգում էին ինչպես նոր արարածի նման:

Առաքյալների գործածած նոր արարածի գաղափարը որքան էլ մենք այսօր շեշտենք, միեւնույնն է, մեր մտքում մեծ արձագանգ չի գտնի: Ի՞նչ է նշանակում նոր ստեղծված: Ով նորոգման փորձառություն չի ունեցել, անկարող է ճշմարտապես հասկանալ այս գաղափարը: Քրիստոնեական այժմյան միջավայրում եւս մարդիկ կարող են նույն փորձառությունն ունենալ, եթե մինչ այդ նրանց կյանքը եղել է Ավետարանի պատվիրաններին հակասելը: Երբ նրանք խոսում են փրկության մասին, ոչ թե գործածում են տարբեր բառեր, այլ նույն բառը, բայց տարբեր բովանդակությամբ: Մենք լսում ենք նրանց, եւ հավանական է, որ բոլորովին տարբեր բան ենք հասկանում, սակայն նրանք ձգտում են իրենց ներքին փորձառությունն արտահայտել մեզ ծանոթ բառերով. խոսում են մի փորձառության մասին, ինչն անկրկնելի է, եւ այդ եզակիությունն առկա է նրանց արտահայտություններում: Նույնն է այս երգի փրկվածների պարագան, որ «ոչ ոք չէր կարող սովորել»:

Կարելի է հետեւյալ հարցումը տալ: Նույն փորձառությունն ունեցող Հովհաննես առաքյալը չէ՞ր կարող դրա բովանդակությունը նկարագրել: Առաքյալը ցանկանում է մեզ ասել, թե որքան էլ փրկվածների մասին երգի բովանդակությունը խոսքերով նկարագրեր, միեւնույնն է, չէինք կարողանա հասկանալ երգն իր իսկական իմաստով՝ առանց փրկության փորձառության: Որեւէ բան փոխանցելու համար բառերը տկար, աղոտ պատկերացում տալու միջոցներ են: Փրկության փորձառությունն ունեցող մարդն է միայն հասկանում դա:

Հունարեն բնագրում չի ասվում «փրկված էին», այլ՝ «գնված էին»: «Փրկված էին» արտահայտությունը կարող է մտածել տալ, թե մեկն իր անձնական ճիգերով է փրկվել: Աստվածաշնչական փրկությունը չի կարող անձնական ճիգով լինել. դա Աստծո ընծան է, թեեւ անհրաժեշտ է այդ ընծային արժանի լինելու ապացույց, որ կարող է համարվել մեր կյանքը: «Գնված էին»ը Քրիստոսի արյամբ մեր փրկությունն է մատնանշում:

«Սրանք այն մարդիկ են, որոնք չխառնակուեցին կանանց հետ. նրանք կոյսեր են: Սրանք հետեւում են Գառանը, ո՛ւր որ Նա գնայ» (հմր 4-5):

«Խառնակվել» ասելով՝ երբեք չի հասկացվում ամուսնությունը. ամուսնությունն այր եւ կնոջ միությունն է՝ կամեցված, տնօրինված եւ օրհնված Աստծուց եւ սուրբ է, մինչդեռ խառնակվելը վերաբերում է սեռական ապօրինի բոլոր հարաբերություններին: «Կոյս» բառն այստեղ ցույց է տալիս հոգու անաղարտությունը: Կուսությունը որպես հոգեւոր հասկացություն՝ մարմնավոր վիճակ չէ, այլ հոգու, մտքի, սրտի անաղարտության վիճակ, որը նշանակում է Աստծո հանդեպ բացարձակ հնազանդություն եւ հավատարմություն:

«Սրանք փրկուեցին մարդկանց միջից՝ որպէս երախայրիք՝ ընծայուած Աստծուն եւ Գառանը: Սրանք երբեք սուտ չխօսեցին, անբիծ են» (հմր 5):

Երբ բացատրում էի Հայտնության գրքի 7-րդ գլուխը եւ խոսում 144 000 փրկվածների մասին, ակնարկեցի Տաղավարահարաց տոնին: Այստեղ նույն 144 000-ի հետ կապված մի ուրիշ պատկերացում

է տրվում՝ այս անգամ Հին Կտակարանի մեկ ուրիշ տոնի առնչությամբ:

Հին Կտակարանի երեք գլխավոր տոներն են՝ 1. **Զատիկը**, 2. **Պենտեկոստեն** եւ 3. **Տաղավարահարացը**: Զատիկը գիտենք, իսկ Տաղավարահարացին ակնարկեցինք: Բացատրեմ Պենտեկոստեն: Սա տոնի հունարեն անվանումն է. այսօր մենք գործածում ենք Հոգեգալստյան տոնի համար, սակայն եբրայեցիների հավատքում Սուրբ Հոգու գալստյան հետ կապված որեւէ բան չկար, եւ տոնը եբրայերենում կոչվում է Շաբաթների տոն, որովհետեւ, ըստ կանոնի, պետք է տեղի ունենար Զատկի տոնից յոթ շաբաթ հետո: Յոթ շաբաթները կազմում են 49 օր. դրանց լրանալու հաջորդ օրը կատարվում էր այս տոնը: Հունարեն «պենտկոնտա» նշանակում է հիսուներորդ օր:

Ո՞րն էր այդ տոնի ամենահատկանշական կողմը: Թե՛ Ղեւտացվոց եւ թե՛ Թվոց գրքերում ներկայացվում է այս տոնը: Զատկից հիսուն օր հետո սկսվում էր ցորենի հունձքը: Ցորենի առաջին հունձքի առաջին պտուղները պետք է ընծայաբերվեին Աստծուն: Առաջին պտուղը գրաբարով կոչվում է երախայրիք: Մեր ներկա լեզվում նույնպես գործածական է այս բառը, թեպետ ոչ շատ հաճախակի: Երախայրիքը պետք է ընծայաբերվեր Աստծուն, եւ այդ կերպ Աստված օրհնում էր տարվա ամբողջ բերքը: Հետո ժողովուրդը վայելում էր Աստծո օրհնությունը, այլ խոսքով՝ իր քաղած պտուղները:

Հիմա այս 144 000-ը կոչվում է երախայրիք: Ուրեմն, ինչպես ասացի, փրկվածները միայն 144 000 չեն եւ այդքան չեն լինելու, այլ անհամար են լինելու, ինչպես 7-րդ գլխի երկրորդ մասն է մեզ ներկայացնում: Ասացի, որ 144 000-ը խորհրդանշական թիվ է եւ արտահայտում է Աստծո ժողովրդի ամբողջությունը: Սրանք կարելի է առաջին պտուղներ հասկանալ երկու իմաստով՝

1. **Որպես երկրի վրա առաջին սերունդ:**

2. **Որպես այն փրկվածները**, ովքեր մեծ նեղության ժամանակի նահատակները պիտի լինեն, այսինքն՝ Աստծո բերքի վերջին ժամանակի երախայրիքը:

Նախորդ համարը վկայություն էր տալիս այս փրկվածների մաքրության մասին: Այս համարը նոր վկայություն է տալիս նրանց մաքրության մասին, երբ ասում է. «Սրանք երբեք սուտ չխօսեցին»: Լեզուն մարդու հոգու եւ մտքի թարգմանն է: Թեեւ մարդը կարող է նաեւ իր հոգում եւ մտքում եղածը չասել, այսինքն՝ սրտում կեղծիք ունենալ, սակայն որքան էլ կեղծիքը ծածկվի, միեւնույնն է, ավերիչ է: Իսկ Աստծուն միացած մարդը միշտ պետք է լինի բացարձակ ճշմարտության կողմնակից: Սա Աստծո հետ լինելու հայտարար նշանն է:

ԵՐԵՔ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ (14:6-13)

«Յետոյ տեսայ երկնքի բարձունքում թռչող մի ուրիշ հրեշտակի, որը յաւիտենական մի աւետիս ունէր՝ քարոզելու Երկրի վրայ բնակուող բոլոր ազգերին ու ցեղերին, լեզուներին ու ժողովուրդներին» (հմր 6):

Հրեշտակը մեզ նկարագրվում է երկնքի բարձունքում թռչելիս, որը նշանակում է, թե նա գալիս է Աստծուց եւ նրա պատգամն էլ հավիտենական է, որովհետեւ Աստծուց է:

Այստեղ հիշատակված մարդկությունը տակավին դեպի Աստված չի դարձել, եւ նրան առ Աստված դարձի առիթ է ընծայվելու: Իսկ ի՞նչ է նշանակում այս ավետիսը, ո՞րն է նրա բովանդակությունը: Հաջորդ համարը մեզ տալիս է այս հարցումների պատասխանը:

«Նա բարձր ձայնով ասում էր. «Վախեցէ՛ք Աստծուց եւ փա՛ռք տուէք Նրան, որովհետեւ հասել է ժամանակը, որ Նա դատի մարդկութեանը: Երկրպագեցէ՛ք Երկնքի, Երկրի, ծովի եւ ջրի աղբիւրների Արարչին» (հմր 7):

Նախորդ գլխում տեսանք երկու գազաններ. երկրորդ գազանը փորձում էր լինել առաջինի մարգարեն եւ ամբողջ աշխարհը հրավիրել ու նույնիսկ բոլոր մարդկանց ստիպել, որ երկրպագեն առաջին գազանին, նրա, այսինքն՝ Նեռի կամքը կատարեն: Այժմ մեզ ներկայացվում է Գառան թագավորությունը: Եվ Գառան պատգամաբերը՝ հրեշտակը, գալիս է մի նոր ավետիս բերելու: Հավիտենական ավետիսն ապաշխարության կոչ է, ապաշխարության հրավեր:

Այս առիթով նշենք մի քանի կետեր:

Առաջին՝ սա աստվածապաշտության հրավեր է: Աստված մարդկանց երկրպագության, փառքի եւ պատվի կարիքը չունի, բայց մարդ արարածն իր կենցաղում երկու ճանապարհ ունի. կա՛մ Գազանի առջեւ երկրպագություն պիտի անի, փառք ու պատիվ տա նրան, կա՛մ էլ՝ Աստծուն: Միջին ճանապարհ չկա: Հիսուս դրամի առնչությամբ շատ պարզ ասաց՝ որեւէ մեկը չի կարող երկու տիրոջ ծառայել:

Որպեսզի մարդը դրսեւորի իր ինքնությունը, պետք է երկրպագի, փառավորի եւ պատվի կա՛մ Աստծուն, կա՛մ Չարին: Պաշտամունքի առումով Աստծո պահանջը հետեւյալն է՝ մարդը թե՛ մի կողմից պետք է կարողանա իր ներսում եղածը եւ թե՛ իր ընտրությունն արտահայտել: Աստված կարդում է մարդկանց սրտերը:

Հետեւաբար, մարդկանց պաշտամունքը սեփական ներաշխարհի վկայությունն է, նրանց ներաշխարհը հայտնում է իրենց համար: Աստծուն պաշտելու ընտրությունն ազատ է, իսկ Սատանային պաշտելու ընտրությունը՝ բռնադատված: Աստված կամենում է, որ աստվածապաշտության ընտրությունը բացարձակ ազատ լինի, որովհետեւ այդ ընտրությունը սիրո ընտրություն է: Բռնության մեջ սեր չի կարող լինել: Բռնադատված ընտրությունը սիրո ընտրություն չէ:

Երկրորդ՝ այստեղ ասվում է. «Վախեցէ՛ք Աստծուց»: Սա շատերի համար շփոթեցուցիչ արտահայտություն է: Այնպիսի տպավորություն ենք ունենում, թե հավիտենական ավետիս բերող այս հրեշտակը ցանկանում է մարդկանց պարտադրել տհաճ մի բան: Վախը եւ սերը չեն կարող համատեղ լինել: Վախը սիրո մերժումն է:

Աստված ինչպե՞ս կարող է մարդկանցից պահանջել, որ վախենան Իրենից, երբ Ի՛նքը սիրո աղբյուրն է: Աստվածաշնչում հազարավոր անգամ հանդիպում ենք Աստծուց վախենալու խոսքին: Երբ Աստված խոսում է մարդու հետ, միշտ վախ է պահանջում: «Վախ» բառը չպետք է հասկանանք սովորական իմաստով: Աստվածաշնչական լեզուն բառը չի գործածում այն իմաստով, որ մենք հասկանում ենք այսօր: Բայց ի՞նչ է հասկանում աստվածաշնչական լեզուն դրա տակ:

Աստվածաշնչում վախն ամենից շատ սահմանման վերածող գիրքն Առակացն է. «Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է» (Առ 1:7): Ինչպե՞ս կարող է Աստծուց վախենալը լինել իմաստության «սկիզբ»: Երբ բացում ենք Առակաց գրքի 8-րդ գլուխը, այնտեղ տեսնում ենք մի բացատրություն. «Տիրոջ հանդէպ զգացուած երկիւղն ատում է անիրաւութիւնը» (Առ 8:13): «Տիրոջ հանդէպ զգացուած երկիւղ» արտահայտությունը նշանակում է հեռու մնալ Չարից, ատել Չարը:

Տիրոջից երկյուղ ունեցող ամեն ոք պետք է հեռանա Չարից: Բարին ծնող Աստված երբեք չի ցանկանում, որ Իր զավակներն ընթանան սխալ ճամփով: Ինչպես Ինքն է ատում Չարը, այնպես էլ ուզում է, որ Իր զավակները Չարի հանդեպ նույն խորշանքն ունենան, եւ նրանց կյանքը լինի լույսի, բարության, ազնվության արտահայտություն: Խոսքն ուղղված է դեռեւս Երկրի վրա եղողներին եւ փրկության կամարից դեռ ներս չմտածներին:

Ուզում է ասել, թե Բարին չճանաչողը ճանաչելու է Չարը, Բարու պտղից ճաշակել չուզողը Չարի պտղից է ճաշակելու:

Այստեղ ասվում է նաեւ, որ Աստված, որպես բարության Հայր, հրավիրում է, որ մարդիկ հրաժարվեն չարության ճամփաներից եւ ապաշխարեն: Ապաշխարությունը կյանքի կերպ չէ, ուր կատարվում են որոշակի կանոններ. ապաշխարությունն «այսպես պիտի ապրես, այնպես պիտի ապրես» չէ, հիմնական ուղղություն է, դեպի Աստված դարձած կյանքն է: Իսկ դեպի Աստված դարձած կյանքը լուսավոր կյանք է:

Երրորդ՝ «ավետիս» բառը ոչ միայն պատմում է Աստծո փրկագործությունը եւ կոչ ուղղում, որ մարդիկ հրաժարվեն չարության ընթացքից ու գործերից, այլեւ միաժամանակ հիշեցնում է Աստծո այն անսահման համբերության մասին, որ Նա ցուցաբերում է՝ սպասելով մարդկանց փրկությանը՝ հակառակ այն համառ ընդդիմությանը, որ ցուցաբերում են մարդիկ եւ շարունակում մնալ իրենց հոռի ընթացքի մեջ:

Խաչի վրա ավազակներից մեկին այդ ավետիսի նշանակության գիտակցումը փրկեց: Այստեղ հավիտենական ավետիսն ուղղվում է

փրկության առումով անհույս վիճակի մեջ գտնվողներին: Բայց Աստծո համար երբեք անհույս իրավիճակ չկա: Մենք կարող ենք փրկության բոլոր դռները փակ տեսնել, բայց Աստծո համար մեր փրկությունը դեռեւս հնարավոր է. Աստված հույսի՛ Աստված է եւ սպասում է Իր անառակ զավակների դարձին:

Եվ **չորրորդ**՝ սրանով Աստված նաեւ ազդարարություն է հղում: Արդարեւ, ավետիսը կամ փրկության հույսը կա, սակայն մյուս կողմից կա նաեւ հիշեցում, որ եթե մարդիկ դարձի ցանկություն չդրսեւորեն, այն ժամանակ կմնա միայն մեկ ելք. Աստված հարկադրաբար կփակի Իր նեղողամտության ու համբերության դռները:

Երբ 11-րդ գլխում խոսեցինք Աստծո երկու մարգարեների մասին, ասացինք, որ նրանք մեծ նեղության ժամանակի առաջին կեսին փրկության եւ ապաշխարության պատգամն ուղղեցին մարդկանց: Նրանք նույն դերն էին կատարում, ինչ այստեղ՝ հրեշտակը: Երկրորդ երեքուկես տարում, երբ Գազանի գործունեությունը բարձրակետին հասնի, մարդկային ձայնն այլեւս կլռի, եւ վերջին երեքուկես տարվա ընթացքում Աստված Երկնքից հրեշտակ կուղարկի, որպեսզի հնչեցնի հավիտենական այդ ավետիսը: Հիշեցնեմ Քրիստոսի խոսքը՝ վախճանից առաջ Ավետարանը պետք է քարոզվի բոլոր ազգերին (Մտ 24:14): Աստված դա է ի կատար ածում այստեղ:

Մի փոքրիկ համեմատություն եւս ունեմ: Հին եւ Նոր Կտակարաններում մի կարճ ժամանակահատված կա, որ Աստվածաշնչում բաց է մնում: Վերջին մարգարեները մեզ ներկայանում են մեր թվարկությունից առաջ հինգերորդ դարից: Նրանք Եզրասն ու Նեեմիան են: Նրանցից հետո մինչեւ Քրիստոսի գալուստը մարգարեության ձայնը լռում է: Քրիստոսի գալուստից անմիջապես առաջ, որպես մարգարե, հայտնվում է Հովհաննես Մկրտիչը:

Հայտնության գրքում նույնպես մեզ հայտնվում է, թե մարգարեական ձայնի լռությունից հետո, նախքան Աստծո Որդու երկրորդ գալուստը, Աստված դարձյալ ուղարկելու է մի պատգամաբեր, որպեսզի փրկության եւ ապաշխարության հրավիրի աշխարհի բոլոր ժողովուրդներին:

«Այս հրեշտակին հետեւում էր երկրորդ հրեշտակը, որ ասում էր. «Ընկա՛ւ, ընկա՛ւ մեծ Բաբելոնը, նա, որ բոլոր ժողովուրդներին արբեցրեց իր պոռնկութեան թունդ գինիով» (հմր 8):

Հայտարարվածներն ուրախության «ընկա՛ւ»ներ են: Այս հրեշտակը նույնպես ավետում է Բաբելոնի անկումը: Բաբելոնի անկման մասին պիտի խոսեն 17-րդ եւ 18-րդ գլուխները: Այստեղ կանխավ հայտարարելով նրա անկումը՝ ցանկանում է ասել, որ այդ անկմանը շատ քիչ է մնացել. շուտով ընկնելու է:

Թե ի՞նչ է այս մեծ Բաբելոնը, կարելի է մի քանի բացատրություններ տալ: Ոմանք Բաբելոն ասելով հասկանում են այդ անունով ծանոթ քաղաքը: Պատմական Բաբելոն քաղաքը քաղդեացիների երկրի կենտրոնն էր, Բաբելոնյան կայսրության մայրաքաղաքը եւ մեծ հռչակի հասավ Նաբուգոդոնոսոր Բ արքայի օրոք: Քաղաքը Հին աշխարհի վաճառականական ամենակարեւոր կենտրոններից էր: Որպես կայսրության կենտրոն՝ այնտեղ գոյություն ունեին նաեւ աշխարհի բոլոր պաշտամունքները: Բաբելոնում տարածված էր նաեւ անբարոյականությունը: Աշխարհի գրեթե բոլոր մեծ քաղաքները, մանավանդ՝ կայսրությունների մայրաքաղաքները նույն նկարագիրն ունեն:

Մեկնիչներից ոմանք գտնում են, որ հին Բաբելոնը պիտի վերականգնվի եւ կրկին դառնա Աստծո դեմ մարտնչողների խորհրդանիշն ու լինի նրանց կենտրոնը: Սակայն ոմանք, մասնավորաբար՝ հին մեկնիչները, հին Բաբելոնի մասին չեն խոսում. բոլորն էլ դրանում տեսնում են Հռոմեական կայսրությունը: Այդ կայսրության մայրաքաղաք Հռոմը ներկայանում է Բաբելոնի ունեցած հատկանիշներով:

Երրորդ խմբի մեկնիչները Բաբելոն անվան տակ տեսնում են ոչ թե մասնավոր մի քաղաք, այլ մի դրություն, ապագա մի նոր կարգ:

Բաբելոն անվանումն իրականում վերաբերում է վախճանական իրականությանը:

«Մի երրորդ հրեշտակ եւս հետեւում էր նրանց եւ բարձրաձայն ասում է. «Ով երկրպագում է Գազանին եւ նրա արձանին, կամ ով նրա կնիքը դրոշմում է իր ճակատին կամ իր ձեռքի վրայ, նա պիտի խմի

Աստուծոյ բարկութեան գինին, այն անխառն գինին, որ լցուեց Աստուծոյ բարկութեան բաժակի մէջ» (հմր 9-10):

Առաջին հրեշտակը փրկության դարձի կոչ է ուղղում, երկրորդը՝ Բաբելոնի կամ Գազանի թագավորության անկումն է նախագուշակում, իսկ երրորդը մեզ ասում է, թե այդ թագավորության հպատակները կանգնելու են Աստծո դատաստանի առջեւ:

«Աստուծոյ բարկության գինին». թե՛ նախորդ համարում եւ թե՛ այստեղ խոսքը գինուց խմելու մասին է: Այնտեղ ըմպում են Բաբելոնի պոռնկության բարկ գինուց, իսկ այստեղ՝ Աստծո բարկության գինուց: «Գինի խմել» նշանակում է կամավոր կամ ակամա մի բանի մասնակից դառնալ: Աստծո դատաստանի պատկերը հատուցման պատկեր է: Ով Տիրոջ ուրախության բաժակից չի խմում, ստիպված է լինելու խմել դառնության բաժակից: Աստծո բարկության բաժակն «անխառն» է: Անցյալում որպեսզի մարդիկ կարողանային շատ գինի խմել, փորձում էին գինին թեթեւացնել կամ համեմներով մեղմացնել: Անխառն գինին այն է, որի մեջ ջուր կամ համեմներ չեն խառնում: Անխառն գինին թունդ է ու ծանր:

Աստծո բարկությունը կամ վրեժխնդրությունը երբեք Նրա սիրո, ներողամտության եւ ողորմածության ժխտումը չէ: Ինչպե՞ս կարելի է Աստծո պարագայում հաշտեցնել այս երկու եզրերը:

Փորձենք արդարության գաղափարը դնել մեր մտքի կշեռքի նժարին եւ կտեսնենք, որ Աստծո պարագայում այս երկու եզրերը համաձայնեցվում են: Խոստովանենք, որ Աստծո արդարությունը մեր իմացությունից վեր է, սակայն մեր սրտեր կարող է թափանցել Աստված, ով մարդու մեջ տեսնում է չարն ու բարին:

Հետեւաբար, Նա չի կարող մարդու մեջ ընդունել այն, ինչ չար է. Նա թեեւ ներողամտություն եւ համբերություն է ցույց տալիս, սակայն երբեք հանցավորին չի արդարացնում: Հանցանքն Աստծո առջեւ միշտ էլ հանցանք է այնքան ժամանակ, քանի դեռ հանցավորը չի ընդունել եւ չի սրբագրել իր գործած սխալը: Հանցանքի գիտակցումը ենթակային ինքնաբերաբար արժանացնում է Աստծո ներմանը: Մյուս կողմից, երբ մարդը շարունակում է մնալ իր հանցանքի մեջ,

նա դատապարտված է ստանալու իր արարքին համապատասխան հատուցում: Աստծո սերը մերժողը դատապարտված է զրկվելու Աստծո սիրուց: Աստծո լույսը մերժողը դատապարտված է մնալու խավարի մեջ: Աստծո ներողամտությունը մերժողը դատապարտված է մնալու առանց ներողամտության:

Հետեւաբար, իրականում Աստված չէ, որ դատապարտում է, այլ մենք ենք մեր արարքներով մեզ դատապարտում: Մենք ենք որոշում մեր դատապարտության պատիժը: Մեր գործած չարիքն էլ է վերադառնում մեզ, մեր գործած բարիքն էլ:

«… Նա պիտի տանջուի հրով ու ծծմբով, Աստուծոյ սուրբ հրեշտակների եւ Գառան առջեւ» (հմր 9-10):

«Հուր»ը եւ «ծծումբ»ը արտահայտում են Աստծո դատաստանն ու բարկությունը, ինչպես նաեւ դրանց հետեւանքը, որ տանջալից է լինելու: Հիշենք Սոդոմ եւ Գոմոր քաղաքների հետ պատահածը: Աստված դիտումնավոր է տվել այդ քաղաքների դատաստանի օրինակը, որպեսզի մենք դաս քաղենք եւ փրկվենք հավիտենական պատժից:

«Հուր»ը եւ «ծծումբ»ն արդյոք այլաբանական՞ն նշանակություն ունեն, թե՞ իրական: Ենթադրում եմ, որ շատերի մտքում կա այս հարցումը: Սա մարմնակա՞ն տանջանք է լինելու, թե՞ հոգեկան (տե՛ս 2:11-րդ համարի մեկնաբանությունը): Մեր անդրադարձները հանգեցնում են այն մտքին, թե դժոխքի տանջանքը ներքին զրկանք է: Աստծո ներկայությունից զրկվելու տվայտանքն ամենից ահարկուն է, որին արժանանալու են Չարին ենթարկվողները:

Հաջորդ համարը նույնպես այդ մասին է խոսում: «Նրանց տանջանքի ծուխը կբարձրանայ յաւիտեանս յաւիտենից: Գիշեր ու ցերեկ հանգիստ չեն ունենայ նրանք, ովքեր երկրպագեցին Գազանին ու նրա արձանին եւ կրեցին նրա անվան դրոշմը» (հմր 11):

Այստեղ պարզապես ավելացնում է, թե նրանց տանջանքը մի կարճ ժամանակի համար չէ, այլ՝ հավիտենական է: Թեեւ հավիտենականության մեջ գիշեր ու ցերեկ չկա, սակայն այստեղ այդ ժամերի անվանումը պարզապես շարունակականություն թելադրելու համար է, այսինքն՝ Չարին ենթարկվածները երբեք հանգիստ չեն ունենալու հավիտենականության մեջ:

«Ահա այստեղ է Աստուծոյ ընտրեալների համբերութիւնը, որոնք պահում են Աստուծոյ պատուիրանները եւ իրենց հաւատը Յիսուսի հանդէպ» (հմր 12): Սա եզրակացություն է: Այստեղ ցույց է տրվում, որ Աստծո ընտրյալների համբերությունը վարձատրված է:

Եվ ահա Հայտնության գրքի յոթ «երանի»ներից երկրորդի գեղեցկագույն արտահայտությունը.

«Ապա երկնքից լսեցի մի ձայն, որ ինձ ասում էր.

– Գրի՛ր, ինչ որ ասում եմ. «Երանի՛ այն մեռելներին, որոնք այժմուանից իսկ ննջում են՝ հնազանդ լինելով Տիրոջը: Այո՛,– ասում է Հոգին,– որովհետեւ նրանք հանգստացան իրենց աշխատանքից եւ իրենց գործերն են վկայում իրենց մասին» » (14:13):

Սկզբում երկնքից հնչող ձայնի մասին չի ասվում, թե ումն է, սակայն համարի կեսին հայտնվում է, որ դա Աստծո Հոգու ձայնն է: Այս «երանի»ն ուղղվել է Աստծո՝ մեծ նեղության ժամանակ ազատված հավատարիմներին, ովքեր «այժմուանից իսկ ննջում են՝ հնազանդ լինելով Տիրոջը»: Անշուշտ, Քրիստոսով բոլոր ննջեցյալները Քրիստոսի հետ են, միացել են Քրիստոսին, բայց մի հատուկ «երանի» կապում է նրանց, ովքեր նեղության ժամանակի սկզբից իրենց հավատարմությունն են դրսեւորում:

Նրանք ավելի դժվարին ժամանակի մեջ ավելի մեծ հավատարմություն են ցուցաբերում: Կարելի է նույնը հասկանալ բոլոր ժամանակներում Քրիստոսով ննջողների համար եւս: Հայտնության գրքում միշտ զանազանություն է դրվում Գազանի հետեւորդների եւ Քրիստոսի հետեւորդների միջեւ: Ինչպիսի՞ն է մահը Գազանի հետեւորդների եւ ինչպիսի՞ն է Աստծո հետեւորդների համար: Ինչպիսի՞ն է մահն Աստծուն չհավատացող մարդու եւ ինչպիսի՞ն՝ Աստծուն հավատացողի համար: Առաջինի մահը անհույս մահ է, որովհետեւ նա մահը համարում է վերջնական կորուստ, ուստի փորձում է այս աշխարհի կյանքն առավել չափով «վայելել»: Քրիստոնյայի տրամաբանությունն ուրիշ է: Պողոս առաքյալն ասում է. «Ինձ համար կեանքը Քրիստոս է, ուստի եւ մեռնել նշանակում է՝ շահել կեանքը» (Փլպ 1:21): Առաքյալն այսպես է ասում, որովհետեւ հավատում է, որ վայրկյան առաջ միանալու է Քրիստոսին:

Մենք հավատում ենք, որ կյանքից մահ չենք գնում, այլ կյանքից կյանք: Մենք մի օր ննջելու ենք եւ, երբ արթնանանք, գտնվելու ենք հավիտենականության մեջ: Քրիստոսի մեջ եղողը երեկ եւ այսօր եւ հավիտյան Քրիստոսի հետ է: Քրիստոսի հետ նրա լինելը չի ընդմիջվում: Հետեւաբար, այս հավատով ննջողներն իրենց գործերից հանգըստանալու են Քրիստոսով, եւ գործերն են վկայելու նրանց մասին:

ԵՐԿՐԻ ՀՈՒՆՁՔԸ ԵՎ ՔԱՂՀԱՆԸ (14:14-20)

«Յետոյ տեսայ մի տեսակ ամպ, որի վրայ նստել էր Մարդու Որդու նման մէկը: Նա իր գլխին ունէր ոսկէ պսակ եւ ձեռքին՝ մի սուր գերանդի» (հմր 14):

Սպիտակ ամպի վրա նստած Մարդու Որդու պատկերը Դանիելի մարգարեության 7-րդ գլխի 13-րդ համարից է:

Հայտնութենական գրականության մեջ Մարդու Որդու այս պատկերը ներկայանում է ավելի զարգացած ձեւով, իսկ Ավետարաններում Քրիստոս միշտ Իրեն կոչում է «Մարդու Որդի»: «Ես» ասելու փոխարեն ասում է «Մարդու Որդի», բոլոր պարագաներում էլ հայտնում է Մարդու Որդու եւ Իր անձի նույնությունը:

Այս գիրքը նույնպես մեզ հիշեցնում է, որ Մարդու Որդին Քրիստոս Ինքն է:

«Նա իր գլխին ուներ ոսկէ պսակ». «ոսկէ պսակ» ասելով՝ ենթադրվում է, որ Մարդու Որդին ներկայանում է որպես թագավոր եւ դատավոր (անցյալում թագավորները նաեւ դատավորի պաշտոնն էին վարում): Պսակը նաեւ հաղթության նշան էր:

«...Ձեռքին՝ մի սուր գերանդի»: Գերանդին մանգաղի մեծ տեսակն է եւ կապված է հունձքի գաղափարին, իսկ հունձքը Աստվածաշնչում դատաստանի խորհրդանիշն է: Հիշենք Որոմների առակը (Մտ 13:24-30):

«Երկնքում գտնուող տաճարից դուրս ելաւ մի ուրիշ հրեշտակ, որ բարձրաձայն աղաղակեց ամպի վրայ նստողին՝ ասելով. «Ուղարկի՛ր Քո գերանդին եւ հնձի՛ր, որովհետեւ հնձելու ժամանակը հասաւ, եւ

Երկրի հունձքը պատրաստ է» » (հմր 15): Այս հրեշտակը նույնպես գալիս է Երկնքի բարձունքից: Քիչ առաջ ասացի, որ Երկնքից կամ Երկնքի բարձունքից գալ նշանակում է գալ Հոր մոտից:

Հունձքն արտահայտում է դատաստանի երկու կողմերը. մի կողմից՝ դրականը, մյուս կողմից՝ ժխտականը, ընտրությունը, որ բարիների եւ չարերի միջեւ է լինելու, եւ հատուցումը, որ դարձյալ բարիների եւ չարերի միջեւ է լինելու: Մի շարք մեկնիչներ այս երկու կողմերը փորձում են համաժամանակյա երեւույթ նկատել, սակայն կարծում ենք, թե երբ բնագրում խոսվում է Երկրի հունձքի մասին, դա նշանակում է, թե միայն մեկ կողմը նկատի ունի, այսինքն՝ նկատի չունի արդարներին հունձքով հավաքելը, այլ չարերի հետ կապված դատաստանը:

Դատավորը ոչ թե գերանդին Երկիր է գցելու՝ մարդկանց հնձելու եւ ընտրություն կատարելու համար, այլ կարծեք բարիների ընտրությունն արդեն եղել է, եւ նրանք Երկնքի ընտրյալների մեջ են: Նա գերանդին Երկիր պիտի գցի՝ անարդարներին հնձելու համար: Այս լույսի տակ պետք է դիտել «հունձքը պատրաստ է» խոսքը: Եթե այս հատվածը կարդանք հունարեն բնագրում, ապա մեզ կընծայվի հետաքրքրական ու փոքրիկ բանալի: «Պատրաստ» բառի փոխարեն՝ բնագրում գրված է «չորացած»: Իսկ «հունձքը չորացած է»ն իրո՞ք նշանակում է «հունձքը պատրաստ է»: Անշուշտ կարելի է այսպես ենթադրել. որպեսզի ցորենը հնձվի, պետք է կաթնային վիճակից որոշ չափով չորացած լինի: Այս բառը մեզ միաժամանակ կարող է հիշեցնել, որ աշխարհի խորշակը կամ նեղությունը թույլ չի տվել, որ այս հունձքը հասունանա: Բնագիրը կարող է ժամանակից շուտ հասունացած պատկեր ստեղծել:

Հետեւաբար, «հունձքը պատրաստ է» արտահայտությունը կարող է նշանակել, որ Աստծո գործին չծառայող հասկերն են ենթարկվելու գերանդիով հունձքին, որովհետեւ դրանք ժամանակից առաջ են չորացել: Եվ այստեղ կարող ենք կրկին հարց հղել՝ ինչպե՞ս է որոշվում, որ հունձքի ժամանակը հասել է:

Բերենք մի քանի օրինակներ Աստվածաշնչից:

Աստված Աբրահամին մի քանի խոստումներ տվեց: Այդ խոստումներից վերցնում եմ խոստացված երկրին վերաբերողը: Իր տված խոստումից շատ չանցած՝ Աստված ասում է, թե այն ոչ թե անմիջապես է կատարվելու, այլ չորս հարյուր տարի հետո, քանի որ ամորհացիների գործած մեղքերը դեռեւս իրենց պատիժը գտնելու աստիճանին չեն հասել: Այստեղ բառացիորեն ասում է. «Ամորհացիների մեղքերը դեռ իրենց լրումին չեն հասել» (Ծն 15:16):

Արդ, Աստված Իր խոստումը կատարելու ժամանակ է սահմանում: Ե՞րբ է գալու այդ ժամանակը: Ժամանակի հասկացությունն այստեղ կապված է գործված մեղքերի չափն անցնելու հետ: Մենք ունենք մի ժողովրդական բացատրություն. ասում ենք. «Չափն անցավ»: Այստեղ ժամանակը որոշվում է ժխտական ընթացքի լրման հետ հարաբերաբար:

Նույնը գտնում ենք Դանիելի մարգարեության մեջ, ուր խոյի եւ քոշի օրինակներով խոսում է մարերի ու պարսիկների, ինչպես նաեւ հույների մասին: Քոշի մասին խոսելիս ասում է. «Այն քոշը յոյների թագաւորն է, իսկ այն մեծ եղջիւրը, որ նրա աչքերի միջեւ էր, նույն ինքն առաջին թագաւորն է: Երբ նա խորտակուի, նրա տակ գտնուող միւս եղջիւրները՝ չորս թագաւորներ, կելնեն նրա ազգից, բայց ոչ՝ իրենց ուժով: Նրանց թագաւորութիւնից յետոյ, երբ իրենց լրումին հասնեն նրանց մեղքերը, ժպիրի երեսով մի թագաւոր պիտի բարձրանայ» (Դն 8: 21-23):

Մատթեոսի Ավետարանում Հիսուս փարիսեցիներին եւ դպիրներին ասում է. «Դրանով ահա դուք արդէն իսկ վկայում էք, որ որդիներն էք նրանց, որոնք կոտորեցին մարգարէներին: Գնացէք ամբողջացրէ՛ք ձեր հայրերի կիսատ թողած գործը» (Մտ 23:31-32): Նրանց հայրերի կիսատ թողած գործերը նրանց անօրինութիւններն էին: Թե՛ մարգարեությունից եւ թե՛ Ավետարանից մեջբերումները մեզ հուշում են, որ անօրինությունների լրման պահին է ժամանակը գալու:

Պողոս առաքյալը թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին նամակում գրել է. «Եւ ամբողջացնելու համար այն մեղքերը, որ միշտ էլ գործել են, ուզեցին արգելել մեզ, որ հեթանոսներին չքարոզենք փրկութեան մասին: Բայց Աստուծոյ ամբողջական բարկութիւնն ար-

դէն հասել է նրանց վրայ» (Ա Թս 2:16): Առաքյալն Աստծո բարկության հասած լինելը բացատրում է մեղքերի ամբողջությամբ:

Մենք չգիտենք, թե մարդկանց մեղքերը երբ կհասնեն իրենց լրմանը, բայց Աստված գիտի: Աստված Ինքը գիտի, թե երբ է հունձքի ժամանակը, եւ երբ պիտի Իր գերանդին Երկիր գցի՝ հնձելու համար:

«Նա, ով նստել էր ամպի վրայ, Իր գերանդին գցեց Երկրի վրայ եւ հնձեց Երկրի բոլոր բնակիչներին» (հմր 16):

Այս «հնձեց»ը նախօրոք մատնանշում է հունձքի այն պատկերը, որ ամբողջական ներկայացվելու է 19-րդ գլխում:

Այս համարով հունձքի փոխաբերական իմաստն ամբողջանում է, եւ սկսվում է այգեկութի փոխաբերական պատկերը:

«Մի ուրիշ հրեշտակ եւս դուրս ելաւ Երկնքում գտնուող տաճարից. սա էլ ունէր մի սուր գերանդի» (հմր 17):

Այս հրեշտակը նույնպես գալիս է Աստծո մոտից: Նա եւս իր ձեռքում բռնել է մի սուր գերանդի: Որոմների առակով Հիսուս հայտնել է, որ հնձողը Մարդու Որդին կամ Աստված Ինքը չի լինելու, այլ «հնձվորները» կամ Աստծո հրեշտակները: Այստեղ Աստծո հրեշտակն այդ պաշտոնն է կատարում:

«Յետոյ մի ուրիշ հրեշտակ, որ իշխանութիւն ունէր կրակի վրայ, դուրս ելաւ զոհասեղանից եւ բարձրաձայն աղաղակեց սուր գերանդի ունեցող հրեշտակին՝ ասելով. «Ուղարկի՛ր քո սուր գերանդին եւ քաղի՛ր Երկրի այգու ողկոյզները, որովհետեւ խաղողը հասել է» » (հմր 18):

Ո՞վ է երկնավոր սրբարանից դուրս եկող այս հրեշտակը, որ իշխանություն ունի կրակի վրա, եւ ի՞նչ է նշանակում «իշխանութիւն ունէր կրակի վրայ» արտահայտությունը:

Թեպետ անկարելի է ամեն մի տարրին բացատրություն տալ, սակայն գիտենք, որ կրակը դատաստանի խորհրդանիշն է, իսկ հրեշտակներն էլ Աստծո կամքը կամ վճիռները կատարողներն են: Հետեւաբար, այս հրեշտակը ներկայանում է որպես Աստծո դատաստանը գործադրության մեջ դնող մեկը:

Հունձքի այս գերանդին գործածվում է մի երկրորդ նպատակի համար. այս անգամ Երկրի այգու ողկոյզները քաղելու համար է: Ուշագրավն այն է, որ չի ասում՝ «այգին», այլ՝ «Երկրի այգին», որով շեշտում է, թե այս հունձքը եւս բարիներինը չէ, եւ այդ պատճառով էլ՝ 20-րդ համարում գրվել է, թե քաղաքից դուրս պիտի կատարվի:

«Եւ հրեշտակն իր գերանդին նետեց Երկրի վրայ եւ քաղեց ու գցեց Աստուծոյ բարկութեան մեծ հնձանի մէջ» (հմր 19):

Այստեղ տեղի է ունենում «մի այգեկութ». պատկերը սահմռկեցուցիչ է, որովհետեւ Երկրի «խաղողը» նետվում է Աստուծոյ բարկության մեծ հնձանի մէջ: Աստվածաշնչում հնձանը միշտ դատաստանի խորհրդանիշն է:

Ի՞նչ է հնձանը: Գինի կամ օշարակ պատրաստելու համար խաղողը ճզմում էին հատուկ փոսի մեջ, որ ամրացնում էին քարերով եւ շաղախով: Այդ փոսը կոչվում էր հնձան: Դրա մեջ ոտքերով ճզմում էին հավաքված խաղողը, եւ հյութը խողովակից անցնելով՝ լցվում էր երկրորդ ավազանի մեջ: Այնուհետեւ ավազանի մեջ լցված հյութը զտում էին եւ նրանից պատրաստում գինի կամ օշարակ:

«Խաղողը կոխոտուեց քաղաքից դուրս, եւ հնձանից արիւն հոսեց ու բարձրացաւ մինչեւ ձիերի սանձը, շուրջ երեք հարիւր կիլոմետր տարածութեան վրայ» (հմր 20):

Այստեղ խոսվում է մի քաղաքի մասին. հավանաբար ակնարկվում է Երուսաղեմ քաղաքը: Խաղողը կոխկռտել նշանակում է դատապարտել մարդկանց:

Եվ քանի որ Երուսաղեմն Աստծո սուրբ քաղաքն է, ուստի մեղավորների արյունով չպղծվելու համար, խաղողը քաղաքից դուրս կոխկռտվեց. «Արիւնը հոսեց ու բարձրացաւ մինչեւ ձիերի սանձը», այսինքն՝ միջահասակ մարդու հասակի բարձրությամբ արյուն հոսեց: «… Շուրջ երեք հարիւր կիլոմետր տարածութեան վրայ». ոմանք կարծում են, թե այս չափի հետեւում Պաղեստինի ակնարկությունն է, եւ թե Պաղեստինը, բացի Երուսաղեմից, մարդու հասակի չափով արյամբ պիտի ծածկվի:

Եսայու մարգարեության մեջ Աստված Ինքն է կոխկռտում հնձանը (Ես 63:3), այսինքն՝ Աստված Ինքն է Իր բոլոր հակառակորդներին ընկճելու:

Այս առնչությամբ Պողոս առաքյալն առավել լուսաբանող տողեր է գրում կորնթացիներին ուղղված առաջին նամակում՝ ասելով. «Քրիստոսը պիտի թագաւորի, մինչեւ որ Աստուած բոլոր թշնամիներին դնի Նրա ոտքերի տակ՝ որպէս պատուանդան: Վերջին թշնամին, որ պիտի բնաջնջւի, կլինի մահը (...): Իսկ երբ ամէն բան ենթարկուի Որդուն, այն ժամանակ Որդին էլ ինքն իրեն պիտի ենթարկի Աստծուն, որ ամէն ինչ ենթարկեց Նրան, որպէսզի Աստուած լինի ամէն ինչի, ամէն բանի մէջ» (Ա Կր 15:25-26, 28):

ԺԵ ԳԼՈՒԽ

ՎԵՐՋԻՆ ՊԱՏՈՒՀԱՍՆԵՐԸ (15:1-8)

Նախքան վերջին հարվածները՝ Հայտնության գիրքը ներկայացնում է նախապատրաստական մի փուլ: Մեկ անգամ եւս, ըստ մեր հեղինակի նախասիրած ձեւի, որ հաջորդաբար ցույց է տալիս Երկինքն ու Երկիրը, վերստին մեր հայացքներն ուղղում ենք երկինք, ուր տեսնում ենք վերջին փուլի նահատակներին, ովքեր մղել են իրենց պայքարը Գազանի դեմ եւ հաղթանակած դուրս եկել պայքարից:

Եվ նրանք իրենց ձեռքի քնարներով երգում են Աստծո ողորմածության ու քաղցրության մասին: Այդ երգին տրվում են երկու տարբեր անուններ՝ Մովսեսի երգ եւ Գառան երգ: Երգի հիմնական նյութն ազատագրությունն ու փրկությունն է, ինչպես նաեւ՝ Աստծո դատաստանը:

«Յետոյ երկնքում մեծ եւ զարմանալի մի ուրիշ նշան տեսայ: Տեսայ եօթ հրեշտակների, որոնք ունէին վերջին եօթ պատուհասները, որոնցով պիտի աւարտուէր Աստուծոյ բարկութիւնը» (հմր 1):

Հայտնության գրքում հարվածների կամ պատուհասների երեք տարբեր շարքեր կան, եւ մենք պիտի սկսենք վերջին շարքից: Երկուսն արդեն տեսանք: Նախորդ երկու շարքերը յոթական էին. յոթ կնիքներ, յոթ փողեր եւ յոթ անոթներ:

Սակայն տեսանք, որ յուրաքանչյուր շարքի վեցերորդը կար, իսկ յոթերորդը չկար: Ասվում էր՝ բացվեց յոթերորդ կնիքը, եւ հանկարծ մեր առջեւ գտանք յոթ փողեր: Սրանով կա՛մ ուզում է ասել, թե յոթերորդ կնիքն ու փողերի շարքը նույնանում են, կա՛մ էլ առաջին երկու շարքերը մեզ ներկայանում են որպես անկատար շարքեր: Հիշենք, որ վեցն անկատար թիվ է:

Իսկ այժմ ներկա շարքն ունենալու է իր յոթերորդը. այս շարքը պետք է ամբողջանա: Ի՞նչ է ուզում ասել սրանով. պարզապես ցույց

է տալիս, թե նախորդները կատարածը կամ վախճանը չէին: Կատարածը կամ վախճանը հիմա մոտ է եւ շուտով գալու է:

Ըստ մի շարք մեկնիչների՝ այս երեք շարքերն էլ նույնն են: Նրանք երեք տարբեր կերպերով կամ փուլերով մեզ են ներկայացնում բացարձակապես նույն բաները: Եվ հարց է առաջանում՝ իսկապե՞ս մեր հեղինակն ամեն անգամ շրջադարձ է կատարում նույն բանը մի քիչ տարբեր բառերով ասելու համար: Արդյոք ամբողջապես կրկնությո՞ւն է մեր ունեցածը, թե՞ այստեղ մեզ բոլորովին տարբեր պատկեր է ներկայացվում, եւ տարբեր բան է ասվում:

Այդպես մտածող մեկնիչների տեսակետը հիմնված է այն բանի վրա, որ հարվածների մեջ բազում տարրեր շատ նման են: Սակայն զգո՞ւյշ. «նման» եւ «նույն» բառերը միեւնույն նշանակությունը չունեն: Նմանությունները նույնություններ չեն: Դրանք ոչ միայն ըստ բովանդակության են տարբեր, այլ նաեւ ըստ տարողության: Ըստ իս՝ մենք տեսնում ենք բոլորովին տարբեր հարվածների շարք. դրանք տարբեր ժամանակների հարվածներ են:

Առաջին համարի յոթ հրեշտակներին նկարագրելիս առաքյալն ասում է. «Տեսայ մեծ եւ զարմանալի մի ուրիշ նշան»: Նա մի շարք բաներ է «նշան» կոչել: 12-րդ գլխում տեսանք, որ զարմանալի նշան կոչեց այն կնոջ հայտնվելը, որ թե՛ Աստվածամոր եւ թե՛ Եկեղեցու պատկերն է: 13-րդ գլխում երկնքում վիշապի հայտնվելը դարձյալ նշան է կոչում: Այստեղ եւս նշան է կոչում երկնքում յոթ հրեշտակների հայտնվելը, որովհետեւ յոթ հրեշտակներից յուրաքանչյուրն այն պատիժների նշանակն է, որոնք պիտի իրականանան, որովհետեւ նրանք մի կողմից հայտնում են Աստծո զորությունն ու կարողությունը, նաեւ՝ մարդկային մտքի համար Նրա անհասանելի ծրագիրը, իսկ մյուս կողմից՝ Նրա արդարությունը: Աստծո արդարությունը Նրա հետ եղողների համար լույս, խաղաղություն, երանություն պիտի լինի, իսկ Չարի հետ եղողների համար՝ դատապարտություն:

«Տեսայ ապակէ ծովի նման մի տարածութիւն՝ խառնուած կրակով: Նրանք, որ յաղթեցին Գազանին եւ նրա արձանին ու նրան, որի

անուան գումարը թւով էր գրուած, կանգնած էին ապակէ ծովի վրայ՝ Աստուծոյ տուած քնարները բռնած» (հմր 2):

Երբ բացվեց 4-րդ գլուխը, նախ տեսանք Աստծո փառավոր պատկերը: Այնտեղ նույնպես ապակե ծով էր նկարագրված (տե՛ս 4:6-րդ համարի բացատրությունը): Այս ապակե ծովը, նախորդի հետ համեմատած հավելյալ տարր ունի. նրանում կրակ է խառնված: Կրակի այս տարրը ցույց է տալիս աշխարհի գալիք դատաստանը:

Նկատի ունենալով, որ «ծով»ը ժողովուրդ է խորհրդանշում, ուստի, այդ ապակյա տարածությունն ակնարկում է նաեւ այն անհամար սրբերին ու մարտիրոսներին, ովքեր Աստծո գահի առջեւ են կանգնում: Նրանք փրկության գինը վճարել են իրենց արյամբ եւ «Աստուծոյ տուած քնարները բռնած»:

«Նրանք երգում էին Աստուծոյ ծառայի՝ Մովսէսի երգը, ինչպէս նաեւ Գառան երգը» (հմր 3):

Այստեղ երկու տարբեր երգեր չեն ակնարկվում, այլ միեւնույն երգը: Մովսեսը ե՞րբ երգեց իր երգը. Ելից գրքի 15-րդ գլուխը մեզ ասում է, որ հազիվ էին անցել Կարմիր ծովը եւ հասել Սինա, երբ մարգարեն ու ամբողջ ժողովուրդն սկսեցին երգել իրենց ազատագրության առիթով: Այդ երգի մեջ կա նաեւ ապագային վերաբերող մի հայացք՝ հիմնված Աստծո խոստման վրա: Աստված նրանց ճանապարհ էր դուրս բերել ոչ թե որպեսզի անապատի մեջ մնան, այլ՝ խոստացված երկիր հասնեն: Մովսեսի երգն ամբողջական ազատագրության կամ փրկության երգն է:

Իսկ Գառան երգի առնչությամբ կարող ենք ասել, թե Նոր Կտակարանի էջերում «Գառան երգ» անվանումով բան չկա: Ուրեմն, ի՞նչ երգի մասին է խոսքը: Ինչպես Սինայի անապատում երգողը Մովսեսն էր, միթե այստեղ երգողն էլ Աստծո Գա՞ռն է: Հստակ է, որ այստեղ երգողը Գառը չէ: Գառն Ինքն է երգի առարկան կամ նյութը: Եվ Գառը հոգեւոր փրկություն է խորհրդանշում: Այս երգողները Գառան արյունով իրենց հոգեւոր փրկությունն են երգում: Ազատագրության կամ փրկության այս երգը «Գառան երգ» է կոչվում, որովհետեւ Գառն Ինքն է այս երգի փառաբանության առարկան:

«Ամենակա՛լ Տէր Աստուած, մեծ են Քո գործերը եւ սքանչելի, ով Թագաւորդ բոլոր ազգերի, արդար եւ ճշմարիտ են Քո ճանապարհները» (հմր 3):

«Ամենակալ Տէր Աստուած»ը եւ «Թագաւոր»ը Գառն Ինքն է: Նա բոլոր ազգերի Տերն է եւ Թագավորը: Նրա համար կարեւոր են բոլոր ազգերը: Նրան երբեք չի կարելի պատկերացնել այնպիսի կեցվածքի մեջ, որ ազգերից միմիայն մեկին է ընտրում, իսկ մյուսներին անտեսում: Աստծո՝ եբրայեցիներին ընտրելը որպես Իր սեփական ժողովուրդ, չի նշանակում, թե այդ ժողովուրդը միակ ընտրյալն է. պարզապես առաջինն է ընտրվել Աստծուց՝ ընտրության ենթակա բոլոր ժողովուրդներից: Աստված մի տեղից պիտի սկսեր, ինչպես մարդկային մեր քայլերն ենք սկսում. աշխարհում յուրաքանչյուր քայլ սկիզբ է առնում ինչ-որ տեղից:

Մի շարք ձեռագրերում կարդում ենք «Թագաւոր բոլոր սրբերի» կամ «Թագաւոր բոլոր ժամանակների»: Այս բոլոր տարբերակներն էլ վերջիվերջո նույն իմաստն են արտահայտում: Աստված ժամանակի մեջ չի սահմանափակվում: Աստված մնայուն հավիտենականություն է: Հետեւաբար, Նա բոլոր ժամանակների Աստված է: «Թագաւոր բոլոր սրբերի» կոչումը մեզ հստակորեն ասում է, որ Աստված Գերագույն Սուրբն է եւ թագավորում է սրբերի հոգիների վրա:

«Ո՞վ չի վախենայ քեզանից, Տէ՛ր, եւ ո՞վ չի փառաւորի Քո սուրբ անունը. քանի որ միայն Դո՛ւ ես սուրբ: Պիտի գան բոլոր ազգերն ու երկրպագեն Քեզ, որովհետեւ յայտնուեցին Քո արդար գործերը» (հմր 4):

«Ո՞վ չի վախենայ քեզանից» նախադասությունը վերաբերում է սխալ ճանապարհի մեջ գտնվողներին եւ Աստծուն մերժել շարունակողներին: Նրանք կարող են փառավորել Աստծուն, սակայն դա չի նշանակում, թե նրանց սրտերը շրջվել են դեպի Աստված:

«… Միայն Դո՛ւ ես սուրբ»: Աստծո Գառն է միակ Ճշմարիտ Սուրբը: «Պիտի գան բոլոր ազգերն ու երկրպագեն Քեզ, որովհետեւ հայտնվեցին Քո արդար գործերը». այս երկու նախադասությունների մեկնությունը գտնում ենք փիլիպպեցիներին ուղղված նամակի 2-րդ

գլխի 9-11-րդ համարներում, ուր ասվում է. «… Աստուած է՛լ աւելի բարձրացրեց Նրան, Նրան տուեց այն անունը, որ վեր է բոլոր անուններից, որպէսզի Յիսուսի անուան առաջ ծնկի գան բոլորը, երկնաւորներն ու երկրաւորները եւ սանդարամետականները, եւ ամէն լեզու դաւանի, որ Յիսուս Քրիստոս «Տէր» է՝ Հայր Աստծուն փառաւորելու համար»:

«Դրանից յետոյ տեսայ, որ բացուեց Երկնքի տաճարը, որտեղ գտնուում է Վկայութեան Խորանը» (հմր 5):

Ինչպես ասացինք, Երկնքի տաճարը նյութեղեն չէ, այլ Աստծո ներկայությունն է նշանակում:

Հինկտակարանյան ժամանակներում Սողոմոնի կառուցած տաճարը պարզապես նման էր Մովսեսի կանգնեցրած Վկայության Խորանին: Մովսեսի կանգնեցրածը շարժական էր. ուր կանգ էր առնում ժողովուրդը, այնտեղ կանգնեցնում էր Վկայության Խորանի վրանը, եւ բոլորը երկրպագում էին Աստծուն: Սողոմոնի կառուցած տաճարով՝ Աստծո Սրբարանը հաստատվեց Երուսաղեմում. այլեւս հնարավոր չէր Վկայության Խորանը, այսինքն՝ Աստծո ներկայության խորհրդանիշը տեղափոխել:

Տաճարում Վկայության Խորանի հաստատումը եբրայեցի ժողովրդի մեջ առաջացրեց մտայնության փոփոխություն, եւ տաճարը դարձավ Աստծո ներկայության խորհրդանիշ: Երբ վրա հասան այն ժամանակները, որ եբրայեցի ժողովրդի երկու հատվածները կորցրին իրենց թագավորություններն ու աքսորվեցին Ասորեստան, այնպիսի տպավորություն ունեցան, թե հեռացել են Աստծո ներկայությունից. նրանք կարծեցին, թե Աստված այլեւս իրենց հետ չէր:

Մեզ տրված համարն ասում է, որ Աստված մի տեղում չի բնակվում, այլ ամենուրեք է: Աստվածաշնչում «երկինք» բառը սերտորեն կապվել է Աստծո ամենուրեքության գաղափարի հետ: Աստված անբաժան է բոլոր նրանցից, ովքեր Իրենն են, եւ Նրա ներկայությունն զգում են բոլոր նրանք, ովքեր հավատարիմ են Նրան: Նրանք են վայելելու Աստծո ներկայությունը եւ գտնվելու են այդ ներկայության մեջ:

«Եօթ հրեշտակները, որոնք ունէին եօթ պատուհասներ, տաճարից դուրս ելան՝ ծածկուած մաքուր ու փայլուն կտաւով եւ իրենց կրծքին ոսկէ գօտիներ կապած» (հմր 6):

Հրեշտակների նկարագրությունը բացահայտում է նրանց պաշտոնը. նրանց հանդերձները հիշեցնում են քահանաների զգեստավորումը. քահանաներն սպիտակ կտավ էին հագնում, որ Աստծո տաճարում գտնվելու եւ պաշտոնավարելու խորհրդանիշն էր, իսկ քահանայապետն ուներ լանջապանակ, որ կապվում էր ոսկե շղթայով: Ուստի, հրեշտակները ներկայանում են որպես Աստծո քահանաներ կամ պաշտոնյաներ: Նրանք պիտի կատարեն Աստծո կամքը, որ այստեղ Նրա դատաստաններն են: Հրեշտակների թիվն այստեղ հայտնում է, թե Աստծո այս դատաստանները լինելու են վերջիններն ու ամբողջականը:

«Չորս կենդանիներից մէկը եօթ հրեշտակներին տուեց եօթ ոսկէ անօթներ, որոնք լեցուն էին յաւիտեանս յաւիտենից կենդանի Աստուծոյ բարկութեամբ» (հմր 7):

Միակ նշումը, որ ցանկանում եմ կատարել, Աստծուն տրված տիտղոսն է՝ «յաւիտեանս յաւիտենից կենդանի»: Հին եւ Նոր Կտակարաններում այս տիտղոսն այնքա՜ն հասկանալի էր: Մեզ համար նվազել է դրա կարեւորությունը, որովհետեւ այսօր ամենքս էլ միաստվածյան ենք արդեն, ճանաչում ենք միակ եւ ճշմարիտ Աստծուն: Մեզ համար այս խոսքի բուն զորությունը կարծեք նվազել է, մինչդեռ անցյալում, երբ մարդիկ նոր էին որդեգրելու քրիստոնեությունը, «յաւիտեանս յաւիտենից կենդանի» բացատրությամբ Աստծուն հակադրում էին բոլոր չաստվածներին: Այլ խւսքով, Աստծո համար տրված այդ տիտղոսը ջատագովական նկարագիր ուներ: Այս տիտղոսը նաեւ հիշեցում է այսօրվա այն մարդուն, որ դեռեւս կռապաշտության մեջ է, սակայն մտածում է, թե իր պաշտածը կամ պաշտածները չեն ճշմարիտ Աստված կամ աստվածները, այլ Աստվածաշնչի Աստվածն է միակ ճշմարիտը:

«Տաճարը լցուեց Աստուծոյ փառքի եւ զօրութեան ծխով, եւ ոչ ոք չէր կարող տաճար մտնել, մինչեւ չաւարտուէին եօթ հրեշտակների բերած եօթ պատուհասները» (հմր 8):

«Ծուխ»ն Աստծո ներկայության խորհրդանիշն է: «Տաճար մտնել» նշանակում է գտնվել Աստծո ներկայության մեջ: Եբրայական պաշտամունքում Աստծո ներկայության վայրը Սրբություն Սրբոցն էր: Մովսես մարգարեն եւ քահանայապետերը այնտեղ մտնելով՝ բարեխոսում էին ժողովրդի համար:

Այստեղ մեզ ասվում է, թե ոչ մի բարեխոս պատուհասների ավարտից առաջ չի կարողանալու Աստծո ներկայության կանգնել: Ոչ մի բարեխոսի մտնել չկարողանալը թելադրում է, որ ավարտվել են բարեխոսության ժամանակները. Աստված այլեւս բարեխոսություն չի ընդունում, որովհետեւ անօրինության չափն անցել է բոլոր սահմանները:

Կա նաեւ երկրորդ բացատրություն: Այստեղ հիշեցինք Եսայու մարգարեության 6-րդ գլխի տեսիլքը: Այդ տեսիլքը մեզ թելադրում է, որ մարդը չի կարող կանգնել Աստծո փառքի առջեւ: Եսայի մարգարեն արժանանում է Աստծո փառքը տեսնելու եւ ողջ մնալու շնորհին: Աստված խնայում է մարգարեին եւ մի ակնթարթի տեւողությամբ հայտնում է Իր փառքը: Աստված Իր փառքի այս հայտնությունը մարգարեի աչքերից անմիջապես ծածկում է ծխով, որպեսզի նա վերադառնա դեպի ժողովուրդը եւ լծվի իր առաքելությանը: Աստված կամենում է, որ մարգարեն գնա իր ժողովրդի մոտ եւ հիշեցնի նրա կատարած անօրինությունների մասին: Եսայի մարգարեի տեսիլքը լուսաբանում է, որ այս համարի մեջ նկարագրվող ծխով լցված տաճարը հրավեր է մեր աչքերը դարձնելու դեպի Երկիր, ուր կատարվելու է Աստծո կամքը:

Երրորդ բացատրություն եւս կարելի է տալ: Եբրայեցիներին ուղղված նամակի 11-րդ գլխի վերջում առաքյալն ասում է. «Սրանք ամէնքը, իրենց հաւատով վկայուած լինելով հանդերձ, չստացան Աստուծոյ խոստումը, որովհետեւ Աստուած, մեզ համար մի աւելի լաւ բան նախատեսած լինելով, չուզեց, որ նրանք առանց մեզ հասնեն խոստումի իրականացմանը» (Եբր 11:39-40):

Ուստի, քանի դեռ սրբերի թիվը չի ամբողջացել, չի լրացել, սրբարանի դուռը մեզ համար փակ պիտի մնա, սակայն այդ դուռը շուտով պիտի բացվի, երբ Աստծո վերջնական դատաստանը Երկիր հասնի:

ԺԶ ԳԼՈՒԽ

ԱՍՏԾՈ ԲԱՐԿՈՒԹՅԱՆ ՅՈԹ ԱՆՈԹՆԵՐԸ (16:1-21)

Հայտնության գրքի հարվածների բացատրության ժամանակ ձեր մտքում միշտ ունեցեք այն համոզումը, որ վախճանական բոլոր հարվածների ընթացքում Աստծո ժողովուրդը պետք է զերծ մնա դրանցից, ինչպես եղավ Եգիպտոսում: Ինչպես նախորդ հարվածների նկարագրությունը, գալիք հարվածների նկարագրությունը նույնպես երբեք այլաբանություն չէ: Բոլորն էլ բառացիորեն հասկացված, իրական հարվածներ են:

Մինչ նախորդ հարվածների նպատակը մարդկանց ապաշխարության բերելն էր կամ առնվազն ապաշխարության տրամադրություն ստեղծել կամենալը, ապա այստեղ առկա է բոլորովին այլ նպատակ՝ մաքրել կամ սրբել աշխարհը: Հովհաննես Մկրտիչը Քրիստոսի մասին ասաց հետեւյալը. «Քամհարը Նրա ձեռքին է, Նա կմաքրի իր կալը, ցորենը կհաւաքի շտեմարանում, իսկ յարդը կայրի անշէջ կրակով» (Մտ 3:12: Ղկ 3:17): Քամհարը եռաժանի այն գործիքն է, որ գործածում էին (մի շարք վայրերում դեռ գործածվում է) կալի մեջ հարդը ցորենից զատելու համար: Եռաժանիով վերցնում էին դեզից եւ նետում օդի մեջ, քամին հարդը մի կողմ էր նետում, իսկ ցորենը թափվում էր ցած: Քրիստոսի անելիքը եւս նույնը պիտի լինի: Համարում ասվում է, որ աշխարհի անօրինությունը կամ մեղքն այնքան է շատացել, որ Աստված գտնում է, թե ժամանակը եկել է աշխարհը վերջնական դատաստանի ենթարկելու համար:

Սկզբում Տերը դատաստան տեսավ ջրհեղեղով, իսկ այժմ դատաստան է տեսնելու արյան հեղմամբ՝ դրանով մաքրելով աշխարհը: Սա որքան էլ անընդունելի թվա, միեւնույնն է, արդարության վերաբերյալ գոյություն ունի մի հասկացողություն, որ Աստված Իր

Օրենքով էր տվել: Առաջին հերթին Ելից գրքի 21-րդ գլխում կարդում ենք, թե ով մեկ ուրիշին վնաս հասցնի, իր հասցրած վնասն ինքը կկրի. կյանքի փոխարեն՝ կյանք, աչքի փոխարեն՝ աչք, ատամի փոխարեն՝ ատամ, ձեռքի փոխարեն՝ ձեռք, ոտքի փոխարեն՝ ոտք եւ այլն (Ելք 21:24-25):

Սակայն մարդիկ Տիրոջ տված Օրենքը սխալ հասկացան: Մենք նույնպես այս օրենքը հաճախ սխալ ընկալմամբ ենք օգտագործում: Աստծո ասածն այն է, որ ամեն ոք իր գործած հանցանքին համապատասխան պատիժ պիտի ստանա: Ուրեմն, այս օրենքը համապատասխանության օրենք է: Աստված Ինքը չէր ցանկանում վրեժխնդրություն բորբոքել. Աստված մարդուն տվեց Իր Օրենքը՝ վրեժխնդրությանը վերջ դնելու համար: Տերը կամեցավ վերջ դնել վրեժխնդրության մարդկային հասկացողությանը, որ մարդուն արյունարբու գազան է դարձնում:

Մենք գիտենք, թե ինչպես Քրիստոս մեզ հիշեցրեց, որ անմեղ Աբելի արյունից մինչեւ այժմ եւ մինչեւ Աստծո Որդու երկրորդ գալուստը, մարդիկ այդ անմեղ արյունը թափեցին, դեռ շարունակում են թափել եւ պիտի թափեն ու պղծեն Երկիրը: Այդ պատճառով Աստված ասում է, թե անմեղների արյամբ ապականված Երկիրը կարելի է մաքրել, սրբել միայն մեկ ճանապարհով. պետք է թափվի անմեղ արյուն թափողների արյունը, բայց ոչ թե մարդկային որոշումով, քանի որ մարդկային վրեժխնդրությունն անարդար է: Աստվածային վրեժխնդրությունը շատ խիստ է երեւում, սակայն արդարության հաստատումն է:

«Յետոյ տաճարի միջից լսեցի մի ուժեղ ձայն, որ եօթ հրեշտակներին ասում էր. «Գնացէ՛ք եւ Աստուծոյ բարկութեան եօթ անօթները դատարկեցէ՛ք Երկրի վրայ» » (հմր 1):

Տաճարից ո՞ւմ ձայնը կարող էր հնչել, եթե ոչ միմիայն Աստծո: Արդ, Աստված արձակում է Իր դատավճիռը, որը գործադրողները լինելու են հրեշտակները:

«Առաջին հրեշտակը գնաց եւ իր անօթի պարունակութիւնը թափեց Երկրի վրայ: Նրանք, որ Գազանի դրոշմն ունէին կամ երկրպագել

էին նրա արձանին, ծածկուեցին գէշ եւ մորմոքող պալարներով» (հմր 2): Այս մեկի նախօրինակը գտնում ենք Ելից գրքի այն դրվագում, ուր Մովսեսը Աստծո հրամանով հնոցից մոխիր էր վերցնում եւ փարավոնի առջեւ դեպի երկինք ցանում, որից հետո Եգիպտոսի ամբողջ տարածքում ապրող մարդկանց մարմիններին անսահման ցավ պատճառող պալարներ են դուրս գալիս (Ելք 9:8-12):

«Երկրորդ հրեշտակն իր անօթը դատարկեց ծովի վրայ. ծովի ջուրը մեռելի արեան նման լերդացաւ, եւ այնտեղ եղած կենդանի արարածները սատկեցին» (հմր 3): Սրա նախօրինակը եւս գտնում ենք Ելից գրքում. դա Եգիպտոսի գլխին իջած առաջին հարվածն էր (Ելք 7:19-21):

Համարի պատկերն ավելի սարսափելի իրականություն է ներկայացնում. ասում է՝ «ծովի ջուրը մեռելի արեան նման լերդացաւ»: Աստվածաշնչում «ծով»ը երբեմն Աստծուն ընդդիմացող ժողովուրդների, հետեւաբար, նաեւ մեղքի խորհրդանիշն է: Աստված մեկ անգամ այս աշխարհը մաքրեց ջրհեղեղով, իսկ Հայտնության գրքի վերջին գլխում պիտի տեսնենք, որ «ծով» գոյություն չունի. Աստված այս աշխարհից վերացնելու է Իրեն ընդդիմացող մարդկությանն ու մեղքը:

Պողոս առաքյալն ասում է՝ մեղքի հետեւանքը մահն է (Հռ 6:16, 23): Մեռելի արյունը պարզապես մահվան խորհրդանիշ է. որպես մեղքի պատիժ՝ Աստված մահ է տալիս, եւ Նա մահվան է դատապարտելու չապաշխարող մարդկությանը:

«Երրորդ հրեշտակն իր անօթը դատարկեց գետերի եւ ջրի աղբիւրների վրայ, եւ նրանք արիւն դարձան: Եւ լսեցի, որ ջրերի վրայ իշխանութիւն ունեցող հրեշտակն ասում էր. «Արդար ես Դու, որ ես եւ էիր, Դու, Սո՛ւրբդ, քանի որ այսպէ՛ս դատաստան արեցիր, քանզի նրանց, ովքեր Աստուծոյ ընտրեալների եւ մարգարէների արիւնը թափեցին, խմել տուեցիր մի բան, որին արժանի էին» » (հմր 4-6): Այստեղ ցույց են տրվում թե՛ պատժի մեծությունն ու անխուսափելիությունը եւ թե՛ աստվածային դատաստանի արդարությունը:

«Ապա զոհասեղանից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Այո՛, ո՛վ ամենակալ Տէր Աստուած, արդար ու ճշմարիտ են Քո վճիռները» »

(հմր 7): Զոհասեղանից եկած ձայնն Աստծո խոսքի կամ Քրիստոսի համար իրենց վկայության պատճառով նահատակվածների կամ մարտիրոսացածների ձայնն է: Ահա նրանք Աստծո վրեժխնդրության իրենց սպասումը կատարված են համարում եւ հայտարարում են Աստծո վճիռների արդարությունն ու ճշմարտացիությունը:

Ինչպես մի շարք մեկնիչներ են մեզ ասում, զոհասեղանը կարելի է նաեւ երկրորդ իմաստով հասկանալ. նա ոչ միայն նահատակների կամ մարտիրոսների արյան հեղման նշանակ է, այլեւ Հին Կտակարանից սկսած՝ քավության, Աստծո ներման խորհրդանիշ: Սակայն աշխարհի վախճանին Աստված քավություն կամ ներում չի հրամցնելու, այլ՝ պատիժ, որովհետեւ մեղավորներն Աստծո քավությանն ու ներմանն արժանի չեն:

«Չորրորդ հրեշտակն իր անօթի պարունակութիւնը թափեց արեւի վրայ, եւ արեւին արտօնութիւն տրուեց խանձել մարդկանց» (հմր 8):

Աստվածաշունչը եւ ի մասնավորի՝ Հին Կտակարանը մեզ բազում կերպերով հիշեցնում է, որ տիեզերքի բոլոր տարրերը ենթակա են Աստծո հրամաններին: Դրանք ծառայում են Աստծո կամքը կատարելուն: Արեւն այդ տարրերից է. Ծննդոց գրքի 1-ին գլխում Արեւը մեզ ներկայանում է Աստծո կամեցած՝ թե՛ Երկիրը լուսավորելու, թե՛ ջերմություն տալու (գիտեք, որ ջերմությունը ծառայում է կյանքի ծնունդին) եւ թե՛ ժամանակները որոշելու համար: Ուրեմն, արեւն Աստծո նախախնամության տարբեր կողմերի դրսեւորումն է, սակայն Աստծո նախախնամությունը չընդունող աշխարհի համար այդ տարրերը Աստծո պարգեւ չեն: Ընդհակառակը, աշխարհը դրանք դարձնում է պաշտամունքի առարկա կամ ապականում է դրանք: Աստված փոխելու է դրանց պաշտոնը եւ պիտի ծառայեցնի Իր դատաստանի համար: Այս համարում արեւին «արտոնություն» է տրվում տարապայման մի ուժգնությամբ այրել, խանձել եւ մրկել բոլոր արարածներին:

«Սաստիկ տապից այրուեցին մարդիկ եւ հայհոյեցին Աստծուն, որ իշխանութիւն ունի այս պատուհասների վրայ. սակայն նրանք չապաշխարեցին եւ փառք չտուեցին Աստծուն» (հմր 9):

Արդյոք զարմանալի չէ՞ մարդկանց այս վարմունքը: Թերեւս մենք զարմանանք, բայց իրականում այնքան էլ զարմանալի չէ, որովհետեւ Աստծո պատիժները հաճախ ապաշխարության հրավիրելու միջոցներ են: Դրանք կարող են ուղղիչ լինել միայն այն մարդկանց համար, ովքեր ուղղվելու տրամադրություն ունեն. կարող են դաստիարակիչ լինել նրանց համար, ովքեր դաստիարակվելու տրամադրություն ունեն, եւ ի վերջո արդարացնող կարող են լինել նրանց համար, ովքեր իրենց սրտում պահպանում են արդարանալու ցանկությունը: Իսկ ուղղվելու տրամադրություն չունեցողներն իրենց ժխտական կեցվածքն առավել եւս արմատավորում են պատժի վրա եւ համառորեն ընդդիմանում Աստծուն ու հայհոյում Նրան: Այս մարդիկ ոչ թե չեն ճանաչում Աստծուն, այլ ճանաչելով հանդերձ՝ շարունակում են իրենց հոռի վերաբերմունքը Արարչի նկատմամբ: Այդ պատճառով է, որ նրանց համար Աստծո գթությունը որեւէ նշանակություն չունի: Նրանք Աստծուն մերժող մարդիկ են, հետեւաբար, Նրան չճանաչողներ չեն:

Հաճախ ենք լսում եւ խոսում անաստված մարդկանց մասին, եւ հարց է ծագում. արդյոք իրականում անաստված մարդ կա՞: Իրականում անաստված մարդ չի կարող լինել, որովհետեւ բանական մարդ արարածն ինքն իր եւ իրեն չճանաչող բնության մասին է մտածում: Ով տեսնում է իրեն կամ իր կազմվածքն ու աշխարհը եւ խորհում դրանց մասին (եւ չկա մեկը, որ չի խորհում. ամենապարզ մարդն ամենապարզ ձեւով է խորհում, իմաստասեր մարդը խորհում է իրեն հատուկ ձեւով եւ այլն), չի կարող երբեք չմտածել, որ այս սքանչելի բնությունը՝ իր կարգ ու կանոնով, Արարիչ չի ունենա՝ անկախ նրանից՝ դա պարզ զուգադիպությա՞ն, թե՞ պատահականության ծնունդ է:

Ներկա մարդկության մեջ Աստծո գոյությունը մերժողները չեն ուզում ընդունել, թե այդ մերժումն ինքնին իրենց մերժածը ճանաչել է ենթադրում, որովհետեւ ինչ-որ բան մերժողն անպայման իր մերժածի գոյությունը պիտի ընդունի, որպեսզի հետո կարողանա մերժել նրա գոյությունը: Ես անհրաժեշտություն չունեմ մերժելու մի բան, որի գոյությունը չեմ ընդունում: Այս մարդիկ ինքնաբերաբար ճանաչում

են Աստծուն, հետեւաբար Աստծուն չընդունելով՝ ուրանում են Նրան: Ուստի, անգիտակից կամ ակամա անաստվածություն գոյություն չունի. եթե կա անաստվածություն, ապա դա Աստծո գոյության գիտակից եւ կամավոր ուրացում է:

Գազանին երկրպագող կամ ենթարկվող մարդկանց մեջ երբեք չի մահանում Աստծո գիտակցությունը: Գիտակցությունը կարող է աղոտանալ, մշուշվել, սակայն իր աղոտ ու մշուշոտ վիճակի մեջ իսկ պահպանում է Արարչի մասին գիտակցությունը: Գազանը երբեք չի կարող մարդկանց մտքից ջնջել Աստծուն:

Թեպետ թվում է, թե Գազանը Երկրի վրա ունի ամեն տեսակի իշխանություն, սակայն դա բացարձակ չէ, եւ այդ պատճառով էլ Գազանն անկարող է ջնջել վախճանական պատուհասները:

Ասում է, թե մարդիկ «չապաշխարեցին եւ փառք չտուեցին Աստծուն»:

Ապաշխարություն: Հավանական է, որ մենք այս վայրկյանի տերն ենք, բայց ոչ՝ վաղվա տերը: Հարցը միայն մահը չէ, որ որեւէ պահի կարող է գալ եւ մեզ իր ճիրանների մեջ առնելով՝ մեր կյանքը խլել: Հարցն այստեղ այլ է. մարդը գիտակցություն ունի եւ մինչեւ որոշակի ժամանակ կարող է արթուն ու գործունյա լինել, սակայն գալիս է մի ժամանակ, երբ մարդու բոլոր կարողությունները կամա-ակամա սկսում են նահանջել: Դեռ չենք խոսում հանկարծակի վրա հասնող հիվանդությունների մասին, որոնք մեր կարողությունները նահանջի են մատնում: Մենք զրկվում ենք մեր կամքն իրագործելու ուժից եւ դառնում կենդանի դիակ մինչեւ այն վայրկյանը, երբ կգա այս աշխարհից հեռանալու պահը: Արդ, քանի դեռ ժամանակը մեր ձեռքն է, զղջանք, քայլ անենք դեպի մեր մեղքերի քավություն, բարիք գործենք եւ փառք տանք Աստծուն:

«Հինգերորդ հրեշտակն իր անօթը դատարկեց Գազանի գահի վրայ, եւ նրա թագաւորութիւնը խաւար դարձաւ. մարդիկ ցաւից իրենց լեզուներն էին կծոտում» (հմր 10):

Ինչ է նշանակում «Գազանի գահ»ը: Ինչպես Աստծո գահը, այնպես էլ Գազանինը որեւէ հատուկ վայր չունի: Այդ գահը Սատանայի

հետեւորդների խորհրդանիշն է: Ինչպես գիտենք, գահն իշխանություն կամ թագավորություն է նշանակում, իսկ իշխանությունը կամ թագավորությունը միայն թագավորն ինքն ու նրա գահը չեն, այլ նաեւ բոլոր հպատակները:

Ասելիքն այն է, թե այս հրեշտակն անոթի պարունակությունը դատարկեց Սատանայի հպատակների վրա:

Ասում է «… եւ նրա թագաւորութիւնը խաւար դարձաւ»: Ուշագրավ է, որ Գազանի թագավորությունը հարվածվում է խավարով: Խավարով հարվածը հիշեցնում է Եգիպտոսին հասած հարվածներից մեկը (Ելք 10:21-23). այդ խավարը թե՛ փարավոնին պատժելու համար էր եւ թե՛ նրա ժողովրդին: Աստված խավարի իշխանին ու նրա հետեւորդներին պատժում է խավարով:

Եգիպտոսին խավարով հարվածելը միաժամանակ երկու բան հայտնելու համար էր՝

1. Ցույց էր տալիս Եգիպտոսի չաստվածների վրա ճշմարիտ Աստծո ունեցած իշխանությունը, այլ խոսքով, ցույց էր տալիս, որ նրանք ոչնչություն են:

2. Սեփական ժողովրդին ցույց էր տալիս, թե ինչ է ճշմարիտ աստվածապաշտությունը:

Աշխարհի վախճանին Գազանի թագավորությանը խավարով հարվածելը եւս ցույց է տալիս, որ Գազանն անկարող է խավարի հարվածը կասեցնել. նաեւ կամենում է, որպեսզի աստվածապաշտներն իրենց ճանապարհի մեջ առավել ամրանան:

Թե որքա՞ն ժամանակ պիտի տեւի խավարը, չգիտենք, բայց խավարն անկասկած պետք է ժամանակավոր լինի:

«… Մարդիկ ցաւից իրենց լեզուներն էին կծոտում, իրենց ցաւից ու վէրքերի կսկիծից հայհոյում էին երկնքի Աստծուն, սակայն չապաշխարեցին իրենց գործերից» (հմր 10-11):

Ցավը կապված չէ խավարին: Հիշենք, որ դեռեւս նախորդ հարվածների ցավերը կան, եւ այժմ ավելացել են խավարի բերածները: Այստեղ եւս տեսնում ենք հարվածների ենթարկված մարդկանց անուղղելի ընթացքը: Ուղղվելու տրամադրություն ունեցողների համար ցավն այն նեղ դուռն է, որտեղից պետք է անցնել՝ Աստծո անդորրը գտնելու համար:

«Վեցերորդ հրեշտակն իր անօթը դատարկեց Եփրատ մեծ գետի վրայ, եւ ցամաքեցին նրա ջրերը, որպէսզի ճանապարհ պատրաստուի Արեւելքի թագաւորների համար» (հմր 12):

Ինչպես ակնարկել ենք, Արեւելքի եւ Արեւմուտքի թագավորությունների սահմանը՝ Եփրատը, Միջին Արեւելքի տարածքում Արեւելքի եւ Արեւմուտքի սահմանն էր. մեծ գետ լինելու պատճառով նույնիսկ մեծ բանակներն այդտեղով դժվար էին անցնում:

Այս համարում մեկ-երկու տարրեր կան, որոնք դժբախտաբար անորոշ են: Առաջինը «Արեւելքի թագավորներ»ն են: Ովքե՞ր են նրանք: Ոմանք փորձել են պատմական բացատրություն տալ՝ ասելով, որ սա վերաբերում է Հովհաննես առաքյալին ժամանակակից՝ Եփրատից այն կողմ գտնվող պարթեւ թագավորներին: Ըստ այս բացատրության՝ Աստված դեպի «Բաբելոն», այսինքն՝ Հռոմեական կայսրություն պարթեւների արշավանքի համար ճանապարհ է պատրաստում: Բայց այդ պատմական բացատրությունը ճիշտ չէ, որովհետեւ այստեղ պատկերվածը վերաբերում է վերջին ժամանակներին եւ մեզ հստակ ներկայացնում է (ինչպես պիտի ներկայացնի նաեւ 19-րդ գլխում) Աստծո ուժերի եւ Աստծուն ընդդիմացող չար աշխարհի բախումը: Ուրիշներն «Արեւելքի թագաւորներ» արտահայտության տակ տեսնում են ակնարկություն Արեւելքի այն պետություններին, որոնք թեպետ լսելու են Քրիստոսի մասին, սակայն չեն ընդունելու Նրան: Նրանք գնալու են Պաղեստին եւ Նեռի հետ պատերազմելու են Աստծո դեմ: Ոմանք էլ, հատկապես հին մեկնիչները, այս կապակցության տակ գլխավորաբար տեսնում են Նեռին ու նրան զինակցած թագավորներին: Մի խոսքով, այդ թագավորների ինքնությունը հստակ չէ, իսկ նպատակը ոչ թե երկրավոր թիրախ է, այլ հստակորեն պայքար է Աստծո եւ Նրա ուժերի դեմ:

«Եւ տեսայ, որ վիշապի բերանից, Գազանի բերանից եւ սուտ մարգարէի բերանից ելնում են գորտերի նման երեք անմաքուր ոգիներ: Դրանք դիւական ոգիներ էին, որոնք հրաշքներ էին գործում եւ

գնում էին աշխարհի բոլոր թագաւորների մօտ՝ պատերազմի հաւաքելու նրանց՝ Ամենակալ Տիրոջ մեծ օրուայ համար» (հմր 13-14):

Հին եւ Նոր Կտակարաններում նկատել ենք, որ անմաքուր ոգիները Չարի արբանյակներն են: Այստեղ հիշվող երեք ոգիները պատկերվում են որպես վիշապի, Գազանի եւ սուտ մարգարեի բերաններից դուրս եկող, այսինքն, իբր թե դրանց բերանը կամ խոսնակն են: Դրանք գորտի նման են, որովհետեւ գորտը ճահիճներում բնակվելու պատճառով համարվել է անմաքուր կենդանի:

Ընդհանրապես մարդկությունը, մասնավորաբար ներկա ժամանակում ապրողները շատ են կարեւորում երեւույթները: Այս երեք ոգիները մոլորության ցանցի մեջ են գցելու Երկրի բոլոր թագավորներին՝ նրանց միացնելու համար իրենց չար պայքարին:

«… Ամենակալ Տիրոջ մեծ օր»ը վստահաբար դատաստանի եւ վրեժխնդրության օրն է, որը 14-րդ գլխում նկարագրվեց հունձքի եւ այգեկութի պատկերով:

«Որովհետեւ Տէրն այսպէս ասաց. «Ահա գալիս եմ գողի նման: Երանի՜ նրանց, ովքեր արթուն են մնում եւ պահում են իրենց զգեստները, որպէսզի մերկ չշրջեն, եւ իրենց ամօթոյքը չերեւայ» » (հմր 15):

Մինչ չար ոգիներն իրենց գործունեությունն են ծավալում, Տերը՝ Քրիստոսը, Իր ընտրյալներին ազդարարություն է հղում, որ միեւնույն ժամանակ թե՛ երանի է եւ թե՛ արթնության կոչ: Քրիստոս այս աշխարհից Իր հեռանալու նախօրյակին աշակերտներին Գեթսեմանի տարավ եւ այնտեղ Իր սեփական մոտալուտ մահվան անձկության մեջ՝ նրանց պատվիրեց արթուն մնալ եւ աղոթել՝ փորձության մեջ չընկնելու համար: Այժմ Քրիստոս նույն կոչն է ուղղում Իր հետեւորդներին, որովհետեւ գալիս է մեծ փորձության պահը: Քրիստոս նաեւ հիշեցնում է Իր անակնկալ գալուստը: Հագուստները պահելու պատվերով ասվում է, թե պետք է պահել քրիստոնեական նկարագիրն ու հավատքը:

«Ապա ոգիները թագաւորներին հաւաքեցին մի տեղ, որը եբրայերէն կոչւում է Արմագեդոն» (հմր 16):

Այս անվան բացատրության վրա երկար-բարակ չեմ խոսի: Կան մի շարք պատմական իրադարձություններ՝ կապված Մակեդովի կամ Մեջիթոյի բլուր կոչվող բարձունքի հետ. Սամարիայում՝ ծովեզերքին մոտ, Կարմեղոս լեռան շարունակության վրա փոքրիկ բլուր էր, որի կատարին բերդաքաղաք կար:

Ինչո՞ւ է Աստծո դեմ վերջնական պատերազմը ներկայացվում այդ բերդաքաղաքի եւ նրա շրջակայքի անունով: Դա աշխարհագրական մի նեղ տարածք է: Բառացի ըմբռնումով՝ անհնար է, որ հիշյալ բոլոր թագավորներն իրենց զորքերով այնտեղ հավաքվեն, ուրեմն, ինչպես մեկնիչներն են ասում, պարզապես խորհրդանշական անուն է:

«Եօթերորդ հրեշտակն իր անօթի պարունակութիւնը թափեց օդի մէջ, եւ Երկնքի տաճարից ու գահից եկաւ բարձր մի ձայն, որ ասում էր. «Եղա՛ւ» » (հմր 17):

Աստծո կամքն ու ծրագիրն արդեն գրեթե իրականացել ու ամբողջացել են:

«… Անօթի պարունակութիւնը թափեց օդի մէջ»: Պողոս առաքյալը եփեսացիներին գրած նամակում «այս օդի իշխանությունը» Սատանայի իշխանություն է կոչում (Եփ 2:2): «Այս օդի» ասելով՝ առաքյալը նկատի ունի մեզ շրջապատող չարի ուժերը: Հրեշտակն իր անոթի պարունակությունն օդում դատարկելով՝ պարտության է մատնում Չարի ուժերը:

«Եւ ահա եղան փայլատակումներ, ձայներ ու որոտներ, եւ այնպիսի ուժեղ մի երկրաշարժ եղաւ, որի նմանը Երկրի վրայ չէր եղել մարդու ստեղծուելուց ի վեր. այդքան ուժեղ երկրաշարժ չէր պատահել» (հմր 18):

Եվ ինչպիսի՞ն էր երկրաշարժի հետեւանքը. «Մեծ քաղաքը երեք մասի բաժանուեց, եւ կործանուեցին բոլոր երկրների քաղաքները: Աստուած յիշեց մեծ Բաբելոնը եւ նրան տուեց Իր սաստիկ ցասման գինու բաժակից, որ խմի» (հմր 19):

Հարց է ծագում՝ ո՞րն է այդ մեծ քաղաքը: Դա Երուսաղեմն է, որը պետք է բաժանվի երեք մասի, այսինքն՝ կատարելապես պիտի քայքայվի, իսկ «մեծ Բաբելոնը» Աստծուն ընդդիմացող ամբողջ աշխարհն է, որ սոսկալի կործանման է ենթարկվելու:

«Բոլոր կղզիները կորան, եւ լեռները վերացան մէջտեղից» (հմր 20): Սա, ըստ ոմանց, վերաբերում է Չարի հետ պայքար մղելու համար հավաքված թագավորներին, սակայն նրանց զինակցությունը կխորտակվի:

«Երկնքից աներեւակայելի մեծութեամբ կարկուտ տեղաց մարդկանց վրայ: Եւ մարդիկ հայհոյեցին Աստծուն՝ տեղացող այդ կարկուտի պատուհասի համար, քանի որ պատուհասն ահաւոր էր եւ սաստիկ» (հմր 21:

Այս կարկուտը հիշեցնում է Եգիպտոսի վրա իջած հարվածներից մեկը, որին նաեւ կարկուտ էր խառնված (տե՛ս Ելք 9:13-26):

ԺԷ-ԺԸ ԳԼՈՒԽ

Պետք է փորձենք Հայտնության գրքի այս գլուխները նրանց ընդհանուր պատկերով տեսնել:

Մի քանի խոսքով անդրադառնանք յուրաքանչյուր գլխի բովանդակությանն ու կառուցվածքին:

Այս գլուխները ներկայացնում են Աստծուն անհավատարիմ իշխանությունների խորտակումը:

Սրանից առաջ տեսանք, որ երկու անգամ հայտարարվեց կամ նախաձայնվեց Բաբելոնի անկումը: Բայց հիմա է հասել նրա անկման ժամը: Դա 17-րդ եւ 18-րդ գլուխների մասին զգուշացնող առաջին խոսքն է: Երկու գլուխներն էլ ներկայացնում են «Բաբելոն»ը, որը 17-րդ գլխում անվանվում է «Մեծ պոռնիկը»:

Արդյոք երկու գլուխներն էլ նո՞ւյն բանն են ներկայացնում: Ըստ իս, ներկայացվածը նույն իրականության երկու տարբեր կողմերն են: 17-րդ գլուխը վերաբերում է «Մեծ պոռնիկի» սպանությանը, իսկ 18-րդը՝ Բաբելոնի անկմանը: Սրանք մեզ թելադրում են, որ գտնվում ենք երկու տարբեր երեւույթների առջեւ: 17-րդ գլուխն ավելի շատ վերաբերում է կրոնական համաշխարհային մի դրության, իսկ 18-րդ գլուխը՝ ավելի շատ քաղաքական եւ տնտեսական համաշխարհային դրության:

ԺԷ ԳԼՈՒԽ

ՊՈՌՆԻԿ ԿԻՆԸ (17:1-18)

«Եօթ անօթներ ունեցող հրեշտակներից մէկը եկաւ ինձ մօտ, խօսեց ինձ հետ եւ ասաց.

– Եկ այստեղ, եւ ես ցոյց կտամ քեզ այն դատապարտութիւնը, որին պիտի ենթարկեմ հռչակաւոր պոռնիկին, այն քաղաքը, որ նստում է շատ ջրերի վրայ: Երկրի թագաւորները պոռնկութիւն արեցին նրա հետ, եւ նրա պոռնկութեան գինուց հարբեցին Երկրի բնակիչները» (հմր 1-2):

Հատկապես Հին Կտակարանում պոռնկությունն Աստծուն անհավատարմության, Նրան ուրանալու կամ հերքելու խորհրդանիշ է եւ ընկալվել է որպես սուտ կրոն: Այս համարները մեզ հիշեցնում են, որ աշխարհը իր բոլոր ղեկավարներով ու ժողովուրդներով Աստծո հանդեպ անհավատարիմ եղավ, ուրացավ ու հերքեց Նրան: Ոմանք էլ ճշմարիտ ու միակ Աստծո կողքին ունեցան այլ աստվածություններ կամ կուռքեր եւ փորձեցին ճշմարիտ հավատքի ու հեթանոսության միջեւ հաշտության եզր ստեղծել եւ այդպես իրենք իրենց օտարացրին Աստծուց:

«Հրեշտակը հոգով վերցրեց ինձ, տարաւ անապատ. այնտեղ տեսայ մի կնոջ, որ նստել էր մի կարմիր գազանի վրայ, որը ծածկուած էր հայհոյալից անուններով: Եւ այդ գազանը, որին տեսայ, ունէր եօթ գլուխ եւ տասը եղջիւր» (հմր 3):

Հրեշտակը նրան բարձրացնելով (սա հոգով լցվելու կամ հոգով փոխադրվելու հետ կապ չունի)՝ տանում է անապատ, որպեսզի ցույց տա դատապարտությունը: Ըստ ամբողջ գլխի բացատրության՝ «Կարմիր գազան»ը այն նույն առաջին գազանն է կամ Նեռը: Այստեղ նա ներկայացվում է կարմիր հագուստով՝ հավանաբար խորհրդանշորեն ակնարկելու այն արյունը, որ նա հեղեց՝ կոտորելով անմեղներին:

«Կինը հագել էր ծիրանի ու կարմիր հագուստ եւ զարդարուած էր ոսկով, մարգարիտներով եւ թանկարժէք քարերով: Ձեռքին ունէր ոսկէ բաժակ, որը լեցուն էր գարշելի բաներով, պոռնկութեան պղծութիւններով» (հմր 4):

Կնոջ ամբողջ հանդերձանքը կարող ենք կոչել «կայսերական»: Իզուր չէ, որ անցյալի բոլոր մեկնիչներն էլ այս պատկերի մեջ տեսել են Հռոմեական կայսրությունը կամ նրան խորհրդանշող մայրաքաղաքը՝ Հռոմը, որ շքեղ էր եւ պճնված:

«Բաժակ»ի հունարեն տարբերակը (փոթերիոն) կրոնական նշանակություն ունեցող բառ է, առհասարակ գործածվում է քրիստոնեական շրջանակներում՝ ծառայելով որպես Սուրբ Հաղորդության բաժակ, իսկ հրեական շրջանակներում կիրառվում էր Տիրոջ տաճարում գործածվող բաժակների համար՝ դրանցով Տիրոջ Սեղանին հեղուկ ընծաներ հեղելու համար: Հետեւաբար այս կինն անձնավորում է կրոնական դրություն: Գավաթի բովանդակությունը եւս այդ մասին ասելիք ունի: «Գարշելի բաներ»ը եւ «պոռնկութեան պղծութիւններ»ը գավաթի բովանդակությունն են: Հին Կտակարան կարդացած եւ հատկապես նրա բառապաշարին ծանոթ մարդը գիտի, որ «գարշելի» բառը այնքան շատ չի գործածվել որպես ածական, որքան՝ որպես գոյական: Հրեաները «գարշելիք» բառը գործածում էին կուռքերի համար: Նույն սկզբունքով՝ Աստծո անունը չգործածելու կամ այն շատ գործածելուց խուսափելու համար հաճախ այլ անուններ էին տալիս. օրինակ՝ «երկինք» կամ «Տեր»: Նույնպես եւ կուռքերի անունը հաճախակի չարտասանելու համար արհամարհական բառ էին գործածում՝ «գարշելիներ»: Հետեւաբար, երբ այստեղ բաժակի բովանդակության համար ասում է, թե գարշելիներով լեցուն է, ուզում է շեշտել, որ լի է կռապաշտությամբ:

«Պոռնկութեան պղծութիւններ»ը արտահայտությունը կրոնական այլասերում եւ Աստծո հանդեպ անհավատարմություն է թելադրում:

«Նրա ճակատին գրուած էր խորհրդաւոր մի անուն. «Մեծ Բաբելոն՝ մայր պոռնիկների եւ Երկրի գարշելիների» » (հմր 5):

Ըստ մի մեկնիչի՝ հնում Հռոմում սովորութիւն կար, որ անբարո կանայք կամ պոռնիկներն իրենց ճակատին կրում էին մի նշան, որ հայտնում էր նրանց պոռնիկ լինելը: Հիշենք այս օրինակը, երբ հրեշտակը ներկայացնում է «Մեծ Բաբելոն»ը, որի ճակատին գրված էր նրա պոռնիկ լինելը:

«Տեսայ, որ այդ կինը հարբած էր Աստուծոյ ընտրեալների եւ Յիսուսի վկաների արիւնից» (հմր 6):

«Արիւնից հարբել» արտահայտությունը նշանակում է, թե «կին»ն արյունահեղությունից հաճույք էր ստանում:

«Երբ տեսայ նրան, շատ զարմացայ: Հրեշտակն ինձ ասաց.

– Ինչո՞ւ զարմացար, ես քեզ կասեմ իմաստն այդ կնոջ եւ նրան կրող գազանի, որն ունի եօթ գլուխ ու տասը եղջիւր» (հմր 6-7):

Հավանաբար զարմանքի պատճառը կնոջ տեսքը եւ բոլոր ազգերի ու ժողովուրդների վրա նրա ունեցած մեծ ազդեցությունն է. կարծեք մի անպարտելի ուժ է: Նրա ճակատին գրված անունը ոչ միայն նրա ինքնությունն է ցույց տալիս, այլեւ մի տեսակ դատապարտության գիր է:

«Այն գազանը, որին տեսար, ապրում էր, բայց այլեւս չէր ապրում: Նա նորից կելնի անդունդից՝ դեպի կորուստ գնալու համար: Բոլոր նրանք, որ ապրում են Երկրի վրայ, եւ նրանց անուններն աշխարհի սկզբից գրված չէին Կեանքի գրքում, կզարմանան՝ տեսնելով գազանին, որ ապրում էր, բայց այլեւս չի ապրում, եւ սակայն մոտ է վերստին յայտնուելու» (հմր 8):

Տեսե՛ք, որ երկու անգամ էլ գազանի համար նույն բացատրությունն է գործածվում: Ասվում է «ապրում էր, բայց այլեւս չի ապրում», եւ թե կրկին պիտի հայտնվի: Բնագրում այս անունը մի քիչ հանելուկային է, բայց ավելի մոտ է մեր ասելիքին: Ուստի ուզում եմ հիշեցնել՝ բնագիրը մեզ ասում է. «Այն գազանը, որին տեսար, ապրում էր, բայց այլեւս չի ապրում: Նա նորից կելնի անդունդից»: Ինչո՞ւ եմ ցանկանում բնագրային ձեւով հիշեցնել, որովհետեւ այս ձեւով մեզ հիշեցնում է մի ուրիշ անուն՝ Աստծո անունը՝ «Նա որ էր, որ է եւ որ պիտի գայ»: Գազանին տրված անունը ճիշտ դրա ժխտական ձեւն է: Մեկ

ուրիշ անգամ ասացի, որ այս գազանը ներկայանում է որպես Քրիստոսի հակատիպ: Սա Նեռն է կամ սուտ քրիստոսը, որը փորձում է իր վրա վերցնել Քրիստոսի թե՛ պաշտոնը, թե՛ անունները: Այստեղ տեսնում ենք, որ վերցնում է Քրիստոսի անունը: Այս անունը ցույց է տալիս, որ նա Աստված չէ եւ չի կարող լինել. մինչդեռ Քրիստոսին տրված «Նա որ էր, որ է եւ պիտի գայ» անվանումը ցույց է տալիս Նրա հավիտենականությունը:

Այս համարի առիթով տրվել է պատմական հետեւյալ բացատրությունը. 68 թվականին Ներոն կայսրն ինքնասպան եղավ, սակայն անձնասպանությունից հետո ժողովրդի մեջ տակավին շշուկներ էին շրջում, թե նա ողջ է: Նրա ստեղծած սարսափը վերածվեց առասպելի: Նրան հաջորդած կայսրերը շարունակեցին ներոնական ոգով կոտորել քրիստոնյաներին: Մինչեւ առաջին դարավերջ, այսինքն՝ մինչեւ Հովհաննես առաքյալի վախճանի օրերը, երբ արդեն Դոմետիանոսն էր կայսրը, տիրում էր այն հավատալիքը, թե Ներոնին հաջորդած կայսրերը Ներոնի վերակենդանացումն էին: Յուրաքանչյուր կայսր կարծեք մի նոր Ներոն էր:

«Ահա այստեղ է, որ պետք է իմաստութիւն ունեցող միտք ունենալ» (հմր 9),– ասում է հրեշտակը եւ անցնում մանրամասնություններին. «Եօթ գլուխները եօթ լեռն են, որոնց վրայ նստած է կինը: Նրանք միաժամանակ եօթ թագաւորներ են» (հմր 9):

«Յոթ լեռներ»ն է առավել եւս պատճառ եղել, որ պատմական բացատրություն փնտրողները նրան նույնացնեն Հռոմ քաղաքի հետ, որը կառուցված էր յոթ բլուրների վրա եւ այդ պատճառով հայտնի էր նաեւ «յոթ բլուրների քաղաք» անվանումով: Սակայն Հայտնության գրքի պատգամն անցյալի իրականությանը չի պատկանում: «Յոթ լեռներ»ը, որոնց վրա նստած էր «պոռնիկ կին»ը, խորհրդանշում է ապագա տերությունների եւ դրանց ենթակա ժողովուրդների անհավատարմությունն Աստծո հանդեպ:

«Այս եօթ թագաւորներից հինգն ընկան, մէկն այժմ ապրում է, իսկ միւսը դեռ չի եկել: Երբ գայ, կիշխի միայն կարճ ժամանակ» (հմր 10):

Այստեղ ունենք մի ծածկաբանություն, որը բազում մեկնությունների առիթ է տվել: Շատերն են փորձել լուծել այս հանելուկը՝ որոնք են այս յոթ թագավորները, որոնցից հինգն անցել գնացել են, վեցերորդն ապրում է, իսկ յոթերորդը պիտի գա՝ մի կարճ ժամանակ իշխելու համար: Երկու համար հետո տեսնելու ենք, որ ութերորդն էլ է ավելանալու: Ոմանք փորձել են կայսրերի անուններ գտնել (ես առայժմ անուններ չեմ թվարկի)՝ պարզապես ասելու համար, թե հավանաբար ակնարկվում են քրիստոնյաներին հալածած կայսրերը, որոնց շարքում է Դոմետիանոս Զ-ը, եւ որից հետո գալիքը մնում է անորոշ. ենթադրել են, թե եկողը Նեռն է լինելու: Բայց եթե Նեռին պատմական բացատրություն ենք տալու, ապա պետք է փնտրենք պատմական անձ կամ տերություն, որի հետ նա կնույնանա:

Պատմական մեկնություն տվողները փորձել են բազմաթիվ բացատրություններ առաջարկել. յոթերորդի համար հավանական են համարել Բյուզանդական կայսրությունը, Արաբական կայսրությունը, Պապական իշխանությունը, մինչեւ իսկ՝ նորագույն ժամանակների պետություններ: Ուրիշներն այս յոթ թագավորների մեջ ցանկանում են տեսնել ոչ միայն անցյալի, այլեւ ներկայի իրարահաջորդ յոթ կայսրություններ:

Մեզ համար ամենակարեւոր հայացքը վախճանաբանականն է, այսինքն՝ այն հայացքը, որ այս խոսքերի միջից է դիտում գալիքը եւ վախճանական ժամանակը:

Այս յոթ թագավորները ներկայացվում են որպես գազանի յոթ գլուխներ, ինչը ցույց է տալիս, թե նույն գազանի իշխանության տարբեր արտահայտություններն են: Գազանն իր գործունեությունը մի տեղում չի ծավալում, այլ ամենուր, ինչպես կարող է թելադրել «յոթ» խորհրդանշական թիվը: Նա աշխարհի վերջին օրերում բոլոր տերություններին պարտադրելու է իր կամքը:

«Եւ այն գազանը, որ ապրում էր, բայց այլեւս չի ապրում, ութերորդ թագաւորն է, որ առաջին եօթից մէկն է եւ դէպի կորուստն է գնում» (հմր 11):

Եթե համարենք, որ այս թագավորները Գազանի հետ կապ չունեցող, նրանից անկախ թագավորներ են, ապա ողջ պատկերը մեզ անհասկանալի կմնա: Գազանի պատկերում չկա ութերորդ գլուխ: Իսկ որտեղի՞ց է այս ութերորդ թագավորը:

Իրավամբ հանելուկի առջեւ ենք կանգնած, սակայն այս թագավորների ինքնության հանելուկը դեռ լուծած չլինելով հանդերձ՝ կարող ենք վստահորեն ասել, որ նրանք բոլորն էլ Գազանի հայտնություններն են: Եթե ընդունենք, որ յոթ թագավորություններն աշխարհի բոլոր իշխանություններն են, ապա ութերորդը կվերաբերի աշխարհի բոլոր իշխանությունների վախճանից հետո գալիք չար իշխանությանը: Ութերորդը լինելու է մի զորություն, որի ներքո համախմբվելու են Երկրի վրա եղող այլ իշխանություններ՝ դառնալով նրա զինակիցը:

Հենց այդ զինակցությանն է ակնարկում 12-րդ համարը, երբ խոսում է եղջյուրների մասին. «Այն տասը եղջիւրները, որ տեսար, տասը թագաւորներն են, որոնք դեռեւս չեն թագաւորում, բայց իշխանութիւն կստանան եւ մէկ ժամով կթագաւորեն Գազանի հետ» (հմր 12):

Այս տասը չեն նույնանում Գազանի հետ: Սրանք աշխարհի տարբեր իշխանություններն են, այսինքն՝ գալիքի բոլոր իշխանությունները, որոնք կատարելու են Գազանի կամքը: Գազանի մարմնի վրա սրանց որպես եղջիւր ներկայանալը ցույց է տալիս, որ Գազանի ասածներով են շարժվելու:

«Նրանք միակամ են եւ իրենց զօրութիւնն ու իշխանութիւնը տալիս են Գազանին» (հմր 13):

Ուրեմն նրանք, հանուն իրենց շահերի, միակամ են եւ ամբողջովին հանձնվել են Գազանին:

«Նրանք պատերազմելու են Գառան դէմ, բայց Գառը յաղթելու է նրանց, որովհետեւ Ինքն է տէրերի Տէրը եւ թագաւորների Թագաւորը. Նրա կողքին պատերազմողները կանչուածներն են, ընտրեալները եւ հաւատարիմները» (հմր 14):

Այժմվանից արդեն ներկայացվում է պատերազմի ելքը: Մյուս կողմից նշանակալից է Գառանը տրվող անունը, որին հանդիպելու ենք նաեւ 19-րդ գլխում. Նա «տէրերի Տէրը եւ թագաւորների Թագաւորն» է: Այս անունն առաջին հերթին ցույց է տալիս Գառան Տեր եւ Թագավոր լինելը, Ում զորությանը ենթակա են աշխարհի բոլոր տերերն ու թագավորները՝ Նրան ճանաչեն թե՞ ոչ, ընդունեն թե՞ ոչ: Աշխարհը երեւութապես ենթակա է Սատանային եւ չար իշխաններին, սակայն Աստվածաշունչը շեշտում է, որ իրականում աշխարհը ենթակա է Աստծո կամքին:

Կարեւոր եւ նշանակալից է այս անունը, որովհետեւ Հին Կտակարանում Հայր Աստծուն տրված անունն է: Ուրեմն այս տիտղոսի գործածությունը թե՛ Հայր Աստծո եւ թե՛ Քրիստոսի համար նշանակում է, որ Նրանք համապատիվ եւ հավասար են, հետեւաբար Քրիստոս կամ Գառն Աստված է:

«… Իր կողքին պատերազմողները կանչուածներն են, ընտրեալները եւ հաւատարիմները»: Այս համարը կարեւորվում է մեկից ավելի իմաստներով: Նախ՝ ցույց է տալիս, որ Գառն Իր մղած պատերազմում միայնակ չէ: Չեմ հարցնում՝ Նա ուրիշների օգնության կարիքն ունի՞, թե՞ ոչ: Դա չէ կարեւորը: Կարեւորն այն է, որ թե՛ այստեղ եւ թե՛ 19-րդ գլխում Նրա կողքին, որպես բանակ, ներկայանում են թե՛ հրեշտակները եւ թե՛ Աստծո ընտրյալներն ու հավատարիմները:

Գառան կողքին պատերազմողներին թվարկելու համար գործածվել են երեք բառեր՝

1. **Կանչվածներ**. մենք գիտենք, որ Աստծո խոսքն ուղղված է բոլորին: Բոլոր մարդիկ կանչվածներ են, սակայն բոլորը չեն, որ ունկնդրում են Աստծո խոսքը, ուստի բոլորը չէ, որ ընդառաջում են այդ խոսքով հղված հրավերին:

2. **Ընտրվածներ**. ընտրվածները կանչվածներից նրանք են, ովքեր լսում են Աստծո խոսքը, եւ քանի որ նրանց հոգին պարարտ հողի նման է, ուստի Աստծո խոսքն այնտեղ աճում ու բազում պտուղներ է տալիս՝ ըստ Սերմնացանի առակի հավաստման:

3. **Հավատարիմներ**. այստեղ ի՞նչ կարեւորություն ունի այս բառը: Տեսանք, որ Հայտնության գիրքը գրվել է մի ժամանակ, երբ եկեղեցիները հալածանքի էին ենթարկվում: Հալածանքի ժամանակ կանչված լինելը բավարար չէ: Ընտրված լինելը նույնպես դեռ բավարար չէ: Ամենակարեւորն ընտրված լինելն անեղծ կամ հավատարմությամբ պահպանելն է:

Այս համարում՝ Չարի դեմ պայքարող Եկեղեցին երկնավոր Եկեղեցին չէ, այլ Երկրի վրա գտնվող ու գործող Եկեղեցին է: Մենք Եկեղեցին հաճախ պատկերացնում ենք կրավորական վիճակի մեջ, բայց գոյություն ունի չար աշխարհը, որում ապրում ենք եւ որի դեմ կարծեք շատ անելիքներ չունենք: Կարծեք դատապարտված ենք ձեռնպահ մնալու: Սակայն քանի դեռ կանչվածները, ընտրյալներն ու հավատարիմները պատկերվում են Քրիստոսի կողքին, ուստի նրանք Քրիստոսի հետ նույն պայքարը պիտի մղեն Երկրի վրա, որպեսզի հաղթանակի Աստծո դատը, որպեսզի Աստծո կողքին նրանք եւս հաղթանակեն: Այդ պատերազմը երբեմն տեսանելի է, բայց երբեմն էլ՝ անտեսանելի: Մենք ոգեղեն աշխարհի դեմ պատերազմը նյութեղեն զենքերով չենք մղելու: Բայց որպեսզի կարողանանք այդ պատերազմում հաղթել, պետք է սպառազինվենք Աստծով. սրով եւ զենքով չէ, որ պիտի պատերազմենք, այլ՝ մեզ անընկճելի դարձնող կամքով ու նվիրումով, հավատով ու տոկուն հույսով եւ այդ բոլորը միացնող քրիստոնեական սիրով:

«Հրեշտակն ինձ նաեւ ասաց.

– Այս ջրերը, որ տեսնում ես, եւ որտեղ նստած է պոռնիկը, ժողովուրդներն են, բազմութիւնները, ազգերն ու լեզուները» (հմր 15):

Այս ժողովուրդները, բազմությունները, ազգերն ու լեզուները նրանք են, որոնք գազանին են տվել իրենց հավատարմությունն ու ենթարկվել նրան:

«Եւ գազանի տասը եղջիւրները, որ տեսար, կատեն պոռնիկին, կամայացնեն նրան ու կը մերկացնեն, կուտեն նրա մսերը եւ մնացորդը կայրեն կրակով» (հմր 16):

Այստեղ անակնկալ կա. այս կինը ներկայացվում էր որպես Գազանի եւ տասը թագավորների ամբողջական զինակից, ուստի ինչպե՞ս են նրանք օրերից մի օր իրենց զինակցի դեմ դուրս գալու:

Ասացինք, որ այս կինը ներկայացնում է Աստծուն անհավատարիմ կրոնական դրություն: Գազանը, որ կրոնական ոչ մի հավատալիք չունի, ինչպես Պողոս առաքյալն է ասում թեսաղոնիկեցիներին գրած Բ թղթի 2-րդ գլխի 4-րդ համարում, ընդդիմանալու է աստված կոչվող երկրորդ եւ մարդկանցից պաշտվող ինչ-որ բանի: Նա մինչեւ իսկ պիտի նստի Աստծո տաճարում եւ ինքն իրեն աստված հայտարարի: Կգա մի ժամանակ, երբ Գազանն ու նրա զինակիցները հանուն իրենց շահի պիտի հրաժարվեն սուտ կրոնից: Մինչ այդ, իրենց դիրքն ամրապնդելու համար, նրանք պիտի շահագործեն պոռնիկին, իսկ երբ հասնեն իրենց նպատակին, նրան կվերացնեն:

«Որովհետեւ Աստուած այս բանը դրեց նրանց մտքում, որ կատարեն նրա կամքը, այսինքն՝ լինեն միակամ եւ իրենց թագաւորութիւնը տան Գազանին, մինչեւ որ իրականանան Աստուծոյ խօսքերը» (հմր 17):

Աստված նույնիսկ Իրեն չընդունողների գերիշխան Թագավորն է: Աստված չի ցանկանում պարտադրել Իր կամքը: Այստեղ մեզ հայտնվում է, որ Աստված Իր կամքը պարտադրում է միայն Իր հակառակորդներին: Նա աշխարհը ծառայեցնում է Իր ծրագրին:

«Եւ այն կինը, որին տեսար, մեծ քաղաքն է, որ թագաւորում է երկրի թագաւորների վրայ» (հմր 18):

18-րդ համարը սերտված չէ:

ԺԸ ԳԼՈՒԽ

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՆԿՈՒՄԸ (18:1-24)

«Այնուհետեւ տեսայ մի ուրիշ հրեշտակի, որ իջնում էր երկնքից. նա ունէր մեծ իշխանութիւն, եւ նրա փառքից Երկիրը լուսաւորուեց: Հրեշտակը հզօր ձայնով աղաղակեց. «Ընկա՛ւ, ընկա՛ւ մեծ Բաբելոնը եւ դարձաւ բնակավայր դեւերի ու արգելանոց՝ ամէն տեսակի պիղծ ոգիների. բանտ եղաւ բոլոր անմաքուր թռչունների եւ անմաքուր ու ատելի գազանների համար» » (հմր 1-2):

Հայտնության գրքի 14-րդ գլխում ավետվում էր Բաբելոնի դատապարտվելն ավերման եւ կործանման: Այստեղ նույնն է հայտարարվում, սակայն Բաբելոնի դատապարտությունը միայն նրա ավերումն ու կործանումը չեն, այլ նաեւ դեւերի բնակավայր, ամեն տեսակ պիղծ ոգիների արգելարան, բոլոր անմաքուր թռչունների եւ անմաքուր ու ատելի գազանների բանտ դառնալը:

«Քանզի նրա պոռնկութեան թունդ գինուց հարբեցին բոլոր ազգերը, եւ Երկրի թագաւորները պոռնկութիւն արեցին նրա հետ. նրա անչափ զեխութիւնից այս աշխարհի վաճառականներն անհամեմատ հարստացան» (հմր 3):

Այստեղ ներկայացվում է Բաբելոնի անկման պատճառը:

«Ապա երկնքից լսեցի մի ուրիշ ձայն, որ ասում էր. «Դո՛ւրս ելէք այդ քաղաքից, ո՛վ Իմ ժողովուրդ, որպէսզի չլինի, թէ մասնակից լինէք նրա մեղքերին, որպէսզի չլինի, թէ դուք էլ ընդունէք նրա պատիժը. քանզի նրա մեղքերը դիզուեցին մինչեւ երկինք. Աստուած յիշեց նրա ամբարիշտ գործերը» (հմր 4-5):

Սա Աստծո ձայնն է: Այս կոչը փոխառություն է Երեմիայի մարգարեությունից. «Փախէ՛ք Բաբելոնի միջից. թող ամէն մէկն իրեն փրկի, որպէսզի չկործանուէք նրա անիրաւութիւնների պատճառով, քանզի հասել է ժամանակը,երբ Տէրը նրանից վրէժխնդիր է լինելու, Ինքն է հատուցելու նրա պատիժը: Բաբելոնը Տիրոջ ձեռքին ոսկի բաժակ է,

որն իր գինուց արբեցնում է ամբողջ Երկիրը. խմեցին հեթանոսները, դրա համար էլ շարժուեցին ազգերը, եւ Բաբելոնը յանկարծակի ընկաւ ու փշրուեց:

Ողբացէ՛ք նրա վրայ, նրա վէրքերին դե՛ղ արէք. թերեւս բժշկուի: Բժշկեցինք Բաբելոնին, բայց նա չբժշկուեց, թողնենք նրան եւ իւրաքանչիւրս գնանք մեր երկիրը, որովհետեւ նրա դատաստանը մինչեւ երկինք հասաւ, բարձրացաւ մինչեւ աստղերը» (Եր 51:6-9):

Այստեղ ուղղակի կապ կա նաեւ յուրայիններին Քրիստոսի հղած այն հորդորի հետ, երբ Երուսաղեմի կործանման մասին խոսելով՝ ասաց. «Այն ժամանակ, ովքեր Հրեաստանում են, թող փախչեն լեռները, ով տանիքի վրայ է, ցած իջնելուց յետոյ թող տուն չմտնի՝ մի բան վերցնելու համար, եւ ով դաշտում է, թող յետ չդառնայ՝ իր վերարկուն վերցնելու համար» (Մտ 24:16-18, Մր 13:14-16, Ղկ 21:21):

Հայտնության գիրքն այս մեջբերումներով ներկայացնում է վախճանաբանության իրականացումը:

Սակայն «դուրս ելէ՛ք այդ քաղաքից» հրահանգը բառացի չպետք է հասկանալ. խոսքը պարզապես քաղաքից դուրս գալու մասին չէ: Ինչպես հաճախ ասացի, այստեղ Բաբելոնը քաղաք չի նշանակում, այլ մի ամբողջ իրադրության՝ չար աշխարհի խորհրդանիշն է: Ըստ էության, այստեղ ասվում է, թե Աստծո կոչին ունկնդիր մարդը պետք է իր վրայից թոթափի այն ազդեցությունները, որ չար աշխարհը կարող է թողնել նրա վրա: Աստծուն հավատարիմ մարդը պետք է դուրս գա Չարի ազդեցություններից եւ չդառնա նրա պղծությունների բաժնեկիցն ու գործակիցը, որպեսզի նրա ճակատագրին չարժանանա:

Ի վերջո, այս կոչը միայն ազդարարություն չէ Աստծո ժողովրդին, այլեւ՝ հատկապես փրկության ավետիս. Բաբելոնից դուրս գալն Աստծո ժողովրդի ազատագրությունն է:

«Արդ, դո՛ւք էլ հատուցէք Բաբելոնին, ինչպէս նա վարուեց ձեզ հետ՝ կրկնապատիկը նրան տալով իր գործերի փոխարէն: Այն բաժակը, որ պատրաստեց մեզ համար, լցրէ՛ք կրկնապատիկ սաստկութեամբ» (հմր 6):

Աստծո ժողովրդին ուղղված երկրորդ կոչ է սա, որ հրամայում է ի գործ դնել Աստծո վրեժխնդրությունն ու դատապարտությունը: Մի

շարք մեկնիչներ ասում են, թե այս խոսքերը շատ դաժան են, ուստի անհնար է հաշտեցնել քրիստոնեական ներողամտության ոգու հետ: Թշնամիներին ներել ուսուցանած Սիրո Վարդապետը ինչպե՞ս կարող է այսպիսի բաներ ասել: Բայց չպետք է մոռանալ, որ այստեղ խոսքն Աստծո վերջնական դատաստանի մասին է, հետեւաբար խոսքի շրջագիծն ամբողջությամբ տարբեր է: Հարկավոր չէ խոսքն անջատել իր շրջագծից եւ վերածելով ընդհանուր գաղափարի՝ այդ կերպ քննարկել: Աստծո այս կոչը բնավ նպատակ չունի անձնական վրեժխնդրության մղել մարդկանց. Աստծո նպատակը մարդուն ոխակալության, քինախնդրության կամ վրեժխնդրության մղելը չէ: Այս հարցին անդրադարձա 16-րդ գլխում, երբ խոսեցի փոխհատուցման սկզբունքի մասին: Աստծո օրենքի կիրարկումն անխուսափելի է: Բայց ո՞վ է կիրարկելու: Դատավորն Աստված է, սակայն երբ դատավորը հանցանքի համար դատապարտության վճիռ է արձակում, միթե ինքը հանցավո՞ր է: Մենք կարո՞ղ ենք մեղադրել դատավորին, որ կատարված հանցանքի համարժեք պատիժ է որոշում:

Այս համարը մեզ հուշում է, որ Աստծո ժողովուրդը նույնպես կոչված է Աստծո հետ դատավոր լինելու: Հիշենք Քրիստոսի խոսքերից մեկը. «Երկրորդ գալստեան, երբ Մարդու Որդին բազմի Իր փառքի աթոռին, դուք էլ, որ հետեւեցիք Ինձ, պիտի բազմէք տասներկու գահերի վրայ՝ դատելու Իսրայէլի տասներկու ցեղերին» (Մտ 19:28):

Պողոս առաքյալը, անդրադառնալով Եկեղեցու ներքին վեճերին եւ դրանք լուծելու համար հեթանոս իշխանությունների դիմելու երեւույթը համարելով անընդունելի, հանդիմանում եւ ասում է. «Միթէ չգիտէ՞ք, թէ Աստուծոյ ժողովուրդն է դատելու աշխարհը: Եւ եթէ դուք էք դատելու աշխարհը, ապա ինչպէ՞ս է լինում, որ մի չնչին դատ անգամ չէք կարող տեսնել: Չգիտէ՞ք, թէ հրեշտակներին իսկ մենք ենք դատելու, էլ ո՛ւր մնաց՝ այս աշխարհի խնդիրները» (Ա Կր 6:2-3):

Աստծո ժողովուրդը կոչված է կատարելու դատավորի այդ պաշտոնը: Եվ եթե երբեւէ ընտրյալներն Աստծո վերջնական դատաստանին ներկայանան Գառան կամ Դատավորի հետ, ապա բոլորը միասին կկատարեն դատավորի իրենց դերը: Հետեւաբար, միանալով այդ դատաստանին, դառնալով Աստծո կամակից, կիսելով Աստ-

ծո դատավճիռը՝ երբեք հակաքրիստոնեական կամ ոչ-ներողամիտ մարդու անուն չենք ստանա: Այս կերպ նրանք պարզապես կդառնան Աստծո արդար դատաստանի կամակիցներ: Աստված ցանկանում է, որ Իր ժողովուրդն անմասն ու անտարբեր չմնա արդարության եւ Նրա պահանջի հանդեպ:

«Որչափ որ նա փառաւորեց ինքն իրեն եւ ապրեց զեխութեամբ՝ նոյնչափ նրան սուգ հատուցէք ու տանջանք, քանի որ նա ասում էր իր մտքում. «Միշտ թագուհի եմ մնալու, ես այրի չեմ եւ բնաւ սուգ չեմ տեսնելու» » (հմր 7):

Այստեղ շեշտվում է նախորդ միտքը, որովհետեւ Բաբելոնը փառավորեց իրեն եւ ապրեց զեխությամբ: Ուստի՝ այդ փառքի եւ զեխության համապատասխան էլ՝ Նա սգով եւ տանջանքով պիտի հատուցի, եւ նա, որ ուզում էր իրեն աշխարհի թագուհի դարձնել, ընդհակառակը, ենթարկվելու է սգի ու տանջանքի:

«Դրա համար մէկ օրուայ մէջ նրա վրայ պատուհասներ պիտի գան՝ թէ՛ մահ, թէ՛ սուգ եւ թէ՛ սով. նա պիտի այրուի՛ կրակով, քանի որ հզօր է Տէր Աստուածը, որ դատում է նրան» (հմր 8):

Չպետք է խաբվել երեւույթներից: Աստված Ինքն է տիրապետում Երկրի վրա եւ ուզած ժամանակ կարող է Իր դատավճիռն արձակել: Վերհիշենք Պետրոս առաքյալի բացատրությունը. նա հիշեցնում է, որ եթե Աստված այժմ ցույց չի տալիս Իր զորությունը եւ անմիջապես չի միջամտում աշխարհի ու մարդկանց գործերին, նշանակում է, թե Նա դեռ համբերում է եւ սպասում մեղավոր մարդու դարձին (Բ Պտ 3:9):

«Աշխարհի թագաւորները, որոնք պոռնկութիւն արեցին նրա հետ եւ զուարճացան, կողբան, լաց ու կոծ կանեն, երբ տեսնեն նրա հրկիզման ծուխը» (հմր 9):

Այս համարով սկսվում է դատաստանի պատկերի գլխավոր մասը. երեք խմբերը՝ թագավորները, վաճառականներն ու նավավարները, ողբում են Բաբելոնի անկումը:

Հին ժողովուրդների մեջ ընդհանրացած էր ողբասացությունը, որը, բարեբախտաբար, մեր օրերում հետզհետե անհետանում է: Ողբասացությունը պահանջված արարողություն էր, ժողովրդական ծես: Մեռելների վրա ողբում էին թե՛ ծանոթները եւ թե՛ ի պաշտոնե ողբացող մարդիկ, մանավանդ՝ կանայք. ողբագին բառեր էին հյուսում, երբեմն էլ՝ բառերին համապատասխան եղանակ էին հորինում կամ բառերն էին պատշաճեցնում պատրաստի երաժշտությանը: Միաժամանակ նաեւ որոշ շարժումներ էին անում. այսպես, փետտում էին իրենց մազերը, ծեծում կուրծքը, հող լցնում գլխներին...

Կարեւոր փաստ է, որ թե՛ թագավորները, թե՛ վաճառականները եւ թե՛ նավավարները մի կողմից ողբում են իրենց շահի աղբյուրի անկումը, սակայն մյուս կողմից երբեք դեպի Աստված դառնալու ճիգ չեն գործադրում: Բոլոր ողբերի մեջ ապաշխարության որեւէ արտահայտություն չեք գտնի:

Անցնեմ 20-րդ համարին:

Առանց ներածականի, առանց ասելու, թե ով է խոսում, ով է փոխում խոսքն ու հասցեատերերին, հանկարծ ասվում է.

«Ուրախացի՛ր նրա դատապարտութեան վրայ, ո՛վ երկինք, եւ դուք՝ սրբեր, առաքեալներ, մարգարէներ, որովհետեւ Աստուած դատապարտեց նրան եւ ձեր վրէժը նրանից լուծեց» (հմր 20):

Հավանաբար Հովհաննես առաքյալն ինքն է հանկարծահաս ցնծությամբ կանգնում նախկին պատկերի առջեւ՝ ընթերցողներին բաժնեկից դարձնելու Բաբելոնի վերջնական կործանման ի տես իր ուրախությանը:

Առաքյալը նկատի ունի, որ Բաբելոնի կործանումը Աստծո ժողովրդի համար փրկություն ազդարարող նշան է միաժամանակ: Խոսքն ուղղված է երկու հասցեներով՝ առաջին՝ ասում է՝ «ո՛վ Երկինք» եւ երկրորդ՝ «դուք՝ սրբեր, առաքեալներ, մարգարեներ»: Գիտենք, որ Աստվածաշնչում «Աստված» անվան փոխարեն գործածվել է նաեւ «երկինք» բառը, սակայն այստեղ «երկինք»ը Աստծո անունը փոխարինելու համար չէ գործածված, այլ Եկեղեցու մի մասի անվանումն է, այստեղ՝ Հաղթական Եկեղեցին մատնանշող անվանումն է:

21-24-րդ համարների սերտողությունը ձայներիզի վրա արձանագրված չէ:

ԺԹ ԳԼՈՒԽ

ՀԱՂԹԱԿԱՆ ԵՐԳԵՐ (19:1-4)

Հայտնության գրքի այս գլուխն սկսվում է օրհնաբանություններով, որոնք մեզ հայտնում են Երկնավոր Եկեղեցու փառաբանանքը:

1-4-րդ համարները չեն սերտվել:

ԳԱՌԱՆ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔԸ (19:5-10)

Այս համարներում առաջին հերթին լսում ենք գահից եկող մի ձայն, որը հրահանգում է.

«Օրհներգեցէք մեր Աստծուն, Նրա բոլոր ծառաներդ, դուք՝ փոքրերդ ու մեծերդ, որ երկնչում էք Նրանից» (հմր 5):

Գահի շուրջ գտնվող էակներից մեկն է այս հրահանգը տվողը՝ հրավիրելով Աստծո անխտիր բոլոր ծառաներին, օրհնաբանություն երգելու Աստծո համար:

Ինչպես հայտնի է, «Աստծուց երկնչել» խոսքը նշանակում է չարիքներից հրաժարված եւ Աստծուն ընծայված կենցաղ վարել: Այս բացատրությամբ՝ երբ ասում ենք «աստվածավախ», չենք հասկանում Աստծուց սարսափող անձի, այլ բարեպաշտ անձի:

«Ապա լսեցի մի մեծ բազմութեան ձայն՝ նման առատ ջրերի շառաչին եւ ուժեղ որոտի ձայնին, որը դարձեալ ասում էր.

– Ալէլուիա՛, որովհետեւ թագաւորեց Տէրը՝ Ամենակալ Աստուածը մեր» (հմր 6):

Մենք այս բազմությանն առաջին անգամ հանդիպեցինք 7-րդ գլխում: Ձայնը «նման է առատ ջրերի շառաչին եւ ուժեղ որոտի ձայնին»: Այս պատկերը գալիս է 17-րդ գլխում բացատրված նույն խորհրդանիշից. ժողովուրդները փոխաբերաբար կոչվել են ջրեր:

Այստեղ մեզ ներկայացվում է մի երգչախումբ, որն օրհներգում է: «Ալելուիա» նշանակում է փառաբանեք կամ օրհներգեք Տիրոջը: Բայց այս համարը միաժամանակ փառաբանության հրավեր է: Այս փառաբանությունը կամ օրհներգությունը հիշեցնում է, որ արդեն հասել է Քրիստոսի թագավորության ժամանակը: Ժամանակը հասել է ոչ թե նրա համար, որ Քրիստոսը թագավորի (Քրիստոսն արդեն թագավորում է), այլ որ այդ թագավորությունը ճանաչվի ի սկզբանե եւ հավիտյանս համատիեզերական առումով, որպեսզի Աստված Իր արարչագործության հետ կազմի մեկ ամբողջություն, եւ մեղքով ապականված աշխարհը մաքրվելով՝ միանա իր Արարչին:

«Ուրախանանք, ցնծանք ու փառք տանք Նրան, քանի որ հասաւ ժամը Գառան հարսանիքի, եւ Նրա հարսը պատրաստեց ինքն իրեն» (հմր 7):

Մեկնաբանները մեր ուշադրությունը հրավիրում են այն փաստի վրա, որ Հայտնության գրքում առաջին անգամ ենք հանդիպում առաջին դեմքով արտահայտվող հրամայական կոչերի. Երկնքից եկող ձայնն իր խոսքն ուղղում է Եկեղեցուն:

«Հարսանիք»ը երկրավոր կյանքում համախումբ ուրախության ամենավեհ առիթներից է. հնում հարսանիքն ամբողջ գյուղի, շրջանի կամ թաղի համար մեծ ուրախություն էր: «Գառան հարսանիք»ի ժամը եկած լինելը նշանակում է, որ եկել է համամարդկային ուրախության ժամանակը: Հայտնության գրքում հանդիպում ենք «Գառան հարսանիք»ի փոխաբերական իմաստին: Հիրավի, հարսանիքն ուրախության առիթ է, սակայն միայն ուրախության առիթ չէ, այլ նաեւ՝ ուխտի, որը կնքված է ոչ միայն երկու անձերի միջեւ, այլեւ՝ Աստծո աչքի առջեւ:

Ավելին, պատահական չէ, որ Հին Կտակարանում Աստված Իր եւ Իր ժողովրդի կապը նմանեցնում է տղամարդու եւ կնոջ կապին: Աստծո եւ Նրա ժողովրդի կապն ուխտի կապ է, այսինքն՝ երկու կողմերն էլ հանձնառություն ունեն. Աստված Իր կողմից հետեւում է, որ ամբողջությամբ պաշտպանի սեփական ժողովրդին եւ տեր կանգնի նրան, իսկ ժողովուրդը, անշուշտ, իր կողմից հետեւում է, որ Աստծո

անվան հանդեպ միշտ մնա հավատարիմ: Սա երկուստեք հավատարմության ուխտ է:

Սակայն մինչ Աստված միշտ հավատարիմ է Իր ուխտին, մարդը, իր բնության բերումով, հաճախակի ենթակա է շեղվելու եւ հեռանալու ուխտից: Աստծո հետ մեր ուխտն սկսվում է ներկա կյանքով, բայց իր կատարմանն է հասնելու միմիայն հավիտենականի մեջ. այս համարի ակնարկը վերաբերում է հավիտենականության մեջ կատարվելուն: Երկնավոր Եկեղեցու մեջ է հայտարարվում Գառան հարսանիքը:

«Հարսին տրուեց մաքուր եւ լուսափայլ բեհեզ՝ հագնելու համար» (հմր 8): Եվ կարծեք ծանոթագրության նման՝ անմիջապես հավելում է. «Բեհեզը խորհրդանշում է Աստուծոյ ընտրեալների գործերը» (հմր 8):

Բեհեզը սպիտակ թանկագին կերպասն է, որ համազոր է «մաքուր զգեստ» բացատրությանը: Մենք տեսանք, որ այդպիսի զգեստ էին կրում Աստծո գահի շուրջ բազմած քսանչորս երեցները, նման զգեստ էին կրում նաեւ այն նահատակները, որոնց հանդիպեցինք: Ինչպես ասվում էր առաջին եւ երկրորդ գլուխներում հիշատակված նամակներում, մաքուր զգեստ էին հագնում նաեւ այս աշխարհում բոլոր հաղթողները. նրանց սպիտակ զգեստ էր խոստացվում:

Այստեղ ասվում է, թե հարսին տրվել է «մաքուր եւ լուսափայլ բեհեզ», եւ բացատրվում է, թե սպիտակ զգեստը խորհրդանշում է Աստծո ընտրյալների արդարությունը: Հետեւաբար, հարսին տրված զգեստը հավասարեցվում է Աստծո ընտրյալների արդարության հետ, ինչը նշանակում է, թե հարսը ոչ այլ ոք է, եթե ոչ՝ Աստծո ընտրյալների ամբողջությունը՝ Եկեղեցին: Այս պատկերի մեջ են մտնում Աստծո ժողովրդի բոլոր անդամները. մենք ոչ թե միայն հարսնեւորներ ենք, այլեւ հարսն ենք, Քրիստոսի Եկեղեցին ենք:

Ի՞նչ ենք հասկանում, երբ ասում ենք «Աստծո ընտրյալների արդարությունը»: Դա նրանց ունեցած արդարությունն է, թե՞ նրանց տրված արդարությունը: Բնագրում գործածված բառը մեզ մատնացույց չի անում այն արդարությունը, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է ցուցաբերել իր սեփական կյանքով կամ գործերով: Այստեղ

արդարությունն արդար վարձատրության նշանակն է, որ Աստված տալու է Իր բոլոր սրբերին, այսինքն՝ Եկեղեցուն:

«Հրեշտակն ինձ ասաց.

– Գրի՛ր, ինչ որ ասում եմ. «Երանելի են բոլոր նրանք, որ հրաւիրուած են Գառան հարսանեկան ընթրիքին» » (հմր 9):

Ինչպես գիտենք, Հայտնության գրքում յոթ «երանի»ներ կան: Այս համարում հանդիպում ենք չորրորդ «երանի»ին: Յուրաքանչյուր «երանի» հատուկ մի պատգամ է՝ ուղղված թե՛ Եկեղեցուն եւ թե՛ անհատ քրիստոնյային: «Հրաւիրուած են» արտահայտությունից հետո հունարեն բնագիրն ավելացնում է. «Սրանք Աստուծոյ ճշմարիտ խոսքերն են»: Այս հավելման նպատակն այս խոսքի կարեւորությունը մեր ուշադրությանն արժանացնելն է:

Հիշեցնենք, որ երբ մի առիթով Հիսուսը փարիսեցու տանը ճաշի էր հրավիրվել, հանկարծ սեղանակիցներից մեկը խանդավառված ասաց. «Երանի՜ նրան, ով ճաշ կուտի Աստուծոյ արքայութեան մէջ» (Ղկ 14:15): Եվ Հիսուսը խոսեց այդ «երանի՜»ի մասին՝ բացատրելով, թե դրա համար ինչ է պահանջվում մարդ արարածից: Մեր այս համարում կարծեք դրսեւորվում է մի այդպիսի ցանկություն:

Սակայն բնագրում նկատելի է ավելին. նախ, որ մի կողմից հիշեցնում է, թե մեր այս կյանքում իսկ մենք կարող ենք ունենալ Քրիստոսի ներկայությունը՝ հետեւելով Աստծո պատգամին, եւ երկրորդ՝ Քրիստոսի յուրաքանչյուր հետեւորդ Երկնքում ունենալու է առանձնաշնորհում՝ վայելելու Գառան հարսանիքի սեղանի բարիքները:

Քրիստոսի ներկայացրած առակի բովանդակության իրականացումն է այդ առանձնաշնորհը: Քրիստոս ասում էր. «Կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ» (Մտ 22:14): Հիշենք առակի բովանդակությունը. հրավիրյալներից որեւէ մեկը չգնաց ընթրիքին: Առակը մեզանից յուրաքանչյուրին ուղղված զգաստացնող կոչ է:

Բոլորս էլ լսում ենք Քրիստոսի պատգամները: Բոլորս էլ կյանքում ունենք մեր գործերն ու պարտավորությունները: Աստված չի ցանկանում, որ մենք դրանք լքենք: Մեր կյանքում պետք է երկու բան հա-

մաձայնեցնենք՝ առօրյա զբաղմունքները եւ Աստծո արքայության սպասումը: Մեկը չպետք է մոռանալ տալ մյուսը:

«Ես ընկայ նրա ոտքերի առջեւ, որպէսզի երկրպագեմ, բայց նա ինձ ասաց.

– Զգո՛յշ, մի՛ երկրպագիր ինձ, որովհետեւ ես էլ քո եւ քո եղբայրների ծառայակիցն եմ, որոնք վկայութիւն են տալիս Յիսուսի մասին: Երկրպագի՛ր միայն Աստծուն, որովհետեւ Յիսուսի մասին վկայելն է բուն մարգարէութեան հոգին» (հմր 10):

Սա բավական կարեւոր համար է: «Երանի՜»ն այնքան քաղցր է, ինչպես նաեւ Արքայության մեջ Քրիստոսի հարսանեկան խրախճանքի սպասումն այնքան երանական հափշտակության մեջ է դնում տեսանողին՝ Հովհաննես առաքյալին, ով ուրախությունից տարված եւ կարծեք շնորհակալական զգացումով լցված՝ խորհում է իր զգացմունքն արտահայտել երկրպագությամբ:

Աստվածաշնչում «երկրպագություն» բառը գործածվել է երկու տարբեր իմաստներով՝

1. **Որպես մարդու նկատմամբ խորին հարգանքի**, պատկառանքի կամ շնորհակալության դրսեւորում:

2. **Որպես Աստծո նկատմամբ խորին հարգանքի**, պատկառանքի կամ շնորհակալության դրսեւորում:

Երկրպագությունն այս երկրորդ իմաստով համազոր է պաշտամունքին: Առաքյալի արտահայտությունը պաշտամունքային հստակ նշանակություն չունի: Բայց քանի որ այս պաշտամունքային երկրպագության առարկան Աստված չէ, այլ՝ հրեշտակը, ուստի նա անմիջապես զգուշացնում է՝ ասելով. «Մի՛ երկրպագիր ինձ, որովհետեւ ես էլ քո եւ քո եղբայրների ծառայակիցն եմ»:

«Ծառայակից» նշանակում է «պաշտոնակից» կամ «նույն պաշտոնն ունեցող»: Հրեշտակներն Աստծո խոսնակներն են: Առաքյալը նույնպես Աստծո խոսնակն է. նա Աստծո իրեն հայտնածը մարդուն փոխանցելու պաշտոն ունի, հետեւաբար հրեշտակի պաշտոնն ունի, պաշտոնակից է նրան: Այդ պատճառով էլ հրեշտակն զգուշացնում է, որ առաքյալն իրեն չերկրպագի:

ՍՊԻՏԱԿ ՁԻՆ ԵՎ ՁԻԱՎՈՐԸ (19:11-21)

Այս հատվածը եւս մեզ ցույց է տալիս բացված Երկինքը: Մենք այսպիսի սկիզբ տեսանք Հայտնության գրքի 4-րդ գլխում: 4-րդ գլխի 1-ին համարն ասում էր. «Եւ ահա սրանից յետոյ տեսայ Երկնքում բացուած մի դուռ»: Այստեղ Քրիստոս պիտի հայտնվի երկրորդ անգամ: Այս գլխի սկզբում՝ բացատրականի մեջ ասացի, որ գլուխը հիմնականում մեզ ներկայացնում է Քրիստոսի երկրորդ գալուստը: Այժմ հասանք ճիշտ այդ երկրորդ գալուստը ներկայացնող հատվածին: Եկեղեցու ամբողջ պատմությունը հատկանշվում է այդ երկրորդ գալուստով: Առաջին հինգ համարներում ունենք մի հայտնություն, որ կոչում ենք «քրիստոսաբանական». նկարագրվում է մի «սպիտակ ձիավոր», որի ինքնությունը պարզվում է տիտղոսներով:

«Եւ ահա երկինքը բացուեց, եւ ես տեսայ մի սպիտակ ձի, որի վրայ նստած ձիաւորը կոչւում է Հաւատարիմ եւ Ճշմարիտ. նա արդարութեամբ է դատում եւ պատերազմում» (հմր 11):

«Սպիտակ ձիաւոր»ը Քրիստոս Ինքն է: «Սպիտակ ձի»ն հաղթանակ է արտահայտում: Ձին ինքնին հաղթանակի խորհրդանիշ է, նաեւ՝ թագավորական խորհրդանշաններից: Սպիտակը հաղթանակի, փառքի, սրբության եւ արդարության խորհրդանիշն է: Ուրեմն, «Սպիտակ ձիաւոր»ը Նա է, ով, որպես Թագավոր, գալիս է հաղթական ու փառքով: Նա հաղթական է Իր սրբությամբ եւ արդարությամբ:

Քրիստոս Երուսաղեմ մտնելիս նստեց մի կենդանու վրա, որով կատարվեց Զաքարիա մարգարեի կանխասացությունը: Ինչպես ասում էր մարգարեն, Նա Երուսաղեմ մտավ մի էշի եւ նրա ավանակի վրա նստած (Զք 9:9): Քրիստոս այդպես մուտք գործեց Երուսաղեմ, որովհետեւ գալիս էր որպես հեզ ու խոնարհ թագավոր, իսկ Հայտնության գրքի այս համարում Նա դարձյալ գալիս է որպես թագավոր, սակայն արդեն որպես հաղթանակած: Նրա վախճանական գալուստը չարի դեմ պատերազմելու, ինչպես նաեւ չարին վերջնական պարտության մատնելու համար է:

Նկատի պետք է ունենալ այն հանգամանքը, որ դատաստանը, պատերազմը եւ հաղթանակը մեր մտածողության մեջ ունեն նաեւ ժխտական նշանակություն՝ մեզ հիշեցնելու աշխարհի անիրավությունները: Բնագիրը մեզ ասում է, թե «Սպիտակ ձիաւոր»ն «արդարութեամբ է դատում եւ պատերազմում»: Քրիստոսի թե՛ դատաստանը եւ թե՛ պատերազմն ու հաղթանակն ունեն արդարության սկզբունք: Քրիստոս գալու է թե՛ աշխարհի անիրավությունների վրեժը լուծելու եւ թե՛ վերահաստատելու Երկրից անհետացած իրավունքն ու արդարությունը:

«Նրա աչքերը նման էին կրակի բոցի, գլխին ունէր բազմաթիւ թագեր, եւ իր վրայ գրուած ունէր մի անուն, որ իրենից բացի ո՛չ ոք չգիտի» (հմր 12):

Կրակի բոցի նման աչքերով ակնարկվում է Քրիստոստ ամենատեսությանը: Նրա գլխին տեսնում ենք բազմաթիվ թագեր: Արդ, հարց է ծագում՝ մի՞թե մի թագը բավարար չէ, որպեսզի նշվի ձիավորի թագավոր լինելու հանգամանքը: Թե՛ այս եւ թե՛ հաջորդ գլխում Քրիստոս ներկայացվում է որպես տերերի Տեր եւ թագավորների Թագավոր, հետեւաբար բազմաթիվ թագերն այդ իրողության արտահայտիչներն են:

Նրա անվան առնչությամբ հարկ է նշել, որ այս հատվածում երեք անգամ գտնում ենք «անուն» բառը: Երկրորդ անվանումն է «Աստուծոյ խօսքը», իսկ երրորդը՝ «տէրերի Տէրը եւ թագաւորների Թագաւորը»: Միայն առաջին անունն է բացակայում: Ինչո՞ւ չկա միայն առաջին անունը: Արդյոք առաջին անունը մեզ չի՞ հայտնվել: Այստեղ կարելի է մի բացատրություն առաջարկել:

Հայտնության գրքում քանիցս տեսանք, որ Հայր Աստծո եւ Քրիստոսի համար գործածվում է մի անուն, որը բաղկացած է երեք բաժիններից՝ Նա, որ էր, Նա, որ է եւ Նա, որ գալու է: Ասացի, որ այս անունը Ելից գրքում Մովսեսին հայտնված Աստծո անունն է: Աստված Մովսեսին Իր անունը հայտնեց որպես ԵԱՀՎԵ, որը նշանակում է՝ «Նա, որ է»: Հետեւաբար այս անունը նույնանում է այս գրքում տրված աստվածային անվան հետ, սակայն մի քիչ տարբերությամբ:

Արդ, եթե «Նա, որ էր, Նա, որ է եւ Նա, որ գալու է» անվան երեք բաժիններն անջատենք միմյանցից, ապա կարող ենք հետեւյալն ասել. «Նա, որ էր», այսինքն՝ Քրիստոս որպես Քրիստոս հայտնվելուց առաջ (Նոր Կտակարանում մենք Քրիստոս անվանը ծանոթանում ենք Հիսուսի անձի եւ գործի միջոցով): Քրիստոսի անունները մեզ ծանոթ են այնքանով, որքանով առկա է փրկագործության պատմությունը: Ինչ դերով որ Նա հայտնվում է, այն անունով էլ ճանաչում ենք Նրան: Սակայն փրկագործության պատմությամբ մեզ հասած անունները Նրա իսկական անունները չեն, այլ՝ հարաբերական անուններն են: Ինչ է Աստծո Որդու իսկական անունը, ինչպիսի՞ն է Նրա իսկությունը կամ ինքնությունը. այդ անունը մեզ անծանոթ է: Երբ Մովսեսը կամեցավ ավելին իմանալ, Աստված նրան պատասխանեց՝ ասելով, թե ո՛չ մարգարեն եւ ո՛չ էլ ուրիշ որեւէ մեկը չի կարող տեսնել Իրեն:

Մենք չենք կարող սահմանել աստվածությունը: Մեր բոլոր բառերը տկար են: Այժմ մենք միմիայն կարող ենք աղոտ կերպով տեղեկանալ: Երբ այս մարմնից դուրս գանք ու հասնենք հավիտենականությանը, եւ երբ Աստված մեզ արժանի անի Իր փառքի մեջ գտնվելուն, այդ ժամանակ, հավանաբար, մեզ կտրվի Աստծո իսկությունը ճանաչելու կարողությունը, եւ մենք Նրան կճանաչենք Իր իսկության մեջ. եթե ոչ ամբողջապես, գոնե գեթ այնքանով, որքանով մարդ արարածին բավարար լինի Աստծո հետ միությունը վաստակելու համար:

«Հագել էր մի պատմուճան, որը ներկուած էր արիւնով» (հմր 13):

Պատմուճան բառին համապատասխանում է հունարեն «հիմա՛թիոն» բառը, որն ունի երկու իմաստ: Այդ երկու իմաստներն էլ կարելի է գտնել Նոր Կտակարանում: Բառը կարող է «զգեստ», «հանդերձ», «հագուստ» նշանակել կամ էլ՝ «բաճկոն», «վերարկու», «թիկնոց»: «Պատմուճան» բառը հրեաները գործածում էին մասնավորաբար առանց թեւերի վերարկուի համար, որ հագնում էին պարեգոտի վրայից:

Ճամփորդի համար պատմուճանը երբեմն նաեւ գիշերվա վերմակ էր: Այստեղ ակնարկեցի Եսայի մարգարեի գրքի 63-րդ գլխի այն

հատվածը, ուր Մեսիան ներկայացվում է որպես Աստծո բարկության հնձանը կոխկռտող եւ այդ հնձանից ցայտած գինիով իր պատմուճանը կարմրացրած անձնավորություն: Այս պարագային՝ պատմուճանի արյունով ներկված լինելը դատաստանի նշանակություն ունի:

«… Նրա անունն է «Աստուծոյ Խօսքը» » (հմր 13):

Քիչ վերը մասամբ բացատրեցի, իսկ այստեղ ամբողջացնելու եմ ասածս: Գրաբարում «բան» նշանակում է «խոսք», սակայն միայն խոսք չի նշանակում: Դժբախտաբար, յուրաքանչյուր թարգմանության մեջ թարգմանիչը բազում իմաստներից ստիպված միայն մեկն է օգտագործում՝ մի կողմ թողնելով մյուս իմաստները, որոնք տվյալ բառի հոմանիշներն են: Գրաբարյան «բան» բառը իմաստային առումով շատ ավելի հարուստ է, քան աշխարհաբարի «խոսք»ը: «Բան» բառը գրաբարում նշանակում է նաեւ «բանականություն», «միտք», «իմաստություն»: Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով եւ Իր նմանութեամբ եւ նրան օժտեց բանականությամբ, որպեսզի կարողանա հաղորդակցվել նրա հետ: Աստված չի կարող հաղորդակցվել բանականությունից զուրկ կենդանական աշխարհի հետ: Այդ իմաստով՝ «Բան»ը նաեւ Աստծո հայտնության, պատգամի արտահայտիչն է: Աստվածաշնչում կան երկու կարեւոր իրողություններ, որոնք չպետք է մոռանանք: Առաջին՝ Աստծո Խոսքը հենց նույն ստեղծագործությունն է: Երբեմն ասում ենք. «Այս մարդու խոսքը գործ է»: Ավելի ճիշտ է այս արտահայտությունն օգտագործել Աստծո պարագայում. Աստծո Խոսքը գործ է կամ ստեղծագործություն:

Աստվածաշունչն Աստծո Խոսքն այդպես է ներկայացնում: Բերենք մի քանի օրինակ: Երբ Ծննդոց գիրքը ներկայացնում է աստվածային արարչագործությունը, ներկայացնում է որպես Աստծո Խոսքով իրագործված: Օրինակ՝ Աստված ասաց եւ եղավ (տես Ծն 1-ին եւ 2-րդ գլուխները): Սաղմոսերգուն զուր տեղը չի ասում. «Նա ասաց, եւ աշխարհը գոյացաւ. հրամայեց եւ այն հաստատուեց» (Սղ 33:9):

Նոր Կտակարանը նույնպես հիշեցնում է Աստծո Խոսքի ստեղծագործություն լինելը: Հովհաննես Ավետարանիչն ասում է. «Նրանով

(այսինքն՝ Բանով) էր, որ Աստուած ստեղծեց ամէն ինչ. առանց Նրա ոչ մի բան չստեղծուեց» (Հհ 1:3): Աստծո Խոսքը Քրիստոսն Ինքն էր:

Վերջին դատաստանին վերաբերող այս հատվածում Աստծո Խոսքը հատուկ նշանակություն ունի: Այստեղ Աստծո Խոսքը նաեւ դատավորն է: Քրիստոս ասաց. «Ես չեմ դատապարտում նրան, ով լսում է Իմ խօսքերը, բայց չի գործադրում դրանք, որովհետեւ Ես չեմ եկել, որ աշխարհը դատապարտեմ, այլ՝ որպէսզի փրկեմ աշխարհը: Սակայն, կայ Մէկը, որ պիտի դատապարտի նրան, ով անարգում է Ինձ եւ չի ընդունում Իմ խօսքերը: Աստծո Խօսքը, որ Ես ասացի ձեզ, դա՛ պիտի դատապարտի նրան վերջին օրը» (Հհ 12:47-48):

Աստծո Խոսքը լինելու է նաեւ մեր դատավորը: Այդ Խոսքն ընդունելը կամ մերժելը մեր դատավճիռը պիտի լինի: Քրիստոս Երկիր չէր եկել դատելու, այլ՝ մարդկանց դեպի Աստված հրավիրելու եւ փրկելու: Սակայն երկրորդ գալուստը չի լինելու հրավեր եւ փրկվելու հնարավորություն: Տերը երկրորդ անգամ գալու է՝ դատաստանի ենթարկելու Աստծուն ընդդիմացողներին եւ Իր մոտ վերցնելու Իր հավատարիմներին:

«Երկնքի զօրքերը սպիտակ ձիերով հետեւում էին նրան՝ հագած սպիտակ եւ մաքուր բեհեզներ» (հմր 14):

Այսինքն՝ հրեշտակներն ու Հաղթական Եկեղեցին հետեւում էին «Հավատարիմ եւ Ճշմարիտ»ին:

«Նրա բերանից ելնում էր սրուած մի սուր՝ դրանով ազգերին հարուածելու համար: Նա նրանց կհովուի երկաթէ մականով եւ կկոխոտի Ամենակալ Աստուծոյ ահեղ բարկութեան գինու հնձանը» (հմր 15):

Գիտենք, որ բերանից դուրս եկող սուրն իշխանության եւ դատավոր լինելու խորհրդանիշն է, իսկ այստեղ Աստծո Խոսքի խորհրդանիշն է: Եբրայեցիներին ուղղված նամակում Պողոս առաքյալը 4-րդ գլխի 12-րդ համարում ասում է. «Աստուծոյ Խօսքը կենդանի է եւ ազդու, աւելի հատու, քան՝ որեւէ երկսայրի սուր»: Այստեղ Տերը չի նկարագրվում միայն որպես իշխան եւ դատավոր, այլ նաեւ՝ որպես հովիվ: Հովիվը կարող է նշանակել նաեւ թագավոր, որովհետեւ անցյալի թագավորները նաեւ հովիվներ էին: Հիշենք Դավիթ թագավորին:

«Նա նրանց կհովուի երկաթէ մականով»: Երկրորդ սաղմոսի այս պատկերը մեզ բառացիորեն ասում է հետեւյալը. «Խնդրի՛ր ինձնից, եւ հեթանոսներին քեզ կտամ որպէս ժառանգութիւն, ու իշխանութիւն՝ Երկրի բոլոր ծագերում: Նրանց կհովուես երկաթեայ գաւազանով եւ բրուտի անօթի պէս կփշրես նրանց» (Սղ 2:8-9): «Հովուել» բառը եբրայական բնագրում չկա. բառը գտնում ենք «Յոթանասնից» կոչվող թարգմանության մեջ միայն: Համենայն դեպս՝ այս բառը նաեւ «թագաւորել» է նշանակում: Ուստի այստեղ որեւէ հարց չի ծագում:

Սակայն ի՞նչ է նշանակում «հովուել երկաթէ մականով»: Առհասարակ հովիվները երկաթե մական չեն գործածում, այլ՝ փայտյա գավազան: Երկաթե մականը ոչ միայն իշխանության խորհրդանիշ է, այլ նաեւ՝ կոտրելու, հարվածելու եւ փշրելու: Եվ քանի որ խոսքն ազգերի կամ հեթանոսների մասին է, ուստի ցույց է տալիս այն դատաստանը, որին Աստված պիտի արժանացնի նրանց:

«Նրա պատմուճանի եւ ազդրի վրայ գրուած էր՝ «Թագաւորների Թագաւոր եւ տէրերի Տէր» » (հմր 16):

Հիշեցնեմ, որ Հին Կտակարանում այս անվանումը տրվել է Հայր Աստծուն, իսկ այստեղ Քրիստոսի համար գործածվելը, անկասկած, ինչ-որ բան է նշանակում՝ ցույց է տալիս Քրիստոսի աստվածությունը:

Ուշագրավ է այն փաստը, որ այս անվանումը գրվել է ոչ թե միայն նրա պատմուճանի վրա, այլ նաեւ՝ նրա ազդրին: «Ազդր»ը մարմին է նշանակում: «Մարմին»ը կարելի է հասկանալ կամ բառացիորեն, կամ որպես խորհրդանիշ: Բառացի հասկանալու պարագայում դժվար թե կարելի լինի երեւակայել, որ այդ անվանումը մարմնի վրա է գրվել, հետեւաբար այս հանգամանքը մտածելու տեղիք է տալիս, այսինքն՝ «ազդր»ով մատնանշվում է Քրիստոսի խորհրդանշական մարմինը՝ Եկեղեցին:

Հետեւաբար նույն անունը գրվել է Քրիստոսի Եկեղեցու վրա՝ «Թագաւորների Թագաւոր եւ տէրերի Տէր»: Արդ, մահվան հանդեպ Քրիստոսի տարած հաղթանակը փոխանցվել է Եկեղեցուն: Եկեղեցին Քրիստոսին ճանաչում է որպես «Թագաւորների Թագաւոր եւ

տէրերի Տէր», սակայն Եկեղեցին միաժամանակ արտահայտիչն է այն տերության, այն թագավորության, որ ունի Քրիստոսը: Եկեղեցում այդ անվանումը ճանաչվում է հավերժ կամ հավիտյան, Եկեղեցու մարմնի վրա գրվել եւ դրոշմվել է անջնջելիորեն: Եկեղեցու մարմնի վրա գրված լինելը ցույց է տալիս նաեւ այն բաժնեկցությունը, որ Քրիստոսի թագավորության մեջ ունի Եկեղեցին:

Ինչպես տեսանք, սրբերը կոչվել են Քրիստոսի հետ նստելու գահերի վրա եւ Նրա նման թագավորելու: Այդ բաժնեկցությունը միայն աշխարհի վախճանի համար չէ. այժմ էլ Եկեղեցու ներկա կյանքում այդ բաժնեկցությունը պահպանվել է:

«Յետոյ տեսայ արեգակի վրայ կանգնած մի ուրիշ հրեշտակի, որը բարձրաձայն աղաղակեց երկնքում թեւածող թռչուններին՝ ասելով. «Եկէ՛ք, հաւաքուեցէ՛ք Աստուծոյ մեծ ընթրիքին, որպէսզի ուտէք թագաւորների, զօրավարների, հզօր մարդկանց, ձիերի եւ նրանց վրայ նստած հեծեալների մարմինները, ազատների եւ ծառաների, մեծերի եւ փոքրերի մարմինները» » (հմր 17-18):

Այս համարներից սկսած՝ մեզ ներկայացվում է Արմագեդոնի նշանավոր պատերազմը, որի ակնարկությունը եղավ 16-րդ գլխում: 17-21-րդ համարներում ներկայացվում է ամբողջ Արմագեդոնի պատերազմը, որը սակայն երբեք իսկական պատերազմի նկարագրականը չէ. այստեղ պատերազմի նկարագրության չենք հանդիպում:

Այս համարները Եզեկիելի մարգարեության 39-րդ գլխի 17-20-րդ համարների գրեթե վերարտադրությունն են:

Երկնքի թռչունների պատկերը կարող ենք փոխաբերաբար հասկանալ: Ինչպես մեզ ասում են մեկնիչները, «թռչուններ» բառի տակ կարելի է տեսնել հրեշտակներին. հրեշտակները լինելու են աստվածային դատաստանի վկաները:

Վերը նկարագրվածը եւ այս ընթրիքի պատկերը կատարյալ զուգահեռներ են կազմում, սակայն հակադիր զուգահեռներ: Վերեւում Աստծո սրբերին տրված ընթրիքի հրավերն է, իսկ այս ընթրիքի հրավերն ուղղված է հրեշտակներին, որպեսզի նրանք դառնան մարդկային դիակների կամ մեղավոր մարդկության դատաստանի վկաները:

«Ապա տեսայ, որ Գազանը եւ Երկրի թագաւորներն ու նրանց զօրքերը հաւաքուեցին, որպէսզի պատերազմեն սպիտակ ձիու վրայ նստած հեծեալի եւ նրա զօրքի դէմ» (հմր 19):

Այստեղ պատերազմի նկարագրություն բացարձակապես չկա, այլ միայն նշվում է այդ մասին: Մեզ պարզապես ցույց է տրվում, որ Չարի զորքերը փորձում են կորստյան մատնել Եկեղեցին:

«Գազանը բռնուեց, ինչպէս նաեւ նրա հետ եղող սուտ մարգարէն, որ հրաշքներ էր գործում նրա ներկայութեամբ եւ այդ հրաշքներով մոլորեցնում էր նրանց, որոնք Գազանի դրոշմն էին առել իրենց վրայ եւ երկրպագում էին նրա արձանին: Ապա Գազանին ու սուտ մարգարէին ողջ-ողջ գցեցին կրակէ լճի մէջ, որ բոցավառում էր ծծումբով» (հմր 20):

Հակառակ այն մեծ պատրաստությանը, որ տեսնվել էր, այստեղ դարձեալ պատերազմի նկարագրականի չենք հանդիպում. բավական է միայն, որ «Սպիտակ ձիաւոր»ը երեւա ռազմաճակատում, եւ արդեն Գազանի զորքերը կոչնչանան: Քրիստոսի մեկ խոսքը, որ գործ է, բավական է, որ Նրա բոլոր թշնամիներն ու Նրան ատողները դադարեն գոյություն ունենալուց:

«Իսկ Գազանի զօրքերն սպանուեցին ձիու վրայ նստած հեծեալի սրով, որ ելնում էր նրա բերանից: Եւ բոլոր թռչունները յագեցան նրանց մարմիններն ուտելուց» (հմր 21):

Այստեղ կարելի է մատնանշել երկու իրողություններ: Առաջին՝ այս պատերազմի հաղթանակի մեջ Քրիստոսի հետ եղած զորքը երբեք բաժին չունի. նրան տեսնում ենք Քրիստոսի հետ, բայց պատերազմում որեւէ մասնակցություն չունի: Նրանք Քրիստոսի կողքին լինելով՝ պարզապես իրենց կամակցությունն են արտահայտում Քրիստոսի դատին: Մեր օրերում շատ հաճախակի գործածվող մի բառով ասած՝ զորակցում են Քրիստոսի դատին: Երկրորդ՝ Քրիստոսի պատերազմը զենքով չէ. միակ զենքը Նրա խոսքն է, որ բավարար է բոլոր հարցերը լուծելու համար: Քրիստոսը պատերազմում է Իր խոսքով:

Ի ԳԼՈՒԽ

Հայտնության գրքի 20-րդ գլխում խոսվում է այս աշխարհի վրա Քրիստոսի եւ Նրա սրբերի հազարամյա թագավորության մասին, որից հետո ժամանակավորապես կապված Սատանան կարճ ժամանակով վերստին պիտի արձակվի եւ բոլոր ազգերին մոլորեցնելու ու իր օրինակով Աստծո դեմ ապստամբության մղելու մի վերջին փորձ անի, սակայն թե՛ նա եւ թե՛ նրա հետեւորդները կրակի լիճը պիտի գցվեն, ապա Նոր Երկինք ու Նոր Երկիր պիտի հաստատվեն:

Ո՞րն է այս հազարամյա թագավորությունը, ինչպե՞ս պիտի հասկանալ: Նախ՝ Նոր Կտակարանում միակ տեղն է, ուր հիշատակվում է այս հազարամյա թագավորությունը, եւ երկրորդ՝ առաջանում են որոշ հարցեր, որոնք պետք է պատասխաններ ունենան: Այսպես՝

1. **Քրիստոսի երկրորդ գալուստը եւ թագավորությունը:** Քրիստոս միշտ խոսեց մեկ եւ միակ գալստյան եւ հավատալիք միակ թագավորության մասին, մինչդեռ եթե ընդունենք հազարամյան, թե՛ գալուստը եւ թե՛ թագավորության հաստատումը երկու փուլերի կվերածվեն, որովհետեւ հաստատվելիք հազարամյա թագավորությունը դարձյալ առժամյա հանգամանք կստանա երկրավոր եւ դեռ մահկանացու բնույթով, մինչեւ հասնեն Սատանայի վերջնական դատապարտությունը եւ կրակի լիճը գցվելը, այնուհետեւ սկիզբ կառնի բուն Արքայությունը՝ անմահ կյանքով:

2. **Չարի վերջնական դատապարտությունը:** Արմագեդոնի պատերազմը ցույց էր տալիս Երկրի բոլոր իշխանությունների խորտակումն ու բնաջնջումը եւ Քրիստոսի թագավորությունը համայն աշխարհի վրա (19-րդ գլուխ): Այժմ սատանայի ժամանակավոր արձակմամբ մեկ անգամ եւս տեսնում ենք ազգերի եւ թագավորների վերջին ապստամբությունը կամ ազգերի վերջին մոլորությունը՝ ներկայացված Գոգի եւ Մագոգի առաջնորդությամբ, որից հետո գալիս

են Չարի վերջնական կորուստը եւ Արքայության վերջնական հաստատումը՝ Նոր Երկնքով ու Նոր Երկրով:

3. **Մեռելների հարության հարցը:** Հիսուս խոսում է միայն մեկ հարության մասին, որը տեղի է ունենալու արդարների եւ մեղավորների համար միաժամանակ (տե՛ս Հհ 5:28-29): Մինչդեռ եթե 20-րդ գլխի բացատրությունը բառացի հասկանանք, ապա երկու հարություններ կան. առաջին հարությունը տեղի է ունենալու հազարամյա թագավորության սկզբում, երբ միայն Քրիստոսի հավատարիմ վկաներն ու Նրա անվան համար նահատակվածները հարություն պիտի առնեն եւ թագավորեն Նրա հետ, իսկ հազարամյակի վերջում տեղի են ունենալու երկրորդ հարությունը եւ վերջին դատաստանը, այսինքն՝ երբ մնացյալ բոլոր մեռելները հարություն պիտի առնեն ու դատվեն ըստ իրենց գործերի: Կյանքի գրքում իրենց անունը չունեցողները հավիտենական կորստյան են դատապարտվելու:

Բառացի ընկալմամբ՝ այս դժվարությունները ցույց են տալիս, որ հազարամյակը հասկանալն ու բացատրելը պարզ եւ դյուրին չեն, ուստի հասկանալու տարբեր փորձեր են արվել: Ոմանք պահպանել են բառացի իմաստը՝ ընկալելով որպես հազար տարվա մի ժամանակաշրջան: Ուրիշները մեկնում են այլաբանորեն՝ հազարամյակը համարելով երկար եւ անսահմանելի մի ժամանակահատված: Այս առնչությամբ՝ Եկեղեցու նախկին մեկնիչները բաժանվում են երեք խմբի՝

1. Ոմանք հազար տարին հասկանում են բառացիորեն՝ պարզապես որպես հազար տարի, որի ընթացքում Երկրի վրա պիտի իշխեն Քրիստոսի հետեւորդները, որից հետո տեղի է ունենալու ընդհանուր հարությունը: Այս հեղինակներից են Արեւելքում՝ Պապիասը (2-րդ դարասկիզբ), Հուստինիանոս Վկան (2-րդ դարակես), Իրենեոս Հայրապետը (2-րդ դարավերջ), իսկ Արեւմուտքում՝ Տերտուղիանոսը (3-րդ դարասկիզբ) եւ Վիկտորիանոսը (4-րդ դարակես):

2. Այլ մեկնիչներ, դարձյալ բառացի մեկնաբանությամբ, դրա տակ հասկանում են ստեղծագործության 7-րդ հազարամյակը, որ ամբողջ ներկա ժամանակն է՝ մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը: Այս հեղինակների շարքում են Բառնաբասի նամակի հեղինակը (2-րդ դարասկիզբ), Հիպպողիտոս Հռոմեացին (3-րդ դարի առաջին կես), Ոռոգինեսը (3-րդ դարակես), Մեթոդիոս Օլիմպիացին (3-րդ դար):

3. Երրորդ խումբն այն մեկնիչներն են, ովքեր Օգոստինոսից (5-րդ դարի առաջին կես) սկսյալ հազար տարին հասկանում են խորհրդանշականորեն, որպես ճշգրտորեն չսահմանված մի ժամանակահատված՝ Եկեղեցու ժամանակաշրջանը, որն սկսվում է Քրիստոսի առաջին գալուստից եւ կերկարի մինչեւ երկրորդ գալուստը: Եկեղեցու հետագա մեկնիչները գլխավորաբար հետեւում են այս ուղղությանը: Մինչ այժմ սա է եկեղեցու հիմնական գաղափարախոսությունը:

Ներկա ժամանակների մեկնիչները նույնպես բաժանվում են երեք գլխավոր խմբերի՝ մոտավորապես նույն գաղափարականով եւ հետեւյալ անվանումներով՝

1. **Նախահազարամյա հասկացություն** (Premillennialism): Ըստ այս մեկնության, որ բառացի է, ներկա ժամանակի վախճանին (որը Քրիստոսի երկրորդ գալուստով է լինելու), նախ տեղի է ունենալու մեռյալների առաջին հարությունը, եւ Արքայության ներկա վիճակը թեւակոխելու է մի նոր փուլ, որը բառացիորեն այս աշխարհի վրա լինելու է հազար տարվա թագավորության մի նոր շրջան՝ հատկանշված խաղաղությամբ ու արդարությամբ: Հազար տարի հետո տեղի են ունենալու վերջնական հարությունն ու վերջին դատաստանը: Երկինքն ու Երկիրը կնորոգվեն, եւ հազար տարվա այդ թագավորությունը կլուծվի հավիտենական թագավորության մեջ:

2. Հետհազարամյա հասկացություն (Postmillennialism): Ըստ այս մեկնության, որ դարձյալ բառացի է, ներկա աշխարհն աստիճանաբար պիտի ճանաչի եւ ընդունի Քրիստոսին, եւ երբ բոլորն ընդունեն քրիստոնեությունը, կգա խաղաղության եւ բարօրության հազարամյա մի ժամանակաշրջան, որի ավարտին տեղի պիտի ունենան Քրիստոսի երկրորդ գալուստը, մեռելների հարությունը, վերջին դատաստանն ու հավիտենական կյանքի սկիզբը:

3. **Ապահազարամյա հասկացություն** (Amillennialism): Ըստ այս մեկնության, որ այլաբանական է եւ սահմանված չէ տարիների որոշակի թվով, հազարամյակը պատկերում է Աստծո թագավորության ներկա փուլը, երբ արդարների հոգիները Քրիստոսի հետ թագավորում են Երկնքում: Այս փուլին հաջորդելու է Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ տեղի պիտի ունենան մեռելների ընդհանուր հարությունն ու վերջին դատաստանը, եւ սկիզբ պիտի առնի հավիտենական թագավորությունը՝ Նոր Երկնքով ու Նոր Երկրով:

Վերը նշեցինք, որ հազար տարիների վերաբերյալ Եկեղեցու հիմնական ըմբռնումը խորհրդանշական կամ «ապահազարամյա» է: Մեր Եկեղեցին հազարամյակը հասկանում է ոչ թե Քրիստոսի երկրորդ գալուստից հետո գալիք մի ժամանակաշրջան, այլ առաջին գալուստին հաջորդող, այսինքն՝ ներկա ժամանակաշրջանում, երբ Քրիստոս Իր Հարությունից հետո երկինք համբարձվելով՝ բազմեց Հոր աջ կողմում, արդեն վերցրել է Իր թագավորությունը եւ իշխում է հոգեպես: Այսինքն, Հիսուս Եկեղեցու համար արդեն եկել է Իր թագավորությամբ, մեղքով մեռած մարդիկ հոգեպես հարություն են առել, եւ Նրա ընտրյալ սրբերը թագավորում են Նրա հետ: Ասվածը պարզապես մեկ կամ երկու հեղինակավոր մեկնիչների հայտնած տեսակետ է:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որպես դավանանք, հաստատված տեսակետ չունի, որ պարտադիր լինի բոլորի համար: Յուրաքանչյուր հավատացյալ կարող է ըմբռնելու իր կարողությունը բաց պահել կամ հիմնվել իր այդ կարողության վրա. թեպետ անհրաժեշտ է, որ ի մտի ունենա սուրբգրային եւ եկեղեցական ավանդության ամբողջությունը: Այստեղ նշվածը սուրբգրային եւ եկեղեցական ավանդության ամբողջությունն ընդգրկող տեսակետ է:

Հետեւաբար, հազարամյան տառացիորեն հազար տարի չէ, այլ՝ հարաբերաբար մի երկար ժամանակահատված, որը մատնանշում է Քրիստոսի Եկեղեցու ժամանակը: Այս պատկերը հասկանալու համար լավ կլինի հիշել, որ Աստվածաշունչը ներկայացնում է, թե աշխարհն ստեղծվել է վեց օրում (= անկատարություն), իսկ յոթերորդ

օրը (= կատարելություն) կոչվում է Տիրոջ հանգստի օր, երբ Աստված արարչագործությունից հետո հանգստացավ:

Խորհրդանշական մեկնությամբ՝ ներկա աշխարհի ժամանակաշրջանը համարվել է 6 000 տարի, այսինքն՝ արարչագործության յուրաքանչյուր օրվա դիմաց հազար տարի: Այս 6000 տարիների ավարտին եկավ Քրիստոս, եւ Նրա գալստյանը հաջորդող հազարամյակը (ոչ բառացի) լինելու է Աստծո կամքի ու ծրագրի կատարումը կամ ամբողջացումը: Այս հազար տարիների ավարտին տեղի են ունենալու Քրիստոսի երկրորդ գալուստը եւ դրա հետ կապված՝ բոլոր մեռելների մարմնավոր հարությունը, վերջին դատաստանն ու հավիտենական կյանքի սկիզբը:

ՀԱԶԱՐԱՄՅԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (20:1-6)

«Ես տեսայ մի ուրիշ հրեշտակի, որն իջնում էր երկնքից եւ ձեռքին ունէր անդունդի բանալին եւ մի մեծ շղթայ» (հմր 1):

Այս համարը մեզ մի նոր տեսիլք է ներկայացնում. ենթադրաբար կարող ենք ասել, թե խոսքը այն նույն հրեշտակի մասին է, որ տեսանք 9-րդ գլխի 1-ին համարում:

«Նա բռնեց վիշապին՝ այն առաջին օձին, որ Բանսարկուն է եւ Սատանան, եւ հազար տարով շղթայեց նրան» (հմր 2):

Այստեղ կան երեք կարեւոր հաստատումներ: Առաջինը վիշապի ինքնության մասին է: Այս համարում վիշապին տրված անունները նախապես բացատրել եմ: Սակայն ամեն անգամ, երբ նույն անունները գործածվում են տարբեր շրջագծում, անպայման մի նոր նշանակություն են ունենում: Այստեղ շրջագիծն այնպիսին է, որ թվում է, թե ինչ-որ կապ է ստեղծվում Աստվածաշնչի առաջին գրքի՝ Ծննդոցի հետ: Եվ այդ կապը մեր մտքում անսպասելիորեն մեկ ուրիշ բան է արթնացնում:

Մեզ պարզապես անուններ չեն տրվում, այլ այդ անունների միջոցով հիշեցվում է մի ամբողջ գործունեություն՝ դրախտում Սա-

տանայի ծավալած գործունեությունը: Ծննդոց գրքում Սատանան ներկայանում է որպես բանսարկու. նա Աստծո խոսքերը սուտ է հռչակում եւ կասկած գցում մարդու սրտում, այնուհետեւ շարունակելով ստախոսի իր պաշտոնը՝ մարդուն մարդու դեմ է հանում (Ծն 3:4):

«Սատանա» անունը եբրայերենում նշանակում է հակառակորդ: Քանի դեռ նա հայտնվում է ներկայացող անձ, Աստծո մրցակից, միշտ էլ կամենալու է ունենալ, գրավել Աստծո դիրքը:

Շատ արագ է նկարագրվում վիշապի բռնվելը եւ անդունդի մեջ շղթայվելը: Արագությունը զարմացնում է, որովհետեւ Չարի գոյությունն իմացող մարդը գիտի, որ Չարը դժվար հաղթահարելի զորություն է: Սակայն այս համարը մեզ ցույց է տալիս, որ այդ դժվար հաղթահարելի զորությունը հանկարծ արագորեն բանտարկվում է անդունդի մեջ:

Այդ արագությունը մեզ հայտնում է Աստծո ամենազորությունը. Աստծո համար Սատանան ոչինչ է, պարզապես օգտվում է այն հանգամանքից, որ Աստված չի ցանկանում զորության ճանապարհով, ուժ ցուցադրելով ընկճել նրան: Նաեւ մտածում ենք, որ եթե Աստծո պաշտոնյաներից մեկը՝ հրեշտակը, կարող է այսքան դյուրությամբ շղթայել Սատանային, ապա Աստված ինչ՞ր կարող է անել:

Հրեշտակը «հազար տարով» է շղթայում վիշապին: Այդ մասին կարդա՛ այս գլխի սկզբնամասի բացատրականը:

«Հրեշտակը նրան գցեց անդունդը, կողպեց եւ կնքեց կողպէքը, որպէսզի այլեւս չմոլորեցնի ազգերին, մինչեւ որ լրանայ հազար տարին: Դրանից յետոյ նա պէտք է ազատ արձակուի մի կարճ ժամանակով» (հմր 3):

Ե՞րբ է շղթայվելու Սատանան:

Քրիստոսի առաջին գալուստը աշխարհ, մկրտությունը, խաչելությունը, մահը եւ հարությունը եղան այն իրողությունները, երբ շղթայվեց Սատանան: Քրիստոս Վերնատանն Իր աշակերտներին հիշեցնում է, որ այժմ դատաստանի պահն է, եւ աշխարհի իշխանը դուրս պիտի գցվի: Նա ակնարկում էր Իր մահը, մահ, որ Նրա աշակերտներին ու աշխարհին պարտություն էր թվալու, սակայն Նրա համար սեփական հաղթանակ էր:

Քրիստոս թե՛ առաքյալներին եւ թե՛ Իր բոլոր հետեւորդներին իշխանություն տվեց՝ ընկճել Սատանային ու նրա ուժերին: Մինչեւ այսօր ու մինչեւ աշխարհի վախճանը Եկեղեցին ունի այդ իշխանությունը ու կիրարկում է: Եկեղեցին այդ իշխանությունը տալիս է հոգեւորականներին, ինչպես նաեւ բոլոր արժանիներին: Այդ իշխանությունը եկեղեցական լեզվում կոչվում է «երդմնեցուցչություն»: «Երդմնեցնել» նշանակում է երդումով կապել, կաշկանդել. դա չար ոգիների վրա Եկեղեցու իշխանությունն է, որ Եկեղեցին տալիս է իր պաշտոնյաներին: Հետեւաբար Սատանայի կապվելը նոր չէ, որ պիտի լինի, ոչ էլ ապագայում է լինելու, այլ պայմանավորված է Քրիստոսի երկրավոր առաջին գալստյամբ եւ հատկապես գալիս է Նրա Հարությունից: Ուստի, այս համարով չի խոսվում գալիք մի բանի մասին, այլ արդեն կատարված եւ ներկայում ի զորու եղող իշխանության մասին:

«Ապա տեսայ գահեր, որոնց վրայ նստեցին նրանք, որոնց իշխանութիւն տրուեց՝ դատելու: Տեսայ նաեւ այն հոգիներին, որոնք, Յիսուսին եւ Աստուծոյ խօսքին իրենց տուած վկայութեան համար, չարաչար սպանուել էին: Սրանք չէին երկրպագել Գազանին եւ իրենց ճակատների ու ձեռքերի վրայ չէին դրոշմել նրա կնիքը: Սրանք վերակենդանացան եւ հազար տարի թագաւորեցին Քրիստոսի հետ» (հմր 4):

Դարձյալ խոսվում է հազար տարիների թագավորության մասին:

Հայտնության գրքի 4-րդ եւ 5-րդ գլուխներում մի երկնային տեսիլք կա. այնտեղ կան երկու խումբ մարդիկ. առաջին խմբում են մեծ նեղության ժամանակի Երկրից եկող սրբերը կամ նահատակները, իսկ երկրորդը արդեն Երկինք բարձրացված մարդկանց անհամար մի բազմություն է, որը քսանչորս երեցների առաջնորդությամբ երկնային պաշտամունք է մատուցում Աստծուն:

Այս համարի պատկերման մեջ մենք գտնում ենք Քրիստոսի խոստումներից մեկի կատարումը. Քրիստոս խոստացել էր հաղթողնե-

րին Իր հետ բազմեցնել գահերի վրա եւ տալ թագավորելու իշխանություն:

Ովքե՞ր են այս հաղթողները:

Առաջին խումբը մասնավոր անուն կամ բնութագրում չունի, պարզապես մի ընդհանուր բացատրությամբ ասվում է. «Նրանց իշխանութիւն տրուեց՝ դատելու»: Կարելի է ասել, թե այս մեկը Եկեղեցին է: Երբ ասվում է Եկեղեցի, պետք է հասկանալ թե՛ Երկրի վրա գործող Եկեղեցին եւ թե՛ Երկնավոր Եկեղեցին:

Երկրորդ խումբը բաղկացած է նրանցից, ովքեր մեծ նեղության ժամանակի նահատակներից ու մարտիրոսներից են:

Ի՞նչ է նշանակում «սրանք վերակենդանացան»: Նրանք մարմնապե՞ս հարություն առան, թե՞ մի ուրիշ կենդանացման մասին է խոսքը: Այլ կերպ ասած՝ հազար տարվա իշխանությունը, որ ստանալու են հաղթողները, կիրարկելու են Երկրի՞ վրա, թե՞ Երկնքում: Հստակ է մեր Եկեղեցու հայրերի բացատրությունը. մարմնավոր հարության մասին խոսք չկա: Այս մարդիկ մարմնապես չէ, որ պիտի վերակենդանանա. հունարեն բառը չի ասում «վերակենդանացան», այլ՝ «ապրեցին»: «Ապրեցին» կարող է նշանակել, թե շարունակեցին ապրել, այսինքն՝ հոգեպես ապրել:

«Մնացած մեռելներից ոչ ոք չկենդանացաւ, մինչեւ լրացաւ հազար տարին: Սա մեռելների առաջին յարութիւնն է» (հմր 5):

Հարցի կենտրոնական մասին ենք հասնում: Նախ հիշեցնեմ մեր Եկեղեցու հայրերից մեկի՝ Գրիգոր Տաթեւացու խոսքերից մեկը. «Նրանք, որ մեռան մարմնով եւ հոգով, Աստուծոյ մօտ չբարձրացան՝ յարութիւն չառան»:

Ուրեմն առաջին հարությունը հոգեւոր հարություն է: Երբ ասում է «առաջին հարություն», ինչի՞ հետ հարաբերելով է «առաջին» կոչում՝ ժամանակագրակա՞ն, թե՞ որակական իմաստով, այսինքն՝ հարության տեսակի իմաստով: Տեսակի հարցը վերաբերում է մարմնավո՞ր, թե՞ հոգեւոր հարության:

Թե՛ մեր եկեղեցու եւ թե՛ ավանդական բոլոր Եկեղեցիների հավատալիքում առաջին հարությունը հոգեւոր է: Այդ հոգեւոր հարությունը

վերաբերում է ներկա աշխարհին ու ժամանակին: Այսինքն՝ երբ մեղքով մեռած մարդը վերարթնանա կամ գիտակցության գա եւ Քրիստոսով վերստին ծնվի որպես նոր արարած, ապա հարություն առած կլինի: Առաջին հարությունը հոգեւոր հարությունն է, որ ունենում են մարդիկ այս կյանքում, այսինքն՝ իրենց մարմնական մահից առաջ: Այնուհետեւ՝ մարմնավոր մահից հետո գալիս է երկրորդ հարությունը, որ իր որակով տարբեր է. դա մարմինների հարությունն է: Դրանից հետո միայն կարող է գալ կամ չգալ երկրորդ մահը, որ հոգեւոր մահն է, եւ որը բոլորին չի վերաբերում: Հետաքրքրական է նաեւ այսպիսի համեմատությունը. ինչը հոգեւոր է, հատուկ է միայն ոմանց: Հոգեւոր իրականությունը բոլորի համար նույնը չէ:

Այն, ինչ մարմնավոր է, ընդհանրական է, հատուկ է բոլորին, ինչպես որ մարմնական մահն է բոլորիս հատուկ: Ոչ ոք չի կարող խուսափել դրանից, բացի նրանցից, ովքեր տեսնելու են Տիրոջ գալուստը եւ չեն ճաշակելու մարմնական մահը, այլ ուղղակի պիտի փոխակերպվեն: Հոգեւոր մահը պիտի ճաշակեն Աստծո կամեցած ձեւով չապրածները:

Մարմինների հարությունն ընդհանուր է. բոլորն էլ մարմիններով հարություն են առնելու: Մի շարք աղանդավորներ այս ճշմարտությունը չեն ընդունում, սակայն նրանց մերժումն աստվածաշնչական որեւէ հիմք չունի. Սուրբ Գիրքն ասում է, որ բոլորն էլ մարմնով հարություն են առնելու:

Արդ, այստեղ խոսվում է հոգեւոր հարության մասին, որը ներկա կյանքում դարձն է դեպի Քրիստոս. հոգեւոր հարությունը Քրիստոսով հոգեւոր վերակենդանացումն է:

«Երանելի եւ սուրբ են նրանք, ովքեր բաժնեկից են մեռելների առաջին յարութեանը: Սրանց վրայ երկրորդ մահն իշխանութիւն չունի. սրանք կլինեն Աստուծոյ եւ Քրիստոսի քահանաները եւ հազար տարի կթագաւորեն Քրիստոսի հետ» (հմր 6):

Այս համարում գտնում ենք հինգերորդ «երանի»ն: Ինչո՞ւ է երանի տրվում մեռելների առաջին հարության մասնակիցներին: Նախ՝ «երանելի» են կոչվում, որովհետեւ անցան նեղությունների եւ փոր-

ձությունների կրակից եւ Աստծուն ներկայացան որպես ընտիր անձինք: Նրանք «սուրբ» են կոչվում, որովհետեւ ապրեցին կեղտի ու ապականության միջավայրում, բայց դրանով հանդերձ կարողացան իրենց մաքուր պահել, չվերցրին աշխարհի, հատկապես՝ Գազանի պատկերը, այլ իրենց անձերի վրա պահպանեցին Աստծո դրոշմը, Աստծո պատկերը: Նրանք վաստակեցին Երկրի վրա Աստծո անունն արժանավորապես կրելու պատիվը: Նաեւ սուրբ են նրա համար, որ ներկա կյանքում իսկ շահեցին հավիտենականությունը, դարձան հավիտենականության ժառանգորդ: Մահկանացու օրերում իսկ նրանք ապրեցին որպես անմահներ, որովհետեւ իմացան, թե Ո՛ւմ են հավատում: Նրանք երանելի են, որովհետեւ Տիրոջ՝ Քրիստոսի խոստումներին պիտի արժանանան, լինեն սուրբ ժողովուրդ եւ թագավորելու արժանի քահանաներ:

Նրանք, որպես քահանաներ Քրիստոսի հետ թագավորելով, անդադար բարեխոսում են Երկրի վրա ապրող իրենց եղբայրների եւ քույրերի համար եւ որպես թագավորներ՝ հովվում են Քրիստոսի Սուրբ Եկեղեցին:

ՍԱՏԱՆԱՅԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ (20:7-10)

«Երբ լրանայ հազար տարին, Սատանան ազատ կարձակուի բանտից: Նա կելնի ու կմոլորեցնի Երկրի չորս կողմերում գտնուող բոլոր ազգերին, Գոգին ու Մագոգին, եւ նրանց կհաւաքի պատերազմելու համար. նրանց թիւն անհամար է ծովի աւազի չափ» (հմր 7):

19-րդ գլխում Քրիստոս ներկայանում էր որպես Իր եկեղեցու զորավար: Նրա հետ ներկայանում են եւս երկու բանակ՝ հրեշտակների զորքը, ինչպես նաեւ՝ Նրան մարտակից, զորակից Եկեղեցին: Այս համարի միջոցով տեսնում ենք Քրիստոսի եւ Նրա զորքի դեմ Սատանայի դրդմամբ ոտքի ելած ազգերի մի բազմություն, որոնց խորհրդանիշերն են Գոգն ու Մագոգը: Այս անունները հիշատակվում են Եզեկիելի մարգարեության 38-39-րդ գլուխներում, որտեղ Գոգ անունը կրող անձը ներկայանում է որպես Փոքր Ասիայի տիրակալներից՝

«Մագոգ» ազգի Լիդիայի նահանգի իշխան: Նա տիրապետում էր պոսքերի եւ պոնտացիների երկրին: Եզեկիել մարգարեն ասում է, թե նա իր շուրջն էր համախմբել Պարսկաստանի, Եթովպիայի, Լիբիայի, կիմերների (Սեւ ծովի հյուսիսում ապրող ժողովուրդ) եւ Թորգոմա տան, այսինքն՝ Հայաստանի բանակները:

Եզեկիելի մարգարեության այս պատկերումը Աստծո ժողովրդի այն թշնամիների օրինակն է, որոնք վերջին ժամանակներում պետք է ոտքի ելնեն Բանսարկուի առաջնորդությամբ:

Ճրբ է տեղի ունենալու այս պատերազմը: Այստեղ ասվում է՝ հազար տարին լրանալուց հետո: Եթե «հազար տարի» ասելով՝ մենք հասկանում ենք Եկեղեցու պատմության ողջ ժամանակաշրջանը, ապա նշանակում է, որ այդ ժամանակը լրանալուն պես (ինչը մեծ նեղության ժամանակի վերջն է) պիտի լինի:

Սատանան այս գործողությունը ձեռնարկելու է երկու գազանների կապվելուց եւ կրակի լիճը գցվելուց հետո, ուրեմն՝ «յոթ տարիների ավարտին» կամ Քրիստոսի գալուստից անմիջապես առաջ կամ հենց Քրիստոսի գալստյան ժամանակ: Ինձ այնպես է թվում, թե Արմագեդոնի պատերազմը եւ այս մեկը երկու տարբեր պատերազմներ չեն, այլ տարբեր անվանումներով ակնարկվում է նույն պատերազմը:

«Նրանք տարածուեցին Երկրի վրայ եւ շրջապատեցին Աստուծոյ ընտրեալների բանակավայրն ու սիրելի քաղաքը» (հմր 8):

«Բանակավայր» անվանումը գալիս է եբրայեցի ժողովրդի թափառական կյանքից: Անապատում նրանք ուր իջեւանում էին, այնտեղ բանակավայր էին հաստատում: Եբրայեցիներին ուղղված նամակի 13-րդ գլխի 13-րդ համարն Աստծո ժողովրդին կամ քրիստոնյաներին համարում է Աստծո բանակավայր:

«Սակայն երկնքից, Աստուծոյ մօտից կրակ տեղաց եւ լափեց նրանց» (հմր 9):

Քրիստոսի խոսքը բավարար է ոչնչացնելու համար Սատանայի զորքերը:

«Իսկ Բանսարկուն, որ մոլորեցրեց նրանց, գցուեց կրակի եւ ծծմբի լիճը, ուր արդէն գցուել էին Գազանը եւ սուտ մարգարէն. այնտեղ

նրանք պիտի չարչարուեն գիշեր ու ցերեկ, յաւիտեանս յաւիտենից» (հմր 10):

Ի վերջո հասնում է Չարի դատապարտության պահը. Բանսարկուն գցվում է «կրակի եւ ծծմբի լիճը»: Նախապես բացատրեցի, որ «կրակի եւ ծծմբի լիճն» անվախճան բնություն ունի: Այնտեղ նետվածները տանջվում են «գիշեր ու ցերեկ» եւ «հավիտյանս հավիտենից», այսինքն՝ առանց դադարի:

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ (20:11-15)

Հայտնության գրքի 20-րդ գլխի 11-15-րդ համարներում ունենք վերջին դատաստանի պատկերը: Քրիստոսի առակներում եւ առաքելական նամակներում դատաստանի մասին որոշակի բան կարդացածները պիտի ակնկալեին, որ այս գրքում դատաստանը շատ ավելի վառ եւ երեւակայությունները գրգռող պատկերով տրվեր: Բայց զարմանալի է, որ առաքյալին այդ ակնկալությունը երբեք չի գոհացնում, որովհետեւ նրա նպատակը հետաքրքրությանը գոհացում տալը չի եղել: Առաքյալը ցույց է տվել դատաստանի պարզությունը եւ այդ պարզության մեջ՝ նրա դաժանությունը:

«Յետոյ տեսայ մի մեծ, սպիտակ գահ եւ նրա վրայ բազմած Մէկին, որի ներկայութիւնից փախան Երկինքն ու Երկիրը՝ առանց հետք թողնելու» (հմր 11):

Այս տեսիլքը նկարագրում է մի մեծ եւ սպիտակ գահ: Ըստ իր ոճի՝ Հովհաննես առաքյալը փոխանակ ասելու, թե գահի վրա նստողն ով է, որդեգրում է բացատրության անուղղակի մի ձեւ. գահի վրա նստողը ներկայացվում է երրորդ դեմքով:

Բնականաբար մեծ, սպիտակ գահն Աստծո գահն է: Սպիտակը սրբության, հաղթանակի եւ փառքի խորհրդանիշն է: Այս դեպքում գահը հիշեցնում է Աստծո անսասանելի սրբությունը, Նրա ամենազորությունը եւ աննկարագրելի փառքը, սակայն մյուս կողմից էլ մի այլ բան է ասում՝ Աստծո դատաստանի բացարձակ արդարությունը:

Յուրաքանչյուր ընթերցող միշտ երկու հնարավորության առջեւ է

գտնվում՝ կամ իր կարդացածը պիտի հասկանա բառացի, կամ պետք է հասկանա փոխաբերական, այլաբանական իմաստով: Արդ, «որի ներկայութիւնից փախան Երկինքն ու Երկիրը՝ առանց հետք թողնելու» խոսքը պետք է հասկանալ բառացիորեն, թե՞ փոխաբերական կամ այլաբանական իմաստով. այսինքն՝ Երկինքն ու Երկիրը այլեւս անհետանալո՞ւ են:

Հաջորդ գլուխն սկսվում է «Նոր Երկինք եւ Նոր Երկիր» բացատրությամբ: Արդյոք ներկայումս գոյություն ունեցող երկինքն ու Երկիրն ամբողջապես դադարելո՞ւ են գոյություն ունենալուց, եւ Աստված նրանց փոխարեն նոր երկինք ու նոր Երկիր պիտի ստեղծի՞:

Արդյոք այստեղ հնարավո՞ր է այլ ձեւով հասկանալ ասվածը:

Ընդհանուր կերպով ասեմ, որ Աստվածաշունչը, առաջին գրքից սկսած, հաճախ մեզ ցույց է տալիս այն կապը, որ մենք երբեմն մոռանում ենք. մարդն ու աշխարհը սերտորեն կապված են միմյանց: Ժողովրդական բացատրությամբ՝ մարդն ու աշխարհը ճակատագրակիցներ են:

Ինչպես Աստված մարդուն ստեղծել է փառավորապես, այնպես էլ փառավոր է ստեղծել նաեւ աշխարհը: Մարդու մեղանչմամբ եւ անկմամբ նաեւ աշխարհը կորցրեց իր փառքը: Մարդու մեղանչման առիթով Աստված ասաց. «Թող անիծեալ լինի Երկիրը՝ քո արածի պատճառով» (Ծն 3:17): Հետեւաբար, աշխարհը ենթարկվեց այն բոլոր չարիքներին, որոնց ենթարկվեց մարդը:

Մարդ արարածը թե՛ Քրիստոսի աշխարհ գալուց առաջ եւ թե՛ Քրիստոսի Հարությունից հետո կարոտ է փրկության: Ասում եմ՝ կարոտ է նաեւ մարմնավոր փրկության, որովհետեւ մեղքին ենթակա են ոչ միայն հոգին, այլեւ՝ մարմինը: Աստված մարդուն ստեղծել էր փառավոր եւ զորավոր: Սակայն անկումից հետո մարդ արարածը կորցրեց իր փառավորությունն ու զորությունը, տկարացավ, ենթարկվեց զանազան հիվանդությունների, թերությունների, խեղությունների եւ մահկանացու դարձավ: Բայց մարդ արարածը Քրիստոսի շնորհիվ դարձյալ վերագտնելու է իր սկզբնական փառավորությունն ու զորությունը, ինչպես նաեւ՝ իր անմահությունը:

Մարմնի նման է մարդու հոգին եւս, որը նույն անկյալ վիճակի մեջ է: Նախ՝ հոգին պետք է ապրի հարության փորձառությունը, որպեսզի հետո, երբ մարմնի հարությունը տեղի ունենա, կարողանան իրար միանալ փառավորյալ հոգին ու մարմինը: Նույնանման են աշխարհի պատմությունն ու ճակատագիրը:

Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված թղթի 8-րդ գլխի 21-րդ համարում ասում է, որ աշխարհն ինքն էլ մինչ այժմ հեծում է՝ սպասելով մարմինների նորոգությանը: Թեեւ աշխարհը, որպես նյութեղեն իրականություն, գիտակցություն չունի, սակայն նույնպես զգում է նույն բանի կարոտը:

Նորագույն մեկնիչներից մեկն ասում է, թե Ադամի ու Եվայի մեղանչումով առաջին երկինքն ու Երկիրը չքացան, այն Երկինքն ու Երկիրը, որ հիմա կան, երկրորդ երկինքն ու Երկիրն են, սակայն սրանք էլ են անցնելու, եւ գալու են նոր Երկինք ու նոր Երկիր, որոնք կլինեն երրորդ երկինքն ու երրորդ Երկիրը: Նա մեզ հիշեցնում է Պողոս առաքյալի խոսքերից մեկը, որ արձանագրված է կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի 12-րդ համարում, որտեղ առաքյալը խոսում է դեպի երրորդ Երկինք տարվելու մասին:

Առհասարակ մենք երրորդ Երկինքը պատկերացնում ենք որպես երկնքի հարկերից մեկը, սակայն մեկնիչը հափշտակության փորձառության վայր երրորդ Երկնքի համար մեկ ուրիշ բացատրություն է առաջարկում: Նա ասում է, թե Աստված Պողոս առաքյալին փոխադրում է այն երրորդ հանգրվանի Երկինքն ու Երկիրը, ուր նա չի կարող պատմել իր տեսածների մասին, որովհետեւ դրանք անպատմելի են:

«Եւ տեսայ մեռելներին մեծ ու փոքր, որոնք կանգնած էին գահի առաջ: Բացուեցին գրքերը եւ ապա բացուեց մի ուրիշ գիրք՝ Կեանքի գիրքը: Մեռելները դատուեցին ըստ իրենց գործերի, որոնք արձանագրուել էին այնտեղ» (հմր 12):

«Մեծ ու փոքր» ասելով՝ չի ակնարկվում տարիքը, այլ՝ իշխանությունը կամ հասարակական դիրքը: Աստծո գահի առջեւ ամեն ոք հավասար է:

Խոսվում է նաեւ երկու տեսակ գրքերի մասին: Խմբերից մեկը գրքերը ներկայացնում է պարզ «գրքեր» անվանումով, կա նաեւ մի գիրք, որ ներկայացվում է «Կյանքի գիրք» խորագրով: Սրանք տարբեր բաներ են: Մեռելների համար առհասարակ ասվում է՝ «գրքերը բացվեցին» եւ վերջում կրկնում է՝ դատվեցին ըստ իրենց գործերի, որոնք արձանագրված էին դրանց մեջ: Այստեղ Կյանքի գրքի մասին չի խոսվում. Կյանքի գիրքը ուրիշ բան է:

Դժվար է երեւակայել, թե Աստված Իր մոտ արձանագրության տոմար ունի, ուր նյութական ըմբռնումով՝ մեկ առ մեկ արձանագրում է մարդկանց գործերը: Երկինքն աննյութական ոլորտ է, հետեւաբար, նյութական պատկերացումը երկնային իրականության ճիշտ ընկալումը չէ:

Մի շարք մեկնիչներ գտնում են, որ այս «գրքեր»ը խորհրդանշում են յուրաքանչյուր մարդու խղճմտանքը: Մեր խիղճը, մեր միտքը, մեր հիշողությունները նմանեցվել են գրքերի: Հետաքրքրականն այն է, որ մերօրյա գիտությունը մեզ մոտավորապես նույն բանն է ասում: Օրինակ՝ հոգեբանական գիտությունները մեզ շատ հստակ ասում են, թե մինչ մենք կարծում ենք, թե կյանքում մոռանալով շատ բան ենք կորցնում, սակայն իրականությունն այդպիսին չէ. մարդու փորձառության մեջ ոչ մի բան չի կորչում: Ամենափոքրիկ փորձառությունը (երբ ասում եմ «փորձառություն», հասկանում եմ եւ արարք, եւ խորհուրդ, եւ խոսք) արձանագրվում է մեր հիշողության մեջ: Մենք ունենք գիտակից միտք, որ իր մեջ պահպանում է մշտապես գործածելի բոլոր տարրերը: Բայց ունենք նաեւ մի երկրորդ միտք, որ կոչվում է ենթագիտակցություն. սա ննջած աշխարհն է, ուր գտնվող, պահվող տեղեկությունները շուտ-շուտ կամ հաճախակի երեւան չեն գալիս:

Դատաստանի պահին, երբ մենք դուրս եկած լինենք մեր հողեղեն պայմաններից, հիշելու ենք մեր կյանքի բոլոր փորձառությունները, որոնց մասին տեղյակ է Աստված, եւ մենք պիտի դատվենք Տիրոջ մոտ եղած այդ բոլոր արձանագրությունների հիման վրա: Եթե երբեւէ այդ արձանագրությունները Տիրոջ շնորհի լույսի տակ չենք դրել,

այսինքն՝ աստվածային գութի առջեւ չենք պարզել, դրանք մեր դեմ՝ որպես դատավճիռ կարձակվեն:

Հայտնության գրքում երկու անգամ նշվում է, որ Կյանքի գիրքը պատկանում է Գառանը: Կյանքի գիրքը խորհրդանշում է աստվածային հիշողությունը: Այդ գրքում արձանագրվողները Աստծուն հավատարիմ եղածները եւ չարի դեմ Նրա հետ պայքար մղածներն են: Նրանք Աստծո ընտրյալներն են եւ մնայուն ներկա են Աստծո հիշողության մեջ:

«Ապա ծովը յանձնեց իր մէջ գտնուող մեռելներին. նոյն բանն արեցին մահն ու դժոխքը, եւ իւրաքանչիւր մեռել դատուեց ըստ իր գործերի» (հմր 13):

Նախ խոսվեց Երկրի մեռելների մասին, իսկ այժմ խոսվում է ծովի մեռելների մասին: «… Նոյն բանն արեցին մահն ու դժոխքը» նախադասությունը մատնանշում է մահվան իրականությունը: Մահն ու դժոխքը ներկայացվել են անձնավորված, սակայն դրանք անձեր չեն: Եթե կա անձնավորված մեկը, որ առնչվել է մահվանն ու դժոխքին, դա Սատանան է: Ինչպես կյանքի սկզբնաղբյուրին՝ Աստծուն մենք կոչում ենք «Կյանք», նույնպես եւ մահվան պատճառին՝ Սատանային, «մահ» կամ «դժոխք» ենք կոչում: Սակայն այստեղ ասվածը վերաբերում է մահվան պարզ իրականությանը: «Դժոխք» բառով նաեւ շեշտվում է, որ մինչեւ դատաստանի օրը բոլոր մեռելների հոգիներն սպասողական վիճակում են:

«Յետոյ մահն ու դժոխքը գցուեցին կրակի լիճը: Այս է երկրորդ մահը, որ կրակի լիճն է: Եւ նա, ում անունը չկար Կեանքի գրքում, գցուեց կրակի լիճը» (հմր 14-15):

Մեզ խորհրդանշականորեն ասվում է, թե մահն ու դժոխքը կամ մահվան իրականությունն ու հոգիների սպասումը հասել են իրենց վախճանին, այնտեղ, ուր նետվել էին վիշապը, Գազանը եւ սուտ մարգարեն:

ԻԱ ԳԼՈՒԽ

Հայտնության գրքի այս եւ հաջորդ գլուխները ներկայացնում են Նոր կամ Վերին Երուսաղեմի տեսիլքը: Նոր կամ Վերին Երուսաղեմը ներկայանում է որպես այն մյուս քաղաքի կատարյալ կամ ամբողջական հակադրությունը, որ մենք տեսանք 17-րդ եւ 18-րդ գլուխներում: Այս քաղաքը նույնպես ներկայանում է կնոջ կերպարանքով, սակայն Բաբելոնին բոլորովին հակադիր պատկերով:

Երկուսի դեպքում էլ «կին» բառը խորհրդանշում է բնակիչներին: Բաբելոնը ներկայացվել էր որպես պոռնիկ, իսկ 21-րդ եւ 22-րդ գլուխներում ներկայացված կինը հարս է, որը կոչվել է «Գառան կինը»: Սա սրբության, անապականության խորհրդանիշն է: 17-րդ եւ 18-րդ գլուխներում ներկայացված քաղաքը՝ Բաբելոնը, նկարագրվել է որպես «ամեն տեսակ պիղծ ոգիների արգելարան», «անմաքուր թռչունների եւ գազանների բանտ», մինչդեռ Նոր կամ Վերին Երուսաղեմը ներկայացված է որպես Աստծո բնակարան: Բաբելոնը համարվել է ազգերի նզովքի առարկա, մինչդեռ Նոր կամ Վերին Երուսաղեմը լինելու է ազգերի ուրախությունը (Ես 65):

20-րդ գլխից սկսած՝ շատ հետաքրքրական անդրադարձ է կատարվում Ծննդոց գրքի առաջին երեք գլուխներին, ուր տեղ են գտել աշխարհի արարչագործությունը, դրախտային վիճակը, մարդու անկումն ու դատապարտությունը եւ արտաքսումը դրախտից: Սակայն անդրադարձը կատարվում է շրջված ընթացքով: Այնտեղ նախ տեսնում ենք Չարի դատապարտությունը, մարդու եւ աշխարհի վերանորոգումը, մարդու ազատագրումը ցավի ու մահվան տիրապետությունից, Նոր Դրախտը կամ Աստծո Սուրբ Քաղաքը: Այս ընթացքն ավարտվում է նոր արարչագործության սպասումով:

ՆՈՐ ԵՐԿԻՆՔ ԵՎ ՆՈՐ ԵՐԿԻՐ (21:1-8)

«Ապա տեսայ մի նոր Երկինք եւ նոր Երկիր, որովհետեւ նախկին երկինքն ու Երկիրն անհետացան, եւ ծովն էլ կորաւ» (հմր 1):

Երկնքի ու Երկրի անհետանալն ու կորչելը նրանց բնաջնջումը չի նշանակում: Սա որակական փոփոխություն է: Երբ մի շարք մեկնիչներ եւ հատկապես նորագույն շրջանի մեկնիչները խոսում են երկնքի եւ Երկրի մասին, ասում են, թե նրանց անհետացումը փոխաբերական իմաստ ունի, ոչ թե իրական, իսկ ծովը համարում են ժողովուրդների խորհրդանիշ, իսկ ծովի կորչելը, անհետանալը մեկնաբանում են որպես աշխարհիկացած եւ խառնակ կյանք ապրող ժողովուրդների կորուստ:

«Եւ տեսայ սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղէմը, որ իջնում էր Աստուծոյ մօտից, երկնքից՝ զարդարուած ու պատրաստ, ինչպէս հարսն իր ամուսնու համար» (հմր 2):

Նախապես բացատրեցի, թե ինչու է Աստված Իր ժողովրդին նաեւ կնոջ կամ հարսի պատկերով ներկայացնում. քանի որ նրանք խորհրդանշում են ընտանիքի մտերմագույն կապը, ուստի Աստված Իր եւ ժողովրդի կապը կամենում է ցույց տալ մարդկային կյանքին բնորոշ մտերմագույն սիրո կապի այդ խորհրդանիշերով:

Երկնքից իջնող Երուսաղեմը եւս ունի երկրավոր Երուսաղեմի հատկանիշները, սակայն ավելի շատ նման է տաճարի:

Այդ Երուսաղեմին տրվելիք նկարագրությունն այնուհետեւ մատնանշում է մի սրբավայր, այլ ոչ թե սովորական քաղաք: Նոր Երուսաղեմը ներկայանում է նաեւ Դրախտի որոշ հատկանիշներով:

«Երկնքից լսեցի մի ձայն, որն ասում էր. «Ահաւասիկ Աստուծոյ բնակավայրը մարդկանց մէջ. Աստուած բնակուելու է նրանց հետ, եւ նրանք կլինեն Իր ժողովուրդը, եւ Ինքը՝ Աստուած, նրանց հետ կլինի որպէս նրանց Աստուածը» (հմր 3):

Երբ Աստված ժողովուրդներից մեկին Իր մոտ կանչեց, Նա մի նպատակ ուներ, որ նաեւ ուխտով հաստատվեց՝ միություն Իր կանչած ժողովրդի հետ: Աստծո ժողովուրդը Նրա մտերմագույն ընտանիքն է: Այդ մտերմագույն կապն Աստված արտահայտեց նյութական ձեւով, որովհետեւ մարդիկ ընկալելու ուրիշ կերպ չունեին:

Աստված Իր սրբավայրը կամ Վկայության Խորանը սեփական ժողովրդի մեջ հաստատեց, որպեսզի բնակվի այնտեղ (Ելք 25:8), սակայն դա վերջնական կերպը չէր: Աստված կամենում էր նաեւ դաստիարակել մարդ արարածին, որպեսզի նա իր նախնական վիճակից աստիճանաբար դուրս գար, ազնվանար իր մտածողությամբ ու հոգիով եւ հասներ ճշմարիտ իմացության, որը հատուկ է ճշմարիտ երկրպագուներին:

Քրիստոս, որպես Բանն Աստված, եկավ, տաղավարվեց կամ բնակվեց մարդկային մարմնում, որպեսզի Ինքն Իրեն նաեւ մարմնապես ներկա դարձնի մեր պատմության մեջ, Իր ժողովրդի մեջ լինի, սակայն մարդիկ ի վիճակի չեղան հասկանալու Նրան: Մինչեւ այսօր էլ, անգամ 2 000 տարի անց, նույնիսկ Քրիստոսի Եկեղեցու անդամներից շատերը դա դժվարությամբ են ընկալում: Հետեւաբար, Աստծո ծրագիրը դեռեւս մնում է իրագործելի: Մենք ներկայում պատրաստվում ենք վախճանական այն փուլին, երբ Աստված վերջնականապես հաստատելու է Իր բնակությունը, ուր այլեւս պատնեշ չի լինելու Նրա եւ Նրա ժողովրդի միջեւ, քանի որ այդ ժամանակ ամենքն էլ պետք է դուրս եկած լինեն մարմնավոր սահմանափակումներից, պիտի կարողանան Աստծուն ընկալել իրենց մեջ, որովհետեւ իրենք եւս հաստատված են լինելու Աստծո մեջ:

«Նա կսրբի նրանց աչքերից ամէն արտասուք, եւ այլեւս ո՛չ մահ գոյութիւն կունենայ, ո՛չ սուգ, ո՛չ ողբ, ո՛չ ցաւ եւ ո՛չ էլ յոգնածութիւն, որովհետեւ նախկիններն անցան գնացին» (հմր 4):

Մի սպասված երանություն կա, եւ ասվում է, թե այդ երանությունը գալու է: Այս ակնկալությանը մասնակիորեն արդեն հանդիպել ենք Հայտնության գրքի 7-րդ գլխում, երբ ներկայացվում էր փրկվածների անհամար բազմությունը.

«Նա, որ նստած էր գահի վրայ, ասաց.

– Ահաւասիկ ամէն բան նոր եմ դարձնում:

Ապա ասաց ինձ.

– Գրի՛ր սրանք, որովհետեւ այս խօսքերը ճշմարիտ եւ վստահելի են» (հմր 5):

Մեզ հայտնի արարչագործությունը՝ ամբողջ տիեզերքը, վերափոխվում է Աստծո հրամանով՝ դառնալու համար Նոր Երկինք եւ Նոր Երկիր: Աստված է միայն, որ կարող է հնացածները վերանորոգել եւ խախտվածներն իրենց սկզբնական վիճակի մեջ վերահաստատել, որովհետեւ Նա է Սկիզբը եւ Վախճանը: Նա անմիջապես ասելու է.

«Եւ ասաց.

– Եղաւ, ես եմ Այբը եւ Քէն (Յայտնութեան գրքում՝ Ալֆան եւ Օմեգան - Ջ. Ա.), Սկիզբն ու Վախճանը» (հմր 6):

Աստված սպասված իրականությունը պետք է դարձնի այնպիսին, ինչպիսին էր ամեն ինչի սկիզբը, որովհետեւ, իբրեւ Սկիզբ, Նա հաստատեց կամ սկզբնավորեց արարչագործությունը կամ տիեզերքը: Այն ժամանակ Աստված լինելու է ամեն ինչ, այսինքն՝ ամեն բանի մեջ, որովհետեւ Ինքն է Վախճանը:

«Եղաւ» բառով կամենում է ասել, թե բան չմնաց, մոտ է ժամանակը, երբ Աստծո ծրագիրը կհասնի իր վախճանական կատարմանը:

«Ես ծարաւածին ձրի ջուր կտամ կեանքի ջրի աղբիւրից» (հմր 6):

Կարեւորագույն խոստում է սա: Հավատացյալի կյանքն այս աշխարհում ներկայացվել է ջրին պապակ կենդանու պատկերով, որը միշտ դեպի աղբյուրն է գնում՝ իր ծարավը հագեցնելու համար: Հավատացյալ մարդը չի կարող բավարարվել միմիայն աշխարհով: Աշխարհից ավելի շատ՝ նրան անհրաժեշտ է իր հոգու ծարավը հագեցնելը:

Եվ Աստված, ինչպես սաղմոսն է ասում, յուրայիններին արածեցնում է դալար արոտավայրերում եւ հանգստյան ջրերի կողքին (Սղ 23:2): Քրիստոս կրկնեց նույն խոստումը, երբ ասաց սամարացի կնոջը. «Եթէ գիտենայիր Աստուծոյ պարգեւը եւ թէ ո՞վ է, որ քեզ ասում է՝ ինձ խմելու ջուր տուր, հաւանաբար դու ինքդ կուզէիր նրանից, եւ նա քեզ կենսատու ջուր կտար» (Հհ 4:10): Նույն խոստմանը վերստին հանդիպում ենք նաեւ այստեղ:

«Ով որ յաղթի, կժառանգի այս բոլորը, եւ նրա Աստուածը կլինեմ, եւ նա՝ Իմ որդին» (հմր 7):

Բոլոր խոստումները հավատացյալների համար են: Այս խոսքի մեջ կարելի է կարդալ բոլոր «երանի»ների ցանկը:

«Բայց, վախկոտների, անհաւատների, պիղծերի, մարդասպանների, պոռնիկների, կախարդների, կռապաշտների եւ բոլոր ստախօսների բաժինը կրակով եւ ծծումբով այրուող լիճն է, որը երկրորդ մահն է» (հմր 8):

Սա մի ազդարարություն է: Կարելի է յուրաքանչյուր բառի շուրջ երկար խոսել, սակայն դրանք բացատրեմ համառոտակի:

Ովքե՞ր են վախկոտները: Բոլորս էլ կարող ենք վախ ունենալ, բայց այստեղ նշվածը չի վերաբերում սովորական վախին: Հայտնության գրքում վախկոտները իրենց հավատքի մասին վկայելու քաջություն չունեցողներն են: Դա է պատճառը, որ հաջորդ բառն «անհաւատներ»ն է. վախկոտներն ու անհավատները սերտորեն կապված են միմյանց: Պիղծերն ու պոռնիկներն էլ իրար են կապված: Մարդկային մարմինը պետք է լինի Աստծո բնակարան եւ տաճար, եւ այդ տաճարը պղծողները չեն կարող արժանի լինել խոստացված երանությանը, ուր որեւէ պիղծ եւ նզովյալ բան գոյություն չի ունենալու: Մարդասպանները, կախարդներն ու կռապաշտներն ուղղված են մարդ անհատի դեմ, իսկ մարդու դեմ ուղղված յուրաքանչյուր արարք կամ ընթացք ուղղված է հենց Աստծո դեմ:

Այս ցանկի մեջ ամենից «թեթեւ» իրավիճակում ստախոսներն են: Ստախոսությունը կարող է փոքր բան թվալ, սակայն մեծամեծ անկումների ճանապարհ է նախապատրաստում: Ստախոսությունը մի զառիթափ է, որի վրա մարդն անկարող է կանգ առնել՝ մինչեւ վերջնական կորստյան չհասնի: Հայտնության գրքում սուտը եւ ստախոսությունը ներկայանում են որպես վիշապի, Գազանի եւ սուտ մարգարեի նկարագրական. ստախոսն Աստծո պատկերից հեռացած անձ է:

ՆՈՐ ԵՐՈՒՍԱՂԵՄ (21:9-27)

«Ապա ինձ մօտ եկաւ մէկն այն եօթ հրեշտակներից, որոնք ունէին եօթ պատուհասներով լեցուն եօթ անօթները: Նա խօսեց ինձ հետ եւ ասաց.

– Եկ, քեզ ցոյց կտամ հարսին՝ Գառան կնոջը» (հմր 9):

Արդեն ընդհանուր պատկերացում ունեցանք Աստծո քաղաքի կամ Վերին Երուսաղեմի մասին, իսկ այս փուլում գալիս է մի հրեշտակ՝ այդ քաղաքի մանրամասնյալ պատկերը տալու համար: Նա Աստծո քաղաքը ներկայացնում է որպես «Գառան կնոջ»: Այս հրեշտակն աշխարհին վերջին պատուհասները տված յոթ հրեշտակներից է, եւ հիմա եկել է պահը՝ տալու Աստծո կամ հավիտենական կյանքը ներկայացնող քաղաքի նկարագրությունը:

Ամեն դեպքում նյութական քաղաք է նկարագրվում, սակայն որոշ է, որ քաղաքը նյութական չէ:

«Նա հոգիով ինձ բարձրացրեց, առաւ եւ տարաւ մի բարձր ու հսկայ լեռան վրայ եւ ցոյց տուեց սուրբ քաղաքը՝ Երուսաղէմը, որ իջնում էր Երկնքից՝ Աստուծոյ մօտից» (հմր 10):

«Հոգիով բարձրացրեց»: Սուրբ Հոգու ներշնչմամբ մի ներքին կամ հոգեւոր բարձրացում է սա, որ առաքյալին բարձրացրել է մի ոլորտ՝ այնտեղ ցույց տալու համար Նոր Երուսաղեմը:

Նա մի լեռան վրա է տարվում: Ըստ ոմանց՝ այստեղ քաղաքն է լեռան վրա իջնողը, սակայն բնագիրը մեզ ասում է, որ հրեշտակն ու առաքյալը գտնվում են լեռան բարձունքին, իսկ քաղաքն իջնում է ոչ թե լեռան, այլ ավելի ներքեւ՝ Երկրի վրա:

Իսկ ինչպիսի՞ն էր այդ քաղաքը:

«Նա փայլում էր Աստուծոյ փառքով, եւ նրա փայլը նման էր թանկագին քարի փայլի, ինչպէս բիւրեղի պէս թափանցիկ յասպիս քարը» (հմր 11):

Հասպիս քարը կարող է կանաչորակ լինել, կարող է լինել նաեւ կարմրագույն: Հասպիսն Աստծո ներկայության խորհրդանիշն է:

«Քաղաքն ունէր մի մեծ եւ բարձր պարիսպ՝ տասներկու դռներով, որոնց վրայ կային տասներկու հրեշտակներ: Դռներից իւրաքանչիւրի վրայ գրուած էր Իսրայէլի տասներկու ցեղերից իւրաքանչիւրի անունը» (հմր 12):

Քաղաքի այսպիսի նկարագրությունը նման է այն պատկերացմանը, որ գտնում ենք Եզեկիելի մարգարեության 48-րդ գլխի 30-35-րդ համարներում: Տասներկու դռներից յուրաքանչյուրի վրա կար մի հրեշտակ եւ ամեն մեկի վրա մի անուն էր գրված: Այդ անունները եբրայեցի ժողովրդի ցեղերի անուններն են: Յուրաքանչյուր դռան վրա մի ցեղի անուն գրված լինելը այլ նշանակություն չունի, քան այդ ցեղի ինքնության, նկարագրի ու առաքելության բնորոշումը կամ բնութագիրը: Տասներկու ցեղերի անուններն Աստծո ժողովրդի խորհրդանիշերն են:

Աստված Իր հին ժողովրդին մերժեց, սակայն նրանից մի մնացորդ կամ մասնիկ պահպանելով՝ դարձրեց թթխմոր այն նոր ժողովրդի համար, որին կանչեց Քրիստոսով եւ դարձրեց Իրենը: Հին Իսրայելի փոխարեն Աստված Իր համար ժողովուրդ դարձրեց Նոր Իսրայելը, որի ներկայացուցիչները տասներկու առաքյալներն են:

«Արեւելքից կային երեք դռներ, հիւսիսից՝ երեք, հարաւից՝ երեք եւ արեւմուտքից՝ երեք» (հմր 13):

Քաղաքը ներկայացված է քառակուսի, որ յուրաքանչյուր կողմի վրա երեք դուռ ունի: Երեք դռները կարող են մեզ ինչ-որ բան թելադրել: Քառակուսի քաղաքն աշխարհի խորհրդանիշն է, իսկ երեք դռները խորհրդանշում են Ամենասուրբ Երրորդությունը: Աստծո արքայությունը տարածվելու է աշխարհի չորս կողմերի վրա, այսինքն՝ ամբողջ աշխարհի վրա, իսկ նրա դռներն են Հայր Աստված, Որդի Աստված եւ Սուրբ Հոգի Աստված:

«Քաղաքի պարիսպն ունէր տասներկու հիմքեր, եւ դրանց վրայ գրուած էին Գառան տասներկու առաքեալների անունները» (հմր 14):

Պողոս առաքյալը կորնթացիներին եւ եփեսացիներին գրած նամակներում Եկեղեցու հիմքը համարում է Հիսուսի առաքյալներին,

հետեւաբար այստեղ հիշատակված հիմքերը հենց տասներկու առաքյալներն են:

«Նա, ով խօսում էր ինձ հետ, իր ձեռքում ունէր ոսկէ մի եղէգ՝ իբրեւ քանոն, որպէսզի չափի քաղաքը, նրա դռներն ու պարիսպը» (հմր 15):

Չափումը, ինչպես տեսանք, նշանակում է Աստծո հովանավորությունն ու պաշտպանությունը. ինչը չափել է Աստված, նշանակում է գտնվում է Աստծո հովանու եւ պաշտպանության տակ: Ուրեմն Աստծո քաղաքը վայելում է Նրա հովանին ու պաշտպանությունը:

«Քաղաքը քառակուսի էր՝ հաւասար երկարութեամբ եւ լայնութեամբ: Հրեշտակը եղէգով չափեց քաղաքը, որը հազար երկու հարիւր կիլոմետր էր: Նրա երկարութիւնն ու լայնքը հաւասար էին» (հմր 16):

Եթե այս քաղաքը պարփակելու է Աստծո ամբողջ ժողովրդին, ապա բացահայտ է, որ չափերը շատ-շատ փոքր են: Այստեղ տրված բոլոր չափերը փոխաբերական են: Եվ քանի որ քաղաքի տարածքը քառակուսի է նկարագրվում, ապա ենթադրվում է, թե քաղաքը բարեկարգ պիտի լինի: Նկատի ունենալով նաեւ այն հանգամանքը, որ քաղաքի քառակուսի լինելն աշխարհի խորհրդանիշն է, ուստի քաղաքն ունի նաեւ տիեզերական իմաստ: Ինչ վերաբերում է չափերին (հազար երկու հարյուր կիլոմետր), ապա բնագրում գրված է «տասներկու հազար ասպարեզ»:

Այստեղ հանդիպում ենք տասներկու թվի օգտագործմանը: Տասներկուսի հազարով բազմապատկումն է հազար երկու հարյուրը: Տասներկու թվի օգտագործմանը հանդիպում ենք նաեւ քաղաքի բարձրության չափի մասին խոսելիս: Ասվում է, թե քաղաքի բարձրությունը հարյուր քառասունչորս կանգուն էր, որը նշանակում է, թե բարձրությունը տասներկու անգամ տասներկու կանգուն էր: Նկատի ունենալով, որ տասներկուսը կատարելության խորհրդանիշն է, ուրեմն այստեղ տրված չափերը թելադրում են, որ Աստծո քաղաքը լինելու է կատարյալ քաղաք:

«Հրեշտակը չափեց նաեւ պարիսպը, որի բարձրութիւնը վաթսունհինգ մետր էր: Հրեշտակի գործածած չափը մարդկանց գործածած չափն էր» (հմր 17):

Ուզում է ասել, թե հրեշտակն իր առաքելությունը կատարում է ըստ մարդկանց հասկանալու կարողության:

«Պարիսպը կառուցուած էր յասպիս քարից, իսկ քաղաքը մաքուր ոսկի էր՝ նման մաքուր եւ յստակ ապակու» (հմր 18):

Հասպիսի առնչությամբ արդեն խոսել ենք: Ոսկին, որպես ազնվագույն մետաղ, Աստծո տաճարի համար հարմարագույնն ու արժանին է: Ոսկին Աստծո կատարելության ու սրբության խորհրդանիշն է, ուստի Աստծո մոտից իջած քաղաքը նույնպես լինելու է կատարյալ եւ սուրբ:

«Քաղաքի պարսպի հիմքերը զարդարուած էին ամէն տեսակ թանկագին քարերով: Առաջին հիմքը յասպիս էր, երկրորդը՝ շափիւղայ, երրորդը՝ կարկեհան, չորրորդը՝ զմրուխտ, հինգերորդը՝ եղէգնաքար, վեցերորդը՝ սարդիոն, եօթերորդը՝ ոսկեքար, ութերորդը՝ բիւրեղ, իններորդը՝ տպազիոն, տասներորդը՝ քրիսոպրասոս, տասմէկերորդը՝ յակինթ եւ տասներկուերորդը՝ մեղեսիկ» (հմր 19-20):

Ոմանք խորանում են այս քարերի խորհրդաբանության մեջ՝ նրանց գույների առնչությամբ նշանակություններ առաջարկելով եւ հանգելով բարոյական իմաստի: Սակայն կարելի է ընդամենը մեկ բան ասել. տասներկու քարերը հիշեցնում են քահանայապետի լանջապանակը, որը հատուկ նպատակի էր ծառայում, պատրաստված էր չորս շարքով, որոնք իրենց վրա կրում էին տասներկու թանկագին քարեր: Այդ տասներկու թանկագին քարերը գրեթե նույն այս քարերն են: Այս քարերը ներկայացուցչական նշանակություն ունեն: Ինչպես քահանայապետի կրծքի լանջապանակն էր ներկայացնում իր ժողովրդին (քահանայապետն Աստծո առջեւ էր կանգնում որպես իր ժողովրդի ներկայացուցիչ), այնպես եւ այստեղ են դրանք ներկայացուցչական: Դրանցով ուզում է ասել, որ Աստծո նոր ժողովուրդը մնայուն հաստատվել է Աստծո քաղաքում:

«Տասներկու դռները շինուած էին տասներկու մարգարիտներից, իւրաքանչիւր դուռը՝ մէկ կտոր մարգարիտից, եւ քաղաքի հրապարակը մաքուր ոսկի էր՝ նման թափանցիկ ապակու» (հմր 21):

Պատկերացումը դարձյալ աննյութական է:

«Քաղաքում տաճար չտեսայ, որովհետեւ ամենակալ Տէր Աստուածն ու Գառը իրե՛նք էին տաճարը» (հմր 22):

Տաճարն Աստծո բնակարանն է: Ներկա աշխարհում տաճարները կամ եկեղեցիներն անկատար օրինակներն են այն գալիք տաճարի, որ Տեր Աստված եւ Գառը, այսինքն՝ Քրիստոս պիտի լինեն:

«Լուսաւորուելու համար՝ քաղաքը կարիք չունէր արեգակի եւ լուսնի, որովհետեւ Աստծո փառքն ի՛նքը լուսաւորում էր այն, եւ նրա ճրագը Գառն էր» (հմր 23):

Կրոնական լեզվում Աստված պատկերացվում է իբրեւ լույս: Գալու է մի ժամանակ, երբ ո՛չ արեւն է լինելու, ո՛չ լուսինը եւ ո՛չ էլ աստղերը, այլ Աստված Ինքն է հենց լույսը լինելու:

«Ժողովուրդները Նրա լոյսո՛վ կառաջնորդուեն, եւ Երկրի թագաւորները Նրա՛ն կբերեն իրենց փառքը: Քաղաքի դռները բնաւ չեն փակուի, որովհետեւ այնտեղ գիշեր չի լինելու: Ազգերի փառքն ու պատիւը Նրա՛ն կբերուեն» (հմր 24-26):

Լույսը, որով ժողովուրդները պետք է առաջնորդվեն, Տեր Աստված Ինքն է եւ Գառը: Իսկ փառքն ու պատիվը ո՞ւմ է ընծայվելու. դա կարելի է հասկանալ թե՛ Տեր Աստծո, թե՛ Գառան լույսի եւ թե՛ Նոր Երուսաղեմի համար:

«… Այնտեղ չի մտնի ոչ մի պիղծ բան, ոչ էլ պղծութիւն գործող կամ ստախօս մարդ, այլ միայն նրանք, որոնց անունները գրուած են Գառան Կեանքի գրքում» (հմր 27):

Աստծո քաղաքը սուրբ է, ուստի նրան անհարիր է որեւէ պիղծ կամ սուտ բան, եւ ընդունելի են միմիայն նրանք, ովքեր հաղորդ են Աստծո սրբությանը՝ Հիսուս Քրիստոսի շնորհիվ:

ԻԲ ԳԼՈՒԽ

ԿԵՆՍԱՏՈՒ ՋՈՒՐԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԾԱՌԸ (22:1-5)

Առաջին հինգ համարները շարունակում են ներկայացնել քաղաքի պատկերը՝ նրան միացնելով մեկ այլ տարր՝ Աստծո Դրախտը:

«Հրեշտակն ինձ ցոյց տուեց կենսատու ջրի՝ բիւրեղի նման փայլուն գետը, որը բխում էր Աստծո եւ Գառան գահից» (հմր 1):

Առհասարակ մեկնաբանները կենտրոնանում են գետի վրա՝ համեմատելու համար Սուրբ Հոգու հետ, Որը, ինչպես նաեւ Քրիստոս ասաց, մարդու միջից բխող գետի ջրերի նման պետք է լինի (հմմտ.՝ Հհ 4:14):

Առաջին հերթին այս իմաստին անդրադառնալու կարիք չկա: Նախ՝ հարկավոր է խոսել նյութական նմանության մասին: Ծննդոց գրքի առաջին երեք գլուխներում (մասնավորաբար երրորդ գլխում) մեզ Դրախտի մասին որոշակի պատկերացում է տրվում, եւ խոսվում է այնտեղից բխող գետի մասին, որ չորս ճյուղերի էր բաժանվում՝ աշխարհի չորս կողմերը գնալու համար: Թեպետ այնտեղ «Աստծո գահ» բացատրությունը չկա, սակայն ավելորդ է ասել, որ այնտեղ Աստծո տերությունն է: Այստեղ Աստծո գահի հիշատակումը թելադրում է վերստեղծված Դրախտը, որն Աստծո միջոցով է տաղավարվել:

Իսկ ի՞նչ է խորհրդանշում գետը: Նրա մեջ կարելի է տեսնել Սուրբ Հոգու ակնարկությունը (տե՛ս Հհ 7:37-39):

«Քաղաքի հրապարակի մէջտեղում եւ գետի այս ու այն կողմում կար Կեանքի ծառը, որը տարին տասներկու անգամ պտուղ էր տալիս, ամէն ամիս՝ իր պտուղը, իսկ տերեւները ծառայում էին ազգերին բժշկելու համար» (հմր 2):

Այստեղ Հին Կտակարանից երկու տարբեր պատկերացումներ կան. առաջինը Դրախտի պատկերացումն է: Դրախտի կենտրոնում

տեսնում ենք Բարու եւ չարի գիտության ծառը ու Կյանքի ծառը: Այստեղ բացակայում է Բարու եւ չարի գիտության ծառը, որովհետեւ այդ ժամանակ մարդը հասած կլինի մի որակի, որ ամենուր կվայելի Կյանքի ծառի ներկայությունն ու օրհնությունը:

Ինչպես հին դրախտում էր Կյանքի ծառը մեկը, այնպես եւ այստեղ է մեկը: Հատկապես շեշտում եմ այս մեկ լինելը, որովհետեւ Աստծուց հեռացած աշխարհը պիտի վերադառնա առ Աստված: Վերադարձող աշխարհի հետ կվերահայտնվեն այն նույն վիճակները, որոնք կային Աստծո առաջին ստեղծագործության մեջ, երբ մեղքը այնտեղ դեռ չէր թափանցել:

Այստեղ մարդը վերադառնում է իր անմեղությանը՝ իր դրախտային վիճակին: Մարդն անմահ էր, սակայն անմահ էր ոչ թե բնությամբ. Աստված մարդուն անմահ չէր ստեղծել, հողից էր ստեղծել: Մարդը անմահանալու կարելիություն ուներ, սակայն մարդն անմահ էր այնքան ժամանակ, քանի դեռ մնում էր Աստծո պատվիրանների մեջ եւ ճաշակում էր Կյանքի ծառից: Կյանքի ծառի նպատակն էր միշտ կյանք տալ մարդուն, բայց մարդը մեղք գործելով կորցրեց իր անմահությունը: Աշխարհի վախճանին Աստված դարձյալ անմահության պիտի արժանացնի մարդուն, անկասկած՝ Իր պատվիրաններին հավատարիմ մարդուն: Եվ այն ժամանակ մարդը կունենա անփոխարինելի մի վիճակ:

Աստված մարդուն անմահ չէր արարել գիտակ-ցաբար, որպեսզի նա մեղքի մեջ արմատացած չմնա, այլ կարողանա ազատվել մեղքից: Եթե մարդն անմահ ստեղծված լիներ, ապա կարող էր արմատանալ մեղքի մեջ եւ հավիտենապես կորչել:

Աստված անմահ արարեց հոգեղեն արարածներին, այսինքն՝ հրեշտակներին: Նրանցից մի խումբ մեղանչեց եւ մեղանչումից հետո մնաց մեղքի մեջ: Այդ հրեշտակների ունեցած անմահությունը պատճառ դարձավ, որպեսզի միշտ մնան մեղքի մեջ: Սակայն հողեղեն արարածի համար Աստված կամեցավ, որ նա դարձի հնարավորություն միշտ ունենա, եւ փակեց դրախտի ճանապարհը, որպեսզի մարդն իր մեղավոր վիճակի մեջ, Կյանքի ծառից ճաշակելով, անմահ

չմնա, եւ մեղքն էլ նրա հետ չդառնա հավիտենական, այլ որպեսզի մարդը կարողանա հաղթահարել իր մեղավոր վիճակը եւ արժանանա Աստծո տված անմահության պարգեւին:

Կյանքի ծառը սովորական ծառ չէ. դա Քրիստոսի այլաբանական պատկերներից է. Քրիստոս Ինքն է Կյանքի ծառը: Քրիստոս-ծառից ճաշակողներն անմահության են արժանանում:

«… Իսկ տերեւները ծառայում էին ազգերին բժշկելու համար»:

Արդյոք կյանքն ուրիշ բան է, իսկ բժշկությունը՝ ուրիշ:

Ներկա կյանքում, այսինքն՝ այն ժամանակ, քանի դեռ մարմնավոր կյանքով ենք ապրում, բոլոր ազգերն էլ, բոլոր ժողովուրդներն էլ դեռեւս բժշկության կարիք ունեն, այնպիսի բժշկության, ինչպիսին Քրիստոսն է պարգեւում Իր խոսքով: Տերեւը խորհրդանշաբար ակնարկում է Աստծո խոսքը:

«Քաղաքում նզովեալ բան գոյութիւն չի ունենալու եւ Գառան գահն այնտեղ է լինելու, եւ Նրա ծառաները կպաշտեն Նրան» (հմր 3):

Այս պարագայում «նզովեալ բան»ը որեւէ առարկա չի նշանակում, այլ մի վիճակ է: Ներկա աշխարհը հատկանշվում է վշտով, նեղությամբ, անձկությամբ, թշվառությամբ: Սրանք մարդու ստեղծած վիճակներ են եւ մինչեւ երկինք հասնող ողբերի կամ աղաղակների պատճառ են դառնում: Աստված լսում է տառապող մարդկության ձայնը, որն աշխարհը լցնող անեծք է:

Աստված չի ցանկանում, որ աշխարհը լցվի անեծքով: Նա կամենում է ջնջել աշխարհի անեծքը: Աշխարհի այս պատկերի առջեւ է դրվում Աստծո նոր քաղաքը, ուր չեն լինելու այս աշխարհը հատկանշող երեւույթները: Մեղքը ջնջվելու է, մնալու են միմիայն խինդն ու ուրախությունը, օրհներգությունն ու փառաբանությունը, երախտիքի ու շնորհակալության արտահայտությունները, որոնք մարդկանց կամ Աստծո ծառաների սրտերից բարձրանալու են դեպի իրենց փրկարար Տերը: Այդ ժամանակ արդեն կլինի Աստծո ճշմարիտ պաշտամունքը:

«Նրանք կտեսնեն Նրա դէմքը եւ Նրա անունը կգրուի նրանց ճակատների վրայ» (հմր 4):

Եթե հին աշխարհում որեւէ մեկը հանցանք գործեր թագավորի կամ պետության օրենքի դեմ, ապա թագավորի երեսը տեսնել չէր կարող:

Աստծո ժողովրդի անդամները, որպես իրենց Արարչի եւ Նրա պատվիրանների հավատարիմներ, արժանանալու են Տիրոջ երեսը տեսնելու պարգեւին, մինչդեռ մահացու կերպով մեղանչողները զրկվելու են դրանից, չեն արժանանալու Տիրոջ տեսությանը:

Եվ հավատարիմների այդ քաղաքում «… այլեւս գիշեր չի լինելու, եւ նրանք կարիք չեն ունենայ ճրագի եւ արեւի լոյսի, որովհետեւ Տէր Աստուած Ինքն է լուսաւորելու նրանց. նրանք կթագաւորեն յաւիտեանս յաւիտենից» (հմր 5):

ՀԻՍՈՒՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ (22:6-21)

Այս համարները ներկայացնում են Հիսուսի գալուստը:

«Հրեշտակն ինձ ասաց.

– Ասածս խօսքերը վստահելի են եւ ճշմարիտ: Տէրը՝ մարգարէների հոգիների Աստուածը, ուղարկեց Իր հրեշտակին, որպէսզի Իր ծառաներին ցոյց տայ այն, ինչ որ պատահելու է շուտով» (հմր 6):

Այստեղ կան երեք բաներ, որոնք արժանի են բացատրության:

Առաջին՝ հրեշտակը հավաստիացնում է, որ իր բոլոր հայտնածներն էլ վստահելի են եւ ճշմարիտ: Հին հայերենում «վստահելի» իմաստն արտահայտվել է «հավատարիմ» բառով: Ինչպես տեսնում ենք, շեշտվում է այս խոսքերի վստահելի լինելը, որովհետեւ հրեշտակն առաքյալին, իսկ առաքյալն էլ իր ընթերցողներին կամենում է հայտնել, թե Հայտնության գրքի մարգարեական պատգամներն անպայման կատարվելու են:

Այդ պատգամները հաճախ տրվել են տեսիլքների ձեւով, երեւակայության արգասիքներ, անիրական երեւույթներ չեն, որ պարզվում են մեր առջեւ: Դրանք ճշմարտություններ են արտահայտում. երբ պատգամները տրվում են պատկերներով կամ պատկերավոր ձեւով,

ապա երեւակայական չեն դառնում: Պատգամները պատկերներ չեն, այլ արտահայտված են պատկերներով: Պատգամներն անպայման իրականանալու են. մեզ առաջին հերթին սա է ասվում:

Դրանք վստահելի են, որովհետեւ ոչ թե հրեշտակի խոսքերն են, այլ հենց Քրիստոսի խոսքերը: Խոսելով աշխարհի վախճանի մասին՝ Քրիստոս ասել էր. «Նոյնիսկ եթէ երկինքն ու Երկիրն անհետանան, Իմ խօսքերը չեն անհետանայ» (Մտ 24:35, Մկ 13:31, Ղկ 21:33): Նշանակում է, թե այդ խոսքերը կետ առ կետ կատարվելու են: Մարդու համար ինքնախաբեություն է որոշել, թե պատգամների հատկապես այս տարրերն են կատարվելու, իսկ մյուս տարրերը՝ ոչ:

Երկրորդ՝ այստեղ հրեշտակը մեզ հայտնում է Քրիստոսի մի նոր տիտղոսի մասին՝ «Տէրը՝ մարգարէների հոգիների Աստուածը»: Ինչ է արտահայտում այս տիտղոսը: «Տէրը» մեզ ծանոթ է, սակայն «մարգարէների հոգիների Աստուածը» բացատրությունն առաջին եւ միակ անգամ է գրվել, այն էլ՝ այստեղ: Հրեշտակը շատ հստակ մեզ ասում է, որ մարգարեների հայտնած Աստվածը ոչ այլ ոք է, եթե ոչ Գառը: Հստակ է, որ այստեղ զորեղ կերպով շեշտվում է Քրիստոսի աստվածությունը: Մարգարեները միայն Հին Կտակարանի էջերում երեւացողները չեն: Մարգարեներ են նաեւ նրանք, ովքեր Աստծուց Քրիստոսի Եկեղեցուն երբեմն նոր հայտնություն են բերում, երբեմն էլ բացահայտում, բացատրում կամ քարոզում են Աստծո հայտնությունը: Մարգարեների պաշտոնը մարդկանց առ Աստված առաջնորդելն է, Աստծո ճշմարիտ գիտությունը ժողովրդին հաղորդելը:

Երրորդ՝ ո՞րն է այս հայտնությունների նպատակը: Հայտնության գրքի 1-ին գլխում ասվել էր եւ հետո նույնն ասվեց 3-րդ գլխի վերջում, թե այս գրքի նպատակն է կանխավ տեղեկացնել շուտով կատարվելիքների մասին:

«Ահա գալիս եմ շուտով» (հմր 7):

Քրիստոս Ինքն է ասում այդ «շուտով»ը: Բոլոր կատարվելիքների բարձրակետն է այս գալուստը, որի ակնկալությամբ է հորդում Հայտնության գիրքը: Հայտնության գիրքը Քրիստոսի գալուստն ակնկալող եւ նախապատրաստող գիրքն է:

«Երանի՛ նրան, ով պահում է այս գրքի մարգարէութեան խօսքերը» (հմր 7):

Հայտնության գրքի վեցերորդ «երանի»ն է սա: «Այս գրքի մարգարեության խոսքերը» պահելը ոչ թե միայն հիշողության մեջ ամբարել է նշանակում, այլ նաեւ սկսել դրանց գործադրությունը: Ինչպե՞ս կարելի է գործադրել մարգարեական պատգամը. դրան հնազանդվելով եւ պատրաստ լինելով Քրիստոսի գալուստին:

«Ես՝ Յովհաննէս, անձամբ լսեցի եւ տեսայ այս բոլորը. եւ երբ լսեցի ու տեսայ, գետնին ընկայ հրեշտակի ոտքերի առջեւ՝ երկրպագելու նրան, ով ինձ ցոյց էր տալիս այս բոլորը: Բայց նա ինձ ասաց.

– Զգո՛յշ, մի՛ արա, որովհետեւ ես էլ ծառայակիցն եմ քո եւ քո եղբայրների, այսինքն՝ մարգարէների եւ նրանց, որոնք պահում են այս գրքի պատգամները: Աստծո՛ւն երկրպագիր» (հմր 8-9):

Նախորդ գլխում առաքյալը խանդավառության մի պահի հանկարծ, անսպասելի փորձառություն է ունենում ինչ-որ կերպ դրսեւորել իր ապրած ուրախությունը, երախտագիտության եւ շնորհակալության տրամադրությունները, որն ինքնին երկրպագություն է: Նա ցանկանում է ընկնել հրեշտակի ոտքերի առջեւ եւ երկրպագել նրան, բայց հրեշտակը զգուշացնում է: Այստեղ եւս նույնն է լինում: Հրեշտակը հիշեցնում է, որ արարածը պարտավոր է երկրպագել միմիայն Աստծուն: «… Ես էլ ծառայակիցն եմ քո եւ քո եղբայրների, այսինքն՝ մարգարէների եւ նրանց, ովքեր պահում են այս գրքի պատգամները»: Այս մարգարեները Հին Կտակարանի մարգարեները չեն, այլ Եկեղեցունը: Մարգարեները եղբայրներ եւ ծառայակիցներ են: Հրեշտակը, իրեն համեմատելով Քրիստոսի հետ, որպես ծառա է ներկայանում: Տիրոջ հետ հարաբերվելիս բոլոր արարածներն էլ ծառաներ են:

«Ապա շարունակեց.

– Այս գրքի մարգարէութեան խօսքերը կնքուած մի՛ պահիր, որովհետեւ մօտեցել է ժամանակը» (հմր 10):

«Կնքել» բայի մասին բազմիցս բացատրություններ տվեցի, մասնավորաբար՝ 10-րդ գլխի 4-րդ համարի առիթով: Կնքելու իմաստն

այն է, թե կնքյալի հայտնության ժամանակը դեռ չի հասել: Կնքված որեւէ բան հայտնվում է, երբ ժամանակը գալիս է: Այստեղ ասվում է՝ «կնքուած մի՛ պահիր», որովհետեւ հայտնության ժամանակը հասել է: Արդեն ժամանակն է, որ յուրաքանչյուր քրիստոնյա ծանոթանա նրա բովանդակությանը, իմանա այն, ինչը շուտով պատահելու է, որպեսզի պատրաստվի դրան:

Իսկ մենք մոտեցե՞լ ենք այդ վախճանին: Առաքյալներն իրենց ժամանակ ասում էին, թե աշխարհի վախճանը մոտեցել է: Արդ, մենք մոտ ենք աշխարհի վախճանին, բայց արդյոք հասե՞լ ենք մեծ նեղության ժամանակին կամ արդեն հատե՞լ ենք նրա սահմանները, չգիտենք:

«Թող ամբարիշտը կրկին ամբարշտութիւն անի, վատ մարդը՝ իր վատութիւնը, ով արդար է, թող արդարութիւն անի, եւ սուրբն իր սրբութիւնը պահի» (հմր 11):

Արտահայտության այս կերպը կարող է թյուրիմացության պատճառ դառնալ եւ մտածել տալ, թե Աստված թելադրում է շարժվել այսպես կամ այնպես: Սակայն այստեղ ասվածը սա է. եթե մեղքի մեջ եղողն ուզում է մնալ մեղքի մեջ, ապա թող մնա: Արդարը թող շարունակի արդարություն անել, իսկ սուրբը շարունակի պահել իր սրբությունը: Սա չի նշանակում, թե Աստծո հայացքը հոռետեսական է կամ հուսահատական: Նույնիսկ ամենահոռետես եւ ամենահուսահատ կացության մեջ Աստված դրական հայացքով է դիտում եւ սպասում, որ մեղավոր էակը փոխվի դեպի բարին:

Այս խոսքերը հիշեցնում են Մովսեսի բերանով Աստծո հետեւյալ խոսքն Իր ժողովրդին. «Այսօր, ահա, քո առջեւն եմ դնում կեանքն ու մահը, բարին ու չարը: Եթէ լսես մեր Տէր Աստուծոյ պատուիրանները, որ ես այսօր պատգամում եմ քեզ՝ սիրես քո Տէր Աստծուն, ընթանաս Նրա ճանապարհներով, պահես Նրա օրէնքները, Նրա պատուիրաններն ու կանոնները, կապրէք ու բազմամարդ կլինէք, եւ քո Տէր Աստուածը քեզ կօրհնի ամբողջ երկրում, ուր կմտնես այն ժառանգելու համար» (Բ Օր 30:15-16):

Աստված խոսում է ընտրության մասին: Նա մարդուն ասում է, որ կան երկու ճամփաներ. այս ճանապարհով էլ կարելի է գնալ, մյուսով

էլ, սակայն նաեւ լռելյայն հորդորում է, որ մարդն անպայման ընտրի բարին, ընտրի կյանքի՛ ճանապարհը, որպեսզի ապրի: Աստված չի կամենում մեղավորի մահը, այլ՝ նրա դարձն ու փրկությունը:

Նկատի ունենալով, որ Հայտնության գիրքը սահմանվել էր եկեղեցիներում ընթերցանության համար, ապա առաջնահերթ ուղղվել եւ ուղղվում է նրանց, ովքեր եկեղեցիներում, հոգեւոր իմաստով, կենդանի չէին եւ չեն: Այս գիրքն զգաստության, արթնության եւ աստվածային պատգամները լսելու կոչ է՝ լինելու նախանձախնդիր եւ անդրադառնալու , որ քրիստոնյաներն իրենց սպասող ժառանգությունն ունեն, հետեւաբար՝ պետք է կատարել անհրաժեշտը՝ Աստծո վերջնական եւ ամբողջական օրհնությունը ժառանգելու համար:

«Ահա գալիս եմ շուտով, եւ Ինձ հետ կբերեմ Իմ վարձը, որպէսզի իւրաքանչիւրին հատուցեմ ըստ իր գործերի» (հմր 12):

Այստեղ դարձյալ հիշեցնում է, որ գործերի վարձը բերելու է Իր հետ: Գործերի վարձատրության մասին արդեն խոսել եմ: Նորկտակարանյան բոլոր գրքերն էլ հիշեցնում են, որ յուրաքանչյուրիս հատուցումը լինելու է Աստծուց՝ ըստ յուրաքանչյուրիս կատարած գործերի:

«Ես եմ Ալֆան եւ Օմեգան (Այբը եւ Քէն), Առաջինը եւ Վերջինը, Սկիզբն ու Վախճանը» (հմր 13):

Քրիստոս հիշեցնում է Իր անունը՝ ասելու համար, որ Ինքը ժամանակի մեջ չէ՛, այլ ժամանակից վեր, ուստի՝ ժամանակին ենթակա չէ: Ինչ որ գոյություն ունի, սկսվում է Նրանով եւ վերջանում Աստծո մեջ: Աստված անսկիզբ եւ անվախճան է:

«Երանելի են նրանք, որ պահում են Նրա պատուիրանները: Նրանք իրաւունք կունենան ուտելու Կեանքի ծառից եւ դռներով քաղաք մտնելու» (հմր 14):

Այս գրքի մարգարեական պատգամները լսողները, դրանց հնազանդվողները եւ իրենց կյանքն Աստծո կամեցած ձեւով ապրողները ժառանգելու են նոր քաղաքը:

Այս համարն ունի մի տարընթերցում. բնագրերի կեսում այս տարբերակն է, իսկ մյուս կեսում առկա է հետեւյալ ձեւը. «Երանելի են նրանք, որ լուանում են իրենց պատմուճանները»: Այս պատկերին

հանդիպում ենք նաեւ 7-րդ գլխում, որն առնչվում էր նահատակների հետ: Այնտեղ ասվում էր, թե նրանք իրենց պատմուճանները լվացին եւ սպիտակեցրին Գառան արյամբ, այսինքն՝ իրենց վրա վերցրին Գառան արյունը կամ Նրա պարգեւած փրկությունը եւ սրբվեցին իրենց մեղքերից:

Ինչպես ասացինք, «Կյանքի ծառ»ը Քրիստոս Ինքն է, իսկ «դռներով քաղաք մտնել»ը հավանաբար ակնարկությունն է այն առանձնաշնորհման, որ իրենց հավատքով, բոլորանվեր սիրով, ապրած կյանքով եւ ընծայված ծառայությամբ ձեռք են բերելու երանելիները:

«Իսկ շնացողներն ու կախարդները, պոռնիկներն ու մարդասպանները, կռապաշտները եւ բոլոր նրանք, ովքեր սիրում են սուտը եւ սուտ են խօսում, կմնան դրսում» (հմր 15):

Սրանք Երկնքի քաղաքացիությանն արժանանալու պայմանները չհարգողներն են եւ այդ պատճառով դուրս պիտի մնան «նոր քաղաք»ից, այսինքն՝ Աստծո ժողովրդից, եւ Աստծո երեսը չեն տեսնելու:

«Ես՝ Յիսուս, ուղարկեցի Իմ հրեշտակին, որպէսզի եկեղեցիների մասին այս վկայութիւնը տայ ձեզ: Ես Դաւթի արմատն ու նրա սերունդն եմ, առաւօտեան պայծառ աստղը» (հմր 16):

Քրիստոս Իրեն կոչում է թե՛ «Դավթի արմատը» եւ թե՛ «նրա սերունդը»: Արմատն Աստված է, որովհետեւ Նա է Դավթի թագավորությանը ծնունդ տվողը: Ինչպես գիտենք, ըստ մարդկային բնության, Հիսուս Դավթի սերնդից եղավ:

«Առավոտյան պայծառ աստղը»: Այս փոխաբերությունով անվանմանը նախ հանդիպում ենք Հայտնության գրքի 1-ին գլխում: Հին հեղինակներից մեկն այդ անվանումը բացատրում է այլաբանորեն՝ ասելով. «Քրիստոսն Ինքը ծագեց երրորդ օրուայ առաւօտեան (ակնարկում է Յարութեանը - Ջ. Ա.): Այս կեանքի երեկոյից յետոյ, ընդհանուր յարութեան առաւօտեան, արեւի նման ծագելու է սրբերի համար՝ մեզ բերելով անվախճան օր»:

«Եւ Հոգին ու Հարսն ասում են՝ եկ: Ով լսում է, թող ասի՝ եկ: Ով ծարաւ է, թող գայ, եւ ով ուզում է, թող ձրի առնի կեանքի ջրից» (հմր 17):

Քրիստոսի խոսքից անմիջապես հետո լսում ենք Սուրբ Հոգու եւ Քրիստոսի Եկեղեցու կանչը. «Եկ»: Քրիստոս Ինքն է կենսատու ջրի աղբյուրը (հմմտ.՝ Հհ 4:10):

Կանչը հարսանեկան խնջույքի հրավեր է: Հարսանիքը Քրիստոսի եւ Նրա Եկեղեցու հարսանիքն է: Այստեղ գինու փոխարեն լինելու է Քրիստոս-կյանքի ջուրը: Նա, ով ծարավ է Քրիստոս-ջրին, արժանի է լինելու ըմպելու դրանից:

«Եւ ես՝ Յովհաննէս, ազդարարում եմ բոլոր նրանց, ովքեր լսում են այս գրքի մարգարէութեան խօսքերը: Եթէ որեւէ մէկը մի բան աւելացնի սրա վրայ, Աստուած էլ նրան տրուելիք պատժի վրայ կաւելացնի այս գրքում նկարագրուած պատուհասները: Եւ եթէ որեւէ մէկը մի բան պակասեցնի այս գրքի մարգարէութեան խօսքերից, Աստուած էլ այս գրքում նկարագրուած Կեանքի ծառից եւ սուրբ քաղաքից կպակասեցնի նրա բաժինը» (18-19):

Առաքյալն առաջին անգամ խոսում է «ես»ով, որովհետեւ մինչեւ հիմա հայտնում էր, որ իր խոսքը չէր ասում: Նա մի տեսանող էր, մի միջնորդ, մի պատմող: Սա ի՛ր խոսքն է, թեեւ այստեղ նույնպես առկա է Աստծո հեղինակությունը:

Այս խոսքը կարեւոր է:

Ի՞նչ է հասկանում «այս գրքի» ասելով: Առաջին հերթին ակնարկում է Հայտնության գիրքը: Շատերն այս խոսքով փորձում են հասկանալ ամբողջ Աստվածաշունչը: Կարելի է ասել, որ ճշմարտություն կա այս գաղափարի մեջ:

Պետրոս առաքյալն իր երկրորդ նամակում, ակնարկելով Պողոս առաքյալի նամակները, գրել է. «Նա իր բոլոր նամակներում էլ խօսել էր այս բաների մասին: Այդ նամակներում կան մի շարք դժուարհասկանալի մասեր, որոնց իմաստը չարափոխում են տգէտ եւ փոփոխամիտ մարդիկ» (Բ Պտ 3:16): Հովհաննես առաքյալը եւս տեղյակ էր նման չարափոխումների, եւ դա է նրա ազդարարության պատճառը: Չպետք է չարափոխել Աստվածաշունչը. Աստվածաշունչն ըստ իրենց կամքի փոխողները ենթարկվելու են կորստի, ինչպես ասել է Քրիստոսը (տե՛ս Մտ 5:19):

Առաքյալների ժամանակներից հետո էլ Եկեղեցու պատմության մեջ շատ հայտնի են այդպիսի պարագաները. մի շարք աղանդավորներ սկսեցին համարներ զեղչել Աստվածաշնչից, ոմանք էլ որոշ գրքեր սկսեցին զեղչել Հին կամ Նոր Կտակարաններից, ոմանք զեղչեցին ամբողջ Հին Կտակարանը:

Առաքյալի խոսքը չի վերաբերում թարգմանական կամ մեկնողական իմաստի փոխանցման, պարզաբանման կամ ընդլայման արտահայտություններին: Մինչեւ այն պահը, քանի դեռ թարգմանությունը կամ մեկնությունն իր աստվածաշնչական իմաստը չի չարափոխել, զերծ է մնում առաքյալի ազդարարությունից:

«Այո՛, գալիս եմ շուտով» (հմր 20):

Երրորդ եւ վերջին անգամը լինելով Քրիստոսն ասում է. «Այո՛, գալիս եմ շուտով»: Եվ առաքյալն անմիջապես սրտաբուխ պատասխանում է.

«Ամէն: Եկ, Տէր Յիսուս» (հմր 20):

Այս կանչը շատ էին գործածում առաջին Եկեղեցու ծիսական կյանքում:

«Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը թող լինի Աստուծոյ ամբողջ ժողովրդի վրայ: Ամէն» (հմր 21):

Մի հետաքրքրական բան գտա: Նորագույն մեկնիչներից մեկը մեզ ասում է, թե Հին Կտակարանում Մաղաքիայի մարգարեության գիրքն ավարտվում է անեծքի սպառնալիքով, իսկ այստեղ գիրքն ավարտվում է շնորհի խոսքով: Այս կերպ Աստված կամենում է մեզ վերադարձած տեսնել դեպի այն շնորհը, որով մեզ արարեց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք. *Մարգարիտա Խաչատրյան*.....5
Խմբագրական.....8
Ծանոթագրություններ.....12
Համառոտագրություններ.....13
Հայտնության Գիրքը սերտելու հրահանգներ.....14

ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ
Ներածություն.....17

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Ա ԳԼՈՒԽ.....37
Նախաբան.....37
Ողջույն յոթ եկեղեցիներին.....39
Հովհաննես առաքյալին հայտնված Հիսուսի տեսիլքը.....46

Բ-Գ ԳԼՈՒԽՆԵՐ.....53
Նամակ Եփեսոսի եկեղեցուն.....54
Նամակ Զմյուռնիայի եկեղեցուն.....63
Նամակ Պերգամոնի եկեղեցուն.....70
Նամակ Թիատիրի եկեղեցուն.....75

Գ ԳԼՈՒԽ.....81
Նամակ Սարդիկեի եկեղեցուն.....81
Նամակ Ֆիլադելֆիայի եկեղեցուն.....88
Նամակ Լավոդիկիայի եկեղեցուն.....100

Դ ԳԼՈՒԽ.....114
Աստծո Գահը եւ երկնային պաշտամունքը.....114

Ե ԳԼՈՒԽ.....133
Կնքված Գիրքը եւ գառը.....133

Զ ԳԼՈՒԽ.....157
Յոթ կնիքները.....163
Աստծու ընտրյալները.....182
Մեծ բազմություն.....188

Է ԳԼՈՒԽ.....182

Ը ԳԼՈՒԽ.....191
Յոթերորդ կնիքը.....191
Առաջին չորս փողերը.....193

Թ ԳԼՈՒԽ.....197
Հինգերորդ փողը.....197
Վեցերորդ փողը.....202

Ժ ԳԼՈՒԽ.....207
Հրեշտակը եւ գրքույկը.....208

ԺԱ ԳԼՈՒԽ.....214
Երկու վկաները.....214
Յոթերորդ փողը.....223

ԺԲ ԳԼՈՒԽ.....227
Կինը եւ վիշապը.....228

ԺԳ ԳԼՈՒԽ.....238
Երկու գազանները.....238

ԺԴ ԳԼՈՒԽ.....249
Գառը եւ նրա ընտրյալները.....249
Երեք հրեշտակները.....253
Երկրի հունձքը եւ քաղհանը.....261

ԺԵ ԳԼՈՒԽ.....267
Վերջին պատուհասները.....267

ԺԶ ԳԼՈՒԽ.....274
Աստծո բարկության յոթ անոթները.....274

ԺԷ-ԺԸ ԳԼՈՒԽ.....285

ԺԷ ԳԼՈՒԽ.....286
Պոռնիկ կինը.....286

ԺԸ ԳԼՈՒԽ.....295
Բաբելոնի անկումը.....295

ԺԹ ԳԼՈՒԽ.....300
Հաղթական երգեր.....300
Գառան հարսանեկան խրախճանքը.....300
Սպիտակ ձին եւ ձիավորը.....305

Ի ԳԼՈՒԽ.....313
Հազարամյա թագավորությունը.....317
Սատանայի պարտությունը.....322
Վերջին դատաստանը.....324

ԻԱ ԳԼՈՒԽ.....329
Նոր Երկինք եւ նոր Երկիր.....330
Նոր Երուսաղեմ.....334

ԻԲ ԳԼՈՒԽ.....339
Կենսատու ջուրը եւ կյանքի ծառը.....339
Հիսուսի գալուստը.....342

ԶԱՐԵՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՆԱՎՈՐՅԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ

(արեւելահայերեն երկրորդ հրատարակություն)

Համակարգչային շարվածքը՝
Մարգարիտա Մամիկոնի Խաչատրյանի
Համակարգչային մակետը՝
Կարինե Դավթյանի
Կազմի համակարգչային ձևավորումը՝
Մելինե Ղարախանյանի

Տպագրությունը՝ *«Եգեա»* տպագրատան

Ստորագրված է տպագրության՝ 20.04.2022թ.:
Չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 22.0 տպ. մամուլ:
Գինը՝ պայմանագրային:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան, Իսահակյան 28: